

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ
ԱՐԴԱՐԱԴՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐՑԱԽՈՒՄ



ՎԼԱՂԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**ԻՐԱՎՈՒՅԹԸ ԵՎ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽՈՒՄ**

«Պիզակ պլյուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2016

ՀՏԴ 340(091)
ԳՄԴ 67.3
Ն 872

Նվիրվում է Արցախի Հանրապետության հոչակման 25-ամյակին

Երաշխավորված է տպագրության Հայաստանի Հանրապետության
«Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի կողմից

Խմբագիր՝ ՀՀ «Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի
նախագահ Գևորգ Ղանիելյան

Գրքի հրատարակությունը հովանավորել է ԼՂՀ կառավարությունը

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ
Ն 872 ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՐԴԱՐԱԴՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒ/
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ.- Ստեփանակերտ: «Դիզակ պյուս» հրատ.,
2016.-304 էջ:

Աշխատության մեջ լուսաբանվում են Հայոց Արևելից կողմանքում
ստեղծված և գործած իրավական հուշարձանների (Վաչագան արքայի
Կանոնական Սահմանադրություն, Պարտավի ժողովի կանոններ, Դավիթ
Ալավետի որդու Կանոնական օրինադրություն, Մխիթար Գոշի Դատաստա-
նագիրը) հիմնական բնորոշ գծերը, նրանց տեղը հայ իրավունքի համա-
կարգում, անդրադարձ է կատարվում այն իրավահայտ աղբյուրներին,
որոնցում արտացոլված են պատմական Հայաստանի մի հատվածի՝ Ար-
ցախի իրավունքի և պետականության առանցքային հարցեր:

Աշխատության մեջ քննարկվում են նաև օրինականության և արդարա-
դատության հարցերն Արցախում՝ սկսած միջնադարից ներառյալ մեր օրե-
րը: Աշխատությունը կարող է օգտակար լինել բուհերի դասախոսների,
ուսանողների, արդարադատության և իրավակիրառ գործունեություն իրա-
կանացնող բնագավառի աշխատողների և, առհասարակ, հայ ժողովրդի
իրավունքի պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 340(091)
ԳՄԴ 67.3

ISBN 978-9939-1-0356-3

© ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ, 2016

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Յայ իրավունքի պատմությունը մեր ժողովրդի բազմադարյա պատմության մի փոքրիկ մասն է կազմում, ուստի հայագիտության հետ այն հարաբերվում է ինչպես մասն ամբողջի: Լինելով վերնաշենքային հասկացություն՝ իրավունքը հնարավորություն է տալիս ճիշտ մոտեցումներ որդեգրել պատմական մի շարք կնճռուտ հարցերի լուսաբանման համար: Եվ եթե հայագիտությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման և լուսաբանման բնագավառում աննախադեպ հաջողություններ է գրանցել, նույնը չի կարելի ասել հայ իրավունքի պատմության մասին, որը, սովորայա անվանի իրավագետ Խ. Թօրոսյանի բնորդշմաք, հայագիտության ամենահետ մնացող բնագավառն է հանդիսանում: Մասմավորապես, դա կարելի է բացատրել նրանով, որ հայ իրավունքի պատմության լուսաբանման հարցերն առաջին հերթին տեղ են գտնել պատմաբանների և բանասերների աշխատություններում:

Միևնույն ժամանակ, չպեսոք է անտեսել այդ բնագավառում ծանրակշիռ ավանդ ունեցած խոշոր իրավագետներ Վ. Բատանյանցի, Ս. Եղիազարովի, Խ. Սամուելյանի, Ի. Կարստի, Ա. Բրոսսեի, Մելիք-Թանգյանի, Ա. Սութիսյանի, Ա. Թովմանյանի, Խ. Թօրոսյանի, Ա. Ավագյանի և այլոց հետազոտությունները: Նշված գիտմականներն իրենց աշխատություններում այս կամ այն ձևով անդրադարձել են Յայոց Արևելից կողմանքում ստեղծված իրավական մտքի այնպիսի խոշոր հուշարձանների, ինչպիսիք են Վաչագան արքայի «Կանոնական Սահմանադրությունը», Դավիթ Ալավեց որդու «Կանոնական օրինադրությունը», Միհիքար Գոշի «Դատաստանագիրքը» և այլն: Ամեն պարագայի այդ հուշարձաններում օգտագործված «Աղվանք», «Աղվանից Երկիր», «Աղվանից աշխարհ» եզրույթների մկանամբ յուրահատուկ գգուշավորություն է դրսնորվել, ինչն էլ տարաբնույթ մեկնաբանությունների առիթ է հանդիսացել:

Ինչպես դարաբարյան շարժման տարիներին, այնպես էլ դրանից հետո, Յայոց Արևելից կողմանքի անցյալին և ներկային վերաբերող հարցերի բազմաթիվ նոր ուսումնասիրություններ են կատարվել և հրապարակվել: Դրանք հիմնականում նույնպես կատարվել են պատմաբանների և բանասերների կողմից, որոնք իրենց ուսումնասիրություններում թռուցիկ են անդրադարձել պատմական Արցախ, Ուտիք և Գարդման գավառներում ստեղծված և գործած իրավական հուշարձանների և իրավունքի իմստիտուտներին: Բացառություն են կազմում պատմաբան Կ. Դահրամանյանի ուսումնասիրությունները և իրատարակած գրքերը Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրության մասին: Բայց, ինչպես ասում են, պատմաբանները տեսնում են պատճառները՝ չնկատելով հետևանքները, իրավաբանները տեսնում են հետևանքները՝ չնկատելով պատճառները:

Լեռնային Դարաբարդի Յանրապետությունը կայացած իրողություն է: Երկրորդ հայկական հանրապետության բազմադարյա պատմությունը և մշակույթն աշխարհի ժողովուրդներին ծշմարիտ ներկայացնելու համար պատմաբանները, իրավաբանները, տնտեսագետները, քաղաքագետները և այլ մասնագետներ շատ ու շատ անելիքներ ունեն: Այդ բնագավառում

աղբեջանական խեղարյուրումներին ոչ միայն պատասխանելով պետք է բավարարվենք, այլև՝ մի շարք դեպքերում՝ նախահարձակ լինելով, որովհետև մենք ենք այս երկրի բնիկ տերերը և հաստատակամ պետք է լինենք մեր բռնած գործը հաղթանակին հասցնելու պայքարում:

Գիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ հայ իրավունքի պատմությունը գտնվում է Երկու գիտությունների՝ հայագիտության և իրավագիտության միացնան տեղում: Այս Երկու գիտություններից որևէ մեկի առաջնորդացընթացը պետք է խրան հանդիսանա մյուսի համար:

Չեզանանուիս լինելով սույն աշխատանքին՝ նպատակ ենք հետապնդել հետազոտելու, թե Մեծ Հայքի թագավորության անկախության կորստից հետո նրա Արցախ, Ուտիք և Գարդման գավառներում, որոնք հայ նատեսագրության մեջ կոչվում են Հայոց Արևելից կողմանք, և V դարում նորաստեղծ Աղվանից մարզպանությանը բռնակցվելուց հետո ինչպիսի վարչաքաղաքան միավորներ կազմավորվեցին այդ տարածքներում, և պետականության առումով դրանք ինչպիսի կարգավիճակով հանդես եկան պատմական որոշակի ժամանակահատվածներում, այդ կարգավիճակներին հանգույն ինչպիսի իրավական նորմեր և ինստիտուտներ էին գործում և այլն: Սույն աշխատությամբ մենք քնակ միտք չունենք հայ իրավունքից բոլորովին նոր՝ «արցախյան իրավունք» ստեղծելու: Նման զատման դեպքում՝ կնշանակի աղավաղել հայ իրավունքը և ջուր լցնել հակառակորդի ջրաղացին: Մեր Երկրամասը, թեկուզ V դարի կենսերից մինչև 1988 թվականի դարարադայն շարժումը, քաղաքական առումով հիմնականում կտրված է եղել Մայր հայրենիքից, բայց կյանքը, ոգին և, առհասսարակ, ամեն ինչ այստեղ հայկական է եղել՝ կազմելով հայ ժողովրդի բազմադարյա պատմության մի մասը: Աշխատությունը կազմված է նախարարից, 14 գլուխներից և Վերջաբանից: Կցված է նաև «Դավելվածներ» բաժինը, որի նյութերն ուղղակիրեն առնչվում են սույն աշխատության հետ: Ի գույնը նվիրված է «իրավունք», «արդարադատություն» և «դատարան» եզրույթներին: II-V գլուխներում անդրադարձ է կատարվել Հայոց Արևելից կողմանքում ստեղծված իրավունքի աղբյուրներին և իրավական ինստիտուտներին: VI-XII գլուխներում բնարկվել են օրինականության և արդարադատության հարցերը մեր Երկրամասում, սկսած միջնադարից մինչև մեր օրերը, իսկ Վերջին 2 գլուխներում ամփոփման ձևով շարադրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեկիոնումների ուղղություններմ արդի փուլում: Աշխատության վերջում տրված են օգտագործված աղբյուրների և գրականության ցանկերը:

Մենք հեռու ենք մեր հետազոտությունները կատարյալ համարելուց և դրանց գնահատականը բողնում ենք ընթերցողի դատին: Դաշվի առնելով, որ պատմական Արցախ նահանգին և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզին /ՂԻՍ/ վերաբերող շատ ու շատ արխիվային նյութեր և փաստաթղթեր, հայտնի հանգամանքների բերումով, առայժմ հասու չեն հայ հետազոտողներին, ուստի գտնում ենք, որ հետազույն դրանց հասանելիության պարագայում մեր կատարածն օգտակար կլիմի հայ իրավունքի արցախյան բնագավառն ուսումնասիրող երիտասարդ և կարող ուժերի համար:

ՆԱԽԱԲԱՆ

Դայրենական իրավունքի պատմության հիմնարար հարցադրումները հայ իրավագիտությունը դեռևս համարժեք ու համակողմանի հետազոտության նյութը չի դարձրել, ինչը պայմանավորված է արդիական հիմնախնդիրների աննախադեպ ծավալով ու բարդությամբ: Անկախության կայացման ու ամրապնդման գործընթացն ինքնին անխուսափելի հորեն ենթադրում է ողջ արժեհամակարգի վերահնաստավորում և դրան հաճահունչ իրավական հիմքերի մշակման անասելի բարդ գործընթաց, ինչն էլ ավելի է խոցելի դարձել տարածաշրջանային ռազմական անկայուն վիճակի արդյունքում: Այնուամենայնիվ, անվիճելի է այն, որ իրավիճակային լուծումները, որքան էլ դրանք լինեն արհեստավարժ ու խելամիտ, ի զորու չեն սպառիչ ու հեռանկարային լուծումներ առաջադրելու, եթե դրանք կտրված են իրենց պատմաքաղաքական արմատներից և սնուցում չեն ստանում այն «կենարար» աղբյուրներից, որոնք ունակ են ապահովելու հարատև, բնականոն ու կանխատեսելի էվոլյուցիա:

Ահա այս անխոցելի բանաձևն է դրված իրավագետ Վլադիմիր Շովսեփյանի «Իրավունքը և արդարադատությունն Արցախում» մենագրությունում: Այն առանձնանում է անհրաժեշտ գիտագործնական խորությամբ, միանգամայն ինքնատիպ վերլուծությամբ ու դատողություններով, հարուստ տեսական աղբյուրներով ու իրավակիրառ պրակտիկայի նյութերի համակողմանի ուսումնասիրությամբ: Աշխատության արժանիքներից է այն, որ հեղինակը, վերլուծելով, առաջին հայացքից նաև գիտականություն չքովանդակող աղբյուրներ, բացահայտել է դրանցում այնպիսի ուրույն դրվագներ ու լուծումներ, որոնք որոշակի ասպեկտներով հետազոտելու և մեկնաբանելու արդյունքում հնարավոր է դարձել հանգելու միանշանակ գիտական եզրահանգումների: Դեղինակը հաջողությամբ փորձել է հիմնավորել, որ իրավունքի և ընդհանրապես կյանքի փիլիսոփայությունը «քաքնված» է ոչ միայն ակնհայտ նատչելի տեսական, այլ պատճական, կրոնական ու բանահյուսական աղբյուրներում: Ընդ որում, հեղինակի կողմից առաջադրված եզրահանգումները կարող են հուսալի բանալի լինել արդեն մեր օրերում ծագած ու դեռ սպասվող խորին իրավական հիմնախնդիրների լուծման համար:

Մենագրությունն իրենից ներկայացնում է հարուստ պատմահիրավական աղբյուրների խիստ համակարգված վերլուծություն, ինչը ոչ միայն կարող է երաշխավորել անհրաժեշտ իրավագեկվածություն՝ նշված հարցադրումներով հետաքրքրվող մասնագետների համար, այլև

իշնթացս բովանդակում է Արցախի բացառապես հայկական ծագման առնչությամբ բազում անհերքելի փաստեր: Յարկ ենք համարում նկատել, որ թեպետ հետազոտության նյութը Վերաբերում է Արցախի իրավական համակարգի առանցքային նշանակություն ունեցող հարցադրումներին, այն կարող է գիտական արժեք ունենալ նաև ընդհանրապես հայ իրավունքի արժեքների համակողմանի լուսաբանման և հիմնավորված եզրահանգումների համար:

Ընդգծենք, որ մենագրության գիտական խորությունն ու փաստարկված շարադրանքը մեծապես պայմանավորված են նաև հեղինակի կենսագրությամբ. Վլադիմիր Շովեմիյանը իր դատողությունները կառուցելիս, անշուշտ, հենվել է ոչ միայն զուտ պատմահրավական աղբյուրների պարզ ուսումնասիրության, այլև իր իսկ հարուստ կենսափորձի վրա: Տևական ժամանակ ներգրավված է եղել արհեստավարժ իրավագետի պատրաստվածություն պահանջող կառուցեներում, հետագայում արդեն պատասխանատու դիրք զբաղեցնելով ինչպես իրավապահ մարմիններում, այնպես էլ արդարադատության համակարգում: Այս պահին էլ Վլադիմիր Շովեմիյանը, լինելով գործող դատավոր, քաջածանոր է ողջ դատական համակարգի նրբություններին և խորքային պատկերացումներ ու տեսլական ունի այդ բարդ համակարգի բարելավման առնչությամբ:

Սույն մենագրությունը բարեխիղճ գործելու, տեսական հարցերի անվերապահորեն պատասխանատվությամբ վերաբերվելու արգասիք է, այն, ինչ-որ տեղ և, հատկապես, մեր երիտասարդ սերնդի համար՝ գիտական հետազոտություն իրականացնելու և ինքնուրույն, հիմնավորված գաղափարներ առաջադրելու ուսանելի օրինակ է, քանզի դրանում բացարձակապես չի նկատվում հապճեալ ու սոսկ մի քանի հանրաճանաչ աղբյուրների վերլուծության հիմնան վրա մակերեսային մտքեր համացնելու միտում:

Դայաստանի Դանրապետության «Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհուրդը գոհունակությամբ արձանագրել է, որ մենագրությունն արժանի է երաշխավորել տպագրության:

**ՀՀ «Սահմանադրական իրավունքի կենտրոն»
խորհրդի նախագահ, իրավաբանական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գևորգ ՂԱՆԻԵԼՅԱՆ**

«ԻՐԱՎՈՒՆՔ», «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՂԱՏԱՐԱՆ»
ԵԶՐՈՒՅԹԱՆԵՐՆ ԻՐԱՎԱՐԱՅՅԱՅ ԱՐԵՑՈՒՐՆԵՐՈՒՄ

Արդարներին և կյանքում ուղիղ ընթացողներին
դատարան չկա, և արդարամիտ մարդը չի վախենում
ոչ երկնավոր և ոչ էլ երկրավոր դատավորից:
Միհիքար Գոշ

Յրաջա Աճառյանի «Յայերեն արմատական բառարան»-ի համաձայն՝ հայերեն իր /բան, մի բան/ բառի իրավ գործիական ձևը «իրավունք, դատաստան, արդարադատություն» նշանակությամբ գոյական դառնալով և որպես գոյական ընթռնվելուց հետո՝ տվել է նորանոր ածանցներ, որոնցից մեկն էլ իրավունք բառն է:¹

Պետության հիմնական հատկանիշներից մեկն էլ իրավունք՝ այսինքն, պետության կողմից սահմանված և տվյալ պետության տարածքում բնակվող ամբողջ բնակչության համար վարօքագծի պարտադիր կանոնների առկայությունն է: Այդ առումով կարևոր նշանակություն են ծեռք բերում օրենք, դատարան և դատավոր հասկացությունները: Եթե, ինչպես նշեցինք, իրավունքն իրենից ներկայացնում է իրավական նորմերի միասնական համակարգ, որը պարտադիր է տվյալ պետության տարածքում բնակվող ամբողջ բնակչության համար և հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունների պետական կարգավորիչ, ապա իրավագիտության մեջ, նեղ իմաստով, օրենքի տակ նկատի է ունեցվում պետական իշխանության ներկայացուցչական (օրենսդրական) մարմնի կողմից հատուկ կարգով ընդունված նորմատիվ ակտը, որը կարգավորում է որոշակի հասարակական հարաբերություններ և դրանց կատարումն ապահովում պետական հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությամբ: Լայն իմաստով, օրենքի տակ նկատի է ունեցվում որոշակի իրավական համակարգի շրջանակներում գործող ցանկացած նորմատիվ-իրավական ակտ:

Յայոց լեզվում արդար ածական բառը ստուգաբանվում է անմեղ, հանցանք չկատարած, ճշմարիտ, անկողմնակալ, անխարդախ, իրավարար, բարեպաշտ, իրավացի, օրինավոր և այլ իմաստներով: Արդար բառից են ծագում արդարություն, արդարադատություն, արդարամիտ, արդարադատ և մի շարք այլ բառեր: Արդարադատությունը պետական

գործումեռթյան հատուկ տեսակ է, որը մարդկության պատմության զարգացման տարբեր ժամանակաշրջաններում տարբեր բովանդակություն և գործառույթներ է ունեցել: Հին աշխարհում արդարադատության գործառույթները հիմնականում գտնվել են միապետների՝ թագավորների, արքաների, կայսրերի ձեռքում և եթե, այսօրվա հնաստով, գործել են ինչ-որ դատահրավական կառուցմեր /ոստիկանություն, նախաքննության մարմիններ, դատախազություն, դատարաններ, հարկադիր կատարողներ/, ապա դրանք միայն գործիք են ծառայել միապետների համար: Ուրիշ կերպ չեր կարող լինել, որովհետև Հին աշխարհում ամբողջ իշխանությունը պատկանում էր միապետին:

Ի տարբերություն արդարադատության, արդարությունը պատմական հասկացություն է / աչքի դիմաց աչք, ատամի դիմաց ատամ/: Որպես այդպիսին, այն նաև բարոյական, քաղաքական կատեգորիա է և արդարադատության բնութագրիչներից մեկն է համարվում, ավելի ճիշտ, նրա հիմնական պահանջը:

Ներկայումս աշխարհի բոլոր երկրներում արդարադատությունն իրականացվում է դատարանների միջոցով:

«Դատարան» եզրույթն իրավական իմաստով օրենսդրության մեջ ներկայումս օգտագործվում է մի քանի նշանակությամբ:

1) «Դետական մարմին», որն անկախ և ինքնուրույն է պետական իշխանության այլ ճյուղերի մարմիններից և Սահմանադրությամբ ու օրենքներով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, այդ թվում՝ արդարադատություն: «Դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, կազմված է օրենքով սահմանված կարգով նշանակված (ընտրված) դատավորներից, ովքեր գործում են արհեստավարժության հիմնան վրա:

2) «Դատարան» հասկացությունն ընդգրկում է նաև դատական համակարգի կառուցվածքային միավորները՝ ատյանները և օղակները, որոնցից յուրաքանչյուրը նշելու համար օգտագործվում է «դատարան» եզրույթը, ինչը ցույց է տալիս դրա տեղն ու դերը և կարգավիճակը դատական համակարգում:

3) «Դատարան» հասկացության իրավական իմաստներից մեկն էլ բացահայտում է դատական կազմը (միանձնյա կամ կոլեգիալ), որն օրենքի համաձայն իրավասու է քննելու և լուծելու կոնկրետ գործը²:

«Դատավոր» եզրույթը հայց լեզվում օգտագործվում է մի քանի՝ իրավական, մարզական, կրոնական (Երկնային դատավոր), ընկերական, ներքին (խոդի դատավոր) և այլ առումներով: «Դատավորի՝ որպես

պետության պաշտոնատար անձի և դատական իշխանության կրողի, հասկացությունն առայսօր իրավաբանական և գիտական գրականության մեջ և իրավաբանական հանրագիտարամներում տրված չէ: Միայն խոսվում է նրա կարգավիճակի, վարքագիր կանոնների, արդարադատության իրականացնան իրավասության և լիազորությունների, դատավորների նշանակման կարգի, նրանց ներկայացվող պահանջների և այլ հարցերի մասին: Իրավական առումով, համաձայն ՀՂԴ դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի՝ «Դատավոր է Գերագույն, վերաբերնի և առաջին ատյանի դատարանների նախագահների և դատավորների պաշտոնում օրենքով սահմանված կարգով նշանակված անձը»: Այս ձևակերպումից բխում է, որ դատավորը դատական մարմիններում աշխատող պաշտոնատար անձ է, ով օժտված է պետականական լիազորություններով և դատական որոշումներ է կայացնում պետության անունից: Ամեն դեպքում, «դատարան» և «դատավոր» եզրույթների արմատը «դատ» բառն է կազմում: Նշված արմատն են կրում դատել, դատապարտել, դատափետել, դատավարություն, դատվածություն, դատավիճություն, դատակոչ, դատակոչ, դատաստան, դատապաշտպան, դատախազ, դատախաղ (շինուու դատավարություն), դատամոլ, դատազանց, դատախնդիր (հայցվոր), դատակիր (պատախանող) և այլ բազմաթիվ բառեր:

«Հայերեն արմատական բառարան»-ի հեղինակը նշում է, որ համաձայն՝ «դատ» բառը հավասարազոր է պահլավերեն dat, պազենդերեն (իրանյան լեզու) dad, քրեթեն, աղվաներեն dad, պարսկերեն dad (օրենք, արդարություն, իրավունք), հյուսիսային պարսկերեն data-«օրենք», գենդերեն data-«օրենք, կանոն» բառերին, որոնք ծագում են իրանական da-«տալ, դնել» արմատից: Իրանականից փոխառյալ են բարելական data, հրեական dat-«արքայական իրաման, օրենք», ասորական data-«օրենք», արևելյան թուրքերեն tat-«արդարություն» բառերը:

Հայերենի մեջ «ստան» և «արան» գոյականակերտ վերջածանները նույն իմաստն ունեն և նշանակում են տեղ, վայր (Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, վեհարան, լսարան, թանգարան): Այդ տեսանկյունից, «դատարան» և «դատաստան» հոմանիշ բառերը հավասարազոր են պահլավերեն dadistan, պազենդերեն dadastan, պարսկերեն dadistan բառերին, որոնք, կազմված լինելով dad («դատ») բառից և stan («ստան») մասնիկից, երկուսն էլ արտահայտում են դատն ընթանալու և դատական որոշում կայացնելու իմաստը: «Դատավոր» («դա-

տաստան կտրող») բառը հավասարագոր է պահլավերեն datavar, մանիքերեն datbr, պազենդերեն davar, պարսկերեն dadvar կամ davar-«դատավոր» իրանյանից փոխառնված արամերեն daddawar («դատավոր») բառերին, որոնց բոլորի արմատն իրանական ձա («դատ, իրավունք») բառն է կազմում: Ի դեպ, պարսկական բարդություն է նաև «դատախազ» («դատ պահանջող, գանգատվող, հակառակորդ, դատի մեջ ամբաստանող») եզրույթը, որի արմատը ևս պարսկերեն dad («դատ») բառն է³:

«Դատարան» և «դատական իշխանություն» հասկացությունները նույնարդում են: Եթե «դատական իշխանություն» հասկացությունը ենթադրում է պետական իշխանության ճյուղերից մեկը՝ օժտված լիազորություններով և գործառույթներով, ապա դատարանը հանդիս է գալիս որպես իշխանության այդ ճյուղի լիազորությունները և գործառույթները կրող մարմին: Այդ երկու հասկացությունները միմյանցից տարբերվում են նաև իրենց պատմական արմատներով: «Դատական իշխանություն» եզրույթն ավելի ուշ ժամանակաշրջանի հասկացություն է: Այն առաջին անգամ իր արտացոլումը գտավ ԱՄՆ-ի 1787 թվականի Սահմանադրության մեջ, իսկ Արցախի պետական շինարարությանն առնչվող փաստաթղթերում՝ ԼՂՀ Գերագույն խորհրդի 1992 թվականի հունվարի 6-ին ընդունած՝ «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքում: Անվիճելի փաստ է, որ, որպես սոցիալական երևույթ, դատարանը պատմականորեն հանդիս է եկել պետության առաջացման հետ միաժամանակ, որի ակնունքները հասնում են մինչպետական հասարակարգ, որտեղ կյանքի հիմքում ընկած էր արտադրության միջոցների հանրային սեփականությունը, իսկ աշխատանքի արդյունքի բաշխումն իրականացվում էր հավասարության սկզբունքով:

Նախնադարյան համայնական հասարակության կազմակերպման հիմքը եղել է համայնքը, տոհմը, ցեղը, տոհմի կամ ցեղի խորհուրդը և այլն: Այստեղ իշխանությունը կրում էր սոսկ հասարակական բնույթ, իշխանական գործառույթներն իրականացվում էին տոհմի բոլոր մեծահասակ անդամների կողմից: Կասարակարգում գործում էին վարքագծի որոշակի կանոններ՝ սոցիալական նորմեր: Դրանց թվին են դասվում սովորույթները, որոնք, դարերի ընթացքում կատարելագործվելով, կարգավորում էին ցեղի անդամների աշխատանքը, ընտանեկան հարաբերությունները, այսինքն՝ ծառայում էին որպես հասարակական

հարաբերությունների կարգավորիչ: Հանցանքի կամ իրավախախտման համար ամենախիստ պատիժը եղել է տոհմից վտարելը, ինչպես նաև՝ արյան վրեժը: Սակայն ժամանակի ընթացքում սովորույթները դադարեցին կատարել իրենց կարգավորիչ գործառույթը:

Քարե դարաշրջանի վերջին փուլում (մ.թ. 8-10 հազար տարի առաջ) մարդկությունը բաժանվեց խաշնարածների, հողագործների, արհեստավորների և վաճառականների խմբերի, բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, աշխատանքի բաժանման գործընթացում ավելցուկ ապրանքը կուտակվեց առաջին խմբերի ձեռքում: Նման պայմաններում հնարավոր չէր սովորույթով հիմնավորել այն փաստը, որ ցեղի մի անդամը պարտավոր է աշխատել, իսկ մյուսները կարող են նիւյն սպառել: Անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու մարդկանց միջև հարաբերությունները կարգավորող հատուկ վարքագիր կանոններ: Սկզբում դրանք բնակչության կողմից ընկալվում էին որպես ի վերուստ տրված: Եվ հասարակության մեջ ստեղծված, մշակված կանոնները գործադրվում էին համայնքի մեջերի, ցեղի առաջնորդների և քրմերի կողմից: Նրանք էլ իրականացնում էին արդարադատություն:

Մասնավոր սեփականության հետևանքով, հասարակությունը հարուստների և աղքատների բաժանվելու պարագայում, անհրաժեշտություն առաջացավ կազմակերպել այնպիսի իշխանություն, որը կպահպաներ ուներ ներքությունը շահերը, իսկ չուներ ներքությունը կապահեր սանձահար վիճակում: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Յին Արևելքում, իսկ ավելի ուշ՝ Յնդկաչին թերակղզում, ծագեցին առաջին պետությունները: Առաջին պետությունների ծագումը հանգեցրեց նրան, որ հասարակության մեջ ստեղծվեցին նախադրյալներ՝ իշխանության բաժանման, այդ թվում՝ դատական իշխանության բաժանման համար: Մարդկության զարգացման պատմությունը վկայում է, որ հասարակության կենսագործունեության համար դատարանն անհրաժեշտ արդյունք է հանդիսացել: Պետական միավորում ստեղծելու մարդկանց ցանկացած համակցություն անխուսափելիորեն ենթադրում է դատական մարմինների առկայություն: Պատմաբանների կարծիքով, դա կատարվեց մոտավորապես մ.թ. 1000 (հազար) տարի առաջ, Յին Շունաստանում: Ինչպես հայտնի է, ինը հունական քաղաք-պետություններն ունեցել են կառավարման հասարակ-ժողովրդավարական ձև: Հատկապես այդ պետությունում, անձնական վրեժինդրությունից անցում կատարվեց դեպի իրավական նորմերի ճանաչում, որտեղ և ծագեցին առաջին միջնորդ դատարանները: Ավելի ուշ, նման դատարաններ ստեղծվեցին

Հռոմեական կայսրությունում, որտեղ հռոմեացիներն իրավունքը բաժանեցին հանրայինի և մասնավորի, և հենց «հռոմեական» (մասնավոր) իրավունքի հիման վրա ստեղծվեցին Եվրոպական Երկրների քաղաքացիական օրենսգրքերի մեջ մասը: Հռոմեացիները «միջնորդ դատավոր» հասկացության փոխարեն նտորեցին «արքիտր» հասկացությունը:

Հայկական լեռնաշխարհում ցեղային առաջին իշխանությունները ձևավորվել են մ.թ.ա. II հազարամյակում, իսկ առաջին հայկական պետությունը՝ Արարատյան թագավորությունը (Ուրարտու), հիմնվեց մ.թ.ա. IX դարում և Երվանդունիների, Արտաշեսյանների ու Արշակունիների արքայատոհների տիրապետնամբ գոյատեց մինչև մ.թ. 428 թվականը: Այդ ժամանակաշրջանի գրավոր աղբյուրները մեզ շատ քիչ տվյալներ են թողել՝ պատկերացում կազմելու, թե հեթանոսական Հայաստանում իրավունքի հ՞նչ ինստիտուտներ են գործել, ինչպես է իրականացվել արդարադատությունը, գործերի հ՞նչ ընդդատություն է եղել, ի՞նչ լեզվով է տարվել դատավարությունը և այլն: Հարցը դժվարանում է նաև նրանով, որ Երկրում, քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո (301թ.), նոր գաղափարախոսությունը ոչնչացրեց հայ ժողովրդի հեթանոսական բազմադարյա մշակույթը՝ անհետ վերացնելով պետության իրավական համակարգին առնչվող բազմաթիվ նյութական և ոչ նյութական հուշարձաններ:

Պատմական Հայաստանում հանցագործին պատժելու վերաբերյալ ամենավաղ հիշատակումը գտնում ենք Երգիծաբան գրող Լուկիան Սամոսացու (մ.թ. 120-180թ.)՝ «Պերեգրինի մահվան մասին» աշխատության մեջ, որին նաև անդրադարձել է Ֆր. Էնգելսը՝ «Նախասկզբնական քրիստոնեության պատմության շուլջ» հոդվածում: Ազգությանը հույս Պերեգրինը, հանդիսանալով մի փառասեր և արկածախնդիր անձնավորություն, Երիտասարդ հասակում Հայաստանում իր ապագա հաջողությունը (կարիերա) սկսեց «շնորհյուն» (ընտանեկան հավատարմության խախտում) անելով և բռնվեց արաքի կատարման վայրում: Տեղական սովորույթների ուժով Պերեգրինը ենթարկվեց ինքնադատաստանի, սակայն, Երջանիկ պատահականությամբ, կարողացավ խուսափել մահից՝ տանիքից ցատկելով և թաքնվելով անվտանգ վայրում:⁴ Սա մի ծանրակշիռ փաստ է, որ ինչպես բոլոր ժողովուրդների մոտ, այնպես էլ պատմական Հայաստանում, արդարադատության իրականացման սկզբնական ձևերից մեկն էլ ինքնադատաստանն է եղել: Իսկ ինքնադատաստանը դատաստանից տարբերվում է նրանով,

որ մարդու ճակատագիրը որոշում են ոչ թե օրենքով, այլ՝ զգացմունք-ների կամքով։ Իհարկե, ինքնադատաստանից բացի, պատմական Հայաստանում արդարադատությունն իրականացվել է նաև դատարանների միջոցով։ Եկեղեցական խոշոր գործիչ և գրող Ե.Կեսարացին (263-340թթ.) նշում է, որ հայերի և պարսիկների մոտ մարդասպանները ենթարկվել են մահապատժ՝ և դատավորների, և սպանվածի հարազատների կողմից։⁵ Այս երկու օրինակները վկայում են, որ, պատմական Հայաստանի պետականության զարգացմանը զուգընթաց՝ մասնավոր արդարադատությունն աստիճանաբար իր տեղը զիջել է պետական արդարադատությանը։

Աշխարհի հզոր գաղափարախոսություններից մեկը՝ քրիստոնեությունը, Մեծ Հայքում 301 թվականին հռչակվեց որպես պետական կրոն։ Նոր կրոնի հաղթարշավի պայմաններում դատաիրավական գործառույթների մի մասն անցավ հոգևորականության ձեռքը։ Արդեն Ներսես Մեծ կաթողիկոսի նախաձեռնությանք, Տարոն գավառի Աշտիշատ ավանում հրավիրվեց Հայ առաքելական Եկեղեցու առաջին պաշտոնական ժողովը (356թ.), որը բնակչության բոլոր խավերի համար համապարտադիր կանոններ սահմանեց։ Ինչպես Աշտիշատի, այնպես էլ Շահապիվանի (446թ.), Դվինի (452թ.) և մյուս Եկեղեցական ժողովներում ընդունված կանոններն իրենց սուրբ ծայրով իիմնականում ուղղված են եղել հեթանոսական սովորույթների դեմ՝ արտացոլելով հայ ժողովրդի նվիրվածությունը քրիստոնեական հավատին։ Շահապիվանի կանոնները մեզ հուշում են, որ քրեական գործերն ընդդատյա են եղել աշխարհիկ դատարաններին։ Կանոնների մեջ նշվում է «ավագ դատավորների»⁶ մասին, որոնք իշխանության մեջ բարձր դիրք են գտավել և ամենայն հավանականությամբ աշխարհականներ են եղել։

Բնական պետք է համարել, որ հայերեն գրերի գյուտից հետո (406թ.) հայերեն լեզվով առաջին գիրքը եղել է քրիստոնեական հավատի գլխավոր մատյանի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որը կատարել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և նրանց աշակերտները։ Աստվածաշնչի առաջին գիրքը՝ Յին Կտակարանը («Մովսիսական օրենքներ»), կարգավորելով ամուսնացնուածանեկան, քաղաքացիական, քրեական, դատական և մի շարք այլ իրավահարաբերություններ, ևս ընդունվեց հայ քաղաքական և հոգևոր վերնախավի կողմից, անշուշտ, հաշվի առնելով, որ Մովսիսական օրենքները ստեղծվել են քրիստոնեության իիմնադրի հայրենիքում։ Քանի որ Աստվածաշունչն իրավունքի մի շարք ճյուղերի համար աղբյուր է հանդիսացել, որտեղ արտա-

ցոլված են արդարադատության իրականացման մի շարք սկզբունքներ, փորձենք ցույց տալ, թե Աստծուց ոգեշնչված մարդարեներն ու առաջալներն ինչպիսի՝ պատկերացում են ունեցել դատարանների ու դատավորների մասին:

«Դատավոր» եզրույթն առաջին անգամ հանդիպում ենք Աստվածաշնչի Ելից գրքում. դա այն ժամանակներն էին, երբ հրեաները դեռևս գտնվում էին Եգիպտոսում: Մովսեսը, նկատելով իրար հետ կռվող Երկու հրեաների, մեղավորին նկատողություն է անում՝ ընկերոջը ծեծելու համար և ստանում հետևյալ պատասխանը. «Ո՞վ քեզ մեր Վերայ իշխան կամ դատաւոր դրավ. ի՞նձ էլ մեռցնելու միտք ունիս, ինչպես որ Եգիպտացուն մեռցրիր»:⁷ Ծիշտ է, ուրիշ ժողովուրդներ ևս ունեցել են դատավորներ, բայց Աստծո ժողովորդի դատարանը Աստծո գործն էր և իրականացվում էր Նրա անունից՝ Մովսես մարդարեի միջոցով: Սակայն Մովսեսի համար միայնակ դժվար էր կազմակերպել դատաստանական գործի իրականացումը, ուստի իր աներոց՝ քահանա Յոթորի խորհրդով, դատավորներ ընտրեց՝ Վերապահելով նրանց որոշ դատական գործառույթներ. «Եւ Մովսեսը բոլոր իսրայէլիցը կարող մարդիկ ընտրեց, եւ նորանց ժողովորդի Վերայ գլխավորներ, այսինքն հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ և տասնապետներ կարգեց: Եւ ամեն ժամանակ նորանք էին դատում ժողովորդին, դժուար բանը Մովսեսին էին բերում, բայց ամեն փոքր բանը իրանք էին դատում» (Ելից գրքի ԺՈՂՈՎ 14-24 կետեր):

Այսպիսով, Մովսես մարդարեն ստեղծեց դատական իշխանություն, պրոֆեսիոնալ իրավական աշխատանք կատարող մարդկանց՝ դատավորական խափ: Այլ կերպ ասած՝ նա դրեց ոչ միայն իշխանությունների տարանջատման առաջին և գլխավոր իիմքը, այլև նախասահմանեց դատական տարբեր օղակների ընդդատությունը:⁸ Դատական գործառույթներ իրականացնելու համար, ըստ Սուրբ Գրքի՝ Սինայի անապատում և համանուն լեռան վրա, Եհովա աստվածը Մովսեսին տվեց հանրահայտ այն տասը պատվիրանները, որոնցից յոթը իիմք հանդիսացան իրավունքի ներկայիս հիմնարար ճյուղերի առաջացման համար (հանգստացիր յուրաքանչյուր 7-րդ օրը և հանգիստ տուր քո ընտանիքի անդամներին...., հարգիր հորդ և մորդ, շնություն մի արա, մի՛ սպանիր, մի՛ գողանար, սուս վկայություն մի արա, ուրիշի գույքը, ուրիշի ծառային և ուրիշի կնոջը մի ցանկար): Պրոֆեսոր Ռ.Պետրոսյանի պատկերավոր բնորոշմանը՝ «Ճենց այստեղ է, որ յուրաքանչյուր մարդ պետք է մտքով խորանա իր վարքագի մեջ՝ ծիշտ պատկերացում

կազմելու համար, թե որքան է նա հեռացել այս գեղեցիկ պատվիրան-ներից և ի՞նչ պետք է անի նա, որպեսզի վերադառնա Աստծոն շնորհներով օժտված մարդ էակի վիճակին»:⁹ Աստվածաշունչը սահմանում է արդարադատության իրականացման մի շարք սկզբունքներ, որոնց ուսումնասիրությունը հատուկ նյութ է կազմում:

«Դատավոր» եզրույթը, բառիս ավելի լայն իմաստով, նշանակում է կառավարիչ: Այդպես էին կոչվում այն առաջնորդները և ազատագրողները, որոնք Մովսեսի սպասավոր Նավեհ որդի Յեսուի մահվանից հետո, Երկրի անհանգիստ և խառնակ ժամանակներում, Տիրոջ կողմից կարգվել են՝ թշնամիների կողմից տառապվող ժողովրդին կառավարելու և օգնելու համար: Դրանք այն օրերն էին, երբ հսրայելում թագավոր չկար, և ամեն մարդ իր ուզածն էր անում: Աստվածաշնչի Դատավորաց գիրքը վերաբերում է հենց հսրայելուն կառավարող և օրինականություն հաստատող դատավորների գործունեությանը: Դատավորներն օժտված չեն եղել թագավորական իշխանությամբ (բացառություն էր կազմում Արամեեք դատավորը): Նրանք որևէ իրավունք չեն ունեցել հողի և ժողովրդի նկատմամբ ու իրենց պաշտոնը ժառանգաբար չեն փոխանցել: Նրանք իրենց իշխանությունը կիրառել են այն ժամանակ և այն վայրերում, որոնք Տերը մատնանշել է: Այդ իշխանության մի մասը կայացել է արդարադատության իրականացման (Դատավորաց գրքի Դ գլխի 4-րդ կետ, «Ա» Թագավորաց գրքի Է գլխի 15-րդ կետ և այլն), իսկ մի մասն էլ՝ կառավարչի պարտականությունների կատարման մեջ (Դատավորաց գրքի Ժ գլխի 2-րդ կետ, ԺԲ գլխի 8-րդ կետ և այլն): Դատավորը Երկիրը կառավարել է ցմահ: Յրեա դատավորների դրությունը և նրանց տիտղոսը (Եբրարերեն՝ շոֆետ) համահունչ էր Յին Կարթագենի աստիճանավորների դրությանը և տիտղոսին, որոնք կոչվում էին «սուֆֆետ»: Վերջիններիս իշխանությունը համապատասխանում էր Յոռմում կոնսուլների իշխանությանը, որոնց պատմիչ Տիտոս Լիվիոյ (մ.թ.ա. 59 - մ.թ.17) դատավորներ էր անվանում: Համաձայն Աստվածաշնչի՝ Դատավորաց իշխանությունը տևել է 450 տարի: Հսրայելը կառավարած 15 դատավորներից մեկն էլ կին է եղել՝ Դեբորա անունով, որը 40 տարի ղեկավարել է Երկիրը (Դատավորաց գրքի Դ գլխի 4-րդ կետ): Աստվածաշնչի Յին Կտակարանում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ դատասատանը կատարվում է Աստծոն անունից և Աստծոն կողմից Մովսեսի միջոցով ժողովրդին տրված պատվիրանների իիման վրա: Օրենքները Սիոնից կելնեն, Տիրոջ խոսքը՝ Երուսաղեմից, ընդգծում է Եսայի մարգարեն:

Իսկ ի՞նչ է ասում քրիստոնեության գաղափարախոսությունը դատարանների և դատավորների մասին: Ավետարանի առաջին երեք գրերում, քրիստոնեական քարոզների համեմատ, շատ քիչ է խոսվուն դատարանների և դատավորների մասին և, ի տարբերություն Յին Կտակարանի, Նոր Կտակարանը «ահավոր դատաստան» եզրույթը չի օգտագործում: Յինուս Քրիստոսն ասում է, որ «ամեն դատարկ խոսքի համար մարդիկ դատաստանում պետք է պատասխան տան». մեղավորները չեն կարող խույս տալ «գեհենի դատաստանից» (Ավետարան ըստ Մաթեոսի, գլուխ ԺԲ, 36, 37 կետեր, գլուխ ԻԳ, 23-33 կետեր): Մեր կարծիքով, «Մի դատվեք, որ չդատվեք, որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք» աստվածաշնչյան պատգամը (Մաթեոս, գլուխ Է, 1,2 կետեր), Վերաբերում է այն փարիսեցիներին (կեղծավոր մարդ), որոնք «օրենքի ծանր բաները՝ դատաստանը և հավատքը, բողել, կեղծ դատավարություններ են իրականացրել, բայց իրենք չեն ուղղվել (Մաթեոս, գլուխ ԻԳ, 22-35 կետեր): Այդ կապակցությամբ Քրիստոսն առակ է պատմում այն անհրավ դատավորի մասին, որին մի աղքատ այրի կին իր համառությամբ ստիպում է կատարելու իր պարտականությունները (Ավետարան ըստ Ղուկասի, գլուխ ԺԸ, 1-9 կետեր):

Դատարանը, որի մասին խոսում է Քրիստոսը, դա լույսի հաղթանակն է խավարի նկատմամբ:

Կասկածից վեր է, որ հայերեն լեզվով թարգմանած Աստվածաշունչը, Վ դարի հայ գրականության համար մի մեծ աղբյուր հանդիսացավ, որից օգտվեցին միջնադարյան մեր բոլոր պատմիչները՝ Ազարանգեղոսը, Փավստոս Բյուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին և մյուսները:

Ենթադրվում է, որ, Սուրբ Գրքից հետո, հայերեն լեզվով առաջին գիրքը՝ Ազարանգեղոսի «Յայոց Պատմություն»-ն է եղել, որի առանցքն են կազմում Գրիգոր Լուսավորչի վարքն ու հայերի դարձը քրիստոնեության: Չնայած աշխատության մեջ առատորեն օգտագործված են աստվածաշնչյան գաղափարներ, այնուամենայնիվ, այդ երկը գուրկ չէ պատմահրավական արժեքից: Աշխատության մեջ բազմիցս նշվում են «դատ», «դատաստան», «դատել», «Աստծո դատաստան», «դատապարտել», «Վճիռ արձակել» եզրույթները: Այսպես, բանավեճի մեջ մտնելով Գրիգոր Լուսավորչի հետ, հայոց Տրդատ արքան (278-330թթ.) նրան հարցնում է. «Ու՞ր է քո աստվածը, որը քեզ փրկի ին ձեռքից կամ դատի, որպես ասացիր, իր դատաստանով»:¹⁰ Գ. Լուսավորչի պատաս-

խանճերում օգտագործված «դատարան», «դատավոր, դատավորներ» եզրույթները բխում են Սուրբ Գրքի վկայաբանություններից: Ֆիշտ է, ինչպես արևելյան բոլոր միապետություններում, այնպես էլ Արտաշեսյանների և Արշակունինների թագավորության տարիներին երկրի գլխավոր դատավորը Դայոց արքան է եղել, բայց երկրում միաժամանակ գործել է դատական գործառույթներով օժտված դատավորի հիստիտուտը: Ազգային գլուխությունը հաղորդմանը, երբ Տրդատ արքան Վաղարշապատ քաղաքում զորաժողով է անում, ներկայանում են «մեծամեծեր, կուսակալներ, գավառապետներ, պատվավորներ, պատվականներ, զորավարներ, պետեր, իշխաններ, նախարարներ, ազատներ, դատավորներ ու զորագլուխներ»:¹¹ Ինչպես տեսնում ենք, նույնիսկ հեթանոսական Դայաստանում դատավորները տիրապետող դասակարգի խավերի մեջ բարձր դիրք էին գրավուն:

Բյուզանդյան մեջ գովասամքով է խոսում Խոսրով Կոտակի թագավորության տարիների մասին, որի օրոք «ծաղկած էին իրավունքն ու արդարությունը»: Ըստ պատմիչ՝ Տարոն գավառում գործում էր «Մեծ դատավարության» գործակալությունը:¹² Ինչպես մյուս գործակալությունները, այնպես էլ արդարադատության բնագավառը ղեկավարող «Մեծ դատավարության» գործակալը ստորադրված էր թագավորին և ենթարկվում էր նրա գերագույն իշխանությանը: Դա նշանակում է, որ դատական իշխանության բարձրագույն կրողը թագավորն էր: Իսկ գործակալությունները, ներկայիս իմաստով, կարելի է համեմատել նախարարությունների, գերատեսչությունների հետ: Գործակալությունների ղեկավարները տվյալ գավառի դատավորներն են հանդիսացել և պետականական գործառույթներ իրականացրել: Այդ հանգամանքը հաստատվում է նաև պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, ըստ որի՝ Վաղարշակ թագավորը (մ.թ. 1-ին դար), սահմանում էր իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում: Մեկ այլ առիթով պատմահայրը դատավորներին ևս առանձին է շեշտում՝ բնութագրելով նրանց տմարդի, ստախոս, խարող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող բառերով:¹³ Սրանք արդեն մեկ միասնական պետական իշխանությունից առանձնացված դատական գործառույթներ կրող անձինք են եղել:

Բյուզանդից կարելի է նաև եզրակացնել, որ պատմական Դայաստանում աշխարհիկ և հոգևոր դատարանների միջև առկա էր գործերի ընդդատության սկզբունքը: Արշակավան քաղաքը բնակեցնելու նպատակով՝ Արշակ II թագավորի (մ.թ. 350-367թթ.) իրամանով այնտեղ էին

հավաքվել գողերը, ավազակները, արյունապարտները, մարդասպանները, ստախոսները, խաբեբանները, վճասարարները, գրպանահատները, գրկողները, դատի մեջ ստողները, գրպարտողները, հափշտակողները, պարտատերերը, գրավատուները: Սխալ չեր լինի թվարկումից ենթադրել, որ նրանց կողմից կատարած քրեական և քաղաքացիական բնագավառի որոշակի գործերն ընդդատյա են եղել աշխարհիկ դատարաններին: Սակայն, ի տարերություն Վաղարշակ թագավորի, Արշակ թագավորը չկարողացավ երկրում կարգ ու կանոն հաստատել, պաշտպանել իրավունքը, այդ պատճառով բոլոր մարդիկ վայ տալով հառաջում էին. բոլորի բերանում ընդհանուր խոսք էր դարձել և միշտ ասուն էին, թե «Իրավունքը մեռավ, եթե նա գոյություն ունենար, բայց կորած լիներ՝ կփնտրեինք, մի տեղ կգտնեինք նրան»:¹⁴

Միջնադարյան հայ պատմիչները «դատարան» եզրույթի փոխարեն օգտագործել են ատյան բառը, որը հայերեն լեզվի բուն նշանակությամբ մեկնաբանվում է «ժողով, պաշտոնական մարմնի ժողով, ժողովի նիստ, ժողովասրահ, դատավորների ժողով, դատաստան, դատարանի առաջ հարցաքննություն»¹⁵ իմաստներով: Դատարան բառն առաջին անգամ օգտագործվել է ուշ միջնադարում: Անվիճելի փաստ է, որ մեծ է եղել ինչպես իրանի, այնպես էլ Բյուզանդիայի պետական լեզվի և իրավունքի ազդեցությունը Հայաստանի վրա: Այդ տեսակետից հետաքրքիր է Ավարայրի ճակատամարտից հետո (451թ. Տղմուտ գետի ափին) հայոց նախարարներին և հոգևորականներին դատելու նպատակով ստեղծված Տիգրոնի դատաստանական ատյանի դատավարությունը, որտեղ ամբաստանվում էին ութ հայ քահանաներ և երեսունմեկ նախարարներ: Թեկուզ բազում դարեր են անցել, բայց Տիգրոնի դատաստանական ատյանը մերձեցման շատ եղեր ունի ներկայիս դատավարությունների հետ: Այն ստեղծվել էր Արյաց արքայի իրանակով և կազմված էր երկու փուլերից՝ նախապատրաստական և բուն դատարանությունից: Առաջին փուլում («հարցուփորձի ատյան») նախագահում էր երկիր հազարապետը՝ Մուշկան Նյուսալավուրտը, երկրորդ փուլում՝ Արյաց արքան՝ Հազկերտը: Դատաքննության արդյունքներով հայոց ապստամբության պարագլուխների նկատմամբ մահվան դատավճիռ արձակվեց: Սակայն, քուշանական ցեղերի դեմ պատրաստվող պատերազմի պատճառով, պատիժը ժամանակավորապես ի կատար չածվեց և մահապարտները շղթայակապ սպասեցին իրենց ճակատագրին: Պատերազմում ամենա կորչելու հետևանքով Հազկերտին փոխարինեց Պերողը: Կերպինս իր դիրքերն ամրապնդելու և հայ

Ժողովրդին սիրաշահելու նպատակով ներում շնորհեց հայ ապստամբներին: Տիգրոնի դատավարությունը հետաքրքիր է նաև նրանով, որ բուն դատավարության ընթացքը նկարագրած պատմիչ Եղիշեն հայոց լեզվում առաջին անգամ օգտագործեց «դատախազ» եզրույթը: Տիգրոնի դատավարությունում ամբաստանվողներից մեկն էլ Հայաստանի մարզպան Վասակ Սյունին էր, որին առաջադրված մեղադրանքը կազմված էր տարբեր դրվագներից: Այդ դրվագներից մեկն էլ թագավորին հայտնել էին նրա ազգականները, որոնց պատմիչ Եղիշեն «դատախազ» էր անվանում: («Եւ մինչեւ այս ամենայն ամբաստանութիւն զննանէ էր զայն չափ թագում աւուրս, յառաջ մատեան և իւր ազգականքն, որ ևս յառաջագոյ դատախազ լեալ էին չնմանէ առաջին արքային...»):¹⁶ Ինչպես նկատելի է, պատմիչ Եղիշեն «դատախազ» եզրույթն օգտագործել է բոլորավոր, գանգատավոր իմաստով: Ավելորդ չէ նշել, որ Արյաց արքան չխնայեց և Կասակին: Նա հեռացվեց ասպարեզից, գրկվեց պատվանշաններից, խոչոր չափով տուգանվեց և ծաղր ու ծանակի ենթարկվելով՝ շատ կարճ կյանք ունեցավ: «Դատախազ» եզրույթն օգտագործել է նաև V դարի մեկ այլ պատմիչ՝ Ղազար Փարպեցին, սակայն, բոլորովին այլ իմաստով: Փարպեցին դրա տակ նկատի է ունենում պետական լիազորություններով օժտված արքունի պալատի պաշտոնյային: Մաղմագ (թիկնապահ զորքի պետ) Գաղիշոն պարսից Պերող թագավորի առջև սուստ հանցանքների մեջ ամբաստանեց Հայոց Գյուտ կաթողիկոսին: Վերջինս թագավորի իրամանով կանչվեց պալատ և պատասխանեց դատախազի հարցերին: Փարպեցու երկի շարադրանքից նկատելի է, որ պարսից արքունիքում «դատախազի» լիազորությունները կատարել է թագավորի դայակի որդին:¹⁷

Միջնադարյան Հայաստանում օրենքի և որա կիրառողների նասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացին: Այն հարցին՝ թե չարիքներն ի բնե՞ են և ոչ կանաժին, Ե.Կողբացին պատասխանում է, «թե որ ի բնե են, ինչո՞ւ են թագավորներից սահմանվում օրենքներ, իշխաններից՝ սաստումներ, դատավորներից՝ պատիժներ, չե՞ որ չարիքներն արգելելու համար են դրանք: Այլև եթե չարիքները բնական լինեն, օրենսդիրն օրենքներ չպիտի սահմանի, ոչ էլ իշխանը չարագործին պիտի պատժի ենթարկի: Ինչու պատժել այն մարդուն, ով ինքնակամ չար չէ, որին պետք է կարեկցել: Իսկ եթե տեսնում ենք, որ թագավորն իր օրենքներին հակառակվելու համար պատժում է ու պատժելով հանցանքը պակասեցնում է, դատավորը գողին, ավագակին ամուր կապում ու տանջում է՝ վճասակարությունը մեջտե-

դից վերացնելու համար, և հայրը դաժան որդուն, որպես մահապարտի, դատավորներին է հանձնում, ուրիշ բոլորն էլ իրենց անարգանքների համար պատժում են՝ անձամբ կամ իշխանների միջոցով, պարզ է, որ կատարվող չարիքները չարի լինելը կամածին են և ոչ ի բնե»:¹⁸

Արշակունյաց թագավորության կործանումից հետո, Բյուզանդիան Արևմտյան Հայաստանի ազգային պետականությունը վերացրեց, և Երկիրը կուլ գնաց բյուզանդական կայսրերի վարչական և դատաիրավական բարեփոխումներին, իսկ Արևելյան (մարզպանական) Հայաստանում մինչև Բագրատունիների կողմից հայոց թագավորության վերականգնումը, Երկրի օրենսդրական և դատական գործառույթների մի մասը շարունակվեց մնալ հոգևոր դասի ձեռքին, որը հիմնականում դեկավարվում էր ազգային Եկեղեցական ժողովների կանոններով, իսկ հետագայում՝ Հայոց կաթողիկոս Յովհան Օձնեցու կողմից կազմված «Կանոնագիրը Հայոց» հանրահայտ աշխատությամբ։ Դրանով պետք է բացատրել, որ իրավունքի և դատական գործառույթների վերաբերյալ Եկեղեցական ժողովների գերակշիռ մասը հրավիրվել է V-IX դարերում։ Սակայն բացառություն է կազմում միայն պատճական Հայաստանի հյուսիս-արևելյան Երկրամասը՝ Արցախ և Ուտիք հայաշխարհը, որտեղ ոչ միայն շարունակվեց հայոց պետականությունը, այլև ընդունվեց իրավական նորի մի այնպիսի խոշոր հուշարձան, որը բացարիկ նշանակություն ունի հայոց իրավունքի պատճության համար։ Խոսքը վաչագան արքայի Կանոնական Սահմանադրության մասին է, որը իրավունքի, պատժիք քաղաքականության վերաբերյալ մի շարք նորմեր է պարունակում։ Սահմանադրական կանոնները մեզ տեղեկություններ են տալիս մեր Երկրամասում գործող թագավորական և հոգևոր (Եպիսկոպոսական և քահանայական) դատարանների և նրանց միջև գործերի ընդդատության մասին։

Բագրատունիների կողմից հայոց պետականության վերականգնմանը, թեկուց՝ ավատատիրական մանրատվության ձևով, Հայաստանում դրությունը փոխվում է, որտեղ հոգևոր իշխանությունը Երկրորդ պլան է մղվում և Երկրի դատական գործառույթների մեջ մասն անցնում է աշխարհիկ իշխանությանը ու վերստին սկսում է գործել աշխարհիկ դատարանների և դատավորների ինստիտուտը։ Այդ պարագայում, դատական իշխանության վերին ատյանը, բնականաբար, անցել է Երկրի թագավորի իրավասության ներքո։ Քննարկվող խնդրի վերաբերյալ պատճությունը բավարար տվյալներ է թողել։ Երկիրն «իրավադատությամբ» կառավարող Վասպուրական աշխարհի Գագիկ թա-

գավորը վառում-այրում էր ավազակներին և երկրից դուրս վռնդում, «Նա արդարությամբ էր կատարում իրավունքն ու դատաստանը, կտրում էր ամբարտավանների բարձրաթոշի թևերը»:¹⁹ Մեկ այլ պատմիչի վկայությամբ՝ Ցուրաբերդ գյուղի բնակիչները պատուհաս էին դարձել Տաթկի սուրբ միաբանության համար: Նրանք գիշերով հարձակվում էին վաճքի և վանականների վրա, սպանություններ կատարում: Ինանալով այդ մասին, Սյունիքի Մմբատ իշխանը հաշվեհարդար է տեսնում նրանց հետ՝ ջնջելով ու նաքրելով նրանց աշխարհի երեսից:²⁰ Սակայն հայոց քագավորները խիստ են եղել ոչ միայն սեփական հպատակների, այլև ազգային արժանապատվության հարցում, այլոց կողմից հայ անվանը հասցված անարօնքի համար: Անիի Գագիկ քագավորը, լսելով, որ Եպիսկոպոս ոմն Մարկոս մի շուրջ ու հույնների՝ հայերի հանդեպ ունեցած ատելության պատճառով, շան անունն Արմեն էր դրել, նա Եպիսկոպոսին և շանը գցում է մի պարկի մեջ և հրամայում խթանով խթանել տիրոջը և շանը: Շունը ցավի կսկիծից ժանիքներով ու ճանկերով պատառ-պատառ է անում տիրոջը:

Միջնադարյան մեր պատմիչներն ուշագրավ տեղեկություններ են տալիս նաև աշխարհիկ դատավորների մասին: Պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին, նկարագրելով արար ոստիկան Բուղայի՝ Հայաստանում կատարած հրեշավոր արարքները, դեպի Բաղդադ քշված գերինների թվում առանձին շեշտում է դատավորներին:²¹ Մարեսոս Ուռհայեցին, դատավորներին թվարկելով հոգևորական դասի ներկայացուցիչներից և իշխաններից զատ, միաժամանակ ենթադրում է, որ «Իշխաններն ու դատավորներն ավելի պոռնկասեր, քան թե աստվածասեր են լինելու»:²² Նման որակումը միայն անձնական կարծիք պետք է համարել, քանի որ ուշ միջնադարյան մեկ այլ պատմիչ՝ Արիստակես Լաստիվերտցին, հաղորդում է, որ իր հայրենի Արծն քաղաքի (ներկայիս Էրզրում քաղաքի մոտ) դատավորները «արդարացի և անկաշար են»: Խոկ Դավիթ Ալավկա որդին, իր «Կանոնադրական օրինադրություն» աշխատության մեջ նկարագրելով իրականության հոռի երևույթները, այդ թվում՝ դատավորների և դատարանների քաշքուկները («ի դատաւորս և յատեանս քազում քարշումն»), այդ ախտերը կապում է չար առաջնորդների և չար քահանաների սխալ գործունեության հետ:

Ի՞նչ է դատարանը, ինչպիսի՞ն պետք է լիմի այն, ի՞նչ դեր պետք է ունենա հասարակական կյանքում, ի՞նչ դատական համակարգ պետք է ունենա Հայաստանը, ո՞վ է դատավորը, ի՞նչ դրական հատկանիշներ

պետք է ունենա և ինչպե՞ս պետք է վարձատրվի նա. այս բոլոր հարցերին պատասխանում է XII դարի հռչակավոր գիտնական Միջթար Գոշն իր հանրահայտ Դատաստանագրքում: Աշխատության մեջ Մ.Գոշը «դատարան» եզրույթն օգտագործում է երկու անգամ՝ Դատաստանագրքի նախադրության «ի՞նչ է դատաստանը և ու՞ն է կարելի հանձնել դատական գործեր վարելու իրավունքը» անվանումը կրող Ե գլխում: Ըստ Գոշի, «դատաստան» եզրույթը կազմված է առարկա և տեղ մատնանշող բառերից («Բաղկանայ անունդ յիրե եւ ի տեղլոցէ. յիրէ՝ դատել, որ է քննել, եւ աստան, որ է տեղի, և ըստ փոխման՝ արան, որ է դատարան եւ է զննարան, զի զննելով լինի իրը դատաստանաց ի դատաւորէ քննաւորէ, դատախազաց եւ անքաստանելոց ի տեղլոց: Զի բազումք են յանուանցդ այսպիսիք, որպես՝ Յայաստան եւ Ասորեստան, ննանապես Եւ՝ այլքդ»)²³: Անապատիր դատը, ընդգծում է Մ.Գոշը, Երկնայինինն է, քանզի նա է, որ տեսնում է տեսանելին և ամենայն խորերը, իսկ Երկրային դատավորները հաճախ սխալվում են, սակայն չանուք է հանդիմանել նրան, ով պատահական է սխալվել: Ով գիտակցաբար նենգափոխում է դատը, ինքը կդատապարտվի Երկնային դատաստանով: Ինչպես նկատելի է, առաջին դեպքում ըստ Մ.Գոշի՝ դատարանը դիտվում է այն տեղը, որտեղ արդարադատություն է իրականացվում, իսկ Երկրորդ դեպքում, արդարադատություն իրականացնող մարմինը վերաբերում է Երկնային դատարանին: Իրավական առումով, Մ.Գոշը Դատաստանագրքում դատարանի փոխարեն 14 անգամ օգտագործում է հայկական «ատյան» բառը, որից 7 անգամ՝ «ատյանդատաստան» բառակապակցությամբ: Ըստ Գոշի՝ անկախ Յայաստանի դատական համակարգը պետք է բաղկացած լինի աշխարհիկ և հոգևոր դատարաններից, առաջինները՝ բագավորների կամ իշխանի գլխավորությամբ, իսկ Երկրորդները՝ կաթողիկոսի կամ եպիսկոպոսի: Դատարանի նպատակը պետք է լինի արդարության բացահայտումը, մարդկանց միջից խռովության վերացումը, նրանց միջև խաղաղություն ստեղծելը: Դատարանը պետք է անաշառ լինի և մեծավորի, և աղքատի հանդեպ: Մ.Գոշը նշում է, թե ինչպիսի բարոյահոգեբանական և մասնագիտական հատկանիշներով պետք է դատավորն օժտված լինի: Նա պետք է լինի չափահաս, առաքինի, բարի և համբերատար, անաշառ և անկաշառ, դատը վարի կոլեգիալ և արդար, կատարյալ տիրապետի օրենքներին և յուրաքանչյուր ազգի իմաստում այրերի խոսքին, ունենա և տեսական պատրաստություն, և պրակտիկ փորձ: Դատավորի համար սրանք այնպիսի հատկանիշներ-բարեմասնություն-

ներ են, որ արդիական են նաև մեր օրերում:

Միջնադարում ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ, ոչ թե պետությունը, այլ տուժող կողմն է հետապնդել իրավախախտողին, պետությունը միջամտել է միայն պետական հանցագործություն կատարելու դեպքում: Ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունում կողմերը նույնանձն իրավունքներ են ունեցել: Մ.Գոշի մոտ կողմերը հանդես են գալիս «դատախազ», «դատաստանավոր», «ոսոխ», «ամբաստան» եզրույթներով: Վերջին եզրույթն օգտագործված է՝ առավելապես մեղադրող իմաստով:²⁴

Միջնադարյան Հայաստանի իրավունքի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Կիլիկյան Հայաստանի անենափառաբանված զորավար, պատմիչ, իրավագետ, արմատներով արցախցի Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ) կողմից 1265 թվականին կազմված Դատաստանագիրը, որը մեկ դարից ավել կիրառվեց Կիլիկյան հայկական պետությունում: Մինչ այդ հայկական Կիլիկիայում կիրառվող իրավունքի աղբյուրների թվում կարևոր տեղ է հն գրավում՝ օտարերկրյա Անտիոքի դքսության Դատաստանագիրը՝ «Անտիոքի ասիզներ»-ը: Դա ծավալով փոքրիկ օրենսգիրք էր՝ կազմված 38 հոդվածներից, որը իհն ֆրանսերենից թարգմանվել էր հայերեն և կարգավորում էր իրավահարաբերությունների չափազանց սահմանափակ շրջանակ (սյուգերենի և վասալի հարաբերություններ, ամուսնացնուանեկան, գույքային հարաբերություններ, առևտուր և այլն): Ասիզների հայերեն լեզվով թարգմանիչը Սմբատ Սպարապետն էր, ով «դատարան» բառը թարգմանել է «դարպաս» իմաստով: Սա բնագրից շեղում չի կարելի համարել, քանի որ ասիզների բնագրերում օգտագործվել է ֆրանսերեն cour (ռուսեն՝ ձօր) բառը: Դեռևս վաղ միջնադարյան Հայաստանում «դրու» բառն օգտագործվել է «արքունի դրու», «արքունի պալատ կամ խորհուրդ», «արքունի դարպաս կամ ատյան» իմաստներով: Վերջին առումով, «դարպաս», «դրու», «ատյան» բառերը համընկնում են, որոնց իմաստներից մեկն էլ «դատարան» (ատյան) եզրույթն է հանդիսանում: Սմբատ Սպարապետի Դատաստանագիրը միայն մեկ անգամ օգտագործվում է «դատաստանի և կանոնի մասին» եզրույթը («Վասն դատաստանաց և կանոնաց»)²⁵: Սակայն, խոսքն այդտեղ բոլորովին դատարանի մասին չէ, այլ՝ օրինականության անրապնդման: Բուն դատարանի մասին Սմբատ Սպարապետը նշում է 53 անգամ՝ օգտագործելով «դարպաս» բառը, որը հայերենում ստուգաբանվում է որպես «արքունի կամ իշխանական դրու», «պալատ, ապարանք»: Կի-

լիկյան Հայաստանում առանձին դատարաններ, որոնք զբաղված լինեն միայն արդարադատության իրականացմամբ, չեն եղել: Արդարադատությունն իրականացրել է համապատասխան պաշտոնատար անձը՝ իր ատյանով կամ դարպասով: Պետության կենտրոնական ապարատը կոչվել է թագավորական ատյան կամ թագավորական դարպաս կամ արքունի դիվան (թուրքերեն՝ դիվան, հայերեն՝ դատարան բառից): Թագավորական Գերագույն դատարաննին ստորադաս է եղել Մեծ իշխանի դատարանը, քաղաքներում և նավահանգիստներում գտնվող դատարանները կոչվել են բուրջեսներ (Գերմաներեն՝ բուրգ, ֆրանսերեն՝ բուրժ-քաղաք բառից): Կիլիկիայի հայկական պետությունուն գործել են նաև Եկեղեցական դատարաններ, որոնք քննության էին առնում հիմնականում հավատքի և բարոյականության դեմ ուղղված հանգագործությունների վերաբերյալ գործերը:²⁶

Սմբատի Դատաստանագրքում բազմիցս օգտագործվում է «դատավոր» եզրույթը (20 անգամ): Աշխատության նախարանում Սմբատը նշում է, որ Դատաստանագիրքը գրել է «Վասն հաստատեթեան սրբոյ Եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի. ապա Վասն աշխարհական դատաւորաց եւ թագաւորաց»:²⁷ Ինչպես Մ.Գոշի, այնպես էլ Սմբատ Սպարապետի մոտ դատավորները բաժանվում էին երկու խմբերի՝ աշխարհիկ և հոգևորական: Այս բաժանումը բնական պետք է համարել, քանի որ Գոշի Դատաստանագիրքը Սմբատի Դատաստանագրքի գլխավոր աղբյուրն է հանդիսացել: Կիլիկյան Հայաստանի դատարաններում դատավարությանը մասնակցում էր «հոգցողը», այսինքն՝ դատախանքը: Սա ուշ միջնադարյան Հայաստանում նորաստեղծ բառ է, որ գալիս է լատիներեն-ֆրանսերեն՝ *curator, procurator, notarius*՝ պրոկորո-բառերից, որոնց իմաստոյին թարգմանությունը հայերեն նշանակում է հոգ տանել, հոգալ: Ավելորդ չէ նշել, որ Կիլիկյան Հայաստանում գործել են զինվորական դատարաններ («կոմս կամ տրիբուն»): Այդ է վկայում Ներսես Լամբրոնացու կողմից թարգմանված և բանակում կիրառված «Զինվորաց օրենսգիրը»-ը:

Ուշ միջնադարում, երբ Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Թուրքիայի միջև, օտար տիրակալները հողային հարաբերությունների հետ կապված մի շարք վեճեր լուծել են շարիաթական իրավունքի նորմերով: Այդ ենթատեքստում պարսիկների մոտ դատավորները կոչվել են դագի կամ կազի, թուրքերի մոտ՝ կադի կամ դադի:

Պատմական բավարար տվյալներ կան, որ Արցախի մելիքություններում աշխարհիկ դատարանների գործառույթները կատարել են մե-

լիքները և տանուտերեր-քոյսվանները: Վերջիններս, նշանակված կամ հաստատված լինելով մելիքների կողմից, հանդես էին զալիս որպես ստորադաս դատարաններ: Միջնադարյան Հայաստանում դրանք կոչվում էին տանուտիրական դատարաններ:

Դայ իրավունքի եզակի հուշարձաններից մեկն էլ Աստրախանի Հայոց Դատաստանագիրը է,²⁸ որի հեղինակներն են երեք քաջ հայորդի իրավաբաններ՝ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կանանյանը և Շովհաննեսի որդի Սարգիսը: Դատաստանագրքի ստեղծման պատճառ է հանդիսացել Աստրախանում և Յոյսիսային Կովկասի մի շարք քաղաքներում (Մոզդոկ, Կիզլար, Արմավիր և այլն) հայաշատ գաղութների առկայությունը: Արդեն 1746 թվականին Աստրախանում հիմնվել էր հայկական դատարան, որը կոչվում էր ռադիատուզ (գերմաներեն Rathaus- «խորիրդի տուն» բառից, ռուսական պաշտոնական գրություններում՝ Աստրահանի օսօնայի Արմանական սահմանադրության առաջական դատարանի առաջական դատարան)՝ այն գործել է մինչև 1840 թվականը: Դատարանի իրավասության մեջ մտնում էին ինչպես տեղական նշանակության (հայ առևտրականներից հարկերի և տուրքերի հավաքում), այնպես էլ դատական գործառույթներ: Դատարանը հանդիսացել է և դատավարության, և ներքին ինքնավարության մարմին, որտեղ դիմել են նույնիսկ վիացիններն ու հույները:

Դայկական դատարանի առկայությունն ինքնըստինքյան թելադրում էր ազգային դատաստանագիրը ունենալու անհրաժեշտություն: Այն ստեղծվեց 1765 թվականին: Դայկական դատարանը քննում էր հայերի բոլոր քրեական և քաղաքացիական գործերը, բացառությամբ այն գործերի, եթե կողմներից մեկն այլազգի էր: Դատարանը նաև հետևում էր հայերի շրջանում հարկերի բաշխմանը և գանձմանը: Դատարանի վերջնական ակտից ոժգործ կողմն կարող էր դիմել նահանգի գլխավոր կամ «վեհագույն» դատարանին: Ըստ Դատաստանագրքի՝ դատարանը կազմված էր երկու ատյաններից՝ ստորին և վերին: Ստորին ատյանում գործերը քննվել են կոչեգիալ՝ երեք դատավորի կազմով, որոնք ընտրվել են տարին մեկ անգամ: Վերին ատյանի պարտականությունները կատարել է իննի խորհուրդը, որը գործել է հասարակական հիմունքներով: Թե՛ քրեական, և թե՛ քաղաքացիական գործերով կողմները կոչվել են դատախազներ և պատասխանողներ: Դատախազը ներկա ինաստով հայցվորն է, իսկ պատասխանողը՝ ամբաստանյալը: Դատախազ չէին կարող լինել որդիները ծնողների դեմ և հակառակը, ծառաները տերերի դեմ, կինն ամուսնու դեմ և հակառակը, բացառությամբ անբարոյականությանը վերաբերող նեղիք: Սակայն, քրեական այնախ-

սի հանցանքների դեպքում, երբ դրանք ուղղված են թագավորի և Աստ-
ծոն դեմ, վերոհիշյալները կարող են լինել դատախազներ:

Աստրախանի Դատաստանագրորով դեկավարվել են նաև Կիզլարի
և Սոգդուկի հայկական հատուկ դատարանները, ինչպես նաև Նոր-Նա-
խիջևանի հայկական մագիստրատը:

Ապագա անկախ հայկական պետության սահմանադրության նա-
խագիծը՝ «Որոգայթ փառաց»-ը, գրվեց 1773 թվականին, Յնդկաստա-
նի Մադրաս քաղաքում, այսինքն՝ ԱՄՆ-ի սահմանադրությունից 14
տարի առաջ: Նախագծի հեղինակները (Շահամիր Շահամիրյանը և
նրա համախոհները), տոգորված մարդկության առաջավոր գաղա-
փարներով, ցանկանում էին դրանք տարածել հայ իրավանության մեջ
և աշխարհի երկրորդ դրախտի՝ Արարատյան դաշտի բանալիները,
տեսնում էին կատարյալ հայկական օրենքների և իրավակարգի մեջ:
Նախագծի վերնագիրը մեզ հուշում է ապագա պետականության կա-
ռուցվելիք ճանապարհին սպասվելիք որոգայթները հաղթահարելու
մասին: Սահմանադրության նախագծի հեղինակները հայկական պե-
տության կորիզը և նրա բարձրագույն մարմինը՝ Յայոց տունը, գետե-
ղում էին Արցախում՝ յուրաքանչյուր մելիքի հնարավորություն տալով
դառնալ երկրի առաջին դեմքը: Նրանք համոզված էին, որ Արցախից
պետականության իրավագորությունը հետագայում կտարածվեր
պատճական Յայաստանի մյուս նահանգների վրա: Նախագիծը բազ-
մաթիվ նորմեր է պարունակում ապագա պետության արդարադատու-
թյան իրականացման, յուրաքանչյուր բնակչի՝ իրավունքների, դատա-
րան դիմելու կարգի, դատարան ներկայացվող հայցի և դրա դեմ բեր-
ված պատասխանի ձևի, դատավարության և դրանց մասնակիցների
(հայցվոր, պատասխանող, դատավագ, փաստարան և այլն), դատա-
կան ակտին ներկայացվող պահանջների, դատավորների ընտրության,
նրանց պաշտոնավարման ժամկետի, իրավասությունների և լիազորու-
թյունների ու համանման այլ հարցերի վերաբերյալ:²⁹ ճիշտ է, «Որո-
գայթ փառաց»-ը մնաց որպես նախագիծ, բայց այն սահմանադրական
հանրապետություն ստեղծելու առաջին ծրագիրն էր աշխարհում և
իրավունքի պատճության մեջ խոշոր իրավահայտ աղբյուր հանդիսա-
ցավ սահմանադրական նորի գարգացման համար:

XIX դարի առաջին երեք տասնամյակներում տեղի ունեցած ռուս-
պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքում Արևել-
յան Յայաստանը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ, իսկ
Արևմտյան Յայաստանը շարունակեց մնալ թուրքական լծի տակ:

Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Շուշիի գավառում, ստեղծվեցին և մինչև 1918 թվականը գործեցին ցարական Ռուսաստանի դատարաններ, որոնք ղեկավարվում էին կայսրության օրենսդրությամբ։ Ցարական Ռուսաստանը 1836 թվականին ընդունեց Կանոնադրություն (Պոլոյշենիք)՝ Հայ առաքելական Եկեղեցու գործերի կառավարման մասին։ Կանոնադրությունը հոգևոր դասին դատական գործառություններ իրականացնելու ընդամենը մեկ դեպք վերապահեց։ Այսպես, համաձայն Կանոնադրության 113 (1221)-րդ հոդվածի՝ «Հայոց վաճքերի և Եկեղեցիների դատական գործերը քննվում են ընդհանուր դատարանական տեղերում այն հիմքով, ինչ հիմքով որ վարչում են պետական դատական գործերը։ Դատաստանական ատյաններն այդպիսի գործեր վճռելու ժամանակ, այն տեղերում, որտեղ մտցված չեն Ալեքսանդր II Կայսեր դատաստանական օրենքները, ընդհանուր հիմնունքներով հրավիրում են ատյան, հոգևոր իշխանության կողմից ներկայացուցիչներ՝ դիմելով դրա համար այս դավանանքի պատշաճավոր հոգևոր իշխանությանը։» Կանոնադրությունը Հայոց Եկեղեցուն ուրիշ այլ իրավունք և արտօնություն չի վերապահել։ Նույնիսկ Էջմիածնի վաճքին պատկանող գյուղերի բնակիչների գույքի վերաբերյալ վիճելի գործերը և գանգատները ենթակա են եղել աշխարհիկ դատարանների հրավատությանը։

Սուլթանական Թուրքիայի կողմից 1863 թվականին հաստատված թուրքահայերի Ազգային Սահմանադրությունը չափազանց ուշագրավ երևույթ է մեր ժողովրդի պատմության համար։ Ազգային Սահմանադրության համաձայն՝ Ազգային Քաղաքական ժողովի կողմից ընտրված չորս խորհուրդներից մեկն էլ Դատական խորհուրդն էր, որի նախագահը Կ.Պոլսի Պատրիհարքի փոխանորդն էր։ Դատական խորհուրդը բաղկացած էր ամուսնացած և քառասուն տարին լրացած ութ իրավագետներից, որոնցից չորսը եղել են Եկեղեցականներ, իսկ չորսը՝ աշխարհականներ։ Խորհրդի անդամներն ընտրվել են Խառը ժողովի կողմից։ Խորհրդի դերն ընտանեկան վեճերը լուծելը և Բարձր Դռան կողմից Պատրիհարքարան հանձնված դատերը հանձնարարությանը համապատասխան քննելն ու որոշելն էր։ Դատական գործն իր իրավասությունից բարձր համարելու դեպքում՝ Խորհուրդն այն ըստ ընդդատության ուղարկել է Կրոնական, Քաղաքական կամ Խառը ժողովին։ Դատական խորհրդի որոշումից դժողոհի դատապարտյալի բողոքը քննվել է հիշյալ ժողովներից մեկում, որին որ վերաբերվել է։

Այսպիսով, «Իրավունք», «արդարադատություն» և «դատարան»

Եզրույթների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, թագավորական իշխանության տարիներին, պատմական Հայաստանում իրավունքը պատկանել է արքայական և հոգևոր դասին, իսկ արդարադատությունն իրականացրել են վարչա-կառավարչական և հոգևոր լիազորություններով օժտված բոլոր մարմինները և անձին՝ թագավորը, իշխանները, հոգևորականները և այլք: Նրանք իրենց կառավարչական գործառույթները հաճատեղել են դատական աշխատանքի հետ: Միևնույն ժամանակ, չնայած դատարանները, որպես անկախ և առանձին մարմիններ, ձևավորված չեն եղել, բայց երկրում գործել է դատավորի ինստիտուտը: Պետականության կորստի պայմաններում, արդարադատության իրականացման գործառույթների նշանակալից մասն անցել է Հայոց եկեղեցուն: Այդ հարցուն ակնհայտ է եղել օտար տիրողների՝ պարսիկների, արաբների, հույնների, թուրքերի, մոնղոլների և թուրքմենական ցեղերի կամարտահայտությունը, քնահաճույքը: Հավելենք, որ «իրավունք» և «արդարադատություն» եզրույթները հայ ժողովորի իրավունքի պատմության համար համահրավական բնույթի հասկացություններ են, որոնք գալով հազարամյակների խորքից՝ ծագել, փոփոխվել և զարգացել են Հայաստանի պետության և իրավունքի պատմության ժամանակաշրջաններին համեմատ: Այս երկու հասկացություններն ամուր թելերով կապված և միահյուսված են այսօրվա համանման եզրույթների հետ: Այդ առումով, պատմական ժառանգության պահպանումը և իմաստավորումը՝ ժամանակակից իրավունքի համակարգի արդյունավետ զարգացման գրավականներն են:

ԳԼՈՒԽ 2

ՎԱԶԱԳԱՆ ԱՐՁԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Եշմարտությունը չէր կարող ծածկված
մնալ, և լույսը փակի տակ լինել:
Ս.Կաղանկատվացի

Շուրջ 200 տարի է, ինչ VII դարի հայ պատմիչ Մովսես Կաղամկատվացու /այլ աղբյուրներում՝ նաև Դասխուրանցի/ «Պատմություն Աղվանից աշխարհի» գիրքը, որը թարգմանվել և լույս է տեսել աշխարհի մի շարք լեզուներով, գտնվում է բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում: ¹

Եվ եթե հայ և օտար գիտնականների միջև բանավեճը հիմնականում ընթանում է Կաղանկատվացու աշխատության գրելու ժամանակի, կառուցվածքի, շարադրանքի, երկրի պատմական արժեքի, օգտագործած սկզբնադրյուրների քննության և Կովկասյան Աղվանք պետության պատմության ու մշակույթի հարցերի շուրջ, ապա ադրբեջանցի գիտնականները, սկսած XX դարի 50-ական թվականներից, պետական մակարդակով ձեռնամուխ են եղել ապացուցելու, թե իբր հայերը, նկրտումներ ունենալով կուր գետի աջափնյա տարածքների նկատմամբ, սեփականացրել են իրենց նախնիների՝ ազգությանը աղվան, բայց թուրքախոս Մովսես Կաղանկատվացու, Դավթակ Քերթողի, Միմիքար Գոշի, Կիրակոս Գանձակեցու և այլոց կողմից ստեղծված մշակութային հուշարձանները: ²

Իսկ ինչպես են իրենց սուտը մատուցում: Թե իբր, աղվանական մշակույթի գործիչների գրվածքները գրաբար թարգմանելու ժամանակ, հայերը գիտակցաբար սկզբնական տեքստերն աղավաղել են, իսկ հետքերը թաքցնելու նպատակով՝ բնագրերը ոչնչացրել: Նույն ծևով հայերն իբր մշակույթի կոթողների վրա աղվանական արձանագրությունները քերել-մաքրել են և դրանց վրա հայկական գրեր քանդակել: Կիլիկիայի հայկական պետության ստեղծման մեջ նույնպես աղվանական արմատներ են որոնում: «Աղվանական առասպելի» հակագիտական հայեցակարգի քարոզչության ամենաակուիվ ջատագովը պատմաբան Ֆարիդա Մամեդովան է, որին հայր Ալիկը ադրբեջանական պատմագիտության «ասպետ» է անվանել:

Իր ճակատագիրն ինքնուրույն որոշող Արցախն Աղրբեջանի կազմ մտցնելու մոլուցքով տարված՝ ադրբեջանցի գիտնականներն առաջին

հերթին զինվել են հայկական հետքը Աղրբեջանի տարածքից արմատախիլ անելու գաղափարախոսությանք, որի ջատագովները տարբեր բնագավառի մասնագետներ են՝ քաղաքագետներ, պատմաբաններ, ճարտարապետներ, լեզվաբաններ, մշակութաբաններ և այլոք: Եվ ի՞նչ են անում: Թուրանական, պանթուրքական ծրագրերի մեջ խրված «հայկական սեպը» վերացնելու նպատակով՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը համարում են որպես արևմտյան Աղրբեջանի տարածք: Մի կողմից՝ հայկական «քար» արմատը փոխարինելով թուրքական «դաշ» արմատով, Արցախի և Աղրբեջանի տարածքում գտնվող բոլոր խաչքարերն անվանում են աղվանական «խաչդաշներ», իսկ մյուս կողմից՝ Զուղա քաղաքի հայկական գերեզմանոցը բուլղոգերներով հիմնահատակ մաքրում են հազարավոր խաչքարերից և տարածքը վերածում հրաձգարանի: Բնավ զարմանալու ոչինչ չկա, քանի որ վաշկատուն վրանաբնակ ցեղերին հատուկ է եղել «Զուղնես քո սեփականը, ուրիշինը միշտ քոնց համարիր» կարգախոսը:

Սեր նպատակներից դուրս է մասնակցելու Կաղանկատվացու պատմական երկի շուրջ ծավալված բանավեճերին, սակայն, հաշվի առնելով, որ հենց նրա աշխատության միջոցով է մեզ հասել հայ իրավագիտական նտրի և սահմանադրական մշակույթի մի այնպիսի խոշոր հուշարձան, ինչպիսին Աղվենի ժողովում հաստատված Վաչագան քավակորի Կանոնական Սահմանադրությունն է³, ուստի, նախքան մեզ գրավոր հասած հայ իրավունքի ամենահին աղբյուրներից մեկին անդրադառնալը, փորձենք հակիրճ ցուց տալ, թե մշակույթի, սոցիալ-տնտեսական և քաղաքական առումով մինյանց հետ սերտորեն կապված հայոց և աղվանից երկրների հոգևոր-մշակութային ու պետականական շինարարության ոլորտներում մ.թ. IV և V դարերում ինչպիսի՝ կարևոր գործներացներ և իրադարձություններ են տեղի ունեցել և որո՞նք էին այն սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները, որոնք հիմք հանդիսացան Աղվենի ժողովում Կանոնական Սահմանադրության ընդունման համար:

Համաձայն անտիկ և միջնադարյան գրավոր աղբյուրների՝ (Ստրաբոն, Պտղոմեոս, Պլինիոս Ավագ, Դիոն Կասիոս, Ստեփանոս Բյուզանդացի, Ազարանգեղոս, Բյուզանդ, Կորյուն, Խորենացի, Եղիշե, Շիրակացի և այլոք) Սեծ Հայքի հյուսիսային սահմանը Կուր գետն է եղել, որից այն կողմ՝ մինչև Կովկասյան լեռնաշղթայի փեշերը և Ալազան գետից մինչև Կասպից ծովը՝ Աղվանք պետությունը: Երկու դրկից և բախտակից երկրներում թագավորել են Պարթև Արշակունի արքայատոհմի կրտսեր ճյուղագրությունները: Պատմությունը վկայում է, որ Սեծ Հայքը, Աղվանքը և Վիրքը, ապրելով հաշտ ու խաղաղ, հաճախ էին միացյալ ուժերով դուրս գալիս արտաքին թշնամու դեմ:

Յայերը և վրացիները հոգևոր մշակութային և տնտեսական առումով, անկասկած, ավելի բարձր են եղել աղվանների համենատությամբ: Աղվանական 26 ցեղերը, որոնք խոսել են տարրեր բարերաներով, չեն կարողացել միաձույլ ժողովուրդ դառնալ, ստեղծել սեփական գիր ու գրականություն և տնտեսական առումով այնքան հետամնաց են եղել, որ 100-ից ավել հաշվել չեն իմացել: Աղվանական ցեղերի մեծ մասը շատ շուտ է հեռացել պատմության թատերաբեմից՝ ավանդելով միայն մի քանի աշխարհագրական անուններ: Մինչև այսօր Կուր գետի աջափնյա տարածքներում աղվաններն գրով և լեզվով որևէ փաստաթուղթ և վիմագիր արձանագրություն չի հայտնաբերվել, այլ հակառակը, բոլոր պեղումների արդյունքում հայալեզու և հայտառ արձանագրություններ են հայտնաբերվել և հայտնաբերվում: Որպես օրինակ՝ Յայոց արքա Տիգրան Մեծի կողմից Արցախում հիմնադրված Տիգրանակերտ քաղաքի հնագիտական հետազոտությունները:

Քրիստոնեությունը Յայաստան մոտաք գործեց առաջին դարում և չորրորդ դարի սկզբում հրչակվեց որպես պետական կրոն: Այն ամմիջապես տարածվեց Երկրի հյուսիս-արևելյան կողմում՝ Ուտիքում և Արցախում: Գրիգոր Լուսավորիչն Արցախ աշխարհի Ամարաս ավանում /ԼՂՇ Սարտունու շրջանի Սոս և Մաճկալաշեն գյուղերի մոտ/ Եկեղեցի կառուցեց և իր թոռանը՝ Գրիգորիսին, կարգեց Յայոց Արևելից կողմանքի եականուպոս: Վերջինս քրիստոնեություն քարոզելու նպատակով անցավ Աղվանից աշխարհ, սակայն նահատակվեց բարբարոս ցեղերի կողմից: Նրա աճյունը փոխադրվեց Ամարաս և ամփոփվեց իր պապի կառուցած Եկեղեցու մոտ: Աղվանից Երկրում քրիստոնեությունն ընդունվեց ավելի ուշ՝ IV դարի 70-ական թվականներին: Ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական Յայաստանում սկզբնական շրջանում պետական գրագրությունները և Եկեղեցական ծեսերը կատարվում էին հունարեն կամ ասորերեն լեզուներով: Յայ գրերի ստեղծումը ժամանակի պահանջ էր, և դրանք ստեղծվեցին Մեսրոպ Մաշտոցի կողմից V դարի սկզբին: Սուրբ Մեսրոպն արդեն 415-420 թվականներին իր 36 գինվորմերով գտնվում էր Ուտյաց և Արցախ գավառներում, որտեղ և Ամարասում բացեց առաջին դպրոցներից մեկը: Յայ ժողովրդի համար Արցախ և Ուտյաց գավառները կարևոր հանգրվաններ էին քրիստոնեությունը և դպրությունն Աղվանից աշխարհում տարածելու համար: Փաստորեն, հայերի և աղվանների միջև շփումը տեղի էր ունենում այս երկու գավառների միջոցով: Ա. Մաշտոցը գրեր հորինեց նաև վրացիների և աղվանների համար, սակայն աղվաններն անընդունակ գտնվեցին սեփական լեզվով գիր և գրականություն ստեղծելու: Ըստ պատմիչ Կաղանկատվացու՝ աղվանների լեզուն «կոկորդահունց էր, կոշտ ու կոպիտ խժական»⁴: Երկի դա պատճառը, որ

աղվանական գլխավոր ցեղերից մեկի՝ գարգառացիների համար Մաշտոցը ստիպված էր 52 տար հորինել: Միթե՝ մեր հարևանները չեն տեսնում, որ պատմիչ Կաղանկատվացին ազգությամբ աղվան լինելու դեպքում չեր կարող իր մայրենի լեզվի մասին այդքան բացասական կարծիք ունենալ: Կամ, միթե՝ նրանք չեն տեսնում, որ Կաղանկատվացու միջոցով մեզ հասած գեղեցիկ ողբի՝ հայ գրականության մեջ հայոց այրութենի կարգով գրված առաջին աշխարհիկ քերթվածքի հեղինակը՝ Դավթակ Քերթողը, կարող է միշտիայն հայ լինել, այլ ոչ թե աղվանցի:

Մինչև քրիստոնեության ընդունումը հայերը եղել են հեթանոս, այսինքն՝ դավանել են բազմաստվածություն: Երկրում դատական գործառույթը գտնվել է հեթանոսական կրոնի պաշտոնյաների՝ քրմերի ձեռքին: Ինչպես Հայություն, այնպես էլ Վիրքում և Աղվանքում քրմապետի պարտականությունները կատարում էր թագավորից հետո ամենից ավելի հարգանք վայելող անձնավորությունը: Բացի արդարադատությունից, քրմապետին հանձնված է եղել նաև զինվորական հրամանատարությունը⁵:

Քրիստոնեության ընդունումից հետո դատական իշխանության կամ արդարադատության գործառույթների որոշ մասը քրմերից անցավ Հայոց Եկեղեցուն: Հին և միջնադարյան Հայաստանում Հայոց թագավորը երկիրը կառավարել է գործակալությունների միջոցով, որոնց դեկավարները կոչվել են գործակալաներ: Վերջիններս, հանդիսանալով նախարարական խոչըն տների ներկայացուցիչներ, իրենց պաշտոնում նշանակվել են թագավորի կողմից և ենթարկվել նրա Գերագույն իշխանությանը: Գործակալություններից մեկն էլ «մեծ դատավարության» գործակալությունն էր, որը դեկավարել է երկրի արդարադատությունը⁶:

Գիտության մեջ երկար ժամանակ ընդունված էր այն տեսակետը, որ «մեծ դատավարության» գործակալության գլուխ կանգնած էր Հայոց կաթողիկոսը, որն էլ դատական իշխանության բարձրագույն կրողն է հանդիսացել: Սակայն, իրավագետ Խոսրով Թորոսյանը համոզիչ փաստերով ապացուցել է, որ ինչպես մյուս գործակալությունները, «այնպես էլ արդարադատության բնագավառը դեկավարող գործակալը ստորադրված էր թագավորին...դատական աստիճանակարգության գլուխը, դատական իրավասության բարձրագույն կրողը թագավորն էր»⁷:

Հայոց աշխարհում վաղ ավատատիրության ժամանակաշրջանի (III–IX դարեր) իրավունքի աղբյուրներ են հանդիսացել սովորույթը կամ սովորությունը իրավունքը, կանոնական կամ Եկեղեցական իրավունքը, օտար իրավունքի փոխառումները, իրավահայտ աղբյուրները, հայ և

օտար պատմագիրների աշխատությունները, վիմագիր արձանագրությունները և նյութական մշակույթի այլ հիշատակարանները:

Հին հայ հրավունքի պատմության մեջ երախտավոր, պղոփեսոր Խ.Սամուելյանը կանոնական իրավունքի աղբյուրները բաժանում է երկու գլխավոր խմբերի՝ արտաքին և ազգային: Նա առաջինի մեջ է նոցնում այն կանոնները, որոնք հունական և ասորական ծագում ունեն և ռեցեպցիայի, այսինքն՝ օտար հասարակության մշակութային-ընկերային ծևերի ընդունման, յուրացնան կարգով են մտել Յայաստան: Խոսքը վերաբերում է այն կանոնական որոշումներին, որոնք հորինվել են, երբ Յայոց Եկեղեցին տակավին ընդունում էր տիեզերական երեք ժողովների կողմից ընդունված կանոնները⁸:

Եկեղեցական կանոնների արտաքին աղբյուրները հիմնականում կրոնադավարանական և Եկեղեցական բնույթ են ունեցել: Եվ երբ Յայոց Եկեղեցին անջատվեց հունականից՝ սեփական, ազգային կանոններ ունենալու անհրաժեշտություն ծագեց: Այդ կապակցությամբ Ներսէս Մեծ կարողիկոսի նախաձեռնությամբ 365 թվականին Տարոն գավառի Աշտիշատ ավանում ազգային- Եկեղեցական ժողով գումարվեց, որտեղ բացի հոգևոր դասից, մասնակցում էին աշխարհական դասի ներկայացուցիչներ: Ժողովում ընդունված կանոնները մեզ հավաք կերպով չեն հասել, դրանց մասին կարելի է միայն պատկերացում կազմել Բյուզանդի, Խորենացու և Դրասխանակերտցու աշխատություններից: Պատմիչների թողած տեղեկությունները մեզ պատկերացում են տալիս, որ ժողովում ընդունված կանոնները տարածվել են ոչ միայն կրոնա-Եկեղեցական, այլև աշխարհիկ հարցերի վրա: Այդ կանոնները, որոնք հին հայ իրավունքի գրավոր աղբյուրներ են հանդիսանում, կարգավորել են նաև քրեական և քաղաքացիական բնույթի հարցեր⁹: Բացի Աշտիշատի ժողովի կանոններից, Մեծ Յայքում գործել են նաև Գրիգոր Լուսավորչին, Սահակ Պարթևին, Ներսէս Մեծին վերագրված կանոնները, սովորության իրավունքը և օտար իրավունքի փոխառումները:

Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև մղված պայքարի արդյունքում Յայաստանը 387 թվականին բաժանվեց նրանց միջև: Բյուզանդական մասում անմիջապես վերացվեց հայոց ազգային պետականությունը, իսկ պարսկական մասում այն շարունակվեց մինչև 428 թվականը, որից հետո Յայաստանի պարսկական մասը վերածվեց մարզպանության: Յայաստանը մարզպանական էր կոչվում, քանի որ Արշակունիներից հետո երկրում նստում էր պարսից արքայի ներկայացուցիչը, ով կոչվում էր մարզպան (պարսկերեն *marz-bərəkīr*, աշխարհ և քառ-պահապան բառերից): Մարզպանական Յայաստանի համար Կուր գետը դադարեց Աղվանքի հետ բաժանարար սահմանագիծ համարվելուց,

քանի որ Սասանյանները բուն Աղվանքից, ինչպես նաև հայկական Ուտիք, Արցախ և Փայտակարան գավառներից կազմեցին նոր վարչատարածքային միավոր՝ Աղվանից մարզպանություն անվամբ։ Սկզբնական շրջանում պարսիկները նարզապանական Հայաստանի նկատմամբ հանդուրժողականություն էին ցուցաբերում, երկիրն օժտված էր որոշակի ներքին ինքնավարությամբ և արտոնություններով, քրիստոնեության նկատմամբ հետապնդում չկար։ Նույնիսկ 444 թվականին Շահապիվանում (Յին Բայազետի շրջակայքում) գումարվեց Եկեղեցական ժողով և տեղի ու ժամանակի պայմաններին համապատասխանող կանոններ ընդունվեցին։ Այդ կանոնները վերաբերվում էին ոչ միայն Եկեղեցուն, այլև քաղաքացիական և քրեական իրավունքի հարցերին, այսինքն՝ դրանք ուղղված էին ամբողջ հայությանը և պարտադիր էին ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ տերերի համար¹⁰։

Պատմական փաստերը վկայում են, որ Սասանյան Պարսկաստանը երկար չի անդուրժեց Անդրկովկասի 3 ժողովուրդների ներքին ինքնուրույնության կարգավիճակը, ուստի ձեռնամուխ Եղավ մարզպանական Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը Պարսկաստանի հետ միաձուլելու քաղաքականությանը։ Այդ կապակցությամբ 449 թվականին արքունի հրովարտակով հայերից, աղվաններից և վրացիներից պահանջվում էր ուրանալ քրիստոնեությունը և ընդունել գրադաշտականությունը (կրակապաշտությունը), այսինքն, երկրպագել արեգակին և կրոկին՝ բազմաթիվ ծիսակատարություններով։ Դա մահացու հարված էր հայկական քարձրավանդակի և այսրկովկասայան ժողովուրդների համար, ուստի այդ երկրներում ապստամբություն է քանկում, որը դեկավարում էր քաջակորով սպարապետ Վարդան Մամիկոնյանը։ Մեն Արցախն ու Ուտիքը իրապես դուրս էին մնացել հայկական իշխանության տիրությոց և հայտնվել էին Աղվանից մարզպանության կազմում, բայց նրանք լրիվությամբ հայաշունչ ու հայախոս աշխարհներ էին և բնակչության քանակի ու տարածության չափի տեսակետից ավելի շատ և խոշոր դիրք էին գրադեցնում, քան անդրկության Աղվանքը, որտեղ մարզպանության ստեղծումով պետական իշխանությունը կնքեց իր մահկանացուն՝ Աղվանք աշխարհագրական անունը քողնելով միայն Կուր գետի աջափնյա տարածքների վրա։

Ելնելով այն հանգանանքից, որ Աղվանից երկրի հոգևոր իշխանությունը համարյա միշտ ստորադաս է Եղել Յայ առաքելական Եկեղեցուն, ուստի, Յայ Եկեղեցական իրավունքի առումով, Աղվանք տեղանունի սահմաններն ավելի ընդարձակ էին՝ ընդգրկելով Կուր գետի ինչպես ծախափնյա, այնպես էլ աջափնյա տարածքները։ Միևնույն ժամանակ, Կուր գետի աջափնյա մասը գրադեցնող Արցախ-Ուտիքյան հայաշխարհը շարունակել է հոգևոր մշակութային սերտ կապերի մեջ

գտնվել Մայր հայուննիքի հետ և հարաբերվել՝ ինչպես մասն ամբողջին:

Պարսիկների դեմ նղված պայքարում մեծ է եղել նաև Արցախի և Ուտիքի գահերեց իշխան Առանշահիկ Վաչեի դերակատարությունը: Պատմական փաստ է, որ Արցախի զորագունդը Բակ իշխանի գլխավորությամբ մասնակցել է Ավարայրի ճակատամարտին¹¹: Ավարայրի ճակատամարտից հետո Վաչե իշխանի կողմից (հայոց աղբյուրներում՝ թագավոր) Աղվանից աշխարհում բարձրացված հակապարսկական ապստամբությունը ևս ճնշվել է և նա, իրաժարվելով գահից ու կրակապաշտությունից (462թ.), մեկուսացած կյանք է վարել: Ըստ ավանդության՝ նրա ճգնավիրության վայրում հետագայում կառուցվել է Ենրկայիս Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղը:¹²

Վաչե իշխանից հետո մոտ 20 տարի Ուտիք և Արցախ գավառները Ենթարկվել են Պարտավ քաղաքում նստող պարսից մարզպանին: Այդ նույն ժամանակահատվածում հայոց աշխարհում Վահան Մամիկոնյանի կողմից առաջնորդվող ազատագրական պայքարը նոր թափ էր ստացել, որն էլ տվեց իր պտուղները: Պարսիկների հետ կնքված Նվարսակի հաշտության պայմանագրով (484թ.) հայերը ստացան վարչական ինքնուրույնություն և հավատի լիակատար ազատություն: Նվարսակի հաշտության պայմանագիրը նի բարենպաստ վիճակ էր Հայոց Արևելից աշխարհի համար, որից օգտվելով, տեղի բնիկ հայկացուն Առանշահիկ տոհմից Վաչագանը հռչակվեց թագավոր, իսկ պարսից շահը, հաշվի առնելով կատարված իրողությունը, արտոնություններ տվեց Վաչագանին, այդ թվում՝ աղվանական ցեղերին կառավարելու համար:

Միևնույն ժամանակ, քսան տարվա անիշխանությունն իր խոր հետքն էր թողել Յայ Աղվանիքի վրա: Երկրանասում գործում էին պարսկական օրենքները, տրոհվել էին նախկին նախարարական տները, քուլացել էր Յայ առաքելական Եկեղեցին՝ զիջելով դիրքերը մազեականության կրոնին և տարբեր աղանդների: Առանշահիկ Վաչագանը, քաջ հասկանալով, որ տեղական ազգային իշխանություն ստեղծելու համար անհրաժեշտ է կարգավորել ոչ միայն Եկեղեցին, այլև Ենրքին հասարակական հարաբերությունները, հրաժարվում է կրակապաշտությունից և վերստին վերադարսում է քրիստոնեության, նույնն էլ հորդորում նախարարական տներին, հայրենիքը լքած բնիկ իշխաններին ետ է դարձնում և վերականգնում նրանց իշխանությունը: Թագավորն անխնա պայքար է մղում Երկրի համար վտանգավոր աղանդների դեմ, տարվա օրերի թվով Եկեղեցիներ կառուցում, զարկ տալիս դպրության գործին: Նրա հանձնարարությամբ Արցախ են տեղափոխվում Գրիգոր Լուսավորչի, Յոհիվսիմե ու Գայանե կույսերի մասունքները: Թագավորի հայրենաշեն և հայրենանվեր գործունեության համար

պատմիչը նրան պսակել է Բարեպաշտ և Աստվածավախ բառերով: Որոշ հետազոտողներ գտնում են, որ Արցախի Վաչագան արքան, իր իշխանությունը տարածելով նաև անդրկուրյան որոշ շրջանների վրա, շուրջ 500 թվականին իր դուստր Վարսենիկին օժիտ է տվել Ապշերոնյան թերակղզին և ներկայիս Բաքու քաղաքի տեղում կառուցել տվել առաջին հայկական եկեղեցին, իսկ Շամախի քաղաքը դարձրել արքայադստեր ամառանոցը¹³: Աշխարհաշեն Վաչագան արքան կարողացավ շատ կարծ ժամկետում առաջ մղել երկրի մտավոր և մշակութային զարգացումը և այդ ենթատեքստում թագավորն անձանբ օրինակ էր ծառայում: Բայց դա դեռ բավական չէր: Հոծ հայկական բնակչություն ունեցող երկիրը կառավարելու համար անհրաժեշտ էր ունենալ տեղական բարբերից բխող ազգային օրենքներ:

Ակներև է, որ ազգային օրենքներ ունենալու անհրաժեշտությունն օրակարգի հարց էր և հիմա պատկերացնենք, թե ինչ կլիներ թագավորի վիճակը, եթե նա չունենար որևէ օրենք երկիրը դեկավարելու համար: Նա ինչպես պետք է պայքար մղեր պետական իշխանությունն ուժեղացնելու, ավատատերերին սանձահարելու և հասարակության տարբեր խավերի միջև առկա տարածայնությունները վերացնելու համար:

Հետևաբար, Վաչագան Բարեպաշտը շատ լավ էր հասկանում, որ երկրի պետականության ամուր հիմքեր և հասարակության բոլոր խավերի միջև երկարատև և կայուն անդորր ստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ անսասան և ժամանակի բարբերին մոտ օրենքներ:

Այդ խոշոր գործիչն իր նպատակին հասնելու համար հարցումներով դիմել է հայոց աշխարհի հեղինակավոր գիտնականներին՝ Սատթե քահանային, Աբրահամ Մամիկոնեց Եպիսկոպոսին, Սյունիքի Պետրոս Եպիսկոպոսին:¹⁴ Ինչպես պատմիչ Ստեփանոս Օրբելյանն է նշում, հարցումները եղել են «քազմարիվ լուրջ ու ծանրակշոր խնդիրների մասին», իսկ պատասխանները՝ «պատշաճ ու ճիշտ լուծումնվ»:¹⁵

Թագավորը, իր ծեռքի տակ ունենալով բավականաչափ նյութեր, համապետական օրենք ընդունելու համար իր Աղվեն ամառանոցում¹⁶ գումարում է մի քազմանարդ ժողով, մի «քազմանբոխ ատյան», որը հայ իրականության մեջ Սահմանադրի ժողովի նախատիպ կարող է համարվել: Պատմագիտական գրականության մեջ ընդունված է Աղվենի ժողովի գումարման տարի և ամիս համարել 488 թվականի մայիս ամիսը:¹⁷

Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթին անդրադարձել են Ն.Աղոնցը, Խ.Սամուելյանը, Յ.Մանանյանը, Լեոն, Ս.Երեմյանը, Թ.Ավդալբեկյանը, Ա.Սուքիասյանը, Վ.Առաքելյանը, Ա.Չակորյանը, Ա.Թովմանյանը, Ն.Ակինյանը, Ա.Շովիաննիսյանը, Կ.Տրեվերը, Ֆ.Սամեդովան,

Ս.Իսմայլովը, Բ.Ուլուբարյանը, Կ.Ղահրամանյանը և Վ.Շովիաննիսյանը:¹⁸

Վերոնշյալ բոլոր հեղինակները, բացի Ֆ.Սամերովայից, Բ.Ուլուբարյանից, Կ.Ղահրամանյանից և Վ.Շովիաննիսյանից, իրենց աշխատություններում անդրադարձել են Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթի այս կամ այն կանոնին: Հայոց Եկեղեցական իրավունքի ամենահամապարփակ ձեռնարկի՝ «Հայոց Եկեղեցական իրավունքը» դասագրքի հեղինակ՝ Ներսես Վարդապետ Մելիք-Թանգյանը նույնիսկ մի խոսքով անգամ չի անդրադարձել Աղվենի ժողովում ընդունված իրավունքի կոթողին:

Բ.Ուլուբարյանն Աղվենի ժողովում ընդունված Կանոնական Սահմանադրությանը նոտեցել է պատմաբանի քննախուզ հայացքով, վեր է հանել նրա եռթյունն Աղվանից երկրի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հարկային քաղաքականության և հասարակական կարգապահության նորմերի կարգավորման բնագավառում: Կ.Ղահրամանյանը և Վ.Շովիաննիսյանն անդրադարձել են Կանոնական Սահմանադրության ընդունման հանգամանքներին և ցույց են տվել այդ փաստաթղթի դերն Արցախում՝ իրավական գիտակցության ձևավորման և պետականության ամրապնդման գործում՝ սկսած Վաշագան Բարեպաշտից մինչև ԼՂՀ կայացումը: Սակայն, ինչպես իրավացիորեն նշել է Կ.Ղահրամանյանը, «իրավագիտական այս եզակի փաստաթուղթը մինչև օրս արժանի քննության ու գնահատականի չի արժանացել»:

Աղրթեցանցի գիտնականներն իրենց աշխատություններում Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթին նոտեցել են ամենայն «աշառությամբ», նպատակ ունենալով վերացնել, բացառել այդ փաստաթղթի կապը հայ իրականության հետ և այն աշխարհին ներկայացնել որպես աղվանական իրավունքի հուշարձան:

Իրավական մտքի այդ խոշոր հուշարձանը դեռևս որևէ հայ հեղինակի կողմից համապարփակ պատմաիրավական և տեքստաբանական ուսումնասիրության չի ենթարկվել, չի հետազոտվել և չի համադրվել այլ փաստաթղթերի հետ, ուստի, մեր ուժերի ներածին սահմաններում, փորձենք վերլուծել իին հայ իրավունքի այդ գրավոր ժողովածուի հիմնական բնորոշ գծերը:

Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթին պատմիչը տալիս է «Աղվանից արքա Վաշագանի Կանոնական Սահմանադրությունը՝ հաստատված Աղվենում տեղի ունեցած ժողովում» անվանումը: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Գ.Յարությունյանը բովանդակային առումով վերլուծելով հայ պատմիչների գործերում, հայ ազգային Եկեղեցական ժողովներում, իրավունքի հայկական հուշարձաններում և հայոց լեզվի բառարաններում օգտա-

գործվող «սահմանադրություն» բառի իմաստը, ընդգծել է, որ դրա տակ նախկինում նկատի են ունեցել, որ դա որոշում է, վճիռ է, «օրինադրություն» է, և հստակ բնութագրում է իրերի ու երևույթների որոշակի կարգ, կանոն, օրինաչափություն սահմանելու, ընդունելու հանգամանքը՝ ընդգծելով վերջինիս որոշակի, առանձնահատուկ բնույթը, որ այն ունի սահմանային նշանակություն, իրենից այն կողմ, իրենից վեր կամ գերակա «որոշում» լինել չի կարող, մի որոշում, որ տրված է «ի վերուստ» և ունի սահմանային ու գերակա բնույթ։¹⁹

«Կանոն»-ը հունական բառ է, որը նշանակում է ուղիղ փայտ, ծող, ուղիղ գիծ, սահմանագիծ: Կանոն բառն օգտագործվում է երաժշտության, քերականության, հոգևոր և այլ ոլորտներում: Յոգևոր իշխանության մեջ կանոն բառը նշանակում է եկեղեցական գրությունների, Սուրբ գրքի և ժողովների պարտադիր հրահանգներ, գրավոր հրամաններ, այսինքն՝ քրիստոնեական եկեղեցու կողմից օրենքի աստիճանի բարձրացված այն համընդիմանուր դրույթները, որոնք վերաբերում են եկեղեցական կարգին, եկեղեցական կառավարմանը և յուրաքանչյուր անձի պարտականությանը: Եկեղեցու մեջ կանոնն այն է, ինչ-որ օրենքը պետության մեջ: Կանոնի և օրենքի տարբերությունը հստակեցվեց հոգոնեական իրավագիտության մեջ Յուստինիանոսի ժամանակաշրջանում և ընդունվեց բոլոր ազգերի կողմից: Կանոն եզրույթը հատկացվեց միայն եկեղեցական սահմանադրություններին՝ զուգակշիր դնելով դրան քաղաքացիական կարգադրությունները, որոնք կոչվում էին օրենքներ: ²⁰

Ըստ պրոֆ. Խ. Սամուելյանի՝ սկզբնական շրջանում եկեղեցական կանոնները դավաբանաթեզերի ու բարոյագիտական նորմերի հավաքածու են եղել: Այդ կանոնները սահմանվում էին ավելի հաճախ՝ այսպես կոչված եկեղեցական ժողովներում, որոնք լինում էին տիեզերական և տեղական: Դայ եկեղեցական ժողովներին երեմն մասմակից էին լինում նաև աշխարհիկ ավատատերերը, մանավանդ՝ քաղաքական ճգնաժամային պահերին: Նման պայմաններում եկեղեցին յուրացնում էր օրենսդիր և իրավադիր գործառությներ, որոնց ուժով եկեղեցին իրեն իրավունք էր վերապահում ոչ միայն կարգավորելու եկեղեցու և հոգևոր դասի ներքին հարաբերությունները, պարտականությունները, տնտեսական գույքային հարցերը, կազմել սահմանադրություն, այլև միջանտելու աշխարհիկ հասարակական հարաբերություններին ու դրանք ենթարկել եկեղեցու իրավասությանը:²¹

Բյուզանդական իրավագիտության մեջ այն աշխարհիկ և հոգևոր օրենքների հավաքածուն, որով ղեկավարվում էր եկեղեցին և եկեղեցական դատարանը, կոչվում էր «նոմոկանոն» (հունարեն՝ նոմոս-օրենք և կանոն բառերից): Ուսւները նման օրենքների հավաքածուներն

անվանել են “Կօրմու քհից” (ղեկավար գրքեր): Անվիճելի է, որ բյուզանդական իրավագիտությունն իր հետքն է թողել նաև հայ իրավունքի վրա: Բյուզանդիայում թագավորական օրենքները կոչվում էին նաև **սահմանադրություններ**. և հիմնականում այն օրենքներն են կոչվել **սահմանադրություններ**, որոնք նպաստել են երկրի քաղաքական հարաբերությունների կայունացմանը: Բյուզանդիայում թագավորական օրենքները և Եկեղեցական կանոններն առաջին անգամ օրինակարգավորնան են Ենթարկվել 438 թվականին: Նման հավաքածուները Սահմանադրության նախատիպ են հանդիսացել:

Մեր պարագայում, քննարկվող փաստաթղթի՝ Աղվանից արքա Վաչագանի «Կանոնական Սահմանադրություն» անվանումը ցույց է տալիս, որ փաստաթուղթը բոլորովին Եկեղեցական կանոնների հավաքածու չէ, այլ միապետի կողմից ընդունված բարձրագույն օրենք: Իսկ այն հանգամանքը, որ Աղվենի ժողովում ընդունված փաստաթուղթը հոգևոր հարցերից բացի կարգավորել է նաև աշխարհիկ հարաբերություններ, թույլ է տալիս այն կոչել «Կանոնական Սահմանադրություն»: Միաժամանակ, մենք հեռու ենք այդ փաստաթուղթը V դարի իրականությունից կտրելու և այն ներկայիս իմաստով սահմանադրություն կոչելու գայթակղությունից, չնայած մեր ուսումնասիրությունում հարազատ ենք մնում «Կանոնական Սահմանադրություն» եզրույթին:

Հայ ժողովողի լեզվով խոսող այդ փաստաթղթի նախարանը բանալի է տալիս մեզ հասկանալու, թե ինչի համար է հրավիրվել ժողովը: Մասնավորապես, նախարանում նշվում է. «Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակասություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմանարդ ժողով գումարել Աղվենում, որը կայացավ մարաց ամսի տասմերեցին»:

Փաստաթղթի նախաբանը մեզ նաև հուշում է, որ հակասությունները եղել են կրոնական և սոցիալական բնույթի: Փաստաթղթի տեքստը սկսվում է. «Ես Վաչագան՝ Աղվանից արքաս, (այնուհետ թվարկվում է հոգևոր և ազնվական անձանց անունները, որոնք միաբան արքայի ամառանոցն են ներկայացել) ... Որոշեցինք հետևյալը»:

Սահմանադրության նախաբանում անուններով և բնակավայրերով նշված 18 հոգևորականներից 16-ը ներկայացրել են այսրկույրան Հայ Աղվանքը, աշխարհիկ տերերից մասնակցել են ազնվական (ձեռագրերում՝ ազատ) մարդիկ, Արցախի նահապետները, Կաղանկատույք բնակավայրի Բակուր նահապետը և այլ բազմաթիվ երևելիներ:

Պատմական առումով ազնվականներն (ազատները), ավատատի-

րական աստիճանակարգության մեջ թագավորներից և նահապետներից հետո, խոշոր կալվածատերեր են հանդիսացել, իսկ քերականական իմաստով՝ ազնվական բառը նշանակում է ազնվագարմ, ազնվատոհմիկ, ազնավուր, ազնվացեղ, արիստոկրատ, նշանավոր տոհմի պատկանող:²² Արշակունյաց Հայաստանում նախարարության գլուխ կանգնած էր տարիքով ավագագոյն անդամը, որը հայ մատենագրության մեջ կոչվում էր տեր կամ տանուտեր, նախարար կամ նահապետ: Այս եզրույթները հայ պատմագիրների հուշարձաններում հաջորդում են միմյանց որպես պարզ հոնանիշ հասկացություններ, այն տարբերությամբ միայն, որ հեղինակներից մի քանիսը գերազանցապես գրօնածում են դրանցից մեկը, իսկ ոմանք էլ մյուսները:²³ Նահապետը համարվում էր ամբողջ տոհմի ներկայացուցիչ, որի ձեռքում էին տոհմային կալվածքի բովանդակ հողային իրավունքը և քաղաքական իշխանությունը նախարարական տարածքի նկատմամբ: Նահապետը թագավորից միայն վասալական կախվածության մեջ էր գտնվում:

Սխալված չենք լինի, եթե Արշակունյաց Հայաստանի ավատատիրական աստիճանակարգության բնորոշ գծերը տպարածելով Հայ Աղվանքի վրա, նշենք, որ Աղվենի ժողովում ապահովված է եղել Հայոց Արևելից կողմանքի յուրաքանչյուր վարչական միավորի հոգևոր և աշխարհիկ իշխանություն կրողների ներկայությունը:

Կանոնական Սահմանադրությունը բաղկացած է 21 կանոններից և եզրափակիչ կանոն դրույթներից: Այդ կանոնները կարելի է բաժանել 4 խմբերի:

- ա) ներեկեղեցական գործեր կարգավորող կանոններ,
- բ) հոգևոր և աշխարհիկ դասի վերնախավի հարաբերությունները կարգավորող կանոններ,
- գ) հոգևոր դասի և հավատացյալների հարաբերությունները կարգավորող կանոններ,
- դ) իրավական՝ քաղաքացիական, ընտանեկան և քրեական իրավունքի հարաբերությունները կարգավորող կանոններ:

Այժմ դիտարկենք այդ 4 խմբերի կանոններն առանձին-առանձին.

ա) ներեկեղեցական գործեր կարգավորող կանոններ (Ա, Բ, Չ, Լ, Թ, ԺԵ, ԺԶ)

Ա կանոնը կարգավորում է եպիսկոպոսների մոտ հոգևոր կարգ ու կանոն սովորող գյուղական քահանաների պարտավորությունը՝ առաջիններին տարեկան երկու անգամ երկրպագելու և ընծա տալու վերաբերյալ հարցերը: Կանոնի մեջ նշված «ինչպես կարգն է» եզրույթը մեզ հուշում է, որ ներեկեղեցական հարաբերություններում հնուց եկող մի

կարգ է եղել՝ ի հատուցումն այն ծառայության, որի դիմաց քահանան կարգ ու կանոն է սովորել Եպիսկոպոսից՝ ըստ Սուրբ Գրքի: Անշուշտ, այդ կարգում պետք է սահմանված լիներ տրվելիք ընծայի տեսակը, չափը և արժեքը, ուստի այդ հարցերում Ա կանոնը, հանդիսանալով մատնանշող նորմ, խուսափել է անհարկի կրկնությունից: Բացի այդ, Կանոնական Սահմանադրության նախարանից նկատելի է, որ Աղվենի ժողովին մասնակցել են յոթ Եպիսկոպոսներ, որոնք իհմնականում ներկայացնում էին Կուր գետի աջափնյակը: Այդ Եպիսկոպոսները տարբեր հոգևոր թեմերի առաջնորդներ էին: Յետևաբար, Ա կանոնն առաջին հերթին կարգավորել է Վերջիններիս և քահանաների միջև ծագած տարածայնությունները:

Բ կանոն Ա կանոնի նման կարգավորում է քահանա և սարկավագ ձեռնադրվելու համար տրվելիք դրամական գումարի չափը («Եթե քահանա և սարկավագ են ձեռնադրում, չորս դրամ քահանային, իսկ երկու դրամ սարկավագին պետք է տան»): Անվիճելի է, որ քահանա և սարկավագ ձեռնադրողը վերադաս հոգևոր նարմինն է եղել: Կանոնը, սահմանելով Եկեղեցական ծիսական արարողության դիմաց ձեռնադրվողին դրամական միավորով տրվելիք վարձի չափը, միևնույն ժամանակ անորոշ է թողնում, թե ով պետք է տա սահմանված վարձը: Կարծում ենք, որ դրամական այդ պարտավորությունները դրված են եղել այն բնակավայրի վրա, որտեղ պետք է սպասարկեին ձեռնադրված քահանան կամ սարկավագը: Սա միակ կանոնն է, որում Եկեղեցուն տրվող վճարը սահմանված է դրամական ռենտայով: Քննարկվող ժամանակաշրջանում Քայաստանում և Աղվանքում դրամը պարսկական դրամական միավորն էր և, ըստ Անանիա Շիրակացու, կտրվել է արծաթից, որի կշիռը եղել է 4.08 գրան:²⁴ Բ կանոնը նախորդի նման ևս պարտավորական իրավունքի նորմ է: Նման նորմեր պարունակվում են նաև Գ, Դ, Ե, ԺԸ, ԺԹ կանոններում, որոնցով սահմանված են ժողովորի կողմից Եկեղեցուն տրվող տուրքերի տեսակները և քանակը:

Չ կանոն արձանագրում է, որ «Եթե վաճերեցը կամ որևէ վաճական վաճին վճաս է հասցնում (գողանում է) և վրան հաստատվում է, պետք է անարգեն ու տեղից հեռացնեն, իսկ գողացածը գրավեն Եկեղեցու համար» (գրաբար հրատարակչություններում՝ «Վանաց երեց կամ վանական որ՝ եթե ի վաճացն գայթանք առնե և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն գնա և ի տեղլոյն ի բաց արասցեն, ի գխոստակն յԵկեղեցին կալցե»):

Կաղանկատվացու Երկի աշխարհաբար տարբերակում «խոստակ» բառը թարգմանվել է «գողոնք», «գողացածը» ինաստներով: «Խոստակ» բառն ինքնըստինքյան ասում է, որ այն ոչ հայկական ծագում ունի: Ականավոր հայագետ Յ. Յուրչշմանը «խոստակը» համարում է

պարթևական բառ՝ «կալվածք», «ստացվածք» իմաստներով: Հ.Մանանդյանը, հաճածայնվելով բարի պարսկական ծագման հետ, հիմնավորել է, որ Եկեղեցու ծառայողները հոգևոր «ծառայության» համար Եկեղեցու կողմից օգտագործման և տիրապետման իրավունքով ստացել են հողաբաժիններ, որոնց նկատմամբ՝ իրու ժառանգություն, իրավունք են ունեցել դրանք բողնելու իրենց որդիներին և մերձավորներին: Սակայն, եթե հոգևոր ծառայությունն անհնարին էր դաշնում հոգևորականի տղիտության կամ ծանր հանցագործություն կատարելու պատճառով, ապա Եկեղեցին իրավունք ուներ հողի՝ գերազուն սեփականության իրավունքը պատկանելու ուժով, այդ գույքը ետ գրավել:²⁵ Խ.Մանուկեյանը, չառարկելով Հ.Մանանդյանի վերլուծությունները, միաժամանակ կարծիք է հայտնել, որ «խոստակ» բառն օգտագործվել է միայն տնտեսապես և քաղաքականապես մինյանց հետ սերտ կապերի մեջ գտնվող Աղվանքում և Սյունիքում, չտարածվելով այլևս Հայաստանի մյուս մասերում:²⁶

Այսքանից կարելի է միայն եզրակացնել, որ Կանոնական Սահմանադրության ձեռագորերի և գրաբար իրատարակությունների Զ կանոնում նշված «խոստակ» բառը պետք է հանարել այն հողաբաժինները և անշարժ գույքը, որոնք հոգևորականներին պատկանել են ոչ լիակատար սեփականության իրավունքով, այսինքն՝ նրանք գրկված են եղել գույքի ճակատագիրը փաստացի տնօրինելու իրավունքից:

Զ կանոնը բովանդակային առումով համապատասխանում է Ծահապիվանի ժողովով սահմանված Բ գլուխ թ կետին, որի ուժով՝ հոգևորականի կողմից հանցանք կատարելու դեպքում նրա նկատմամբ կիրավող պատիժներից մեկն էլ Եկեղեցու բաժնից գրկելն էր:²⁷

Է և Թ կանոններն ուղղված են եղել միավոր քանակի առումով վանքերի քահանաների և բնակավայրերի բնակչության համար հավասար պայմաններ ստեղծելու: Հաղոք կարգավիրվել է այսպես, որ բազմաժողովուրդ ունեցող վաճքից հավատացյալների մի մասին վերցրել և հանձնել են այն վաճքին, որի քահանաներն ավելի շատ են եղել, կամ մեծ գյուղի վրա հովվող քահանային արգելել են մեկ այլ գյուղի վրա հովվելու: Բացառություն էր կազմում, երբ երկու գյուղեր մինյանց մոտ են եղել: Փաստորեն, այս կանոնների ուժով բնակավայրերի Եկեղեցական հոտը պետք է քահանաների թվին համաչափ լիներ:

Ըստ **ԺԵ կանոնի**, քահանայի կամ սարկավագի անօրինական գործողությունները կարող էին բողոքարկվել Եպիսկոպոսին: Ստորին դասի հոգևորականների կողմից մեղքն ընդունելու դեպքում պատիժը կրել են անապատում ապաշխարելով, իսկ եթե մեղքը չի ընդունվել՝ դատավարություն է տարվել, որն ավարտվել է երկու ելքով, մեղքը ապացուցելու պարագայում՝ կանոնի մեջ նշված վկայակոչող նորմե-

թի ուժով հանցավորն արտաքսվել է բնակության վայրից, իսկ եթե չի հաստատվել՝ գանգատավորը պարտավոր է եղել քահանային նվեր տալ: Ակնհայտ է, որ մե կանոնը, բացի ներեկետեցական հարաբերություններ կարգավորելուց, իր մեջ պարունակում է քաղաքացիական, քրեական և դատավարության իրավունքների այնպիսի կարևորագույն նորմներ և ինստիտուտներ, ինչպիսիք են զրաբարտությունը, ակնհայտ անմեղ անձին ամբաստանելը, դատավարությանը մասնակցող անձինք, ապացույցները և ապացուցումը, դատաքննությունը, դատական ակտ կայացնելը, պատժի տեսակները և այլն: մե կանոնը միաժամանակ ցույց է տալիս, որ երկրում գործող դատական ատյաններից մեկն էլ եպիսկոպոսական դատարանն է եղել:

Ժ կանոնը, Զ և ԺԵ կանոնների նման, նույնական կարգավորել է այն հարաբերությունները, որոնց պարագայում օրինազանցը դարձալ հանդիսանում է եկեղեցու ստորին պաշտոնյան՝ քահանան: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ քահանայի ընկերներն ու աշակերտները մեջք են բարդել քահանայի վրա: Այս կանոնում եկեղեցու քահանան եկեղեցու սեղանի առջև կանգնում էր մեղադրյալի, վերջինիս ամբաստանողները՝ մեղադրողի, իսկ ժողովուրդը՝ դատավորի դերում:

Ինչպես նկատելի է՝ ամբաստանողների դերում հանդես են գալիս քահանայի ընկերները և աշակերտները: Մեղքը հաստատվելու դեպքում՝ քահանան արտաքսվել է գյուղից: Իսկ եթե դատավարության ընթացքում պարզվել է, որ քահանայի ընկերները և աշակերտները վրեժի դրդմաճը են ակնհայտ սուտ մատնություն կատարել, քահանան արդարացվել է, իսկ ակնհայտ սուտ մատնիչները ժողովորդի կողմից դուրս են քշվել վաճրից: Ակնհայտ սուտ մատնիչների կողմից հանցանքը խստովանելը դիտվել է որպես մեղմացուցիչ հանգանանք և առանց վանքից հանելու նրանց վրա ապաշխարանք է դրվել: Բացի այդ, հետագայում էլ, եթե վերատին հանցանք են գործել, ապա դատվել են կանոններով:

Ժ կանոնը մեջ միաժամանակ հուշում է, որ վանքերը նաև դպրոցներ են հանդիսանել: Իսկ եթե հաշվի առնենք, որ Վաչագան թագավորը Հայոց Արևելից գավառներում տարվա օրերի քանակով եկեղեցիներ ու վանքեր է կառուցել, ապա կարելի է պատկերացնել, թե թագավորն ինչպիսի կարևոր նշանակություն էր տալիս կրթական գործին, դպրությանը:

Բ) Յոգևոր և աշխարհիկ դասի վերմախավի հարաբերությունները կարգավորող կանոններ (Ժ, ԺԸ, Ի, ԻԱ)

Ինչպես նշեցինք, մինչև Վաչագան Բարեպաշտի գահակալությունը, երկրում մոտ 20 տարի անհշանություն էր տիրում, երկիրը զուրկ էր հայազգի ղեկավարից, Արցախի, Ուտիքի, Շավիդից և Գարդմանի

նախկին նախարարական տները տրոհվել էին՝ ժողովրդի մի մասը երկրից հեռացել էր, մի մասը կրակապաշտություն էր ընդունել, իսկ առավել կենսունակ իշխանական տոհմերը տեր ու տիրական էին դարձել իրենց գավառներում: Հայոց Եկեղեցու նկատմամբ պարսից իշխանությունների վարած հակաքրիստոնեական քաղաքականության պատճառահետևանքային կապով Երկրում չկար մեկ միասնական թեմ: Ուստի, Եկեղեցական իշխանության թուլության պատճառով, տեղական ազնվականները Եկեղեցիները վեր էին ածում վանքերի՝ ստանալով լրացուցիչ եկամուտներ: Ժ կանոնը հենց մի փաստ է, որ անիշխանության պայմաններում՝ աշխարհիկ դասը հոգևոր իշխանության նկատմամբ հաղթող է դրւս Եկել: Սակայն, Եկեղեցին չէր կարող հաշտվել դրա հետ և հրաժարվել իր հասույթներից: Թագավորական իշխանության վերականգնման պայմաններում՝ Եկեղեցին հանդես է գալիս գանգատավորի դերում: Այդ հանգամանքը, ըստ Լեոի՝ ցույց է տալիս..., թե Աղվանից Երկրում այն ժամանակներին արդեն վանքերը կազմում էին աշխարհականների սեփականություն և նրանց համար արդյունքի աղբյուրներ էին, մի դրություն, որ գոյություն ուներ ընդհանուր Եկեղեցու ծոցում... որ այս գանգատը հենց այդ դրությունն էր մատնանշում, ցույց տալիս ժողովրդի Վճիռը՝ թողնել վանք դարձրած Եկեղեցիներին իրենց նախկին դրության մեջ, իսկ նրա ստացած արդյունքները հատկացնել գլխավոր Եկեղեցուն: ²⁸

Ավելորդ չենք համարում մեջքերել **Ժ կանոնը**, որը հոգևորականության և ազնվականության միջև հակասությունների լուծմանն ուղղված փոխսպառումային տարբերակ է հանդիսանում: «Դարձյալ՝ եթե Եպիսկոպոսներն ու քահանաները թագավորի մոտ գանգատվեն ազնվականների դեմ, թե բանք գյուղում երկու կամ երեք Եկեղեցի վանք են դարձնում, և եթե թագավորի ներկայությամբ ազնվական մարդիկ պայմանավորվեցին, և թագավորին, Եպիսկոպոսին, ազնվականներին այդպես հաճելի թվաց, թե վանք դարձրած Եկեղեցիները կրողնեն նույն վիճակում, իսկ Եկեղեցու պտղին ու տուրքը կտան մայր Եկեղեցուն»:

Այսպիսով, հոգևոր և ազնվական բարձր դասի միջև «Եկեղեցիվանք» սեփականության շուրջ ծագած վեճը քննվել է թագավորի կողմից և հաշտության համաձայնություն կնքելու ու այն թագավորի կողմից հաստատելու դեպքում Եկեղեցու նախկին վիճակը՝ *status quo*-ն պահպանվել է, իսկ Եկեղեցուն տրվելիք վճարումները՝ անցել մայր Եկեղեցուն: Շատ պարզորդ է, որ տնտեսական այս պայքարի մեջ հոգևոր դասը հաղթող է հանդիսացել և Եկեղեցին ավելի է զորեղացել: Միաժամանակ այս նորմով սանձահարվել է ազնվականների կենտրոնախույս իշխանությունը:

Ժ կանոնը կարգավորում է ազնվականների կողմից Եկեղեցինե-

ոին տրվող տուրքերի չափը: «Եթե ազնվականները տասանորդ են տալիս, պետք է մի մասը (ձեռագրերում և գրաբար հրատարակություններում՝ զկեսմիք) բուն գլխավոր եկեղեցուն տաճ, մյուս մասը՝ իրենց եկեղեցուն»: Տասանորդը հնագույն հարկատեսակ է և կազմել է ստացված եկամտի տասներորդ մասը: Յայց Կանոնագրքում հիշվում է եկեղեցական պտղի, ինչպես նաև տոկոսի առումով:²⁹

Ազնվականների և եկեղեցական իշխանության առջև առկա տարածայնությունների վերացնան առումով ուշադրության արժանի փոխզիջումային տարբերակ է հանդիսանում **Ի կանոնը**, որի պարագայուն կողմերը ստանձնել են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ. «Ազնվականներն առանց եափսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել՝ չնայած, որ իրենց դաստակերտն է. եափսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի: Եթե ազնվականից կամ ժողովրդից քահանային վլուանգ է սպառնուն, քահանան էլ իրավունք չունի հեռանալու առանց եափսկոպոսի թույլտվության»:

Դին և միջնադարյան Յայաստանում դաստակերտ, ձեռակերտ են անվանել թագավորների, իշխանների հիմնած և նրանց պատկանած քաղաքները, ավանները, գյուղերը, ագարակները՝ ապարանքներով, տնտեսական կառույցներով, վարելահողերով, այգիներով հանդերձ:³⁰

Յայաստանի ավատատիրական դարաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքը մանրակրկիտ լուսաբանած ակադեմիկոս Յ.Մանանյանի դիտարկմամբ՝ մարզպանության շրջանում հայ ազնվականությունը մաքառել է հոգևորականների դեմ, ցանկացել տեր ու տնօրեն դառնալ եկեղեցական շահավետ հաստատությունների և զգտել է նույնիսկ հարկատու դարձնել եկեղեցական ստորին պաշտոնեությանը, ժխտելով նրա ապահարկությունը և «ազատությունը»: Այդ հակամարտությունը և պայքարը բացատրվում են նաև մասամբ նրանով, որ եկեղեցիները, վանքերը և եկեղեցական այլ հաստատությունները կառուցվուն կամ պահպանվուն էին մեծ մասամբ ազնվական տոհմերի միջոցներով, որոնք այդ հաստատությունների նկատմամբ ունեին հսկողության և հովանավորության պարտականություններ, հավանաբար, նաև հատուկ իրավունքներ, որոնք միջնադարյան արևմտյան երկրներում անվանվում էին *patronat*:³¹ Այդ խնդիրն առկա է եղել նաև Յայց Արևելից կողմանքի թագավորությունում:

ԻԱ կանոնի առանցքն ազնվականների կողմից եկեղեցում սեղան կառուցելու, պատարագ ամելու և եկեղեցու համար մասունքներ բերելու հարցերի կանոնակարգումն է: Ընդ որում, այս հարցերում վեճը լուծվել է հօգուտ հոգևոր իշխանության, և ազնվականը որքան էլ հարստության տեր լիներ, նա կարող էր այդ կարգի գործողություններ

կատարել միայն եպիսկոպոսի գրավոր թույլտվությամբ, իսկ ինքնազ-լուխ կատարելու դեպքում նա պարտավոր էր ըստ իր կարողության տուգանք վճարել եպիսկոպոսին: Վերջում կանոնն ակնարկում է, որ ազնվականը հետագայում էլ կարող է տուգանք վճարել «ըստ կանոն-ների»: Չնայած կանոնի վերջին պարբերությունը մութ և անորոշ է, բայց մի բան պարզ է, որ տուգանքի վճարման հարցում երկրում գործել են որոշակի կանոններ:

Գ) Յոգնոր դասի և եկեղեցու համայնքի հարաբերությունները կարգավորող կանոններ (Գ, Դ, Ե, ԺԹ)

Այս խմբի կանոնների ուժով եկեղեցու հավատացյալները պարտավոր են եղել տարրեր տեսակի եկեղեցական հարկեր և տուրքեր վճարել եկեղեցուն: Այդ կանոններում դրսնորվում է հոգևոր բնագավառում պետության հարկային քաղաքականությունը, մի քաղաքականություն, որին պարտավոր են եղել ենթարկվել բոլորը՝ շինականից մինչև թագավորական ցեղի անդամը: Կանոնները մեզ պատկերացում են տալիս, թե երկրում ինչպիսի հարկային համակարգ է գործել և ինչ տեսակ-ներով ու չափերով են հարկերը տրվել եկեղեցուն:

Գ կանոնն արձանագրում է: «Ազնվական կամ թագավորական ցեղին պատկանող որևէ մեկը կենդանության ժամանակ իր ձեռքով հոգու բաժին պետք է տա, ասենք՝ ձի թամրով ու սամձով և կամ ինչ հարստություն որ ունի, դրանից պետք է տա, եթե կենդանության օրոք չտա, ապա նրա մահից հետո ընտանիքն է պարտավոր տալ»: Այդ հարկատեսակով թագավորական ցեղին, սովոր թագավորազուն պատկանողները հավասարեցված են ազնվականների հետ և եթե նրանց վրա դրված յուրահատուկ հարկատեսակը կենդանության օրոք չի տրվում, ապա մահվանից հետո այդ պարտավորությունն անցնում է մահացածի ընտանիքին:

Դ կանոնը ժողովրդի կողմից քահանային տուրքեր տալու կարգը հետևյալ կերպ է սահմանել. «Ունենորը պետք է տա չորս գրիվ ցորեն, վեց գրիվ գարի, տասնվեց փաս քաղցու, իսկ նա, որ հացասակավ է, դրա կեսը պետք է տա, ինչ վերաբերում է գինուն, թող տա այնքան, որ-չափ կարող է: Վար ու ցանք և այգի չունեցողից չպետք է առնեն: Իսկ նա, ով ոչխար ունի, պետք է տանից մի ոչխար տա, երեք գզաք բուրդ ու մի գլուխ պանիդ, ով ձիեր ունի տանք, պետք է տա մի քուռակ, իսկ խոշոր եղջերավոր անասուն ունեցողը՝ մի հորթ»:

Գրիվը հողը ցանելու համար պահանջվող հացահատիկի չափն է եղել: Այստեղից նաև՝ հայերեն գրուանը, գրուանքայն, որ կշռի չափ է և մոտավորապես հավասար է 10 կգ քաշի: Պարսկերեն «փաս» բառը հեղուկ մարմինների չափ է:

«Ժողովուրդ» հասկացության տակ մեր պատմիչները նկատի են առել «բոլոր նրանք, ովքեր չեն մտնում ազատների, ազնվականության և հոգևորականության դասի մեջ և հանդիսանում էին մի զանգված, ստորին բնակչության մի խավ՝ շինականության անվան տակ»: Շինականը գյուղացի ինաստով ամենագործածական բառն է, բայց այն հաճախ փոխարինվում է ռամիկ, գեղջուկ բառերով և եկեղեցական ժողովուրդ եզրույթով:³²

Սահմանադրության Դ կանոնը մեզ հուշում է, որ Արցախ-Ուստիքյան աշխարհում եկեղեցական ժողովորդի մի մասը զբաղվել է Երկրագործությամբ, իսկ մյուս մասը՝ անասնապահությամբ: Երկրի հիմնական, անմիջական բարիք արտադրողները սոցիալական այդ երկու խավերն են եղել, որոնք, նյութական կախվածության մեջ լինելով հոգևորականներից, վերջիններիս բնատուրք են վճարել: Սակայն տարբեր են եղել նրանց կողմից բնական արդյունքով վճարվելիք տուրքերի չափը և տեսակը: Երկրագործները վճարումները կատարել են հողից ստացված եկամուտների հաշվին (հողային հարկ), հողագործ մարդկանց նկատմամբ հողային հարկը չի տարածվել: Խաշնարածներից վճարումները կատարվել են գլխահարկի ձևով (անասնահարկ): Կանոնի մեջ օգտագործվող «գգաթ բուրդ» հասկացությունը ևս տուրքի տեսակ է, բրդի որոշակի քանակ, որ ծագում է հայերեն «գգել» բառից և նշանակում է, որ խաշնարածների կողմից եկեղեցուն տրվող գլխահարկի մեջ էր մտնում նաև «երեք գգաթ բուրդ»: Դրանում զարմանալի ոչինչ չկա, որովհետև խաշնարած մարդկանց համար բնորոշ է եղել հարկը բրդով վճարելը:

Կանոնից կարելի է նաև ենթադրել, որ ավելի բարեբեր և ոռոգվող հող ունեցող գյուղացիները հողը ցանելու համար ցորենի, գարու, քաղցր ընթելիքների և գինու տեսքով եկեղեցուն ավելի շատ հարկ են վճարել, քան սակավ, չորոգվող հող ունեցող գյուղացիները:

Ե կանոնը պարտավորեցնում է բոլոր աշխարհականներին, լինեն նրանք ազնվական, շինական կամ մեկ ուրիշ դասի ներկայացուցիչներ, որ տարվա ընթացքում մեկ անգամ պատարագ կատարեն իրենց հանգուցալների հիշատակի համար և իրենց վաստակից մեռելներին բաժին հանեն՝ «մեռած մարդու համար մի ծի, եթե ծի կա, մի խոշոր եղջերավոր անասուն՝ արջառ, եթե կա, մեռելի տերը եկեղեցուն պետք է տա, դրանից որ մեկը կամենա»: Այս կանոնում պատժի մասին որևէ խոսք չկա, կարծում ենք, որ կանոնը գործել է սովորութային իրավունքի ուժով: Ինչպես այս, այնպես էլ նախորդ կանոնով եկեղեցին հարկատու էր դարձնում նաև երկրի ազնվական դասին:

ՃՇ կանոնը կարգավորում է տիրոջ և ծառայի փոխհարաբերությունները եկեղեցի հաճախելու հարցում: Նրանք միայն կիրակի օրերը

կարող էին միասին գնալ մայր Եկեղեցի ու հիշատակ կատարել Եկեղեցում: Իսկ սա նշանակում է, որ շաբաթվա մյուս օրերին տերն ու ծառան մայր Եկեղեցի կառող էին մտնել առանձին-առանձին: Կանոնի պահանջները տարածվում են միայն մայր Եկեղեցու վրա, մյուս Եկեղեցիների մասով (գլխավոր Եկեղեցի, բնակավայրերի Եկեղեցի) կանոնը որևէ սահմանափակում չի դնում: Այս կանոնը վկայում է, թե հոգևոր պետքերի բնագավառում որքան խորն է եղել խորականությունը իշխող դասակարգի և հասարակ ժողովրդի միջև: Ուստի, հակված չենք այն հեղինակների կարծիքին, ովքեր գտնում են, որ Վաչագան թագավորի Կանոնական Սահմանադրությունը ներդաշնակորեն ապահովել է երկու բոլոր խմբերի և խավերի շահերը: Ընդհակառակը, համոզված ենք, որ սահմանադրական նորմերով սահմանագատվել և որոշակի շրջանակների մեջ են դրվել հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքները և պարտականությունները, իսկ հարկային քաղաքականության բնագավառում օրինականացվել, հստակեցվել են, այլ ոչ թե խստացվել աշխարհականների կողմից հոգևոր իշխանությանը տրվող հարկերի, տուրքերի և հասույթների չափն ու քանակը:

Դ) Իրավական բնույթի կանոններ (Ը, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ)

Մարդկության պատմության բոլոր դարերում անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները, նախևառաջ՝ դիտավորյալ սպանությունը, միշտ էլ խստորեն պատժվել են: Նման տեսակի իրավանորմեր նախատեսված են եղել դեռևս Համմուրաբիի օրենսգրքով, Մովսիսական, թալիոնի ու շարիաթի անողոք օրենքներով և այլն:

Աստվածաշունչը ծանր հանցագործություն է համարում արյունահետությունը՝ «Արիւնի վիեժխնդիրը մեռցնէ մարդասպանին», «Եւ ձեր բնակած երկիրը չաղձեք, որովհետեւ արիւնը պղծում է երկիրն եւ նորա մեջ թափուած արիւնի համար երկրին քաւութիւն չի լինիլ, բայց միայն նորան թափողի արիւնովը»:³³ Աշխատի ժողովը թեև որոշ հանցագործություններ, այդ բվում՝ «արյունահետ սպանությունը» դատապարտեց, բայց դրանց պատճելիության վերաբերյալ որևէ նորմ չսահմանեց: Ֆիշտ է, Շահապիվանի ժողովի որոշումները մի շարք հանցագործությունների համար սահմանեցին պատիճներ, բայց դրանցից ոչ մեկն անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների թվին չի դասվում:

Արյունահետության վերաբերյալ հանցակազմը և դրա պատճելիությունը իին հայ իրավունքում առաջին անգամ օրենքի աստիճանի բարձրացվեց Կանոնական Սահմանադրության **Ը կանոնով**, ըստ որի՝ «Եթե քրիստոնյա մարդը կովում և արյուն է թափում, ներկայացնում են եպիսկոպոսին և ըստ օրենքների պատժում»

Թեև **Ը կանոն** ուղղված էր այն քրիստոնյաների դեմ, ովքեր կռիվ են արել և արյուն թափել, սակայն կանոնից չի երևում, թե այստեղ ո՞վ է տուժողը՝ քրիստոնյան, թե՝ այլ ազգի ներկայացուցիչը, ո՞րն է հանցագործության սուբյեկտիվ կողմը կամ արարքի ու հետևանքի պատճառական կապը և այլն: Բայց կանոնը հստակ մատնացույց է անում, որ հանցագործին պատժում են «ըստ օրենքների»: Եթե Սահմանադրության մեջ հինգ վկայակոչող, հղում կատարող նորմեր կան, որից չորսը (Ա, ՃԵ, ՃԶ, ԻԱ) հուշում է երկրում գործող ինչ-որ կանոնների մասին, ապա **Ը կանոնը** միակ նորմն է, որ հղում է կատարում օրենքին, որով հանցագործը, տվյալ դեպքում՝ «արյուն թափողը», պետք է պատժվի: Կանոնից ակնհայտ է, որ «արյուն թափող» քրիստոնյաները դատվել են եպիսկոպոսական դատարանի կողմից և նման կարգի հանցագործությունների վերաբերյալ պատիժ նշանակելու հարցում երկրում հստակ օրենք է գործել: Փաստորեն, հանցագործը դատվել է ոչ թե եկեղեցական, այլ քագավորի կողմից ընդունված օրենքով:

Ըստ երևույթին, քագավորի և եկեղեցու կողմից Սահմանադրության մեջ **Ը կանոնի** մտցնումը նախատեսված է եղել քրիստոնյաների կողմից կրոնական մոլեռանդրությունը վերացնելու համար: Չէ՝ որ, ինչպես պատմիչն է Շշում, երկրի համար պատուհաս էին դարձել չարաչար տանջանքների միջոցով մարդագործության տարրեր աղանդների գործողությունները: Պատմիչն ահա թե ինչպես է նկարագրում դիվապաշտության աղանդներից մեկը. մանուկ երեխայի չորս բթաճանաներն ամուր կապում էին չորս ցցերից և կենդանի-կենդանի քերորում: Նախ կտրում էին աջ ձեռքի բուր մատը ու քերթելով մորթու հետ՝ կրծքի վրայով ծախ ծկույթից հանում կաշին: Նույն ծկի վարվում էին ոտքի մատների հետ: Մատնահատության այդ պիղծ աղանդի վերջնական արդյունքում քրմապետը զննում է մարդկային զոհի մորթին՝ մատների հետ և բավականություն ստանում:³⁴

Ժ և ԺԱ կանոնները կարգավորել են ամուսնաընտանեկան հարաբերությունները: Դիմենք **Ժ կանոնին**. «Ոչ մի տղանարդ երրորդ պորտի ազգակցուիի կին չպետք է առնի և եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա»:

Արևելքի ժողովուրդների մեջ մերձավոր ազգականների ամուսնությունը տարածված է եղել շատ հնուց: Մովսիսական օրենքներում սահմանափակումներ որպեսին մերձամուսնության հարաբերություններում և սահմանվեցին խիստ պատիժներ («Քո քրոջ մերկուրիւնը չբանաս», «Քո հօր կնոջ մերկուրիւնը չբանաս: Նա քո հօր մերկուրիւնն է» «Եւ եթե մի մարդ իր եղբոր կինն առնե, պղծութիւն է նա, նա իր եղբոր մերկուրիւնն է բանում, անզաւակ պիտի լինեն»):³⁵

Քրիստոնեությունը մերձամուսնությունը միշտ էլ համարել է արյու-

նապղծություն, արյունախառնակչություն: Մերձամուսնության մի շարք հարցեր կարգավորվեցին հունահօռնեական դարաշրջանում:

Մերձամուսնությունն արգելված է Եղել ինչպես Աշտիշատի, այնպես էլ Շահապիվանի ժողովների կանոններով: Առաջին ժողովը մերձամուսնության աստիճանների տարրերակում չի սահմանել: Երկրորդ ժողովը մերձամուսնության արգելակումը հասցել է մինչև չորրորդ պորտին և կանոնները խախտողների նկատմամբ սահմանել խիստ պատիժներ՝ ապաշխարանք 10 տարի ժամկետով կամ ցմահ և խոշոր գումարի դրամական տուգանքներ:

Աստիճան կամ պորտ անվանվում էր մեկի կապը մյուսի հետ ծննդյանք. աստիճանների կապը անընդհատ շարունակվող գիծ: Աստիճանները և մերձավորությունը հաշվել են հետևյալ կերպ: Ամեն մի ծնունդ համարվում էր մեկ աստիճան կամ մի պորտ հորիզ սկսած: Օրինակ, որդին հոր նկատմամբ մի աստիճան է, թուզ պապի նկատմամբ՝ երկրորդ աստիճան, որովհետև երկրորդ ծնունդն է: Երկու եղբայր միմյանց նկատմամբ երկու աստիճան են, որովհետև երկու ծնունդ են, երկու պորտ են: Քույր և եղբայր դեպի միմյանց ևս երկու աստիճան են, երկու պորտ են.³⁶

Սահմանադրության **Ժ կանոնը**, պարունակելով պարտադրող նորմեր, միևնույն ժամանակ պատժամիջոց չի նախատեսում: Մեզ հավանական է թվում, որ այս կանոնի պատժի հարցում Հայոց Արևելից կողմանքի հոգևոր իշխանությունը դեկավարվել է Շահապիվանի ժողովի թիվ 12 և 13 կանոնների դրույթներով:

Ժ կանոն ուշագրավ է այն առումով, որ, պարունակելով մի քանի հանցակազմ, բացի անուսնաքանտանեկան իրավունքից, կարգավորել է նաև քրեական և քրեական դատավարության իրավունքի հարաբերությունները: «Ով առանց պատժարի կնօքը բաց է թողնում ու առանց պատի կին է առնում, ով անօրեն ու նարդասպան է կամ կախարդահարցությամբ է զբաղվում, նրան կապելով պետք է թագավորի մոտ տանել ու չարաչար կերպով սպանել»: Այս կանոնով անուսնաքանտանեկան իրավունքի հարաբերությունների բնագավառում հանցավոր արարքների սուրբեկտը տղամարդն է հանդիսացել: Ինչպես գիտենք, քրիստոնեություն ընդունած ազգերի և ժողովուրդների մեջ անուսնության տիրապետող ձևը մենամուսնությունն է: Ամեն մի պատճական դարաշրջանում անուսնաքանտանեկան հարաբերություններից բխող հանցագրությունների հասկացությունը փոխվել ու փոփոխվել է: Եթե տոհմական կարգերում խմբանուսնության ժամանակ ամեն մի կին իրավունք ուներ կենակցելու ցանկացած տղամարդու հետ, ապա Համնութարիի օրենսգրքով դավաճան կինը՝ արյունապիղը, ենթարկվել է մահապատժի: Փաստորեն, ժամանակի ընթացքում օրինականացված և թույ-

լատրելի արարքները հետագայում դարձել են քրեորեն պատժելի հանցագործություններ:

Դիմ և միջնադարյան հայ օրենսդրական հուշարձաններում նախանշված են մի անբողջ շարք արարքներ, որոնցով ոտնահարվում էին ամուսնաընտանեկան հարաբերությունների տվյալ ժամանակաշրջանի համար ընդունելի սովորույթները: Պաշտպանելու ամրապնդել մենամուսնության վիճակության վերաբերյալ անհամար անհամար հասարակական տեսակետից մեծ նշանակություն ունեցող ուժ՝ խախտողների նկատմամբ սահմանելով քրեական նորմեր, շահագրգության վերաբերյալ աշխարհիկ տերերը, այնպես էլ հայ լուսավորչական եկեղեցին:³⁷

Շահապիվանի ժողովի թիվ 3 կանոնի ակտը շնացող և ամուսնական կարգը սրբությամբ չպահող տղամարդկանց ենթարկում էր կշտամբանքի, տուգանքի, ծեծի և վտարում էր եկեղեցուց: Ի տարրերություն գյուղացիների, ազատներն ազատվել են ծեծից, նրանց նկատմամբ կիրառվել է միայն տուգանքի պատժամիջոցը: Բացի այդ, կանոնի պահանջները հավասարապես տարածվել են նաև կնոջ վրա:

Մեր կողմից քննարկվող կանոնում խոսքը վերաբերում է ամուսնաընտանեկան հարաբերությունների բնագավառում կատարվող այնպիսի հանցագործությունների, ինչպիսիք են կնարողությունը և առանց պսակի կին առնելը: Կնարողություն էր համարվում, երբ տղամարդը, առանց այդ բանի համար հիմնավոր պատճառների, թողնում էր իր կնոջը:

Առանց պսակի կին առնելը (ապօրինի կենակցություն) տեղի է ունենում այն դեպքում, երբ տղամարդն ինքնագլուխ, առանց օրենքով սահմանված կարգի, ամուսնական հարաբերությունների մեջ է մտնում մեկ ուրիշի հետ: Բոլոր դարաշրջաններում սա ևս պատժելի արարք է համարվել: Ապօրինի կենակցություն պետք է ենթարկել նաև ամուսնու դավաճանությունը, երկնությունը, երբ եկեղեցական կարգով ամուսնացած ամուսիններից մեկն ու մեկը լքում է մյուսին և ամուսնական հարաբերությունների մեջ մտնում մեկ ուրիշի հետ:

Դայոց եկեղեցու կանոններով կնարողությունը, տղամարդու անհավատարմությունը՝ ապօրինի կենակցությունը և այլն համարվել են քրիստոնեական կրոնին անհարիր արարքներ, որոնց համար պատիժներ են նախատեսվել ապաշխարանքի, տուգանքի և մարմնական պատժի ձևերով: Այս կարգի հանցագործությունների համար Սահմանադրության **ԺԱՆՈՆԻ** պատժամիջոցն աչքի է ընկնում իր խստությանը՝ «չարաչար կերպով սպանելով», տանջանահ անելով: Կան նաև այլ տարրերություններ: Եթե քննարկվող կարգի հանցագործությունները Դայոց եկեղեցիների կանոնների ուժով ընդդատյա են եղել

հոգևորական դատարաններին, ապա Աղվենի ժողովում ընդունված կանոնների պարագայում՝ թագավորական դատարանին: Դժվար չէ կռահել, որ Կաչագան թագավորի համար հայ ընտանիքը և հայ կինը այնքան վեհ և բարոյական արժեքներ են եղել, որ տղամարդու պատճառով ամուսնալուծությունը, կնոջը դավաճանելը, առանց պսակի կին առնելը հավասարագոր են եղել դիտավորյալ սպանության, և մեղավորները ենթարկվել են մահապատժի: Պատմիչի տեղեկություններից իմանում ենք, որ պահպանված է եղել նաև կնոջ գույքային իրավունքը: Ահա այդպես է պետությունը երաշխիք կանգնել հայ կնոջ նկատմամբ: Ավելացնենք նաև, որ **ԺԱ կանոնը** թերի է այն իմաստով, որ որևէ բան չի ասում կնոջ անհավատարմության, իր ամուսնուց կնոջ փախուստի և ուրիշի հետ ամուսնանալու մասին:

ԺԱ կանոնը նախատեսված հաջորդ հանցակազմը վերաբերում է «անօրեն ու մարդասպան» անձանց: Դժվար չէ կռահել, որ «անօրեն» բառն իր սովորական իմաստով առանձին հանցակազմ չի առաջացնում: Կանոնի մեջ այն հասցեագրված է «մարդասպան» բառին և բացահայտում է վերջինիս: Յայց լեզվում «անօրեն» բառը օգտագործվում է մի քանի իմաստներով՝ 1. կրոնական, 2. անհավատ, անգութ, անխիղճ, 3 ոչ-օրինական, ապօրինի, օրենքի դեմ³⁸:

Համադրելով **Ը և ԺԱ կանոնների** հանցակազմերի սուբյեկտներին իրար հետ, մեր համոզմամբ՝ Կանոնական Սահմանադրության օրենսդիրներն «անօրեն ու մարդասպան» եզրույթի տակ նկատի են ունեցել ոչ քրիստոնյա, այլադավան մարդասպաններին: Կաչագան թագավորն այս նորմը բարձրացրել էր օրենքի աստիճանի, քանի որ երկրում արմատավորված տարբեր տեսակի «պիղօ» աղանդները, որոնց նպատակը մարդագոհությունն էր, երկրի և ժողովրդի համար պատուհաս էին դարձել, իսկ նրա կողմից նախկինում ձեռնարկված միջոցներն էական արդյունքներ չին տվել:

Միայն հետագա դարերում **Ը և ԺԱ կանոններում** նախատեսված սպանության հանցակազմերը հստակեցվեցին: Օրինակ, Մ.Գոշը տարբերակում էր այլադավանի կողմից քրիստոնյային և քրիստոնյայի կողմից քրիստոնյայի կամ այլադավանի սպանությունը: Այլադավանը քրիստոնյային դիտավորյալ սպանելու դեպքում ենթարկվում էր մահապատժի, իսկ քրիստոնյան այլադավանին սպանելու դեպքում՝ մեղավորից գանձվում էր արյան գինը՝ 122 դահեկան: Քրիստոնյան քրիստոնյային սպանելու դեպքում պատժվում էր արյան գնով, այսինքն՝ արյան գնի հատուցմանք, տուգանքով և մարմնական պատիժներով³⁹:

Անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով **Ը և ԺԱ կանոնները** բացահայտում են, որ, եթե հանցագործության սուբյեկտը պատկանել է քրիստոնյա հավատին,

ապա գործն ընդդատյա է եղել եպիսկոպոսական դատարանին, այլահավատների պարագայում՝ թագավորական դատարանին:

Մարդկության պատմությունը կախարդության բազմաթիվ ձևեր և տարատեսակներ գիտի՝ հմայություն, վիուկություն, թուչություն, թուղթ ու գիր, գիր ու բժժանք և այլն:

Դին օրենքներով՝ կախարդությամբ գրադադարները ենթարկվել են ամենախիստ պատիժների: Աստվածաշունչն ազդարարում է, որ «Կախարդը չթողես ապրէ», «Այր կամ կնիկ, որ վիուկ կամ ինացող լինի, անպատճառ պիտի մեռնցուի, քարերով նորանց քարկոծեն, նորանց արւնը իրանց վերեա լինի»⁴⁰:

Շահապիվանի կանոնները ևս խստագույն պատիժներ են սահմանել կախարդողների, գուշակների, հարցուկների և դյուքողների նկատմանք: Եվ այնքան խիստ է եղել քրիստոնյա եկեղեցու ընդդիմադիրների հետ տարվող պայքարը, որ չգոջացող կախարդողները ենթարկվել են ոչ քրիստոնեական պատժածի՝ քարկոծման:

Վաչագան թագավորը գահ բարձրանալուն պես թողեց մոգությունը և վերստին վերադարձավ քրիստոնեական հավատին: Սակայն հայ հոգենոր իշխանությունը չափազանց թուլացել էր Արցախ-Ուտիքյան հայաշխարհում, ուստի թագավորը խիստ պատժում և տուգանում էր թոլոր նրանց, ովքեր ատրուշաններ էին կառուցում, կախարդությամբ գրադադար: Նա դիմում է ծայրահեղ խստությունների. կախարդները, դյուքողները և քրները ծանր տանջանքներով, գանահարությամբ, կապանքներով պալատ էին հասցվում, և նրանց նկատմամբ ծանր պատիժներ էին սահմանվում: Ոմանց աքսորում էին, ոմանց ստրկացնում, իսկ շատերին էլ խրատելով՝ քրիստոնյա դարձնում⁴¹:

Թագավորի կողմից կախարդությամբ գրադադարների դեմ ձեռնարկված միջոցները բարձրագույն օրենքով կարգավորելը և մեղավորների նկատմամբ մահապատիժ կիրառելը ևս վկայում է, թե Վաչագան արքան որքան հաստատական էր երկրի քաղաքական իշխանության ամրապնդման և նոր արմատավորվող Յայ առաքելական եկեղեցու հավատն ամուր հիմքերի վրա դնելու համար:

Եթե իին հեթանոս (հունարեն՝ էրնոս-ժողովուրդ) հայերի համար սովորական երևոյթ էր հանգուցյալի մահից հետո լացուկոծը, մազերը փետելը, երեսը չանգործելը, սուգ ու շիվանը, ինքնազոհությունը և այլն, ապա քրիստոնեությունը պետական կրոն հոչակվելուց հետո եկեղեցին անխնա պայքար էր մղում նման հեթանոսական սովորութերի և հավատալիքների դեմ: Սակայն դարերի ընթացքում հայ ժողովոյի կյանքում արմատավորված նախկին կյանքի դոգմաները շատ դժվար էր ջարդուիշուր անել: Ուստի նախկին կրոնի նկատմամբ նորի հաղթահարման մի շարք հարցեր բարձրացվեցին օրենքի աստիճանի

և համարվեցին քրեորեն պատժելի արարքներ: Ահա հենց դրան է հասցեագրված **ԺԲ կանոնը**. «Նրանց, որոնք լացուկորում են տան գիշավորին, գուսանների հետ պետք է կապել, տանել թագավորի դուռը և պատժել, իսկ հարազատները չպետք է համարձակվեն նրանց հետևից լաց լինել»: Այս կանոնով նախատեսված հանցակազմը ևս ընդդատյա է եղել թագավորական դատարանին: Նման կարգի իրավախախտումները հայոց եկեղեցու նախկին կանոններով ընդդատյա են եղել եկեղեցական դատարանին:

Ինչպես ԺԲ, այնպես էլ նախորդ կանոններում հանցագործները թագավորի մոտ են տարվել կապկաված վիճակում և ամենայն հավանականությամբ, **ԺԱ և ԺԲ կանոնները** կիրառողները խախտողների նկատմամբ իրականացրել են մինչդատական վարույթ և «կապած վիճակում թագավորի մոտ տանելը» իրավախախտի նկատմամբ ընտրված խափանման միջոց է հանդիսացել:

ԺԳ կանոնը նույնպես ծառայել է կրակապաշտության ու հեթանոսության սովորութենաց արդատախիլ անելու և քրիստոնեության գաղափարախոսության հաղթարշավը դյուրացնելու համար. «Նրան, որ գեշ (լեշ) է ուտում, և նրան, որ քառասունքին միս է ուտում, կիրակի օրն աշխատում է ու եկեղեցի չի գնում, քահանան ժողովրդի հետ միացած պատժում է»: Աշտիշատի ժողովին վերագրվող կանոնները ևս դատապարտելի են համարել սատկած կենդանու միսն ուտելը և արյունը խմելը, չնայած դրանց համար հստակ պատիժներ չեն սահմանել: **ԺԳ կանոնն** ուշագրավ է նրանով, որ եկեղեցական դատարանի գործունեությանը մասնակից է եղել նաև ժողովուրդը: Քանի որ կանոնը գուտ կրոնաբարոյական է, կարելի է ենթադրել, որ մեղավորները պատժվել են Յայոց եկեղեցու կողմից սահմանված ներքին կանոններով:

Նույն նպատակն է հետապնդում նաև **ԺԴ կանոնը**, որի համաձայն՝ «Նա, որ չորեցարքի կամ ուրբաթ աղոլիհացից առաջ միս է ուտում, մի շաբաթ պաս պետք է պահի, իսկ եթե մեկը գա ու քահանայի մոտ այդ մասին վկայություն տա, թե պասը չի պահել, գյուղի տանուտերը (գրաբարյան իրատարակություններում՝ «աւագն շինոյնկալցե») նրանից պետք է մի եզ առնի ու տա քահանային»: «Գյուղապետ», «շինականների դասապետ», «շենի ավագ», «գեղջավագ» և «տանուտեր» եզրույթները հայերենում հոնմանիշ բառեր են և միջնադարյան Յայաստանում նրանց վիա էր դրված գյուղացիներից, շինականներից հարկ հավաքելու գործառույթը: Դրա հետ մեկտեղ, մենք համամիտ ենք պրոֆ. Խ.Սամուելյանի այն եզրահանգմանը, որ քացի հարկ հավաքելուց, գյուղի ավագներն օժտված են եղել, թերևս, նաև դատական իշխանությամբ⁴²: Երևի թե այդ իմաստով էլ պետք է հասկանալ **ԺԴ կանոնի** մեջ արձանագրված տանուտերի՝ իրավախախտից մի եզ վերցնելու և քահանա-

յին տալու՝ դատական կատարածուի իմաստով գործառույթը:

Վերջին՝ **ԻՐ ԿԱՆՈՆԾ** հոչակում է, որ Սահմանադրության պայմանները թագավորի ներկայությամբ ընդունել են եականություններ, քահանաներ, ազնվականներ, և թվարկում է բոլոր այն աշխարհիկ անձանց անունները, ովքեր իրենց մատանիներով հաստատել են ընդունված փաստաթուղթը, իսկ գրությունն ավելի վավերական լինելու համար կնքվել է նաև Կաչագան թագավորի մատանիով:

Կնքանատանիները համարվել են թագավորների, իշխանների և բարձրաստիճան այլ անձանց իշխանության խորհրդանիշ: Դրանցով հաստատվել, կնքվել են կարևորագույն փաստաթորեր:

Ուշագրավ է, որ Կանոնական Սահմանադրության նախարանում թվարկված հոգևոր և աշխարհիկ դասի ներկայացուցիչների ստորագրությունների վերաբերյալ **ԻՐ ԿԱՆՈՆԾ** որևէ խոսք չկա: Սահմանադրության տակ առկա է եղել Գարդմանա տեր քաջ Վարդանի մատանու կնիքը, որը, ինչպես Կաղանկատվացին նշում է իր աշխատության մեկ այլ գլխում, նախագահել է Աղվենի ժողովին⁴³:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ մեզ իրավունք ենք վերապահում անելու հետևյալ եզրակացությունները.

ա) ինչպես յուրաքանչյուր իրավական ակտ, այնպես էլ Աղվենի ժողովում հաստատված Կաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունն իր դարաշրջանի ծնունդն է, իր վրա կրում է այդ դարաշրջանի իրավագիտակցության կնիքը և ժամանակից բխող խոշոր պատճառավական փաստաթուղթ է հանդիսանում, որը վաղ ավատատիրության դարաշրջանում (մ.թ. V-IX դդ) կարգավորել է Արցախ-Ռուսիայն հայաշխարհի հասարակական հարաբերությունները,

բ) իհն հայ իրավունքի գրավոր այս խոշոր հուշարձանի համար իրավունքի աղբյուրներ են հանդիսացել Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովների կանոնները՝ հաշվի առնելով նաև տեղական ազգային իշխանության հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքի առանձնահատկությունները:

Կանոնական Սահմանադրությունը համարելով Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական կանոնների հետ՝ Մ.Ռովհաննիսյանը իհմնավորված կերպով եզրահանգել է, որ «Աղվենի ժողովի որոշումների հիմքում դրված է Աշտիշատի կանոնական որոշումների ոգին, նրանց հեռացնելով այն ամենը, ինչ չի համապատասխանում ժամանակի պահանջներին և դասային ուժերի նոր հարաբերությանը»: Միաժամանակ, Մ.Ռովհաննիսյանը համեմատելով Շահապիվանի և Աղվենի ժողովների կանոնների նմանությունը՝ արձանագրել է երկուսի մերձեցումը հետևյալ պայմաններում՝

«1. կանոնների թվով, Շահապիվանում՝ 20, Աղվենում՝ 21.

2. մասամբ՝ կարգավորման առարկայով։
3. մասամբ՝ իրավախսումների դեմ ներգործության միջոցով։
Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթի սերտ աղերսը Շահապիվանի կանոնների հետ մատնանշել է նաև Ն.Ակինյանը⁴⁴,

գ) սահմանադրական նորմերով սահմանված են եղել հետևյալ պատժի տեսակները՝ Եկեղեցական աստիճանից զրկելը, արտաքսելը, գույքը բռնագրավելը, տուգանքը, մահապատիժը։ Կաղանկատվացու երկից նկատելի է, որ հանցագործների նկատմամբ կիրառվել են նաև այլ պատիժներ՝ բանտարկություն կամ կալանք, աքսոր, մարմնական պատիժներ, ստրկացում և այլն։ Մի շարք կանոններ (*Ա, Ը, Ժ, Ժ՛*) սանկցիաներ չեն պարունակում և պատժի հարցում հղում են կատարում այլ «կանոնների» և մեկ անգամ պատիժ նախատեսում «ըստ օրենքների» (*Ը կանոնը*)։ Դա վկայում է, որ պատժի նշանակման հարցում երկրում գործել են նի շարք այլ իրավական ակտեր,

դ) ի տարրերություն Աշտիշատի և Շահապիվանի ժողովների, Աղվենի ժողովը Վաչագան թագավորի ամառանոցում հրավիրվելու փաստը ցույց է տալիս, որ Եկեղեցին գտնվել է թույլ, նվաստ վիճակում, և եթե նախորդ երկու ժողովներին հայոց թագավորները չեն մասնակցում, ապա Աղվենի ժողովը հրավիրվել է հենց թագավորի նախաձեռնությամբ և այն էլ՝ թագավորի մոտ, չնայած Կանոնական Սահմանադրության *Ժ*, *ԺԸ* և *Ժ՛* կանոնների, որ երկիրն ուներ մայր Եկեղեցի և գլխավոր Եկեղեցի։ Միևնույն ժամանակ, Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթերից հետո Յայոց Արևելից կողմանքի Եկեղեցին հայտնվում է անհամենատ բարձր և պատասխանատու դիրքում (*Ա, Ը, Ժ, Ժ՛, Ի կանոններ*)։

ե) եթե Աշտիշատի և Շահապիվանի Եկեղեցական կանոնները չեն արտահայտում հայոց թագավորների կամքը, ապա Աղվենի ժողովում ընդունված Կանոնական Սահմանադրությունն առաջին հերթին ենթադրում էր Վաչագան թագավորի կամքը։ Թերևս Վաչագան արքան գիտեր, որ Աշտիշատի ժողովի կանոնները երկար կյանք չունեցան, դրանք վերացվեցին Պապ թագավորի կողմից։ Ուստի Սահմանադրության ընդունման կապակցությամբ նրա ընտրած ճանապարհը մի խիզախ և համարձակ քայլ էր, որին կարող է ընդունակ լինել միայն պետական խոշոր մտածողության տեր մարդը։ Վաչագանի ձեռնարկած գործը անդրդրություն և հանգստություն էր թերում հասարակության բոլոր խավերի համար։ Սահմանադրության մի շարք կանոններ հասցեագրված են հենց թագավորին կամ թագավորական տոհմի անդամներին։ Այն հանգանքը, որ ժողովի պայմաններն «ավելի վավերական լինելու համար» վերջում կնքվել է նաև Վաչագան թագավորի մատանիով, վկայում է, որ Կանոնական Սահմանադրության կատարման

Երաշխավորը թագավորն է հանդիսացել: Եվ այնքան զոհ են եղել Սահմանադրությունն ընդունողմերը, որ վերջին կանոնում օրինանք են ուղղել թագավորին և թագուհուն, նրանց զավակին, ամբողջ երկրին: Օրինանքից անմասն չեն մնացել ժողովին մասնակցողները,

զ) ինչպես նշված է Կանոնական Սահմանադրության նախաբանում, Աղվենի ժողովի իրավիրման պատճառներից մեկն էլ «ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակառակություններն» են եղել: Այնինչ, ոչ Կաղանկատվացու երկից, ոչ էլ Կանոնական Սահմանադրությունից չի երևում, թե դրանք ինչ հակասություններ են եղել և ինչպես են կարգավորվել: Մեր կարծիքով, Աղվենի ժողովն անդրադարձել է նաև այդ հարցերին և համապատասխան կանոններ ընդունել: Ավաղ, դրանք թերևս Կաղանկատվացու երկի հետագա հոգևոր շարահարողների կողմից դուրս են թողնվել և այսօրվա դրությամբ պետք է կորած համարել: Մենք մեր կարծիքը հիմնավորում ենք նրանով, որ մեզ հասած սահմանադրական կանոններն առնչվում են այն հարցերին, որոնք տարածայնությունների գոնվ առկա են եղել աշխարհականների և հոգևոր դասի միջև: Եվ ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, տարածայնությունները հիմնականում լուծվել են եկեղեցու օգտին՝ կարգավորվել են երկրի տերերի կողմից հոգու բաժն և տասանորդ տալու կարգը, եկեղեցական ծիսակատարությունները խախտողների կողմից հոգևոր դասին տրվելիք հասույթների չափը, ժողովորդի կողմից քահանային տասանորդ տալու կարգը, հստակեցվել է աշխարհականների կողմից մեռելների հիշատակը հարգելու համար եկեղեցուն տրվող հասույթների չափը, ազնվականների և հոգևոր դասի միջև առկա վեճերը լուծվել են հօգուտ վերջինիս, տարածատվել է գործերի ընդդատությունը: Դեռ ավելին, եթե Կանոնական Սահմանադրությունից հստակ երևում է, թե աշխարհականներն ինչ տեսակի և չափերի հարկեր ու տուրքեր են տալիս հոգևոր դասին, ապա կանոնները ոչինչ չեն ասում հասարակ ժողովուրդ՝ ազնվական-թագավոր հարաբերությունների վերաբերյալ, քանի որ այդ մասին Կաղանկատվացին միայն կցկուուր տեղեկություններ է հայտնում, ուստի պատկերը կարելի է պարզել միայն դիմելով նույն ժամանակահատվածում Հայաստանում գործող հարկային քաղաքականությանը,

է) սահմանադրական կանոնները տեղեկություններ են տալիս երկրում գործող թագավորական դատարանի (**ԺԱ, ԺԲ, ԺԷ կանոնները**), եպիսկոպոսական (**Ե, ԺԵ, ԻԱ կանոնները**) և քահանայական դատարանների մասին (**ԺԳ, ԺԶ կանոնները**): Այլ դատարանների մասին պատմիչը որևէ տեղեկություն չի նշում: Սակայն դա չի նշանակում, որ Հայ Աղվանքում աշխարհական դատարաններ չեն եղել: Այդ հարցի պատասխանը մնում է գտնել միջնադարյան Հայաստանի դատական

կառուցվածքի օրինակով: Իրավագետ Խ.Թորոսյանը միջնադարյան Հայաստանում դատարանի կառուցվածքը պատկերել է հոգևոր դատարանին վերաբերող փաստերի հիման վրա և հենց այդ դատարանի օրինակով՝ դրանով միաժամանակ պարզելով նաև աշխարհական դատարանի կառուցվածքն իր հիմնական գծերով: Գիտնականը դա կատարել է՝ հիմնվելով գիտության մեջ վաղուց նկատված այն իրողության վրա, որ ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում, Եկեղեցական դատարանը կառուցված էր ըստ աշխարհական դատարանի օրինակի: Ըստ Խ.Թորոսյանի՝ զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի դատարանային համակարգը Հայաստանում ներկայանում է հետևյալ կերպ. պետական դատարաններ (քաջավորական, իշխանապետական, ստորին), ավատատիրական դատարաններ (դասային, տերունական), հոգևոր-Եկեղեցական դատարաններ (դատաժողով, կարողիկոսական, Եպիսկոպոսական, քահանայական)⁴⁵: Վաշագան թագավորի Կանոնական Սահմանադրության ճախարանից և Եզրափակիչ դրույթներից նկատելի է, որ Աղվենի ժողովին ճասնակցել են երկրի բոլոր ազնվականները և Արցախի ճահապետները: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ ազնվականները և ճահապետները Գարդմանի, Ուտիքի և Արցախի իշխանական, ավատատիրական տների ներկայացուցիչներն են, որոնցից յուրաքանչյուրի տարածքում գործել են աշխարհական դատարաններ: Եթե հաշվի առնենք, որ Հայոց Արևելից կողմանքում կաթողիկոսություն ստեղծվել է VI դարի 2-րդ կեսերին, ապա քննարկվող ժամանակաշրջանի համար կարողիկոսական դատարանի մասին որևէ խոսք լինել չի կարող: Այսքանից միայն կարելի է Եզրակացնել, որ Վաշագան թագավորի գահակալության տարիներին երկրում գործել են պետական դատարաններ /թագավորական և իշխանական/ ու հոգևոր Եկեղեցական դատարաններ /Եպիսկոպոսական և քահանայական/,

ը) դատելով կանոններից՝ պետական և Եկեղեցական դատարանների միջև գործերի ընդդատության հստակ տարանջատում չի եղել: Օրինակ, թագավորական դատարանին ընդդատյա են եղել ամուսնացնատանեկան և Եկեղեցական հարաբերություններին վերաբերող որոշ կարգախնբերի գործեր (**ԺԱ, ԺԲ և ԺՄ կանոնները**), իսկ Եկեղեցական դատարանը՝ կատարելով քրեական և քաղաքացիական իրավունքի ոլորտին վերաբերող գործողություններ, պատժի հարցում դեկավարվել է ոչ թե Եկեղեցական, այլ պետական օրենսդրությանը (**Ը կանոնը**): Բոլոր դեպքերում, պատժի առավելագույն չափը՝ մահապատիժը, արձակվել է թագավորական դատարանի կողմից: Իսկ դա նշանակում է, որ երկրի Գերագույն դատավորի լիազորությունները գտնվել են թագավորի ձեռքին: Ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով

(ԺԱ, ԺԲ կանոնները) նախաքննությունը և դատաքննությունն իրականացվել են թագավորին ենթակա հատուկ մարմնի կողմից: Որոշ բնույթի հանցագործությունների գործեռով գյուղի ավագները դատական կատարածուների գործառույթներ են կատարել նաև (**ԺԴ կանոնը**): Երից ճիշտ է Խ.Թորոսյանը, երբ նշում է, որ «Հայկական իրավունքի պատմության մեջ հոգևորականությունը եղել է դատական իրավասության միակ կրողն այն շրջաններում և այն ժամանակ, որտեղ և երբ ազգային մարմնավոր իշխանությունը չի եղել և որքանով այդպիսի իրավասություն արտոնվել է տիրողների կողմից⁴⁶»: Եկեղեցական դատարանը գրադպել է գերազանցապես եկեղեցու և հոգևորականության հետ կապված գործերով: Աշխարհական գործերի խիստ նեղ բնագավառն է ընդդատյա եղել եկեղեցական դատարանին, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնալութության իրավունքով և քաղաքացիական իրավունքի մի մասով,

թ) միտումնավոր և հիմնագուրկ են աղբեջանցի գիտնականների կողմից առաջ քաշված և տարվող այն բոլոր հակագիտական հայեցակարգերը, որտեղ Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունը դիտում են որպես աղվանական իրավունքի հուշարձան: Դա այն դեպքում, երբ աղվանագիտության մեջ համոզիչ և բարեխորդեն ապացուցված է, որ Կաղանկատվացին միջնադարյան հայ պատմիչ է եղել, հայոց լեզվով և հայոց խոսքով գրել է իր հայրենիքի՝ բացառապես հայերով բնակեցված Արցախ-Ռոտիքյան հայաշխարհի պատմությունը: Իսկ Կանոնական Սահմանադրությունն էլ վկայում է, որ Երկիրը զարգացել է հայկական օրենքներով: Վատ չէր լինի, եթե մեր հարևաններն իմանային, որ Արցախի ամենաբարեպաշտ թագավորը 510 թվականին, անհայտ հանգամանքներում, վախճանվելով Սյունիքի Բարկուշատ (Քաշունիք) գավառում, նրա մարմինը տեղափոխվել է Արցախ և ամփոփվել Մրավ սարի մի լեռնարազուկի վրա՝ թագավորի կողմից Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղից ոչ շատ հեռու անմատչելի լեռների մեջ կառուցված Եղիշե առաքյալ կամ Զրվշտիկ վանքի մոտ: Թագավորի գերեզմանին դրված է առանձին խնամքով պատրաստված և մաքուր տեսքով հղկված մի եռանկյունաձև տապանաքար, որի վրա մատուռ է կառուցված: Իսկ մատուռի խորանի ճակատակալ քարի վրա քանդակված է «Այս է հանգիստ Վաչական թագավորին, Աստուած ողորմի Հայրապետայ և ոյր (յուր) ծնողացն, ոչ շինեց գեկեղեցիս առաջնորդիւն տէր Սիմիննի ՉԼԵ. Էր»⁴⁷(1286թ.): Թեկուզ անցել են բազում դարեր, սակայն Արցախի Երախտապարտ ժողովուրդը միշտ էլ հիշել և մեծարել է իր թագավորին, նրա գերեզմանն ուխտագնացության վայր դարձրել: Եվ պատահական չէ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական պարգևներից մեկն էլ «Վաչագան Բարե-

պաշտ» մեղալն է, որով պարզեատրվում են մշակույթի, գրականության, հումանիտար գիտությունների, արվեստի, առողջապահության ասպարեզներում ունեցած ստեղծագործական նվաճումների, ինչպես նաև ԼՂՀ-ում նշանակալի բարեգործական գործունեության համար⁴⁸,

Ժ) հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասը կազմող Արցախ-Ուտիքյան հայաշխարհում հայկազուն Առանշահիկ տոհմի խոշոր Ծերկայացուցիչ Վաչագան արքայի իշխանությունն երբեմնի հզոր Մեծ Հայքի թագավորության մի բեկորն էր հանդիսանում, որի կենտրոնն Արցախամուր աշխարհն էր, իսկ արքայի կողմից ընդունված Կանոնական Սահմանադրությունը, որը հռչակեց օրենքի գերակայության գաղափարը, Երկար ժամանակ համերաշխություն, հաշտություն և անդրորություն բերեց Երկրին, որի պատճառով հայկական կիսանկախ պետական իշխանությունը շարունակվեց հետագա դարերում: Երկի հենց դա է նկատի առել միջնադարյան պատմիչ Մատթեոս Ուրիայեցին, երբ գրել է, որ հայոց աշխարհում կատարվող բացասական երևույթները՝ բախտի բերմամբ, ուժով ու կարողությամբ, արժանիների փոխարեն անարժանիներին առաջ քաշելը և այլն, «չկարողացավ մուտք գործել Աղվանից Երկիր, որ կոչվում էր Խորին Աշխարհ Հայոց... այդ Երկիրը մինչև այսօր մնաց անսասան՝ հայրապետով և թագավորով»⁴⁹:

Անուր և դարերի խորքերն են գնում Արցախի Հանրապետության պետականության կայացման պատմահրավական հիմքերը: Միսաված չենք լինի, եթե ասենք, որ այդ հիմքերից մեկն էլ հին հայ իրավունքի գրավոր հնագույն ժողովածուն՝ Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունն է:

**ՊԱՐՏԱՎԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՆ**

Զորավոր է այն ազգը, որը
գորավոր ընտանիք ունի:
Սուրացան

Որևէ կասկած լինել չի կարող, որ հին հայ իրավունքի գրավոր հնագույն ժողովածուի՝ Աղվենի ժողովում հաստատված Վաշագան Բարեպաշտի Կանոնական Սահմանադրության դրույթները, բագավորի նահվանից հետո (510թ), VI-VIII դարերում ճիշտ ու անշեղ կիրառվել են Հայոց Արևելից կողմանքում: Չնայած այդ մասին հայոց պատմագրության մեջ շատ քիչ տվյալներ կան, բայց եղածներն ել վկայում են, որ արցախյան հողում ծնված և հայերեն լեզվով խոսող իրավական մտքի այդ խոշոր հուշարձանը բազում տարիներ ապահովել է երկրի հարաբերական խաղաղությունը: Այսպես, «Պատմություն Աղվանից աշխարհի» երկի հեղինակ Մովսես Կաղանկատվացին, նկարագրելով VI-VII դարերում Հայադվանքում տեղի ունեցած իրադարձությունները, նշում է, որ «Պարտավ քաղաքում նստող մեծ իշխանի պալատում «արդար դատաստանը և անկաշառ իրավունքը» շնորհում էին բոլորին: Անդրադառնալով եկեղեցական ժողովների կողմից ընդունված փաստարդերի հիմնավորվածությանը և հոգևոր հայրերի գրագրություններին, պատմիչը մի քանի անգամ օգտագործում է «ըստ կանոնական սահմանադրության», «կանոնական սահմանադրությամբ», «սահմանադրության կանոնները» եզրույթները:¹

Դեռ ավելին, Աղվանից եպիսկոպոսների և իշխանների՝ Հայոց Եղիա կաթողիկոսին տված ուխտագրի տակ ստորագրողները (704թ.) մի առանձին հպարտությամբ շեշտել են, որ «Արդ՝ նրանք, որոնք Աստծո երկյուղով մեր սահմանադրության կանոնները կկատարեն, սուրբ երրորդության ու Աստծո բոլոր ուղղափառ ծառամերից կօրինվեն»: Իսկ Աղվանիք կաթողիկոս Տեր Սիմոնի (705-706թթ.) կողմից հաստատված կանոնների այն դրույթները, որոնք վերաբերում են ծառանգության հարցերին, լրիվությամբ կրում են Վաշագան արքայի Կանոնական Սահմանադրության դրոշմը:²

Դին հայ իրավունքի աղբյուրների թվում կարևոր տեղ է գրադեմուն կանոնական կամ եկեղեցական իրավունքը, որի տակ նկատի է ունեցվում առանձին հոգևոր անձանց կողմից հորինված կամ նրանց վերագրվող կանոնները, ինչպես նաև եկեղեցական ժողովներում ընդուն-

ված այն օրենքների կամ կանոնների համակցությունը, որը վերաբերում է ինչպես Եկեղեցու կազմակերպման կառուցվածքին, այնպես էլ արդարադատության իրականացման բնագավառներին:

Փաստորեն, կանոնական իրավունքը՝ սովորույթի տրամաբանական շարունակությունն է և ստեղծվում է նրա հենքի վրա, դրանով իսկ ստանալով օրենքի ուժ և պարտադիր կարգով կիրառում հասարակական կյանքում: Այդ տեսակետից հետաքրքրություն են ներկայացնուն 365թ. Աշտիշատի, 444թ. Շահապիվանի, 555թ. և 648թ. Դվինի, 768թ. Պարտավի, 1243թ. Սսի և 1270թ. Զագավանի Եկեղեցական ժողովների կանոնները: Ավելորդ չեն եղանակ, որ VIII դարում Պարտավ քաղաքում հայոց հայրապետների գլխավորությամբ տեղի են ունեցել Եկեղեցական 3 ժողովներ, որոնցից Բ ժողովում ընդունված կանոնները կարգավորել են նաև աշխարհիկ հարաբերություններ:

Նախքան Պարտավի Եկեղեցական Բ ժողովում ընդունված կանոններին անդրադառնալը՝ թռուցիկ ակնարկենք մի քաղաքի մասին, որը մի քանի հարյուրամյակ եղել է Արցախ-Ուտիքյան հայաշխարհի մայութաղաքը և Հայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցու Աղվանից թեմի կարողիկոսական աթոռանիստ կենտրոնը:

Մեծ Հայքի տասներկուերրորդ նահանգը՝ Ուտյաց աշխարհը, տարածված է եղել հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան լեռնային շրջաններում և Կուր գետի աջափնյա հարթավայրում՝ գրադեցնելով Աղստև գետից մինչև Կուրի և Երասիսի միախառնման վայրը՝ թիկունքում ունենալով Արցախամուր աշխարհը: Այդ նահանգի Ուտի-Առանձնակ գավառի ստորին մասում Տրտու (Թարթառ) գետի ձախ ափին, տարածված է եղել Հայոց Աղվանքի, այն է՝ Արցախ և Ուտիք նահանգների Պարտավ (արաբերեն և թուրքերեն՝ Բարդա) հինավոր մայրաքաղաքը, որի ընդարձակ ավերակները գտնվում են Արցախի Հանրապետության հյուսիս-արևելյան սահմանների գծից դեպի արևելք մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ ներկայիս Ադրբեյջանի Հանրապետության Բարդայի շրջանի Բարդա քարչական շրջկենտրոնի մոտակայքում: Հայկական աղբյուրների համաձայն՝ Պարտավ քաղաքը հիմնադրվել է 461-462թթ.՝ Հայոց Արևելից կողմանքի Վաչե քագավորի կողմից՝ պարսից Պերող արքայի հանձնարարությամբ: Սկզբնական շրջանում քաղաքը կրում էր Պերողապատ կամ Պերող Կավատ անունը: Կաղանկատվացին Պարտավն անվանում է «մայրաքաղաք», «մեծ քաղաք», «խոշոր քաղաք», «գերահոչակ քաղաք», իսկ պատմիչ Եղիշեն՝ «մեծ շահաստան»:³

Ծուրջ չորս դար քաղաքը եղել է զուտ հայկական՝ իր հայ բնակչությամբ, հայ հայրապետներով, հայ իշխաններով և միայն VIII դարում՝ արաբների կողմից նվաճվելուց հետո, քաղաքում արմատավորվել է

իսլամական տարրը: «Թագավորական ճանապարհների մասին» գրքում արաբ պատմիչ Ալ-Խսրակիրին նշում է, որ Պարտավի բնակիչները ծագումով հայեր են, և որ Պարտավից մինչև Ղվին ճանապարհն անցնում է հայերի հողերով⁴: Արաբների տիրապետության օրոք Պարտավը ծեռք էր բերել վարչական կենտրոնի համբավ և Ղվինից հետո համարվում էր Կովկասի 2-րդ մայրաքաղաքը:

Արցախում ծավալված ազգային ազատագրական շարժման շրջանում Պարտավը՝ հարակից տարածքով, դեռևս հայաբնակ էր, որի մասին վկայում է 1723թ. Պետրոս Մեծին հասցեագրված Ներսես կաթողիկոսի նամակը, որից նկատելի է, որ Արցախի ամուր լեռներում տեղակայված մի քանի հազար զորք ունեցող սղնախներից (զորանոց) մեկի զորավարը Եսային է, «որ է Պարտավու Երկրեն և Երկրորդն Սարգիսն Զարապերքոս Երկրեն, որ յառաջագոյն են ի ցեղաց իշխանաց»,... իսկ Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Զալաւյանը, նկարագրելով հոների արշավանքը դեպի Ղարաբաղ, Զարաբերդի և Բարդայի Երկրները համարում է «որպես մերոյս»⁵:

Պարտավ քաղաքի և նրա շրջակա գյուղերի հայ բնակչությունը տեղահանվեց ղարաբաղյան շարժման տարիներին:

Դայ հեքիաթագրության լավագույն ննուշներից մեկի՝ մեծանում գրող և մանկավարժ Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաքի հիմնական դեպքերը տեղի են ունենում հենց Պարտավ քաղաքում: ճիշտ է, հեքիաքը մնում է հեքիաք, բայց փաստ է, որ ներկայիս Բարդա քաղաքի եզրամասում գտնվող հորդաբուխ աղբյուրն ազերի հարևաններն Անահիտ բուլաղ (Անահիտի աղբյուր) են անվանուն: «Պարտավ քաղաքն ունեցել է քազմաքիվ եկեղեցիներ, վանքեր և տաճարներ, որոնցից նշանավոր են Եղել Սուլր Գրիգոր եկեղեցին, Սուլր Աստվածածին վանքը և Գեղազարդաստ տաճարը: Յին քաղաքից մնացած հետքերը տեսանելի են Եղել նաև ոչ հեռու անցյալում: Քաղաքի կանգուն եկեղեցիներից մեկն աղբբեջանցիները շատ հասարակ ձևով վերածել են նզկիրի՝ եկեղեցու գլխին կանգնեցնելով Երկու մինարեթ, որպեսզի տեսնողները չկարծեն թե այն հայի եկեղեցին է: Որքան էլ ջնջել են ներսի պատերի արձանագրությունները և սրբապատկերները, եկեղեցու դրսի պատերին հայերեն արձանագրություններ են հայտնաբերվել, իսկ մոտ 40 տարի առաջ հին քաղաքատեղիում կատարած պեղումների ընթացքում հայտնաբերված հայկական եկեղեցին աղբբեջանցիները ներկայացրել են որպես աղվանական:⁶

Աղվանից աշխարհի եկեղեցին միշտ էլ համարվել է Հայաստանյայց առաքելական սուլր եկեղեցու մի թւը, իսկ Աղվանից կաթողիկոսությունը, որը հիմնվել է 551 թվականին՝ ներառելով արևելյան Անդրկով-

կասի բոլոր թեմերը, միշտ էլ գտնվել է Հայոց Եկեղեցու ծոցում, եղել է հայալեզու, հայադապան և հայածես, ճանաչել է Հայոց Եկեղեցու գահերեցությունը և ի հոգևորս՝ Ենթակա նրան:

Սասանյան Պարսկաստանի կորօնանումից հետո (642թ.) արաբները նվաճեցին նաև Անդրկովկասի Երկրները: Շատ ցեղեր, այդ թվում անդրկուրյան Աղվանքի բնիկ ցեղերը, կուլ գնացին իսլամի վարդապետությանը: Նորաթուս կորոնի հաղթարշավը դիմագրավելու նպատակով՝ Բյուզանդիան նույնպես քայլեր էր կատարում քաղկեդոնությունը Հայաղվանքում տարածելու համար: Նույն նպատակն էր հետապնդում նաև հարևան Վրաստանը: Պետականության բացակայության պայմաններում Հայոց Եկեղեցին հնարավորինս պայքարում էր օտար ազդեցությունների դեմ, իր հավատացյալների մեջ խրախուսում ազգայինը, հայ լուսավորչական հավատող ծառայեցնելով ազգի ազատության և հարատևության հրամայականին: Այդ նպատակով 704թ. Պարտավ քաղաքում կայացավ հայ-աղվանական Եկեղեցական Ա ժողովը, որտեղ Աղվանից Եախսկոպոսներն ու իշխանները Հայոց Եղիա կաթողիկոսին երդմնաթուղթ են տվել Հայոց և Աղվանից միաբանությանը և ուխտին հավատարիմ մնալու մասին: Միոն Ա Բավոնեցին (767-775թք.), հայրապետական արոր բարձրանալուց հետո, ձեռնամուխ Եղիավ բարձիրող վիճակում գտնվող Եկեղեցական կանոններն ի մի բերելուն: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ արաբական լիի պատճառով Հայոց և Աղվանից Եկեղեցիներում առաջացել էին ծիսական և կենցաղային հակասությունների մի շարք խնդիրներ: Նման հարցերում պարզություն մտցնելու նպատակով գումարված ժողովը տեղի ունեցավ ոչ թե Հայոց կաթողիկոսի արռողջանահատում, այլ Հայոց Արևելից կողմանքի հոգևոր այրերի նստավայրում՝ Պարտավում: Պատմագրության մեջ Պարտավի Եկեղեցական Բ ժողովի գումարման հավանական տարեթիվ է համարվում 768 թվականը: Ժողովն ընդունել է 24 կանոններ, որոնց իմանական մասը վերաբերում է Եկեղեցական կարգուկանոնին, Եկեղեցականների իրավունքներին և պարտականություններին, հարկերը հավաքելուն, և հասուլըները տնօրինելուն և նմանատիպ այլ խնդիրներին, իսկ ժ (10), ժԱ (11), ժԳ (13) և ժԶ (16) կանոններ՝ անուսանաընտանեկան իրավունքի հարցերին:

Պարտավի Բ ժողովի կանոններն առաջսօր աշխարհաբար թարգմանված կամ առանձին գրքույկով հրատարակված չեն: Դրանք գրաբար լեզվով մտցված են «Կանոնագիրը Հայոց»-ի աշխատության Ա հատորում՝ «Կանոնք Միոնի Հայոց կաթողիկոսի Գլուխը ԻԳ» վերտառությամբ, իսկ գիտական հրատարակությունը՝ նույն աշխատության Բ հատորում:⁷ Պարտավի ժողովի կանոնները «Կանոնագիրը Հայոց»-ում դրված են Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունից

առաջ, որը ժամանակագրորեն սխալ պետք է համարել:

Կանոնախմբի նախադրությունում Սիոն կաթողիկոսը հետևյալ կերպ է բացատրում, թե ինչ շարժառիթներով է ժողովը գումարվել Պարտավում, այլ՝ ոչ թե Դվինում: «Ես, Սիոն, ողորմությամբ Աստծո Եպիսկոպոսապետ Հայոց, հիշելով Մեծն Պողոսի խոսքը, թե տարին մի անգամ ափսի ժողովել և քննել մեր գործերը, ես էլ մտածեցի ժողով անել, հաստատել սուրբ հայրերի ավանդած օրինադրությունները, իսկ թերին միացնել միաբան ժողովով: Քանի որ բոլոր Եպիսկոպոսները չկարողացան բռնակալ իշխանների խափաննան պատճառով (խոսքն արաբական ոստիկանների մասին է -Վ. Դ.) զալ մեզ մոտ, ուստի ուղարկեցին իրենց համաձայնությունը, իսկ ովքեր կարողացան գալ, սրանք են» (Նշվում է Շերկայացած Եպիսկոպոսների, իշխանների և նախարարների անունները): Այնուհետև Սիոն կաթողիկոսը բացատրում է, որ բարբարոսների աչքից հեռու մնալու պատճառով ժողովը գումարվեց Պարտավում, ուր ժողովին մասնակից եղան Աղվանից կաթողիկոս Դավիթը և Աղվանից աշխարհի տերերը (թվարկում է անունները):

Մենք հեռու ենք Պարտավի Բժողովի կանոնների մասին վերջնական խոսք ասելու մտադրությունից, ուստի սույն ուսումնասիրության սահմաններում կրավարարվենք միայն այն կանոնների քննարկմանք, որոնք իրավական բռնույթ են կրում՝ կարգավորելով անուսնաշնոտանեկան հարաբերությունները: Իսկ դրանք, ինչպես նշեցինք, չորսն են՝ Ժ, ԺԱ, ԺԳ և ԺԶ կանոնները:

Ժ (10) կանոնը քահանաներին պարտավորեցնում է, որ Երկրորդ անգամ ամուսնացողները (Երկակի պսակ) չշեղվեն ապաշխարության կարգից և նման համեմետներին ներկա գտնվելու դեպքում, քահանաները չափավոր լինեն խմիչքներ օգտագործելու հարցում, հակառակ դեպքում՝ կարգավոր կարգվեն («Երկրորդ ամուսնացելոցն մի՛ թողացուսցէ ի կարգէ ապաշխարութեան, ինքն պարկեշտաբար արցցէ, ապա եթէ ի գեղին արբեցութեան գտցի՝ լուծցի»): Այս կանոնի էռթյունը ճիշտ ըմբռնելու համար փորձենք պարզել, թե կանոնի մեջ բարձրացված հարցը նախկինում ինչպես է կարգավորվել և ինչ լուծումներ է ունեցել, քանի որ ամեն մի պատմական դարաշրջանում ամուսնաշնոտանեկան հարաբերությունները ենթարկվել են լուրջ փոփոխությունների և կրել են տվյալ դարաշրջանի հրավունքի բնորոշ գծերը:

Մինչև քրիստոնեության ընդունումը, հեթանոս հայերի մեջ ևս տարածված է եղել բազմակնությունը (հունարեն՝ պոլիգամիա), որի դեպքում տղամարդուն թույլատրվել է օրինավոր կնոջ կողքին նաև այլ կանայք պահելը: Վերջիններս համարվել են հարձեր և օրինավոր կնոջ աստիճան չեն ունեցել: Նրանցից ծագած սերունդը պատկանում էր օջախին, սա-

կայն ընտանիքի անդամ չէր, և չէր կարող գույք ժառանգել: Բազմակնությունը շարունակվել է նաև քրիստոնեության ընդունումից հետո: Մեր պատմիչները բավարար տվյալներ են թողել ընտանեկան կենցաղի, մասնավորապես, ամուսնության ձևի, ամուսինների գույքային իրավունքների և ամուսնալուծության հարցերի վերաբերյալ: Փակստոս Բյուզանդո, նկարագրելով հայոց աշխարհի կարողիկոս Ներսեսի կատարած գործերը, նշում է, որ նա «խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, որ ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խարճակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և նրանց նմաններից»: Այլ է Բյուզանդի վերաբերմունքն Արշակ 2-րդ թագավորի նկատմամբ, ով ոտնահարում էր կարողիկոսի բարի գործերը և նորակառույց Արշակավանդ քաղաքը բնակեցնելու նպատակով թույլ էր տալիս, որ տղամարդիկ (կանայք) թողնեն իրենց ամուսիններին: «Շատ տղամարդիկ իրենց կանանց թողնում էին և ուրիշների կանանց առնելով այնտեղ էին ընկնում»: Այսքանով հանդերձ, Բյուզանդը չի պարսավում Արշակին երկկնության (հունարեն թիգամիհա) համար: Դայտմի է, որ Արշակն իրեն կին էր առել սպանված եղբորորդու՝ Գնելի կնոջը՝ Փառանձեմին: Սակայն դա չէր խանգարում թագավորին Շունաց երկրից երկրորդ կին առնել, որի անունը Օլիմպիա էր: Արշակ 2-րդից հետ չէր մնում նրա որդին՝ Պապ թագավորը, որի օրոք «ամեն մարդ թագավորից (Պապից) իրաման ստացավ՝ համարձակորեն թողնել իրենց ամուսին կանանց. կար նարդ, ով տասը կին էր պահում և, առհասարակ, բոլորն անօրենության մեջ ընկան»⁸:

Չնայած դանդաղ, բայց իին բարքերը տեղի էին տալիս նորին՝ ամուսնություններն իրականացնելով հարսնեկան արարողակարգով և եկեղեցական պսակի օրինությամբ, իսկ եկեղեցական պսակը հայ եկեղեցու 7 խորհուրդներից է, որը Սուլք հոգու շնորհն է բախչում նորապսակներին: Եկեղեցական արարողությունն էլ կոչվում է պսակ, քանի որ արարողության ժամանակ փեսայի և հարսի գլխին թագ կամ պսակ է դրվում: Եվ եթե եկեղեցական պսակը, որպես ամուսնության օրինական ձև, Բյուզանդիան ճանաչեց IX դարի վերջերին, ապա Զայաստանում այն առաջին անգամ կարգավորվել է V դարում՝ Շահապիվանի ժողովի կանոններով: Եկեղեցական պսակի կանոնները հետագայում շատ հաճախ փոխվել են՝ մեղմացվել կամ, ընդհակառակը, խստացվել են: Սակայն, ընդհանուր առմամբ, դրանք մինչ օրս էլ մնացել են նույնը: Բացառություն են կազմում խորհրդային տարիները, որտեղ եկեղեցական պսակը չէր ընդունվում: Ներկայումս, չնայած եկեղեցական պսակը բարձրացված է օրենքի աստիճանի, բայց դրա իրացման կառուցակարգերը դեռևս մշակված չեն: Այսպես, Զայաստանի Զանրա-

պետության Ազգային ժողովի կողմից 2007 թվականի փետրվարի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածը հրչակում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգին համապատասխան, Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրազործված ամուսնություններն ու հրչակած ամուսնալուծությունները»: Հարկ է նշել, որ, այսօրվա դրությամբ, Հայաստանի Հանրապետության գործադրի իշխանության և ազգային Եկեղեցու միջև որևէ համաձայնագիր չի ստորագրվել:

Երկրորդ պսակի առնչությամբ՝ Շահապիվանի ժողովը թույլ էր տալիս Երկրորդ անգամ ամուսնանալ միայն Երկու դեպքում՝ կնոջ պոռնկության և մարմնական արատ ունենալու պարագայում: «Եթե մարդու շնաբարու է և ուրիշի կնոջ վրա աչք ունենալով՝ առանց պոռնկության կամ մարմնի արատի պատճառի արձակի կնոջը, որը որդիների տեր է, այն ժամանակ նա պարտավոր է ամեն բան կնոջ հետ հավասար կիսել՝ որդիները, տունը, հողը, ջուրը, կինն իրավունք կունենա նորից ամուսնանալ միայն այն պայմանով, որ արքունի գանձարանին բաժին մուտքի, իսկ մարդը 7 տարի ապաշխարի և Եկեղեցուն տուգանք տա, թե ազատ է՝ 300 դրամ, թե շինական է՝ ծեծվի և 100 դրամ տուգանք մուտքի: Եթե տարին չլրացած ուրիշ կին առնի այս կնաքող մարդը և պարզվի, որ այդ կնոջ պատճառով է մարդու առաջին կնոջն արձակել, Երկրորդ կնոջը բռնեն և ուրկանց տանեն մի տարի Երկանք աղալու, եթե ազատ է՝ ուրկանց չի գնա. 100 դրամ տուգանք տա Եկեղեցուն բորոտների համար»:⁹

Մինչև IX դարը Երկապսակների ամուսնությունը եղել է կամ Եկեղեցու օրինությամբ կամ առանց դրա՝ քաղաքացիական կարգով: Իսկական պսակից զանազանելու համար այն կատարվում էր ուռի ծառի օրինությամբ: Շահապիվանի է կանոնն այդ կապակցությամբ նշում է, որ առևանգություն կատարողները ապաշխարելուց և տուգանքներ վճարելուց հետո՝ պսակվելու համար ծնողների և աղջկա համաձայնությունը ստանալու դեպքում «պսակն օրինեն իբր Երկակի՝ ուռը խաչակնեն և գլխին դնեն, իսկ եթե կույս են մնացել՝ օրինավոր պսակ անեն» կամ «Եթե ամուսնությունից առաջ մեկը պոռնկություն արավ իր նշանածի կամ օտարի հետ, անարգության համար պետք է տուգանք տա ինչքան կպահանջեն աղջկա հայրն ու մայրը (ինչպես Մովսեսն է պատվիրել օրենքներում): Եթե կամենան նոր աղջկա կնության առնել, առաջ թող Երկուսով ապաշխարությամբ սրբվեն և ապա ամուսնան ոչ կույսի, այլ Երկակների պսակով՝ միայն խաչակնքվելով, իսկ

Եթե մեկը կուսան է, մյուսը պոռնկություն արած, կուսանի պսակն օրհնվի օրինավոր կերպով, իսկ մյուսներինը՝ իբրև երկակի, այսինքն խաչակնքել ուող և դնել գլխին՝ իբրև նշան թշնամու հաղթության»:¹⁰

Եթե մինչև Շահապիվանի կանոնները տարբերություն չէր դրվում կուսանի և ոչ կուսանի (երկակի) պսակների օրինության կարգերի միջև, ապա Շահապիվանի ժողովն օրինականացրեց ոչ կույսի (երկակի) պսակի օրինության կարգը: Դրա եռւթյունը կայանում է նրանում, որ մինչև պսակի օրինությունը, միմյանց կամ այլոց հետ հարաբերություն ունեցած կողմերից մեկի կամ երկուսի պսակը պիտի օրինվեր երկակի պսակի ծեսերով: Իսկ այդ ծեսերն իրենց ճոխությամբ («խաչակնքել ուող և դնել գլխին») զգալիորեն զիջում էին կուսանի պսակի օրինությանը:

Դվինի Դ ժողովի (648թ.) թիվ 7 կանոնով՝ երկակի պսակի նոր հիմք ավելացվեց՝ 7 տարի գերության մեջ գտնվելու կամ բնակության վայրն անհայտ լինելու հանգանանքը: Նման պայմաններում երկրորդ ամուսինն իրավունք ուներ ամուսնանալու միայն ապաշխարանք կրելով: Առանց հոգևոր իշխանության գիտության, 7 տարուց շուտ ամուսնացող պետք է բաժանվեր ամուսնուց, ենթարկվեր ծեծի և 7 տարվա ապաշխարանքի, իսկ նախկին ամուսնու մոտ չգնալու դեպքում՝ կարող էր երկրորդ ամուսնու հետ նորից միանալ:¹¹

Այսպիսով, վերլուծության ենթարկելով երկակի պսակի հարցում գործող նորմերը, կարող ենք ասել, որ Պարտավի Բ ժողովի ժ կանոնով դրանք, փաստորեն, վերաշարադրվեցին նոր իմաստով և բովանդակությամբ: Նախ, ի տարբերություն նախկինում գործած կանոնների, որոնցում երկակի պսակի համար գործում էին տարբեր պատիժներ՝ ծեծ, տուգանք, հարկադիր աշխատանքներ և ապաշխարանք՝ իր տեսակներով և ստույգ ժամկետներով, ապա Պարտավի ժողովի ժ կանոնի դեպքում այդ պատիժներից թողնվեց միայն ապաշխարանքը, այն էլ՝ առանց ստույգ ժամկետը նշելու: Իսկ դա նշանակում է, որ ապաշխարանքի տևողությունը և տեսակը թողնվում էին պատիժ նշանակողի հայեցողությանը: Դեռ ավելին, նախկին կանոնների համեմատ ժ կանոնն ավելի առաջ գնաց, թույլ տալով քահանաներին նաև նակացելու երկրորդ անգամ ամուսնացողների ուրախությանը, այն պայմանով, որ խմիչքի հարցում զսպվածություն դրսնորեն: Հակառակ դեպքում ժ կանոնը սպառնում էր կարգալույթ անելու պատժամիջոցով:

ԺԱ (11) կանոնը քահանաներին պատվիրում է քարոզելու, որպեսզի հայերը հեռու մնան հեթանոսների հետ կենակցելուց, կամ նրանց հետ ամուսնանալուց, քանի որ դա ամուսնություն չէ, այլ անօրեն և պիղծ խառնակություն «զի զի՞նչ կայ հաւատացելոյն ընդ անհաւատին, զի չար է,

քան զշնութիւն, եւ որ գարշագոյնն է, քան զշնութիւն՝ բնական յանցանք»:

Ինչպես արդեն նշել ենք, «հեթանոսություն» բառն առաջացել է հունարեն՝ էթնոս բարից: Յին հրեաները հեթանոս էին անվանում հրեական ծագում չունեցող մյուս բոլոր ժողովուրդներին: Այն բոլոր կրոնների հետևորդները, որոնց պաշտամունքի օբյեկտները հանդիսանում էին կենդանիները, բնության երևույթները, երկնային լուսատուները, կրակը և այլն, կոչվում էին հեթանոսներ:

Մինչև քրիստոնեության ընդունումը, հայերը նույնպես հեթանոս են եղել: Նոր կրոնի տարածումը երկարատև և անողոք պայքարի ճանապարհ է եղել, որի գաղափարախոսության ուղղություններից մեկն էլ հեթանոսների հետ պսակադրության արգելքն է հանդիսացել: Քրիստոնեության հաղթարշավի պայմաններում, Հայոց եկեղեցին պսակադրության օրինականության պայմաններից մեկն էլ դավանակցությունն է համարել: Հեթանոսի հետ ամուսնանալու արգելքն առաջին անգամ արձանագրվեց Ներսես Սեծին վերագրվող կանոններում, որոնցում հեթանոսի հետ մտերմանալը կամ նրա հետ ամուսնանալը պատժելի արարքներ էին համարվում, որոնց համար սահմանված էին ծանր ապաշխարհանքներ: Բացի Ներսես հայրապետին վերագրվող կանոններից, Հայոց եկեղեցու կողմից մինչև Պարտավի ժողովի հրավիրումը, հեթանոսի հետ ամուսնանալն արգելելու մասին այլ նորմեր չեն սահմանվել:

Կրաքական տիրապետության պայմաններում հայ քաղաքական վերնախավի մի մասը քշվել էր գերության, մի մասը խարեւությանը ողջակիզվել և սահմանական և խրամ քաղաքների եկեղեցիներում, իսկ որոշ նախարարներ և իշխաններ, պաշտոնների գայթակղությունից դրված և ծանր հարկային քաղաքականությունից խուսափելու համար, խնամիական կապեր էին հաստատել արաբների և մյուս այլազգիների հետ: Կաղանկատվացին, խոսելով VII դարում տարածված այդ երևույթների մասին, նշում է, որ «Այն ժամանակ Աղվանքի ազգավիշտ գլխավորներն անօրինակ խառնակությանը պղծվեցին...», «Սրանց անսանձ լրբությունը և ապօրինի ամուսնությունը երանելի հայրապետ Ուխտանեսը ամեծքով արգելեց: Դրանք, դարձի չգալով, իրենց գործած չարիքների մեջ ամենքն էլ բնաջնջվելով՝ վերացան երկրից»:¹²

ԺԱ կանոնը հեթանոսի հետ ամուսնանալն ավելի չար և վատքարագույն հանցանք է համարել քան շնությունը, իսկ վերջինս բնութագրվում է որպես ամուսիններից մեկի կամ մյուսի անհավատարմություն (դավաճանություն), այսինքն՝ ամուսնացած անձանց սեռական հարաբերությունը հակառակ սեռի այլ անձանց հետ: Հայոց եկեղեցին խիստ պատիժներ է սահմանել նման արարք կատարողների նկատմամբ: Թադեոս առաքյալին վերագրվող կանոնների ժը գլխի համաձայն՝ «Ծնու-

թյուն անողը թող երեք տարի ապաշխարի, պահը պահի, բացի շաբաթ, կիրակի և տերունական օրերից, չորրորդ տարում թող հաղորդվի», իբ գլուխը նշում է, որ «Եթե ամուսնացած կինը շնացավ, թող տասներկու տարի ապաշխարի և ապա թող հաղորդվի»:¹³

Շահապիվանի կանոններն ավելի են ստույգացրել պատժաչափերն ընտանեկան հավատարմությունը խախտողների՝ «շնացողների», նկատմամբ՝ ապաշխարանքից բացի նախատեսելով նաև ծեծ և տուգանք: Ակնհայտ է, որ ԺԱ կանոնը, հեթանոսի հետ ամուսնությունը շնությունից ավելի ծանր հանցանք համարելով, պատժատեսակի և պատժաչափի հարցերով պետք է ղեկավարվեր Շահապիվանի և Թադեոս առաքյալին վերագրող կանոնների սանկցիաներով:

Մենք կարծում ենք, որ պետականության բացակայության պայմաններում Հայոց եկեղեցին ազգային արժեքների պաշտպանության խնդիր էր դրել, ուստի Պարտավի ժողովի ԺԱ կանոնով սահմանված հեթանոսի հետ ամուսնության արգելքը, դավանականից բացի, նաև քաղաքական ենթատեսստ է ունեցել:

Առհասարակ, Հայոց եկեղեցին և հայ ժողովուրդը դավանակցությանը՝ իբրև պսակադրության անհրաժեշտ պայմանի, հարազատ են մնացել: Այդ առիթով պատմության մեջ մի շարք յուրահատուկ դեպքեր են արձանագրվել: 1848 թվականի օգոստոսին, Ղրիմի հայկական եկեղեցիներից մեկում, կատարվում էր աշխարհահոչակ ծովանկարիչ Յովհաննես Այվազովսկու և յութերականություն դավանող Զուլիա Գրեսի պսակադրության արարողությունը՝ այն պայմանով, որ նրանցից ծնված երեխաները կմկրտվեն հայկական սուրբ ավագանուն: Ծովանկարչի 4 դուստրերն ել հետագայում ստացան Հայոց եկեղեցու մկրտություն: Սակայն, 22 տարի անց, ընտանեկան խնդրով, Այվազովսկին վերստին դիմեց Հայոց եկեղեցում՝ այս անգամ Սուրբ Էջմիածնի սինոնից խնդրելով լուժարել իր պսակը շոտլանդուիի կնոջ հետ: Եվ միայն 1877-ին երկրորդ անգամ ամուսնանալու իրավունք ստացավ: Մեծանուն նկարիչը ամուսնացավ հայզգի Աննա Բուռնազյանի հետ՝ եկեղեցական պսակով՝ Սիմֆերոպոլի հայկական եկեղեցում:

Պարսավելի արարք է համարվել նաև դավանափոխության պայմաններում քրիստոնեական մեկ այլ եկեղեցուն կատարված պսակադրությունը: Հայ գրող և դրամատուրգ Ալ.Շիրվանզադեն իր լավագույն երկերից մեկում՝ «Քառոս» վեպում, մի հիշարժան դեպք է նկարագրել: Վեպի գլխավոր հերոսը՝ Սմբատ Ալիմյանը, օրինական կարգով ամուսնացած էր ռուսական եկեղեցում՝ ռուս կնոջ հետ: Սակայն հայրը՝ Մարկոս աղա Ալիմյանը, պայմանով կտակ էր կազմել, առ այն, որ Սմբատն իրավունք չուներ իր բաժին ժառանգությունը կտակել ոչ իր «օտարազ-

գի» կնոջը, և ոչ էլ իր զավակներին: Միայն կնոջից բաժանվելու և հայ աղջկա հետ ամուսնանալու դեպքում նոր կնոջից ծնված զավակները կիամարվեն օրինական ժառանգներ:

ԺԳ կանոնը երրորդ անգամ ամուսնությունը (Երրորդ պսակ) անվանում է խառնակություն, պղծագործ շնություն, անքավելի հանցանք: Եռամուսնության մեջ գտնվողներն ապաշխարությամբ իրենց մեղքերը շնչելու համար, նախ, պետք է բաժանվեին միջյանցից և նոր արժանի լինեին ապաշխարությանը, իսկ այդպիսի ամուսնությունների պատճառ հանդիսացած քահանան պետք է կարգալույթ դառնար և նզովվեր: Մինչև Պարտավի Բ ժողովի կանոնախմբի ընդունումը՝ Դայոց Եկեղեցու կանոններով եռամուսնության հարցը կարգավորված չի եղել, ուստի հետևել են օտար, մասնավորապես, Բարսեղ Կեսարացուն վերագրվող կանոններին, որոնց ուժով եռապսակները ենթարկվել են ապաշխարության՝ 5 տարի ժամկետով, որից հետո պսակը համարվել է օրինավոր: Եթե Բարսեղ Մեծի մոտ եռամուսնությունը համարվում է ոչ պսակ, այլ բազմակենություն կամ անառակություն, ապա մեր կողմից քննարկվող կանոնը խստացնում է հանցակազմի շեշտադրումները և պատժի նշանակման պայմանները: Կանոնը պատասխանատվություն է նախատեսում ոչ միայն զանցառուների, այլև պսակադրի, տվյալ դեպքում՝ քահանայի համար: Կանոնի սանկցիան սահմանում է պատժի 3 տեսակներ՝ ապաշխարանք, Եկեղեցական կարգից զրկում և նզովք, կամ բանադրանք:

Ապաշխարանքը՝ հոգևոր իշխանության կողմից զանցավորի գործած մեղքի համար Եկեղեցում հավատացյալների հետ աղոթելու իրավունքից զրկելն է: Նույնիսկ քրեորեն պատժելի արարք կատարողների նկատմամբ պատժի նշանակելուց հետո՝ նրանք Եկեղեցու կողմից ենթարկվել են ապաշխարանքի: Ապաշխարանքը նշանակվել է ժամանակավոր՝ մեկից քսան տարի ժամկետով և ցմահ, որի դեպքում ապաշխարվողը մեղքը զղալու դեպքում մահվան ժամին կարող էր հաղորդվել: Ժամանակավոր ապաշխարանքն ունեցել է իր տարատեսակները.

ա) լացողներ, որոնք պիտի կանգնեին միայն Եկեղեցու դռանը, դրսից լսեին ժամերգությունը, աղոթեին արցունքախառն աչքերով ու խնդրեին Եկեղեցի մտնող հավատացյալներին իրենց աղոթքում իիշել ապաշխարողի անունը: «Դարություն և Մանվել» ինքնակենսագրական վեպում Ռ.Աղայանը նշելով, որ իր պապը՝ Աղանց Վերդին, Բոլնիսի Դառնեթ Խաչեն գյուղն էր գաղթել Արցախի Սեյրի շեն գյուղից (Ներկայիս Ասկերանի շրջանի Խաչեն գյուղը), միաժամանակ հայտնում է, որ բազմաթիվ քաջագործություններից բացի՝ Վերդի պապն իգիրին անհարիր մի արարք էր կատարել՝ երիտասարդ ժամանակ սպամել է նի քնած մարդու, որի համար որպես ապաշխարություն Դաղերի Խաչեն Եկեղե-

ցու բակում մի փոշնի ծառի տակ մինչև կյանքի վերջն ապաշխարում էր՝ չհանարձակվելով մտնել եկեղեցի: Մեռնելիս ծերութին կտակ արավ, որ այդ ծառի տակ էլ թաղեն իրեն: Եվ կտակը կատարվեց,

բ) դրսի ունկնդիրներ, որոնք եկեղեցու գավթում կանգնած իրավունք ունեին լսել ժամերգությունը, աղոթել առանց եկեղեցու ներսը մտնելու և առանց լսելու պատարագի խորհուրդը,

գ) ներսի ունկնդիրներ, որոնք կանգնում էին եկեղեցու ամբիոնի հետևում, ծնկաչոք կամ երեսնիվայր աղոթելով՝ ապաշխարում էին իրենց մեղքը և դուրս գալիս՝ չարժանանալով պատարագի խորհրդին,

դ) հավատացյալների հետ միասին կանգնողներ, որոնք իրավունք ունեին եկեղեցում մնալ, պատարագին ներկա լինել և վերջում դուրս գալ, բայց հաղորդվելու և ընծայաբերելու իրավունք չունեին մինչև ժամկետի լրանալը:

Եկեղեցական կարգից զրկելու դեպքում (կարգալովյա անել) նախկին հոգևոր աշխատողը հեռացվում է հոգևոր իշխանությունից և դասվում աշխարականների շարքին:

Նզովիքի կամ բանադրանքի էռթյունը կայանում է նրանում, որ մեղավորը հեռացվում է Յայ առաքելական եկեղեցուց և զրկվում է ամեն տեսակի ծիսակատարություն ստանալու իրավունքից: Օրինակ, քահանան չի գնում նրա տունը, ընտանիքի անդամները չեն հաղորդվում, մեղքը չգողջալու դեպքում նզովիքի ենթարկվածի դիմում անթաղ է մնում կամ անփոփով է հասարակական գերեզմանոցից հեռու: Նզովողն իրավունք ունի նզովյալից մեղքը վերցնել: ¹⁴

ԺԶ (16) կանոնը վերստին դատապարտելի երևոյթ է համարում նախկինում արգելված մերձամուսնությունը և կանխարգելիչ կարգեր սահմանում. «Առաջներում մեր սուրբ հայութեն իրենց ժամանակներում արգելում էին ազատներին և անազատներին արյան մերձավորությունը: Այժմ մեզ նոտ, մանավանդ ազատների համար փոխված ենք տեսնում հայութի կանոնը, քանի որ միանում են իրենց մերձավորներին անկարգ անուսնությամբ: Այսուհետև մինչև չորրորդ սերունդը չափուի համարձակվեն անուսնացնել, ապա թե ոչ, կնօղվվեն մեր կողմից, և իրենք պատասխան կտան Աստծուն՝ համապատասխան նրա դատաստանի մեջությանը»:

Մերձամուսնության այլանդակ սովորություն տակավին արգելված էր Յամնուրաբիի օրենսգրքում և Մովսիսական օրենքներում: Ըստ Մովսես մարգարեի Ղևտացոց գրքի՝ չէր թույլատրվում հարաբերություն ունենալ մերձավոր հարազատների՝ նոր, քորչ, աղջկա, հորաքրոջ, մորաքրոջ, հարսի, թռան և այլոց հետ: Մովսիսական օրենքներում մերձամուսնության արգելքն ազգակցական կապերով հասցված էր մինչև 4-րդ

աստիճան, իսկ խնամիական կապերով՝ ներառյալ 2-րդ աստիճան:¹⁵

Գաղտնիք չէ, որ հեթանոս հայերին և բնորոշ է եղել մերձամուսնության սովորույթը: Քրիստոնեության հաստատման պայմաններում Հայոց եկեղեցու կողմից անողոք պայքար էր մղվում այնպիսի խորք երևույթների դեմ, ինչպիսիք են հարծությունը, բազմականությունը, բազմամայրությունը, մերձավոր ազգականների և բարեկամների, խորք մոր կամ հոր կնոջ, քրոջ, հորաքրոջ, մորաքրոջ, եղբոր և քրոջ, դստեր, երկու քույրերի, եղբոր այրիհացած հարսի հետ ամուսնանալը և այլն: Սակայն պայքարը դժվարանում էր նրանով, որ Արշակունյաց թագավորության կործանումից հետո Սասամյան Պարսկաստանն ամեն ինչ գործադրում էր հայերին պարսկական կրոնին՝ մազդեականությանը (կրակապաշտություն) հաղորդակից դարձնելու համար: Այդ է մեզ հուշում պատմիչ Եղիշեն, ով «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» գրքում նեցրերում է հայերին ուղղված պարսից արքունիքի հրամանը՝ հավատափոխության մասին: «Պետք է կարճվի և արգելվի սուրբ ամուսնության օրենքը, որ ունեին նախնիներից սուրբ քրիստոնեության համաձայն, մեկ կնոջ փոխարեն թող շատ կանայք ունենան, որպեսզի հայ ազգն աճի, բազմանա: Աղջիկներն ամուսնանան իրենց հայրերի հետ, և քույրերը՝ եղբայրների հետ, մայրերը չխորշեն իրենց որդիներից, այլև թռոները մտնեն իրենց պապերի անկողինը»:¹⁶

Պարսից արքունիքի հրամանը ցույց է տալիս, որ V դարի կեսերին Հայաստանում և Հայաղվանքում հաղթանակել էր միակնության գաղափարը, իսկ միակնությունը (հումարեն՝ մոնոգամիա) ամուսնության և ընտանիքի պատմական ձև է, որի դեպքում հակադիր սեռերի երկու ներկայացուցիչներ գտնվում են ամուսնական միության մեջ: Միևնույն ժամանակ, մերձամուսնությունը դեռևս շարունակվում էր, չնայած այն արգելված էր ինչպես Աշտիշատի և Շահապիվանի ժողովների կանոններով, այնաև էլ կաչագան արքայի Կանոնական Սահմանադրությամբ: Եթե Աշտիշատի ժողովի կանոնները մերձամուսնության աստիճանների տարրերակում չեն սահմանում, Շահապիվանինը արգելում էր մինչև 4-րդ պորտի ամուսնությունը, իսկ կաչագանի Կանոնական Սահմանադրությամբ՝ մինչև 3-րդ պորտը, ապա Պարտավի ժողովի ժամանը նորից վերադարձավ Շահապիվանի ժողովի կանոններին: Կանոնը միևնույն ժամանակ հատուկ կերպով շեշտում է, որ մերձամուսնության արգելքը խախտվել է «մանավանդ ազատների (ազնվականների) համար»:

Մերձամուսնությունը Կաղանկատվացին անվանում է «պոռնկություն», ի վերուստ տրված պատիժ: Ահա այդ հարցի կապակցությամբ պատմիչի աշխատությունից մեջ մի հետաքրքիր հատված:

«Սիմոնից հետո Աղվանքի հայրապետական աթոռն է նստում երջանիկ Միքայելը և ապրում է երեսունհինգ տարի: Նրա օրոք Աղվանքի հշխան-ները ամուսնանում էին իրենց արյունակիցների հետ. այսպես՝ Վախ-թանգի որդի Վարազմանի թոռ Վարազոն իր թռոնակից Վարդանուհուն է առնում: Տեր Միքայելն արգելում է նրան, ասելով, թե մի՛ հանդգնիր առնել, որովհետև թռոնակիցներ եք: Իսկ նա, կորստյան միտք հյանա-լով, գրում է վրաց կաթողիկոս Թալիլեհն, որ վերջինս օրինի իր անօ-րինական ամուսնությունը: Իսկ այն չարափառ մարդն այսպես է առա-ջարկում. «Եթե դուք ընդունում եք իմ դավանանքը, օրինված եք, իսկ եթե մնում եք աղվանից ավանդություններին հավատարիմ, ձեր գործն է»: Այդ ժամանակ Աղվանքի կաթողիկոս Միքայելն իրեն ենթակա եկե-ղեցու ուխտի ժողով է անում և իր մոտ կանչում հրչակավոր Սոլորնո-նին, ով Մաքենացիների սուրբ ուխտի առաջնորդն էր, իսկ այդ ուխտն իր ժամանակին Յայաստանի պարօնքն էր: Եվ նրանց բոլորին հավա-քեցին Շամքորի Բերդ վաճքում, ովքեր միաբան ժողովով նզովեցին Վարազոյի տունը: Միևնույն ժամին արաբները հասան և մոր գրկում սրով փողոտեցին նրա մի որորուն, իսկ մյուս որորուն ձին տարավ, սպա-նեց»:¹⁷ Վերջին փաստը և պատմիչի կողմից վկայակոչված՝ մարդկանց կյանքից գրկելու մի շարք այլ տվյալներ, բերում են մեզ այն համոզ-ման, որ արաբական տիրապետության պայմաններում երկրի պատժիչ քաղաքականության մի մասը գտնվել է արաբների ձեռքին:

Մերձամուսնության տեսակներից մեկն էլ եղբոր այրու հետ ամուս-նությունն է, որի վերապրուկները չեն վերացել նաև մեր օրերում: Գի-տության մեջ դա կոչվում է լկիրատ (տեղրամուսնություն): Լկիրատի սովորույթի համաձայն՝ այրի մնացած կինը պարտավոր էր ամուսնա-նալ միայն մեռած ամուսնու այս կամ այն հարազատներից մեկի հետ: Դա բացատրվում էր նրանով, որ ընտանիք բերված կինը համարվում էր այդ ընտանիքի սեփականությունը: Նա ոչ մի դեպքում տնից հեռա-նալու իրավունք չուներ և պարտավոր էր, թեկուզ և իր կանքին հակա-ռակ, կենակցել տան որևէ այլ տղամարդու հետ: Եթե լկիրատը երթև թույլատրելի է եղել, դարեր հետո դիտվեց որպես հանցավոր արաքք, չնայած իսպառ չվերացվեց: Երբ մահացավ մեծանուն կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարովի եղբայրը, նա ցանկացավ ամուսնանալ եղ-բոր կնոց հետ, սակայն Յայոց եկեղեցին մերժեց պսակի կատարումը եղբոր այրու հետ՝ պսակի շհասության պատճառով: Առկա էր պսակի կանոններով սահմանված խնամիական կապի արգելքը:

Յամաշխարհային կրոններից մեկը՝ իսլամը, նույնպես բացասական է վերաբերվում մերձամուսնության սովորությին և արգելում ամուսնու-թյուն կնքել մոր, քրոջ, աղջկա, մորաքրոջ, հորաքրոջ, ստնտու մոր և

քրոջ հետ: Մերձամուսնությունն արգելող նորմեր են սահմանված նաև թալմուդի օրենսդրությամբ:

Խորհրդային Միության օրենսդրությունը ևս ամուսնությունը բացառող հանգամանք է համարել և չի թույլատրել ամուսնություն՝ ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցության մեջ գտնվող անձանց միջև, հարազատ և խորը եղբայրների ու քույրերի միջև:¹⁸ ԼՂՀ և ՀՀ ներկայումս գործող ընտանեկան օրենսգրքերն ամուսնացողների մերձավոր ազգակցական կապն ավելի են ընդարձակել և արգելել ամուսնություն կնքել՝ մերձավոր ազգականների (ուղիղ վերընթաց ու վայրընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թուների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների) միջև:¹⁹

Մերձամուսնությունը համարվում է արյունապիտություն և կենսաբանական առումով բերում է սերնդի սպառման: Ցանկացած երկրի հիմնական բնութագրիչներից մեկն էլ ժողովությունն է: Նաշվի առնելով, որ մերձամուսնության պատճառով շատ սերունդներ են անհետ վերացել, հանգչել, ուստի աշխարհի ժողովության կապական երկրները և ժամանակակից գիտությունը բացասարար են վերաբերվում հարազատների միջև ամուսնությանը: Ներկայումս ժառանգական հիվանդությունների թիվն անցնում է 300-ից: Ամուսնացող զույգերը նույն արյունն ունենալու դեպքում մեծացնում են ոչ լիարժեք սերունդ տալու հավանականությունը և դրանով իսկ անտեսում հասարակության մեջ ձևավորված բարոյակերիկական նորմերը:

Պարտավի եկեղեցական ժողովի հԳ (23) կանոնը, մեզ թվում է, ոչ թե ամուսնաբնտանեկան, այլ կենցաղային բնույթ է կրում, որի ուժով արգելվում էր դաշտանի մեջ գտնվողների պսակն օրինել. «Աղջիկ խասեալ առն, թէ ապարահի իցէ, մի՛ իշխեսցեն քահանայքն այնպիսւոյն պսակ դնել կամ զուգել ընդ առն յանուսնութիւն, մինչեւ սրբեսցի յապարահին եւ ապա ամուսնացի»:

Վերոնշյալ կանոնների վերլուծությունը մեզ թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

ա) արաբական տիրապետության պայմաններում (650-910թթ.) իւլամի գաղափարախոսությունը լրիվությամբ կլանեց Կուր գետի ձախափնյա ցեղերին և ժողովուրդներին, իսկ աջափնյա բնակիչները, որոնք հիմնականում հայեր էին, բոլոր միջոցներով պայքարեցին իրենց ինքնությունը պահպանելու համար: Դաժան պայմաններում պայքարը տարվում էր երեք ուղղությամբ՝ խազարական ցեղերի հեթանոսության,

բյուզանդական քաղկեդոնության և արաբական մահմեդականության դեմ: Առավել մեծ վլուանգը գալիս էր արաբների կողմից, քանի որ նրանք իրենց նվաճած երկրներում մահմեդական գաղութներ էին ստեղծում,

բ) Պարտավի Բ ժողովի կանոնախումբը միջնադարյան Հայաստանի պետության և իրավունքի պատմությունն ուսումնասիրողների համար խոշոր պատմագիտական նշանակություն ունեցող փաստաթուղթ է հանդիսանում: Չխորանալով պատմության մեջ՝ կարող ենք միայն ասել, որ արաբական տիրապետության պայմաններում նախկին աշխարհագրական, ընդհանրական «Աղվանք» տեղանվան տակ (արաբների մոտ՝ «Արան») հիմնականում նկատի էր առնվում Արցախ և Ուսիթք նահանգների բռնած տարածքը, իսկ «Աղվանից» անունը կրող Եկեղեցին ընդամենը Հայոց Եկեղեցու մի ճյուղն էր՝ ինքնավարության սկզբունքով գտնվելով նրա ծոցում: Բունիաթրովական դպրոցի ներկայացուցիչները Պարտավի Բ ժողովի կանոնների մեջ աղվանական լեզվի հետք չգտնելով, մի հակագիտական հիպոթեզ են առաջ քաշել, ըստ որի՝ փաստաթուղթն իրենց նախնիների՝ աղվանների հասարակականացարական մորթի արդյունքն է, բայց պատմական ճակատագրի առանձնահատուկ ուժով պահպանվել է միայն հայերեն բնօրինակը, իսկ աղվանականը՝ «Գրիգորյան Եկեղեցականների կողմից» ոչնչացվել է: Այդ կեղծարարությունը մեծ հաշվով ուղղված է հայ մշակույթը թալանելու և արցախցիներին Եկվոր ներկայացնելու համար,

գ) Հայոց Եկեղեցիների համար Պարտավի Բ ժողովը սահմանեց առաջին պաշտոնական կանոնը: Եվ եթե Յին և Նոր Կտակարանների կանոնական գրքերի ցանկերը համուիպում ենք տարբեր հեղինակների մոտ, ապա Բ ժողովի Վերջին՝ 24-րդ կանոնը (հոդվածը) հիշատակում է Յին Կտակարանի 37 գրքեր՝ իրեն կանոնական, իսկ Նոր Կտակարանի գրքերը չեն հիշատակվում: Ուշագրավ է, որ քրիստոնյա մյուս Եկեղեցիները Յին և Նոր Կտակարանների պաշտոնական կանոններ սահմանեցին IX դարում: Ուշագրավ է նաև այս, որ Բ ժողովի կանոնների Վերջին հոդվածը՝ Յին Կտակարանի Սիրաքի գիրքը, համարվելով չափազանց ուսանելի իմաստություն՝ որպես ընթերցանության նյութ շահեկան է համարվում հատկապես պատաճիների համար,

դ) Կանոնախմբի ամուսնաընտանեկան իրավունքին վերաբերվող նորմերն առաջին հերթին նպատակ են հետապնդել պետականության բացակայության պայմաններում պահպանել հայ էրնոսը, հայ ժողովրդի դիմագիծը կամ հայ ինքնության որակը, որի հիմքերի հիմքը հայ պահական ընտանիքն է հանդիսացել: Երից ճիշտ է Հայոց հայրապետ Խորինյան Հայորիկը (1882-1907թ.), երբ գրում է, որ ժողովուրդը, եթե լուսավորվում է, իր լույսն ընտանեկան ծրագից է, եթե միակամ է,

իր ոգին ու կապն ընտանիքն է, եթե հարստանում է՝ իր գանձարանն ու գանձապետն ընտանիքն է, եթե տունն ու սեղանը բարելից ու առատ է՝ արդյունաբեր անդաստանն ընտանիքն է,

Ե) արարական տիրապետության շրջանում Հայոց աշխարհի և Հայաղվանքի քաղաքացիական իրավունքի, առավելապես ամուսնաքննական հարաբերությունների դատարակական լծակը գտնվում էր Եկեղեցու ձեռքին: Այդ իմաստով Պարտավի Բ ժողովի կանոնախունքը հին հայ իրավունքի խոշոր գրավոր հուշարձան է համդիսանում, որի աղբյուրներն են համարվել Հին Կտակարանի կանոնական գրքերը, Աշտիշատի, Շահապիվանի, Ղվինի Եկեղեցական ժողովների կանոնները և Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունը, որոնք քաղաքական նոր իրադրության պայմաններում բարձացվել, վերասրբագրվել և նորովի մեկնաբանվել են: Հաշվի առնելով, որ պետականության բացակայության պայմաններում երկրի պատժից և հարկային քաղաքականության հիմնական մասը գտնվել է արարների ձեռքին, ուստի, բավարար ապացույցների բացակայության պատճառով, աշխարհական դատարանների մասին ձեռնպահ ենք մնում որևէ խոսք ասելուց: Միևնույն ժամանակ, կանոնների ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաղվանքում գործել է հոգևոր Եկեղեցական դատարանների քառաստիճան համակարգ, որի բարձրագույն ասյանը կաթողիկոսական դատարանն է Եղել: Դա հիմնավորվում է նրանով, որ արդեն VI դարի 2-րդ կեսին Հայոց Արևելից կողմանքում ստեղծվել էր կաթողիկոսություն, և ժողովին մասնակցում էր նաև Աղվանքի Դավիթ կաթողիկոսը, և որ կանոնախմբի մի շարք նորմեր վերաբերում են եպիսկոպոսների, քորեպիսկոպոսների, մի մասն էլ քահանաների և երեցների իրավունքներին ու պարտականություններին,

զ) թեկուզ հայ իշխանական տների մի մասը բնաջնջվել էր արարների կողմից, բայց երկրի ազատության և անկախության գաղափարը դեռ չէր խանրել հայ քաղաքական վերնախավի մեջ: Հենց միայն այն հանգամանքը, որ բացի հոգևոր այրերից, Պարտավի ժողովին մասնակցել են նաև Հայաստանի նախարարական խոշոր տների ներկայացուցիչներ՝ Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց և այլ պատվական ազատներ, դա պատահականություն չենք համարում, այլ գտնում ենք, որ երկրի հոգևոր և աշխարհիկ այրերը համաձայնեցված քայլեր են կատարել հայոց լեզուն և մշակույթը պահպանելու, երկրի ժողովրդագրական անվտանգության առաջ ծառացած խնդիրները գոնե կանոնական իրավունքի նորմերի միջոցով դիմագրավելու համար: Միայն Բագրատունյաց տոհմից Սահակ և Սմբատ Բագրատունիների մասնակցությունը վկայում է, որ իրենց նապատակներին հասնելու համար նրանք որքան կարևոր նշանակություն

էին տալիս Արցախ-Ռւտիքյան հայաշխարհին: Իսկ «Բագրատունիները, որ ձեռքերն անմիջապես չեն երկարում դեպի սուրը, այլ դնում են ճակատին ու խորհում»²⁰ շնորհիվ IX դարի 2-րդ կեսերին Մուշում, Տարոնում, Վասպուրականում, Արցախում և այլ վայրերում ծագած հակապարական ապատամբությունների, որոնք փոխեցին ուժերի հարաբերակցությունը հօգուտ հայերի, կարողացան վերականգնել հայոց պետականությունը (885-1045թթ.): Միայն Արցախի հարավային հատվածում Առանշահիկ իշխան Եսայի Աբու-Մուսեն 28 անգամ չափվեց ամբողջ Անդրկովկասը իրի մատնած արաք զորավար Բուրայի բանակների հետ: Զնայած վերջում խորանամկությունը հաղթեց քաջությանը և հերոսը քշվեց տաժանակրության, բայց պայքարը շարունակեց քաջ իշխանի քաջ բոռը՝ Գագիկը, որը Բագրատունիների գերագահության ներքո վերականգնեց անկախությունն Արցախի հարավային մասում, իսկ «Արևելից մեծ իշխան Յամանը» կամ Յամամ թագավորը՝ Արցախի կենտրոնական և հյուսիսային շրջաններում: Վերջինիս գերեզմանը գտնվում է Արցախի Ավետարանոց գյուղի Գայանեի գերեզմանոցում:²¹ Եթե մեր հարևանների ձեռքը հասու չի եղել Յամամ թագավորի տապանաքարին, ապա նրանք շուրջ կես դար առաջ Արցախի Տիգրանակերտի ավերակներից ոչ հեռու հայտնաբերելով Յամանի ավագ որդու տապանաքարը՝ հայերեն արձանագրություններով, այն տեղափոխել են Աղբեջանի պետական թանգարանի բակ²² և ո՞վ գիտի այն ներկայումս որտեղ և ի՞նչ վիճակում է գտնվում,

է) կանոններն արտահայտել են հայ ժողովրդի բոլոր խավերի կամքը, որովհետև մի շարք նորմեր ուղղված են եղել ժողովրդի բարեկեցության բարձրացմանը: Այսպես, Ա կանոնն ազդարարում է, որ եկեղեցու այրերը ժողովրդի ցավերը և հոգևոր պիտույքները չհոգալու պատճառով պետք է կարգալույթ լինեն, իսկ մեկ այլ կանոն պարտավորեցնում է եախսկրպուներին՝ վերանորոգել անկելանոցները և հոգ տանել կարույալներին ու նուրացկաններին խնամելու համար: Անտարակույս, առաջին մարդկանց կարգավիճակով Յայաստանի և Արցախի հոգևոր այրերի և աշխարհիկ տերերի մասնակցությունը ժողովին, վկայում է, որ պետական անկախությունը ձեռք է բերվում միայն ու միայն ազգային միասնությամբ և հավաքական ուժով, մի գաղափար, որն իրեն երկար սպասեցնել չտվեց: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ կանոնները դրւում են զալիս Եկեղեցական փաստաթղթի շրջանակներից՝ ներկայանալով որպես խոշոր աշխարհիկ-Եկեղեցական ու իրավական վավերագրեր հայ ժողովրդի միջնադարյան պետականությունը և իրավունքը լուսաբանելու համար: Այդ առումով Պարտավի Բ ժողովի կանոնախումբը նույնպես Արցախի Յանրապետության պետականության կայացման կարևոր հիմքերից մեկն է հանդիսանում:

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ

Եշմարտությունը չի սիրում երեսպաշտություն,
որովհետև Աստծո առաջ պիղծ է երեսպաշտությունը:
Դավիթ Ալավկա որդի

Ամենայն Հայոց կաթողիկոս Յովիան Օձնեցին, ով նաև հայտնի իրավագետ էր, իր աթոռակալության տարիներին (717-728թթ.) կարողացավ մեկ ժողովածուի մեջ հավաքել գոյություն ունեցող Եկեղեցական կանոնները՝ կազմելով «Կանոնագիրք Հայոց» անվանք հանրահայտ աշխատությունը:

Յ.Օձնեցու ժամանակ, Հայոց Կանոնագիրքը կազմված էր 24 կանոնախմբերից, իսկ նրա մահից հետո Կանոնագրքում առաջին լրացումը կատարել է Ամենայն Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին (946-964թթ.), և այդ լրացումը եղել է Պարտավի Բ ժողովում ընդունված կանոնախումբը՝ 25 (ԻԵ) համարի տակ՝ Յ. Օձնեցու կողմից մտցված վերջին՝ 24 (ԻՂ) կանոնախմբից անմիջապես հետու։¹ Եվ դա պատահական չէ, ու հասկանալի է, որովհետև ժամանակագրական առումով Պարտավի կանոնախումբն ամենամոտն է Յ. Օձնեցուն։ Մյուս կողմից, պետք է հաշվի առնել նաև այն, որ Պարտավի Բ ժողովից հետո մյուս Եկեղեցական՝ 842թ. Երնջակի, 970թ. և 1036թ. Անիի, 1002թ. Հարդի, 1179թ. Յօնմկայի և 1204թ. Սահմանադրությունը համապարտադիր բնույթ ունեցող կանոններ չեն սահմանել։ Ուշագրավ է նաև այն, որ Կանոնագիրքը Հարդի վերջին իր մեջ ներառում էր 40, իսկ XVII դարում՝ 98 կանոնախմբեր։ Արդեն X դարում Կանոնագրքի մեջ մտցված էր նաև Արցախի Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությունը։

«Հայոց Կանոնագիրք»-ը համընդհանուր ճանաչում գտած իրավագիտական խոշոր աշխատություն է, որի որոշ դրույթներ մինչև Խ դարի 20-ական թվականները կիրառվել են Հայաստանում և հայկական գաղութներում։ Կանոնագիրքը կարգավորել է ոչ միայն Եկեղեցական, այլև քրեական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան բնագավառների բազմաթիվ հարաբերություններ։ Կանոնագրքում հանցագրության և պատժի հարցը լուծվել է քրիստոնեական կրոնին բնորոշ նոտեցմամբ։ հանցագործը ոչ թե մարմնական կամ նյութական պատժի է ենթարկվել, այլև հատուցել է ապաշխարությամբ։ Գերադասելի էր բա-

րոյական դատապարտման հանգամանքը, իսկ առավելագույն պատճաչափը նզովքն էր, որը կիրառվել է ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ:

Յայ ժողովուրդը IX դարի 2-րդ կեսին կարողացավ վերականգնել իր կորցրած պետականությունը: Բագրատունյաց թագավորության (887-1045թ.) սահմանները տարածվեցին մինչև Կովկասյան Մեծ լեռնաշղթան: Գագիկ Ա-ի թագավորության օրոք (997-1020թ.) Արցախ և Ուտիք նահանգների հիմնական մասը՝ Փառհսոսի, Խաչենի և Քրիշի իշխանությունների անվան տակ մտնում էին Բագրատունյաց թագավորության կազմի մեջ²: Ոչ հեռու անցյալում, Արցախի Տիգրանակերտի թիկունքում (արևմտյան կողմից) բարձրացած Վանքասարի գագարին կառուցված միջնադարյան եկեղեցու բակում գտնվող խաչարձանի վրա եղել է հետևյալ վիճագիր արձանագրությունը. «Ես Շահանշահ որդի Աշոտայ կանգնեցի զիսաչս հոգու իմոյ»:³ Ոչ մի կասկած չի հարուցում, որ խաչը կանգնեցվել է քաջակորով Բագրատունիների թագավորության տարիներին, որոնցից մի քանիսը կրում էին «շահանշահ» (արքայից արքա) տիտղոսը: Իսկ Յայոց Արևելից կողմանքի տերերը հանդես էին գալիս որպես փոքրիկ «ինքնակալներ», «արքայիկներ», «իշխանաց իշխաններ»: ԼՂՀ Սարտունու շրջանի Թաղավարդ գյուղից դեպի Տումի գյուղը տանող ճանապարհի վրա (Սարտունու և Յաղորութի շրջանների սահմանագծին) կա մի հին ուխտատեղի՝ Զուխտ Բարեկածառ (ճոխտ Պովածառ) անունով, որի ավերակ երկու եկեղեցներից մեկի խաչքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը. «Սուրբ Պողոս: Յամս Աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յովիաննիսի Ամարասայ եպիսկոպոսի և պետության Տեառն Գագիկայ Աղուանից (ներ իմաստով՝ Արցախ-Վ.Հ.) իշխանաց իշխանի...»⁴: Թվականն է ՆԽԶ= (446+551=997թ.): Արձանագրությունը հուշում է, որ Արցախի տիրող իշխանաց իշխան (իշխողների իշխող) բարձրաստիճան տիտղոսը ճանաչվել է Բագրատունիների կողմից և որի ենթակայության տակ գտնվող վարչա-քաղաքական միավորն ունեցել է պետությունը բնորոշ գծեր և հզոր պատվար է հանդիսացել Բագրատունյաց թագավորության արևելյան կողմանքի համար:

Բագրատունյաց թագավորության տարիներին երկորի միակ ազգային օրենսդրությունը Յայոց Կանոնագիրքն է եղել: Վերջինս, բնականաբար, չէր կարող լրիվությամբ կարգավորել երկորի իրավական, սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական հարաբերությունները, ուստի բազմաբնույթ հարցեր կարգավորվել են նաև հռոմեական և

հունա-բյուզանդական իրավունքի նորմերով: Իսկ դա նշանակում է, որ Բագրատունիների ժամանակաշրջանի հայ իրավական միտքը և իրավունքը գործել են նաև Հայոց Արևելից կողմանքում՝ պատմության մեջ միշտ միաձույլ Արցախ և Ուտիք նահանգներում:

Բագրատունյաց թագավորությունը գոյատևեց ընդամենը 158 տարի և չկարողանալով դիմագրավել քրդական և թուրք-սելջուկյան իրուսակախնդերի հարձակումներին, դադարեց գոյություն ունենալուց: Այդ վաչկատուն ցեղերը Հայաստանի խոշոր քաղաքներուն ստեղծեցին իրենց իշխանությունները (Էմիրությունները): Իրանական-քրդական ցեղախմբերից մեկին՝ Շեղադյաններին, հաջողվեց տիրել Գանձակ քաղաքին, և արդեն XI դարի 2-րդ կեսին քաղաքը դարձավ թուրք-սելջուկների Էմիրության կենտրոնը: Միայն մի կարճատև ժամանակով, հյուսիս-արևելյան Հայաստանում շարունակեց գոյատևել Կյուրիկյան կամ Աղվանից հայկական թագավորությունը (972-1113թթ.): Դա մի խոշոր ավատատիրական միավոր էր, որի հարավ-արևելյան սահմանները հասնում էին մինչև Մռավի լեռնաշղթան և Ինջա գետը, այսինքն՝ այդ թագավորությունն իր մեջ ներառում էր նաև Արցախի հյուսիսային տարածքների մի մասը:⁵

Թուրք-սելջուկյան, մոնղոլական և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում (X-XV դդ.), պատմական Արցախի տարածքների մեջ մասում, որպես հայոց պետականության մի խոշոր բեկոր, որպես քաղաքական մի հզոր միավոր, հանդես է գալիս Խաչենի իշխանությունը, որի տարածքն ընդգրկում էր Սևանա լճի արևելյան ափերը, Մարտունու, Ասկերանի, Աղդամի, Մարտակերտի, Շուշիի, Թաշթառի, Շահումյանի (Փարվածավի) և Օերկայումս ադրբեջանցիների ձեռքին գտնվող հայկական Շահումյանի շրջանը: Խաչենի իշխանության մի ծյուղն էլ տարածվել էր Արցախի հյուսիսային մասում՝ «Փախտոսի թագավորության» անվան տակ: Երկու հայկական իշխանությունները գտնվել են Բագրատունյաց թագավորության հովանու ներքո: Վերջինիս կործանումից հետո, XI դարի 2-րդ կեսին, Արցախի հյուսիսային գավառները գրավվեցին Գանձակում իշխող իրանական-քրդական Շեղադյաններից սերված Փաղլունյան տոհմի կողմից: Դա առաջին մահմեդական վարչական ինքնուրույն միավորն էր, որ հաստատվելով Արցախի հյուսիսային մասում՝ «սեաի պես խրվեց Հայոց Արևելից կողմանքի միասնության մեջ և դարձավ տեղական իինավորց իշխանությունների ախոյան ու նրանց մի մասի ոչնչացման պատճառը»⁶:

Թուրք-սելջուկյան տիրապետության պայմաններում գերիշխում էր

մահմեղական իրավունքը, որի հիմքը շարիաթն էր: Շարիաթական դատարանում ոչ մահմեղականների իրավունքները սահմանափակ էին: Ցուցմունքների մեջ նախապատվությունը տրվել է մահմեղական վկայի ցուցմունքներին: Դեռ ավելին, շարիաթական դատարանի դատավորները (մահմեղական լեզվով՝ կազի, կադի) քրիստոնյաների միջև ծագած վեճերը հրաժարվել են քննել:

Եիշտ է՝ հայ ժողովուրդը գրկվեց պետականությունից, բայց չկորցրեց պետական մտածողությունը: Նման պայմաններում, հայ ժողովուրդը Յայոց Կանոնագրքից ավելի խոշոր փաստաթղթի կարիք էր զգում: Արդեն XII դարում ծնվում և իրականանում է ազգային օրենսգիրք ստեղծելու գաղափարը: Դենց այդ դարում անհախաղեավ վերելք է ապրում հայ իրավագիտակցությունը: Ինչպես իրավացիորեն նշում է հայ իրավունքի խոշոր մասնագետ Խ. Սամուելյանը. «Յայաստանի ժամանակակից քաղաքական և սոցիալական պայմանները սուր կերպով թելադրում էին կատարել այդ վճռական քայլը, հորինելով հայկական օրենսգիրք, որի անհրաժեշտությունը զգացվում էր վաղուց ու անորոշ արտահայտումներով դեգերում էր տիրապետող հասարակական դասակարգերի գիտակցության մեջ»:⁷ Իսկ այդ վճռական քայլը կատարող և հայ ազգային առաջին օրենսգրքի հեղինակը Դավիթ Ալավկա որդին էր, որի ծննդավայրը պետք է գետեղել պատմական Արցախի հյուսիսային կողմերում, մի երկրամաս, որը հայ ժողովորդին տվել է այնպիսի երևելի այրեր և խոշոր գործիչներ, որպիսիք են Կիլիկյան Յայատանում հայ իշխանական և թագավորական տոհմի հիմնադիր՝ Յեթումի որդի Օշինը, օրենսդիր և իրավագետ Միփիթար Գոշը, պատմիչներ Կիրակոս Արևելցին, Յովհաննես Ինաստատերը, Վարդան Արևելցին, թանաստեղծ Յակոբ Յակոբյանը, հայտնի հետախույզ Իվան (Յովհաննես) Աղայանը, Խորհրդային Միության մարշալներ Յովհաննես Բաղրամյանը, Յանազասպ Բաբաջանյանը, ծովակալ Յովհաննես Խսակովը և այլոք:

Մի քանի խոսք Դավիթ Ալավկա որդու ծննդավայրի և Գանձակ քաղաքի մասին: Միջնադարում, բացի նաևնիների անունով կոչելուց, տարածված էր նաև հայրանունով կոչելը: Օրինակ, Դավիթ Ալավկա որդի, նշանակում է, որ Դավիթ հոր անունն Ալավկա է եղել: Որոշ հետազոտողներ գտնում են, որ «Ալավկա որդի» եզրույթը Դավիթ մականունն է: Եթադրվում է, որ Ալավկայի որդին ծնվել է XI դարի 70-80-ական թվականներին, բայց հայտնի չէ, թե երբ է մահացել: Միայն ստույգ տվյալներ կան, որ նա 1140 թվականին, այսինքն՝ Արցախի հյուսիսային մասում տեղի

ունեցած խոշոր ավերիչ երկրաշարժից մեկ տարի հետո (1139թ.), այլև կենդանի չէր: Այդ երկրաշարժից ավերվեց Արցախի մի մասը և կործանվեց Գանձակ քաղաքը, փլվեց Ալիարակ լեռը ու փակեց իր միջով անցնող ծորակը, գոյացավ ծովակ, որ կա մինչև այսօր: Խոսքը Գյոլ (Կապույտ լիճ) լճակի մասին է, որը գտնվում է ներկայիս Աղրբեջանի արևմտյան մասում՝ համանուն՝ Գյոլ Գյոլ շրջանի տարածքում, Մոավ լեռնաշղթայի հյուսիսային լանջին, Թյափազ լեռան ստորոտում, Ախսու գետի կիրճում: Նրա շրջակայքը նշված ժամանակաշրջանում մտնում էր խաչենի մեջ:

Պատմագրության մեջ, չգիտես ինչու տիրում է այն կարծիքը, որ Դավիթը ծնվել է Գանձակ քաղաքում և այս հարցում բոլորն էլ (այդ քվում՝ նաև աղրբեջանցիները) պատմիչ Կիրակոս Արևելցուն են հորում կատարում, որին ևս տվել են Գանձակեցի հորդորումը: Սակայն փաստերը մեզ այլ բան են հուշում:

Նախ, պատմիչ Կիրակոս իրեն անվանում է Արևելցի, իսկ Գանձակեցի անվանումը նրան տրվել է ավելի ուշ՝ XVII դարում: Լինելով Ալավկա որդու մասին առաջին հիշատակողը, նա հայտնում է «Ալավկա որդի սուրբ լուսավորիչ Դավիթ Վարդապետի» վախճանվելու ճիշտ տարեթի մասին և միաժամանակ նշում, որ Դավիթ Վարդապետը, Արքայություն անունով քահանան և Թոքակերի որդի Գրիգոր Վարդապետը Գանձակ աշխարհից են («Աշխարհէն Գանձակայ»), որտեղից նաև ինքն է:⁸

Դայկական սկզբնադրյուրների համաձայն՝ XI-XIV դարերում Գանձակի աշխարհը կամ Գանձակի երկիրը համահունչ է եղել Փառհսոսի երկրին, իսկ վերջինս ընդամենն Արցախի գավառներից մեկն էր հանդիսանում և դեկավարվում էր Արանշահիկ իշխանազունների կողմից: Միայն XI դարի սկզբում գավառը կիսվեց՝ լեռնային մասը հայոց Բագրատուններին, իսկ դաշտայինը՝ Գանձակի եմիր Ֆաղունին:

Այսիսով, Դավիթ Ալավկա որդին կարող էր ծնված լինել Արցախի հյուսիսային մասի ցանկացած բնակավայրերից մեկում:

Ինչ վերաբերում է Գանձակ (արաբերեն Զանզա, պարսկերեն՝ Գենջե, թուրքերեն՝ Գյանջա, պահլավերեն և հայերեն՝ Գանձ) քաղաքին, որի անունը կապում են հիմնադրման տեղում «գանձ» հայտնաբերելու հետ, ապա արաբական և հյուսիսային վայրագ ցեղերի պարբերական ասպատակությունների հետևանքով, հայոց Պարտավ քաղաքը X դարի 1-ին կեսից կորցրեց իր երբեմնի համբավը՝ տեղը գիշելով Գանձակ քաղաքին: Վերջինս կառուցվել է Մեծ Դայրի Արշակաշեն (Շակաշեն) գավառում՝ Դայր 295 (846/847) թվականին:⁹ Մ.Բարխուդարյանցը

պատմական Արցախի դաշտային գավառներից մեկն էլ Շիկաշեն, Շակաշեն, Արշակաշեն, Գանձակ, Գեանջա, Ելիզավետպոլի գավառն է համարում, որն ընկած է Կուր գետի, Կուրակ և Շամբոր գետակների ու դաշտաբերանի տեղանքում:¹⁰ Գանձակը կազմում էր Ելիզավետպոլի նահանգի նույնանուն գավառի հարավ-արևմտյան մասը: ԼՂ ինքնավար մարզի սահմանները որոշելու ժամանակ, Խորհրդային Սերբեցանը՝ հեռահար նպատակներից ելնելով, 60%-ից ավել հայություն ունեցող հայկական Գանձակը դուրս բռնեց ԼՂԻՄ-ի սահմաններից՝ նրա տարածքում կազմավորելով Գետաբեկի, Խանլարի, Դաշքեսանի, Շամբորի և Շահումյանի շրջանները: Տասնյակ հազարավոր բնակչություն ունեցող հայկական Գանձակի երկրամասի և բուն Գանձակ քաղաքի 40.000 հայ բնակչությունն Ադրբեջանի կողմից բռնի տարահանվեց XX դարավերջին՝ որպես հանրապետության էթնիկական գտնան արտահայտություն:

Դավիթ Ալավլկա որդու Ժամանակակիցների տեղեկությունների համաձայն՝ Դավիթը եղել է զարգացած անձնավորություն, տիրապետել է մի քանի լեզուների, նույնիսկ համազգային նշանակություն ունեցող որոշ հարցերում Հայոց կարողիկոսը հաշվի է առել նրա կարծիքը: Նա ունեցել է վարդապետի կոչում, իսկ վարդապետներն աստվածաբանական բարձր գիտելիքներ ունեցող օրենքների բարձր գիտակներ և մեկնաբանողներ են եղել (Ժամանակակից ինաստով՝ գիտության դոկտորներ): Մեծ է եղել վարդապետների ծառայությունը հատկապես հայ իրավունքի զարգացման մեջ: Իրավաստեղծ բնագավառում նրանք նույն դերն են կատարել, ինչ-որ Հռոմի իրավաբանները:

Բացի առանձին գործերից, Դավիթ Ալավլկա որդին գրել է «Կանոնական օրինադրություն» գրվածքը, որը հայ և համաշխարհային իրավական մտքի խոշոր հուշարձաններից մեկն է: Այդ աշխատությունը հայ մատենագրության մեջ ծանր է նաև «Հարցումն պէսպէս խոստվանութեան բանից և պատահմանց եկելոց» կամ «Վասն պէսպէս հարցմունք խոստվանութեանց խրատք զգուշացուցիչը» (այսուհետ՝ նաև Դատաստանագիրը) վերնագրերով: Աշխատության վերաբերյալ առաջին կարծիքները եղել են բացասական (Կ.Նոյման, Գ. Զարթիանալյան, Յ. Տաշյան, Մ. Չամչյան), ըստ որոնց՝ Դավիթ կանոնները մեծ մասսամբ «խենթական», «խառնիխություն» և անհմաստ բաներ են: Սակայն XX դարում վերաբերմունքը փոխվեց: Պրոֆեսոր Խ.Սամուելյանը փաստել է, որ «Հայաստանում որոշ կիրառում ունեցած Դավիթ այդ ժողովածուն պետք է դասել ազգային դատաստանագրքերի շարքին, իբրև կողիֆի-

կացիոն աշխատանքի մի փորձ, թեև կատարված անհատական ծեռներեցությամբ»:¹¹

Դայաստանի պետության և իրավունքի պատմության խոշոր մասնագետներից մեկը՝ Ալ. Սութիասյանը, իրավանք գրել է, թե Դավթի Դատաստանագիրքն առաջին հայկական օրենսգիրքն է, որը պարունակում է ինչպես Եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենքներ: Դայ գիտնականները, բանասերները, պատմաբանները, բժիշկները և իրավաբանները այս կամ այն չափով անդրադարձել են շատ տեսակետներից հիանալի այդ հուշարձանին, որը, սակայն, դեռ սպասում է իր հետազոտողին:¹²

Անշուշտ, Դավթի աշխատանքը շուրջ 1000 տարվա հեռավորությունից այլ կերպ չեն կարող անվանել: Ու միանգանայն ճիշտ է, որ հայոց առաջին Դատաստանագիրքը դեռևս որևէ մեկի կողմից լուրջ ուսումնասիրության առարկա չի դարձել, և յուրաքանչյուր հետազոտող այդ աշխատության անդրադարձել է այնքանով, որքանով որ այն առնչվել է իր կողմից ուսումնասիրվող առարկային: Բնավ, միտք չունենալով սույն աշխատանքում իրավական տեսակետից լրջագույնս ուսումնասիրելու այդ հուշարձանի բոլոր կողմերը, որը հասկանալի պատճառներով հնարավոր չէր լինի, ուստի կօգանանք ցույց տալ Դավթ Ալավելա որդու այն առաջադեմ մտքերն ու գաղափարները, որոնք նորություն էին միջնադարյան հայ իրավունքի համար, և որոնք նույնիսկ ներկա պայմաններուն իրենց արդիականությունը չեն կորցրել:

Դավթի աշխատությունն առաջին անգամ աշխարհաբար լույս է տեսել «Էջմիածին» ամսագրում (1952, N9-12, 1953, N1-3)` Ա.Աբրահամյանի աշխատասիրությամբ, իսկ անգերեն թարգմանությամբ՝ 1961 թվականին Բելգիայում իրատարակվել է հայտնի հայագետ Զարլզ Դուռսեթի կողմից: Վերոնշյալը չունենալով ձեռքի տակ, օգտվել ենք այն ընդօրինակություն-աշխարհաբար թարգմանությունից, որը տպագրված է պրոֆեսոր Ռուբեն Ավագյանի «Դայ իրավական մտքի գանձարան» երկիատոր աշխատության մեջ:¹³

Դատաստանագիրքը բաղկացած է առաջաբանից և 97 հոդվածներից: Առաջաբանում, խոսելով իր աշխատության նշանակության մասին, Դավթ Ալավելա որդին տարանցատում է դմում հոգևոր և հանրային կառավարման միջև: Դավթի աշխատանքի բազմաթիվ հոդվածներից նկատելի է, որ այն գրված է հարց ու պատասխանի ձևով: Դարցումները տրված են եղել ինչ-որ հոգևորականի կողմից, որոնց էլ հեղինակն ուղղակիորեն պատասխանել է: Միջնադարյան պատմիչներ Կիրա-

կոս Արևելցին, Գրիչ Ստեփանոսը, Գրիչ Վարդանը նշել են, որ Դավիթն աշխատությունը գրել է «Արքայություն» անունով մի քահանայի խնդրանքով: Դատաստանագրի կառուցվածքից նկատելի է, որ այդ քահանան ամենից առաջ հետաքրքրվել է այն դեպքերով, երբ կենդանիները՝ գայլը, շունը, կատուն և մուկը պղծում են ուտելեղենը: Դրանց մեջ հատուկ տեղ է զբաղեցնում «մկնանկի» կամ «մկնառի» դեպքերը («Այդ մեջ ընկած մկան մասին», «Տաշտի կամ մոթալի մեջ ընկած մկան մասին», «Դնձանի մեջ ընկած մկան մասին», «Թոնրի մեջ ընկած մկան մասին» և այլն): Երևի դա է պատճառը, որ «մկնանկի» վերաբերյալ հոդվածները (2-7-րդ) դրված են Դատաստանագրի սկզբում:

Դատաստանագրի հոդվածները կարելի է բաժանել 3 խմբերի՝
ա) բարոյականության և մաքրության հարցերը կարգավորող կանոններ,

բ) եկեղեցական կանոններ,

գ) աշխարհիկ՝ քրեական, քաղաքացիական, ամուսնաընտանեկան և աշխատանքային հարաբերություններ կարգավորող կանոններ:

Իր հերթին, քրեական բնույթի կանոններն իրենց տեսակային հատկանիշներով կարելի է բաժանել 3 ենթամբերի՝

1) կրոնական հանցագործություններ,

2) անձի դեմ ուղղված հանցագործություններ,

3) գույքային հանցագործություններ:

Առաջին խմբի կանոնները (1-15-րդ, 31-րդ, 33-րդ, 38-րդ, 46-րդ, 49-րդ, 54-րդ, 55-րդ, 64-րդ, 65-րդ, 67-րդ, 78-րդ, 94-րդ հոդվածներ) վերաբերում են հայ հասարակության տարբեր խավերի միջև եղած հարաբերություններին. Երանց կենցաղի, սովորույթների, բարոյականության, մաքրակեցության, բժշկության, կենսաբանության և այլ հարցերի: Նշված հոդվածներում Դավիթ Ալավերդի որդին բացասաբար է վերաբերվում բոլոր այն երևույթներին, որոնք վնասակար են և հասարակության բարիքների համար չեն ծառայում:

Եկեղեցական բնույթի կանոնները (21-32-րդ, 34-36-րդ, 47-րդ, 50-րդ, 66-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 84-րդ հոդվածներ) հիմնականում վերաբերում են մկրտության, Սուրբ Խորիրդի, հաղորդության, պատարագ մատուցելու, պահեցողության և համանման այլ հարցերի:

Քրեական բնույթի կանոններից կրոնական հանցագործությունների (21-րդ, 35-րդ, 53-րդ, 80-րդ, 81-րդ, 83-րդ, 95-րդ հոդվածներ) կարգավորման առարկա են հանդիսացել անհավատներին մկրտելու, մեռածներին վարձով թաղելու կամ անթաղ թողնելու, կախարդության և զա-

նազան հմայությունների, աստվածահայիության, հակաքրիստոնեական աղանդներին հարելու, այլադավանների հետ առնչվելու և այլ բնագավառներում ծագած իրավահարաբերությունները:

Պատմական բոլոր ժամանակաշրջաններում, անձի դեմ ուղղված հանցագործությունները միշտ էլ գտնվել են պատմաբանների, փիլիսոփանների, իրավաբանների, օրենսդիրների ուշադրության կենտրոնում, որովհետև նման բնույթի հանցագործությունների տեսակարար կշիռը և հասարակական վտանգը միշտ մեծ է եղել: Այդ հանցագործություններից ամենածանրը սպանություններն են հանդիսացել, որոնք միշտ էլ հետապնդվել և պատժվել են:

Դավիթ Ալավկա որդին, Դատաստանագրքի 2-րդ հոդվածում ժխտելով չարի գաղափարը, ազդարարում է, որ Աստված բարու նախատիան է, սակայն «Արամի մեղք գործելուց հետո որոշ բաներ մերժվեցին, որոշ բաներ ընդունվեցին»: Այդ ենթաթերապում Դավիթը յուրովի տալիս է հանցագործության հասկացությունը, ըստ որի՝ այն ի վերուստ առաջացած երևույթ չէ և պայմանավորված է որոշակի գործողությամբ և պատճառներով (հարբեցողություն, նենգություն, քսություն, վրեժինդրություն, կեղեքում, ագահություն, հափշտակություն, կեղծիք, շնություն և այլն): Դատաստանագրքի հոդվածներից նկատելի է, որ Դավիթ Ալավկա որդին հստակորեն տարանջատել է հանցագործության տարրերը՝ մասնավորապես, հանցագործության սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Հանրահայտ է, որ հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքն է, որը դրսևորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ: Արարքում մեղքի բացակայությունը վկայում է հանցագործության բացակայության մասին: Այդ խնդիրն նվիրված 59-րդ հոդվածում կարդում ենք. «Խոկ եթե անհավատներն առանց պատճառի հարձակվեն քրիստոնյաների վրա և դեմ առ դեմ կրվելիս պատահի, որ քրիստոնյան սպանի՝ մեղադրելի չէ. 4 տարվա ապաշխարանքը բավարար է անձը մաքրելու համար: Խոկ եթե գերի բռնի, բերի ու կամայականորեն սպանի՝ արյան պարտական է: Խոկ եթե պատահի, որ (քրիստոնյան) գիշերային մարտում առանց պատճառի սպանություն կատարի, կարգը այնպես է, ինչպես սովորական պատերազմի ժամանակ»:

Դավիթը հստակորեն տարբերակում է դմում անզգույշ և դիտավորյալ կերպով մահ առաջացնելու հետևանքների միջև: Նա նույնիսկ նախատեսում է դիտավորյալ սպանության մի բանի հանցակազմ և ակնարկում, որ միայն հանցավոր արարքի և հետևանքի միջև պատճառա-

կան կապի դեպքում անձը կարող է պատասխանատվության ենթարկվել: Անզգուշությամբ մահ պատճառելու հանցակազմը նախատեսված է Դատաստանագրքի 40-րդ հոդվածում: Դիմենք այդ հոդվածին. «Եթե մայրը քնի մեջ երեխայի վրա ընկավ կամ (նրա) անփութության հետևանքով մանուկը կրակն ընկավ՝ վառվեց, թող 3 տարի ապաշխարի, մեկը՝ սրբապահությամբ, երկուսը՝ շարաթապահությամբ, ապա պետք է երկու անգամով երեք քառասուն օր (սովորական) պահը պահի»:

Դիտավորյալ սպանությունների առանձին տեսակների մասին խոսվում է Դատաստանագրքի 48-րդ, 57-րդ, 58-րդ հոդվածներում: Ընդ որում, նշված հոդվածներից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի հանցակազմ: Առավել մեծ հետաքրքրություն ունի 48-րդ հոդվածն այն առունով, եթե հեղինակն արծարթելով հանցակցության ինստիտուտի գաղափարը, առաջ է քաշում նաև կատարողի հետ մեկտեղ հանցակիցների պատասխանատվության հարցը. «Եթե մեկը սպանելիս կամ մահվան մատնելիս լինի մեկ ուրիշին, կամ հրկիզում կատարելիս լինի, կամ կինը երեխային փորում դեղով կամ ճնշելով կամ իրեն պատից ցած գցելով սպանելիս լինի և մի ուրիշը՝ կանանցից, թե տղամարդկանցից, մոտը կանգնած լինի և այն սպանողին գործակից լինի որպես համախոհ կամ խորհուրդներ տալով, մինչդեռ կարող էր կյանքից գրկվողին օգնել կամ անձամբ կամ ուրիշներին օգնության կանչել և անփույթ եղավ. (այդպիսին) մասնակից է կատարած սպանությանը. նույն գերաբերում է թե՝ հրձիգի, և թե՝ երեխա սպանելու դեպքերին: Իսկ եթե մեկը համախոհ լինելով կամ խորհուրդներով գործակից չէ և բոլորովին անտեղյակ է եղելությանը՝ ինչպես կարող է մեղադրվել. լինի դա (հանցագործի) հարազատը կամ հարևանը»: Ակներև է, որ տարբեր եղանակներով հիյության ընդհատումը համարվում էր սպանությանը համահավասար հանցագործություն և հանցագործը, նրա հանցակիցները, պատժվում էին որպես մարդասպաններ:

Դիտավորյալ սպանությունների վերաբերյալ հոդվածներով սահմանված պատիժների վերլուծությունը ցույց է տալիս, որ, որքան իր բնույթով ծանր և վտանգավոր է սպանությունը, այնքան Ալավկա որդին խստացնում է դրա պատժելիությունը և ընդհակառակը:¹⁴

Դատաստանագրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ «Պոռնիկ կանայք, որոնք սպանում են իրենց մանուկներին, մինչև մահվան օրը ապաշխարեն: Ծնողը՝ իր երեխաներին կամ ամուսինը կնոջը խրատելու համար. եթե ծեծի գրասրտությամբ, սակայն, այնուամենայնիվ, մահ պատահ՝ թող հինգ տարի դրսում և երկու տարի ներսում անհաղորդ մնա սրբու-

թյանը և հետո հաղորդվի, իսկ եթե ամխճա, գազանաբար ծեծելով մահ պատահի՝ մեղավոր է: Եթե դիտմամբ, քենից կամ նախանձից դրդված, հետո սպանի թույնով, ապա այսպիսինները թող մինչև մահ ապաշխարեն՝ հագած խարազնազգեստ և գլխներին մոխիր ածելով, բայց հետին թոշակից չգրկվեն»: Հոդվածը մեզ հուշում է, որ դեղով կամ այլ կերպ ասած, թունավորմամբ սպանելը, ինչպես նաև քինախնդրությամբ կամ նախանձամտությամբ, այսինքն՝ խանդի հողի վրա կատարած սպանությունը պատժվում է ցանա ապաշխարանքով, իսկ ժնողի կողմից երեխային կամ ամուսնու կողմից սեփական կնօջը թերևակի ծեծով խրատելու հետևանքով տեղի ունեցած սպանությունը, որն ըստ էռթյան անգողույշ սպանություն է, պատժվում է կարծատև ապաշխարանքով:

«Չկա մեղք, չկա նաև աատասխանատվություն» սկզբունքն Ալավկա որդին արտացոլել է 42-րդ հոդվածում, ըստ որի՝ «Եթե մի մարդ ունենա գիտ ջորի, կամ քացի տվող ու կծան ձի, կամ հարու տվող եզ. եթե տերը չինանա, սակայն մարդիկ իմաց տան, գանգատ բողոք անեն, ցույց տան իրենց կրած վնասները, նա անհոգ մնա և միջոցներ ձեռք չառնի ինչպես պետք է՝ դեմն առնելու, և (կենդանին) տա, մեկին սպանի, ապա տերը նրա արյանը պարտական չէ»: Հոդվածի իմաստը հուշում է մեզ, որ այնտեղ, որտեղ գործողության կամ անգործունեության և հանցավոր հետևանքի միջև չկա պատճառական կապ, չի կարող լինել ոչ քրեական պատասխանատվություն, և ոչ էլ պատիժ:

Բազմաթիվ փաստեր կան, երբ իին և միջնադարյան օրենսդրություններում հանցագործության սուբյեկտ են ճանաչել նաև կենդանիներին և առարկաներին: Սակայն այլ ձևով է հարցը լուծում Դավթի Դատաստանագործի 96-րդ հոդվածը. «Եթե պատահի, որ ծառից մարդն ընկնի, կամ ծառից պարանով կախվի՝ ծառերին չպետք է մեղք դնել, քանի որ անշունչ և անզգա առարկաներ են, մահվան ոչ մի պատճառ չեն ներկայացնում (նրա հետ) ինչ որ պատահեց... Իսկ եթե եկեղեցուց քար ընկնի մարդու վրա և մարդը մեռնի. Եկեղեցին մեղք չունի. ինչպես կամենում է Տերը, թո՞յ անխափան պատարագ մատուցեն»:

Պրոֆեսոր Ռուբեն Ավագյանն առաջինն է նկատել, որ իին և միջնադարյան իրավական հուշարձաններում, ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը (քրեական իրավունքում՝ վիճակ, երբ անձը հեռացնում է վտանգը՝ կատարելով արտաքուստ հանցավոր տարրեր պարունակող՝ սովորական պայմաններում անթույլատրելի գործողություններ, որոնք սակայն, չեն անցել ծայրահեղ անհրաժեշտության սահմանագի-

ծը և քրեական պատասխանատվություն չեն առաջացնում), առավել կամ պակաս ամբողջությամբ ներկայացված է Դավթի Դատաստանագրում: «Եթե Մովսիսական օրենքները կանոնիկ են,- նշում է Ռ.Ավագյանը,- գերմանական միջնադարյան իրավունքը և իհն ռուսական իրավաբանական հուշարձանները, ընդունելով ծայրահեղ անհրաժեշտության վիճակները, հենվում էին մարդու կատարած հանցագործության գրեթե բացարձակ արտաքին լուսաբանման վրա, ապա հայկական միջնադարյան իրավունքում, որն ընդունում է ծայրահեղ անհրաժեշտությունը, վերջինը մեկնաբանում է մարդու կյանքի դեմ ուղղված գործողության գնահատման դիրքերից»:¹⁵ Դա միայն կարող է վկայել, որ միջնադարյան քրեական-իրավական մտածողությամբ հայերը հետ չեն մնացել ժամանակի առաջավոր ազգերից:

Դատաստանագրի կանոններից դիտելի է, որ Դավթի Ալավա որդու մոտ կրոնական ընթացումներն ավելի խորն են ընդգծված եղել: Այլ կերպ լինել չեր կարող, քանի որ Դավթը, հանդիսանալով կրոնական գործիչ (կոչումով՝ վարդապետ) և իր դարաշրջանի հարազատ զավակը, իր աշխատությունը գրելիս՝ հիմնականում պետք է ղեկավարվեր աստվածաբանական հավատքի հիմքերով: Եթե նոյնիսկ Դատաստանագիրը ձևականորեն բաժանենք կրոնական և աշխարհական մասերի, միևնույն է, նրա աշխարհական մասը ևս կրում է կրոնական հավատալիքների և հայցքների ազդեցությունը: Դայտնի է, որ միջնադարյան քաղաքականությունը և իրավագիտությունը, ինչպես և մնացած բոլոր գիտությունները, քահանաների ձեռքում աստվածաբանության հասարակ ճյուղեր էին դարձել: Ինչպես Ֆր. Էնգելսն է նշում, եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմներ էին, իսկ Աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին: Նոյնիսկ այն ժամանակ, երբ արդեն կազմվել էր իրավաբանների սեփական դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակ մնում էր աստվածաբանության խնամակալության տակ»:¹⁶

Ավատատիրական իրավունքը դասային անհավասարության իրավունք էր: Այստեղ ավելի վատքար վիճակում էր գտնվում կինը, որի իրավունքները շատ հարցերում ոտնահարված էին: Այսպես, ըստ Դատաստանագրի 71-րդ հոդվածի՝ կմոցն արգելվում էր որսի գնալ, վարու ցանք անել, հնձանը տրորել և այլն: Դասային խորականությունն առկա էր նաև պատժի նշանակման հարցում, ուստի պատժատեսակները և պատժաչափերն աղախնի, ծառայի նկատմամբ ավելի խիստ են եղել: «Դանցանք գործած» և տիրոջից փախած ծառային գտնելու դեպ-

քում տերն իրավունք ուներ սպանել ննան ծառային:

Միևնույն ժամանակ, ազգի հարատևման շրջանակներում Դավիթ Ալավելա որդին նախատեսել է մի շարք նորմեր, որոնք շոշափում, ամրագրում են երեխայի պաշտպանության շահերը: Որդենության սերմը ոչնչացնողները հավասարեցվել են մարդասպաններին, իդի կնոջ վիժումը և աբրոտը դիտվում էին որպես ծանր հանցագործություններ: Դավիթը պատիժ է նախատեսում ոչ միայն իր արգանդում պտուղը ոչնչացնող կնոջ, այլև գրգռողների, օժանդակողների և իմացող չիայտնողների համար: Վերջինս նոր հասկացություն է, որ մուտք էր գործում հայ օրենսդրության մեջ: Բայց Դավիթը դրանով չի բավարարվում, այլ ավելի առաջ է գնում և պատասխանատվության հարցը լուծելիս ելակետ է ընդունում պտղի զարգացման աստիճանը՝ ձևավորված լինելը կամ չլինելը: Եթե պտուղը դեռևս ձևավորված չի եղել, ապա հանցավոր վճարում էր արյան գնի կեսը և ապաշխարում, իսկ եթե երեխան արդեն ձևավորված է եղել, ապա կյանքի դիմաց՝ կյանք: Արգանդում մանուկը ոլորված լինելու դեպքում բժիշկը պարտավոր է եղել միջոցներ ծեռարկել՝ մոր և մանկան կյանքը փրկելու համար: Մանուկը մեռած և նրա ծնունդն անհնարին լինելու դեպքում՝ առաջին պյան է մղվել մոր կյանքը («պետք է գործին վարպետ մեկը... ծեռքը մտցնի և մեռած մանկանը մաս-մաս անի և դուրս հանի, որպեսզի մայրը չմեռնի»): Եթե մանկաբարձն ուշադիր չէր լինում նորածնի նկատմամբ և մանուկը մահանում է նրա ոչ հմուտ լինելուց, ապա բժշկին մահապատիժ էր սպանում: Նորածին երեխայի կյանքն այնքան թանկ է եղել Դավիթի համար, որ դժվար ծննդաբերության ժամանակ նորածնի կյանքը փրկելու համար մոր կյանքը գոհելը սովորական երևույթ է եղել («Իսկ եթե մանուկը կենդանի է՝ թող ոչ ոք չհանդգնի նրան սպանել մոր կյանքի համար, թող մեռնի մայրը և ոչ՝ մանուկը: Եթե մոր համար մեկը սպանի մանկանը՝ թող ապաշխարի 10 տարի»): Ահա այդպես էր երեխայի շահերը պաշտպանում Դավիթ Ալավելա որդին:

Դատաստանագործի մի շարք նորմեր վկայում են, որ միջնադարյան Հայաստանում դատական բժշկությունը գտնվել է բարձր մակարդակի վրա, իսկ մի շարք դրույքներ էլ մեզ հուշում են, որ միջնադարյան հայ բժիշկները բավական բարդ վիրահատություններ են կատարել: Նույնիսկ անվիճելի փաստեր կան, երբ կարողացել են որոշել մարդկանց մահվան պատճառը: Երբ 919 թվականին մահացավ Սմբատ արքան, ժողովորի մեջ կարծիք կար, որ արքային թունավորել են: Մահացածի եղբայրը՝ գահ բարձրացած Գագիկ արքան, Սմբատի մահվան

պատճառը պարզելու և ժողովրդի դատաստանից չխուսափելու համար, իրամայեց դիակի արտաշիրմում կատարել: Դա համաշխարհային պատմության մեջ իր նախատեաը չունեցող բացարիկ երևույթ էր: Արտաշիրմված դիակի հետազոտման արդյունքները Գագիկ արքայի համար դրական էին: Սասնագիտական եզրակացություն տրվեց, որ Սմբատ արքան մահացել է բնական մահով:

Դավիթը տարբեր բնույթի պատիժներ է սահմանում այն հակաբնական սեռական արարքների համար, որոնք վերաբերում են անուսնական սրբապղծություններին, սեռական կրքերը խաթարված ձևով բավարարելուն, անասնամոլության, արվամոլության, լեզվի, մատների և արհեստական պատրաստված այլ գործիքների («զուպա») միջոցով սեռական գրգիռ առաջացնելուն և դրանով իսկ իր ցանկություններին հագուրդ տալու հանգամանքներին:

Մարդկային հասարակության պատմության ողջ ընթացքում բազմաթիվ իրավական նորմեր են ընդունվել՝ սեփականությունը հանցավոր ոտնձգություններից պաշտպանելու համար: Նման ոտնձգություն կատարողների նկատմամբ պատիժները միշտ էլ խիստ են եղել: Նույն մոտեցումն է ցուցաբերել Դավիթ Ալավկա որդին, որի աշխատության 41-րդ հոդվածից նկատելի է, որ գողին ենթարկել են մահապատժ՝ կախաղան հանելու միջոցով: Ալավկա որդին նախատեսում է գողության հետևյալ տարատեսակները՝

ա) գողեր, որոնք ավագակություն են անում լեռներով և կիրճերով անցնող ճանապարհները բռնելով, կողոպսում են անցողուներին մինչև հագի շորերը, շատերին սպանում,

բ) գողեր, որոնք տների պատերն են փորում և կողոպսում տան եղածը,

գ) գողեր, որոնք հանդգնում են ձեռք պարզել Աստծո սրբություններին,

դ) գողեր, որոնք աչքերը պտտելով, նայում են իրենց շուրջը որը և այստեղ-այնտեղ՝ ինչ պատահում է, ճանկում են, թաքցնում են թևի տակ՝ կծիք են կոչում: Չնայած Դավիթ Ալավկա որդին գույքի հափշտակման այս բոլոր հանցակազմները շարադրել է մեկ՝ 79-րդ հոդվածում, բայց յուրաքանչյուրի համար նշանակվող պատիժները բավականին տարբերվում են միմյանցից:

Ինչպես Յին Կտակարանին, այնպես էլ քրիստոնեությանը խորթ է եղել վաշխառությամբ զբաղվելը և այն համարվել է որպես անվայել, որպես ոչ մարդասիրական, ոչ օրինավոր արարք: Յասարակության

մեջ գործել է ուրիշին տրված դրամական միջոցները նույնությամբ վերադարձնելու սկզբունքը, իսկ ավել ստացողները պարտավոր են եղել այդ գումարները հանձնել առքատանցներին: Օրենքով սահմանված տոկոսից բարձր վերցված փողը՝ շահը, կոչվել է վաշխ, առնողը՝ վաշխառու: Դավիթը վաշխառությամբ գրադվելը բարձրացրել է քրեորեն պատժելի աստիճանի, նրանց հավասարեցրել գողերի հետ և վերջիններիս նկատմամբ նշանակվող պատիժները տարածել վաշխառուների նկատմամբ: Ահա Դավիթ կարծիքը. «Ինչպես որ հայիոյանքը աշխարհի երեսին եղած բոլոր մեղքերի հիշումն է և հայիոյողը գործակից է բոլոր մեղավորներին, նույնպես վաշխառուն և վաշխատուն գործակից են բոլոր ավազակներին, որոնք կողոպուտ են անում սարերում, պատ ծակող գողերին, կօծիներին: Սրանք տնանկ ու սնանկ են անում մարդկանց, սրանք թեաւտ բնույթով մարդ են, սակայն չար սովորույթով գազաններ են և ոչ թե մարդ: Քանի որ հնարամտորեն բնությամբ անած ոսկին տալիս են վաշխով, աճ են պահանջում, որ ավելի անիրավ է, քան բռնի ուժով մարդու արդյունքը քշել-տանելը...»:

Ծահագործողական հասարակարգերում բազմաթիվ պատճառներից ելնելով (շահագործում, ծանր հարկեր, կեղծ գործարքներ և այլն) բնակչության մի մասը՝ հատկապես գյուղացիները, դաշնում էին ընչազուրկներ, կարիքավորներ, օրավարձով աշխատողներ: Նույնիսկ միջնադարյան քաղաքներում հատուկ վայրեր են եղել, որտեղ գործազուրկ մարդիկ հավաքվելով, սպասել են, թե մեկն ու մեկը կգա և իրենց գործ կառաջարկի: Նշված երևույթը խորթ չի եղել և ներկայումս էլ խորթ չէ մեր հասարակությանը, ուստի այդ հարաբերություններն առաջին անգամ կարգավորվեցին Դավիթ Դատաստանագրով, որի մեջ հատուկ կանոն նշոցեց՝ ուղղված «վարձկանների», օրավարձով աշխատողների և նրանց տերերի միջև եղած հարաբերությունների կարգավորմանը (43-րդ հոդված): Տերը (ներկայիս ինաստով՝ գործատուն) աշխատողին չպետք է ուղարկի վտանգավոր աշխատանքի, իսկ ուղարկելու և ճանապարհին փորձանք կամ մահ պատահելու դեպքում՝ պատասխանատվություն է կրում («նրա տերը մահապարտ է»): Եթե տերը զգուշացնում է վտանգի մասին, սակայն աշխատողը կարիքից ստիպված կատարում է աշխատանքը և նրան մահվան ելքով փորձանք է պատահում, ապա տերն ազատվում է պատասխանատվությունից («տերը մեղադրելի չէ»): Եթե աշխատողն է զգուշացնում կատարվելիք աշխատանքում սպասվող վտանգի մասին, սակայն տերը միջոցներ չի ծեռնարկում և աշխատողը մահանում է, ապա տերը «նրա արյանը

պարտական է»: Վերջապես, եթե աշխատողը «ամենայն ճշտությամբ» հայտնում է սպասվելիք մահվան փորձանքի մասին, սակայն տերը «հրամայում է գործը կատարել», ապա աշխատողին մահվան փորձանք պատահելու դեպքում՝ «նրա արյանը պարտական է»:

Աշխատանքային և քրեական իրավահարաբերությունները կարգավորող վերոնշյալ նորմից նաև նկատելի է, որ Դավիթը, տարանջատելով դիտավորյալ և անզգույշ սպանությունները, միաժամանակ հստակորեն առաջ է քաշում պատահարի ինստիտուտը՝ բացառելով քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Պրոֆեսոր Ա.Թովմասյանը, լրսաբանելով Ալավկա որդու աշխատության մի շարք նորմեր, մասնավորապես 35-րդ և 98-րդ (պետք է լիներ 97-րդ -Վ.Հ.) հոդվածները, հանգել է այն եզրակացության, «որ պատմական այդ շրջանում, այսինքն XI-XII դարերում Ալվանից աշխարհում (Քայաղվանք-Վ.Հ.) բնակվող հայերի մեջ լայնորեն տարածված են եղել կաշառքն ու դրան առնչվող մյուս հանցագործությունները»:¹⁷ Բնավ համամիտ չենք Ա.Թովմասյանի հետ այդ հարցում: Նախ, Դավիթ Ալավկա որդին, բացի 35-րդ և 97-րդ հոդվածներից, «կաշառք» եզրույթի մասին խոսում է նաև այլ հոդվածներում (41-րդ, 45-րդ, 92-րդ հոդվածներ): Իսկ ի՞նչ է ասվում կաշառքի մասին Դատաստանագրքի 35-րդ հոդվածում: Մեջբերենք հոդվածը. «Քահանան, վանականը կամ աշխարհականը, որոնք մանկանց ուսուցանելիս վարձ են առնում, կամ մեռածներին վարձով են թաղում, կամ միառժամանակ մեռածին չեն թաղում, անթաղել են թողնում՝ ասելով. «Եթե իմ վարձը չեք տալիս, չեն թաղում», ուրեմն առուծախի առարկա են դարձնում Աստծո շնորհները, այդպիսի քահանաներ... թող կարգալույթ լինեն և անհջյալ՝ այս և հանդերձյալ կյանքում...»: Այս հոդվածից կարելի է միայն ենթարկել, որ մանուկներին վարձով ուսուցանող, կամ մեռածներին վարձով թաղող, կամ մեռածին անթաղ թողնող հոգևորականները (կամ աշխարհականը) պետք է պատասխանատվություն կրեն: Դամանման միտք է շոշափում նաև 92-րդ հոդվածը. «Եթե քահանան ամորից, երկյուղից, կաշառքից կամ անվայել հեշտասիրությունից մղված՝ 11 տարեկանից փոքրերին պսակի՝ թող անհծվի և կարգալույթ դառնա...»: Իսկ Դատաստանագրքի 97-րդ հոդվածի վերնագիրը՝ «Զար առաջնորդների և քահանաների մասին», ընթերցողին կարող է միայն հուշել, թե ինչի մասին է գնալու խոսքը: Հենց միայն այդ հոդվածից նկատելի է, որ Դավիթը մի կրօտ հայրենասեր է եղել և ինչպես քերթողահայր խորենացին, որպես մեր ազգի ամենամեծ հայրենասեր, իր հոչակավոր «Ողբում»

մերկացնում է հայրենի երկրի հասարակության բոլոր խավերի՝ ուսուցիչների, կրոնավորների, վիճակավորների, աշակերտների, աշխարհականների, գինվորների, իշխանների, դատավորների ախտերը և արատները ու փրկությունը տեսնում քրիստոս Աստծո մեջ,¹⁸ այնպես էլ Դավիթը մտրակում, խարազանում է իր ժամանակի իրականության բացասական երևույթները, սակայն ոչ հոռետեսության դիրքերից: Նա համարձակորեն վեր է հանում «Զար առաջնորդների և քահանաների» բացասական գործողությունները, նրանց անվանելով «չնչին և անպիտան», «վիժվածք և հավիտենական կորստի արժանի», որոնք «առանց կանոնական օրենքների թույլտվության, սատանայական սուտ մեղադրանքներ հերիշուրելով, բարդում են տեսակ-տեսակ պատիժներ...»: Զար առաջնորդները և քահանաները չար արարքների միջոցով պսակված ամուսիններին բաժանում էին մինյանցից և գրավոր ձևով թույլ տալիս ուրիշների հետ կենակցել: Այդպիսիններին նրանք հարկի տակ էին դնում և ամսե-ամսի պահանջում հարկը: Նրանք ունեին իրենց գործին հավատարիմ գործակալներ, որոնց ձեռքն էին հանձնված օրինության թղթերը և անվանական ցուցակները: Այդ բոլորի հետևանքով, շարունակում է Դավիթը, «քազում չարիքներ առաջացան»՝ մինյանց հանդեպ չարամտությունը, մինյանց կեղեքելը, մինյանցից հափշտակելը, այր ու կնօց բաժանությունը, զավակների ցրվելը, ունեցվածքի բռնագրավումը, գողությունը, ժառանգական հողի կորուստը, դատավորների և դատարանների քաշքառվելը: Նշված բոլոր արատավոր երևույթները, ախտերը, վերացնելու համար Դավիթն օգնության է կանչում Տիրոջը, որպեսզի ժողովրդի հոտի վրա այնպիսի առաջնորդներ և հովիվներ նշանակի, որ նրանք միավորնեն հոտին, սարսափ ներշնչեն թշնամիներին և իրենց անձը զոհաբերեն հոտի համար: Զպետք է նաև անտեսել, որ սելջուկյան կենտրոնական պետության խարխլման հետևանքով (1092թ.) նախկին կուսակալներն ազատ էին դարձել իրենց կանայականությունների մեջ և սաստկացնում էին բռնությունները հպատակների վրա: Դեռ ավելին, նախկին հարկերին գումարվել էին տեղերում ինքնազլուխ դարձած իշխանավորների կամայականությունները, նրանց պարբերական ասպատակություններն ու չարագործությունները: Երևի հենց դրանց է նկատի առել Դավիթ Ալավելա որդին իր Դատաստանագրի «Զար առաջնորդների և քահանաների մասին» վերնագիրը կրող վերջին հոդվածում («գավառից գավառ էին անցնում մի ցուցակով, որտեղ անվանապես պիղը գրերով նշված էին նրանց պիղը գործերը»): Եվ ըստ Դավիթ՝ այդ բոլորը կատարվում էր «Լեռնային և

դաշտային Աղվանքում», ասել է թե՝ Արցախ և Ուտիք հայաշխարհում: Այս առումով Դավիթը, ճիշտ ներկայացնելով ժամանակի բարքերն ու սովորույթները, ավելի է բարձրացնում իր աշխատության պատմագրական արժեքը:

Դանցավորի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվել ինչպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքները: Պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են հանդիսացել հանցագործությունն անզգությամբ կատարելը («ակամա»), հանցավորի տարիքը, կատարած արարքի համար զղալը և այլն: Պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներից են հանցագործությունը դիտավորությամբ («գազանաբար», «անխնա») կատարելը, հանցագործության կրկնական կատարումը (ռեցիդիվը), հանցագործությունը հարբած վիճակում կատարելը և այլն:

Պատժի հարցում Դավիթ Ալավկա որդին ավելի խիստ է եղել հանցագործությունը հարբած վիճակում կատարած անձանց նկատմամբ, որոնց մասին հատուկ շեշտում է կատարել՝ «հարբեցողն ու գազանը մեկ են»: Դատաստանագործի 39-րդ հոդվածը պատժում էր այն հորը, որն իրեն գինարբուքի տալով, մոռացության էր մատնում երեխային, և նա, առանց հսկողության մնալով, գետում խեղդվում էր, իսկ 82-րդ հոդվածի հանցակազմերից մեկն էլ՝ հարբած վիճակում աստվածահայությությունն է, որի սուբյեկտների նկատմամբ որպես պատիժ նշանակվել է մինչև վախճանվելը՝ «ջերմեռանդ ապաշխարություն»:

Դատաստանագործն ավելի խիստ պատիժներ է սահմանել սանձարձակ, անզգամ կանանց նկատմամբ և պատժի նշանակման հարցում վկայակոչել մծղնեականների համար նախատեսված պատիժները: Իսկ մծղնեականները, ըստ Դավիթի, Պավլիկյաններն են, որոնք իրենց արտաքրանքները խառնել են կերակրին և խմիչքներին ու որպես դեղ օգտագործել: Նման դեղարարների ճակատին աղվեսադրոշն են դրել, կտրել ոտքի ջլերը և ուրկանց տարել, որպեսզի սպասավորեն նրանց և այդպես քավեն իրենց մեղքերը ու հետին թոշակին արժանանան:

Դատելով Դատաստանագործի հոդվածների սանկցիաներից, կարելի է նշել, որ Դավիթ Ալավկա որդին նախատեսել է պատժի հետևյալ տեսակները՝ Սուլը հաղորդությունից զրկում, պատարագելու իրավունքից զրկում, կնքահայր դառնալուց զրկում, հոգեզգավակ դառնալուց զրկում, կարգալույթ անել, աղվեսադրոշ դնել, ապաշխարու-

թյուն, ջլահատություն (ջլերի հատում), ուրկանց (բորոտանց) ուղարկել, բանադրանք (Եկեղեցական նզովք, անեծք), հետին թոշակից գրկում (գրկել Վերջին մխիթարությունից) կամ դրա հակառակը (արժանանալ Վերջին մխիթարությանը), վճասի հատուցում, նահապատիժ և այլն: Որոշ հոդվածներում նշվում է, որ հանցագործը պետք է պատժի: Մրանք այսպես կոչված անորոշ սանկցիաներ են, որոնք ֆեոդալական քրեական իրավունքին ընդհանրապես հատուկ պատժատեսակներ են եղել պատմական անցած ժամանակներում:

Աղվեսադրոշմի եռթյունը կայացել է նրանում, որ շիկացած ձողով խարանել են հանցավորի ճակատը, որով իսկ հասարակությունն առաջին հայացքից ճանաչել է նրան: Այդ պատիժը մինչև 1864 թվականը կիրառվել է նաև ցարական Ռուսաստանում՝ երրորդ անգամ գողություն կատարած անձանց, տաժանակիր աշխատանքի դատապարտված աքսորականների և Սիբիրից փախած բոլոր դատապարտյալների ու թափառաշրջիկների նկատմամբ:

Դայ մեծ վիպասան Շաֆֆու բացասական կերպարների գլուխգործոցի՝ քավոր Պետրոսի («Խաչագողի հիշատակարանը») ճակատին աղվեսադրոշմ էր դրվել, երբ նա մի ժամը հանցանքի համար աքսորվել էր Սիբիր, որտեղից փախչելով, այդ ամոթալի նշանը նա ամենայն զգուշությամբ միշտ ծածկում էր, որ չճանաչվի: Մարդկային կերպարանքով այդ խոշոր ավազակը, Մուրադի փախուստը դյուրացնելու համար, շիկացած երկարով անբողջ ճակատն այրել ու խարանել էր՝ փոխարենը թողնելով մի սարսափելի սպի:

Աղվեսադրոշմը և ջլահատությունը նախատեսված են եղել նաև Շահապիվանի կանոններով՝ որևէ աղանդին պատկանելու համար: Ջլահատության դեպքում նույնիսկ կտրել են մարդկանց սեռական անդամների ջլերը, որը յուրատեսակ և բարբարոսական պատիժ է՝ Ավետարանի և Եկեղեցու ոգուն ոչ յուրահատուկ:¹⁹

Բնականաբար, հարց կարող է ծագել, թե որո՞նք են եղել այն մարմինները և պաշտոնատար անձինք, ովքեր Դավթի Դատաստանագրքի դրույթների ուժով պատժիչ քաղաքականություն են իրականացրել: Դավիթն իր աշխատության մեջ միայն մեկ անգամ օգտագործում է «դատավկրներ և դատարաններ» («ի դատաւորս և յատեան») եզրութը, այն էլ՝ բացասական իմաստով: Զար առաջնորդների և քահանաների գործողությունների հետևանքով ծագած չարիքներից մեկն էլ Դավիթը համարում է դատավորների և դատարանների քաշքանկները (97-րդ հոդված): Մեկ այլ՝ 41-րդ հոդվածից կարելի է միայն ակնարկել, որ

խոսքը նաև աշխարհիկ դատավորներին է վերաբերում: Այդ հոդվածում սուտ վկայություն տվողները քրեական պատասխանատվության էին Ենթարկվում ու պատժվում սուտ երրում տվողների հետ համահավասար չափով: Յոդվածի լուրջ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սանկցիան կիրառող սուրբեկությունը երկրորդ անձը՝ «աշխարհականը», ոչ սովորական իմաստով է գործածվում: Ամենայն հավանականությամբ, Դավիթը դրա տակ նկատի է ունեցել աշխարհական դատավորին: Մյուս կողմից, հոդվածի առկայությունը վկայում է, որ նրանուն նախատեսված երկու հանցակազմները դատարանների համար անարդար դատական որոշումներ կատարելու հիմք են հանդիսացել: Դատարաններն ավատատիրական հասարակարգի կարևոր լծակներից մեկն են հանդիսացել: Սակայն այդ դարաշրջանում «Դատարան» հասկացությունն ավելի լայն, ծավալուն է եղել, քան ներկայումս, որովհետև այդ ժամանակ դատարանը որպես առանձին, ինքնուրույն մարմին դեռևս չէր ձևավորվել: Այն ընդամենը ավատատիրական ապարատի մի մասն էր:

Դատաստանագրքի մի շարք հոդվածներից (4-րդ, 8-րդ, 9-րդ, 21-րդ, 38-րդ և այլն) նկատելի է, որ պատիճները կիրառվել են հոգևորականների կողմից, որոշ հոդվածներում դրանք նշված չեն, բայց կարելի է Ենթադրել, որ խոսքը հոգևոր դատավորների մասին է, քանի որ հոդվածներում նշված պատիճները (49-րդ, 50-րդ, 52-րդ և այլն) կիրառվել են միայն հոգևորականների կողմից: Մի շարք հոդվածներ (41-րդ, 48-րդ, 54-րդ, 58-րդ) մեզ ուղղակիրուն հուշում են, որ երկրում գործել են նաև աշխարհիկ դատարաններ և նրանց ընդդատյա են եղել առաջին հերթին այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնց համար մահապատիժ է նախատեսվել:

Դատաստանագրքում պետական հանցագործություններ նախատեսող իրավանորմեր չկան: Դա հասկանալի պետք է համարել, որովհետև Բագրատունյաց թագավորության կործանումից հետո երկրամասի բնիկ տերերը կախված էին Գանձակի Էմիրությունից: Բայց դա բնավ չի նշանակում, որ XI-XII դարերում Արցախ-Ուտիք հայաշխարհում աշխարհիկ դատարաններ չեն եղել: Եթե հաշվի առնենք, որ երկրամասում գոյություն ունեին մանր թագավորություններ, իշխանական տներ և գործում էր Յայոց Եկեղեցու Աղվանից թեմը, ապա կարելի է արձանագրել, որ աշխարհիկ դատարանների համակարգը կազմված է եղել իշխանական, իշխանին աղընթեր, գավառական, համքարական և համայնքային դատարաններից: Հոգևոր դատարանները կազմված են

Եղել կաթողիկոսական, Եպիսկոպոսական, Վարդապետական և քահանայական դատարաններից: Ըստ Խ.Թորոսյանի՝ զարգացած ավտատիրության շրջանում Հայաստանում գոյություն են ունեցել նաև արտակարգ դատարաններ, որոնց աշխատանքներին նաև մասնակցել են նաև մահմեդական դատավորները (կադիները):²⁰

Դավիթ Ալավլա որդին երեմն վկայակոչում է այլ նորմեր՝ օգտագործելով «Սուրբ Վարդապետների կանոնական որոշումները», «Կանոնական իրանանը» եզրույթները: Դա միայն կարող է հուշել, որ բացի Դատաստանագրքից, դատարանները ղեկավարվել են նաև երկրամասում գործող հոգևոր բնույթի այլ կանոնական ակտերով:

Կարող է նաև հարց ծագել. Դավիթ Ալավլա որդին նախատեսե՞լ է, արդյոք, վերադասության կարգով դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը: Պատասխանը միանշանակ դրական է: Ստորադաս դատարանների դատական որոշումներից դժգոհ անձինք հնարավորություն են ունեցել դիմելու վերադաս դատական ատյաններին: Դատաստանագրքի 23-րդ, 24-րդ, 28-րդ, 29-րդ, 32-րդ, 33-րդ, 56-րդ, 79-րդ հոդվածներում խոսվում է վարդապետների իրավունքների և իշխանության մասին, որոնք իրավունք ունեին կրճատել կամ վերացնել քահանաների կողմից նշանակված պատիժը կամ բանադրել քահանաներին: Իսկ վարդապետները, ինչպես նշեցինք, բարձր գիտելիքներ և իշխանություն ունեցող անձնավորություններ են եղել:²¹ Վարդապետներն օժնված են եղել նաև դատական գործառույթներով: Շահապիվանի ԺՈ կանոնի համաձայն՝ դատավարությունը վարդապետի իրավունքն էր: Ըստ Դվինի Դ ժողովի (648թ.) կանոնների՝ Եպիսկոպոսից հետո երկրորդ պաշտոնատար անձը վարդապետն էր, որին վերապահված էր դատական գործառույթները: Այս կարգից շեղում կատարեց Պարտավի ժողովի ԻԱ (21) կանոնը, որը հանցավորի նկատմամբ բանադրանքի իրավունքը վերապահեց քորեպիսկոպոսին: Բոլոր դեպքերում, վարդապետը (քորեպիսկոպոսը) «պիտի լիներ զգաստ, անկաշառ, անարձաբաներ, նա պիտի շրջեր իրեն հանձնած վիճակը, որտեղ տեղի երեցների և սարկավագների նաևնակցությամբ պիտի քններ և արդարացի լուծում տար իրավախախտումներին և վեճերին»:²²

Աղբեջանի որոշ գիտմականներ հայ Ժողովորի պատմության մի մասը լկուի շահարկումներով «աղվանացնելով», նպատակ են հետապնդում «ապացուցել», որ հայերը, որպես պատմական ժողովորդ, Անդրկովկասում տեղ չեն ունեցել, թե իբր նրանք տարածաշրջան են թափանցել Պարսկաստանի և Թուրքիայի խորքերից, ոուս-պարսկա-

կան և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով։ Այդ հակագիտական տեսության նպատակը կայանում է նրանում, որպեսզի հիմնագույր միջոցներով «ապացուցեն», որ թուրք-ազերիներն անհիշելի ժամանակներից բնակվել են Անդրկովկասում, սակայն հայերը միշտ դրան խոչընդոտել են։ Նման «տեսությանք» ավելի շատ տարված է Ֆարիդա Մամեդովան, ով Դավիթ Ալավելի որդու աշխատությունը բացարձիկ աղվանական մշակույթի հուշարձան է համարում։²³

Ըստ Բունիաթովական դպրոցի ներկայացուցիչների՝ աղվանները (ալբանները), ատրոպատենները բուրքեր են եղել։ Յետո ներկայիս Ադրբեյջանի տարածքից նրանք գնացել են Միջին Ասիա, այնուհետև օղուզներ դարձած կրկին հետ են վերադարձել։ «Զարմանալ պետք չէ,- նշում է ադրբեյջանցի հետազոտող Զավիդ Ալան «Kultura.az» կայքում հրապարակված իր «Ադրբեյջանի կերծ պատմագիտությունը» հոդվածում, եթե մի օր շոտլանդացիներին ադրբեյջանցի անվանեն» (կելտերնում «ալբան» նշանակում է «շոտլանդ»-Վ.Ճ.):²⁴ Մենք, բնավ չենք զարմանում, բայց աշխարհագրական առումով Զավիդ աղան շատ է հեռու գնում, որովհետև սեփականը համարելու համար ավելի նոտիկ տարածքներ կան։ Ադրբեյջանի գիտնականները նույն հաջողությամբ կարող են Բալկանյան թերակղզու արևմտյան մասում գտնվող Ալբանիա պետությունն իրենցը համարել, մանավանդ, որ այդ երկրի բնակչության հիմնական մասը ճահիմեղականներ են։ Սակայն, իրողությունն այն է, որ աղվանները ոչ մի առնչություն չունեն թուրք-ազերիների հետ։ Վերջիններս տարածաշրջան են քափանցել ոչ վաղ անցյալում։

Ինչ վերաբերում է Դավիթ Ալավելի որդու ազգությանը և աշխատությանը, ապա կասկածից վեր է, որ նա ազգությամբ հայ է, աշխատությունը գրել է հայերեն լեզվով և հայ ժողովրդի համար։ Պարզապես Դավիթը եթե իմանար, որ իր աշխատությունը գրելուց մոտ 1000 տարի հետո, ադրբեյջանցի գիտնականները հետաքրքրվելու են իր ազգությամբ, ապա նա իր անձի վերաբերյալ բավարար տվյալներ կրողներ։ Սակայն ցանկացած ոք, փոքր ի շատ տեղյակ լինելով Դավիթ ապրած ժամանակաշրջանի պատմությանը և քննախույզ հայացքով ծանոթանալով նրա աշխատությանը, շատ հեշտ կարող է պատկերացում կազմել նրա ազգային պատկանելիության վերաբերյալ։ Այսպես, Կիրակոս պատմիզ հայտնում է, որ Դավիթ Ալավելի որդին «գեղեցիկ շարադրված ու օգտակար Կանոնական օրենսդրությունը» գրել է Արքայություն անունով մի քահանայի խնդրանքով։ Նույն միտքն են արտահայտել նաև Գրիչ Ստեփանոսը և Գրիչ Վարդանը։ Ակնհայտ է, որ «Արքայու-

թյուն» անվան արմատը մաքուր հայկական բառ է, և այդ անունը կրող միայն հայ կարող է լինել, այլ ոչ՝ ալբանացի: Բացի այդ, դեռևս ոչ մի աղվանագետի չի հաջողվել Դավթի աշխատության մեջ որևէ աղվանական բարի հետք գտնել: Դավիթը 12 անգամ օգտագործում է «քրիստոնյա» եզրույթը: Եթե նույնիսկ առաջ քաշվի այն վարկածը, որ Ալավկա որդին իր աշխատությունը գրել է քրիստոնյաների համար, ապա պետք է պատասխանել, թե հավատով քրիստոնյա ո՞ր ազգի համար: Դավթի ապրած ժամանակաշրջանում աղվանական ցեղերի գոյության մասին խոսելն ավելորդ է, քանի որ նրանք վաղուց (V- VIII դդ.) բողել էին ազգերի քաղաքական պատմության բատերաբենը՝ իրենց «Աղվանք» ընդհանրական տեղանունը դրոշմած բողնելով կուր գետի աջափնյակին, որն Ուտիթ-Արցախ հայաշխարին է: Պատմությունը, որևէ հետք կամ վկայություն չի թողել, որ կուր գետի աջափնյակում, հայերից բացի, հոծ խմբերով բնակված լինելին նաև այլ քրիստոնյաներ, մասնավորապես, վրացիներ, հույներ, հռոմեացիներ, ասորիներ և այլոք: Դավիթ Ալավկա որդին, կարծես թե կանխատեսելով այսօրվա իրավիճակը, գաղտնիքի բացահայտումը հենց ինքն է նախապատրաստել, որպեսզի ամեն ինչ իր տեղն ընկնի: Նա իր ազգային պատկանելիության և ծննդավայրի բանալին թողել է հենց իր աշխատության մեջ:

Դավիթը ոչ քրիստոնյաներին անվանում է «անհավատներ», «անաստվածներ», «հեթանոսներ», «պիղծ այլազգիներ», բացասական առումով մի քանի անգամ մատնանշում հրեաներին և քրդերին: Նա քրիստոնյաներին անվանում է «յուրայիններ», «ազգակիցներ»: Միշին դարերում անձի ազգությունը որոշվում էր ոչ թե էթնիկ, այլ՝ դավանական պատկանելիությամբ: Դավիթն արգելում է քրիստոնյաներին իրենց դուստրերին կնության տալ անհավատներին, անհավատների մանկանց կուրծք տալ և այլն: Սակայն հոգով և մտքով պետք է կույր լինել՝ չտեսնելու համար, որ քրիստոնյա սելով, Դավիթը նկատի է ունեցել հայ ժողովրդին: Այսպես, Դավիթն իր ժողովրդի ինքնատիպությունը, դավանական պատկանելիությունը պահելու, պահպանելու համար խիստ պատիժներ է սահմանում այն հայ կանանց նկատմամբ, որոնք կենակցում, շնանում, ամուսնանում են քրդի հետ, դառնում քուրո երեխայի ստնտու, սեփական երեխային վաճառում այլարավանին և այլն: Դավթի կանոնները, իբրև ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքներ, կտրականապես արգելում էին հայ մարդուն իր աղջկան կամավորությամբ այլազգու, այսինքն՝ մահմեղականին տալը: Այդպիսի ծնողները նզովկում էին ցմահ և մահանալիս նույնիսկ չէին

հաղորդվում (16-18-րդ հոդվածներ): Միևնույն ժամանակ, խոսելով գողին կախաղան հանելու մասին, Դավիթը հավասարապես է վերաբերվում նրա ազգությանը՝ «լինի քուրո, թե հայ» (հոդված 41-րդ): Միգուցե Մամեդովան չգիտի, որ աղանդավորական շարժումների պատմության մեջ իր հզորությամբ և նշանակությամբ աչքի ընկած Պավլիկյան շարժումը, որի վտանգավորության մասին Դավիթը խոսում է 53-րդ հոդվածում՝ զուտ հայկական ծագում ուներ: Կամ միգուցե նա չի ուզում ընդունել, որ Դավիթն «Աղվանից աշխարհ» հասկացության տակ նկատի է ունենում «լեռնային և դաշտային Աղվանքը» (97-րդ հոդված), այսինքն՝ լեռնային և դաշտային Արցախ-Ուտիք հայաշխարհը:

Բոլոր հետազոտողները միահամուռ են, որ Դավիթի աշխատությամբ առաջնորդվել են բազում տարիներ, մինչև անգամ Միսիթար Գոշի Դատաստանագրքի հրապարակ գալուց հետո: Եվ դա բացատրվում է նրանով, որ նրա ստեղծած գործը սերտորեն կապված է եղել ժամանակաշրջանի իրականության հետ, և կանոնները շարադրված են եղել դյուրմբոնելի ձևով: Նկատի ունենալով Դավիթի ժողովածուի գործնական կիրառական նշանակությունը, Մանուկ Աբեղյանն այդ աշխատությունը ևս դասում է հայկական դատաստանագրքերի թվին, համարելով այդ երկն իր տեսակով մի նոր բան մեր իհն գրականության մեջ, «և այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի»:²⁵

Այսպիսով, Բագրատունյաց թագավորության կործանումից հետո, XII դարի 1-ին կեսերին, քաղաքական տեսակետից Հայոց Արևելից կողմանըն ավելի անկախ էր, որն էլ թելադրում էր ազգային օրենսդրություն ունենալու անհրաժեշտությունը: Այդ գործն առաջին անգամ իր վրա վերցրեց Դավիթ Ալավկա որդին՝ ստեղծելով իրավական մտքի մի խոշոր հուշարձան, որը, չնայած ժամանակին պետական իշխանությունների կողմից պաշտոնապես հաստատված չի եղել, սակայն կիրառվել է հայ համայնքներում, ինչպես եկեղեցականների, այնպես էլ համայնքի պաշտոնյաների կողմից տարբեր բնույթի իրավական հարցեր կարգավորելու համար: Հենց միայն այն հանգամանքը, որ Դավիթ Ալավկա որդու նահից որոշ ժամանակ անց Ս.Գոշը ձեռնամուխ եղավ իր հռչակավոր Դատաստանագիրքը գրելուն, որի մի շարք կանոններ բառացիրեն քաղված են Դավիթ Դատաստանագրքից: ոչ միայն վկայում է, որ նա ձեռքի տակ ունեցել է Դավիթի գրվածքը, այլև այն, որ աշխատությունը պետք է գործածության մեջ լիներ հայոց աշխարհի տարբեր վայրերում, մասնավորապես, Արցախում և Ուտիքում:

ԳԼՈՒԽ 5
ՄԻԶԱՆԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ
ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ

Օրենքները մարդու համար են,
ոչ թէ մարդը՝ օրենքների համար:
Մխիթար Գոշ

Դայ իրավագիտությունը XII դարում աննախաղեա զարգացում ունեցավ: Եթե դարի առաջին կեսին դրա սկիզբը դրեց Դավիթ Ալավկա որդին՝ «Կանոնական օրինադրություն» ժողովածուով, ապա դարի վերջին, այն զարգացման անհամեմատ ավելի բարձր աստիճանի հասցրեց անվանի գիտնական, առակագիր, գորոյ և օրենսդիր Մխիթար Գոշը՝ հանրահայտ Դատաստանագիրը աշխատությամբ: Եվ եթե Ալավկա որդին աշխարհիկ օրենսդրության ստեղծնան անդրանիկ փորձը կատարեց, որում դեռևս մասամբ էր անդրադառնում աշխարհիկ կյանքի առաջադրած խնդիրներին, ապա Գոշն իր աշխատանքով այդ բնագավառում իրավիճակը լրիվությամբ փոխեց: Այդ առօնմով, Գոշի թողած ժառանգությունը համաշխարհային մտավոր մշակույթի, մասնավորապես, իրավական մտքի գանձարանի ամենահարուստ էջերից մեկը պետք է համարել:

Բնականաբար, հարց է ծագում՝ թե ի՞նչ իրականություն էր ներկայացնում Գոշի ապրած ժամանակը, որո՞նք են եղել քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային այն պայմանները, որոնցով թելադրված էր Դատաստանագրի ստեղծումը, այդ աշխատության դրույթները կիրառվել են, արդյոք, հայոց աշխարհում, մասնավորապես, նրա Արցախս նահանգում:

Պատմական իրողություն է, որ դարեր շարունակ հայերը և վրացիները, որպես դրկից և բախտակից ժողովուրդներ, ուս-ուսի տված, պայքարել են օտար բռնակալների դեմ՝ հուսալի պատվար հանդիսանալով մեկը մյուսի համար: XI դարի վերջերին Վրաստանին հաջողվեց թռափել սելչուկյան լուծը և վերականգնել իր անկախությունը: Հայրեան երկրի ազատագրական պայքարի կողմներին ակտիվ մասնակցություն ունեցան հայոց զորացուկատները՝ հայ զորավարների մասնակցությամբ: Դրանց մեջ ամենանշանավորը՝ Սարգիս Զաքարյանը, կարևոր դիրք գրավեց Վրաց արքունիքում՝ զբաղեցնելով ամիրսպասալարի (հայ և վրաց զորքերի գլխավոր հրամանատար) պաշտոնը: Բնական է, որ Վրաստանին ձեռնտու էր Հայաստանի ազատագրումը, որովհետև անկախ Հայաստանը միշտ էլ հուսալի վահան է եղել Վրաստանի հարավային սահմանների անվտանգությունն ապահովելու համար:

Օտարերկոյա զավթիչներից հայկական հողերի մաքրումը կատարվեց Սարգիս Զաքարյանի որդիների՝ Զաքարե ամիրսպասալարի և իվանե աթաբեկի (թագաժառանգի խնամակալ) անմիջական ղեկավարությամբ: Պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Ստեփանոս Օրբելյանը հաղորդում են, որ Զաքարյան Եղբայրներին հաջողվել է ազատագրել Գեղարքունյաց ծովը՝ շոջակա հողերով, Ամի քաղաքը, Կարսը, Այրարատը, Դվինը, Ամբերդը, Վայոց Չորը, Սյունյաց աշխարհը, Գարդմանը, Տավուշը, Շամքոր քաղաքը,¹ իսկ Յաղարծին վանքի պատի վրա թողած մի վիմագիր արձանագրության համաձայն՝ Զաքարյան Եղբայրներն ազատագրել են նաև Պարտավ և Բայլական քաղաքները²:

Եթե Զաքարյանների կողմից Արցախի հյուսիսային մասի հողերն ազատագրելու վերաբերյալ քիչ թե շատ տվյալներ են պահպանվել, ապա Արցախի հարավային մասի վերաբերյալ կարելի է ենթադրել, որ Երկրամասի բնիկ տերերը, օգտվելով հարմար պահից, ինքնուրույն են թոքափել օտարի լուծը: Այսպես, Յաթերքի տեր և Արցախի գահերեց իշխան Յասան Մեծը 1182 թվականին Դադի վանքի պատերից մեկի վրա թողած արձանագրության մեջ հայտնում է, որ նղել է շատ պատերազմներ և հաղթել իր թշնամիներին:³

Մինչև թաթար-մոնղոլական վաչկատուն ցեղերի՝ Անդրկովկասուն հայտնվելը (1220թ.), Զաքարյան Յայաստանը կյանքի բոլոր բնագավառներում մեծ վերելք ապրեց: Կառուցվեցին բազմաթիվ հոգևոր կենտրոններ՝ վանքեր, եկեղեցիներ, վերակենդանացան ավերված բնակավայրերը, զարկ տրվեց առևտորին, արհեստին, մշակույթին: Իշխանավորները գրականությունը վերցրին իրենց հովանավորության ներքո: Զաքարյաններն ազատագրված հողերին տիրում էին որպես նախնիների թողած ժառանգություն՝ իրենց տիրապետության ներքո գտնվող տարածքներն անվանելով «թագավորություն», «թագավորական տերություն»: Ստեղծվել էին արտաքին և ներքին բոլոր պայմանները հայկական թագավորությունը վերականգնելու համար: Զաքարյանների օրոք քաղաքական և մշակութային կյանքն Արցախում և նոր թափ առավ: Այստեղ Երկրամասի վարչական և հոգևոր ղեկը գտնվում էր Առանցահիկ իշխանական տոհմի ձեռքին, որի ներկայացուցիչները հանդես էին գալիս «ինքնակալ իշխանապետեր» տիտղոսներով: Նույն ժամանակահատվածում հայ ժողովրդին հաջողվեց նոր պետականություն ստեղծել հեռավոր Կիլիկիայում, որը գոյատևեց մինչև 1375 թվականը: Յայկական լեռնաշխարհի հակառակ ծայրանասերում երկու ազգային պետականությունների գոյությունը հրամայաբար թելադրում էր ազգային օրենսդրություն ունենալու անհրաժեշտությունը: Կիլի-

կիայի հայկական պետությունում այդ գործն իր վրա վերցրեց Ներսես Լամբրոնացին, իսկ Յայաստանի հյուսիս-արևելքում՝ Մխիթար Գոշը: Սակայն, պետք է նշել, որ Ն. Լամբրոնացին ընդամենը ասորական և հունական օրենքները թարգմանեց հայերեն՝ հայ աշխարհիկ օրենքների բացակայության պատճառով:

Մխալված չենք լինի, եթե ասենք, որ պատմական Յայաստանի հյուս-արևելյան կողմերում ազգային աշխարհիկ օրենսգրքի ստեղծումը հիմնականում պայմանավորված էր հայ-վրացական զինակցության միջոցով հայկական հողերի մեջ մասի ազատագրմամբ, նշված կողմերում դեռևս հայոց պետականության մնացողությունի պահպանմամբ և հոգևոր հզոր կենտրոնների (Ամարաս, Դադիվանք, Գանձասար, Յաղարծին, Յաղպատ և այլն) առկայությամբ: Եվ եթե Զաքարյան եղբայրները Յայաստանի մեջ մասը կարողացան մաքրել օտար զավթիչներից և նրանց սուրբ այմբան էր հատու, որ քիչ մնաց միասնական պետություն ստեղծելու նպատակով զինակցության եզրեր գտնեին Կիլիկիայի հայոց իշխանների հետ, ապա մտավոր մշակույթի բնագավառում Գոշի գրիչը նվազ հատու չէր Զաքարյանների սրից:

Իսկ ո՞վ էր Մխիթար Գոշը:

Այդ հոչակավոր գիտնականը, ով իր գիտելիքների շնորհիվ կյանքում 2 անգամ ստացել էր վարդապետի կոչում, ծնվել է հայաշատ Գանձակ քաղաքում, XII դարի 20-30-ական թվականներին: Չափահաս դառնալով՝ ծենադրվել է կուսակրոն քահանա: Աշակերտել է միջնադարյան հայտնի աստվածաբան Յովհաննես Տավուշեցուն և ուրիշ գիտնականների՝ ստանալով վարդապետի կոչում: Չքավարարվելով ծեռք բերած գիտելիքներով, Գոշն ուղևորվեց Կիլիկիայի Սև լեռան վանքներից մեկը և թաքցնելով վարդապետի աստիճան ունենալը՝ ուսանեց Երևելի գիտնականների մոտ, Վերստին վարդապետի աստիճան ստացավ: Վերադառնալով Արցախ աշխարհ, Գոշը զբաղվեց բեղուն ու արգասաբեր գործունեությամբ, և կարծ ժամանակամիջոցում նրա համբավը տարածվեց Անդրկովկասի ժողովուրդների մեջ: Սակավամազ (քոսակ) լինելու պատճառով նրան Գոշ են անվանել: Հայ քաղաքական և եկեղեցական ընտրանու շրջապատում Գոշը մեջ հեղինակություն և հարգանք է վայելել, իսկ Վերջիններս հովանավորել են նրա աշխատանքը: Յայկական աշխարհում ծագած պետական և եկեղեցական նշանակություն ունեցող լրջագույն հարցերում Գոշի կարծիքը որոշիչ էր: Երբ պատարագի համար շարժական սեղան ունենալու խնդրի առթիվ Զաքարի գորավարը եկեղեցականների ժողովը է գումարել Անի քաղաքում և Գոշը հիվանդության պատճառով բացակայել է, եկեղեցականները թախանձագին նրան բերել են և Զաքարեն, դիմավորելով նրան, ասել է, որ Վեր-

ջիմիս ավելի բարձր է դասում, քան եկեղեցականների համագումարը: Գոշի կարծիքը հաշվի են առել ինչպես Ալվանից Ստեփանոս կաթողիկոսը, այնպես էլ Ամենայն Յայոց կարողիկոս Գրիգոր Տղան: Նրա գրչին են պատկանում մատենագրության զանազան ճյուղերին վերաբերվող մոտ մեկ տասնյակ աշխատություններ, որոնք նշշտ էլ եղել են և կլինեն քանասերների, պատմաբանների, փիլիսոփանների, իրավաբանների, քաղաքագետների, լեզվաբանների ուշադրության և ուսումնասիրության առարկան:

Գոշը մահացել է 1213 թվականին: Ասել է թե՝ 2013 թվականին լրացավ Գոշի մահվան 800-ամյակը: Նրա մարմինը անկոփված է պատմական Արցախի Քուստի Փառնես գավառում՝ Գոշի կողմից հիմնադրված և Արցախի իշխանաց իշխան Վախրանցի ու նրա կին Արզու խարունի հովանավորությամբ կառուցված Նոր Գետիկ վանքի մոտ:⁴

Անգնահատելի է Գոշի թողած ժառանգությունը հայ մտավոր մշակութի պատմության մեջ, սակայն Գոշն անմահացավ իր գլուխգործոցով՝ Դատաստանագրքով: Այդ աշխատությունը ցանկացած ազգի իրավագիտական մտքի պարծաճքը կարող է համարվել: Միևնույն ժամանակ, այն Արցախի ժողովորդին լրացուցիչ հպարտություն է ներշնչում նաև նրա համար, որ աշխատությունը հիմնականում գրվել է մեր երկրամասում, մասնավորապես՝ Մարտակերտի շրջանի Յաթերք գյուղում, Արցախի իշխանաց իշխան Վախրանցի պաշտանքում: Դա եղել է 1184 թվականին: Թե ե՞րբ է Գոշն իր աշխատանքն ավարտին հասցրել՝ ուսումնասիրողները տարբեր կարծիքներ ունեն: Բայց կա մի հաստատուն կովան, որ ամենաուշը 1193 թվականին Գոշն այն ավարտուն տեսքի էր հասցրել: Այսպես, Գոշի՝ Յայոց կարողիկոս Գրիգոր Տղային (1173-1193թթ.) գրած նամակից երևում է, որ նա աշխատության մի օրինակն ուղարկել է կաթողիկոսին՝ նրա կարծիքն իմանալու համար («Աղաչեմ պարապմանք և մտադիր ընթերցմանք քննել զախտաժեշտ մտաց ինոց գերկսդ, զի և ես միշտ ընդ կարծիք ի խնդրողին զդատաստանացդ գիրը փութով և տառապանաւք գծեալ յանգեցի»)⁵:

Գոշի աշխատությունն առաջին անգամ բարեխնդորեն ուսումնասիրել և գրաբար լեզվով իրատարակել է հայ իրավունքի պատմագիտության հիմնադիր Վահան Բաստամյանցը, որի դիպուկ բնորոշմանը. «Միիթար Գոշի Դատաստանագիրքը մի հատիկ վարդ է մեր իրավաբանական մատենագրության չոր ու ցանաք պարտեզի մեջ»⁶:

Գոշի բոլոր ձեռագրերում աշխատության անունը գրված է՝ «Ի ձեռն գրոց դատաստանի», «Զգիրս դրոշմեցաք դատաստանի», «Գիրս դատաստանի», «Ի գիրս դատաստանի», «Զգիր դատաստանիս» և այլ եզ-

րույթներով: Որոշ ուսումնասիրողներ Գոշի աշխատության վերնագիրը նշում են «Հայոց Դատաստանագիրքը» անվանումով: Այսպես, Ա. Սութիասյանը՝ Գոշի մահվան 750-ամյակի առթիվ վերհանելով նրա երկի պատճական ու գիտական նշանակությունը, առաջադեմ հայացքները հայ պետականության, օրինականության պահպանման, կնոջ իրավահակասարության և նման այլ հարցերի վերաբերյալ, իր աշխատությունն անվանել է Մխիթար Գոշը և «Հայոց Դատաստանագիրքը»⁷:

Եիշտ է, Գոշն աշխատությունը գրել է հայ ժողովողի համար, բայց նա իր աշխատության վերնագրում «Հայոց» բառը չի օգտագործել, ուստի հարազատ ենք մնում միայն Դատաստանագիրը Եզրույթին:

Դատաստանագիրքն ունի բազում ծեռագրեր, որոնք ներկայումս պահպում են Վիեննայի, Վենետիկի, Փարիզի, Բեյրութի գրապահոցներում և Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում: Միայն Մաշտոցի անվան մատենադարանում ծեռագրերի թիվն անցնում է 40-ից:

Գիտության մեջ ընդունված է Գոշի Դատաստանագրքի ծեռագրերի թիվը բաժանել 3 խմբերի, որոնք պայմանականորեն նշանակվում են Ա, Բ և Գ խմբագրություն տառերով: Վերջինս Ա-ի և Բ-ի համարությունը կոչվում է համարվում: Եթե Վ. Քաստանյանցի կողմից առաջին անգամ հրատարակվել է Բ խմբագրությունը, ապա նրանից 95 տարի հետո, Խ. Թորոսյանի աշխատասիրությամբ, նրա «տաս տարվա չափազանց ծանր ու հոգնաջան աշխատանքի» շնորհիվ, ընթերցող հասարակության տրամադրության տակ դրվեց Դատաստանագրքի՝ իր՝ մեծ Մխիթարի կողմից գրված հեղինակային բնագիրը՝ Ա խմբագրությունը, ինչպես նաև Գ խմբագրությունը⁸:

Դատաստանագիրքը (Գ խմբագրություն) առաջին անգամ ժամանակակից հայերենի է փոխադրվել և խմբագրվել Մաքսիմ Ուսկանյանի կողմից⁹: Դատաստանագրքի՝ Խ. Թորոսյանի աշխատասիրությամբ հրատարակված Ա խմբագրությունից առաջին անգամ աշխարհաբար թարգմանությունը կատարել են Վ. Թանգամանյանը, Լ. Սարգսյանը և Հ. Հակոբյանը¹⁰:

Դատաստանագիրքը բաղկացած է երեք մասերից՝ «Նախադրությունից» (նախաբան), «Եկեղեցական կանոններից» և «Աշխարհական օրենքներից»: Նախադրությունում Գոշն առաջ է քաշում և պատասխանում Դատաստանագրքի ստեղծման, դատարանակազմության, դատավարության և իրավական բնույթ ունեցող բազմաթիվ այլ հարցերի: Նախադրությունը մի տեսակ «Դատաստանագիրք» է Գոշի Դատաստանագրքի մեջ, որտեղ Գոշը շարադրել է իր իրավական ընթոնումներն իրավունքի, աշխարհիկ օրենքների, կանոնական նորմերի, արդարու-

թյան, բնական իրավունքի, դատարանի տեղի ու դերի, ապացույցների տեսակների և այլ հարցերի վերաբերյալ:

Դատաստանագործի «Եկեղեցական կանոնները» ներառում է 124 հոդվածներ, որոնք վերաբերում են Եկեղեցական դատարանին Ենթակա հարաբերությունների կարգավորմանը, իսկ «Աշխարհական օրենքները» ընդգրկում է իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող հոդվածներ, որոնք ընդդատյա են աշխարհիկ դատարանի իրավասությանը: Փաստորեն, Գոշն իր սահմանած նյութական իրավունքի նորմերը կարգավորել են թե ըստ իրավունքի տարբեր ճյուղերի, այլ՝ հասարակական հարաբերությունների կարգավորման օբյեկտների:

Նախադրության Բ գլխում Գոշը Դատաստանագիրը գրելու անհրաժեշտությունը բացատրում է տասներկու պատճառներով: Նշենք դրանցից մի քանիսը:

«Առաջին, մեզ բազմիցս պարսավել են թե՝ այլադավանները, և թե՝ այլ քրիստոնյաները, որ մենք գրավոր դատաստան-դատաստանագիրը չունենք:

Երկրորդ, քանի որ չարությունը մեր մեջ մարեց բնական օրենքը, հոգու կատարելիությունն անկատարելիության փոխեց, սերն ու կարեկանքը՝ ատելության:

Երրորդ, ծովության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակ են օրենքներին, հետևապես նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի տեղին համարեցինք օրենսգրքով նրանց արթնացնել քնից:

Չորրորդ, Մովսիսական օրենքը, մարդաբների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն տրված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր են և փոփոխվում են ըստ ժամանակի և ըստ երկրի: Նշված օրենքներն այդ հանգամանքը հաշվի չեն առել: Յետևաբար, այնպիսի դատաստանագիրը է պետք, որը կարտահայտի այդ փոփոխությունները:

Դիմքերորդ, առաջ սուլը հոգին ասել է, թե քրիստոնեական կրոնը, մերգործում էր և նպաստում ճշմարիտ դատաստան կատարելուն, կրոնը հենց օրենք էր՝ գրված մարդկանց սրտի մեջ, ուստի գրավոր օրենքի կարիքը չկար: Այժմ սուլը հոգին այլևս այն ազդեցությունը չունի մարդկանց վրա, «վրիպել ենք» քրիստոնեական եղբայրասիրությունից, ուղղամտությունից և այլն, այժմ անհրաժեշտություն կա գրելու այդ ամենի աղավաղվելու պատճառով:

Վեցերորդ, դատական գործերը վճռվում են նաև երդմամբ, բայց աճել է չարությունը մարդկանց մեջ, և նրանք, չնայած, որ երդումն արգելել է Աստված, տեղի ու անտեղի երդվում են ու հաճախ սուտ:

Խախտված այս կարգը կանոնավորելու նպատակով է նաև, որ գրվում է դատաստանագիրքը:

Յոթերորդ, դատաստանագիրքը գրվում է, որպեսզի քրիստոնյաները (հայերը- Վ.Ն) այն չունենալու պատճառով չդիմեն այլազգիներին, ասել է թե՝ մահմեղական դատարաններին:

Ութերորդ և ամենակարևոր պատճառներից մեկը՝ ներկայումս տեսնում ենք, որ եպիսկոպոսներից, վարդապետներից, քահանաներից և աշխարհական մեծերից շատերն աշառությամբ, կաշառքով, տգիտությամբ խեղաթյուրում են ճշմարիտ օրենքը: Այդ պատճառով էլ հոժանեցինք գտել այս դատաստանագիրքը»:

Այն, որ ազգային Դատաստանագիրք չունենալու համար օտարները պարսավում էին հայերին, վկայում է նաև Կիլիկիայի հայկական պետության թագավոր Լևոն Բ Մեծագործի արքունիքի ատենադպիր, խորհրդատու և դեսպան Ներսես Լամբրոնացին: Սակայն, եթե Լամբրոնացու՝ օտար աղբյուրներից թարգմանած օրենքները չեն բխում հայ ժողովրդի թարքերից և սովորությներից, որոնց պատճառով մեռելածին հանդիսացան, ապա Գոշի Դատաստանագիրքը հաստատուն քայլերով մտավ կյանք, բողեց իր մշտական հետքը և միշտ էլ մնաց արդիական: Դատաստանագիրքը գրվեց մի այնպիսի ժամանակահատվածում, երբ հայկական սուրբն ու գրիչը գործում էին միաժամանակ՝ նպատակ ունենալով ազգային ազատագրական շարժման միջոցով վերականգնել հայոց պետականությունը:

Հետազոտողների մի մասն այն տեսակետն է պնդում, որ Գոշի Դատաստանագիրքը գործնական կիրառություն չի ունեցել: Նրանք իրենց վարկածը հիմնավորում են նրանով, որ դա մասնավոր անձի ձեռնարկություն է, չի բխել ու հաստատվել ազգային իշխանությունների կողմից և պարտավորիչ ուժ չի ունեցել: (Ա.Ղլտճան, Ն.Մելիք-Թանգյան և այլք): Այսպես, «Դայոց Եկեղեցական իրավունքը» երկիատոր հիմնարար աշխատության հեղինակ Ներսես Վրդ. Մելիք-Թանգյանը, ով իր մեծածավալ երկերում Գոշի աշխատությանը հատկացրել է ընդամենը երկու թերթ, եզրակացրել է, որ Գոշի գիրքը կարող է ծառայել «իբրեւ հնապատճական կողմնակի աղբիւր համեմատական արժեքով»:¹¹

Դայ գիտնականներից առաջինը Խ. Թորոսյանն էր, ով գիտականութեն հիմնավորեց, որ Դատաստանագիրքը գործնականորեն կարող էր կիրառվել և կիրառվել է միջնադարյան Դայաստանում:¹² Այս հարցում Խ.Թորոսյանի ուսումնասիրություններն ու եզրակացությունները ցայսօր որևէ մեկի կողմից չեն վիճարկվել կամ հերթվել: Դատաստանագրքի ձեռագրերի բազմազանությունը և բովանդակային առումով միմ-

յանցից տարբերվելը, կարող է միայն վկայել այն մասին, որ դրանցից յուրաքանչյուրն ունեցել է կիրառնան իր շրջանակները, ժամանակը և տարածքը:

Աշխատությունը գրելիս, Գոշը շատ լավ է հասկացել, որ հավաքական ուժերով կատարված մտքի աշխատանքի արդյունքն ավելի կատարյալ է լինում և պարտավորիչ ուժ է ունենում: Այդ կապակցությամբ նա Դատաստանագրքի Նախադրության ժամանակում շեշտում է. «Եվ քանզի արժանավայել էր, որ շատերի հետ քննելով այս բաները ձեռնարկեինք, ինչը բաղձանքով խնդրում էի, սակայն բազում պատճառներով դա չկայացավ: Քանզի եթե դատելու ժամանակ երկու կամ երեք դատավորների միասին լինելը օրենք համարեցինք, ապա այստեղ որչափ տեղին կլիներ, որ շատերը միասին քննեին իրավական խնդիրները և նոր միայն արձանագրեին»:¹³

Խոսելով Գոշի Դատաստանագրքի կիրառնան մասին, Խ.Թորոսյանը միանգամայն ճիշտ է ընդգծել, որ եթե այսօրվա իրավաընթացումներով ընկալենք, որ պետական իշխանության համապատասխան մարմնի կողմից չհաստատված նորմատիվ ակտը չի կարող իրավական հետևանքներ առաջացնել և այն տարածենք Գոշի ժամանակաշրջանի վրա, ապա շատ ծիծաղելի կլինի: Իրավունքի պատմությունը մեզ հուշում է, որ, նախ, շատ տարբեր են միջնադարի և մեր իրավաընթացումները: Միջնադարում հայտնի իրավագետները շատ մեծ հեղինակություն են ունեցել: Նրանք գործում մասնակցություն ունեին իրավաստեղծման բնագավառում և դրանով իսկ իրավունքի աղբյուր էին: Օրինակների թիվը հունահռոմեական դարաշրջանում բազմաթիվ են, երբ դատական ատյաններում կիրառվում էին մասնավոր անձանց կողմից կազմված և լիազոր իշխանությունների կողմից չհաստատված օրենսգրքեր և կանոնագրքեր: Մինչև Հովհան Օձնեցու կողմից կազմված Հայոց Կանոնագիրքը Հայաստանում կիրավել են բազմաթիվ օտարերկրյա ժողովածուներ, որոնք չեն բխել Հայաստանի լիազոր իշխանություններից:

Գոշի Դատաստանագրքը, որի անքակտելի մասն են կազմում Աստվածաշնչի և Հայոց Կանոնագրքի անառարկելի և անքնադատելի բազմաթիվ դրույթներ, իր ժամանակի ծնունդն էր, իսկ ժամանակն այնպիսինն էր, որ մաղկանց վրա իշխում էր կրոնական գաղափարախոսությունը: Գոշը՝ պատկանելով հոգևորականության բարձր խավին, մի շարք հարցերում չվախեցավ Վեր կանգնել կրոնական դավանանքում ընդունված ծշմարտություններից և ժողովրդի հիշողության մեջ նշտապես մնալ իր հոչակավոր Դատաստանագրքով: Այդ երկու նա մի հզոր գենք տվեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ղեկավարներին,

որոնք զգում էին նման աշխատության կարիքը:

Գիտությանը հայտնի Դատաստանագրքի բազմաթիվ ձեռագրերը, որոնք գտնվում են Երևանի և արտասահմանյան նատեմադարաններում, նույնպես ապացույց են հանդիսանում, որ Գոշի աշխատանքը բազմացվել է ոչ թե ընթերցանության, այլ գործնական կիրառության համար: Իսկ Դատաստանագրքի գործածությունը, ամենից առաջ, դատական գործածություն է նշանակում:

Հայտնի է, որ Կիլիկիայի հայկական պետության պաշտոնական Օրենսգիրքը՝ 1265 թվականին Սմբատ Սպարապետի կողմից կազմված Դատաստանագիրքը, այլ բան չէր, քան Գոշի Դատաստանագիրքը որոշ փոփոխություններով ու լրացումներով, որ կատարել էր Սմբատը տեղի պայմաններին համապատասխան: Դա ևս հզոր կրվան է, որ Գոշի աշխատանքն ընդունված է եղել հայաշատ բոլոր բնակավայրերում:

Պատմությունը մեզ հուշում է, որ Բագրատունյաց թագավորության կործանումով, հայ ժողովրդի մի մասը ցրվեց աշխարհով մեկ (Վրաստան, Ղրիմ, Ուկրաինա, Լեհաստան և այլն): Լեհահայոց գաղութը, որպես գաղութ, XIV-XVII դարերում ունեցել է ինքնավարության կատարյալ կարգավիճակ, իր գաղութային բոլոր չափորոշչներով՝ եկեղեցի, դպրոց, կրթական տարբեր օջախներ: Երբ հերթը հասավ հատուկ դատարան և օրենքներ ունենալու խնդրին, գաղութը ներկայացրեց իր ազգային օրենքները, որոնք այլ բան չէին, քան Գոշի Դատաստանագիրքը՝ համապատասխան փոփոխություններով: Դա ևս մի վկայություն է, որ Մայր հայունիքում Գոշի Դատաստանագիրքն այնքան խորն է եղել արմատացած և ընդունված, որ լեհահայ գաղութն այն ընդունել է որպես իրեն հարազատ և միակ կիրառելի իրավական փաստաթուղթ:

Դատաստանագրքի Նախադրության Բ և Գ գլուխների համաձայն՝ Գոշն այն գրել է Աղվանից Տեր-Ստեփանոս կաթողիկոսի խնդրանքով. «Յանդիպեցինք և Տեր-Ստեփանոսին, որ Աղվանից կաթողիկոսն էր և նույն բաների հիշատակումը նրա առջև արեցինք: Եվ նա հորդորեց մեզ՝ ասելով, թե այդ գործը գլուխ բերելուն ինքն էլ է փափագում»:¹⁴ Սակայն Գոշը դրանով չի բավարարվել: Նա իր մտադրության նասին գրավոր հայտնել է Հայոց կաթողիկոսին, վերջինս քաջալերել է՝ սկսել աշխատանքը: Իսկ ավարտելուց հետո, ինչպես արդեն նշեցինք, կաթողիկոսին գրած նամակում Գոշը նաև շեշտել է, որ եթե կաթողիկոսը հավանություն չտա իր աշխատանքին՝ այդի ուղարկված օրինակը և ինքն էլ նույն կերպ կվարվի իր մոտ գտնվող օրինակի հետ: Բացի դրանից, նամակի վերջում Գոշը հայտնել է, որ արևելյան վարդապետները կարդացել են ու հավանություն տվել Դատաստանագրքին

(«մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ընկալամ»): Սակայն կաթողիկոսը չի այրել իրեն ուղարկված օրինակը, իսկ Գոշի մոտ գտնվող օրինակն էլ բազմացվել և տարածվել է աշխարհով մեկ:

Նման պայմաններում, Դայոց կաթողիկոսի կողմից հավանության արժանացած օրինակը հավասարազոր է ազգային բարձր իշխանության կողմից քննարկված և հաստատված լինելու իրողությանը:

Դայ առաքելական եկեղեցու մեծահոչակ վարդապետ Գրիգոր Տարեացին (1346-1409թ.) դատավոր դառնալու առաջին պայմանը Դատաստանագրքի և գործող այլ օրենքների իմացությունն է համարել: Նա, Մեծոփա վանքում բարձր կարգի դարոց բացելուց և շուրջ մեկ տարի ու կես դասավանդելուց հետո, դպրոցի բարունապետն է նշանակում իր ընկերոջը՝ Գրիգոր Խարթեցուն: Եվ երբ Ղազար անունով մեկը դիմում է Խարթեցուն՝ պարզելու, թե ինչու մեր ազգին պատկանող որոշ մարդիկ մեր սովորույթներից հեռանում և դիմում են մահմեդական օրենքներին, որոշ հարցերում դեկավարվում նրանցով, օրինակ, ամուսնության և ամուսնալուծության հարցերում դիմում են ոչ թե եկեղեցուն, այլ «Դարի (մահմեդական դատավոր-Վ.Դ.) անվանին և քեպին յիշեն», Խարթեցին պատասխանում է. «Այն մարդն, որ մեր օրինացս հաւան չկենայ, նա զանեթքն զՅուղային, զԿայէնին և զՅուլիանոսին ընկալցի: Մեր օրենքս այս է, թե հարսին զարդերքն ու բաժինքն է, թե փեսային, թե տղայ եղեալ է ի միջին՝ այն ամենայն տղայինն է: Եւ թե տղայ չէ եղեալ ի մեջ՝ ուրան է, զայն զնացելոյ հոգին հոգան: Եթե այլ մնայ. փեսա ի հօրե տուածն յիւր տէրն դառնայ: Ապա կերածնս մաշաճն չգայ յիշումն մէր: Ալաջնորդաց հրամանքն այս է»:¹⁵ Դժվար չէ կրահել, որ Խարթեցին նամակի պատասխանում վկայակոչում է Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները:¹⁶ Եվ այս փաստը կարող է վկայել, որ պետականության բացակայության պայմաններում հայերն իրենց ազգային իրավունքը ոչ միայն կարողացել են հակադրել շարիաթին, այլև, փաստորեն, իրականացրել են Դատաստանագրքի նախադրության թ գլխի դրույթները, որոնց համաձայն՝ Թրիստոսի հավատացյալներին չի պատշաճում դիմել մահմեդականների ատյան՝ երկու հավատների միջև մեծ խզում լինելու պատճառաբանությամբ («Նրանք (մահմեդականները) դատը վարում են ըստ իրենց կրոնի...: Սուտ վկաներով և կեղծավոր ատյանով, ճարտար գրպարտողներով և անզիջում երդմանք են դատում...: Եթե նրանց վարքն այսքան օտար է մեզ և հավատն այսքան թյուր, ինչպես նրանց դատաստանն ուղիղ կլինի մեր կրոնի տեսակետից»):¹⁷

Բացի վերոնշյալից, կան նաև ծանրակշիռ այլ փաստեր, որ Դատա-

տանագիրքն օգտագործվել է ոչ միայն միջնադարում, այլ նաև՝ ոչ հեռու անցյալում: Այսպես, Յնդկաստանի Կալկաթա քաղաքում, 1930-ական թվականներին մահացած հայ հարուստներից մեկը, կտուկի մեջ շեշտել էր, որ ժառանգությունը բաժանվի Գոշի Դատաստանագրքի դրույթներին համապատասխան: Յնդկաստանի անզիական իշխանությունները հարգել են կտուկարարի կամքը և վերջինիս ժառանգությունը բաժանվել է Յալեպից ուղարկված Գոշի Դատաստանագրքի համաձայն: Սուրանի հայկական գաղութի վարչական ժողովի առաջին նախագահ Սարգիս Իզմիրյանի (պաշտոնավարել է 1917-1949թ.) ջանքերով գաղութը ճանաչվել է ախտության կողմից և ստացել մի արտօնություն ևս, որով հայկական համայնքի անդամների՝ ժառանգական իրավունքի բնագավառի գործերը քննելիս, Սուրանի դատարանները դեկավարվել են Գոշի Դատաստանագրքով:¹⁸ Դատաստանագրքի ժառանգական իրավունքի վերաբերյալ նորմները ներկայումս ել կիրառվում են Իրանի Խոլանական Յանրապետության հայկական գաղթօջախում: Ստույգ տվյալներ կան, որ Գոշի Դատաստանագրքը կիրառվել է Վրաստանում և Ուստաստամի հարավային շրջաններում:

Այժմ Արցախում Գոշի Դատաստանագրքի կիրառության մասին: Դատաստանագրքի Նախարարությունը ձեռնարկել է Աղվանից կաթողիկոս Տեր-Ստեփանոսի (1155-1195թ.) հորդորանքով («...աղաջում եմ, ո՞վ Սղվանից սուրբ Եկեղեցիների պատվական ղեկավար, սին և ոյուրին մի համարիր հոգևոր պարտականությունը, որ դրիր ինձ վրա»): Տարակուսելի չափությունը է համարել, որ Գոշը հանձնարարությունը ստացել է Տեր-Ստեփանոս կաթողիկոսից: Աղվանից կաթողիկոսական աթոռը հայոց հոգևոր իշխանության մի թեմն է հանդիսացել և Գոշի ապրած տարիներին նրա հոգևոր կենտրոնը գտնվում էր Գանձակում: Ուստի բնական պետք է համարել, որ ազգային օրենսգիրք ունենալու կապակցությամբ Գոշն Աղվանից տան հոգևոր առաջնորդից բավական դժվարին մի առաջադրանք է ստացել: Փաստորեն, այդ հարցում Տեր-Ստեփանոս կաթողիկոսը հանդես է եկել Յայոց Արևելից կողմանքի և հոգևոր դասի, և ժողովրդի անունից, որի բնակչները հիմնականում հայեր են եղել և, մասնակիորեն՝ վաղուց հայացած աղվաններ: Կասկածի տեղիք չի տալիս, որ կաթողիկոսը հույս է ունեցել՝ ստանալու իր ցանկացած աշխատությունը: Ազներս է, որ մի այդպիսի խոշոր գործ ձեռնարկելու համար Գոշը նախապատրաստական մեծ աշխատանք է կատարել՝ ծանոթացել հայ, հարևան և հեռավոր երկրների ժողովուրդների ազգային օրենսդրությանը, հայթայթել համապատասխան նյութեր, դրանք համակարգել և այլն: Պատմական փաստերը վկայում են, որ Գոշը՝ Գան-

ծակի մահմեղական տերերից հալածված և չստանալով իր համար նախընտրելի ձևով գրելու աշխատությունը, Գանձակում նստող Աղվանից կարողիկոս Տեր-Ստեփանոսի խարդավանքներից զգված, 1184 թվականին ապաստանել է Յաթերքում, Արցախի իշխանաց իշխան Վախթանգի մոտ: Այդ մասին Գոշն իր աշխատության մեջ հստակորեն արձանագրել է. «Մեր այս գործը ձեռնարկեցինք հայոց ՈԼԳ թվականին (633թ.), հանելով սրանից մի շրջան՝ ՏԱ (101թ.), որ կոչվում է Փոքր, իսկ ըստ հռոմեական տարեցույցի՝ ՆԵ (405թ.), մեր թագավորական իշխանության տարիներին, երբ վաղնջական ժամանակներից միայն մի քանի իշխանություններ էին մնացել Խաչենի կողմերում, Վախթանգ կրոնավորի որդի Յասսանի և սրա որդի Վախթանգի ժամանակներում, Յաթերք կոչվող դյուակում, Կիլիկիո կողմերի մեջ իշխան և այլ իշխանների գլուխ Ռուբենի ժամանակներում, այն տարում, երբ մեռավ վրաց հաղթական թագավոր Գեորգին, Անենայն Յայոց կարողիկոս Գրիգորի հայրապետության և Առան աշխարհում Տեր-Ստեփանոսի Աղվանից տաճ Եպիսկոպոսապետության ժամանակ. Դասնա անվանյալ Եղբայրական մենաստանում: Իսկ սկսեցինք Յորոնմաշեն կոչվող լեռնակողմի մենաստանում....»:¹⁹

Գոշը մեզ հուշում է, որ Դատաստանագիրքը գրելու պահին, հայոց երբեմնի հզոր պետականությունից ընդամենը մնացել էին կենսունակ երկու բեկորներ, մեկը՝ Արևելյան Յայաստանում, մյուսը՝ Կիլիկիայում: Արցախը կամ Խաչենը՝ Արևելյան Յայաստանի ամենանշանավոր Վարչապահական միավորներից մեկն էր, որի տերը՝ իշխանաց իշխան Վախթանգը, Միհիթարի հովանավորն ու բարեկամն էր: Պատմությունը մեզ շատ քիչ տեղեկություններ է բռնել Վախթանգ գահերեց իշխանի և հարևան երկրների հարաբերությունների մասին: Բայց Եղածներն էլ վկայում են, որ մեր երկրամասի իշխանաց իշխանն անկախ դիրք է գրավել միջապետական հարաբերություններում: Ըստ վրաց տարեգրի՝ իրենց թագավոր Դավիթը հոչակավոր մի նժույգ է գնել Յաթերքի իշխանաց իշխան Վախթանգից՝ Գարդմանի կողմում դիմացը վճարելով մի բերդ և մի ավան:²⁰ Չպետք է մոռանալ, որ Միհիթարի հովանավորն այն հոչակավոր իշխան Վախթանգն էր, որին վրացիները (արխագները) թագավոր էին անվանում: Եթե հաշվի առնենք, որ Գոշի կողմից մատնանշված Դասնո կամ Յորոնմաշեն վանքային համալիրը գտնվում է Արցախի հյուսիսային մասում,²¹ ապա կարող ենք ասել, որ Դատաստանագիրքը հիմնականում գրվել է մեր երկրամասուն և Գոշը երկար ժամանակ է մնացել Արցախում: Դատաստանագրքի մի օրինակի վրա՝ նվիրված Վախթանգին և Արզու խաթունին, կատարվել է հետևյալ մա-

կագրությունը. «Յիսուս Քրիստոս, յորժամ զաս ի նորոգել զերկիր, նորոգեա հոգուով և նարմնով զաստվածաէր իշխանն իշխանաց զվախտանգ և զամուսին իւր զվազու խաթուն ի կեանս անմահս»: Պահպանվել է նաև Գոշի Դատաստանագործի՝ Վախթանգին և Արզու խաթունին նվիրված մի այլ օրինակ (Վենետիկի Միսիթարյան միաբանության մատենադարանի N1237 ձեռագիրը)՝ հեղինակի հետևյալ ընծայագրով. «Տէր Աստուած վայելել տացէ աստուածատր և բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ՝ որդուոյ Հասանա, ի կամս իւր զգիրքս դատաստանի անսխալ ուղղութեամք վարել զպատվիրան սորին»:²²

Դատաստանագործի՝ Գոշի նակագրությունը մեզ հրոշում է, որ հեղինակն իշխանաց իշխանին նվիրում է ոչ թե այն ընթերցելու, այլ նրա պատվիրանները կատարելու, այլ խոսքով ասած՝ օգտագործելու համար: Միևնույն ժամանակ, նակագրությունը մեզ նաև հրոշում է, որ իշխանաց իշխանն ամենայն հավանականությամբ քաջածանոր է եղել Դատաստանագործի դրույթներին և ավարտելուց հետո՝ կիրառելու նպատակով այն արժանացել է նրա հավանությանը:

Խուսելով Դատաստանագիրքը գրելու հանձնարարության մասին, Մ.Գոշը, որպես ութերորդ պատճառ նշել է, որ «... աշխարհական մեծերից շատերն աշառությամբ, կաշառքով, տգիտությամբ բազմիցս խեղաքյուրում են ճշմարիտ օրենքը»: Իսկ Գոշի Դատաստանագործի մի շարք նորմեր (20, 31, 50, 230, 240, 251 և այլն) հասցեագրված են հենց իշխանին կամ իշխանական դատարանին: Մեջբերենք դրանցից մի քանիսը.

«Իշխաններն իրավունք չունեն առանց թագավորի իրամանի սպանել սպանողներին, բայց գողին պատժելն իշխանների իրավունքն է»: «Ազնվականն առանց իշխանի իրամանի իրավունք չունի գողերին պատժելու»:

«Ավարկած արծաթն իշխաններին լինի, պղինձը, երկաթը և այլն՝ զորքին»:

«Իշխանաց իշխանն իրավունք ունի պատժել և (կամ) աքսորել ազնվականներին»:

«Ազատներն իշխանություն չունեն զինվորներին պատժելու, պատժելը իշխանների իրավասությունն է»:

«Խարդախներին և որան սարքողներին պատիժ է տրվում ըստ իշխանների իրամանների» և այլն:

Դատաստանագործի բազմաթիվ իրավական նորմեր կարգավորում են թագավորի, իշխանաց իշխանի և իշխանների միջև ծագած հարաբերությունները:

Մաշտոցի անվան Մատենադարանում N 2776 համարի տակ գտն-

վող XVI դարի ձեռագիրը, որը նորոգվել է Դադիվանքի վարդապետ Յ. Ծարեցու կողմից, իրենից ներկայացնում է Գոշի Դատաստանագրքի հիմավուրց օրինակներից մեկը:²³

Վերոնշյալ համոզիչ փաստերից կարելի է միայն եզրակացնել, որ Գոշի Դատաստանագիրը, ստեղծման ժամանակից սկսած, կիրառության մեջ է եղել Արցախ աշխարհում, որտեղ, որպես բարձրագույն դատական առյամ, հանդես է եկել իշխանի կամ իշխանական դատարանը: Իշխանաց իշխան Վախթանգի հաջորդների վարչաքաղաքական գործունեության վերլուծությունը մեզ բերում է այն համոզման, որ Դատաստանագիրըն Արցախում կիրառվել է նաև XIII և որուն հաջորդած դարերում: Այսպես, Վախթանգի մահից հետո Արցախի իշխանական աթոռը գրադեցրել է Հասան-Զալալ Դոլան (1216-1261թթ.)՝ սկիզբ դնելով Հասան-Զալալյան տոհմին: Այդ այն Հասան-Զալալն էր, որի օրոք կառուցվեց և իր ավարտին հասցվեց Գանձասարի հոչակավոր վանքը (1216-1240թթ.): Գերազանց իրավունքներով օժտված և հայրենանվեր գործունեությամբ գրադվոր Հասան-Զալալը չէր կարող աչքարող անել իր պապերի հայրենիքում գոված Դատաստանագրքի պատվիրանները:

Վերոնշյալ հանգանանքները ևս ամուր կռվաններ են և կարող են վկայել, որ Արցախում Գոշի Դատաստանագիրը կիրառվել է Հասան-Զալալի և նրա հաջորդների իշխանության տարիներին:

Բունիաթուվական դպրոցի ներկայացուցիչներին հանգիստ չի տալիս Գոշի՝ ազգությամբ և մտածողությամբ հայ լինելը և, իր մտավոր ժառանգությամբ՝ հայ ժողովրդին պատկանելը: Նրանք իրենց կաշվից դուրս են գալիս՝ «ապացուցելու» անհրականը, թե իբր Գոշն աղվանական մշակույթի նշանավոր գործից է եղել և Դատաստանագիրը գրել է աղվան ժողովրդի համար: Եվ ի՞նչ փաստեր են բերում. որ Գոշն իր աշխատություններում որևէ կերպ չի նշել ազգությամբ իր հայ լինելու և հայերի համար գրելու նասին: Եթե մեր հարևանները ցանկանում են պարզել Գոշի ազգային պատկանելիությունը, թող ուշադիր կարդան նրա աշխատության նախադրության Ա գլխի վերնագիրը՝ «Պատասխան նրանց, ովքեր չարախսում են, թե հայերի մեջ օրենք չկա»: Դժվար չէ համոզվել, որ Դատաստանագրքի մեջ օգտագործվող «հայկազուն», «մեր Աբգար թագավորը», «հայկական Ստօր թվականները», «Խաչենի իշխանաց իշխան Վախթանգը» եզրույթները պատմության թատերաբեմից վաղուց անհետացած աղվան ժողովրդի հետ որևէ առնչություն չունեն: Վերջապես, եթե մեր հարևաններն ուշադիր կարդան Գոշի ժամանակակից պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» աշխատությունը, որում նա չորս գլուխ է հատկացրել Գոշի անձին և կատարած գործին, ապա ցանկու-

թյան դեպքում հեշտությամբ կհամոզվեն, որ Գոշը հայ էր և ծագումով, և ազգությամբ, և դավանանքով, և թե գործունեությամբ ու նտաշողությամբ, և դրա արդյունքը հանդիսացող մտավոր ժառանգությամբ:

Դայ ժողովուրդը երախտապարտ է եղել իր զավակին: Գոշի նասին բազմաթիվ պատմություններ են հյուսվել, որոնցում նա սրբացվել է, նրա դամբարանը՝ դարձել ուխտատեղի: Դամբարանի հուշաքարին գրված է «Դիշեցեք հայ դպրության ամիսնց նվիրյալին»: Գոշի արձանը կանգնեցված է Մաշտոցի անվան Մատենադարանի առջև, Արտաշատի տառերի պուրակում, Դայոց այրուենի հուշարձանի մոտ նույնպես գտնվում է Գոշի արձանը, ծեռքում՝ Դատաստանագիրը: Տավուշի մարզում Գոշի անվանը կա գյուղ և վանք, 2013 թվականի օգոստոսի 13-ին Գոշավանքի բակում տեղի ունեցավ միջնադարի հանճարեղ մտածողի բրոնզաձույլ արձանի հանդիսավոր բացումը: Երևանում նրա անվանը գործում է հայ-ռուսական միջազգային համալսարան: Դայաստանի Դանրապետության 1993 թվականի հուլիսի 26-ի՝ «Պետական պարգևների մասին» օրենքով սահմանված է նաև «Մխիթար Գոշ» մեդալը, որը շնորհվում է ակնառու պետական և հասարակական-քաղաքական գործունեության, նաև դիվանագիտության զարգացմանը մատուցած ծառայությունների, բարձր մասնագիտական, գործնական աշխատանքի, ինչպես նաև բարեգործական գործունեության համար: ԼՂՀ Պետական պարգևների ցանկում ևս սահմանված է «Մխիթար Գոշ» մեդալը, որը շնորհվում է ակնառու պետական և հասարակական-քաղաքական գործունեության համար: Դայաստանի Դանրապետության կենտրոնական բանկի կողմից 2009 թվականին թողարկվել է արծաթե հուշադրամ՝ 1000 դրամ անվանական արժեքով, նվիրված «Գիրք Դատաստանի» աշխատության 825-ամյակին: Գոշի մտավոր ժառանգությունը, որպես դասընթացի նյութ, դասավանդվում է արտասահմանյան մի շարք ԲՈՒՆ-երում:

Գոշը՝ XII դարի հայկական մշակույթի հսկան, ով բնական իրավունքով հիմնավորեց մարդկանց հավասարությունն օրենքի և դատարանի առջև, վեր կանգնեց իր դարից և, կամխազգալով ժամանակի հրամայական պահանջը՝ հայ ժողովրդի պետականության վերականգնման ձգտումը և պայքարը, արձագանքեց դրան իր հոչակավոր Դատաստանագրով, որն էլ տվեց իր պտուղները: Կիլիկիայում ստեղծվեց հայկական պետություն, որտեղ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի գլխավոր աղբյուրը Գոշի աշխատությունը հանդիսացավ: Ցավոք, Արևելյան Հայաստանում պետականության վերականգնումը խափանվեց՝ Միջին Ասիայից հայկական լեռնաշխարհ ներխուժած թաքար-մոնղոլական հորդանների և նրանց հետևից եկած՝ Լեռն-

Թեմուրի, Կարա-Կոյունլու, Ակ-Կոյունլու ավարառու ցեղերի արշավանքների հետևանքով:

Գոշը հասակով մեկ վեր կանգնեց իր շրջապատից և ազգային արժանապատվությամբ տոգորված՝ ապացուցեց նահմեդական աշխարհին, որ հայոց պետությունը և իրավունքը գալիս են հազարամյա դարերի խորքից և գնում դեպի դարերը:

Իրավացի է Խ.Թօրոսյանը, որի կարծիքով «Դատաստանագրքը... ոչ միայն Մխիթարի գրական-գիտական նախասիրությունների արդյունք էր, այլև ժամանակի հրամայական պահանջ, գիտակցված անհրաժեշտություն, որով Մխիթարն իր ժողովրդին տվեց քաղաքական ամենօրյա պայքարի մի ազդու գենք: Այդ գենքը նվազ հատու չէր, քան սուրը, և գործում էր ինչպես նպատակը: Դա գենք էր գոյամարտի համար, հարատևելու համար: Դրա մեջ էր Դատաստանագրքի մեջ խորհուրդը ժամանակի հանդեպ և պատճական ինաստը՝ սերունդներին ավանդա՞»:

Կարծում ենք՝ Դատաստանագրքի «մեծ խորհուրդը»՝ հայոց պետականության վերականգնման հարցը, վերստին իրականացավ մեր օրերում: Գոշը գիտեր, որ իրեն վիճակված չի լինելու տեսնել վերականգնված հայկական թագավորությունը, բայց նա համոզված էր, որ այն անպայման կվերականգնվի և ոչ միայն կվերականգնվի, այլև ժամանակին կմիավորվեն հայկական հողերը՝ մեկ պետականության ներքո: Այդ խոշոր նոտածողն ավելի հեռուն էր տեսնում: Նա Դատաստանագրքում ներպետական ծովային իրավունքի վերաբերյալ իրավական նորմեր էր սահմանել՝ համոզված լինելով, որ մի օր Դայաստանը ծովային տերություն կդառնա (հայտնի է, որ Գոշի օրոք Կիլիկիայի հայկական պետությունն ուներ ընդարձակ ծովային սահմաններ և հզոր ծովային նավատորմ): Նետևաբար, Գոշի նման ցանկությունը ցնորք չի եղել:

Գոշի Դատաստանագրքի «մեծ խորհրդներից» մեկն էլ ազգային կենտրոնացված պետության մեջ համապետական օրենք ունենալու հարցն էր՝ այն յուրաքանչյուրի համար պարտադիր լինելու և յուրաքանչյուրի կողմից ճշշտ ու անշեղ կատարելու համար:

Մեզ մնում է ավելացնել, որ Գոշի Դատաստանագրքի խորհուրդներն արդիական են նաև մեր օրերում, երբ երկու հայկական հանրապետությունները, հոչակելով իրենց անկախությունը և ունենալով սեփական ազգային օրենքներն ու պետականության բոլոր բնորոշիչները, միացյալ ուժերով կերտում են իրենց լուսավոր ապագան:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐՆ
ԱՐՑԱԽԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Այնքան ամիոդ եւ անտարբեր ենք, որ չգիտենք թէ ինչ
հնութիններ կան մեր հայրենիքում՝ մեր նախնիքներից
մեզ աւանդ մնացած. չգիտենք թէ ազգային անցեալ
պատմութեան մութ կետերը լուսաբանող ինչ
արձանագրութիւններ կան աւերակ վանքերի եւ
անապատների, մատուռների եւ եկեղեցիների,
խաչարձանների եւ տապանաքարերի վերայ... Սեր
անտարբերութիւնից օգուտ են քաղում օտարները:
Մակար Բարիսուդարյան

Վիմագիր (պահլավերեն՝ վետ-քար և հայերեն՝ գիր բառերից) բառը
նեղ իմաստով՝ նշանակում է քարի վրա փորագրված գրություն, սա-
կայն գործածության ընթացքում իմաստն ընդլայնվել է՝ ընդգրկելով
նաև իրերի, առարկաների, պատերի վրա փորագրված հիշատակու-
թյան և նակագրության նմուշները: Վիմագիր արձանագրությունները
չափազանց ստույգ և կարևոր տեղեկություններ են պարունակում հայ
ժողովրդի բազմադարյա պատմության տարրեր հարցերի վերաբերյալ:
Այդ տեղեկությունները բազմազան են՝ քաղաքական, տնտեսական,
սոցիալական, իրավական և այլն: Ընդունված է վիմագրերը բաժանել
4 խմբերի:

- ա) շինարարական,
- բ) հիշատակագրային և նվիրատվական,
- գ) կրոնաբարոյական,
- դ) իրավականոնական:

Դայ իրավունքի իրավահայտ աղբյուրներից մեկն էլ այն վիմագրերն
են, որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում եկեղեցական և
աշխարհիկ իրավունքի հարցերի վերաբերյալ: Ուսումնասիրելով Ամի-
ի հնագիտական հուշարձանները՝ ակադեմիկոս Շովսեփ Օրբելին նշել
է, որ «Սխիբար Գոշի, Սմբատի և ուրիշների Դատաստանագրքերի և այլ
իրավաբանական ժողովածուների ու տրակտատների վրա կառուցված
հայ իրավունքի պատմությունը, առանց հայկական վիմագրական նյու-
թերի սպառիչ օգտագործման, պիտի տառապի նույնպիսի պակասու-
թյամբ, թերասածությամբ, անճշտությամբ և երբեմն նույնիսկ հետևու-

թյունների լիակատար սխալությամբ, ինչպես արդեն հնացած ու դեն նետված Շիրակի պատմությունը, որը կազմված էր միայն մատենագրական տվյալների հիման վրա, առանց հնագիտական ու վիմագրական հուշարձանների իրական լուսաբանության»:¹

Պատմական Արցախի վիմագիր արձանագրություններն առաջին անգամ մասնակիորեն ուսումնասիրվել են Աղվանից կարողիկոս Եսայի Յասան-Զալալյանի, Յովհաննես Վարդապետ Շահիսարումյանցի, Յովհաննես Ղրիմեցու և Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցի կողմից: Վիմագրերի հայտնաբերման, ուսումնասիրման և տպագրման հարցում քիչ չեն Մակար Եպիսկոպոս Բարիխուդարյանի², Խաչիկ Վարդապետ Դադյանի, Յովսեփ Օքբելու³ և Աշոտ Յովհաննիսյանի⁴ ներդրումը: Մակար Բարիխուդարյանը, ոտքով շրջելով և մեկ առ մեկ գրի առնելով պատմական Արցախի բնակավայրերը, ավերակները և արձանագրությունները, ընթերցողին ընդամենը մի քանի է խնդրել՝ չձանձրանալ դրանք կարդալուց: 1960 թվականին Խորհրդային Հայաստանի և Ադրբեյջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ անհրաժեշտ համարվեց Երկու հանրապետությունների տարածքների վրա սփռված և Երկու ժողովուրդների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող հայերեն և արաբատառ արձանագրությունների հավաքումն ու հրատարակությունը: Երկու հանրապետությունների միացյալ արշավախումբն իր աշխատանքն սկսեց պատմական Արցախ նահանգից: Գիտարշավի ընդհանուր դեկավարն էր հայագիտության նվիրյալ Սեղրակ Բարիխուդարյանը, իսկ ադրբեյջանական խմբի դեկավարը՝ արաբատառ արձանագրությունների մասնագետ Մ.Նեյմարովան: Արցախուն եղած արձանագրությունների ուսումնասիրությունը տևեց 4 տարի՝ 1960-1964թթ.: Գիտարշավի հայ մասնակիցները հայտնաբերեցին, վերծանեցին, գծագրեցին և լուսանկարեցին 1071 արձանագրություններ, իսկ ադրբեյջանցի մասնակիցները պատմական Արցախի տարածքում, բացի շուրջ 50 արաբատառ պարսկերեն տապանաքարերից, ադրբեյջանական ոչինչ չգտնելով, սկսեցին տրտնջալ: Յայ և ադրբեյջանական գիտնականներից կազմված արձանագրագիտական հատուկ գիտարշավի 1960-1964թթ. աշխատանքի արդյունքները պետք է լույս տեսնեին Յայաստանի և Ադրբեյջանի գիտությունների ակադեմիաների տիտղոսաթերթիկմերով, սակայն հայտնի պատճառներով ադրբեյջանցիները հրաժարվեցին դրանից: Այն լույս տեսավ միայն 1982թ. Յայկ. ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ՝ դիվան հայ վիմագրության V պրակում (այսուհետ՝ Դիվան):⁵

Արցախի վիճագրերի ուսումնասիրնան հարցում չափազանց մեծ է ականավոր հայ գրող և պատմաբան Բագրատ Ուլուքաբյանի կատարած աշխատանքը, առանց որի պատմական ժառանգության՝ մեր երկրամասի բազմադարյա պատմության շատ հարցեր կմնային չհետազոտված և չլուսաբանված:⁶ Այդ տեսակետից որոշակի արժեք են ներկայացնում Շահեն Սկրտչյանի⁷, Վահրամ Բալայանի⁸ և Սամվել Կարապետյանի⁹ աշխատությունները:

Մեր երկրամասում ստեղծված իրավական մտքի խոշոր հուշարձանները՝ Վաչագան Բարեպաշտ թագավորի Կանոնական Սահմանադրությունը, Դավիթ Ալավելի որդու Կանոնական օրինադրությունը և Մխիթար Գոշի Դատաստանագիրը չեն կարող հասու լինել հասարակ ժողովրդին, և այդ աշխատությունների մի շարք դրույթներ, բնականարար, այս կամ այն ձևով պետք է իրենց արտացոլումը գտնեին պատմամշակութային հուշարձանների վրա փորագրված արձանագրություններում: Նկատի առնելով այդ հանգանանքը՝ մեր կողմից փորձ է արվում պետականության և իրավունքի տեսանկյունից բացահայտելու և բնութագրելու պատմական Արցախի տարածքում գտնվող վիճագրերի պատմահրավական արժեքն ու նշանակությունը՝ խորապես գիտակցելով ու չբացառելով հանդերձ, որ այն, այնուամենայնիվ, գերծ չի լինելու թերություններից:

Արցախի տարածքում ամենահին արձանագրությունը հայտնաբերվել է 2008 թվականին՝ արցախյան Տիգրանակերտի պեղումների ժամանակ: Քաղաքը գտնվում է արցախյան գոյամարտի տարիներին /1991-1994թ./ հայոց բանակի ազատամարտիկների կողմից ազատագրված նախկին Աղդամի շրջանի Վանքասարի Շահրուլաղ կոչվող աղբյուրի մոտ: Պեղումների ընթացքում երևան է հանվել հայկական Եկեղեցի, որի պատի տակ հայտնաբերված և V-VII դարերին վերագրվող խեցեղեն փոքրիկ սկավառակի վրա հայերեն բովանդակությանը արձանագրությունը մասնագետները վերծանել են. «ԵՍ (ՎԱԶ) է ԾԱՌԱՅ Տ (ԵԱՌ) Ն» կամ «ԵՍ ՎԱԶ (ԱԳՎԱԾ) ԾԱՌԱՅ Տ (ԵԱՌ) Ն⁹: Մասնագետները հավանական են համարում, որ կլոր խեցեղեն սկավառակն արքայական կամ իշխանական կնքադրոշմի դեր է կատարել, որով կարող էին վավերացվել աշխարհիկ կամ հոգևոր փաստաթղթեր կամ Եկեղեցական մասնասութեր: Զարկ է նշել, որ Վաչէ կամ Վաչագան անձնանուն կրողները վաղ միջնադարյան Արցախում իրական և հանրահայտ անձնավորություններ են եղել: Պատմիչ Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ Վաչագան արքան Անարասում հայտնաբերված սրբերի մասունքները կնքել է արքայական մատանիով, իսկ արքայի կող-

մից Աղվենի ժողովում ընդունված Կանոնական Սահմանադրությունը կնքվել է ինչպես Վաչագան արքայի, այնպես էլ ժողովի բոլոր նասնակիցների կնիքներով:¹⁰

Հայերեն արձանագրություններ են հայտնաբերվել նաև Տիգրանակերտի մերձակայքում գտնվող ժայռափոր համալիրում, որոնք նույնական վերջանության ընթացքի մեջ են:

Հայկական հողի վրա մինչև այժմ հայտնի գիր-թվական ունեցող հնագույն վիմագիր արձանագրությունը (853թ.) հայտնաբերվել է Մարտակերտի շրջանի Թոլատակ գյուղի մոտ գտնվող Սեծառանից Սր. Հակոբա վանքի արևմտյան պատի մեջ: Դա մի խաչքար է, որի պատվանդանի վրա փորագրված արձանագրության համաձայն՝ խաչը կանգնեցվել է Հայաղվանքի իշխան Յովհաննեսի ժամանակներում՝ վանքի եպիսկոպոս Սողոմոնի կողմից: Յովհաննեսը հայազգի այն իշխանն էր (837-854թ.), ով իր կատարած քաջագործությունների համար արարութիւնի կողմից արժանացավ բարձր պաշտոնի /Հայոց, Վրաց և Աղվանից աշխարհների տեր/ և պարգևների: Խոսքը Վերաբերում է այն ժամանակներին, երբ արարական զորավար Բուլղան գրավել էր ամբողջ Այսրկովկասը, բայց անկոտրում դիմադրության հանդիպել Արցախուն: Յետագայում քաջ Յովհաննեսի եղբոր՝ Ատրմերսեհի որդին, Արևելքի մեծ իշխան Համամ-Գրիգորը, վերականգնեց Հայաղվանքի թագավորությունը /881թ./:

Արցախի Տիգրանակերտից մոտ 6 կմ հեռավորության վրա, աղբեջանարնակ Սոֆուլու գյուղում, ազերի գիտնականները 1950-ական թվականներին հայտնաբերեցին հայերեն արձանագրությանք մի տապանաքար: Ըստ ուսումնասիրողների՝ տապանաքարը դրված էր Համամ թագավորի՝ ողբերգաբար նահացած ավագ որդու գերեզմանի վրա: Ազերիները տապանաքարի հայտնաբերման վայրն անվանեցին Գյավուր կալա (Անհավատի բերդ) և տապանաքարը տեղափոխեցին Աղրբեջանի պատմության պետական թանգարան: Համամ-Գրիգորն արքայական թագ է կրել և այնքան մեծ է եղել նրա հեղինակությունը, որ նրա միջանտությամբ՝ փրկագնի վճարման դիմաց, արարութիւնի կողմից գերված Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսն ազատվել է գերությունից: Հասկանալի է, որ նման գործ կարող է կատարել հզոր իշխանություն ունեցող մարդը: Ըստ ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի փոխտօրեն Ա. Մարտիրոսյանի հետազոտությունների՝ Համամ թագավորի և նրա կնոջ գերեզմանը գտնվում է Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղի հին գերեզմանատանը: Տապանաքարի վրա փորագրված են Համամ-Գրիգորի և նրա կնոջ պատկերները:

Յովհաննես իշխանի ժամանակներում, արարութիւնի դեմ մղվող պայ-

քարում, Յովհաննեսից ոչ պակաս աչքի են ընկել նաև Արցախի հարավային մասի իշխանապետերը: Իշխան Եսայի Աբով Մուսեն, որին արաբական աղբյուրները «հայոց պատրիկ» են կոչել, իր հետնորդներին թողել է մի այնպիսի ժառանգություն, որի կրողները «քարակերտ մատյաններում» հանդես են եկել իշխանաց իշխան կամ թագավոր տիտղոսներով: Յաղորութի շրջանի Տումի գյուղի մոտ գտնվող «Կարմիր եղցու» (Եկեղեցի) պատուհանի կամարի քարն ունեցել է հետևյալ արձանագրությունը. «Ի Նևմ (1000թ.) բուհն Յայոց, ի թագաւորութեանս տեան Գագիկա՝ որդու Մուսէի, ես՝ Սոփի, դուստր Մուսէի շինեցի տուն Աստծո» (Դիվան, էջ 173): Քարն այժմ պահպում է Ստեփանակերտում՝ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում: Այդ նույն Գագիկ թագավորը, ինչպես արդեն նշել ենք, Զուհստ Բարեկածառ ավերակ երկու Եկեղեցիներից մեկի խաչքարի վրա փորագրված արձանագրության մեջ հանդես է գալիս որպես Աղվանից պետության (ներ իմաստով՝ Արցախ- Վ.Յ) իշխանաց իշխան (Դիվան, էջ 169): Վերոնշյալ երկու վիմագրերը, ինչպես նաև Տումի գյուղի մոտ գտնվող՝ «թագավորի պալատ», «թագավորի գերեզման», «թագավորի աղբյուր» և թագավորի անունը կրող մի շարք այլ վայրեր վկայում են, որ Գագիկ թագավորն իրական իշխանություն է ունեցել Արցախի հարավային մասում, ու այդ իշխանությունը դարերի ընթացքում չի ընդհատվել և տարբեր անվանումներով շարունակվել է մինչև XIX դարը: Դժվար չէ վիմագրերով ճշտել նաև Արցախի հարավային սահմանները: Արցախի հարավային մասը, որը միջնադարում կոչվում էր մյուս Յարանդ կամ ուղղակի Յարանդ, նշանավոր է եղել իր Ամարաս և Գտիչ Եպիսկոպոսանիստ վանքերով: Ուշ միջնադարում, Յարանդը վարչականորեն բաժանվելով, ստացել է Դիզակ՝ Յարանդի (հարավային մասը) և Վարանդա (հյուսիսային մասը) անունները՝ մոռացության տալով երկրամասի հին անունը: Յաղորութի շրջանի Տող գյուղի մոտ գտնվող Գտչավանքը, որն ավերվել էր մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ, 1241 թվականին վերանորոգման ենթարկվեց Ամարասի երկու վանական եղբայրների կողմից, որոնց վանքի հյուսիսային պատին թողած արձանագրության տվյալներից կարելի է պատկերացնել կազմել Արցախի հարավային սահմանների և նրա մեջ մտնող Եկեղեցական թեմների վերաբերյալ: Արձանագրության մեջ թվարկված է Եկեղեցական երեք թեմ և վարչատարածքային տասներկու միավորներ՝ իրենց անվանումներով, սահմաններով և սահմանային գետերով (Դիվան, էջ 182, 183): Բնակավայրերի ու գետերի աշխարհագրական անվանումները մեզ հուշում են, որ Արցախի հարավային սահմանն Արաքս գետն էր, ինչպես հինա կա, իսկ հյուսիս-արևմտյան սահմանը ներառել է ներկա-

յիս Քաշաթաղի շրջանի մի մասը:

Արցախի կենտրոնական և հյուսիսային մասերում Առանշահիկ Համամ քագավորի տոհմաշղթան անխափան շարունակվեց նաև նրա սերունդների կողմից: Այդ շղթայում իր պատվավոր տեղն ունի Հաթերքի տեր և Խաչենի իշխանաց իշխան Յասան Մեծը, ով Դադիվանքում իր իսկ անունից փորագրել տված արձանագրության մեջ (1182թ.) մատնանշել է, որ 40 տարի շարունակ պատերազմներ է նոել հայրենի երկրի թշնամիների դեմ և միշտ էլ հաղթել: Ակնհայտ է, որ միայն հզոր պետականություն ունեցող մարդ կարող է իր երկրում նման բովանդակությամբ արձանագրություն փորագրել տալ: ճիշտ է, արձանագրությունից չի երևում, թե Յասան Մեծն ուն դեմ է պատերազմել, սակայն, նույն վանքի վրա իշխանութիւն՝ Արզու խաթունի անունից փորագրված արձանագրությունը հուշում է մեզ, որ պատերազմը մղվել է թուրքերի դեմ և հանուն քրիստոնեական հավատի, որի ժամանակ նահատակվել են նաև քաջ իշխանի երկու որդիները (Դիվան, էջ 198, 199): Այդ երկու արձանագրությունները նաև կարևոր տվյալներ են պարունակում մեր երկրամասի ռազմագիտական պատմությունն ուսումնասիրողների համար: Յասան Մեծին փոխարինել է նրա ավագ որդին՝ իշխանաց իշխան Վախթանգը (1182-1214թ.), այն Վախթանգը, որի մոտ Մխիթար Գոշը ծեռնանուխ եղավ իր հոչակավոր Դատաստանագիրքը գրելուն:

Արցախի հօչակավոր իշխանաց իշխան Յասան-Զալալն իր հայրենանվեր գործունեությամբ ու քողած ժառանգությամբ հավերժացավ ոչ միայն գրչագիր մատյաններում, այլև՝ քարագիր արձանագրություններում:

Գանձասարի Սր. Յովիաննես Սկրտիչ Եկեղեցու ներսում, հյուսիսային պատի ամբողջ լայնությամբ Յովկասափ Միակյացը /ճգնավոր/ 1240թ. 27 տողերի վրա արձանագրել է Յասան-Զալալ Դոլայի ուխտը կամ կտակը: Կտակում Յասան-Զալալը հանդես է գալիս «ԲՆԱԿԱԽՈՐ ԻՆՔԱՍԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱԸՆ ԱՇԽԱՐՅԻ, ԹԱԳԱԽՈՐ ԽԱԲԻԱՆԱՐԵՐՈՒ ՅՈՂԱՍՍԱՐՄԱՆ ՆԱՐԱԳԱԼԻՔ» խորհստ տիտղոսներով, իսկ Առաջաձոր գյուղի արևելյան նասում գտնվող Եկեղեցու մեջ քարի վրա փորագրված արձանագրության մեջ Յասան-Զալալն իրեն անվանում է «Աստծոն արքա... իշխան Խաչենի և Առանի»¹¹: Յասան-Զալալի Եղբայրը՝ Սմբատը, Խանջալ Խաչ կոչվող վայրում կանգնեցրած արձանագրության մեջ Եղբորը ևս «արքա» տիտղոսով է անվանում: Դժվար չէ կոսակել, որ նման բարձրահունչ տիտղոսներ կրող անձն օժտված է Եղել պետական հզոր իշխանությամբ, որի տիրապետությունը տարածվել է ամբողջ Յայաղվանքի վրա՝ ներառյալ մինչև Կուրի և Արաքսի

միախառնման վայրը:

Եիշտ է, Յասան-Զալալը հարկատու էր մոնղոլ-թաքարներին և նրա աղջիկներից մեկը՝ Ոուզուքանը, մոնղոլ գորավար Բորա-Նոյինի կինն էր, սակայն այդ քայլը կատարվել է դիվանագիտական նկատառումներով և այն տվել է իր արդյունքները: Յասան-Զալալի միջնորդության շնորհիվ, հայկական Կիլիկիայի Տեքում թագավորի և մոնղոլական մեծ խան Սանգուի միջև 1253թ. կնքված պայմանագրի ուժով, Կիլիկյան հայկական պետությունը մոտ մեկ հարյուրամյակ գերծ մնաց հարևան պետությունների ավերածություններից:

Յասան-Զալալն անձանք պատկառելի շքախմբով եղել է Բարու խանի մոտ, արժանացել պատիվների և կարողացել հետ վերադարձնել թուրքերի կողմից խված հայրենի մի շաբթ բերդեր և բնակավայրեր: Յասան-Զալալի իշխանապետությունն օժտված է եղել պետականության ակնհայտ բնորոշչիներով:

Կտակում Յասան-Զալալը հանդես է գալիս որպես թագավոր Խոխանարերոյի «ՅՈԳՍԱՍՍՐԱԸՆ ՆԱՐԱՎԱՒՔ» եզրույթով: Խոխանարերոյն թագավորի կենտրոնական թերոն էր և գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի դիմաց: Կտակում Յասան-Զալալի տիրապետության սահմանները նշված չեն, և այդ առումով միայն շեշտված է դեռևս ոչ մի աշխատությունում չօգտագործված և բառարաններում չստուգաբանված «յոգնասահման» բարդ բառը (յոգ-շատ, բազում, հոգնակի): Մեր կարծիքով, «յոգնասահման» բառի տակ փորագրողը նկատի է ունեցել երկրի բազմաբնույթ և տարատեսակ աշխարհագրական սահմանագծերը: Իսկ արձանագրության մեջ օգտագործված «ԲՍԱԿՎԻՌ» բառի տակ նկատի է ունեցվել, որ Յասան-Զալալն իր երկրի բնիկ տերն է:

Վիճագրության և մատենագրության մեջ չափազանց աղքատիկ տվյալներ են պահպանվել Արցախի արտաքին սահմանների և ներքին վարչատարածքային սահմանաբաժանումների վերաբերյալ: Այդ հարցում մեզ օգնության է գալիս Ս.Գոշը, ով սահմանները բաժանում է չորս խմբերի՝ գավառների, գյուղերի (համայնքների), հողանասերի, շենքերի և շինությունների: Յանձնայն Գոշի Դատաստանագրքի ՄԽԵ գլխի՝ «Գավառների, նմանապես և գյուղերի սահմանները հաստատվում են լեռներով, գետերով և արձաններով: Եվ գյուղերը, որոնք շինված են երկու կամ երեք գավառների մոտ, երկուսի բաժանվեն առավելությամբ և նվազությամբ. նմանապես հանդերն ու գյուղերի մոտ տարածվները, որոնք բուսնել են հանդերի սահմանների վրա: Իսկ այգիների ցանկապատները թող կրկնակի լինեն, ամեն մեկն ունենա իր ցանկապատը, թեպետ սկզբից դրված ցանկապատը բավական էր երկուսին ել, բայց,

այնուամենայնիվ, թող առաջին բաժանարար ցանկապատը արգելք չհանդիսանա, որ նյուև կողմն էլ դմի իր ցանկապատը: Ըստ այս կանոնի դրվեն նաև տների պատերն ու պրա ննան մնացած ամեն ինչը»¹²: «Արծանների» տակ Գոշը նկատի է ունեցել սահմանաքար կոթողները, որոնք գոյություն ունեին դեռևս Արտաշեայան թագավորության ժամանակ: Ա.Մարտիրոսյանը, Քարվաճառի շրջանի Դադիվանքի հյուսիսային Լեռնաբազուկի վրա (Նախկին Քելբաշարի շրջանի Բալուղայա քրդաբնակ գյուղի մոտ) հայտնաբերել և նկարել է սահմանակորող հիշեցնող քար, որը ննան է այն սահմանաքարերին, որոնք դրվել են գյուղերի և ազարակների սահմանագլուխներին՝ Արտաշես Ա թագավորի ձեռնարկած հողային բարեփոխումների կապակցությամբ և որոնցից մի քանի տասնյակ հայտնաբերվել են Սյունիքում և Սևանա լճի առափնյա շրջաններում: Կարծում ենք՝ ներկայիս Շահումյանի շրջանում հայտնաբերված սահմանաքարի տեղը Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանն է, քանի որ այն կարող է լույս սփռել պատմական Արցախի Վարչատարածքային սահմանաբանումների և հողային հարաբերությունների հարցերի վրա, միաժամանակ, լուրջ կովան կիանդիսանա, որ ազատագրված պատմական Քարվաճառի շրջանի օրինական տերը հայ ժողովուրդն է: Ամենայն հավանականությամբ, միջնադարյան Արցախում սահմանային հարցերի և սահմանավեճերի լուծման գործընթացում առաջին հերթին դեկավուկել են Գոշի Դատաստանագրի դրույթներով: Յողային Վեճերով կարևոր նշանակություն է ունեցել վիճելի տարածքի սահմանային եզրը կամ ծայրը որոշելու հարցը: Մինչխորհրդային իշխանության տարիներին Լեռնային Դարաբաղի գյուղերում ավանդական սովորություն կար՝ պապերից ժառանգած կամ սեփականության իրավունքով պատկանող հողամասի անկյուններում կես մետրից ավել խորության վրա հողի մեջ ածուխ էին թաղում և, վեճ ծագելու դեպքում, դրա միջոցով շատ հեշտ որոշում սեփականատիրոց հողի սահմանները:

Արցախի Դասան-Զալալ իշխանաց պետականության բնորոշիչներից մեկն էլ նրա գինանշանն է: Գանձասարի վաճքի գավթի հյուսիսային մուտքի դրան վերևի մասում պատկերված են դեպի իրար մոտեցող երկու կենդանիներ՝ բացված երախներով, կատաղի աչքերով, սուր ճանկերով, դեպի վեր ցցված պոչերով: Կենդանիների վայակոսավոր փոսիկները առյուծների բաշեր են ենթադրում: Քանդակագործին հաջողվել է ընդգծել կենդանիների իշխանատենչ, կամային հատկանիշները: Աջակողմյան առյուծի դիմաց փորագրված է վեցաքառաստղ՝ իշխանության նշանը, որը պատմությանը հայտնի է Սոլոմոնի աստղ՝ անունով: Դասան-Զալալի գինանշանի մասին մեր ձեռքի տակ

գրավոր տեղեկություններ չունենք, սակայն, որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ զույգ առյուծները Յասան-Զալալի գինանշանն է, և նա ներկայացված է աջակողմյան առյուծի պատևերում, իսկ որոին՝ Արաբեկը, ծախսակողմյան: Զույգ առյուծներ են առկա նաև Գյուլհստանի մելիքության գինանշանում, որը փորագրված է հակառակորդի կողմից բռնազավթված ԼՂՀ Շահումյանի շրջանի Կարաչինար կամ Աղջակալա գյուղում գտնվող մելիքական շինության դարպասի բարավոր քարին:¹³ Զինանշանում մարտնչող առյուծները պատկերված են իրար դեմ դիմաց, բաց երախմներով հետևի ոտքերի վրա հենված և պոչերը վեր ցցած դեպի մեջքները: Մարտնչող առյուծների պատկերաբանդակով բարովկաբարը՝ ՌՅԺ /1868թ./ արձանագրությամբ, նինչև հակառակորդի կողմից ԼՂՀ Շահումյանի շրջանը բռնազավթվելը, պահպում էր շրջկենտրոնի պատճաերկրագիտական թանգարանում: Զույգ առյուծները հայկական հավատալիքներում դրսնորվում են նաև որպես տան, շինության, բնակավայրի, երկրի հսկիչ-պահպաններ:

Յասան-Զալալի պետականության հզորության մասին է վկայում նաև Սամկոտ-Պետերբուրգի Էրմիտաժում պահպող՝ նրան պատկանած դաշյունի մուգ կանաչ նեֆրիտե երախակալը, որը պարունակում է կցագրերով փորագրություն՝ «ՅԱՍՍՆ ԶԱԼԱԼ ԻՇԽԱՆ ԽԱՉԵՆՈՅ»: Յասան-Զալալին փոխարինեց նրա անդրանիկ որդին՝ Արաբեկը, ով Արցախի վիճագիր արձանագրություններում նույնպես հանդես է գալիս Արցախի իշխանաց իշխան խրոխտ տիտղոսով: Վիճագրերը վկայում են, որ պետականության մի շարք բնորոշչներով օժտված են եղել նաև Արցախի մելիքները:

Դիզակի մելիք Եգանի անձնավորությանն ու հասարակական-քաղաքական գործունեությանը վերաբերյալ տվյալներն արձանագրված են Յաղորութի շրջանի Տող գյուղում գտնվող նրա պապանքի ընդունարանի մուտքի ճակատակալ քարին: Արձանագրությունը, որը գրված է բարբառային լեզվով, գրչության որոշ օրինաչափ շեղումներով, պարսկա-թուրքական բառերի առկայությամբ, առավել հաջող վերծանել է պատճմաբան, իրանագետ Յակոբ Փափազյանը՝ մեջբերում ենք. «ՌՋՋՋ» (1737թ.): Այս ընդունարանը հիշատակ է: Այսպես է, որ ես՝ Պուլկաս վարդապետի որդիս, որ ին անունն է մելիք-Եգան, նախսապես ժողովուրդը հավաքեց և ինձ քյոխվա (տանուտեղ) կարգեց: Դրանից հետո, երբ Երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Յուսեյնի որդի շահ Թահմասապ թագավորին որոշ ծառայություններ մատուցեցի, և նա բերեց սրանց վրա ինձ մելիքություն տվեց: Այնուհետև օսմանցին և Երկիրը նրա ձեռքից վերցրեց: Սրան էլ այս չափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես չքողեցի, որ Յայաստանից գերի գնան:

Արադից (Կենտրոնական Իրան) շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց: Ով հետո կարդա, այս գրությունից կիմանա, որ մեր որպահությունը այդպես է եղել և թող մի ողորմի ասի: Եղավ: Ամեն»:¹⁴

Յ.Փափազյանը, ճիշտ վերծանելով արձանագրությունը, միևնույն ժամանակ սիսակմանը եզրակացրել է, որ հայկական ինքնուրույն վարչաքաղաքական միավորման մեջ, հայտնի 5 մահալներից կամ մելիքություններից բացի, սկզբնապես մտնում էր նաև Քոչիզի կամ Քաշարադի մահալը, որտեղ վաղ ժամանակներից իշխում էին մելիք Շայկազի սերունդները: Պարզապես Յ.Փափազյանը Քաշարադի շրջանի նախկինում հայարնակ Քոչիզ գյուղը շփոթեցրել է Վարանդա գավառի Քոչիզ ամրոցի (սղնախ) հետ, որը գտնվել է ԼՂՂ Մարտունու շրջանի Շերիեր և Ծովատեղ գյուղերի թիկունքում և մինչև մելիք Շահնազարյանների հետգրավումը՝ որպես մահալ, ենթարկվել է մելիք Եգանին: Քոչիզ բնակավայրը 3 անգամ իիշատակված է Շերիերի Սր. Գրիգորիս Եկեղեցու արձանագրություններում (Ղիվան, էջ 166 -168):

Մելիք Եգանի ընդունարանի մուտքի արձանագրությունը վկայում է, որ XVIII դարի 30-ական թթ. Անդրկովկասում ծևափորվել էր մի նոր վարչաքաղաքական միավոր, որի ղեկավարն իր իրավունքներով հավասար էր Վրաստանի վալիներին, իսկ այդ ժամանակներում բեկլարբեկի տիտղոսը կրել են միայն Երևանի, Գանձակի և Թավրիզի խանները: Սա ցույց է տալիս, որ զենքի ուժով ձեռք բերված ազատությունը և ինքնավարությունը ճանաչվել էր Պարսկաստանի կողմից:

Մելիք Եգանը, լինելով հզոր անհատականություն, ճկուն և հավասարակշիռ քաղաքականություն է վարել պարսիկների և բուրքերի միջև և Արցախը համարել է որպես Հայաստան. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եսիր /գերի-Վ.Յ./ գնալու», նշված է արձանագրության մեջ:

Յզոր է եղել մելիք Եգանի բազուկը նաև հոգևոր գործերում: Գտչավանքի Եպիսկոպոս Մեսրոպ Վարդապետի տապանաքարի վրա փորագրված գրությունը վկայում է, որ մելիք Եգանն է նրան Եպիսկոպոս ծեռնադրել և կարգել վանքի առաջնորդ¹⁵:

Դարաբաղի մելիքներեց մելիք Եգան խանն ուներ իր իշխանապետությանն արժանի զինանշան, որի քանդակը պահպանվել է Շադրութի շրջանի պատմական Շողեր գյուղի մոտ գտնվող Կավարվանքի ներսում: Ըստ պատմաքան Տ. Հայազնի, զինանշանը պատկեր-

ված է երկգլխանի արծվի տեսքով: Թռչնի մարմինը վահանածև է: Մարմնի վերնամասից դուրս են գալիս երկու համաշափ, աղեղնածն երկար վգեր, որոնք ավարտվում են կլոր գլխով. ընդգծված աչքերով ու սուր կտուցով: Արծվագլուխների վրա եռածյուղ թագեր են: Թռչունը հենված է եռանկյունածն պոչի վրա՝ ծախ ոտքի մագիլներով թևի վրա պահելով գնդավոր գլխով իշխանության նշան-մականը, իսկ աջ ոտքի մագիլներով՝ խաչը: Փաստորեն, արծիվը մագիլներում պահում է աշխարհիկ և հոգևոր իշխանության նշանները՝ մականը և խաչը: Պատմաբան S. Հայազնն առաջինն է նկատել, որ մելիք Եգանի գինանշանը որոշ նմանություն ունի նույն ժամանակաշրջանի ռուսական գինանշանին, որտեղ առկա է գրեթե նույնանման պատկերը, միայն այն տարբերությամբ, որ ռուսական արծիվը թևաբաց է և գլուխների արանքում առկա է ռուսական կայսրության թագը:¹⁶

Անձնական գենքը ևս կարող է լոյս սփռել պատմական անձնավորության՝ աշխարհիկ իշխանության հզորության և կարգավիճակի մասին: Ներկայումս նաև մագիլների տրամադրության տակ կան բացարձակ արժեք ներկայացնող երեք թուր և մեկ գավազան՝ հայերեն մակագրություններով: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք պատկանում են մելիք Եգանին և, ըստ երևոյթին, շահական ուկեցրված կնիքով շքերթային թուրը և գավազան սուսերը մելիք Եգանը ստացել է Նադիր շահից¹⁷:

Արցախի գերագահ իշխանի տիրապետության սահմանները և փառքը հաստատում է Հաղորութի շրջանի Տող գյուղի հանգստարանում գտնվող նրա տապանագիրը.

*Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր ամուն թագաւորին
Տիրապետաց սայ ի երկուն
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ Պարսից ազգէն
Քան զիշխանս հայոց երկրին... Ոճոգ(1744թ.)¹⁸*

Մելիք Եգանից ոչ պակաս հզոր աշխարհիկ իշխանություն է ունեցել Վարանդայի մելիք Շուսեյնը, որի տապանագրի գովեստը բնավ էլ ձևի համար չի գրվել, ըստ որի՝ Երեսունհինգ գյուղերի տեր Վարանդայի հզոր իշխանը որևէ մեկին հարկատու չի եղել, թուրքերի դեմ պատերազմում միշտ հաղթող է դուրս եկել, հանդիսանալով հայոց աշխարհի թագն ու պարծանքը:¹⁹

Վարանդայի մելիքները նույնպես ունեցել են իրենց գինանշանը, որը, համաձայն տոհմական ավանդութի, գրավել էր Պետրոս Մեծի և

Նապոլեոնի ուշադրությունը: Զինանշանի վրա առկա է երեք տառից կազմված փակագիր. «Յայսատան», «Մելիք», «Շահնազար»: Արձի գլխին պատկերված է Եկեղեցու գմբեր՝ խաչը վրան: Ներկայումս գի-նանշանը պահպում է ԱՄՆ Բուստոն քաղաքում²⁰:

Անդրադառնալով կանոնակիրավական վիճագրերին, հարկ է նշել, որ դրանց մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նվիրագրերը և այն հիշատակագրերը, որոնց հեղինակներն իրական անձնավորություններ են: Դրա հետ մեկտեղ, բավական շատ են այն նվիրագրերը, որոնց հեղինակներին (նվիրատուններին) հնարավոր չեն պարզել: Մի կողմից էլ, ժամանակը կատարել և կատարում է իր սև գործը, և ամիսաբար վիճակում գտնվող արձանագրությունների թիվն օրեցօր նվազում է: Եթե վիճագրերով ոչ միշտ է հաջողվում պարզելու նվիրատունների անձը և սոցիալական կարգավիճակը, ապա ամեն պարագայում նվիրառուները վանքերը կամ Եկեղեցիներն են: Վիճագրերում նվիրատվության առարկա են հանդիսանում տարբեր տեսակի անշարժ կամ շարժական իրեր, առարկաներ, գույքային պարտականություններ և այլն: Որոշ արձանագրություններում շոշափվում են գույքի պատկանելիության, քանակի, արժեքի և օտարման պայմանների, ինչպես նաև նվիրառուների պարտավորությունների վերաբերյալ հարցեր: Քննարկենք դրանցից մի քանիսը.

Արցախի տարածքում նվիրատվության վերաբերյալ թվագրով անենահին արձանագրությունը գտնվում է Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից 6-8կմ դեպի արևմուտք մի սարահարթի վրա գտնվող Խաղավանք կամ Խարբավանք Եկեղեցու արևելյան պատի վրա: Արձանագրության համաձայն՝ Տեր-Շովիհանները 1204թ. վերակառուցել է այդ Եկեղեցին, այնտեղ հավաքել գրեթե, խաչեր և մատյաններ, տնկել Զորաց այգին, ապա նոր մի այգի և գցել և այդ բոլորը, Յաթերքի իշխանաց իշխան Վախթանգի միջնորդությամբ, հանձնել իր Եղբայր Յասանին ու նրա որդիներին: Նույն արձանագրության երկրորդ մասի համաձայն՝ Յասանն էլ ընդունել է ընծան, ինքն էլ իր հերթին խնձորաբակի այգին իր սահմաններով նվիրել է վանքին (Ղիվան, էջ 121, 122): Այս փաստերը հիմք են տալիս դատելու, որ Խաչենի տարածքում տեղական իշխանությունների այսօրինակ գործարքներն անգամ կատարվում էին Վախթանգի և նրա հետնորդների միջանտությամբ:

Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծառանից Սբ. Յակոբա վանքի սրահի հարավային պատի արձանագրությունից իմանում ենք, որ Սմբատի որդի Գրիգորը Տեր-Մարգսի և Տեր-Վարդանի առաջնորդության տարիներին վանքին նվիրել է իր հայրենաբաժնից մեկ կիսավար իր հողով (Ղիվան, էջ 13): Թվականն անհայտ է:

Վերոնշյալ կարգի արձանագրությունները շատ են տարածված Արցախի հանրապետության բոլոր շրջաններում: Դատկանշական է, որ նվիրատուները գույքը նվիրում են իրենց հոգու փոկության և մեղքերի թողության համար: Մյուս կողմից, հոգևոր հաստատությունը պարտավորվում է օրինանք տածել, պատարագ մատուցել նվիրատուի կամ նրա մերժավոր հարազատների համար կամ էլ նրանց անունները նշել ժամասացության մեջ: Վերջում հավելվում է, որ արձանագրության պայմանները խափանողները պետք է արժանանան Աստծո դատաստանին և 318 հայրապետների նզովքին, անեծքին:

Վիճագրերի մեջ մի առանձին խումբ են կազմում այն նվիրատվությունները, որոնք կոչվում են «վախմ» (արարերեն և թուրքերեն՝ վագֆ): Եկեղեցուն կտակված բարեպաշտական նվեր, որոնք հարկան ենթակա չեն եղել: «Վախմ»-ները եղել են տարբեր տեսակների՝ ագարակներ, այգիներ, արտեր, հանդեր, հողեր, ծիրիանքներ, անասուններ, դրամական միջոցներ և այլն: Ասկերանի շրջանի Պուկեսքերգ վանքի արձանագրության համաձայն՝ Ղուկաս վարդապետը Խաչենագետի վկա կառուցած իր ջրաղացը հոգու փոկության համար նվիրել է վաճքին (Ղիվան, էջ 138): Քաշաբաղի շրջանի Ջոչիզ գյուղի Եկեղեցու արձանագրությունից նկատելի է, որ ոմն Յայկազ սրանոցը (ծիրիանք) «վախմ» է արել Եկեղեցուն: Մարտունու շրջանի Յերիեր գյուղի Սր. Գրիգորիս Եկեղեցու մուտքի հյուսիսային կողմի արձանագրությունը փաստում է, որ Յերիերի ժողովուրդը, տանուտեր Ղասումի գլխավորությամբ, մեծ և փոքր ճանապարհի վերևի տափը, որն ի սկզբանե «վախմ» էր Սր. Աստվածածնին, այժմ իրենք «վախմ» են անուն Սր. Գրիգորիս Եկեղեցուն (Ղիվան, էջ 167):

Նման կարգի վիճագրերը ցույց են տալիս, որ «վախմ»-ի ձևով նվիրատվությունները տարածված են Եղել XIII-XVI դարերում: Դա այն ժամանակաշրջանն է, երբ մոնղոլ-թաքարները, Լենկ-Թենուրը և թուրքենական վաչկատուն ցեղերն ասպատակում էին ամբողջ Այսրկովկասը: Իսկ հ՞նչն էր ստիպում հայ ավատատերերին՝ իրենց գույքը նվիրելու կամ էժան վաճառելու հոգևոր հաստատություններին: Պատճառներից մեկը պետք է որոնել նրանում, որ քաղաքական նկատառումներով նիշնադարյան ավարառու ցեղերի որոշ դեկավարներ բարյացական Վերաբերնունք էին ցուցաբերում հայ հոգևորականության նկատմամբ՝ իրենց համար անհրաժեշտ դեպքերում վանքապատկան հողերն ազատելով հարկերից ու տուրքերից: Պատմությանը հայտնի է Զահանշահի կին Բեգում Խաքումի 1462թ. հրովարտակը՝ ուղղված Գանձասարի Յովիաննես կաթողիկոսին, նույն կաթողիկոսին տրված Յաղութի 1478թ. հրովարտակը, վանքին տրված՝ Շահ Աբաս 2-րդի 1650թ. հրո-

վարտակը, որոնց ուժով Գանձասարը զերծ մնաց բռնակալների հարստահարություններից և տնտեսական մեծ առաջընթաց ունեցավ: Մյուս կողմից՝ հնուց ի վեր պատիվ էր համարվում Եկեղեցիների ու վաճերի սրբազն համարված հողում թաղվելու իրավունքը: Այդպիսի պատվի արժանացողը, թաղվելուց առաջ, իր հոգու պարտքն էր համարում շարժական կամ անշարժ գույքի նվիրաբերումով արտահայտել իր երախտագիտությունը սուրբ ուխտի նկատմամբ: Իսկ երբ մի վաճք դառնում էր որևէ գերդաստանի տոհմային տապանատունը, այդ գերդաստանի ժառանգներն արդեն ոչինչ չէին խնայում իրենց տապանատունն առատության ու շքերության մեջ պահելու համար: Եվ պատահական չէ, որ Եկեղեցիներն ու վաճերը հենց այս եղանակով էլ դառնում էին ամենահարուստ հողատերերը և նրանցից ամենանշանավորներն իրենց ավատական իրավունքներով են չէին մնում աշխարհիկ հզորագույն իշխանավորներից:²¹

Դենց Վերոնչյալ հանգամանքներով պետք է բացատրել, որ Արցախի ավատատերերի կողմից ամենամեծ նվիրատվություններն արվել են Գանձասարի վաճքին: Կա նաև ուշադրության արժանի մեկ այլ հանգամանք. հայտնվելով քաղաքական անբարենպաստ պայմաններում, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով, հայ ավատատերերը դրանք նվիրում էին իիմնականում սեփական տիրույթի սահմաններում գտնվող վաճերին: Գանձասարի վաճքի վրա առկա 182 արձանագրություններից 35-ը վկայում են նվիրատվուների մասին: Մեջբերում ենք գավիր հյուսիսային պատի արևելյան մասի եռատող արձանագրությունը. «Ես շահնշես որդի Աղպուղին, Վերին նովերին հողն տվի ի սր. ուխտս Գանձասարայ, ով հողն հանե սուրբ Ովանեսիս կապատ է» (Ղիվան, էջ 58): Այս արձանագրության մեջ հետաքրքրին այն է, որ «Վերին նովերին» հողին հանդիպում ենք նույն արձանագրության կողքին հսուրի՝ 1495թ. արձանագրության մեջ. այստեղ ևս այն նվիրաբերվում է «Ի սուրբ ուխտս Գանձասարա» (Ղիվան, էջ 56): Դամանման օրինակի հանդիպում ենք նաև «Աշմանայ տափի հողն» երկու անգամ վաճքին նվիրելու արձանագրություններում: Բ.Ռևլուրաբյանը միանգամայն ճշշտ նշել է, որ զարգացած միջնադարում նվիրատվություններն այնքան էլ հաստատ ու անբեկանելի գործարքներ չէին և խախտվում էին նվիրատուի հարազատների կամ ազդեցիկ իշխանավորների կողմից: Այլապես ավելորդ պիտի լինեին նվերները, հանողների ու խախտողների հասցեներին ուղղված զանազան ամեօքները, որ այնպես առատությամբ սփռված են մեր վիճագրերում:²²

Շարժական գույքի նվիրատվության առարկա են հանդիսացել

անասումները (եզներ և կովեր), դրամական միջոցները (դեկան, թուման, ստակ), սպասներ-իրեր-գործիքները (ավետարան, գավազան, խաչ, սկիհ և այլն): Նվիրատվության պայմանագրում, որպես նրա Ենթատեսակ, առանձնանում է նվիրաբերությունը, որի տակ նկատի է ունեցվել գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով, ինչն էլ շեշտվում է գործարքում: Եթե պայմանագրում գույքի օգտագործնան նպատակը չի նշվում, ապա այն դիտվում է որպես ստվորական նվիրատվություն: Նվիրաբերությունը նոր ինստիտուտ չէ, այն տարածված է եղել շատ հնուց: Գանձասարի վանքի հյուսիսային պատի կենտրոնական մասում, մեծ կամարի ներքո հիշատակված է, որ Պողոս-թեկ Զալալյանցի կինը՝ Նազլուն, իր կամքով գրած կտակագրի համաձայն /1864թ./ ամուսնու և զավակների մեղքերի թողության համար վաճրի միաբանությանը դրամական միջոցներ է տվել (գումարը չի նշված-Վ.Դ.), իր հերթին, կտակակատարը (վանքը) պարտավորվել է գումարը չժախսել, այլ միայն կարող էր գումարը տոկոսով տալ և ստացված տոկոսների գումարից վարձատրել վաճրի սրբերին՝ եկեղեցական նախատոների կապակցությամբ պատարագ մատուցելու համար:²³

Ինչպես Դադիվանքի, այնպես էլ Գանձասարի վիմագրերը վկայում են, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունները կենտրոնացված են եղել իշխող տոհմի ձեռքում, ինչը խոչոր խթան էր եկեղեցական հարստության աճի և զարգացման համար:

Վիմագրերից մի քանիսը կարգավորում են առուժախի պայմանագրերից բխող իրավահարաբերություններ: Զրվտիկ կամ Եղիշէ առաքյալի վաճրի արձանագրությունների համաձայն՝ միաբանությունը վաճրի համար գնել է այգիներ, հողամասեր և ավետարան (Դիվան, էջ 107): Մեկ այլ արձանագրություն փաստում է, որ Շերբարիք անունով մեկն իր ռազմի սայլերի կեսը 25 դեկանով (դահեկան, պարսից Դարեհ արքայի պատկերով դրամական միավոր-Վ.Դ.) վաճառել է Շահի որդուն՝ Տեր-Ռուբենի ներկայությամբ: Առուժախի գործարքի ժամանակը նշված չէ, բայց Տեր-Ռուբենը հիշատակված է Խարբավանքի 1267թ. մեկ այլ արձանագրության մեջ (Դիվան, էջ 128, 129): Արձանագրությունը վկա է հանդիսանում հեռավոր անցյալում մեր երկրամասում եղած առևտրի և դրամաշրջանառության մասին:

Մի եզակի արձանագրություն եղել է Արցախի հյուսիսային բնակավայրերից մեկի՝ պատմական Գետաբակի (Մերկայումս՝ Աղբեջանի Գետաբեկի շրջան) Չարեքա անապատ եկեղեցու պարսպի մուտքի գլխին, որը շինարարական կապալի պայմանագրի տարրեր է պարունակում: Դամաձայն արձանագրության՝ վարպետ Մկրտիչը 1717թ. կառու-

ցել է Եկեղեցու պարիսպը՝ 28 թուման ստանալու պայմանով, և վարդապետ Օվանեսը վարձատրել է նրան (Դիվան, էջ 268): Անհանգույն քիչ խումբ են կազմում այն վիճագրերը, որոնք վերաբերում են Արցախի հարկապարհակային քաղաքականությանը:

Վիճագրերը մեզ նաև պատկերացում են տալիս հասկանալու, թե անցած դարերում ինչպիսի՞ն է Եղել հասարակ ժողովորդի իրավական դրույթունը: Դադիվանքի գմբեթավոր Եկեղեցու հարավային պատի կենտրոնական կամարի 19 տողանոց արձանագրությունը փորագրված է մեծ իշխան Վախթանգի կնոջ՝ Արզու Խաբունի անունից (1214թ.): Դայոց Արևելյան կողմանքի թագուհին, պատմելով վանքի կառույցի, կառուցողի և թուրքերի դեմ մղված պայքարում իր որդիների զոհվելու հանգամանքների մասին, միաժամանակ մեծամեծ նվերներ է տալիս վանքին՝ հողատարածքներ իրենց անվանումներով, նրանց հետ նաև՝ «Երկու տուն» (ծուխ-Վ.Դ.) Յարփա: Նույն Եկեղեցու արևմտյան պատի հարավային մասում արձանագրված է, որ Յաթերքի մեծ իշխան Յասանի որդի Գրիգորը 1224թ. տվել է «Հ Դադի գերեզման» (իրենց տոհմական տապանատանը) Դ (չորս) տուն շինական» (Դիվան, էջ 198-201): Մեծ իշխանի որդի Սակոը 1216թ. Վաղուհասի Կարմիր վանքին նվիրած անշարժ գույքի թվում նշում է նաև «Թղթեկորա այգին իւր հողով կատապանավ» (Դիվան, էջ 114): Յունարեն «կատապան» կամ «կատեպան» բառը հայերենում օգտագործվում է այգեպան, այգեգործ, այգի մշակող իմաստոներով: Արցախի այցերարտի՛ Գանձասարի վանքի տաճարի ներսի արձանագրությունը փաստում է, որ Յասան-Զալալը վանքին նվիրել է անշարժ և շարժական գույք, այդ թվում՝ Երկու գույղ իրենց շրջակայքով («Գեղորայս Մաշեղ, Յարջանտուս բոլորքոջն»), Խաչենաձորը, Այգեստան գետը, Խաչվառներ, գրքեր, մատյաններ և այլն: Տաճարի արևմտյան պատի կամարազարդ որմնախորշի ամբողջ տարածությամբ փորագրված արձանագրության համաձայն՝ Յասան-Զալալը վանքին ևս մի գոյուղ է նվիրել, իսկ որդին՝ Արքեկը, իր հերթին, վանքին նվիրել է ուկետուի ավետարան և Երկու դաշտ՝ դրանք անփոփոխ շրջագծով (Դիվան, էջ 40, 41):

Վերոնշյալ վիճագրերն ի՞նչ իրավիճակ են պարզում: Այն, որ միջնադարյան Արցախում հայ գյուղացին գտնվել է կատարյալ ճորտության մեջ և ամրացված հողին: Նա հողատեր իշխանների սեփականությունն էր հանդիսանում և տերը ցանկացած ձևով կարող էր վարվել նրա հետ՝ նվիրել, վաճառել, կտակել: Մեր օրինակները ցույց են տալիս, որ այդ իրավունքները հողատերը կարող էր իրականացնել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջ գյուղերի նկատմամբ: Դայ պատմագիտության մեջ դեռևս վիճելի է մնում գյուղացիության ճորտացման գոր-

ծընթացի պարբերացումը միջնադարյան Հայաստանում: Սակայն Արցախի վիճագրերն անառարկելի վկայություններ են, որ անկախ օտար տիրապետությունից, ճորտատիրական իրավունքը Վաչէ թագավորից մինչև XIX դարն արմատավորված է եղել Արցախում: Դրա օրինակն է հենց Մարտակերտի շրջանի Վանք գյուղը, որի բնակչությունը, մինչև ցարական Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերացումը (1861թ.), Գանձասարի ճորտերն են հանդիսացել: Այդ հարցում որոշակի պարզություն է մտցնում Գոշի Դատաստանագիրքը: Գոշը նշում է, որ մարդկային բնությունը ազատ եղավ Արարշի կողմից, իսկ կարիքների համար տերերին ծառայելը՝ հողից և ջրից: Ովքեր չուժն հոր և ջուր, ազատ են, ուր կամենան, կարող են գնալ և բնակվել և թագավորներն ու իշխաններն իրավունք չունեն ստիպել նրանց բնակվելու որևէ գյուղում կամ երկրում:²⁴ Մեր կարծիքով, Գոշը հասարակ ժողովրդին բաժանել է երկու խնբերի՝ շինականների և գեղջուկների: Առաջինները եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը: Գոշը մեծ անիրավություն է համարել տերերի կողմից շաբաթվա ընթացքում մեկ օրից ավելի գյուղացուն աշխատեցմելը:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ մի շաբթ այլ վիճագրեր ցույց են տալիս, որ Արցախի ամենախոշոր հողատերը Հասան-Զալալյան իշխանական և հոգևոր տոհմն է հանդիսացել: Այդ հոչակավոր տոհմը, հոգևոր իշխանությունը հզորացնելու համար, ոչ միայն ինքն է վաճքին նվերներ տվել, այլ նաև իր պահանջով հանդես են եկել այլ նվիրատուներ: Իսկ Հասան-Զալալի անունից վանքի հոգևոր հաստատությանն Այգեստան անունով գետ նվիրելը միայն կարող է վկայել, թե Արցախ աշխարհում որքան խորն են եղել միահյուսված միմյանց հետ հողային և ջրային ինստիտուտները: Բոլոր դեպքերում, հողային իրավունքը գերակա է եղել ջրային իրավունքի նկատմամբ: Միջնադարյան Արցախում ջրային իրավունքի վերաբերյալ պատմությունը շատ աղքատիկ տվյալներ է թողել, բայց կասկած լինել չի կարող, որ այդ հարաբերությունները կարգավորվել են ինչպես կանոնական, այնպես էլ սովորութային իրավունքի նորմներով: Զրային ինստիտուտի վերաբերյալ Գոշի հայացքներն ինչ որ չափով հակասական են: Մի դեպքում, Գոշը նշում է, որ ջուրը չի կարող իշխանին կամ թագավորին պատկանել, այլ հողն է միայն նրանց պատկանում («Բայց ջրարբի անդաստանները հնգեմասնյա հարկի տակ լինեն, իսկ տնկիները՝ տասանորդի, որովհետև հողն է միայն իշխանին ու թագավորինը, այլ ոչ ջուրը: Այդպես և այգետուն-կերն ու ծառաստանները»): Ակնհայտ է, որ ոռոգովի հողերից մեկ հինգերորդ նասով հարկ վերցնելն անուղղակի կնշանակի, որ հարկման առարկա էր հանդիսանում նաև ջուրը՝ լինելով իրավունքի նույնափակի

օբյեկտ, ինչպես և հողը: Մյուս կողմից, Գոշը նշում է, որ «գետերը նրանցն են, ում տարածքից սկզբնավորում են, և ոչ թե նրանցը, ուր հասնում են», այսինքն, Գոշը սեփականության իրավունքի ծագման ելակետային հիմքը հաճարել է գետի ակունքի պատկանելիությունը: Գոշի վերոնշյալ նորմը մեզ նաև հուշում է, որ հարկման իմաստով ջրագուրկ հողը նվազ կարևոր արժեք է ներկայացրել:

Մեր կարծիքով, ջրի օգտագործման հարցում Արցախում դարեր շարունակ արմատավորված են եղել սովորություն իրավունքի նորմերը: Բնական ջրերից (գետեր, վլուակներ, լճակներ, աղբյուրներ) օգտվելու իրավունք են ունեցել տվյալ տարածքի բոլոր բնակչները, իսկ արհեստական միջոցներով հանած ջրերը (առուներ, ջրանցքներ, ջրհորներ և այլն) հանայնքային կամ մասնավոր սեփականություն են հանդիսացել:

Վիմագրերը տվյալներ չեն պարունակում ծագած հողային վեճերի լուծման վերաբերյալ: Սակայն, այլ աղբյուրներից պատկերացում ենք կազմում, որ նման վեճերը քննվել և լուծվել են տեղական իշխանավորների կողմից: Հասան-Զալայսյան տոհմից էր քաջ իշխան Ալբաստը, որի անունը իշխատակված է Գանձասարի վանքի հյուսիսային պատի արևմտյան անկյունում: Արձանագրությունից նկատելի է, որ Զալայի որդի Տեր-Վարդանը, Ալբաստի իշխանության տարիներին, 1443թ. Ծակ-խաչի հողը նվիրել է վանքին (Դիվան, էջ 55): Արքեախսկոպոս Սարգիս Զալայսյանը և Սակար Բարխուդարյանը Սարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի Սր. Աստվածածին Եկեղեցում մի ձեռագիր Աստվածաշունչ են տեսել, որի Նորութի գործի վերջում գրված էր, որ Հասան-Զալայսյան տոհմից երկու հոգու միջև 1456թ. վեճ է ծագել հողային և ջրային հարցերի վերաբերյալ: Տոհմի երկու իշխանագունները գնացել են պարոն Ալբաստի մոտ, ով և վեց հոգևոր այրերի ներկայությամբ քննել և լուծել է վեճը՝ սահմանելով յուրաքանչյուրի հայրենաբաժնի հողերի եզրը և ջրօգտագործման հարցը (Վեճի առարկան գտնվում էր Մարտակերտի շրջանի Առաջաձոր գյուղի տարածքում):²⁵

Օտար նվաճողները մի այսպիսի օրենք էին սահմանել, հանաձայն որի՝ ուժով նվաճված երկու այն հարստությունները, որոնց տերերը վախճանվում էին՝ առանց ժառանգ թողնելու, պիտի անցնեին իսլամի հոգևոր և աշխարհիկ գերազույն իշխանությանը (Բեյթ-ուլ-մալը): Այդ օրենքն ինչ-որ չափով պաշտպանվում էր արաբական իշխանության օրոք: Սակայն, թաթար-մոնղոլների և թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում, նրանց վերակացուների շահատակություններին չափ ու սահման չկար, որոնք առանց որևէ պատճառի Բեյթ-ուլ-մալի էին ենթարկում տեղական իշխանավորների կալվածքներն ու շար-

Ժական գույքը: Բայց կային հայ իշխանավորներ, որոնք պայքարում էին իրենց օրինական իրավունքների և շահերի համար: Ծարա (ԼՂՀ Շահումյանի շրջան) իշխանագունդները, որոնց թվում էր նաև Տուրունի որդի Այտինը, մի շարք գյուղեր, դաշտեր և հանդեր են նվիրել գավառի վաճքերի առաջնորդ կարգված Ավագ Եպիսկոպոսին: Վիճակիր արձանագրությունն անեօք է ուղղում նվիրատվության պայմանները խախտող անձանց, մանավանդ այլազգիների կամ թուրքերի դեպքում, Աստծուց խնդրելով, որ նրանց «հալալն հարամ լինի և իր փեյզանբարեն (մահմեդական հոգևոր առաջնորդ-Վ.Ճ.) ապիզար լիցի ամեն» (Ղիվան, էջ 216): Փաստորեն, մահմեդական իրուսակների և բռնակալների ազդեցությունն այնքան իրական ու վտանգավոր է եղել, որ նրանց ուղղված հատուկ նզովք է նշվել արձանագրության մեջ: Պատմական փաստերը վկայում են, որ հետագայում օտար բռնակալները հարցունիս գրավեցին իշխան Այտինի սեփականությունը, բայց քաջ իշխանը չնահանջեց և իր իրավունքները վերականգնելու համար երեք տարի պայքարեց մահմեդական դատարաններում՝ կարողանալով ետ վերցնել իր նախնիների սեփականությունը: Շուշիի խանության տարիներին պատմական Քարվաճառում /ներկայումս՝ ԼՂՀ Շահումյանի շրջան/ հայկական տարրը դուրս մղվեց և շրջանը բնակեցվեց խաշնարած քուրդ ցեղերով: Դադիվանքին պատկանող լայնատարած կալվածական հողերն անիրավությամբ տրվեցին քրդերին և ազերիներին: Կարծես դա քիչ էր, Ղարաբաղի վաճքապատկան հողերի մի մասն էլ անցավ եկվոր ցեղերի ձեռքը: Այդ անարդարության դեմ անհաջոտ պայքար մղեց Ղարաբաղի հոգևոր առաջնորդ Բաղրամար միտրոպոլիտը: Նա ցարական դատարաններում, տարիներ շարունակ, դատ վարեց խաների ժառանգների և թուրք բեկերի դեմ՝ ծախսելով մինչև 30.000 ռուբլի և կարողացավ հետ վերցնել սեփականության իրավունքով հայ ժողովրդին պատկանող հողերը: Սակայն, նրա մահից հետո, նրա հաջորդների անհոգության և ընչափաղցության պատճառով մեր ժողովրդի ազգային հարստությունը նորից անցավ մահմեդականների ձեռքը:

Խորհրդային Միության տարիներին պատմական Քարվաճառի /աղրեջաններեն՝ Քյալբաջար/ շրջանը վերածվել էր մի հավաքատեղի, որտեղ պատսպարված անասնագործերի նշանակետը Լեռնային Ղարաբաղի տարածքն էր, որոնք էլ Դադիվանքը դարձրել էին ոչխարների մակաղատեղ: Դեռ ավելին, նրանք վնասել էին վանքի շենքերը, որմնանկարները և արձանագրությունները: Արցախի ինքնապաշտպանության ուժերը, կատարելով նախնյաց պատգամը, կարողացան 1993թ. մարտապարիլ ամիսներին ազատագրել պատմական Քարվաճառի շրջանը: Դադիվանքն իր արժեքավոր արձանագրություններով և աշխարհում

հավասարը չունեցող բարձրարվեստ երկու խաչքարով մշտապես դարձավ հայ ժողովորի սեփականությունը:

Սեր նախնյաց պատգամներին հանդիպում ենք նաև Գանձասարի վանքի տաճարի արևմտյան պատի հարավային մասում՝ Հասան-Զալալի և նրա որդու՝ Աթաբեկի թողած արձանագրության մեջ, որտեղ հայր ու որդի սերունդներին ավանդում են՝ թույլ չտալ վանքապատկան հողերը մահմեդականների սեփականությունը դառնան (Դիվան, էջ 40): Հասան-Զալալյան տոհմը, կարծես կանխատեսել էր, որ օտար ցեղերը միշտ դրան են ձգտելու: Այդպես եղել է, բայց հուսանք, որ չի շարունակվի: Իր ազգակիցներին աղվանների հետնորդներ համարող պատմաբան Ֆարիդա Մամեդովան, լսելով /աղբյուրը չի նշում –Վ.Յ./, որ Ամենայն Հայոց կաթողիկոս, Երջանկահիշատակ Վազգեն Ա-Ա Խորհրդային Աղրբեջանի կառավարությունից թույլտվություն է վերցրել՝ Գանձասարի վանքը վերանորոգելու համար, հայերի «զեղծարարությունների» առաջն առնելու նպատակով ոտքի է կանգնեցրել ազգակից գիտնականներին և 1978թ. մի գիշեր եկել, հասել Գանձասար: Վանքի պահակը բացել է դրուշ, և նրանք, ջահերով մտնելով վանքի ներսը, բոլորի համար բարձրածայն «կարդացել են» այն արձանագրությունը, որի մեջ իբր թե գրված էր, որ Հասան-Զալալը Գանձասարը կառուցել է «իր աղվանից ազգի համար»:²⁶ Համոզված ենք՝ կեղծիքներից չխորշող վայ-գիտնականը միայն կարող է ննան հերյուրանքներ թույլ տալ իրեն: Քսաներորդ դարավերջին Աղրբեջանի կողմից Արցախին ու նրա ժողովրդին պարտադրված պատերազմը վերստին բացահայտեց աղրբեջանական իշխանությունների նենաց նպատակները: 1992թ. հոկտեմբերի 28-ին և 29-ին վանքը հրթիռակոծության ու ոմբակոծության ենթարկվեց: Սակայն արձակված բոլոր ռումբերը և հրթիռները պայթել են Եկեղեցուն չիսասած՝ գնբեթի վերևում: Գանձասարն անխոցելի մնաց: Եկեղեցուն հասած միակ արկը մխրճվեց պարսպի մեջ: Ասում են՝ թե Եկեղեցու խորանի երկու կողմերում գտնվող հրեշտակների պատկերները հայտնվել են հենց այդ օրերին:

Արցախի վիճագրերում ոչ սակավ հանդիպում ենք «պարոն» և «պատրոն» Եգրույթներին, որոնցից էլ ծագել է «պարոն-տերության» ինստիտուտը: «Պարոն» բառը փոխառված է միջնադարյան Եվրոպայում լայնորեն տարածված «բարոն» տիտղոսից և այդ բառը հայերենում առաջին անգամ գործածվել է Կիլիկյան Հայաստանում ու Ծանակել «իշխան, մեծավոր»: Սակայն այդ ինստիտուտը Կիլիկյան Հայաստանում չունեցավ այնպիսի դրսերում, ինչպես բուն Հայաստանում: Անկախ, կենտրոնաձիգ պետականության բացակայության պայմաններում «տեր», «իշխան», «իշխանաց իշխան» Եգրույթներին աստիճա-

նաբար փոխարինելու եկան նույնամման իմաստ ունեցող «պարոն» և «պատրոն» բառերը: Այդ տիտղոսը կրողները, որպես կանոն, զբաղվում էին հովանավորչությամբ, որի համար կոչվում էին պարոնտերեր: Սա տեղի էր ունենում հատկապես այն դեպքում, երբ աշխարհիկ հայ մեծավորները հովանավորության տակ էին առնում իրենց տիրություննում գտնվող վաճերը: Պարոնտերության ինստիտուտը կարող է միայն վկայել, որ Արցախում աշխարհիկ իշխանությունը երբեք չոչնչացավ և պարոնտերները, իրենց ձեռքում պահելով հայրենական կալվածքները, իսկ մի մասն էլ նվիրելով հոգևոր իշխանությանը, իհմք ստեղծեցին մի նոր պետական կազմավորման, որը պատմության մեջ կոչվում է Արցախի մելիքություններ:

Ամենավաղ հիշատակված «պատրոն» բառին հանդիպում ենք Դադիվանքից ներքև Թարթառ գետի ափին, իին կամրջի մոտ կանգնեցված խաչքարի վրա: Խաչքարը կանգնեցրել է Յաթերքի, Յանդաբերդի և Յավքախաղացի տեր, Յասանի որդի Կյուրիկիեյի թագավորի թոռ «քարեպաշտ պատրոնիկն Վասակ»-ը 1209թ. (Դիվան, էջ 129): XIII-XVIII դարերի վիճագրերում հիշատակված «պատրոն» բառն այլ բան չի նշանակում, քան այն, որ դրանց կրողներն ազգային իշխանությամբ օժտված անձինք էին: Ծարա վանքի գեղաքանդակ խաչքարի վրա արձանագրության մեջ (1430թ.) Այդինը հանդես է գալիս խրոխտ տիտղոսով՝ որպես փոքր Մյունիքի, Ականայի, Յաթերքի, Յանդաբերդի և Գեղամա ծովակի հարավ-արևելյան շրջանների տեր, որպես մեծ իշխան, քաջ և հաղթող զորավար, պարոն Շամշինի որդի (Դիվան, էջ 224): Ծարա վանքի մեծ արձանագրությունը վաղուց և ոչնչացվել մահմեդականների կողմից, դրա բովանդակությանը կարելի է ծանոթանալ միայն գրքերում: Մարտակերտի շրջանի Յաթերք գյուղի «Մուլդուսին գերեզմանոտ» կոչվող հին հանգստարանում բազմաթիվ խաչարձաններ են եղել, որոնց կանգնեցնողները հիշատակված են պարոնտեր տիտղոսով: Ահա դրանցից մեկի արձանագրությունը. «Կամաւ աստուծոյ պարոն տեր Ոհանէս կանգնեյի սուրբ խաչերս թագավոր Շահ Աբազն, Երկրիս պարոն տէր Ոհանէս»:²⁷

Վիճագրերից կարելի է կրահել, որ XIV-XVIII դարերում պատմական Արցախում գահերեց կամ իշխանաց իշխան տիտղոսներ կրողներ չեն եղել, բայց գավառների իշխանազունները, պարոնները, պատրոններն ազգային իշխանություն են ներկայացրել և պետականության հարցերում մինյանց հետ համերաշխ եղել, օտար տիրապետության պայմաններում կարողացել պահպանել հայրենի հողը, ազգային շահը: Օրինակ, Մարտունու շրջանի Յերիեր գյուղի՝ 1667թ. կառուցված Սր.Գրիգորիս Եկեղեցու արևատյան մուտքի բարավորի վրա փորագրված է, որ

Եկեղեցին կառուցվել է Սուլեյման շահի թագավորության, Վարանդայի մելիք Բաղրի իշխանության և Միրզա Ղուլի բեկի պարոնության տարիներին (Ղիվան, էջ 165):

Նյութական մշակույթի մի շարք աղբյուրներ վկայում են, որ Արցախի բնիկ տերերը կարողացել են քոչվոր տիրակալների սեփականությունը դարձած հայկական հողերի մի մասը և որոշ գյուղեր գտնե առուվաճառքի պայմանագրերի ձևով հետ վերցնել: Ահա մի այդպիսի վավերագիր. «Երևելիներից լավագույնը՝ Նաֆասկովի Թուշմալ Խալի-Ֆախր-Էղ-Դինլուն իր նամանների մեջ լավագույնին՝ Ֆաղանի Աշեղ Ղիվանլուին, շարիաթական վաճառքով, քաղաքներում ընթացիկ Թավդիզի տասներկու թումանով, որի կեսը պարզ լինելու համար Թավրիզի վեց թուման է լինում, վաճառեց. Քոչիզի Խազագ գյուղի (ԼՂՅ Մարտունու շրջանում –Վ.Յ.) ամբողջ վեց դանգ մուլքը իր չորս սահմաններով»:²⁸

Վիմագրերը նաև վկայում են, որ նույնիսկ օտարների տիրապետության պայմաններում քաղաքացիական գործերի մի մեծ շրջանակ ընդդատյա է եղել հայոց աշխարհիկ և հոգևոր դատարաններին:

Պատմական Արցախի տարածքում շատ քիչ ենք հանդիպում արաբատառ պարսկերենով, արաբատառ ադրբեջաներենով և ռուսատառ ադրբեջաներենով վիմագիր արձանագրությունների, իսկ եղածներն առնչություն ունեն նիստ ՀԻՀ դարի հետ: Վիմագրերը մեզ աներկրա հուշում են, որ մահմեդական տարրը մեր երկրամասում բնավորվել է նոր ժամանակներում՝ հասցնելով 4 անգամ փոխել իրենց այբուբենը և ազգությունը:

Այսպիսով, պատմական Արցախ աշխարհի վիմագրերում օգտագործվող «ինքնակալ», «տիրակալ», «թագավոր», «թագավորություն», «թագավորացուն», «թագուհի», «իշխանաց իշխան», «իշխան», «իշխանություն», «իշխանուիհի», «հայրապետ», «հայրապետություն», «կարողիկոս» եզրույթները և տարրեր տեսակի գործաքններից բխող հիշատակությունները միայն կարող են վկայել, որ Արցախը կուլ չգնաց օտար ցեղերի ասպատակություններին, երկրանասում երբեք չնարեց հոգևոր և աշխարհիկ իշխանությունը, այլ ընդհակառակը, այն ԽVII և XVIII դարերում ազգային ազատագրական պայքարի պատվար հանդիսացավ, որտեղ գլուխ բարձրացրեց հայրենիքի պատագրության գործը:

Սակայն այդ ժամանակաշրջանում, քաղաքական անբարենպաստ հանգամանքների շնորհիվ, այն չիրականացավ, բայց արցախյան հիմնախնդիրը միշտ էլ մնաց և Խորհրդային Սիոնության փլուզման նախօրյակին նոր թափ ստացավ ու ազգային-ազատագրական պայքարի

շնորհիվ պսակվեց հաջողությամբ, որի առհավատչյան ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է՝ պետականության բոլոր բնորոշչներով:

Խորհրդային իշխանության օրոք Աղրբեջանը, շարժվելով ավագ եղբոր՝ Թուրքիայի ծրագրերով, իր տարածքում գտնվող հայկական մշակույթի նկատմամբ աչքի ընկավ աննկարագրելի բարբարոսական ակտերով՝ նպատակ ունենալով մշակութային ջարդի միջոցով վերացնել հայկական հետքը: Արածին հերթին, հայկական բոլոր հուշարձանները, Խորհրդային Աղրբեջանի կառավարության 1988թ. ապրիլի 27-ի թ. 145 որոշմամբ, համարվեցին աղվանական: Դամարելով, որ դա թիւ է, Աղրբեջանն ավելի հեռուն գնաց: Նա հայ մշակույթի արժեքներից իր վրեժը լուծելու համար չխորշեց նույնիսկ պայթեցնել հայկական եկեղեցիները և Արաքս գետը լցնել պատմական Զուղայի խաչքարերը: Նույն ճակատագրին արժանացան նաև Հաբերը գյուղի «Մուղղուսին գերեզմանոտ» կոչվող հին հանգստարանի վիմագիր խաչարձանները: Խորհրդային Միության տարիներին, Բաքվի կողմից Արցախի վարչատարածքային սահմանների կամայական վերածնան արոյունքում, վերոնշյալ տարածքը հանձնվեց աղրբեջանական Ումուղլու /ներկայում՝ Ականաբերդի հայկական համայնքը/ գյուղին, որի սովորով նախագահ Արթուր Անցյալ դարի 80-ական թվականներին բուլղոզերով հողին հավասարեցրեց գերեզմանոցը՝ հողով ծածկելով պատմահրավական արժեք ներկայացնող խաչարձանները: Արցախյան շարժման տարիներին Գետաշենի մոտ գտնվող Եղնասարի վանքը տանկերի և թնդանորների համազարկով նույնականացնեցվեց: Միայն Արցախի հարակից տարածքների ազատագրումից հետո լիովին ակնհայտ դարձան կատարած Վայրագության նորկալի հետքերը: Ծարավանքը, որը հիմնադրվել էր 1301թ. և գտնվում էր ներկայիս Շահումյանի շրջանի Ծար գյուղում /Թարթառ և Ծարա վտակի խառնարանի անկյունի բարձրադիր բլուրի վրա/, Խորհրդային Աղրբեջանի կողմից քանդվել է և նրա քարերով մոտակա քրդարնակ գյուղում դպրոցի շենք է կառուցվել: Ֆիզուլի շրջկենտրոնից դեպի Հադրութ քաղաքը տանող ճանապարհի եզրին, նախկին Կարգաբազար գյուղի մոտ կա մի հին իջևանատուն՝ կառուցված հայ ճարտարապետության միջնադարյան լավագույն ոճով: Իջևանատունն ունեցել է 1681թ. հայատար արձանագրությունը ոչնչացնելուց:

Հանուն ճշմարտության պետք է ասել, որ արձանագրությունների մի մասի անհետացումն էլ կապված է մեր իրականության մեջ երբեմնակի կամա-ականա տեղ գտնող բացասական երևույթների հետ: Ակադեմի-

կոս Յ.Օրբելին մի այսպիսի դեպք է նկարագրել. «Բավական էր ամիեթեք լուր տարածվեր, թե դատարանը խաչենի բեկերի և հայկական հոգևոր իշխանության միջև ծագած հողային վեճերը լուծելիս դեկավարվելու է ոչ միայն ռուսական կալվածատիրական իրավունքի նորմերով, այլև հայկական հնագույն արձանագրություններով, որպեսզի բեկերի ամբոխը Գանձասարի շրջակայքում քերեր XII-XIII դարերի մեկ ու կես տասնյակ արձանագրություններ, նպատակ ունենալով ոչնչացնել այդ հողերի վանքապատկան լինելն ապացուցող վավերագրերը»²⁹:

Մեր օրերում, երբ Աղրբեջանի դեկավարությունը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքը լկտիությանը աղդրեցանական է համարում, ավելի հրատապ է դառնում պահպանել հայ ժողովոյի դարաբաղյան հատվածի ստեղծած քարակերտ ժառանգությունը, որն, ի տարբերություն ձեռագիր մատյանների, օրեցօր, մեր աչքից հեռու, մեր աչքի առաջ վնասվում, փշանում և ոչնչանում է: Հենց դա է պարտադրում մեզ Արցախի Սահմանադրության 58-րդ հոդվածը. «Յուրաքանչյուրը պարտավոր է պահպանել պատմական և մշակութային հուշարձանները»:

1994թ., մայիսյան հրադադարից հետո, հայ ժողովուրդն իր պատմության հուշարձանների մի մասը գտավ ավերակների կույտի մեջ, իսկ մյուս մասն էլ, դեռևս քարնված հողի տակ, սպասում է իր հետազոտողին: Ուստի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները պետք է գտնվեն պետության ամենօրյա հոգածության և պաշտպանության ներքո: Օրենքը պետք է խստ լինի պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնողների կամ վնասողների հանդեպ: Մեր կարծիքով, ԼՂՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված պատիժները շատ մեղմ պետք է համարել՝ պատմության և մշակույթի հուշարձանների նկատմամբ ուժնագություն կատարողների նկատմամբ:

Այսպիսով, Արցախի վիմական արձանագրությունները վկայում են, որ ազգային-պետական իշխանությունը մեր երկրամասում երբեք չի ընդհատվել, չի ճարել, և այն շարունակվել է մինչև XIX դարի սկիզբը, որպես հայոց պետականության մի անմար փարոս:

Արցախի վիմագրերը ոչ միայն խոսուն վկաներ են հայ ժողովրդի բազմադարյա պատմության էջերը լիարժեք լուսաբանելու, այև՝ կարևոր կրվան Արցախի հարցի արդարացի լուծնան գործընթացում, քանզի, անկասկած, ելակետային դրույթներ են պարունակում առարկայական բանակցությունների համար:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՆ ԱՐՑԱԽԻ
ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Միայն այն պետությունն է ուժեղ և ամուր,
որը սրբորեն է պահում իր անցյալի պատվիրանները:
ՆԱՊՈԼԵՈՆ

Չնայած թուրքական և մոնղոլական դժնիակ դարերը, Լենկ թեմուրի և թուրքմենական ասպատակիչ ցեղերի ավերիչ արշավաճները ոչնչացրին Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունները, սակայն պատմական Հայաստանի մի շարք հայաշատ վայրերում, հատկապես՝ Սյունիքում և Արցախում, երկրի բնիկ տերերը կարողացան զենքի ուժով պաշտպանել իրենց ազգային ինքնիշխանությունը՝ ընդհուպ մինչև ռուսական տիրապետության հաստատումն Անդրկովկասում:

Եվ եթե XVIII դարի սկզբներին Սյունիքի և Արցախի մելիքությունները հասան փաստական անկախության, այդ երկրամասերը զերծ պահելով մահմեդական ուժացումից ու սերունդներին ավանդեցին, որ ազգերի ու ժողովուրդների անկախությունը հիմնականում ձեռք է բերվում քաղաքական պայքարի միջոցով, ապա հայ ժողովորդի արցախյան հատվածի հերոսական անցյալը ոչ պակաս էական դեր է խաղացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման գործում:

Արցախն ու Սյունիքը, որոնց միշտ «իրենցն» են համարել (և կիամարեն) մեր հարևանները, Մայր հայրենիքի հարավ-արևելյան հատվածի ռազմավարական բանալիներն են հանդիսանում: Զպետք է մոռանալ զորավար Նժդեհի ինաստուն այն խոսքերը, որ «Հայաստանն ինչպիսի ցուցանակ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի և Զանգեզուրի»: «Լեզվական, ազգագրական ու տնտեսական առումներով լինելով միասնական՝ Ղարաբաղը վերածվել է Հայաստանի միջնաբերդի, նրա արևելյան թևի: Այդպիսին է նա եղել նախկինում, այդպիսին է նա այժմ և այդպիսին կլինի նա մշտապես, քանի որ անհնար է պաշտպանել Հայաստանի սիրտը՝ Արարատյան հարթավայրը՝ առանց Ղարաբաղն ունենալու... Հին ժամանակներում Սյունիքի մելիքությունները, ինչպես որ նախկինում անվանվել է Ղարաբաղը, քա-

նիցս սեփական ուժերով վրանդել են թշնամունը կրկնվում է, և վերջին անգամ դա տեղի ունեցավ մեր աչքի առջև», - գրում է ուս նշանավոր հասարակական գործիչ Մերգեյ Գորոդեցկին՝ 1919թ. մարտի 23-ին «Կավկազskoe слово» պարբերականում տպագրված իր «Ղարաբաղ» հոդվածում: Հանճարեղ գրողի կողմից հնչեցված մարզարեական մտքերը հայ ժողովորի համար արդիական և կարևոր են լինելու բոլոր ժամանակներում:

Պատմական անհերքելի ծշմարտություն է, որ Արցախ նահանգը զբաղեցրել է Կուրակ գետից մինչև Երասխ գետը՝ թիկունքին ունենալով Հայաստանի հետ սահմանային շրջանները, իսկ առջևում՝ Կուր-Արաքսյան հովիտը: Այդ նահանգի մի մասում, դեռևս X-XVI դարերում, ծևավորվել էր Խաչենի իշխանությունը, որի տերերի հետ գրագրություններ է ունեցել նույնիսկ բյուզանդական արքունիքը:¹ Խաչենը, որի անունով է կոչվել ամբողջ Արցախ նահանգի հիմնական մասը, X-XIII դարերում, Հայաստանի ամենաազդեցիկ վարչաքաղաքական միավորներից մեկն էր: XVII դարի սկզբներին Խաչենի զավառների իշխանավորներն իրանի շահ Արտաշինի հրովարտակներով օժտվել են մելիքական տիտղոսներով և որոշակի իրավունքներով: Գավառների տերերը հայոց հիմն իշխանական տներից սերող ավատադիրական կառավարիչներ են եղել, որոնց պարսից շահերը տվել են արաբական «մելիք» հորջորջունը, որը նշանակում է «տեր», «իշխան»: Քանի որ զավառները հիմնականում հինգն էին՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն, Զրաբերդ և Գյուլիստան, ուստի դրանք պատմության մեջ հայտնի են արաբերեն «Խամսա» (հայերեն՝ հնգյակ) անունով:² Սահմեդական ցեղերը հետագայում երկրանասին տվեցին օտարահունչ՝ Ղարաբաղ անվանումը: Այն կազմված է թուրքերեն «ղարա»-սև և պարսկերեն «բաղ»-այգի արմատներից:

Մելիքություններն Անդրկովկասում եղել են հայաբնակ շատ վայրերում՝ Երևանի, Նախիջևանի, Շիրվանի, Գանձակի և այլ խանությունների մեջ: Բայց այդ մելիքություններից ամենից անկախը, ինքնուրույնը և նշանավորը Արցախի մելիքություններն են եղել, որոնք միասին վերցրած ունեցել են պետականության բարձր կարգավիճակ, իսկ դրանց կառավարիչները՝ մելիքները, ներքին կառավարման հարցերում՝ լիակատար ինքնուրույնություն: Նրանք ունեցել են իրենց բերդերը, սեփական գործը, հարկային քաղաքականությունը, դատ ու դատաստանի իրավունքը: Արցախի մելիքների գլխավորը Դիզակի մելիք Եգանն էր,

ով Նադիր Շահի կողմից բեկլարբեկի տիտղոս էր ստացել և որի մոտ էլ հավաքվում էր արքունական հարկը: Մելիքները թե՛ քաղաքական շահերով, և թե՛ խնամիական կապերով միացած էին միմյանց հետ, և այդպիսով, Խամսայի բոլոր հինգ իշխանությունները կազմում էին մի դաշնակցական միություն: Պատսպարված իրենց անմատչելի լեռների և մթին անտառների մեջ, նրանք ոչ մի մահմեղականի թույլ չեն տալիս բնակություն հաստատելու իրենց երկրներում և ամբողջ Ղարաբաղի ազգաբնակչությունը բաղկացած էր միայն հայերից, որոնց քանակությունը բազմաթիվ էր:³

Մի կողմ թողմնելով տեղական հայրենասիրությունը՝ պետք է նշել, որ Արցախը պետական իշխանության պահպանման և պաշտպանության հարցերում միշտ էլ խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ: Ազգային-ազատագրական ոգին և եռանդն այնքան խորն են խարսխված եղել Արցախի լեռներում, որ այդ երկրանասի պատմությունն անմահացրած հանճարեղ Ռաֆֆին «Խամսայի մելիքությունները» պատմական երկը համարել է իր բոլոր աշխատությունների պատմական նույնականությունը: Ըստ Ռաֆֆու՝ այդ աշխատությամբ նա կենդանացրել է մի վաղուց կորած և մոռացված պատմություն և դրանով ապացուցել, որ հայկական իշխանությունը շարունակվել է մինչև XIX դարը:⁴

Դայոց գավառական մելիքների իրավունքները վերջին անգամ վերահաստատվել են Նադիր շահի հրովարտակներով: Դրանցում նշվում էին մելիքների իրավունքներն ու պարտականությունները, մասնավորապես, հրովարտակներն օժտելով մելիքներին հարկ վերցնելու, զորք պահելու, կառավարելու և դատ անելու իրավունքներով, միաժամանակ նրանցից պահանջում էին հայտակների հանդեպ լինել արդարամիտ և ուղղանիտ, գործել այնպես, որ ճնշումներ և կողմնապահություններ չլինեն:

Քաղաքական անկախության կորստի պայմաններուն հայ ժողովրդի ներքին կառավարման հարցերում միշտ էլ էական դեր են ունեցել Դայ առաքելական սուլր Եկեղեցին և հայ հին նախարարական տոհմերի ու իշխանական տների ներկայացուցիչներն ու մելիքները: Իսկ ժողովրդի ներքին կառավարման գործառություններից մեկն էլ իրականացվել է իրավունքի միջոցով, որի աղբյուրներն են հանդիսացել սովորությը, կանոնական իրավունքը, օտար իրավունքի թարգմանչական հուշարձանները, ազգային դատաստանագրերը և իրավահայտ աղբյուրները:

Դայ ժողովուրդն ազգային պետականությունը կորցնելուց հետո

օտար զավթիչներին կուլ չգնալու համար առաջնահերթ նշանակություն է տվել սովորութային իրավունքի նորմերին, որոնք դարեղար անցել են սերմնից սերունդ և հասարակական կյանքում դարձել պարտադիր: Նույնիսկ հնուց եկող որոշ սովորութեր պահպանվել են նաև մեր իրականության մեջ:

Պատմությունից մեզ շատ քիչ տեղեկություններ են հասել ինչպես Խաչենի իշխանությունում, այնպես էլ դրա հողի վրա ծագած Արցախի մելիքություններում իրականացված դատական գործառույթների վերաբերյալ: Դեռ ավելին, այդ ժամանակներին վերաբերող որևէ դատական գործ կամ դատական որոշում չի պահպանվել: Սակայն բոլոր հետազոտողները համամտեն նրանում, որ ինչպես Խաչենի իշխանները, այնպես էլ Արցախի մելիքներն ունեցել են իրենց դատն ու դատաստանը:⁵

Խախմբաց գլուխներում փաստեցինք, որ Մխիթար Գոշը հայոց աշխարհիկ իրավունքի անդրանիկ ժողովածուն՝ իր հոչակավոր Դատաստանագիրքը ծերնամուխ է եղել գրել Հաթերքում՝ Խաչենի մեծ իշխան Վախրանգի ապարանքում և վայելել նրա հովանավորությունը: Հայ իրավական մտքի հուշարձանի առաջին օրինակներից մեկը Գոշն ընծայագրով նվիրել է Արցախի իշխանաց իշխան Վախրանգին՝ ակնարկելով, որ իշխանն անսխալ ուղղությամբ կկիրառի նրա պատվիրանները: Հարկ է նշել, որ մի շարք հեղինակներ հակված են այն տեսակետի օգտին, որ Գոշի Դատաստանագիրքը, որով հայկական արդարադատությունը ղեկավարվեց շատ դարեր, ամենայն հավանականությամբ օգտագործվել է ինչպես Խաչենի իշխանությունում, այնպես էլ դրա հողի վրա ծագած մելիքություններում:⁶

Չնայած պատմական փաստերի բացակայությունը հնարավորություն չի տալիս միանշանակ եզրահանգնան գալ, սակայն հստակ է, որ մելիքները չեն ղեկավարվելու շարիաթի օրենքներով կամ իրեն ինքնակոչ Ղարաբաղի խան հոչակած Փանահի և նրա հաջորդների կարգադրություններով: Դա այն դեպքում, եթե Աստրախանի հայ գաղութում, որտեղ հայերի թիվը XVIII դարի կեսերին հասնում էր շուրջ 2000-ի, կիրառվում էր Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը, որի դրույթը մերձեցման շատ եզրեր ուներ Գոշի Դատաստանագրքի հետ:⁷

Գոշի Դատաստանագիրքը սկզբունքորեն ընդունում է, որ քրեական գործերը քննելու, հանցագործությունների ու մեղքերի համար մարդկանց պատժելու իրավունքը հավասարապես պետք է պատկանի և

հոգևոր, և աշխարհիկ դատարաններին:

Պատմագիտական փաստերը ցույց են տալիս, որ դատավարությունը միջնադարյան Յայաստանում բոլորովին էլ հոգևոր դասի առանձնաշնորհը չի եղել: Ավելին՝ «Եկեղեցական դատարանը գրաղվել է գերազանցապես Եկեղեցու և հոգևորականության հետ կապված գործերով: Աշխարհիկ գործերի խիստ ներ բնագավառն է ընդդատյա եղել նրան, սահմանափակված առավելապես ընտանիքի ու ամուսնության իրավունքը և քաղաքացիական իրավունքի մի մասով»:⁹

Արցախի մելիքություններում աշխարհիկ դատարանների գործառույթները կատարել են մելիքները և տանուտերեր-քյոխվաները: Վերջիններս նշանակված կամ հաստատված լինելով մելիքների կողմից՝ հանդես էին գալիս որպես ստորադաս դատարաններ: Միջնադարյան Յայաստանում դրանք կոչվում էին տանուտիրական դատարաններ: Նրանց իրավասության մեջ էր մտնում գյուղական վեճերի և թերև հանցանքների քննումը: Դատավարության ժամանակ իհմնականում դեկավարվում էին սովորության իրավունքի նորմերով: Կողմը, դժգոհ լինելով տանուտիրական դատարանի արձակած վճռից, կարող էր գանգատարկեր այն «մելիքական դատարանին», որը հանդես էր գալիս որպես վճռաբեկ ատյան տանուտիրական դատարանի նկատմամբ: Մելիքական դատարանն առաջին ատյանի կարգով քննում էր նաև ծանր հանցանքների վերաբերյալ գործերը: Դատավարության կարգը բանավոր էր և դատավարության ելքը իհմնականում կախված էր սովորության իրավունքի նորմերից և մելիքի կամքից, որը հպատակների համար օրենքի ուժ ուներ: Մելիքի արձակած վճիռը վերջնական էր և բողոքարկման ենթակա չէր:

Դատավարության համար հատուկ շենք չի եղել, դատը տարվել է մելիքի տան բակում կամ ապարանքի սենյակներից մեկում: Գանգատավորն իր ցուցմունքները հաստատելու համար պարտավոր էր վկաներ թերել, իսկ վկաներ չկանելու դեպքում՝ երդվել: Դատաստանական երդման համար Եկեղեցուն կամ մի սրբի առաջ գանգատավորը մի զույգ մոմ էր վառում և մեղավորին առաջարկում հանգցնել մոմերը: Եթե փշեր հանգցներ՝ համարվում էր անմեղ: Երբեմն բարձրաստիճան մարդիկ էին երդվում իրենց ստորադրյալների փոխարեն:

Նահապետական սովորույթներով ապրող արցախցու համար երդվելը շատ ծանր է համարվել և երբեմն չերդվելու համար մարդիկ հանցանքը հանձն են առել:

Որոշ դեպքերում գանգատավորը մի վառ ածուխ է տվել հանցավորին և ածուխի վրա ջուր լցնելով՝ ասել. «Այսպես անցնեմ, թե որ արել եմ»:

Տարածված են եղել հետևյալ պատիժները՝ ծեծը, տուգանքը, բանտարկությունը, անվանարկությունը, դամդա խփելը, ձիու պոչից կապելն ու քարշ տալը և մահապատիժը:

Հանցագործների նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի էր առնվում կատարված արարքի բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը:

Ամենասովորական և տարածված պատիժը ծեծն էր ու տուգանքը: Ծեծը գործադրում էր մելիքը կամ նրա ծառաները: Հանցավորին ծեծում էին ճիպոտներով՝ մերկացրած կամ ծարից կապած վիճակում: Շատ անգամ էլ հանցավորին ծարից կապված վիճակում 2-3 օր պահում էին: Տուգանքը բռնագանձվում էր մելիքի օգտին:

Միայն տուգանքից վարանդայի մելիք Շահնազար Երկրորդը տարեկան ստանում էր մոտ 20.000 ռուբլի արժաք:¹⁰ Որպես բանտ ծառայում էր մելիքի ախոռը կամ ցախատունը, իսկ վտանգավոր հանցագործներին շղթայակապ պահում էին թաղակապ ներքնատներում կամ ստորգեսնյա վիրապներում, որոնց վերահսկողությունը վերապահված էր մելիքի նոքարներին: Անվանարկության պատժին հիմնականում ենթարկվում էին անառակ կանայք, որոնց երեսին մուր կամ թրիք էին քսում, էշի վրա նստեցնում և շրջում էին գյուղում, իսկ անուղղելի անառակ կանանց կապում էին ձիու պոչից և քարշ տալիս: Պատժի այս ձևով մելիք Շովսեփ Ա-ն սպանել է պողնիկ Մարիամին:

Դամդա խփելու պատժի եռթյունը կայանում էր նրանում, որ հանցավորին մերկացնում էին և մելիքի կնիքը խփում նրա հետույքին: Բոլոր մելիքները կնիքադրոշն են ունեցել, որ ներկայացնում էր մի կեռ թուրք գրված. Ք-սի ծառայ մելիք... (այսինք):¹¹

Առավել ծանր հանցանքներ կատարած անձանց կուրացնում կամ կտրում էին ծեռքը կամ էլ դատապարտում էին մահապատժի, որն իրականացվում էր այրման, կախելու, խեղդամահ կամ սրախողիսող անելու միջոցով:

Այդ հարցում չնայած խիստ և դաժան, բայց արդարադատ են եղել Դիզակի մելիքները, մասնավորապես մելիք Եսային և մելիք Աբասը: Վերջինս ժողովորի կողմից ստացել էր նաև Աբաս Դաման մականունը: Հանցագործը չէր կարող ազատել մելիք Եսայու ծեռքից ոչ կաշառ-

քով, և ոչ էլ բարեխոսությամբ: Յուրաքանչյուրին ըստ կատարած հանցանքի նշանակվում էին պատիժ և կշտամբանք: Մելիք Եսայու օրոք գավառում վերացված էին ոչ միայն գողությունը, այռոմնությունը և մարդասպանությունը, այլև կանանց բարձրածայն վեճերն ու կոհկները: Մելիք Աբասի կառավարման տարիներին հանցագործը սրախողինող էր արվում հենց հասարակության առջև, որպեսզի ոչ ոք չհամարձակվի հետագայում նույն հանցանքը գործել: ¹²

Մահապարտների նկատմամբ ոչ պակաս խիստ են եղել նաև մյուս մելիքները: Այսպես, մելիք Բեգլարի կողմից մահապատժի դատապարտված հովիվ Յախվերդու գլխին դրել են շիկացրած փլավքամիչ, որից նա անմիջապես մահացել է, իսկ մելիք Աբրով Գ-ին չենթարկվելու համար Փանոսանց Յայրապետին ծառից կախել են:

Արցախից Յնդկաստան տեղափոխված Մովսես Բաղրամյանը, մեծահարուստ հնդկահայ Յակոբ Շամիրյանի տպարանում 1772թ. տպագրած իր «Նոր տետրակ, որ կոչվում է Յորդորակ» գրքի մեջ նշունք, որ Զրաբերդի մելիք Աղամը և Գյուլիստանի մելիք Յովսեփն առանց որևէ մեկի հրամանի կարող էին իրենց ենթակա ժողովորդի միջից հանցավորին կամ վճասապարտին ինքնական կերպով պատժել ու սպանել: ¹³

Սրանք ծանրակշիռ փաստեր են, որոնք ապացուցում են, որ մելիքական իշխանության տարիներին յուրաքանչյուր մելիքությունում դատավարության իրավունքը գտնվում էր տվյալ գավառի մելիքի իրավասության մերքը: Յետագայում Ղարաբաղի խաները միայն իրենց ցեղին յուրահատուկ արևելյան խորամանկությամբ և խարդախությամբ էին կարողանում դավեր նյուրել մելիքների դեմ: Նման քստմնելի դեպք է եղել, երբ Իբրահիմ խանը բարեկամական գորոյց ունենալու նպատակով Շուշի հրավիրեց Զրաբերդի մելիք Մեժլումին, Գյուլիստանի մելիք Աբրովին, Դիզակի մելիք Բախտամին և Գանձասարի Յովհաննես կաթողիկոսին ու նրանց բանտարկեց Շուշիի բերդում:

«Մելիքական իրավունքը», կազմված լինելով չգրված իրավական և բարոյական վարքագիր կանոններից, տարածվում էր նաև հենց մելիքների վրա: Որևէ մելիքի կողմից սովորութային իրավունքի նորմերի կամ բարոյականության հիմնարար սկզբունքների խախտման դեպքում մյուս մելիքները միավորվել են նրա դեմ և չգրված օրենքի խստությամբ պատժել նրան: Այդպես է եղել, երբ իշխանատենչ մելիք Շահնազարը Վարանդայի մելիքը դառնալու համար սպանել է եղբորը՝ մելիք

Յովսեփին և սրի մատնել նրա ամբողջ ընտանիքն ու անօրեն կերպով տիրացել մելիքությանը: Ոճրագործին պատժելու և մելիքության ժառանգման սահմանված կարգը վերականգնելու համար մյուս մելիքները պատժիչ արշավանք են ձեռնարկել մելիք Շահնազարի դեմ, սակայն այդ եղբայրասպան գժուություններից կարողացավ օգտվել միայն Արցախի ոխերիմ թշնամի Փանահ Խանը: Մեկ այլ օրինակ. մելիքների կողմից ռուսների հետ վարած գաղտնի բանակցություններն իբրահիմ Խանին հայտնելու համար մելիքական տոհմի ներկայացուցիչ Ալլահ-Դուլի բեկի նկատմամբ ամենայն խստությամբ կիրառվեց մելիքական օրենքը: Նա բռնվեց և գլխատվեց: Այդպես է եղել և կլինի՝ ազգային շահերի դավաճանությունը բոլոր դարերում համարվել է ամենաքստմնելի հանցագործությունը և խստորեն պատժվել:

Թեկուզ մելիքները ներքին հարցերում եղել են միահեծան՝ ունենալով անսահմանափակ իրավունքներ, բայց նրանք, հանդիսանալով իրանի շահի վասալներ, արտաքին քաղաքականության և հարկահավաքության հարցերում ինքնագլուխ չեն կարող լինել: Պատմությունը վկայակոչում է, որ Վարանդայի մելիք Սիրզաբեկին, շահական գանձարանին հարկ չվճարելու համար, ենթարկել են մահապատժի՝ խեղդամահ անելու միջոցով, իսկ Դիզակի մելիք Բախտամը, ով ռուսական կողմնորոշում ուներ և Գանձասարի վանքում կայացած գաղտնի ժողովում (1785թ.) նույնպես իր ստորագրությունը դեռ էր ռուսաց կայսրուհուն ուղարկած գրությունների տակ, իբրև քաղաքական հանցագործ մատնվել է պարսից կառավարությանը և երկար տարիներ բանտարկության ձևով պատիժը կրել Արդարիլի բանտում:

Արցախի մելիքություններում դատական որոշումներն ի կատար էին ածվում տանուտերերի ու մելիքների կողմից: Տանուտիրական դատարանի վճիռը կատարվում էր տվյալ գյուղի գգիրի, իսկ մելիքական դատարանին՝ մելիքի ծառաներից մեկի կողմից: Վճիռն արձանագրված չէր հանձնվում ծառային, այլ միայն մի թղթի վրա խփված մելիքի կնիքը կամ նրա համրիչը: Որոշման եռթյունը բերանացի բացատրում էին ծառային, նա էլ՝ դատապարտվածին, և իբր վկայակոչում իր ասածին՝ ցույց էր տալիս մելիքի կնիքը կամ համրիչը: Տանուտերը և մելիքը դատավարության համար վարձ չեն պահանջում, բայց ծառան պոկում էր ինչքան կարող էր թե՛ մեկ, և թե՛ մյուս կողմից:

Քաղաքացիական հարաբերություններից բխող վեճերի քննությունը և լուծումը իրականացրել է Յայ առաքելական եկեղեցու

Գանձասարի հոգևոր իշխանությունը: Վերջինս լծորդված էր մելիքական իշխանության հետ՝ կազմելով մեկ միասնական քաղաքական-շակութային միավոր: Երկու իշխանությունների միջև գործում էր հաղորդակից անոթների օրենքը: Երբ թուլանում էր մեկի, բնականաբար, թուլանում էր և մյուսի դիրքերը:

Նման պայմաններում, մելիքներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև իրենց իշխանության ներքո գտնվող գավառի հոգևոր գործություն: Մելիքների թուլտպությամբ են տեղի ունեցել պսակը և ամուսնությունը:

Ամուսնանալու համար մելիքի հպատակները նրան վճարում էին որոշակի դրամական գումար: Նրանք պարտավոր էին տանել մելիքին մսացուի սուկին և երիկամները, 1 կուժ գինի, 2 հավ և 2 շիշ օղի: Եթե հարսն ուրիշ գյուղ էր տարպում, պարտավոր էին ավելի վճարել: Մելիքն իր հերթին նորապսակներին մի «խալաթ» (նվեր) է տվել:

Իրենց հպատակների ամուսնալուծությունների հարցում մելիքները երբեմն թույլ են տվել կամայականություններ՝ հարկադրելով եկեղեցուն ամուսնալուծել իրենց հպատակներին և ամուսնացնել այլ անձանց հետ: Այսպես, երբ մելիք Յովսեփ Ա-ի հպատակ Մուսին գանգատվել է իր կնոջից, ապա մելիքի հրամանով եկեղեցին նրանց ամուսնությունը լուծել է, և Մուսին ամուսնացել է մեկ այլ կնոջ հետ:¹⁴

Կան օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ ժառանգման իրավունքի հարցերը գտնվել են հոգևոր իշխանության ձեռքում: Պատմությունը մեզ թողել է Անարասի Խսրայել կարողիկոսի մի շատ հետաքրքիր գրավոր վկայություն, համաձայն որի՝ Վարանդայի մելիք Շահնազար Երկրորդը 1792 թվականին իր գույքը կտակել է կրտսեր որդուն՝ Զհանքախիին: Գրությունը հետաքրքիր է ինչպես իրավական, այնպես էլ ժամանակի բարքերի տեսակետից:

Ինչպես հայտնի է, Վարանդայի մելիք Շահնազար Երկրորդն ունեցել է 3 կին, որոնցից միայն առաջինը՝ Թագուհին է եղել օրինավոր: Եվ երբ իբրահիմ խանի հլու սպասավոր, Գանձասարին հակաքոր Խսրայել կարողիկոսը գրավոր հաստատել է մահամերձ մելիք Շահնազարի կանքը՝ ամբողջ գույքն իր արտաանունական կապերից ծնված որդուն՝ Զհանքախիին կտակելու մասին, ապա նրա օրինավոր կնոջից ծնված որդին՝ մելիք Զումշուրդ, հետագայում կարողացել է մոլլա Յուսինի միջոցով Խսրայել կարողիկոսի հաստատած կտակն անվավեր ճանաչել: ¹⁵ Ավելորդ չէ նշել, որ կտակը հաստատողն

այնքան վնաս են հասցրել Արցախի մելիքական և հոգևոր իշխանությունների ազգային պատագրական պայքարին, որ նրանց կողմից Դարարադի լեռնաստանին պատճառված վնասի հետևանքները վերացվեցին միայն արցախյան գոյամարտի տարիներին:

Ինչպես նշվեց, մելիքները, լինելով աշխարհիկ գործերի տեր, վճռական դեր են խաղացել նաև հոգևոր գործերում: Պատմական փաստ է, որ Պետրոս Խանցըցին՝ Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի որդեգիրը և դրանով՝ նաև Յասան Զալալյան տոհմի անդամ Դառնալու հարցում վճռական դեր է խաղացել Խաչենի մելիք Աբրեկ Յասան-Զալալյանի համաձայնությունը:¹⁶

Արցախի մելիքների կողմից երկրամասի ազատության համար մղվող պայքարը XVIII դարի վերջին տասնամյակում ավարտվեց անհաջողությամբ: Դրան ավելացավ Պարսկաստանի և Ղաղստանի ավերիչ ասպատակությունները, իբրահիմ խանի խարդավանքները մելիքների նկատմամբ, սովոր և ժամտախտը Դարարադում: Խաթարվեց երկրամասի բնականոն կյանքը: Մելիքներից մի քանիսն իրենց հպատակների ստվար հատվածով ստիպված գաղթեցին այլ երկրամասեր, մասնավորպես՝ Յայաստանի հյուսիսային (Դսեղ, Օձուն, Չորագետ) և Վրաստանի հարավային (Բոլնիս, Դադեթ և այլն) կողմերը: Օտար երկրում մելիքները քաղաքական ծրագիր մշակեցին և ներկայացրին ռուսական աստիճանավորներին: Համաձայն ծրագրի՝ մելիքները երազում էին որպեսզի Դարարադի բռնակալ խանը հեռացվի իշխանությունից, մելիքները վերադառնան իրենց հայրենիքը, վերականգնվի իրենց նախկին ազգային իշխանությունը և հայրենի ազգային կարգերը, իրենց իրավունքը և դատավարությունը խարսխված լինեն իրենց նախնիների սովորույթների և ավանդությունների հինան վրա: Սակայն ցարական բյուրոկատիան անպատճանան բողեց մելիքների երազանքները, քանի որ մելիքական կարգերի վերականգնումը ռուսական քաղաքականության մեջ չէր մտնում:

ԳԼՈՒԽ 8
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՇԻՒ ԳԱՎԱՌՈՒՄ

Զիմանալով անցյալը՝ անհնար է հասկանալ
ներկայի իմաստը և ապագայի խնդիրները:
Մ. Գորկի

Ուսական կայսրության անդրկովկասյան արշավանքների արդյունքում, XIX դարի սկզբին Վրաստանն անվերապահորեն կցվեց Ուսաստանին, նվաճվեց Գանձակը և արշավանքի սլաքն ուղղվեց դեպի պատմական Արցախ:

Նոր իրադրության պայմաններում՝ Շուշիի խորանանկ Իբրահիմ խանը, գգալով ռուսական գործի փայլուն հաթեանակները, փոխեց իր դիմակը և Գանձակի ու Արցախի սահմանագլխով հոսող քուրակ գետի ափին զարկված վրաններում, 1805թ. մայիսի 14-ին հպատակության ու հավատարմության երդում տվեց Ուսաստանի կովկասյան տեսչության կառավարչապետ, գեներալ Ցիցիանովին: Ղարաբաղի խանությունը կցվեց Ուսաստանին: Շահական Պարսկաստանին այլ բան չէր մնում, քան 1813թ. հոկտեմբերի 12-ին Արցախի Գյուլհատան գավառի Զեյվա բերդի մոտ ռուսների հետ կնքելու պայմանագիր, որը պատմության մեջ ստացել է Գյուլհատանի խաղաղ դաշնադրություն (տրակտատ) անունը: Այդ պայմանագրով Պարսկաստանը, ի թիվս Անդրկովկասի մի շարք տարածքների, Ուսաստանի մշտնջենական սեփականություն ճանաչեց նաև Ղարաբաղի խանությունը, որը հիմնականուն ներառում էր պատմական Արցախի և Սյունիքի տարածքները: Պայմանագրում որևէ խոսք չկա «ազերի» կամ «Աղրթեջան» բառերի վերաբերյալ: Ղրանք Անգիայի և Թուրքիայի կողմից մոգոնվեցին Ղարաբաղը Ուսաստանին կցվելուց մեկ դար հետո: Գյուլհատանի պայմանագիրը հիմնված էր «status quo ad presentem» սկզբունքի վրա, այսինքն կողմերի համար ամրապնդում էր այն սահմանները, որոնք հաստատվել էին պայմանագիրը կնքելու պահին: Չնայած պարսկա-խանական լուծը փոխարինվեց ռուսականով, և հայ ժողովրդի արցախյան հատվածն ընկավ ցարիզմի գիշատիչ գաղութային քաղաքականության հորձանուտի մեջ, այնուհանդերձ, Ուսաստանի կազմում հայ ժողովրդի կյանքի իրավունքն ապահովված էր և հնարավորություն կար շփվելու ռուսական և համաշխարհային առաջավոր մշակույթի հետ:

Սկզբնական շրջանում արևելյան Անդրկովկասի նվաճված տարածքում նոցվեց կառավարման պարետային ձև և խաների իրավունքների

որոշակի մասը ձևական առումով պահպանվեց: Ղարաբաղի, Շաքի և Շիրվանի խանությունների տարածքների փոխարեն ստեղծվեց մի ընդհանուր ռազմաշրջանային միավոր՝ Ղարաբաղի մարզ (այրովինցիա՝ Շուշի նստավայրով): Այդ նոր մարմնի կառավարումը Վրաստանի գլխավոր կառավարչապետի կողմից հանձնարարվեց գեներալ Վ. Սադաբովին: Ղարաբաղի մարզը՝ բաժանված լինելով տասնչորս վարչատարածքային միավորների (մահալների), դրանց կառավարումը իրականացվում էր Շուշիի պարետի կողմից նշանակված նախրների կողմից: Մրանք ցարական կառավարությանը նվիրված խոշոր հողատերեր-բեկեր են եղել՝ օժտված վարչական, ոստիկանական և դատական գործառույթներով¹:

Պարետային կառավարման ձևի ստորին օղակը գյուղապետերն են եղել:

Ուստական կայսրության առաջին տարիներին մելիքները և նրանց ժառանգները թեև պաշտոնապես զոկվեցին նախկին մելիքական իրավունքներից, բայց ճանաչվեցին իրու տոհմիկ ազնվականներ՝ բեկեր, և ժողովորի մեջ այնքան խորն են եղել արմատավորված սովորությախին իրավունքը, նահապետական կացութաձևները և համակրանքը երկրի նախկին հայ տերերի նկատմամբ, որ նույնիսկ Ղարաբաղը ցարական Ուստաստանին միացնելուց հետո գյուղացիները տեղական վեճերը լուծելու համար, թեպետ ոչ որպես դատավորների, այլ որպես գյուղի ամենաազդեցիկ և հեղինակավոր մարդկանց՝ դիմել են բեկերին: Մելիքների ժառանգներն ընդառաջել են համագյուղացիների խնդրանքին և «դատ կտրել» կամ դատն իրենց ցանկացածի պես վճռելու համար ճնշում են գործադրել գյուղական պաշտոնյաների վրա: Վերջիններս չեն խոչընդոտել մելիքների ժառանգների միջանտություններին և շոյված լինելու ակնկալիքով՝ իրենց բերանները քաղցրացրել են բեկերի տանը²:

Նվաճված տարածքներում աստիճանաբար սկսեցին ստեղծվել հատուկ դատական հաստատություններ: Այդ առումով 1822թ. դեկտեմբերին Շուշիում ստեղծվեց մարզային դատարան, որի նախագահը մարզի պարետն էր, իսկ երկուական անդամներ ընտրվում էին բեկերից և հարկատու դասերից և մեկական անդամ՝ հայ և մահմեդական բնակչությունից: Մարզային դատարանի անդամներն ընտրվում էին երեք տարի ժամկետով և ենթակա էին պարտադիր հաստատման Կովկասի գլխավոր կառավարչապետի կողմից:

Դատաքննությունը տարվում էր բանավոր ընթացակարգով և, որպես կանոն, պետք է վերջանար մեկ օրվա ընթացքում: Անհրաժեշտու-

թյան դեպքում այդ ժամկետը երկարացվում էր մինչև յոթ օր: Որոշումները կայացվում էին տեղական սովորությունների հիման վրա, իսկ դրանք թերի լինելու դեպքում՝ կիրառվում էին ոռւսական օրենքները: Մարզային դատարանը հանդես էր գալիս առաջին հերթին որպես վարչական մարմին: Փաստորեն, վարչական և դատական գործառույթների միջև որևէ սահմանազատում չկար, իսկ գործերի կողեգիալությունը ձևական բնույթ էր կրում, քանզի որոշումներն իրականում կայացվում էին միանձնյա՝ պարետի կողմից՝ մակագրությունների հիման վրա, առանց վկայակոչելու որևէ օրենք:

Վերոնշյալը վկայում է, որ պարետի ձեռքում կենտրոնացված էր մարզի ամբողջ իշխանությունը: Նա ուղղորդել է պատմիչ մարմինների աշխատանքը՝ նշաժամանակ հանդիսանալով նաև գինորական պարետատան պետը:

Պետական պաշտոնյա Նեֆյոդովը, XIX դարի 30-ական թվականներին ուսումնասիրելով Ղարաբաղի մարզի կառավարման ձևը, Շուշիում գտնվող մարզային դատարանի մասին նշել է, որ այն, կազմված լինելով նախագահող պարետից և 4 ատենակալներից, հրավասու էր քննել քրեական բնույթի հանցագործություններ, հավաքել հարկերը և պահպանել հասարակական կարգը: Սակայն այդ բոլոր գործառույթները գտնվում էին պարետի ձեռքում, իսկ դատարանը գոյություն ուներ այսպես ասած «ձևականության համար»³:

Մեկ այլ ոռւսական պաշտոնյա՝ Զուբարյովը, 1830թ. ուսումնասիրելով Ղարաբաղի մարզում ստեղծված իրավիճակը, նշել է, որ Շուշիում մարզային դատարան գոյություն ուներ անունով միայն, այն չեր զբաղվում արդարադատությամբ, այն յուրացրել էր Ղարաբաղի պարետ, գեներալ Արքսազովի սիրելի Միրզա Աղիզյոզալովը, որի կողմից էլ գրվում էին դատարանի բոլոր վճիռները: Իսկ դատարանի անդամները (տեղացիներից), անտեղյակ լինելով ոռւսաց լեզվին, միայն ստորագրում էին այդ պատրաստի վճիռները: Մատյանները և ամբողջ գործավարությունը տարվում էր ոռւսերեն լեզվով, այնինչ դատարանի բոլոր անդամները թարարներ և հայեր էին, որոնք գործավարության լեզվին չէին տիրապետում⁴: Տեղին է նշել, որ այդ նույն Միրզա Աղիզյոզալով բեկն իր ցեղակիցներին բեկերի խավին դասելու և հայերի հողերը բռնազավելու համար, նույն հաջողությամբ դատարանում հանդես էր գալիս որպես վկա և կեղծ վկայություններ տալիս⁵, իսկ հետագայում խեղաթյուրված ձևով շարադրել տվեց Ղարաբաղի պատմությունը⁶:

Կովկասյան կառավարչության ներկայացմանը, Ռուսաստանի Պետական խորհուրդը 1831թ. հաստատեց «Նախկին թարարական ցե-

դախմբերի, Ելիզավետպոլի նահանգի, մահմեդական մարզերի բնակչների և լեռնական ժողովուրդների կողմից կատարված հանցանքների և զանցանքների դատ ու դատաստանի մասին» Կանոնները⁷, ըստ որոնց, հանցագործությունները բաժանվում էին զանցանքների, նվազ կարևոր և ծանր հանցագործությունների:

Զանցանքների թվին էին դասվում արծարով իինգ ռուբլու գումարը չգերազանցող գողությունը և խուլիզանությունը, ինչպես նաև հարբեցողությունը, ինքնակամությունը, անհնազանդությունը, հասարակական կարգի խախտումը և այլն: Նման զանցանքներ կատարած անձանց նկատմամբ դատն ու դատաստանն իրականացրել են բեկերը, աղալարները և մելիքները: Բացի վճարը հարթելուց, մեղավորները ենթարկվում էին նաև բերք ոստիկանական պատիժների:

Նվազ կարևոր հանցագործություններ են համարվել առաջին և երկրորդ անգամ կատարված այն գողությունները և խարդախությունները, որոնցով վճարի չափը կազմում էր արծարով իինգից մինչև հարյուր ռուբլի: Այդ հանցագործությունների վերաբերյալ գործերով հետաքննությունը և դատաքննությունը վարել են պրիստավմերը: Հետաքննության արդյունքները հաստատվել են նահանգապետի կամ զինվորական շրջանի պետի կողմից:

Վճարը հարթելուց հետո մեղավորները ենթարկվել են հարյուր հարվածի՝ ճիպոտահարության և մտրակահարության ձևով:

Ծանր հանցագործությունների դեպքում վճարի գումարը գերազանցել է արծարով հարյուր ռուբլին, որոնք ընդդատյա են եղել ռազմական դատարանին կամ ռազմադատարանային հանձնաժողովին: Ծանր հանցագործությունների թվին են դասվել սպանությունները, ավազակությունները, պետական գույքի հափշտակությունները և այլն: Ծանր հանցագործություններ կատարած անձինք աքսորվել են Սիբիր՝ տաժանակիր աշխատանքների:

Այսպիսով, 1831թ. Կանոնները սահմանափակել են Ղարաբաղի մարզային դատարանի լիազորությունները և համապատասխանաբար ընդլայնել բեկերի, աղալարների, մելիքների և պրիստավմերի իրավագործությունները:

Ժամանակը ցույց տվեց, որ պարետային կառավարման համակարգը ցարիզմի համար տնտեսական առումով շահավետ չէ, քանի որ հարկերի և տուրքերի նշանակալից մասը յուրացվում էին հենց պարետների, զորամասերի հրամանատարների և դրանց հետ կապված բազմաթիվ աստիճանավորների կողմից: Բացի այդ, պարետները չէին կարող նիաժամանակ կատարել զինվորական պետի, դատարանի, կառավարչի և հարկահավաքության գործառույթները:

Նշված հանգամանքներից թելադրված, ինչպես նաև հարավային Կովկասը յուրացնելու և այնտեղ ցարիզմի սոցիալական բազան ուժեղացնելու նպատակով, 1840թ. ապրիլի 10-ի օրենքով, Երկրամասում իրականացվեցին վարչա-դատական բարեփոխումներ⁸, որոնց ուժով Անդրկովկասը բաժանվեց նարզերի, նահանգների և գավառների: Դարարադի մարզի մի մասը վերանվանվեց Շուշիի գավառի, իսկ գավառը բաժանվեց 6 տեղամասերի՝ Մեղրու, Քաբիրլիի, Զանգեզուրի, Ջևանշիրի, Ջրաբերդի և Վարանդայի: Շուշիի գավառը սկզբում մտնում էր Կասպիական մարզի, իսկ հետագա տարիներին՝ Շամախու, Բաքվի և Ելիզավետպոլի /Գանձակ/ նահանգների մեջ: Ժամանակի ընթացքում Շուշիի գավառը ևս ենթարկվել է տարածքային փոփոխությունների: Գավառի կազմից առանձնացվել են Զանգեզուրի, Ջևանշիրի և Զաբրայիլի /Կարյագինո/ տեղամասերը և դարձել առանձին գավառներ: Վերջին երկու գավառներն իրենց մեջ կլանել էին նաև Գյուլիստանի և Զրաբերդի մելիքությունները, ինչպես նաև Խաչենի և Ղիզակի մելիքությունների զգալի մասը: Իսկ Շուշիի գավառին անհիմն կցվել են նահենդաբնակ Աղդամի և Աղջաբեղու շրջանները: Նման վարչական բաժանումը պահպանվեց մինչև 1918 թվականը:

Փաստորեն, ցարիզմն իր գաղութային քաղաքականությունն անսրող իրականացնելու համար միշտ էլ ձգտել է հարավային Կովկասում ստեղծել խառը բնակչություն ունեցող վարչատարածքային միավորներ, որից ամենաշատը տուժում էր հայ ժողովուրդը: Այդ Վերածնումների արդյունքում հայ ժողովորդի պատճական հողերը՝ Զավախսը, Զանգեզուրը, Արցախը և Գանձակի լեռնային մասը միշտ էլ հայտնվել են Թբիլիսիի կամ Գանձակի նահանգների կազմում, իսկ հայ էքնոսը՝ տրոհված, կոտորակված վիճակում: Ցարիզմի այդ դասը լավ էին սերտել բուշկները, որոնք վերը նշված հողերը, ինչպես նաև Նախիջևանի Երկրամասը 1921 թվականին նվիրեցին մեր հարևաններին:

Աղքանով հանդերձ, Արցախը միշտ եղել է հայեցի և այդպես էլ կմնա: Կայսրության բնակչության առաջին մարդահամարի՝ 1897թ. տվյալներով, Շուշիի գավառում բնակվում էր 138.771 մարդ, որից 58.2%-ը՝ հայեր, 41.5%-ը՝ կովկասյան թաթարներ (կովկասյան թաթարները խորհրդային Սիության սկզբնական տարիներին կոչվում էին թուրքեր, իսկ ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրության ընդունումից հետո՝ աղբեջանցիներ): Բուն Շուշիում բնակվում էր 25.881 մարդ, որից 14.420-ը՝ հայեր, 10.778-ը՝ թաթարներ: Բայց արի ու տես, որ հայ և թաթար հանցագործների թիվը միմյանց հարաբերվում էր, ինչպես մեկը յոթին⁹:

Շուշիի գավառի վարչական ապարատը ղեկավարում էր գավառ-

պետք, իսկ նրա օգնականը համարվում էր կարգուկանոնի անմիջական «պահապանը» և գավառապետի ու դատարանի բոլոր կարգադրությունների կատարողը:

Շուշին, որը դեռևս 1846թ. կոչվում էր Կասպիական մարզի Դարաբաղի քաղաք, արդեն 1852թ. Կովկասի օրացույցում նշվում էր որպես Շամախու նահանգի գավառական քաղաք և բնակչությամբ Անդրկովկասի քաղաքների շարքում 4-րդ տեղն էր գրավում՝ գիշելով միայն Թբիլիսիին, Շամախուն և Նուխուն¹⁰:

Անդրկովկասում վարչա-դատական բարեփոխումների արդյունքում, 1841թ. Շուշիում ստեղծվեց գավառային դատարան, որը կազմված էր դատավորից, պետական ապարատում աշխատող երկու ատենակալներից և քաղաքային հարկատու դասից ընտրվող և երկու ատենակալներից: Սահմանվեց նաև գավառային դատախազի հնսդիտություն, որը հսկողություն էր իրականացնում գավառային ոստիկանության և դատարանի վարույթներում գտնվող գործերի նկատմամբ:

Գավառային դատարանի դատական որոշումները կարող էին բողոքարկվել մարզային (նահանգային) դատարանի քրեական և քաղաքայիական գործերով պալատին:

Չնայած բարեփոխումներն ուղղված էին դատարանն առանձնացնելու վարչական մարմիններից, սակայն դրանք իրենց նպատակին չհասան, ուստի դատական գործառությների մի մասը մնաց վարչական ապարատի իրավագորության ներքո: Գավառի տեղամասային ատենակալը և քաղաքագլուխը կարող էին լուծել գործության և խարդախության վերաբերյալ այն գործերը, որոնցով վնասի գումարը տասը ոություց չէր անցնում, իսկ քաղաքացիական գործերով այն հարցերը և վեճերը, որոնց գումարը կազմում էր մինչև հինգ ռուբլի: Գավառապետն իրավասու էր լուծելու մինչև հարյուր ռուբլի հայցագին ունեցող պահանջները և վեճերը, իսկ քրեական գործերով, որոնցով գումարը կազմում էր տասից քսանինգ ռուբլի, գավառապետը կարող էր նաև հանցավորին ենթարկել մարմնական պատիժների¹¹:

Դատական բարեփոխումների արդյունքում յուրաքանչյուր դատական ակտ ստուգվում և վերստուգվում էր վերադաս բազմաթիվ ատյանների կողմից: Տեղամասային ատենակալը ձևական նախաքննություն էր իրավանացնում և նյութերը ներկայացնում գավառապետին: Վերջինս, քննարկելով դրանք, ուղարկում էր գավառային դատարան, որը նվազ կարևոր գործերով դատակում էր գավառային դատարան, իսկ առավել կարևորներով կարծիք էր հայտնում: Դատավճիռը կամ կարծիքը ներկայացվում էր դատական գործերով գավառային վերահսկչին, ով իր

Եզրակացությամբ գործն ուղարկում էր նահանգային դատախազին, իսկ դատախազն էլ իր ցուցումներով գործը վերադարձնում էր պալատ, և պալատը, քննարկելով դատախազի դիտողությունները, ուղղումներ էր մտցնում դատավճռի մեջ և գործն ուղարկում նահանգապետին՝ հաստատելու համար: Նահանգապետը վեց շաբաթվա ընթացքում կամ հաստատում էր դատավճռը և գործն ուղարկում Կովկասի գլխավոր կառավարչապետին կամ էլ իր առարկություններով գործը վերադարձնում էր պալատին¹²: Ավելորդ չեն, որ այդ բոլոր ատյաններում գործը վերանայվում և վերավճռվում էր առանց ամբաստանյալի:

Շուշիի գավառային դատարանում քաղաքացիական գործերի քննությունը կատարվում էր համառուսական օրենքների հիման վրա: Հայցադիմումները պետք է տվյալներ պարունակեին հայցագնի, ապացույցների, պատախանողի բնակության և գույքի գտնվելու վայրի մասին, առանց որոնց դատարանների կողմից դիմումները չեն ընդունվում:

Ամուսնաընտանեկան և ժառանգության հարցերը կարգավորվել են հոգևոր դասի կողմից:

Գավառային դատարանում դատավարությունը տարվում էր ռուսերեն լեզվով, և դատավորներն ու աստենակալները ռուս պաշտոնյաներ են եղել: Դատարանի դատական կազմերի վերաբերյալ տվյալները ԼՂՅ արխիվներում չեն պահպանվել: Գավառի վարչական ապարատը, պետական և մշակութային բոլոր հիմնարկները գտնվում էին Շուշի քաղաքի հայկական մասում: Թարար խուժանը երկու անգամ՝ 1905թ. օգոստոսի 16-ին և 1920թ. մարտի 23-ին, հրո ճարակ դարձրեց քաղաքի ամենագեղեցիկ մասը՝ վերածելով մեռյալ ավերակների: Սակայն քաղաքի տարածքում պահպանվել են հատուկենտ հուշարձաններ, որոնք լույս են սփռում խնդրո առարկայի վրա:

Այսպես, Շուշիի հայ-ռուսական գերեզմանոցի մի տապանաքարի վրա ռուսերեն և հայերեն լեզուներով փորագրված է "сдѣсь покоится прахъ коллежскаго ассесора (պետական ծառայության 8-րդ դասի աստիճան-ընդգծումն ինն է Վ.Խ.) Մոյսեя Терентьевича Симонова, бывшаго засыдателемъ Карабагского Уездаго суда скончавшагося посль кратковременной болезни, 2 марта 1846 года на 51 году отъ рождения" Այս է տապան ՈՐ Է Գոլժեսկի Ոյեզդի դատարանում Մեծ Տրենդվիչ Սեմօնօվին Ղարաբաղում ի վախչանալ 1846 2 մարտի 51 ՄԾ¹³:

Ցարական Ռուսաստանի 1840թ. վարչա-դատական բարեփոխումների արդյունքում էլ ավելի ուղճացվեց պետական ապարատը: Այդ ապարատի, ինչպես նաև ծրիակեր ազնվականների՝ բեկերի, աղալարների և մելիքների ու նրանց ժառանգների պահպանման համար պետական

գանձարանից հսկայական գումարներ էին ծախսվում: Այդ պատճառով ավելացվեցին հասարակ ժողովորից գանձվող հարկերը և տուրքերը:

Չափազանց ծանր դրության մեջ էր գտնվում հայ գյուղացին: Նրան կեղեքում և պլոկում էին ոչ միայն ռուս աստիճանավորները, այլև թաքար բեկերը և աղալարները, հայ մելիքների ժառանգները և եկեղեցին:

Պետական պաշտոնյա Զուբրյովը, լինելով Վարանդայի մահալի Կաղարծի գյուղում, նկարագրել է այն վայրենությունները, որ կատարել է մահալապետ (նահիք) մելիք Խուլդադատը՝ մելիք Շահնազարի որդին: Նա գյուղացիներից կաշառքներ է պոկում, քռնաբարում մի հայուհու, արգելում է Եկեղեցում կատարել մի պսակադրություն՝ պահանջելով, որ հարսն առաջին գիշերն իրեն տրվի և այլն: Մեկ այլ օրինակ, Վարանդայի Վերին Թաղավարդ գյուղի բնակիչները, 1841թ. չկարողանալով տանել գյուղի կալվածատեր Յովսեփ Բեկ-Մադարյանի անօրինական պահանջները, հրաժարվեցին կատարել դրանք: Ցարական ոստիկանությունը գյուղացիների ընդվզումն որակեց որպես «ապստամբություն», իսկ գյուղի Օհան քահանան հայտարարվեց «ապստամբության» պարագլուխը: Վերջինիս «մեղքը» կայանում էր նրանում, որ գյուղամիջում պատմել է, որ ծերբակալված գյուղացիներից մեկը վախից մահացել է: Գյուղի առաջավոր աշխատավորները ծերբակալվեցին և աքսորվեցին հեռավոր վայրեր¹⁴:

Անգրության չափ ու սահման չունեին թաթար բեկերն ու աղալարները, որոնք կեղծ փաստաթղթերի ու վկայությունների հիման վրա տիրացել էին հայկական գյուղերին և, գորշ գայլերի ոհնակ կազմած, վաճախի պես ծնում էին հայ գյուղացւ արյունը: Ցադրութի շրջանի հայարնակ Բանագուր գյուղը պատկանում էր թաթար Զաֆար Կուլի աղային: Բանագուրցիները հարկային բեռը թերևացնելու համար, գյուղի քահանայի միջոցով 1842թ. խնդրագիր են ներկայացրել Զաֆար աղային: Վերջինիս հրամանով հանվել է քահանայի փիլոնը և հագցվել աղայի շանը, իսկ գյուղացիներին ստիպել, որպեսզի երկրպագեն շանը: Դա դեռ բավական չէ, ցարական բյուրոկրատիան պաշտպանել է աղային և գյուղացիների աղերսանքը որպես որպես «ապստամբություն»: Խեղճ գյուղացիները և Մինաս քահանան կանգնել են դատարանի առաջ և ենթարկվել տարբեր պատիժների¹⁵:

Փաստորեն, հայ գյուղացու մարմնից պլոկվող կաշու բուժման միակ «դեղամիջոցը» ծեծն էր, բանտը կամ Սիրիոը: Ինչպես հայկական առածն է ասում. «Օրենքը հարուստի համար է, պատիժը՝ աղքատի»:

Ժողովրդական զանգվածների ելույթների դեմ պայքարելու համար 1842թ. գավառային դատարաններին թույլատրվեց վերջնական դա-

տավճիր կայացնել այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնցով վնասի գումարը չէր գերազանցում երկու հարյուր ռուբլին, գավառապետի իրավասությանը հանձնվեց մինչև հարյուր ռուբլու վերաբերյալ գործերը, իսկ տեղամասային ատենակալներին՝ մինչև երեսուն ռուբլու: Վերը նշված գործերով որոշումները վերջնական էին և ենթակա չէին բողոքարկման¹⁶: Ազագակության և կողոպուտի գործերը հանձնվեցին զինվորական դատարաններին, գավառի յուրաքանչյուր տեղամասում մտցվեց ոստիկանական պրիստավի, իսկ բուն գավառում՝ ժանդարմերիայի ինստիտուտը: Շուշիի գավառը երկու սպա ժանդարմ էին սպասարկում, որոնք քաղաքական նկատառումների համար կարող էին ծերբակալել ցանկացած քաղաքացու, մինչև երեք ամիս ժամկետով բանտարկել, աքսորել և տուգանել նրան մինչև իհնգ հարյուր ռուբլու չափով:

Միևնույն ժամանակ, կապիտալիզմի զարգացման բուռն պայմաններում կայսրությունում կատարվեցին առաջավոր վարչական, տնտեսական, հողային, զինվորական, տեղական ինքնավարության, դատական և այլ բարեփոխումներ: Դրանց մեջ յուրահատուկ տեղ էին գրավում 1864թ. դատական բարեփոխումները: Վերացվեց հին դատական համակարգը, հօչակվեցին դատարանակազմնության և դատավարության այնպիսի կարևոր սկզբունքներ, ինչպիսիք են դատական իշխանության բաժանումն օրենսդիրից և գործադիրից, դատավորների անկախությունը, դատական քննության հրապարակայնությունը և մրցակցությունը, որոշ քրեական գործերով երդվալ ատենակալների նաև նակցությունը և այլն: Դատական Կանոնագրքերով մտցվեցին դատական քննիչների ինստիտուտը, վճիռների և դատավճիռների վերանայման վերաքննության և վճռաբեկության կարգը, ընդլայնվեցին դատախազության մարմնների լիազորությունները: Դրա հետ մեկտեղ, ցարական բյուրոկրատիան Կովկասի ժողովուրդներին հանարելով «օտար, ոչ զարգացած և քրեածին», դատական բարեփոխումների ընդհանուր կարգից էական շեղումներ և վերապահումներ կատարեց երկրամասի հանմար:

Ի տարբերություն կայսրության մյուս ծայրամասերի, Անդրկովկասում հաշտարար համագումարներ և երդվալների դատարաններ չստեղծվեցին: Այստեղ հաշտարար դատավորի պաշտոնը ոչ թե ընտրովի էր, այլ՝ նշանակովի: Երկրամասում դատական քննիչների ինստիտուտը ստեղծվեց միայն XX դարի սկզբներին: Մինչ այդ, դատական քննիչի պարտավորությունները կատարում էր հաշտարար դատավորի օգնականներից մեկը:

Շուշի քաղաքում հաշտարար բաժինը /դատարանը/ ստեղծվեց

1868թ. փետրվարի 17-ին¹⁷: Դատարանը ղեկավարում էր հաշտարար դատավորը, ով նշանակվում էր Կովկասի փոխարքայի, իսկ փոխարքայությունը վերացվելու և վերականգնելու ժամանակահատվածներում՝ Ռուսաստանի կառավարության արդարադատության նախարարի կողմից: Դատավորն ուներ երկու օգնականներ, որոնցից մեկը կատարում էր դատական քննիչի պարտականությունները: Դատական պրիստավոն ի կատար էր ածում դատական որոշումները: Հաշտարար դատավորի օգնականը /քննիչը/, դատական պրիստավը և գործավարը նույնպես, նշանակվում էին ցարական կառավարության կողմից, իսկ դատարանի մյուս աշխատակիցները՝ քարտուղարը, քարգմանիչները, ծիավորը և այլոք, վարձու աշխատողներ են եղել:

Ծուշի հաշտարար բաժինն Աղդամում ուներ մեկ հաշտարար տեղամաս, որտեղ գործերի դատական քննությունը դրված էր հաշտարար դատավորի օգնականներից մեկի, իսկ նախարարնությունը՝ մյուս օգնականի վրա: Ծուշի հաշտարար բաժինը և նրա տեղամասն օժտված են եղել նույն գործառույթներով:

Հաշտարար դատավորն իր օգնականների վրա ոչ մի հսկողություն չի իրականացրել: Հաշտարար դատավորի օգնականի կողմից նախարարնության կատարման հսկողությունն իրականացրել են նահանգի շրջանային դատարանին առընթեր դատախազը և նրա օգնականները¹⁸: Ի դեպ, Զաբրայիլի /1901թ./՝ Կարյագինոյի/ գավառի հաշտարար դատարանը 1882թ. տեղակայված էր Յաղորութում և չնայած Յաղորութը գավառական կենտրոն չէր, այնուամենայնիվ, վարչական առումով կարևոր դեր ուներ գավառի կյանքում:

Բացի արդարադատության և նախարարնության իրականացումից, հաշտարար դատարանի վրա էր դրված նաև խնամակալության հարցերի և նոտարական գործողությունների կատարումը: Հաշտարար դատարանը քննում էր մինչև երկու հազար ռուբլի հայցագին ունեցող բոլոր քաղաքացիական և այն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, որոնց համար իրավունքների սահմանափակում չէր նախատեսված, կամ էլ սահմանված էր ազատազրկում մինչև վեց ամիս ժամկետով:

Հաշտարար դատավորի կողմից բոլոր գործերը քննվել են միանձնյա: Դատարանի վճիռը վերջնական էր, եթե նշանակված պատիժը չէր գերազանցում եռօրյա կալանքից և հանցավորից հարյուր ռուբլու չափով դրամական բռնագանձումից, իսկ քաղաքացիական գործերով՝ այն վճիռները, որոնցով հայցագինը չէր գերազանցում հարյուր ռուբլին: Մնացած բոլոր դատավճիռները և վճիռները վերջնական չին և վե-

րաքննության կարգով կարող էին գանգատարկվել Գանձակի նահանգի շրջանային դատարանին: Իսկ հաշտարար ենթակայության համար վճռաբեկ ատյան էր ծառայում Թբիլիսիի դատական պալատը:

Օրենքը, բացառության կարգով, թույլատրում էր հաշտարար դատարանի վերջնական որոշումը գանգատարկելու Թբիլիսիի դատական պալատին, իսկ պալատի վերջնական որոշումը՝ կառավարող Սենատի դատական ատյանին:

Քննարկվող ժամանակաշրջանում դատախազությանն և երդվալ հավատարմատարների /փաստաբանության/ ինստիտուտները գործում էին Գանձակի շրջանային դատարանի և Թբիլիսիի դատական պալատին առջնօթեր:

Դարկ է նշել, որ Շուշիի հաշտարար դատարանում դատավարությունը տառապում էր լուրջ թերություններով: Դատարանի կազմում ընդգրկված էին ռուս պաշտոնյաներ, գործավարությունը տարվում էր ռուսերեն լեզվով, անտեսվում էին տեղական սովորությները և ավանդույթները, դատավարության մասնակիցները ստիպված բացատրվում էին մի քանի բարգնանիչների միջոցով, վերադաս դատական ատյանները չափազանց հեռու էին գավառից և այլն:

Գավառի գյուղական դատարանները կազմված էին տվյալ համայնքի կողմից երեք տարի ժամկետով ընտրված նյութապես ապահով երեքից ոչ պակաս գյուղացիներից, որոնք, գավառապետի ներկայացմամբ, նշանակվում էին նահանգապետի կողմից: Գյուղական դատարանն օժտված էր լայն իրավասություններով: Դատարանը վերջնականապես լուծում էր տվյալ գյուղի գյուղացիների միջև ծագած մինչև հարյուր ռուբլու գումարի տարբեր տեսակի վեճեր՝ փոխառության, առուժախի, թերաշափման, թերակշռման, արոտավայրերի արածավերման, անորակ մթերքներ վաճառելու և այլ հարցերի վերաբերյալ: Գյուղական դատարանն իրավասու էր քննելու նաև գողության և խարդախության վերաբերյալ այն գործերը, որոնցով վնասի գումարը չէր գերազանցում երեսուն ռուբլին: Դատարանը կարող էր հանցավորին վեցօրյա ժամկետով ներգրավել «հասարակական աշխատանքների» մեջ, տուգանել մինչև երեք ռուբլի գումարով կամ ենթարկել կալանքի մինչև յոթ օր ժամկետով՝ պարտադրելով հատուցել պատճառված վնասը: Դատավարությունը կատարվում էր բանավոր ընթացակարգով: Դատական որոշումները կայացվում էին գրավոր ձևով և կարող էին գանգատարկվել Գանձակի նահանգային վարչությանը: Գյուղական դատարանը նաև նոտարի դեր էր կատարում:

Շուշիի հաշտարար դատարանը գործեց մինչև 1918թ.: Գավառի վերջին հաշտարար դատավորը եղել է ազգությամբ վրացի հոսկի Կո-

բիկը: Մինչ այդ, 1917 թվականին ռուսական երկու հեղափոխությունները տակնուվա արեցին կայսրությունը: Այդ դեպքերից զերծ չմնաց նաև Շուշիի գավառը:

Փետրվարյան հեղափոխության հետևանքով տապալվեց ցարական ինքնակալությունը, երկրում ստեղծվեց Երկիշխանություն՝ բուրժուական ժամանակավոր կառավարություն և բանվորների ու գինվորների պատգամավորների խորհուրդներ:

Ժամանակավոր կառավարությունը Կովկասյան փոխարքայության փոխարեն ստեղծեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե, իսկ որպես տեղական ինքնակառավարման մարմիններ՝ նահանգային, գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ: Շուշիում ստեղծվեց Ղարաբաղի նահանգային գործադիր կոմիտե, որի գործունեության շրջանը տարածվում էր ինչպես դաշտային, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի վրա¹⁹:

Անդրկովկասյան մյուս քաղաքների օրինակով Շուշիում նույնպես ստեղծվեցին բանվորների, գյուղացիների և գինվորների խորհուրդներ: Զուգահեռ գործում էր նաև մի երրորդ մարմին՝ Շուշիի հայերի և քարարների կողմից ընտրված գավառային կոմիսարիատը: Շուշիի քաղաքային վարչությունը լուծարվի չենթարկվեց: Հարունակում էր գործել Շուշիի հաշտարար բաժինը:

Վարչական և դատական մարմինների պաշտոնյաներն իրենց գլխարկներից պոկելով ցարական կոկարդները՝ առաջվա նման սպասարկում էին Ղարաբաղի բնակչությանն անխտիր՝ թե հայերին և թե մուսուլմաններին²⁰:

Յոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը ցնցեց ամբողջ աշխարհը: Այն ահավոր հետևանքներ թողեց Արցախի վրա: Երբ բոլշևիկների կողմից կազմակերպվեց կովկասյան ռազմաճակատը, Երկրամասը հայտնվեց սովի և մեկուսացման ճիրաններում: Սկսեցին կազմալուծվել վարչական և դատական մարմինները: Ամենուրեք վիստուն էին թուրք-ազերի հրոսակախմբերը, որոնց նպատակն էր՝ Արևոտյան Յայաստանի պես լուծել հայ ժողովրդի արևելյան հատվածի հարցը: Թուրանական ծրագրին կուլ չգնալու և անկախությունը վերականգնելու համար հայ ժողովուրդը լարել էր բոլոր ուժերը:

Արցախի քաղաքական ուժերի ղեկավարները, զգալով պահի լրջությունը, իրամայական պահանջ դրեցին՝ իրենց ձեռքը վերցնել Երկրամասի կառավարման վարչական ղեկը: Դա ազգային ազատագրական պայքարի և ինքնավարության ծևավորնան մի ժամանակահատված էր, որը պետականության վերականգնման հմուտ և համարձակ քայլեր էր

պարունակում: Եվ դա կատարվեց Հայաստանի առաջին Հանրապետության հրակումից ավելի վաղ:

Իրադրության հրամայական պահանջներից ելնելով՝ 1917թ. դեկտեմբերի 23-ին Շուշի քաղաքում տեղի ունեցավ քաղաքական բոլոր հոսանքների համաժողով, որը, քննության արնելով երկրում ստեղծված կացությունը, ստեղծեց տասնչորս հոգուց կազմված մի մարմին՝ «Կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ» (հետագայում՝ «Միջկուսակցական բյուրո») անվանումով, որը գործելու էր իրև Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն: Երկրում անիշխանությանը վերջ տալու և կարգն ու հանգստությունը վերականգնելու գործը ժողովը համարեց առաջնահերթ և անհետաձգելի: Անհետաձգելի համարվեց նաև տեղերում բնակչության ընտրությամբ և գործուն մասնակցությամբ վարչական և դատական մարմինների կազմակերպումը: Կատարվեց նաև աշխատանքի բաժանում:

Ավագակային խմբերի, լրտեսների և ամեն տեսակ բախտախնդիրների դեմ պայքարելու համար ստեղծվեց պատժի խունք, որի կազմակերպումը և դեկավարությունը հանձնարարվեց գինվորական կոմիսար Յ. Թումյանին²¹: Կարճ ժամկետում հաջողվեց ավագակային խմբերին գլխովի ջախջախել և ցաքուցրիվ անել: Երկրանասն ապրում էր պատերազմական ժամանակի օրենքներով և անխնա էր ոճրագործների նկատմամբ: 1918թ. հունվարի վերջերին Արևատյան ռազմաճակատից տուն դարձող մի քանի հայ գինվորներ հյուրընկալվել էին Վարանդայի Սղնախ և Ալամանց գոմեր գյուղերում: Զինվորների հրացաններին տիրանալու նպատակով տանտերերը կյանքից զրկել էին քնած գինվորներին: Այդ քստմնելի ոժիրները ոչ մի պարագայում չեն կարող արդարացվել: Հանցագործները բացահայտվում և ձերբակալվում են: Նրանց դատելու համար Միջկուսակցական բյուրոյի որոշմամբ ստեղծվում է ռազմադաշտային դատարան: Ոճրագործները գնդակահարվում են: Նման դեպքերը եզակի չեն եղել: Երբեմն Միջկուսակցական բյուրոյի ներկայացուցիչները տեղերում զբաղվել են քննիչի, հաշտարար միջնորդի և դատավորի դեր կատարելով:

Ոգեշնչված Բաքվի կոմունայով՝ Միջկուսակցական բյուրոն 1918թ. ապրիլի 17-ին վերանվանվեց Կոմիսարների խորհրդի, որում գործել է նաև պրոդարարատության կոմիսարիատը: Կոմիսարների խորհուրդը հիմնեց ժամանակավոր հեղափոխական տրիբունալ, որին ընդդատյա էին սպանությունների վերաբերյալ գործերը: Մահապատժի ենթակա ժատապարտյալների վերաբերյալ գործընթացին հասարակությունն անմիջապես իրազեկվում էր: 1918թ. դեպքերն Անդրկովկասում անկանխատեսելի կերպով փոփոխվել են: Անդրկովկասայան Սեյմը մա-

յիսի 25-ին դադարեց գոյություն ունենալուց: Անմիջապես ստեղծվեցին վրացական, աղոթքանական և հայկական հանրապետությունները: Յուլիսի վերջին ընկավ Բաքվի կոմունան, և քաղաք մտան անզիական գորանասերը:

Նման քաղաքական անկայունության պայմաններում, Կոմիսարների խորհուրդը որոշեց հրավիրել Ղարաբաղի հայության համագումար՝ նոր կառավարություն կազմելու համար, մի այնպիսի կառավարություն, որը, հենարան ունենալով լայն ժողովրդական զանգվածների վստահությունը, ընդունակ լիներ երկրի փրկության համար դիմելու վճռական գործողությունների: Ղարաբաղի հայության առաջին համագումարը բացվեց 1918թ. հուլիսի 22-ին, Շուշի քաղաքում: Համագումարն ընտրեց Ղարաբաղի ժողովրդական կառավարություն՝ յոթ կառավարիչների կազմով, որոնցից մեկն էլ արդարադատության կառավարիչն էր: Համագումարը հաստատեց նաև կառավարության հոչակագիրը: Ի թիվս բազմաթիվ հրատապ հարցերի, հոչակագիրը հրամայական պահանջ համարեց «քաղաքական վիճելի խնդիրների լուծումը, ճնշվողների, հարստահարվողների պաշտպանությունը, ինքնադատաստան գործողությունների վերացումը, այդ ամենը պահանջում են դատական գործի անհապաղ կազմակերպում»²²:

Արդարադատության կառավարչի նախագահությամբ սկսեց գործել արդարադատության հանձնաժողովը:

Հաստատուն օրինական կարգ ստեղծելու համար որոշվեց շրջան-ներում հիմնել հաշտարար դատարաններ: «Այսուհետև, - հայտարարվում էր արդարադատության կառավարչի շրջաբերականում, - ոչ մի գործ չպետք է վճռվի ինքնադատաստանով և բռնությամբ: Բոլոր արդարացի պահանջները պաշտպանություն կգտնեն հաշտարար դատարաններում... և թող ոչ ոք չհանդգնի ինքնագլուխ վճռելու իր վեճը կամ վերականգնելու իր կողըրած հրավունքը»:

Հաշտարար դատարաններ հիմնվեցին Զրաբերդ-Գյուլիստանում (Ձևանշիրում), Խաչենում, Վարանդայում, Դիգակում և Շուշիում: Իբրև երկորորդ՝ վերաքննիչ ատյան, հիմնվեց Շուշիում շրջանային դատարան, իսկ նրան կից՝ հատուկ գործերի քննիչ հանձնաժողով:

Հաշտարար դատարաններին նստավայրեր ընտրվեցին. Զրաբերդի համար՝ Մեծշեն գյուղը, Խաչենի համար՝ Խանքենի գյուղը, Վարանդայի համար՝ Թաղավարդ գյուղը, իսկ Դիգակի համար՝ Շադրութ գյուղը:

Ծանր բնույթի հանցագործությունների վերաբերյալ գործերը ենթակա էին զինվորական տրիբունալի քննությանը: Դատարանների նորմալ աշխատանքը ապահովելու համար, հատուկ հրահանգիչներ ուղարկվեցին գավառամասերը՝ կազմակերպելու ժողովրդին: Կոմիսար-

ներն ապահովում էին դատարանների վճիռների անշեղ կատարումը:

Դատարանները, կարծ ժամանակամիջոցում, իրենց բարեխիղը և աշխույժ աշխատանքով, իրենց անաշառ, արդարացի վճիռներով ձեռք բերեցին ժողովրդի համակրանքը և վստահությունը: Ժողովուրդը սկսեց ազատ շունչ քաշել: Գավառի ամեն կարգի բախտախնդիր տարրերը չին կարող այլևս ժողովրդին անպատիժ կերպով նեղել, բռնության ենթարկել, ապօրինի պահանջներ ներկայացնել նրան: Անիշխանական և ինքնադատաստանի երևույթները հայկական շրջաններում միանգանցից թուլացան, հանգստությունը և կարգը վերականգնվեցին, ժողովրդի կյանքի և գույքի պաշտպանությունն ապահովվեց:

Դայ-մուսուլմանական քաղաքացիական պահանջների և վեճերի քննությունը կատարվում էր Ազգամիջյան կոմիտեի դատական ատյանում, որի նախագահը, երկու ժողովուրդների համաձայնությամբ, ընտրվել էր նախկին հաշտարար դատավոր Կոբիկը²³:

Արցախի հայության առաջին համագումարի կողմից ընդունված փաստաթրեթի համաձայն՝ երկրանասը հանդես էր գալիս որպես անկախ վարչատարածքային միավոր և ժողովորդի կողմից ընտրված նարմինները կամ պաշտոնակատար անձինք ղեկավարվում էին ինչպես ցարական օրենքներով, այնպես էլ ծագած հանգամանքներից ելելով, սովորութային իրավունքի նորմերով կամ էլ պատերազմական ժամանակի օրենքներով: Գործում էին հետևյալ պատիժների տեսակները՝ մտրակի հարվածներով ծեծը, երաշխավորությամբ բաց թողնելը, տուգանքը, յուրաքանչյուր օր կես փրանոց քարը զից կախված վիճակում պահակի հսկողությամբ՝ նեկ-երկու ժամ կանգնած մնալը, մահապատիժը՝ գնդակահարության կամ կախաղան բարձրացնելու միջոցով:

Ավելի խիստ պատիժները կիրառվում էին նարդասպանների և հայրենիքի դաշտանների նկատմամբ: Նախիջևանիկ գյուղի բնակիչ Շամիր Փիրումյանը, օսմանյան բոլքերի հետ համագործակցելու համար, Վարանդայի զինված ուժերի հրամանատարի հրահանգով, Դաղորտի գյուղում, գավառի բոլոր պատգամավորների ներկայությամբ, կախաղան է բարձրացվել²⁴:

Ի դեպք, շրջաններում չհաջողվեց ստեղծել քաղաքացիական մարմիններ, նրանց դերը տանում էին զինվորական մարմինները, որոնց ղեկավարները ժողովրդի մեջ հեղինակություն էին վայելում:

Սակայն, Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը 1918-1920թթ. չհաջողվեց կայուն վարչածել, դատական համակարգ ստեղծել, քանի որ 1918թ. հոկտեմբերին Շուշի մտան թուրքական զորքերը և լուծարեցին գոյություն ունեցող պետական մարմինները, հե-

տագայում քաղաք մտան անգլիական զորքերը, որոնք Բաքվի նավթը վեր դասելով հայ ժողովրդի դարաբառյան հատվածից, ջանք ու եռանդ չէին խնայում երկրամասը մուսավաթական Աղրբեջանին միացնելու համար:

Դատական մարմիններ ստեղծելու մի փորձ կատարվեց նաև 1920թ. ապրիլի կեսերին, երբ զորավարներ Դրոն և Նժդեհը իրենց զորաջոկատներով մտան Ղարաբաղ և ապրիլի 18-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ հավաք, որն էլ հաստատեց Դրոնի կողմից նշանակված Ղարաբաղի կառավարության կառավարիչների կազմը: Դրա հիման վրա ձևավորվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որը կազմված էր բաժիններից: Կառավարության որոշմանք Հայաստանի Հանրապետության օրենքները և հանձնարարականները գործողության մեջ դրվեցին Ղարաբաղում, շրջանառության մեջ դրվեց ՀՀ դրամը, ընդունվեց ՀՀ դրոշը, գինանշանը: Կառավարությունը, որ ժամանակավոր նստավայր էր ընտրել Թաղավարդ գյուղը, ապրիլի 23-ին նշված գյուղում հրավիրեց Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը, որտեղ հոչակվեց «Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս»²⁵:

Կառավարությունը արդարադատության բաժնի կառավարիչ Գ. Խսախանյանին հանձնարարեց գրադպել Ղարաբաղում արդարադատության կազմակերպմանբ: Վերջինս ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված նամակում նշել է, որ ապրիլի 20-ից ձեռնամուխ է եղել Ղարաբաղում արդարադատության գործի կազմակերպմանը, սակայն բնականոն և ընդունված չափանիշներով այն կազմակերպել հնարավոր չէ ինչպես Ղարաբաղի կենսապայմանների, այնպես էլ փաստացի պատերազմական վիճակի և անհրաժեշտ նաև ազգային բացակայության պատճառով: Նամակի վերջում Խսախանյանը ՀՀ արդարադատության նախարարին խնդրել էր «անհապաղ մասնագետներ ուղարկել Ղարաբաղ, ինչպես նաև համապատասխան ձեռնարկներ և հրահանգներ, որոնց բացակայությունը գործերը վճռելիս կիանցեցնի օրենքների տարաբնույթ, երբեմն էլ սիսալ կիրառման, որն արդարադատության տեսակետից ամենակին ցանկալի չէ»²⁶:

Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը նախատեսել էր երկրամասում ստեղծել վեց հաշտարար դատարաններ, սակայն, քաղաքական իրավիճակը կտրուկ փոփոխվելու հետևանքով, որոշումը չիրագործվեց, քանի որ այդ օրերին ռուսական 11-րդ Կարմիր բանակը մտել էր Աղրբեջան, իսկ մայիսի սկզբներին արդեն կանգնած էր Ղարաբաղի դարպասների առաջ: Դրված էր Ղարաբաղի խորհրդայնացման հարցը:

ՇՈՒԾԻՒ ՀԱՄՔԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Պատմությունը, չպետք է ընկալվի նեղ իմաստով:
 Դա ավելին է քան անցյալ գրականությունը, ավելին,
 քան անցյալ տնտեսությունը: Դա մարդկային
 ինքնագիտակցությունն է, մարդկության ծիգը
 հասկանալու համար ինքն իրեն՝ իր անցյալն
 ուսումնասիրելու միջոցով:
Ֆրեդերիկ Զեկսոն Թերներ

Արտադրության զարգացման տեսակետից միջին դարերում տեղի ունեցավ խոշոր նշանակություն ունեցող մի երևոյթ՝ արհեստագործությունն անջատվեց հողագործությունից և արհեստագործական արտադրանքի կենտրոնը դարձավ քաղաքը, որը և որոշեց արհեստների զարգացման և առաջադիմության ուղիները: Փաստորեն, արհեստը, որպես մանր արտադրություն, նախորդել է գործարանային արտադրությանը:

Մինչև կապիտալիզմի հաղթարշավը, Անդրկովկասի հայ արհեստագործական և առևտրական միությունները կոչվել են համքարություններ /պարսկերեն՝ համքար, հայերեն՝ գործակից, համագործ, միևնույն տեսակի արհեստավոր/, իսկ Արևմտյան Հայաստանում՝ էսնաֆություններ /արաբերեն՝ էսնաֆ, հայերեն՝ արհեստավոր/¹:

Յանքարություններն սկսել են քայլավել XIX դարի կեսից, երբ արևմտաեվրոպական և ռուսական համեմատաբար էժան ապրանքները թափանցել են Անդրկովկաս և Փոքր Ասիա: Արդեն XIX դարի վերջին և XX դարի սկզբին, չդիմանալով գործարանային արտադրության մրցակցությանը, համքարության աշխատողներն ունեզրկվել են և դարձել բանվորներ:

Գրավոր աղբյուրները հայ արհեստավորական և առևտրական միությունների վերաբերյալ որոշակի տեղեկություններ են թողել: Այդ տեղեկություններն առաջին հերթին գտնում ենք հռչակավոր գիտնական, առակագիր, գրող և օրենսդիր Միհիթար Գոշի մոտ: Գոշն իր հանրահայտ Դատաստանագրքում խոսելով արհեստների մասին, դրանցից

անհրաժեշտն ու օգտակարը հողագործությունը, դարբնությունը և հյուսնությունն է համարում: Առավել պատվավոր են երկարագործն ու ատաղձագործը: Գոշն արհեստներից մարմնի բնույթին օգտակարը և անհրաժեշտը բժշկությունն է համարում: Գոշը մահմեղականների կողմից սահմանված գլխահարկը /«Զիզիյա»/ համարելով քրիստոնյային անվայել երևույթ, ընդունում է միայն հարկումը՝ ըստ բնակչության գրաղմունքի՝ արհեստներից կամ առևտրից²:

Ինչպես Անդրկովկասի խոշոր հայաշատ քաղաքներում՝ Թբիլիսիում, Բաքվում, Երևանում, Գանձակում, Գորիխում, Շամախիում, Ալեքսանդրապոլում, այնպես էլ Շուշիում բնակչության արհեստավորական խավի մեջ հայերը գերակշիռ մաս են կազմել և աչքի են ընկել իրենց արհեստների վարպետությամբ: Միևնույն ժամանակ, անդրկովկասյան քաղաքներում համբարությունների ազգային կազմը բավական խայտարդետ է եղել: Նրա մեջ մտնում էին Անդրկովկասի բոլոր ազգությունները՝ հայերը, վրացիները, կովկասյան թաթարները և այլոք: Եվ դա չի խանգարել կողք կողքի ապրելու և միասին արարելու Անդրկովկասի քաղաքներում: Դավանելով տարբեր կրոններ, գտնվելով զարգացման տարբեր մակարդակների վրա, համբարներն ունեցել են հավասար իրավունքներ և հանդես են եկել բացառապես համերաշխության դիրքերից:

Շուշիի հայկական թաղամասը երկու անգամ իրկիզվելու հետևանքով քաղաքում գործող համբարությունների և համբարական դատարանների մասին շատ քիչ տվյալներ են պահպանվել, քանի որ իրդեհը կլանել է նաև համբարությունների վերաբերյալ արխիվային տվյալները: Սակայն արհեստավորական ավագների ընտրության մասին պահպանված տեղեկությունները և մի շարք հուշագրությունները վկայում են, որ, իրոք, Շուշիում եղել են համբարություններ: Դրանցից յուրաքանչյուրն ուներ, ըստ իր արհեստի, իր դրոշակը, ներքին կանոնադրությունը և այլն: Առանձնապես աչքի էր ընկնում պղնձագործների համբարությունը³:

Ինչպես Անդրկովկասի մյուս հայաշատ քաղաքներում, այնպես էլ Շուշիում դեռ շատ իին ժամանակներից զարգացած էին մի շարք արհեստներ: Արխիվային տվյալներով հիմնավորված են, որ XIX դարի սկզբին Շուշի քաղաքում կային 1864 արհեստավորներ, որոնցից 517-ը՝ վարպետներ, 948-ը՝ ենթավարպետներ և 399-ը՝ աշակերտներ:

Շուշիի արհեստավորները մետաղից և փայտից պատրաստել են գեղեցիկ սպասքներ, ոսկուց և երկարից՝ իրացման ապրանքներ: Միևնույն արհեստով զբաղվողները կենտրոնամում էին միևնույն թաղում կամ շարքում: Շուշիի հին հայկական գերեզմանոցի քարերի գրառումները հուշում են մեզ, որ քաղաքի ոչ քիչ տոհմիկ գերդաստաններ հայտնի արհեստավորներ են եղել: Մի շարք արհեստավորներ բաժանված են եղել ըստ քաղերի: Այսպես, դարբինները բնակվել են «Շեյքան բազար»-ի շրջանում, ոսկերիչները՝ Երիվանյան փողոցի վրա և այլն: Չնայած Շուշին գտնվում էր առևտրական հարմար ճանապարհներից հեռու, սակայն նրա առևտրական տների /Հախումյան, Թառումյան և այլն/ գործունեությունը հասնում էր մինչև Եվրոպա և Սիրիի խորքերը: Արխիվային փաստարդերից նկատելի է, որ Շուշիում գոյություն են ունեցել 41 տեսակի արհեստներ, որոնցից հայտնի են եղել ոսկերիչները, զինագործները, թիթեղագործները, կաշեգործները, թամբագործները, պղնձագործները և այլն: Յուրաքանչյուր արհեստ ունեցել է իր նախահայրը, հովանավորը: Երկարագործների նախահայրը համարվել է Դավիթ մարգարեն, գինեգործներին՝ Նոյ նահապետը, զինագործներին՝ Յովիան Օծնեցին, պղնձագործներին՝ Սուրբ Յակոբը և այլն:

Դամբարության մեջ ընդգրկվել են այն բոլոր անձինք, ովքեր զբաղվել են այս կամ այն արհեստով և առևտրով: Մինչև համբարությունների վերացումը /XX դարի 10-ական թվականներ/ համբարությունները դեկավարվել են ցարական Ռուսաստանի իշխանությունների կողմից 1867թ. ապրիլի 3-ին հաստատված՝ «Արհեստագործական համբարությունների /ցեխների/ մասին» Կանոնադրությամբ /այսուհետ՝ Կանոնադրություն/, որի համաձայն՝ համբարություններն ունեցել են իրենց ներքին վարչական կառուցվածքը: Դամբարության մեջ ընդգրկված արհեստավորները բաժանվել են 3 խմբերի՝ վարպետ /ուստա/, ենթավարպետ /խալֆա կամ քարգահ/ և աշակերտ /շագիր/:

Դամբարության ներքին կառուցվածքը ճիշտ հասկանալու նկատառումով, նշենք մի շարք կարևոր դրույթներ այդ Կանոնադրությունից և տվյալ ժամանակաշրջանում գործող սովորություններից:

Վարպետ էր կոչվում նա, ով կամ ինքն էր անհատապես զբաղեցնում մի խանութ, կամ թե պահում էր արհեստանոց, որտեղ աշխատում էին նաև ենթավարպետներ և աշակերտներ: Արհեստ սովորելու համար երկար ժամանակ է պահանջվել և դրա ողջ պատասխանատվությունն

ընկնում էր վարպետի վրա:

Աշխատանքի ընդունվելու համար վարպետի և աշակերտի միջև կնքվել է գրավոր պայմանագիր՝ աշխատանքի պայմանների մասին: Մինչ Կանոնադրության հաստատումը աշխատանքի ընդունումը կատարվել է Երդմամբ: Դանձնելով երեխային, աշակերտի տերն ասել է. «Միսը քեզ, ուսկորն ինձ, միայն նրան սովորեցրու քո վարպետությունը», իսկ վարպետը պատասխանել է. «Թող նրա բոլոր մեղքերն ընկնեն իմ վգին ահեղ դատաստանի օրը՝ Աստծոն առջև, եթե նրան տարբերեն իմ հարազատ որդուց և նրան չսովորեցնեմ իմ արհեստի բոլոր նրբություններին»⁴:

Արհեստն աշակերտը սովորել է փոքր հասակից, նույնիսկ 8-9 տարեկանից: Բոլոր աշակերտները մինչև ենթավարպետ դառնալն իրենց վարպետից ստացել են հագուստ և կերակուր, իսկ վարձատրություն չեն ստացել: Վարպետի ցանկությամբ շաբաթ օրը աշակերտին տրվել է շատ չնշին գումար՝ մի քանի գրոշ: Աշակերտը, բացի իր վարպետի խանութից, աշխատել է նրա տանը՝ կատարելով տնային մի շարք աշխատանքներ /փայտ կտրել, շուկա գնալ, ջուր բերել և այլ/:

Աշակերտի ժամկետը լրանալուց հետո հատուկ ծիսակատարությամբ նրան շնորհիվ է ենթավարպետի /խալֆա կամ քարգահ/ կոչում: Երբ աշակերտը հասու է դարձել իր արհեստին, հավաքվել են նրա արհեստի վարպետները և արժանի լինելու դեպքում, աշակերտին տվել են գիր-վկայական:

Ենթավարպետը վարպետի բացակայության ժամանակ ղեկավարել է աշակերտի աշխատանքը: Ենթավարպետը հայտնի չափով ազատություն վայելող բանվոր էր, նա կարող էր պայմաններ կապել իր վարպետի հետ կամ նույնիսկ ուրիշի մոտ աշխատել: Ենթավարպետն իր կատարած աշխատանքի համար վարպետից ստացել է վարձատրություն: Շուշիում դարբնի ենթավարպետը ստացել է եղած արդյունքի 1/4-ը, կլայեկող /դլեչի/ ենթավարպետը՝ 1/3-ը, տակառագործ ենթավարպետի տարեվարձը կազմել է 40-50 ռուբլի⁵:

Առանց վարպետի վկայության և համաձայնության ենթավարպետը չէր կարող «վարպետ» օրինվել: Նորընտիր վարպետի ծեռնադրության հանդեսին, բացի համբարության բոլոր վարպետներից, ներկա են եղել մեկ կամ երկու հոգևորական, որոնց օրինանքից հետո ենթավարպետը համբուրել է իր վարպետի՝ ապա մյուս վարպետների և ուստա-

բաշու ձեռքերը և սահմանված չափով գումարը նվիրել համբարական գանձարանին: Դրանից հետո ենթավարպետը վարպետից ստացել է օրինություն և վարպետների գլխավորը վարպետացուին տվել է նի ապտակ, այսպես կոչված վարպետաց ապտակը /«ուստա-սիլլասի»/, որպեսզի այդ ապտակը հիշելով, նորընտիր վարպետը բարձր պահի իր արհեստի պատիվը: Մի անգամ Ավետիք Խսահակյանը Կարսում գրունում էր հյուրանոցի բակում, պատաճի Եղիշե Չարենցը տեսնում է նրան և կախարդվածի պես հիացած նայում է նրա դեմքին: Վարպետին դուր չի գալիս այդ սևեռուն հայացքը և նա նի ուժգին ապտակ է հասցնում Չարենցին: Վերջինս 1925թ. Վենետիկում հանդիպում է Խսահակյանին և մտերմիկ գրույցի ժամանակ հիշեցնում է միջադեպը. վարպետը ծիծաղելով պատասխանում է. «Ղե, ոչինչ, Եղիշե ջան, դա ուստասիլլասի է Եղել: Ապտակս ուժգին է Եղել, դրա համար լավ բանաստեղծ ես դարձել»: Մի քանի տեղերի սովորության համաձայն՝ նորընծա վարպետին ապտակում էր ոչ թե վարպետների գլխավորը, այլ այն վարպետը, որի մոտ սովորել է նա: Վերջում ներկաներին տրվել է ճաշ, որը կոչվել է «դաստուրահաց»: «Դաստուր»-ը պարսկերեն բառ է և հայերեն նշանակում է թույլտվություն:

Յուրաքանչյուր համբարություն ունեցել է իր գլխավորին, ով ինչպես Անդրկովկասի մի շարք քաղաքներում, այնպես էլ Շուշիում կոչվել է ուստաբաշի /հայերեն՝ գլխավոր վարպետ, վարպետների գլխավոր/: Վերջինս ընտրվել է համբարության ընդհանուր ժողովում՝ մեկ տարի ժամկետով և հաստատվել այդ պաշտոնում նահանգապետի կողմից: Ուստաբաշու հետ միասին ընտրվել են 2-4 օգնականներ, որոնք կոչվել են աղսահսկաներ /հայերեն՝ փորձառու, իմաստուն մարդիկ/: Ընկերության ժողովում ընտրվել է նաև գանձապահը՝ խազնադարը: Այստեղ բնական հարց է ծագում: Ունեցե՞լ են, արդյոք, համբարություններն իրենց դատարանները: Պատասխանը միանշանակ դրական է: Կանոնադրության վերջին գլուխը նվիրված է համբարության դատարանակազմության հարցերին:

Դայ արհեստավորական և առևտորական միությունների ու նրանց դատարանների մասին ամենավաղ հիշատակումները գտնում ենք Գոշի մոտ: Խսկ դա նշանակում է, որ հայ համբարությունները և համբարական դատարանները գոյություն են ունեցել XII դարից ավելի վաղ, այսինքն՝ որքան իին էին համբարությունները, այնքան էլ իին էին համ-

քարական դատարանները: Կամ այլ խոսքերով ասած, համբարության գործունեությունը Ենթադրում է համբարական դատարանի առկայությունը: Գոշի մի շարք առակներ նվիրված են դարենի, հյուսնի, հողագործի, կաշեգործի, մորթեգործի և այլոց աշխատանքներին: Դրանցից մեկը վերաբերում է պղնձագործի և երկարագործի միջև ծագած վեճին՝ միմյանց խնամի դառնալու կապակցությամբ: Քանի որ յուրաքանչյուրն իր արհեստն էր գովարանում, ուստի կողմերը, վեճը լուծելու համար դիմում են դատարանին՝ «ծերոց ատյանին»: Վերջինս վճռում է, որ «հասարակության համար օգտակարը պատվելի է».⁶ Առակում խոսք է գնում արհեստի առավելության մասին, ուստի ծերերի ատյանը համաքաղաքացիական դատարան չէր կարող լինել: Այստեղ վեճի առարկան կապված է արհեստի հանգանանքների հետ և այդ առումով ծերերի ատյանը պետք է վերագրել համբարություններին: Գոշի առակը նաև ցուցանում է, որ «ծերոց ատյանը» ոչ թե որոշակի, այլ տարբեր տեսակի արհեստների միջև ծագած վեճ է քննել:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ համբարություններում գործել է քառաստիճան դատական համակարգ:

1.Համբարական վարպետների գլխավորի դատարան, որին ընդդատյա են եղել շտապ և պարզ հարցերը:

2.Համբարական դատարան, որին ընդդատյա են եղել բարդ և վիճելի հարցերը:

3.Համբարության գլխավորներից կազմված դատարան, որին ընդդատյա են եղել որևէ համբարության գլխավորին պատժելու վերաբերյալ հարցերը:

4.Համբարության ընդհանուր ժողով, որին ընդդատյա են եղել որպից ստացվող գանգատների վերաբերյալ գործերը: Այս դեպքում, անորակ ապրանք պատրաստելու համար, ընդհանուր ժողովը, որպես պատիժ մի քանի օրով վարպետի խանութք փակել է և բանալին հանձնել վարպետների գլխավորին:

Կանոնադրության համաձայն՝ համբարական դատարանի կազմի մեջ էին մտնում վարպետների գլխավորը և ավագները, ինչպես նաև մասնակցում էին հեղինակավոր վարպետները:

Համբարական դատարանին ընդդատյա են եղել հետևյալ բնույթի հարցերը:

1.Վարպետի, ենթավարպետի և աշակերտի միջև ծագած վեճերը:

2.Անձնական և մասնագիտական հարաբերությունների բնագավառում համքարության վարպետների միջև ծագած վեճերը:

3.Վարպետների ընտանեկան հարաբերություններին վերաբերող վեճերը:

4.Կրոնական պարտականությունների խախտման կապակցությամբ ծագած վեճերը /կրոնական ծեսերը և տոները չպահպանելը, համքարության մահացած անդամի թաղմանը չգնալը և այլն/:

5.Համքարության անդամների կողմից հասարակական հանգիստը խանգարելու հարցերը:

6.Կողմնակի անձանց բողոքները համքարության անդամների դեմ, վերջիններիս կողմից պատվերները վատ կատարելու, գեղջարարությունների, անորակ ապրանք վաճառելու վերաբերյալ գործերը:

Համքարական դատարանի վերոնշյալ մի շարք լիազորություններ բխում են հենց Գոշի Դատաստանագրքից: Գոշն արգելուն է մանուկներին վարձով ուսուցանելը, պարտավորեցնում հոգալու նրանց հագուստը և կերակուրը, իսկ որը լինելու դեպքում՝ ամենայն խնամք ցույց տալը: Եթե արհեստավորը փչացնում է նյութը, պետք է առնի կամ փչացրած նյութի արժեքը վճարի, որից հետո նոր միայն կարող է վարձը ստանալ, իսկ եթե ոչ՝ վարձը պետք է պակաս ստանա՝ ըստ նյութի արժեքի: Եթե արհեստավորը գող լինի՝ պիտի հատուցի և վճարի կորսված ապրանքի գինը: Ցեցից կամ մկներից վնասվածը հատուցվում է, երկար ժամանակ իր նոտ պահպան և կամ մեկ այլ պատճառով վնասվածը հատուցվում է դատավճռով, հաշվի առնելով, որ նյութը տրվել է նրան գործի մեջ կիրառելու և ոչ թե փչացնելու համար⁷:

Զանցառուների համար սահմանվել են տարրեր տեսակի և բնույթի պատիժներ՝ ելենով երկրում գոյություն ունեցող օրենքներից: Պատժի տեսակներից ավելի շատ տարածված և սովորական են համարվել դրամական և բնամթերային տուգանքները: Դրամական տուգանքները մտել են համքարական գանձարկողը, իսկ բնամթերայինը՝ մոմ, գինի, ճաշ, օգտագործվել են տարրեր նպատակներով, օրինակ, մոմը օգտագործել են եկեղեցում, իսկ գինին ու ճաշը հյուրասիրել են համքարության վարպետներին: Մեղավորի կողմից տուգանքը զանց առնելու դեպքում նա ենթարկվել է ավելի ծանր պատժի:

Համքարական դատարանի պատիժներից մեկն էլ մեղավորի կրպակը կամ արհեստանոցը ժամանակավորապես փակելն է: Նման դեպք-

րում արհեստավորի գործիքները վերցրել են և բանադրանք տվել: Բացի այդ, համբարության անդամները խզել են իրենց հարաբերությունները մեղավորի հետ և նույնիսկ բարև չեն տվել ոչ միայն վարպետին, այլև նրա ընտանիքի անդամներին: Եթե համբարության անդամը զոջացել է, նրան ներել են, և վերջինս պարտավոր էր ճաշ տալ համբարության անդամներին, որը շատ քանի էր նստում: Իսկ եթե մեղավորը շարունակել է իր անհնազանդությունը, նրան հեռացրել են համբարությունից:

Խարդախության կամ խարերայության համար համբարական դատարանն առաջին անգամ բավարարվել է խրատներով և հանդիմանությանք կամ թե տուգանքով: Տուգանքը եղել է դրամական բնույթի և հանձնվել է համբարական դատարանին: Տուգանքից ավելի խիստ պատիժ է համբարվել բանադրանքը կամ խանութի ժամանակավոր փակունը /յոլսուց/: Բանադրանքը տևել է մի քանի ժամից մինչև երկու-երեք շաբաթ, որը մեծ վնաս է հասցրել ոչ միայն առևտությունից, այլև վարպետի հեղինակությանը:

Վարպետի համար ավելի ժամը պատիժը հրապարակավ անպատվելն էր: Այդ պատիժը կիրառվել է մի քանի անգամ աչքի ընկած խարերա և խարդախ վարպետների նկատմամբ: Այս դեպքում նրանց պատրաստած վատ գործը կախել են խանութի պատիջ՝ ի ցույց:

Պատժի մի այլ ձևը քաղաքից արտաքսումն է: Այդ պատիժը համբարական դատարանը կիրառել է խարդախ, բարոյապես փշացած վարպետների նկատմամբ, որոնք կարող էին վարակել և իրենց աշակերտներին օրինակ ծառայել: Մեղավոր արհեստավորն աքսորվել է քաղաքից: Դամբարության բոլոր անդամներն իրենց հարաբերությունները խզել են պատժվածի հետ, նույնիսկ ջրկիրը հրաժարվել է ջուր բերել, հացրուխը հաց չի ծախել նրան:

Ախալցխայի համբարությունում սահմանված էր պատժի մեկ այլ տեսակ ևս: Բարոյականության դեմ մեղանչողին, բռնաբարություն կատարողին ենթարկել են խիստ ծեծի: Դատարանի խիստ հանդիմանություններից հետո մեղավորի ոտքերը դրել են ֆալախվայի /գանահարման միջոց/ մեջ և երեք ուժեղ անձնավորություն սկսել են հարվածել ոտքերին՝ կրկնելով հետևյալ բառերը. «Զժառանգես, չզորանաս և փիրի հացը չվայելես»: Այնուհետև պատժվածն ենթարկվել է եկեղեցական ապաշխարանքի⁸:

Անհնազանդ և վատ վարքի տեր Ենթավարպետը, եթե նախազգուշացումից հետո չի զգաստացել, նա նույնպես պատժվել է ֆալախկայով և քաղաքից աքսորվել:

1867թ. Կանոնադրությունը կարգավորել է նաև գեղջարարության, խաբերայության, չարաշահումների, աշակերտների բողոքների, աշակերտների և Ենթավարպետների հեռացման և վարպետների գլխավորի մասին հարցերը:

Դամբարության վարպետների գլխավորը վերջնականապես վճռել է ինչպես միևնույն համբարության, այնպես էլ արհեստավորի և օտար մարդկանց միջև ծագած վեճերը, եթե վերջիններս կամովին ներկայացել են համբարական դատարանին և վեճի առարկան իր արժեքով տասը ռուբլի արժարից ավելի չի եղել. այդ գումարից բարձր լինելու դեպքում դժգոհ կողմին իրավունք է տրվել բողոքելու արհեստավորական վարչությանը:

Արհեստավորների, Ենթավարպետների և աշակերտների թերև հանցանքները, ինչպես նշված է Կանոնադրության 62-րդ հոդվածում, սկզբում քննել է ուստաբաշխն, ով սահմանել է տուգանք՝ մեկ ռուբլի հիսուն կոպեկի չափով կամ մեկ օրվա բանտարկություն: Իսկ եթե հանցանք կատարողից պահանջվել է ավելի մեծ գումար, այդ դեպքում ուստաբաշխն տեղյակ է պահել արհեստավորական վարչությանը, որն իրավասու էր վճիռ կայացնել, եթե վեճի առարկայի գումարը 30 ռուբլուց չի գերազանցել:

Արհեստավորական վարչությունը թերև հանցանքների համար մեղավորներին Ենթարկել է դրանական տուգանքի՝ 5 ռուբլու սահմաններում, կամ երեք օրվա բանտարկության: Կանոնադրության մեջ միաժամանակ նշված էր, որ եթե արհեստավորական վարչության ատյանն իր պաշտոնն ի չարն է գործադրել, կամ չի կատարել ղեկավարության գորավոր ցուցումները, այդ դեպքում նահանգապետի կողմից Ենթարկվել է դրանական տուգանքի կամ էլ Ենթարկվել է քրեական պատասխանատվության:

Դամբարական դատարանի վերոնշյալ մի շարք լիազորություններ բխում են հենց Գոշի Դատաստանագրքից:

XIX դարի վերջին տասնամյակում արդյունաբերության զարգացման և մեքենաների արագ մուտքի հետ միասին նոր ճանապարհների կարգավորումն ավելի արագացրեցին համբարական կազմակերպու-

թյունների քայլայումը, որի հետևանքով մի շարք եկամտաբեր արհեստներ աստիճանաբար հրապարակից դուրս եկան և խախտվեցին համքարության հիմքերը: Վերացան նախկինում եղած հայրական և որդիական փոխադարձ հարաբերությունները: Որոշիչն արդեն շահն էր:

Համքարության հարցերի վերաբերյալ 1900 և 1911թթ. Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կայացավ համառուսաստանյան 2 համագումար, որի որոշումները չկարողացան կասեցնել համքարության անկումը: Գործարանային արտադրանքը հաղթեց տնայնագործ արհեստավորին, ծերքի աշխատանքը փոխադրինվեց գործարանային մեքենայի աշխատանքով: Իսկ խորհրդային կարգերի ժամանակ մանր արհեստավորները համախմբվեցին արտելային համակարգի մեջ:

Հավելենք, որ հայ համքարության անդամներն օժտված են եղել բարձր բարոյական և մարդկային արժեքներով, որոնք գալիս են մեր ժողովրդի բազմադարյա պատմության խորքերից և որոնց կրողները պահանջված և կիրառելի են մեր օրերում:

ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԻճԱԿԸ
ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անցյալը մեզ ուսուցանում է ներկայում
լավ գործելու համար, իսկ ներկան էլ
ապագայի ուսուցիչն է:
Ավ. Խահակյան

Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի ստորաբաժանումները Շուշի քաղաք մտան 1920 թվականի մայիսի 12-ին: Վարանդա գավառի Թաղավարդ գյուղում մայիսի 26-ին տեղի ունեցած Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը երկրամասը հայտարարեց խորհրդային: Ղարաբաղը հայտնվեց Խորհրդային Ադրբեջանի, քենալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի կողմից հյուսված սիրախաղերի սարդուստայնում, որի արդյունքը եղավ միջազգային իրավունքի տեսանկյունից նորմատիվ ակտի ուժ չունեցող ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի կուսակցական որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի սահմաններում թողնելու մասին՝ նրան տրամադրելով մարզային ինքնավարություն: Դայ ժողովրդի դարաբայան հատվածի համար այդ ստորացուցիչ որոշմանը Ադրբեջանը պետք է որոշեր մարզի սահմանները և ինքնավարության շրջանակները: Սակայն, Ադրբեջանը չէր շտապում. նույնիսկ դիմեց Կովբյուրոյին՝ Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցը վերանայելու խնդրանքով¹:

Երկար ձգձգումներից հետո Ադրբեջանի Կենտգործկոմը 1923թ. հուլիսի 7-ին ընդունեց դեկրետ՝ Լեռնային Ղարաբաղի հայկական մասից ինքնավար մարզ կազմավորելու մասին, որին տրվեց «Ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի» /ԻՄԼ/ հորջորջումը²: Այդ անվանումը կիրառվեց մինչև ԽՄՀՄ 1936թ. Սահմանադրության ընդունումը, որից հետո երկրամասը վերանվանվեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» (ԼՂԻՄ): Ադրբեջանի գիտնականները, այստեղ նույնպես, հայ ազգայնականների մատը խառն են համարում այն «հիմնավորմանք», որ, եթե առաջին տարբերակում խոսք է գնում Լեռնային Ղարաբաղի մի մասի մասին՝ առանձնացված ինքնավարության մեջ, ապա նոր տարբերակում (ԼՂԻՄ) նկատի է ունեցվում ամբողջ Լեռնային Ղարաբաղը՝ մարզի շրջանակներում:

Ի կատարումն 07.07.1923թ. դեկրետի՝ Ադր.ԽՄՀ Կենտգործկոմի և

Ժողկոմխորի 24.07.1923թ. որոշմամբ, մինչև խորհուրդների մարզային առաջին համագումարի հրավիրումը, մարզի պետական իշխանության բարձրագույն մարմինն ինքնավար մարզի ժամանակավոր Հեղափոխական կոմիտեն էր: Հեղկոնը գործեց մինչև 1923թ. նոյեմբերի 9-ը և վերացվեց ինքնավար մարզի խորհուրդների առաջին համագումարի որոշմամբ:

Ինքնավար մարզի սահմանները վերջնականապես ճշտվեցին միայն 1925թ., իսկ մինչ այդ՝ 1923թ. օգոստոսի 15-ին մարզի տարածքուն իրենց գործադիր կոմիտեներով ստեղծվեցին 4 շրջաններ՝ Զրաբերդի (Մարտակերտ գյուղկենտրոնով), Խաչենի (Խանքենի գյուղկենտրոնով), Վարանդայի (ճարտար գյուղկենտրոնով) և Դիզակի (Ճադրութ գյուղկենտրոնով): Մեկ տարի հետո ստեղծվեց Շուշիի շրջանը (Շուշի քաղաքային կենտրոնով): Զուգահեռ ձևավորվեցին նաև նշված շրջանների գյուղական համայնքների գործադիր կոմիտեները³:

Հետագա տարիներին Զրաբերդի շրջանը վերանվանվեց Մարտակերտի, Վարանդայինը՝ Մարտունու, Դիզակինը՝ Ճադրութի, Խաչենինը՝ Ստեփանակերտի, վերջինս 1978թ. վերանվանվեց Ասկերամի շրջանի:

Մարզում շրջանային դատարանների կազմավորումը սկսվեց 1923թ. օգոստոսի 15-ին և ավարտվեց նույն տարվա դեկտեմբեր ամսին⁴:

Մարզի իրավապահ մարմինների աշխատանքի կազմակերպումն ընթացել է մեծ դժվարությամբ, համապատասխան շենքեր չկանոնավոր պատճառով դատարանները և մյուս պետական մարմինները տեղավորվել են նախկին մեծահարուստներից առգրավված տներում: Ուրիշ ելք չկար, քանի որ պատրաստի շենքեր չեն եղել: Ստեփանակերտի քաղաքային միլիցիան տեղավորելու նպատակով, ինքնավար մարզի ներքին գործերի ժողովողական կոմիսարի կարգադրության համաձայն՝ քաղաքացի Բախչի Պողոսյանը և նրա բազմանդամ ընտանիքը բռնի վտարվել են սեփական բնակարանից: Բ.Պողոսյանի 31.10.1924 թվակիր դիմումի ընթացքավորումն արդարադատության ժողկոմ և մարզդատախազ Մելքոնյանը հանձնարել էր մարզդատարանի քննիչ Քալանթարովին: Ստուգման նյութերը կազմել են ընդամենը 3 բացատրություն, որոնց հիման վրա, մարզդատախազի համաձայնությամբ, մարզդատարանի տնօրինական նիստում գործի վարույթը կարճվել է՝ միլիցիայի աշխատողների կողմից «զանցառություն չկատարելու» հիմնավորմամբ⁵: Զնայած երկրամասում գրագետ կադրերի պակաս չի եղել, բայց բոլշևիկյան քաղաքականության ուժով աշխա-

տանքի են վերցվել միայն կոմունիստները և չքավոր խավերի ներկայացուցիչները, որոնց մեջ գրագետ մարդկանց թիվը շատ քիչ էր: Նույնիսկ դատարանում թղթատար աշխատելու համար քաղաքացին պետք է կոմունիստ լիներ:

Սկզբնական շրջանում մարզի նորաստեղծ շրջդատարանները ղեկավարվում էին ինչպես Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեյջանի, Անդրֆեդերացիայի օրենքներով, այնպես էլ կուսակցական հրահանգներով: Ժողդատավորները քաղաքացիական գործով պատասխանողին անվանում էին մեղադրյալ, որոշման փոխարեն գրում էին դատավճիռ, դատական ակտերի եզրափակիչ մասերում բողոքարկման ժամկետների և տեղի մասին ոչինչ չեն ասվում և այլն:

Շուշիի շրջանի ժողդատավոր Սալդիխովն այնքան էր անգրագետ, որ իր կողմից կայացված դատական ակտի դեմ բողոք բերողին անմիջապես վերցնում էր կալանքի:

Եվ զարմանալի չէ, որ արդարադատության որակը շատ ցածր էր: Արխիվային տվյալների համաձայն՝ մարզային դատարանի 9 պատասխանատու աշխատողներից ոչ մեկը բարձրագույն և միջնակարգ կրթություն չի ունեցել: Նրանցից միայն մեկն էր 1926թ. Բաքվում կազմակերպված երկամսյա դասընթացներ անցել: Կադրերի պակասության և բյուջեի սղության պատճառով համատեղության պրակտիկան զանգվածային բնույթ էր կրում: Ժողդատավորը համատեղության կարգով աշխատել է նաև որպես մարզդատարանի կոլեգիայի անդամ, ժողդատարանի դատական կատարածուն միաժամանակ գործավարի պարտականություններ է կատարել:

Համաձայն Ադրբեյջանի Կենտգործկոմի՝ հիմնարկություններն ազգայնացնելու վերաբերյալ 31.07.1923թ. որոշման, մարզի դատարաններում դատավարությունը և գործավարությունը պետք է տարվեին հայերեն լեզվով⁶:

Մարզում ստեղծվել էր նաև ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ մարմինը, որը կազմված էր վարչական, կոմունալ տնտեսության և միլիցիայի բաժիններից:

Ինքնավար մարզի Յեղկոմը վերացվելուց հետո նրա լիազորությունները, մարզի խորհուրդների առաջին համագումարի որոշմամբ, տրվեցին վերջինիս կողմից ընտրված կենտրոնական գործադիր կոմիտեին (Կենտգործկոմ): Իսկ վերջինս Մարզխորհրդի համագումարի որոշումները կյանքի կոչելու համար ընտրում էր ժողովրդական կոմիսարների խորհուրդ /ժողկոմխորհ/, որն էլ իր ձեռքում կենտրոնացնելով մարզի կառավարման բոլոր լծակները, օժտված էր Կենտգործկոմի նախագահության լիազորություններով: Մարզի Կենտգործկոմի նա-

խագահը միաժամանակ ժողկոմխորհի նախագահն էր⁷:

Ինչպես նկատելի է, ինքնավար մարզի կառավարման և գործունեության սկզբնական տարիներին ախտական իշխանության և կառավարման մարմինների լիազորությունների և գործառույթների հստակ տարանջատում չի եղել: Գործադիր մարմինները՝ մարզի Կենտգործկոմը՝ իր բաժիններով և նրա նախագահությունը՝ ժողկոմխորհը՝ իր կոմիսարիատներով միմյանց կրկնօրդում և փոխուղղորդում էին, իսկ մարզային ինքնավարությունը միայն անվանական բնույթ էր կրում:

Համաձայն ինքնավար մարզի մասին 1923թ. Կանոնադրության՝ մարզին առընթեր գործում էր Աղորեցանի Գերագույն դատարանի բաժանմունքը⁸: Մինչ այդ կառույցի ստեղծումը, շրջդատարաններից դժգոհ քաղաքացիներն իրենց գանգատներն ուղղում էին մարզի Կենտգործկոմին: Յաշվի առնելով հարցի լրջությունը՝ Խաչեն-Վարանդա շրջանների ժողդատավոր և, միաժամանակ, մարզի Կենտգործկոմի արդարադատության բաժնի վարիչ ու արդարադատության ժողովրդական կոմիսար Խսահակ Բաղդասարովը, մարզային դատարան և դատախազություն կազմավորելու խնդրանքով, 1924թ. հունվարի 9-ին դիմել է մարզի Կենտգործկոմին: Մարզի ժողկոմխորհի 1924թ. հունվարի 20-ի որոշմամբ ստեղծվեց մարզային դատարան, որը պետք է կազմված լիներ նախագահությունից և քրեական ու քաղաքացիական գործերով միացյալ կոլեգիայից⁹: Յենց ի. Բաղդասարովին էլ հանձնարարվեց ձեռնամուխ լինել մարզային դատարանի կազմավորմանը: Վերջինս էլ, մարզի Կենտգործկոմի որոշմամբ, նշանակվեց նորաստեղծ մարզային դատարանի նախագահ¹⁰:

Նշված փաստերի վկայակոչմամբ, ԼՂՀ դատարանների նախագահների խորհությը, 20.12.2010թ. միջնորդությանը դիմել է Լեռնային Դարարադի Յանրապետության կառավարությանը՝ հունվարի 20-ը որպես ԼՂՀ դատական համակարգի աշխատողի օր նշելու մասին առաջարկությամբ: ԼՂՀ կառավարության 2011թ. հունվարի 14-ի N1 որոշմամբ՝ Լեռնային Դարարադի Յանրապետությունում հունվարի 20-ը սահմանվեց որպես Դատական համակարգի աշխատողի օր¹¹:

Մարզային դատարանը՝ հանդես գալով որպես Երկրորդ կամ Վճռաբեկ ատյանի դատարան, շրջդատարանների նկատմամբ «բեկման» բողոք-գանգատների հիման վրա քննության էր առնում շրջդատարանների կայացրած դատական ակտերը: Մարզային դատարանը, միաժամանակ, կարևորագույն քրեական գործերով հանդես էր գալիս որպես առաջին ատյանի դատարան:

Ստորադաս դատարանների կողմից ակնհայտ խիստ պատիժ նշա-

նակելու դեպքում մարզային դատարանն իրավունք չուներ մեղմացնելու պատժաչափը և պատժատեսակը: Նա իրավունք ուներ միայն դատական ակտը թողնել անփոփոխ:

Եթե մարզային դատարանի կոլեգիան անհրաժեշտ էր համարում պատիժը մեղմացնել կամ քաղաքացիական գործով բռնագանձվող վճարի չափը նվազեցնել, ապա նա պարտավոր էր միջնորդությամբ դիմել մարզի Կենտգործկոմի նախագահությանը (ժողովմխորհին): Աշե-լով մեղմացուցիչ այն հանգամանքները, որոնք հաշվի չեն առնվել ստորադաս դատարանների կողմից:

Փաստորեն, մարզի Կենտգործկոմի նախագահության արդարադատության ժողովրդական կոմիսարիատը կատարում էր դատական համակարգի երրորդ ատյանի գործառույթներ: Այսպես, մարզային դատարանը, գտնելով, որ Խաչենի ժողովատարանի դատավճիռը Ղամբարյանի նկատմամբ հիմնավորված է, այն թողել է անփոփոխ և, միաժամանակ, հաշվի առնելով անբաստանյալի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, դիմել է Կենտգործկոմի նախագահությանը՝ նշանակված պատիժը մեղմացնելու միջնորդությամբ, որը և բավարպվել է¹²:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ ունենալու հարցը բազմիցս քննարկվել է Խորհրդային Ադրբեյջանի կուսակցական և պետական մարմիններում: Վերջնական արդյունքում՝ Ադրբեյջանի Կոմկուսի Կենտկոմի նախագահությունը 1924թ. հուլիսի 1-ին ստեղծեց հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի մասին Կանոնադրություն նշակելու համար: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց Խորհրդային Ադրբեյջանի ներքին գործերի ժողկոն և Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ս. Բաղրիովը, անդամներ՝ Թ. Ալիկը և մարզի գործադիր իշխանության դեկանար Ա. Ղարագյողյանը: Հանձնաժողովի կողմից նշակված «Ինքնավար Մարզի Սահմանադրության նախագիծ» փաստաթուղթը քննարկվեց Ադրբեյջանի ԿԿ նախագահության 03.07.1924թ. նիստում և արժանացավ հավանության: Միաժամանակ առաջարկվեց Ադրբեյջանի Կենտգործկոմի նախագահությանը՝ Սահմանադրության նախագիծը շտապ թերել «Խորհրդային տեսքի» ու հրապարակել թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Սահմանադրությունը հայերեն և արաբատար թուրքերեն լեզուներով առաջին անգամ հրապարակվեց Բաքվում հայերեն լեզվով լույս տեսնող Ադրբեյջանի ԿԿ օրգան «Կոմունիստ» թերթի 1924թ. հուլիսի 6-ի համարում¹³: Նույն օրը Բաքվում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Բակինսկի ռաբոչի» թերթը շնորհավորեց Ղարաբաղի գյուղացիությանը՝

«հուլիսի 6-ի» կապակցությամբ: Սահմանադրությունը «Խորհրդային Ղարաբաղ» թերում արտատպվեց 1924թ. հուլիսի 24-ի համարում:

Խորհրդային իրավագիտությունը Սահմանադրության տակ նկատի էր ունենում պետության հիմնական օրենքը, որն արտահայտում էր տիրապետող դասակարգի շահերը և հասարակության մեջ դասակարգային ուժերի հարաբերակցությունը:

Ժամանակակից գիտությունը Սահմանադրությունը բնորոշում է ոչ միայն որպես իրավական, այլև քաղաքական և գաղափարախոսական փաստաթուղթ, որը, օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով, կարգավորում է պետական և հասարակական կյանքի հիմունքները, անձի իրավական կարգավիճակը, ամրապնդում հասարակության մեջ ուժերի հարաբերակցությունը, նրանց պայքարն ու համագործակցությունը և խոսցված ձևով արտացոլում հասարակության մեջ տիրապետող կամ դեկավար ուժերի սոցիալ-քաղաքական ուսումնությունը ու աշխարհայացքը:

Իհարկե, սահմանադրական մշակույթի տեսակետից Արցախի համար Բարվում գրված «Սահմանադրությունը» հեռու էր իրական Սահմանադրությունից, բայց քանի որ այն պետք է ամրագրեր ինքնավար մարզի՝ որպես ԽՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական ազգային պետականության ձևերից մեկի իրավական կարգավիճակը, ուստի շուրջ 9 տասնամյակների հեռավորությունից ավելորդ չեմ քանի խոսքով անդրադառնալ մեր երկրանասին «շնորհված» փաստաթղթի էռությանը և բնորոշ գծերին՝ չվիճարկելով, որ ժամանակի հեռվից շատ հարցեր խոշորացնող ակնոցով են երևում:

Սահմանադրությունը կազմված է նախարանից (պրեամբուլա) և 4 բաժիններից՝ 1. Ընդհանուր ինմունքներ, 2. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը, 3. Կենտրոնական իշխանության կազմակերպումը, 4. Իշխանության կազմակերպումը տեղերում:

Նախարանում նշվում է. «Յամածայն Աղրենքանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության որոշման, ընդունեն հայտարարվում է «Ինքնավար Շրջան Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը»: Ստորագրված էր՝ Աղրկենտգործկոմի նախագահի տեղակալ՝ Բ. Կասումով:

Այստեղ զավեշտալին այն է, որ Սահմանադրության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղին տրվում էր ոչ թե «մարզի», այլ «շրջանի» կարգավիճակ և որ Սահմանադրությունը հայտարարվում էր Աղրկենտգործկոմի նախագահության որոշման համաձայն: Ահա այսպես էր Աղրկենտգործկոմը կատարում Աղրկոմկուսի Կենտկոմի ցուցումը՝ «շտապ խորհրդային տեսքի» բերելով ինքնավար մարզի Սահմանադրության

նախագիծը: Քաղաքական ինքնավարության ենթատեքստում, Խորհրդային Սիոնարայան պետական շինարարությանը խորթ էր «ինքնավար շրջան» ձևը, նույնիսկ նորա ստորին օրակը կոչվում էր «ինքնավար օկրուգ»: Սակայն, Բաքվի իշխանությունները, անտեսելով ինչպես Կովբյուրոյի, այնպես էլ իրենց կողմից ընդունված որոշումները, ի սկզբանէ էլ հաստատակամ էին ինքնավար մարզը լուծարելու հարցում:

Սահմանադրության առաջին բաժինը բաղկացած է երեք հոդվածներից: Առաջին հոդվածն արձանագրում է, որ Ինքնավար Լեռնային Ղարաբաղը կազմում է Խորհրդային Ադրբեջանի «մի բաղկացուցիչ մասը», իսկ համաձայն Երկրորդ հոդվածի՝ «ամբողջ գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը դպրոցներում Ինքնավար Լեռնային Ղարաբաղում կատարվում է մայրենի լեզվով»: Շատ առեղծվածային է «մայրենի լեզու» հասկացությունը: Գոնե ինքնավար մարզ կազմավորելու մասին Ադրբենտործկոմի դեկրետում նշված էին «հայ-մուսուլմանական», «հայերի և մուսուլմանների», «Լեռնային Ղարաբաղի հայկական մաս» բառակապակցությունները, որոնցից հասկանալի է, որ բարի առաջին մասը վերաբերում է հազարամյակների խորքից եկող Երկրի բնիկ տերերին՝ հայ երնսուին, իսկ մուսուլման բարը կոնկրետ ազգ կամ ազգություն չի ենթադրում, այլ միայն իսլամի հետևորդներ է նշանակում: Միգուցե Ադրբեջանի Կենտօրդկոմը մոռացության էր տվել իր իսկ կողմից 1923թ. հուլիսի 7-ին ընդունած «Դիմնարկությունների ազգայնացման մասին» որոշումը, համաձայն որի՝ Խորհրդային Ադրբեջանի հիմնարկ-ձեռնարկություններում և կազմակերպություններում գործավարությունը պետք է տարվեր թուրքերն, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ հայերեն լեզվով¹⁴: Երրորդ հոդվածն ամրագրում է, որ Լեռնային Ղարաբաղը մասնակցում է Խորհրդային Ադրբեջանի «հանրապետական բոլոր մարմիններում համեմատական չափի սկզբունքով»: Իրավական տեսակետից սա մեծ կրվան է և նշանակում է, որ Խորհրդային Ադրբեջանի տարածքում պետական իշխանության կրողներից մեկն էլ Արցախի հայ ժողովուրդն է հանդիսացել:

Սահմանադրության Երկրորդ բաժնից նկատելի է, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը ստեղծվում էր Շուշիի, Զևանշիրի, Կարյագինոյի և Ղուբարլուի գավառների՝ Սահմանադրության մեջ նշված բնակավայրերից: Վոյունտարիզմի տեսակետից իր նախադեպը չունեցող այս ահավոր սահմանադրական նորմը հիմք հանդիսացավ, որպեսզի Բաքվի իշխանությունները որոշեն մարզի սահմանները: Եվ որոշեցին այնպես, որ 11.5 հազար քառ.կմ տարածքը ունեցող պատմական Արցախի նահանգից թողնվեց 4.4 հազար քառ.կմ-ը: Մարզից կտրեցին դաշտային բերրի հողերը, Արցախի հյուսիսային շրջանները՝ շփման ոչ մի կետ

չթողմելով Մայր հայրենիքի հետ: Ահա ինչպես էին որոշում մարզի սահմանները: Արցախի և Սյունիքի նախադուռը հանդիսացող պատմական գիհուտ (արաբերեն՝ Յարար) գյուղը, որը միջնադարում Յայաստանի համար Սպարտայի դերն էր կատարում, Յադրութի շրջանից կտրեցին և հանձնեցին քրդաբնակ Լաչինի շրջանին: Գյուղը հայաթափելուց հետո այն կոչեցին «Ինքնավար Մարզի Սահմանադրության նախագծի» դեկավար, հետագայում Ադր.ԽՍՀ Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Միր Զաֆար Բաղիրովի անունով՝ Զաֆարարադ (1954թ-ից՝ Յուլիսարը Փարաջան): Գյուղը 1992թ. ազատագրվելուց հետո Վերստին ստացավ իր նախկին Յարար անունը: Յատկանշական է, որ համարյա բոլոր պատմական հայկական բնակավայրերը Սահմանադրության մեջ նշվել են թուրքացված բառերով կամ էլ հարմարեցվել են թուրքական լեզվի հնչյունաբանությանը: Օրինակ, Խանցըը դարձել են Սարը-Քեշիշ, Քռասնին՝ Դաղդաղան, Վաղուհասը՝ Ղուզլու, Ննգին՝ Զամեաթ, Քյուրաբաղը՝ Ղուղուզչի և այլն: Փաստորեն, բնակավայրերն այնպես են անվանափոխել, որպեսզի Ղարաբաղին անծանոթ մարդու մոտ տպավորություն ստեղծվի, որ դրանք բոլորն էլ թուրքական ծագում ունեն: Ակամայից հիշում են Վ.Շյուգոյի՝ «Այստեղով թուրքն է անցել» իմաստում խոսքերը:

Սահմանադրության երրորդ և չորրորդ բաժինները նվիրված են կենտրոնական և տեղական իշխանության կազմակերպման, կառուցվածքի և լիազորությունների հարցերին: Նշված բաժինները փաստում են, որ Ինքնավար Լեռնային Ղարաբաղի իշխանությունը նրա ընդգրկած ամբողջ տարածության վրա պատկանում է Խորհուրդների համագումարին, Կենտրոնական գործադիր կոմիտեին և տեղական խորհուրդներին: Երկրամասում իշխանության բարձրագույն մարմին էր հանդիսանում Խորհուրդների համագումարը, որը հրավիրվում էր ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Խամագումարների միջև ընկած ժամանակաշրջանում իշխանությունը լիովին անցնում էր Խորհուրդների կենտրոնական գործադիր կոմիտեին: Այնուհետև նշվում էր, որ իշխանության այդ երկու մարմինների որոշումները կյանքի կոչելու համար Կենտգործկոմն ընտրում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ օժտելով Կենտգործկոմի նախագահության իրավունքներով: Կենտգործկոմի նախագահը միաժամանակ նաև ժողովրդական նախագահն էր:

Ինքնավար շրջանի կառավարության առաջին բաժինները ղեկավարելու համար Սահմանադրությամբ սահմանվել էին 10 ժողովրդական կոմիսարիատներ՝ արդարադատության, լուսավորության, աշխատանքի, ներքին գործերի և այլն: Յատկանշական է, որ ներքին գործերի, արդարադատության, լուսավորության, առողջապահության և երկ-

րագործության կոմիսարիատները նշանակվել են Ղարաբաղի Կենտգործկոմի կողմից և պատասխանատու էին նրա առաջ, իսկ զինվորական կոմիսարը, աշխատանքի, ֆինանսների և բանվորագյուղացիական տեսչության լիազորները նշանակվել են Խորհրդային Ադրբեյջանի համապատասխան կոմիսարիատների կամ լիազորների կողմից՝ Ղարաբաղի ժողովների համաձայնությամբ:

Սահմանադրությունից դուրս էր մնացել «Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղի» կազմավորելու մասին Ադրբենտգործկոմի 1923թ. հուլիսի 7-ի հոչակագրի այն դրույթը, որի համաձայն՝ Ինքնավար Մարզի «բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինությունը պահպանվում է ներկայիս տերերի ձեռքում»:

Սահմանադրության չորրորդ բաժնում նշվում է, որ տեղական իշխանության մարմիններ են համարվում բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների ներկայացուցիչների գյուղական և քաղաքային խորհուրդները և նրանցից ընտրված գործադիր կոմիտեները, գավառական ու գյուղական համագումարները և նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեներն ու նրանց նախագահությունները:

Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը «Բակինսկի ռաբոչի» թերթը տպագրեց իր 1924թ. նոյեմբերի 26-ի համարում, որտեղ այդ փաստաթուղթը կոչվում էր ոչ թե «Սահմանադրություն», այլ «Կանոնադրություն», իսկ «Ինքնավար շրջան» հասկացությունը փոխարինվել էր «Ինքնավար մարզ» հասկացությամբ: Զնայած դրան, մարզի ղեկավարներն իրենց որոշումներում և գրագրություններում օգտագործում էին «Սահմանադրություն» եզրույթը:

Համաձայն Սահմանադրության՝ խորհուրդների համագումարների և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոնական գործադիր կոմիտեի որոշումներն իրականացնելու համար, կենտգործկոմն ընտրում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ, որը կենտրոնացնում է իր մեջ շրջանի կառավարության գործը. ստանձնելով կենտգործկոմի նախագահության իրավունքները: Ինքնավար շրջանի կառավարության առաջին բաժինները վարելու համար սահմանվում են ժողովրդական կոմիսարիատներ, որոնցից մեկն էլ արդարադատության ժողովների տեղին էր: Վերջինս գործում էր ղեռւա 1924թ. սկզբից և նրա ժողովրդական կոմիսարը միաժամանակ, մարզային դատախազ էր հանդիսանում, իսկ նրա տեղակալը՝ մարզդատախազի օգնական:

Արդարադատության ժողովներում (Արդգորդկոմատ) օժտված էր բազմաթիվ լիազորություններով և գործառույթներով: Սասնավորապես, նրա վրա էր դրված մարզում օրինականության նկատմամբ հսկողությունը, մարզի տարածքում գործող բոլոր դատարանների, քննչական

մարմինների, նոտարիատի, դատական կատարածուների աշխատանքների կազմակերպումը, իրահանգավորումը և ընդհանուր հսկողությունը, ինչպես նաև հետաքննության, նախաքննության մարմինների և ուղղիչ տան աշխատանքի և փաստաբանական գործունեության նկատմամբ դատախազական հսկողությունը և այլն:

Կարևոր նշանակություն ունեցող հարցերը քննարկվել են Արդժողկոմատի կոլեգիայի նիստում, որի կազմի մեջ են մտել Արդժողկոմատի կոմիսարը (նախագահ), նրա տեղակալը և նարզատարանի նախագահը: Արդժողկոմատի դատախազության և վարչության բաժինների վարիչներն իրենց բաժինների վերաբերյալ հարցերով կոլեգիայի նիստին կարող էին մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով: Արդժողկոմատի կոմիսարն իրավունք ուներ միանձնյա որոշում կայացնելու՝ այդ մասին իրազեկ պահելով կոլեգիայի անդամներին, որոնք, որոշմանը չհամաձայնվելու դեպքում, կարող էին այն գանգատարկել Մարզժողկոմների առանց որոշման կատարումը կասեցնելու: Արդարադատության ժողկոմատի, դատարանի և դատախազության աշխատակիցները որպես փոխադրամիջոց օգտագործել են ձիեր:

1924թ. տվյալներով Արդժողկոմատի հաստիքացուցակը բաղկացած էր 47 աշխատակիցներից, որոնցից 9-ը՝ ժողկոմատի ապարատի, 16-ը՝ նարզային դատարանի, 2-ը՝ նոտարական բաժնի և 20-ը՝ շրջդատարանի աշխատակիցները էին:

Մարզային դատարանը կազմված էր նախագահից, նախագահի տեղակալից, դատարանի 4 անդամներից, ավագ քննիչից, դատական նիստերի քարտուղարներից, ավագ և կրտսեր դատական կատարածուներից և տեխնիկական աշխատողներից: Ժողդատարանների ժողովողական քննիչների և մարզդատարանի ավագ քննիչի հաստիքնը՝ 1931թ. վերջին տրվեցին մարզդատախազությանը: Վերջինս ստեղծվել է 1924թ. նոյեմբերի 26-ին, որի Կանոնադրությունը 1929թ. հաստատվել է Մարզգործկոմի կողմից:

Ուղղիչ տունը Շուշիի բանտն էր հանդիսանում, որտեղ 1924թ. դեկտեմբերի տվյալներով կալանավորների թիվը հասնում էր 200-ի, որոնց 90 տոկոսը մահմեդականներ էին:

Պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ գաղութատեր երկրները, չկարողանալով պահպանել տիրապետությունը գաղութների նկատմամբ և, իրենց գայլային դիմակը ծածկելու նպատակով, գաղութների ժողովուրդների համար սահմանադրություններ են մշակել և նվիրել նրանց: Նման Սահմանադրությունը կոչվում է «շնորհված» Սահմանադրություն: Սակայն խորհրդային Սիության արշալուսին Աղրբեջանը մի քայլ առաջ գնաց գաղութատեր երկրներից: Նա 1929թ. վերաց-

րեց իր իսկ կողմից Արցախին «շնորհված» Սահմանադրությունը՝ ինքնավար մարզի մասին նոր Կանոնադրության նախագիծ մշակելու պատրվակով¹⁵ և բացահայտ ու անսրող գաղութականացման քաղաքականություն սկսեց հայ ժողովրդի ղարաբաղյան հատվածի դեմ: Ինքնավար մարզի ժողովրդական կոմիսարների խորհուրդը նույնպես գործեց մինչև 1929թ. և դադարեց իր գոյությունը՝ լիազորությունները Մարզգործկոմին փոխանցելու կապակցությամբ:¹⁶

Դամաձայն ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների դատարանակազմության և քրեական օրենսդրության հիմունքների՝ ինքնավար հանրապետություններում գործում էին նաև գլխավոր կամ բարձրագույն դատարաններ:

Դաշվի առնելով, որ մարզի դատարաններից դժգոհ քաղաքացիներն իրենց բողոքները երբեմն ուղղում էին Ադր. ԽՍՀ Գերագույն դատարանին, մարզի գործադիր իշխանության ղեկավար Ա. Ղարաբյանը գլխավոր դատարան ունենալու հարցով 1925թ. դիմել է Ադրկոմկուսի ԿԿ քարտուղար Ս. Կիրովին, վկայակոչելով, որ, չնայած, Ղարաբյանը ինքնավար մարզ է հանդիսանում, բայց իր Սահմանադրության բովանդակությամբ ոչնչով չի գիշում Նախիջևանի Երկրամասին¹⁷:

Դարցին տրվում է դրական լուծում և Ադրկոմկուսի Կենտկոմի 15.06.1925թ. որոշմամբ մարզում նույն տարվա հոկտեմբերի 1-ից ստեղծվում է գլխավոր դատարան¹⁸, որը 2 տարի աշխատեց առանց կանոնադրության և լուժարվեց 1927թ. սեպտեմբերի 14-ին՝ իր գիշելով կարևոր գործերով դատարանին: Գլխավոր դատարանն իր քաղաքացիական և քրեական կոլեգիաներով մարզդատարանի նկատմամբ վճռաբեկ ատյանի դեր էր կատարում: Կարևոր գործերով դատարանին ընդդատյա էին ինչպես վարչակարգի, անձի կյանքի, առողջության, ազատության, արժանապատվության դեմ ուղղված, այնպես էլ տնտեսական հանցագործությունների վերաբերյալ գործերը:

Կարևոր գործերով դատարանը գործեց մինչև 1930թ. և փոխարինվեց Ադր. ԽՍՀ Գերագույն դատարանի լիազորով: Նույն թվականին վերացվեց նաև Մարզգործկոմի արդարադատության ժողկոմատը, որի դատախազական բաժինն անցավ մարզային դատախազությանը, իսկ դատական և նոտարական բաժինների վարչությունը՝ Ադր. ԽՍՀ Գերագույն դատարանի բաժանմունքի իրավասությանը: Այդ տարիներին ինքնավար մարզի դատական համակարգի բոլոր դատավորները, ժողովրդական քննիչները, պետական նոտարները և մյուս պատասխանատու աշխատողները նշանակվել և ազատվել են աշխատանքից արդարադատության ժողովրդական կոմիսարի հրամանով՝ մարզի ժո-

դովորական կոմիսարների խորհրդի որոշման հիման վրա:

Գլխավոր դատարանը ղեկավարել է մարզի բոլոր դատարանների դատական քաղաքականությունն ու պրակտիկան: Դատարանն առաջին ատյանի կարգով 1 դատավորի և 2 ժողատենակալների կազմով քննել է առավել կարևոր քրեական գործերը, իսկ երկրորդ ատյանի կարգով՝ մարզդատարանի քրեական և քաղաքացիական գործերով կոլեգիայի որոշումների դեմ բերված բողոքները՝ կոլեգիայի նախագահի և 2 անդամների կազմով:

Գլխավոր դատարանն իր գործումնեությունն իրականացրել է նաև պլենումի և նախագահության նիստերով: Նա իրավունք ուներ ընդիա-նուր հսկողության կարգով ստուգել մարզդատարանի գործումնեությու-նը և արդյունքները քննարկել նախագահությունում:

Յաշվի առնելով, որ վերադաս դատական ատյան ունենալը մարզի բյուջեով նախատեսված չէր, գլխավոր դատարանի նախագահը, միա-ժամանակ, կատարել է մարզդատարանի նախագահի գործառությու-նը: Եվ այնքան սուր են եղել մարզի դատարաններին հատկացված դրամական միջոցները, որ 1925-1926թթ. ոչ մի միջոց բաց չի բողնվել շրջանային դատարանների ապարատը պահելու համար:

Գլխավոր դատարանի պլենումին մարզդատախազի կամ նրա ավագ օգնականի մասնակցությունը պարտադիր էր: Գլխավոր դատա-րանն օժտված էր մարզի տարածքում ժողդատավորների, ժողդնիչնե-րի տեղափոխման, նրանց գործումնեության ստուգման ու արդյունքնե-րի քննարկման և այլ իրավունքներով¹⁹:

Գլխավոր դատարանը լուծարվելուց հետո մարզդատարանը հան-դես էր օալիս որպես «Ադր.ԽՍՀ Գերագույն դատարանի բաժանմունք» կարգավիճակով և քաղկացած էր նախագահից ու դատարանի 3 ան-դամներից: Դատարանն օժտված էր առաջին և վճռաբեկ ատյանների լիազորություններով և ուներ քրեական ու քաղաքացիական գործերով վճռաբեկ բաժիններ: Մարզդատարանի պլենումը դատական համա-կարգի բարձրագույն ատյանն է համարել: Պլենումն իրավասու էր քն-նելու այն դատական ակտերի դեմ բերված բողոքները, որոնք կայաց-վել են մարզդատարանի կողմից առաջին ատյանի և վճռաբեկության կարգով: Այդ որոշումների դեմ բողոք բերելու իրավունք ուներ կոլեգի-այի այն անդամը, ով համաձայն չի եղել ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմանը: Մարտունու շրջանի Թաղավարով գյուղբնակիչ Գ. Արգանգույշանի նկատմամբ քրեական գործով մարզդատարանի քրեական կոլեգիան մերժել էր ամբաստանյալի վճռաբեկ բողոքը: Կո-լեգիայի անդամ Ներսիսյանը, համաձայն չի եղելով որոշման հետ, այն բողոքարկել է մարզդատարանի պլենումին: Վերջինիս որոշմամբ Ներ-

սիսյանի բողոքը բավարարվել է:

Մարզդատարամին առաջին ատյանի կարգով ընդդատյա են եղել առանձնապես Վտանգավոր և այլ պետական հանցագործությունների վերաբերյալ գործերը:

Մարզում փաստաբանների կոլեգիան ստեղծվել է 1924 թվականին, որի անդամ դաշնալու համար թեկնածուն դիմել է արդարադատության ժողկոմատին, իսկ 1925 թվականից՝ գլխավոր դատարանի նախագահությանը:

1928թ. տվյալներով, մարզի դատական մարմիններում 34 աշխատակիցներից միայն 3-ն են կին եռել, այն է՝ տեխնիկական աշխատողները:

Շրջժողդատարաններում քննվող քրեական գործերի մի գգալի մասով իրավախախտները հասարակական մեծ Վտանգավորություն չեն ներկայացնում: Դրանից ելելով, 1928թ. մարզում ստեղծվեցին գյուղական դատարաններ, որոնց քննարկմանն էին ուղարկվում դատախանակի համաձայնությամբ ժողովների կողմից քննության հետևածովով կարծված կամ քրեական գործի հարուցումը մերժված այն նյութերը, որոնցում անձի հանցավոր արարքն ապացուցված էր, սակայն քրեական պատասխանատվության ենթարկելը նպատակահարմար չէր համարվում: Գյուղական դատարաններին վերապահված էր նաև քննելու անձի պատվի, արժանապատվության իրավունքի և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ հարցերով տվյալ գյուղի բնակչների դիմումները: Նշված կարգի նյութերը և դիմումները քննարկելիս, գյուղական դատարանները դեկավարվել են գործարար շրջանառության սովորություններով, ադաբներով, որոնք չեն խախտում գյուղացիների շահերը և չեն հակասում գործող օրենքներին: Գյուղական դատարանները հիմնականում ձգտում էին հաշտեցնել կողմերին:

Գյուղական դատարանները գործեցին մոտ 30 տարի, որոնց փոխարեն գյուղերում, ավաններում, կոլտնտեսություններում, հիմնարկ-ձեռնարկություններում և կազմակերպություններում ստեղծվեցին ընկերական դատարաններ՝ 3-7 հոգու կազմով, որոնք ընտրվում էին տվյալ կոլեկտիվի կամ բնակավայրի ընդհանուր ժողովներում:

Դատարանը խորհրդային իշխանության տարիներին գենք էր, նրա հեղափոխական կամքի և օրինականության կիրառողը և այդ կամքն ու օրինականությունն իրականացնողը: Սոցիալիզմի հաղթանակը պահանջում էր մշտապես, անշեղորեն և լենինյան համառությամբ կյանքում իրագործել կոմկուսի գլխավոր գիծը՝ ջախջախել դասակարգային թշնամու դիմադրությունը, զնշել սոցիալիզմի ճանապարհից որևէ տատանում, աջ ու ձախ հարվածել հեղափոխության թշնամիներին:

Չկարողանալ այդ կատարել՝ նշանակում է ընդունակ չինել իրագործել կուսակցության գլխավոր գիծը կյանքում: Մարտունու շրջատարանը, քննելով բատրակի հայցն ընդունեմ կուլակի՝ 205 ռուբլի որամական պահանջի մասին, այն բավարարել է մասնակիորեն՝ 45 ռուբլի գումարի չափով: Կուսակցության մարզային կոմիտեի և Մարզգործկոմի պաշտոնական մարմին «Խորհրդային Դարաբաղ» թերթը, վրդովված լինելով նման վճռից, դատախազությունից պահանջել է լուծել այդ դասակարգային կույր դատավորի հարցը: Մեկ այլ օրինակ. Մարտունու շրջանի Աշանի գյուղբնակիչ Սևի Իշխանյանը, բատրակ Սուրեն Միրզյանին ծեծելու համար շրջատարանի դատավճռով դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով: Դատախազությունը համարել է, որ դասակարգային սուր պայքարի ժամանակ կուլակի հետ մեղմ վերաբերվել չի կարելի, ուստի բողոքարկվել է դատավճռը, որպեսզի արարքը որակվի որպես «տեռորիստական ակտ»²⁰:

Ի կատարումն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 26.06.1932թ. ընդունած «Նեղափոխական օրինականության մասին» հայտնի որոշման՝ մարզի դեկանար մարմինների 25.07.1932թ. որոշմանը նախատեսվեցին և իրականացվեցին մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, մարզի տասնամյակն պատշաճ նշելու կապակցությամբ ստեղծվեց հանձնաժողով, որի վրա դրվեց նաև հեղափոխական օրինականության մասին վերադաս մարմինների որոշումների կատարման ստուգումը, այդ բնագավառում թույլ տրված բոլոր սխալների երևան հանճամբ, ընդարձակվեց շրջատախազության ցանցը՝ Դիզակի, Զրաբերդի և Շուշիի շրջաններում սահմանվեցին շրջատախազների պաշտոններ: Ավելացվեց իրավաբանական դասընթացների գործուղվող դատական և դատախազության աշխատակիցների թիվը, միջոցներ ձեռնարկվեցին դատարանի և դատախազության աշխատակիցների նյութական և կենցաղային պայմանները բարեկավելու ուղղությամբ²¹: Մարզում հեղափոխական օրինականության կատարման դրվագի ստուգման արդյունքները քննարկվեցին մարզային կուսակցական և պետական մարմիններում: Դատուկ քննարկման առարկա դարձավ Մարտակերտի շրջանի դատաքնչական ապարատի աշխատանքը, որը բամբակահավաքի գործարշավը տապալող անձանց նկատմամբ «իհավկասրտություն» էր ցուցաբերել և մեղմ պատիժներ սահմանել: Կուսակցության Մարզկոմի բյուրոյի 25.12.1932թ. որոշմամբ Մարտակերտի շրջատարանի նախագահ Ա. Քանայշանը հեռացվեց աշխատանքից, վտարվեց կուսակցությունից և ենթարկվեց քրեական պատասխանատվության: Նույն բախտին արժանացավ շրջատարա-

մի քննիչ Մ.Չաքարյանը: Վերջինիս մեղքը կայանում էր նրանում, որ բամբակագործների համար նախատեսված գննան կետից իր ընտանիքի համար 5 փութ ցորեն էր գնել²²: Նույն որոշմամբ Մարզկոմի բյուրոն հանձնարարեց վերստուգիչ հանձնաժողովին ստուգել Մարտակերտի շրջատախազության աշխատանքները, առանձնապես բամբակահավաքի գործարշավի գծով նրա գործունեությունը և խախտումներ գտնելու դեպքում շրջատախազության նկատմամբ և նմանօրինակ միջոցներ ձեռնարկել:

ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրության մեջ արձանագրված էր, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը մտնում է Ադր.ԽՍՀ կազմի մեջ, և որ մարզային դատարանի դատավորն ընտրվում է Մարզխորհրդի կողմից 5 տարի ժամկետով, իսկ շրջանների ժողովավորները՝ շրջանի քաղաքացիների կողմից՝ ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, 3 տարի ժամկետով: Սահմանադրության մեջ, միաժամանակ, նշված էր, որ ինքնավար մարզում դատավարությունը տարվում է ինքնավար մարզի լեզվով²³:

ԽՍՀՄ Սահմանադրության այդ դրույթները լրիվությամբ արտացոլվեցին Ադր.ԽՍՀ 1937թ. Սահմանադրության մեջ: Սասնավորապես, Սահմանադրության 117-րդ հոդվածի համաձայն՝ դատավարությունը Ադր.ԽՍՀ-ում տարվում էր ադրբեջաններեն լեզվով, իսկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում՝ հայերեն լեզվով, իսկ այն շրջաններում, որտեղ ազգաբնակչության մեծամասնություն են կազմում հայերը, կամ ռուսները, կամ թալիշները՝ համապատասխանորեն հայերեն կամ ռուսերեն, կամ էլ թալիշերեն լեզվով, այդ լեզուներին չտիրապետող անձանց համար ապահովելով՝ լիակատար ծանրացումը գործի նյութերին թարգմանչի միջոցով, ինչպես նաև մայրենի լեզվով դատարանում հանդես գալու իրավունքը²⁴:

Խորհրդային Ադրբեջանի 1937թ. Սահմանադրության ընդունումից հետո Ադր.ԽՍՀ Գերագույն դատարանի ինքնավար Լեռնային Ղարաբաղի դատարանի բաժանմունքը վերանվանվեց ԼՂԻՄ մարզային դատարանի, որն առաջին և վճռաբեկ ատյաններով իր գործունեությունն անփոփոխ շարունակեց շուրջ 55 տարի:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարզի դատավորները, դատական ծառայողները, իրավապահ մարմինների աշխատողներն իրենց համեստ ներդրումն ունեցան Հաղթանակի կերտման գործում և ողջ վերադարձները շարունակեցին իրենց ծառայությունն իրավապահ մարմիններում:

Մինչև 1958թ. ներառյալ՝ շրջանային ժողովատավորներն ընտրվում էին երեք տարի ժամկետով։ Արդարադատության իրականացման տեսակետից նման կարծ ժամանակահատվածը չի կարելի արդյունավետ համարել։ Ուստի ԽՍՀ Միության միութենական և ինքնավար հանրապետությունների 1958թ. «Դատարանակազմության նասին» օրենսդրության հիմունքները փոփոխություն մտցրին շրջանային, քաղաքային ժողովատավորների լիազորությունների ժամկետի վերաբերյալ և այն սահմանվեց հինգ տարի ժամկետով։ Յինունքների ուժով ժողովատավորներն ընտրվում էին տվյալ տարածքի քաղաքացիների կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ, ժողատենակալները՝ տվյալ շրջանի քաղաքի աշխատանքի վայրի կամ բնակավայրի ընդհանուր ժողովներում, իսկ զինծառայողները՝ գորամասերում՝ ըստ քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով։

Մարզի շրջդատարաններում և մարզային դատարանի առաջին ատյանում բոլոր քրեական և քաղաքացիական գործերը քննվել են կողեգիալ՝ մեկ դատավորի և երկու ատենակալների կազմով։

Ստեփանակերտի շրջանը 1978թ. վերանվանվեց Ասկերանի շրջանի՝ Ասկերան շրջկենտրոնով։ Նորաստեղծ շրջկենտրոնում ստեղծվեց Ասկերանի շրջանային դատարան, իսկ Ստեփանակերտ քաղաքը մնաց որպես մարզկենտրոն, և նրա դատարանը վերանվանվեց Ստեփանակերտի քաղաքային դատարան՝ երկու դատավորի կազմով։ Փաստուեն, մարզի շրջանային հինգ, քաղաքային մեկ ժողովատարաններում և մարզային դատարանում աշխատում էին տասնեկ դատավորներ, որոնցից չորսը՝ մարզային դատարանում (2016թ. հունվարի 1-ի տվյալներով ԼՂՀ դատավորների քանակը հասնում է 26-ի)։

Դամաձայն «Դատարանակազմության նասին» և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի նասին» Աղյոթեջանական ԽՍՀ օրենքների՝ ժողովրդական պատգամավորների ինքնավար մարզի խորհրդի նստաշրջանի իրավասությանը վերապահված բացահիկ հարցերից մեկն էլ ինքնավար մարզի դատարանի ընտրությունը և նրա կազմի փոփոխումն, ինքնավար մարզի դատարանի աշխատանքի մասին հաշվետվության լսումն է։

Խորհրդային իշխանության տարիներին ինքնավար մարզի մարզային դատարանը վերջին անգամ կազմավորվել է մարզային խորհրդի 1987թ. հուլիսի 8-ի նստաշրջանում, որի որոշմանը մարզային դատարանի նախագահ ընտրվեց Նիկոլայ Դադյանը, նախագահի տեղակալ՝ Սուրեն Ալեքսանյանը, դատարանի անդամներ՝ Զոյա Օհանյանը և Շահին Կուլիկը ու 50 ժողովրդական ատենակալներ²⁵։ Յետագայում մարզային դատարանի անդամների թիվն ավելացավ ևս մեկ հաստի-

քով և ԼՂԻՄ-ում ստեղծված հատուկ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) 1989թ. սեպտեմբերի 7-ի որոշմանը Գրետա Վրզումանյանը նշանակվեց մարզային դատարանի նախամարտի: Այդ կազմով մարզդատարանը գործեց մինչև Խորհրդային միության փլուզումը:

Բնական է, որ մարզի դատարանները Խորհրդային իշխանության տարիներին ղեկավարվել են ԽՍՀՄ և Խորհրդային Ադրբեջանի օրենսդրությամբ և դատական ակտերը կայացրել են հանուն Խորհրդային Ադրբեջանի Հանրապետության:

Դամաձայն Խորհրդային Ադրբեջանի քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի՝ Լեռնային Ղարաբաղի հնքնավար մարզի մարզային դատարանն օրենքով սահմանված կարգով հսկողություն էր իրականացնում ինքնավար մարզի շրջանային (քաղաքային) ժողովադատարանների դատական գործունեության նկատմամբ²⁶:

Դամաձայն Ադր.ԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածի՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում դատավարությունը տարվում է հնքնավար մարզի լեզվով կամ տվյալ տեղանքի բնակչության մեծամասնության լեզվով: Դանում ճշմարտության պետք է ասել, որ Ադր.ԽՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը այդ հարցին ավելի ծիշտ էր մոտեցել, որի 8-րդ հոդվածն ուղղակի նշում էր, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում դատավարությունը տարվում է հայերեն լեզվով:

Մարզային դատարանի կարգավիճակը հավասարեցված էր Նախօնանի ինքնավար հանրապետության գերագույն դատարանի և Բաքվի քաղաքային դատարանի կարգավիճակին: Այդ երեք դատարաններին ընդդատյա էին այն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, որոնք սահմանված էին Ադր.ԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածով: Մարզային դատարանը, որպես առաջին ատյանի դատարան, իրավունք ուներ իր վարութք ընդունելու մարզի ժողովադատարաններին ընդդատյա ամեն մի գործ: Մարզային շրջանային (քաղաքային) դատարանների օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները և վճիռները վճռաբեկության կարգով գանձատարկել ու բողոքարկել են մարզային դատարանի դատական կոլեգիային, որը վճռաբեկության կարգով ստուգել է դրանց օրինականությունը և հիմնավորվածությունը:

Մարզային դատարանի առաջին ատյանի կարգով կայացված դատավճիռները վճռաբեկության կարգով բողոքարկել են Ադր.ԽՍՀ գերագույն դատարանի համապատասխան դատական կոլեգիային:

Ինքնավար մարզի դատախազը և մարզային դատարանի նախագահը իրավունք ունեին մարզային դատարանի դատական կոլեգիային:

դոքարկելու շրջ/քաղ/ժողոատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները, ինչպես նաև մարզային դատարանի դատական կոլեգիայի քրեական գործերով որոշումները: Խսկ մարզային դատարանի դատավճիռները և որոշումները, եթե դրանք Ադր.ԽՍՀ Գերագույն դատարանում վճռաբեկության կարգով քննարկման առարկա չեն եղել, ինչպես նաև մարզային դատարանի նախագահության որոշումները կարող էին բողոքարկվել Ադր.ԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիային:

Մարզի դատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները նոր երևան եկած հանգամանքների հետևանքով կարող էին բողոքարկվել մարզային դատարանի նախագահի կողմից:

Քաղաքացիական դատավարության բոլոր փուլերում դատախազը պարտավոր է եղել ժամանակին ծերնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ վերացնելու օրենքի ամեն մի խախտում, ում կողմից էլ կատարված լիներ այն: Դատախազն իրավունք ուներ հայց հարուցելու կամ գործի մեջ մտնելու դատավարության ամեն մի փուլում, եթե այդ էր պահանջում պետական կամ հասարակական շահերի կամ քաղաքացիների իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությունը:

Մարզի շրջ(քաղ)դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռները վճռաբեկության կարգով կարող էին գանգատարկվել կամ բողոքարկվել մարզային դատարանի դատական կոլեգիային, իսկ մարզային դատարանի որոշումները՝ Ադր.ԽՍՀ Գերագույն դատարանին:

Մարզային դատարանի նախագահությունը մարզդատարանի նախագահի և մարզի դատախազի հսկողության կարգով բերված բողոքների հիման վրա վերանայել է շրջ(քաղ) դատարանների վճիռները և մարզային դատարանի կողմից վճռաբեկության կարգով կայացված քաղաքացիական գործերով որոշումները:

Մարզային դատարանի նախագահության որոշումները վերանայվել են Ադր.ԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի կողմից:

Քրեական և քաղաքացիական գործերով «բողոքները» դատախազական հսկողություն իրականացնողների և վերադաս դատական ատյանների նախագահների փաստաթուղթ են հանդիսացել, իսկ «գանգատները»՝ դատավարության մասնակիցների և կողմների:

Ղարաբաղյան զարթոնքի տարիներին մարզում հանցավորությունը համարյա անպատճելի բնույթ էր կրում: Նրա հիմքն էին կազմում ազգամիջյան հողի վրա կատարված հանցագործությունները՝ սպանությունները, մարդկանց առևանգումները, հրետակությունները և այլն,

իսկ հրաձգությունները և պայթեցումները սովորական երևոյթ էին դարձել: Հանցագործությունների բացահայտումները ոչ թե անբավարար, այլ աղետալի բնույթ էին կրում:

ԼՂ ինքնավար մարզում և նրա հարակից շրջաններում ազգամիջյան լարվածությունը վերացնելու նպատակով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 12-ի հրամանագրով մարզում ժամանակավորապես սահմանվեց կառավարման հատուկ ձև՝ հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ: Այն ուղղակիորեն ենթակա էր ԽՍՀՄ կառավարությանը և պահպանվեց մինչև 1989թ. նոյեմբերի 28-ը: Համաձայն հրամանագրի՝ մարզի տարածքում դատախազության և դատարանների գործունեությունն իրականացվում էր գործող օրենսդրությանը և կարգին համապատասխան, որը սահմանում էին համապատասխանաբար ԽՍՀՄ գլխավոր դատախազը, ԽՍՀՄ արդարադատության նախարարությունը և ԽՍՀՄ Գերագույն դատարանը²⁷: Նշված հրամանագրի ուժով ազգամիջյան հանցագործությունները քննելու համար խորհրդային Միության տարբեր վայրերից ինքնավար մարզ գործուղվեցին 86 քննիչներ, այդ թվում՝ ԽՍՀՄ ՆԳՍ գլխավոր քննչական վարչության 9 աշխատակիցներ:

Վերջիններիս 1989թ. ընթացքում վարույթում եղած 126 քրեական գործերից միայն երկուսն են ուղարկվել դատարան: Ահա այդպիսին էին ԽՍՀՄ ՆԳՍ օպերատիվ-քննչական խմբի աշխատանքի իրական արդյունքները²⁸: Փաստորեն, ադրբեջանցիների կողմից կատարված հանցագործությունների հիմնական մասը մնաց չբացահայտված, իսկ հայերի կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը դատաքննության առարկա էին դառնում հիմնականում Ադրբեջանի Գերագույն դատարանի կամ էլ Ուստաստանի դաշնության տարբեր մարզերի դատարանների կողմից: Այսպես, Դոնեցկի մարզի մարզային դատարանի 16.09.1989թ. դատավճռով դատապարտված 4 հայորդիների մեղքը կայանում էր նրանում, որ իբր նրանք Մարտունի քաղաքում զանգվածային անկարգություններ են կազմակերպել հայերի և ադրբեջանցիների միջև: Ադրբեջանի Գերագույն դատարանի 19.04.1991թ. դատավճռով 10 դարաբաղդի հայորդիներ մտացածին մեղադրանքով դատապարտվեցին տարբեր ժամկետների ազատազրկման:

Բայց դա չի նշանակում, որ մարզի իրավապահ մարմինները ժողովրդի արդարացի պահանջը բավարարելու համար պասիվ դիրք էին բռնել: Դեռևս 1989թ., մարզի դատավորների ընդհանուր ժողովը

հետևյալ բովանդակությամբ հեռագիր էր ուղարկել ԽՍՀՄ ղեկավար մարմիններին. «Ազգային պատկանելի հույսը առաջին հայերին Աղրբեջանից վտարման շարունակվող քաղաքականությունը՝ աննախադեպ ֆիզիկական ոչնչացումը, զանգվածային ջարդերն անդրադարձել են մարզի դատական մարմինների աշխատանքին, ստեղծված իրավիճակում այլևս հնարավոր չէ հետագայում արդարադատություն իրականացնել հանուն մի հանրապետության, որի հակահայկական քաղաքականությունը բացարձակորեն հասցել է պետական աստիճանի: Խնդրում ենք մարզի դատական ատյաններին անհապաղ հանել Աղրբեջանի արդարադատության մարմինների կազմից»:

Ավաղ, Կենտրոնը խուլ էր արցախահայության պահանջների նկատմամբ:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 28.11.89թ. հրամանագրով ինքնավար մարզում իրավահավասար հիմունքներով պետք է ստեղծվեր հանրապետական կազմկոմիտե և վերականգնվեին Սարգսուրիրդի և նրա Գործկոմի աշխատանքները²⁹: Սակայն, Խորհրդային Աղրբեջանը ոչ թե կատարեց կենտրոնի ցուցումը, այլ մարզում և նրա հարակից շրջաններում նտցրեց արտակարգ դրություն և պարետային ժամ, իսկ նրա ստեղծած Կազմկոմիտեն՝ Վ. Պոլյանիչկոյի գլխավորությամբ, մի ռազմակոմունիստական դիկտատուրա էր, որը աղրբեջանական ուստիկանության, արտակարգ շրջանի պարետ Սաֆոնովի ու ներքին գործերի ուժերի միջոցով մշակեց և իրականացրեց Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների հայ բնակչության մի ստվար հատվածի տեղահանումը: Իսկ երբ Աղրբեջանը 1991թ. օգոստոսի 29-ին հայտարարեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին, Լեռնային Ղարաբաղին Խորհրդային Աղրբեջանին հրաժեշտ տալուց բացի այլ բան չէր մնում:

**ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՊԱՏԺԻԶ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-1994թթ.)**

Ով պատմություն ունի՝
չի կարող ետ չնայել:
Պ.Սևակ

Խորհրդային Միության փլուզման նախօրյակին, նրա բարձրագույն պետական մարմինը՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը, 1991թ. ապրիլի 3-ին ընդունեց օրենք՝ ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի մասին։ Ընդ որում, դուրս եկող հանրապետության կազմում գտնվող ինքնավար կազմավորմանն իրավունք էր վերապահվում ինքնուրույն որոշելու իր ճակատագիրը՝ ԽՍՀՄ կազմում մնալ, թե գնալ դուրս եկող հանրապետության հետևից։ Օգոստոսյան պետական հեղաշրջումն (պուտչ) ազդարարեց Խորհրդային Միության հոգևարքը։ Փլուզվում էր աշխարհի երբեմնի հզոր պետությունը։ Օգոստոսի 29-ին Ադրբեյջանի Գերագույն Խորհուրդը, խախտելով այն ժամանակ իրավագործություն ունեցող օրենքը՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու կարգի մասին, արտահերթ նստաշրջանում ընդունեց Հռչակագիր՝ ադրբեյջանական պետության անկախության վերականգնման մասին՝ մերժելով խորհրդային քաղաքարավական ժառանգությունը և իրավարկելով լինել Ադր.ԽՍՀ իրավահաջորդը։ Արցախի հայությունը զգաց պահի լրջությունը և դիմեց միակ ծիշտ քայլին։ Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ, 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց Հռչակագիր՝ ինքնավար մարզի և հարակից Շահումյանի շրջանային սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին¹։

Համաձայն Հռչակագրի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ԼՂՀ Սահմանադրության և օրենքների ընդունումը՝ գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև Աերկայումս գործող այն մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին»։

Արցախի դեմ չհայտարարված պատերազմում ստանալով արժանի

հակահարված՝ Աղրբեջանի Գերագույն խորհուրդը 1991թ. նոյեմբերի 23-ին ընդունեց օրենք՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը լուծարելու, «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ կազմավորելու նասին» Աղրկենտգործկոմի 1923թ. հուլիսի 7-ի դեկրետը և «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» 1981թ. հունիսի 16-ի Ադր.ԽՍՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Այդ օրենքով Ստեփանակերտ, Մարտակերտ և Մարտունի քաղաքները վերանվանվեցին համապատասխանաբար Խանքենդի, Աղդարա և Խոջավանդ թրահունչ անուններով։ Նախկին ինքնավար մարզի տարածքը մտցվեց Աղդարայի, Խոջավանդի, Խոջալուի և Շուշիի շրջանների մեջ²։

Մեր աշխատանքի շրջանակներից դուրս է այդ հրեշավոր օրենքին իրավական գնահատական տալը, միայն թուլցիկ նշենք, որ համաձայն Ադր.ԽՍՀ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին» 1981թ. օրենքի 3-րդ հոդվածի՝ «ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սովետի համաձայնության»³։

Ինքնավար մարզը լուծարելու մասին Աղրբեջանի կողմից ընդունված օրենքն ընդունվել 3 օրվա կյանք ունեցավ։ Այն ճանաչվեց հակասահմանադրական և վերացվեց ԽՍՀՄ սահմանադրական հսկողության կոմիտեի 1991թ. նոյեմբերի 27-ի որոշմանը⁴։

Ուստատանի, Ուկրաինայի և Բելառուսիայի միջև 1991թ. դեկտեմբերի 8-ին կնքված Բելովեժյան համաձայնագիրն ազդարարեց Խորհրդային Միության վախճանը։ Արցախի իշխանությունները, մի կողմից քաջ ինանալով, որ ազգերի, ժողովուրդների փաստացի անկախության ճանապարհ հիմնականում անցնում է ազգային-ազատագրական գինված պայքարի միջոցով, մյուս կողմից՝ Աղրբեջանի կազմից դուրս գալու քայլեր ձեռնարկեցին՝ խստորեն դեկավարվելով ՄԱԿ-ի Կանոնադրության և միջազգային իրավունքի նորմերով ու հանրապետության տարածքում 1991 թվականի դեկտեմբերի 10-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով⁵։

1991թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցան հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները, իսկ 1992թ. հունվարի 6-ին հրավիրվեց Արցախի նորընտիր Գերագույն խորհրդի /այսուհետ/՝ նաև Խորհրդարան/ առաջին նստաշրջանը, որն էլ ընդունեց սահմանադրական օրենք՝ «Լեռնային Ղարաբաղի Ղանրապետության պետական անկախության հիմունքների մասին»։ Օրենքը, ամրագրելով իշխանու-

թյան երեք ճյուղերի տարանջատման սկզբունքը, միևնույն ժամանակ արձանագրեց, որ ԼՂՀ իրավասությունների մեջ է մտնում նաև «Գերագույն դատարանի և դատական իշխանության մարմինների համակարգերի, հանրապետության արդարադատության և մյուս մարմինների կազմակերպումը, կազմի հաստատումը, դրանց իրավասության և աշխատակարգի սահմանումը»:

Խորհրդարանի նստաշրջանում ընդունված որոշման համաձայն՝ «ԼՂՀ տարածքում այլ պետությունների գործող օրենսդրական ակտերը, որոնք չեն հակասում ԼՂՀ անկախության հռչակագրին, ժամանակավոր գործում են որպես ԼՂՀ օրենսդրական ակտեր»:

Խորընտիր խորհրդարանի մեկ այլ որոշմամբ Լեռնային Ղարաբաղի մարզային դատարանը վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Գերագույն դատարան, իսկ մարզային դատախազությունը՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության դատախազություն։ Նույն որոշմամբ հանձնարարվեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Գերագույն դատարանի և դատախազության անձնակազմին՝ շարունակել իրենց գործունեությունը, մինչև Գերագույն դատարանի և դատախազության նոր կառուցվածքների ձևավորումը։

Խորհրդարանի որոշմամբ ձևավորվեց նաև Արցախի առաջին կառավարությունը (Նախարարների խորհուրդ), որի անդամներից մեկն էլ արդարադատության պետական վաշչության պետն էր հանդիսանում։

Խորհրդարանի կողմից 1992թ. հունվարի 9-ին ընդունվեց օրենք՝ «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Գերագույն խորհրդի մասին»⁷: Օրենքը, ամրագրելով, որ ԼՂՀ պետական իշխանության բարձրագույն մարմինը ԼՂՀ Գերագույն խորհուրդն է հանդիսանում, միաժամանակ բազմաթիվ ելակետային դրույթներ էր պարունակում իրավապահ մարմինների, նաև ավորապես դատական իշխանության հիմնահարցերի վերաբերյալ։ Յանաձայն օրենքի, ԼՂՀ Խորհրդարանն ընտրում է ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահին, նրա տեղակալներին և Գերագույն դատարանի անդամներին, գլխավոր արքիտրին, նշանակում գլխավոր դատախազին, իսկ Խորհրդարանի նախագահությունը հաստատում էր Գերագույն դատարանի նախագահության կազմը, դատախազության կոլեգիան, պետական արքիտրաֆի կոլեգիան, ընտրում շրջանային և քաղաքային ժողովողական դատարանների ժողովողական դատավորներին, նրանց թվից հաստատում այդ դատարանների նախագահներին, օրենքով սահմանված կարգով լուծում նշված պաշտոնատար անձանց հետկանչի կամ ազատման հարցերը։ Դատավորների և

դատախազության կոլեգիայի անդամների դասային աստիճաններ շնորհելու հարցը նույնպես լուծում էր Խորհրդարանի նախագահությունը:

Պետք է նշել, որ Գերագույն դատարանի նախագահի, Գերագույն դատարանի նախագահության, դատախազության կոլեգիայի և պետական արքիտրաֆի կոլեգիայի կազմում պաշտոնատար անձանց, ինչպես նաև շրջանային և քաղաքային ժողովրդական դատարանների ժողովրդական դատավորների և դատարանների նախագահների նշանակումն ու ընտրությունը կատարվում էր Խորհրդարանի համապատասխան մշտական հանձնաժողովների եզրակացության առկայության դեպքում: Ըստ Խորհրդարանի մասին օրենքի՝ Գերագույն դատարանի նախագահը, գլխավոր դատախազը և գլխավոր պետական արքիտրան օժտված էն եղել օրենսդրական նախաձեռնության իրավունքով:

Խորհրդարանի կողմից ընդունվեց նաև օրենք՝ «Արտակարգ դրության մասին», որի նպատակն էր իրադրության շուտափույթ կայունացումը, օրինականության ու կարգուկանունի վերականգնումը, քաղաքացիների անվտանգության նկատմամբ սպառնալիքի վերացումը և նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալը:

Աղբեջանի կողմից սանձազերծված պատերազմը փորձության ենթարկեց նորաստեղծ երկրորդ հայկական հանրապետության հասարակական և քաղաքական կարգը, որից Արցախի ժողովուրդը դուրս եկավ պատվով և արժանապատվությամբ: Պատերազմը, որը հազարավոր մարդկանց կյանք խլեց, արմատապես փոխեց երկրի ներքին քաղաքականության գերակայությունները և պատճառ դարձավ նաև արդարադատության համակարգում խոր վերափոխումներ կատարելու համար: Փաստորեն, պետության բոլոր գործառույթներն ուղղվեցին հող հայրենին ավարառու հրոսակներից մաքրելու և հաղթանակն իր ավարտին հասցնելու համար: Բոլոր դեպքերում, պետական շինարարության բնագավառում իրավական փոփոխությունների մեջ մասը պայմանավորված էին ռազմական դրությամբ և պատերազմական ժամանակի օրենքներով, որոնք էլ պատերազմի հաղթական ավարտից հետո վերացվեցին: Ասել է թե՝ փաստորեն, երկրում պետական շինարարության հիմնաքարերը դրվում էին մի այնպիսի ժամանակահատվածում, եթք Աղբեջանն Արցախին խեղդամահ անելու համար լայնածավալ պատերազմական գործողություններ էր ձեռնարկել թե՝ օդում, և թե՝ ցանաքում:

Պատերազմի տարիներին կիրառված պատժիչ միջոցառումներն օրինականացնելու համար քրեական և քաղաքացիական արդարադա-

տուրքյան բնագավառի մի շարք ինստիտուտներ կախվածության մեջ դրվեցին երկրի ամենօրյա քաղաքականությունից, քանի որ ռազմական ռեժիմի պայմանները պահանջում էին ամրապնդել պետական կարգապահությունը և հասարակական կարգը, զորահավաքի ենթարկել հասարակության բոլոր ուժերը: Այդ խնդիրների կատարման բավական բարդ և պատասխանառու ժամանակահատվածում շատ կարևոր էր իրավապահ մարմինների գործունեությունը:

Պետության կողմից իրականացված առաջին պատժի միտումներն ուղղված էին մարդու և քաղաքացու մի շարք հիմնարար իրավունքների ու ազտությունների և պարտականությունների սահմանափակմանը: Այդ կապակցությամբ Խորհրդարանի նախագահության 1992թ. մարտի 4-ի որոշմամբ կազմավորվեց «ԼՂՀ պաշտպանության խորհուրդ» մարմինը, որի կազմի մեջ էին մտնում Խորհրդարանի նախագահը, նախագահի առաջին տեղակալը, Նախարարների խորհրդի նախագահը, ինքնապաշտպանության ուժերի իրամանատարը, պաշտպանության նախարարը և Խորհրդարանի պաշտպանության գործերի հանձնաժողովի նախագահը: Ապրիլի 22-ին հաստատվեց «ԼՂՀ պաշտպանության խորհրդի մասին» Կանոնադրությունը, համաձայն որի՝ պաշտպանության խորհրդին իրավունք էր վերապահվում.

ա/ աշխատապարտ քաղաքացիներին ներգրավել պաշտպանական աշխատանքներ կատարելու, հաղորդակցության ուղիների, կառույցների, կապի միջոցների, էլեկտրակայանների, էլեկտրացանցերի, կարևորագույն այլ օբյեկտների պահպանության համար, հրդեհների, համաճարակների, այլ աղետների դեմ պայքարին մասնակցելու համար,

բ/ հայտարարել աշխատանքային և ավտոսայլային պարհակ պաշտպանության կարիքների համար,

գ/ պաշտպանության կարիքների համար ինչպես ձեռնարկություններից, այնպես էլ առանձին քաղաքացիներից կատարել փոխադրամիջոցների և անհրաժեշտ այլ գույքի ժամանակավոր առգրավում,

դ/ կարգավորել հիմնարկների և ձեռնարկությունների աշխատանքի ժամանակը, ամեն տեսակի ժողովների, երթերի և նման բաների կազմակեպունքը, արգելել որոշակի ժամանակից հետո առանց հատուկ անցագրերի փողոցում հայտնվելը, սահմանափակել փողոցային երթևեկությունը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարել խուզարկություններ և կասկածելի անձանց կալանքներ,

ե/ արգելել առանձին վայրեր մտնելը և դուրս գալը:

Վերոնշյալ բոլոր հարցերի առնչությամբ պաշտպանության խոր-

հուրդն իրավունք ուներ արձակել ամբողջ բնակչության համար պարտադիր որոշումներ և դրանք չկատարելու համար սահմանել վարչական բնույթի պատիժներ՝ մինչև 3 ամիս ժամկետով ազատազրկում կամ մինչև 1500 ռուբլի տուգանք:

Հանրապետական մարմինների կազմավորման սկզբնական ամիսներին Լեռնային Ղարաբաղի դատարանները և իրավապահ մարմինները ծևականորեն ղեկավարվում էին նաև Խորհրդային Ազրբեջանի օրենքներով, պատճառաբանելով, որ Ազրբեջանի Գերագույն խորհրդում այդ օրենքների քննարկմանը և ընդունմանը մասնակցել են նաև ինքնավար մարզից ընտրված պատգամավորները։ Այդ հարցում Խորհրդարանի 1992թ. հունիսի 6-ի որոշմանք հստակություն նտցվեց, որի ուժով՝ մինչև սեփական Սահմանադրության և օրենքների ընդունումը, ԼՂՀ տարածքում կիրարկման մեջ դրվեց Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, իսկ ՀՀ օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունների համար թույլատրվեց կիրառել նախկին ԽՍՀՄ այն օրենսդրական ակտերը, որոնք չեն հակասում ԼՂՀ անկախության Հռչակագրին, այդ ակտերի կիրառման ընթացքում «Հայաստանի Հանրապետություն» կամ «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն» բառերը փոխարինելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերով⁸։ Այդ որոշման շնորհիվ հանրապետության դատաքննչական մարմինների կողմից օրենսդրության կիրառման դատարկավական պրակտիկան հստակեցվեց։

Այսպես, ըստ մեղադրանքի Աշոտ Աղամյանի և Սամվել Գրիգորյանի Աղր.ԽՍՀ քրեական օրենսգրքի 144-րդ 2-րդ մասով (անձնական գույքի գողություն) քրեական գործը 17.04.92թ. մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Ստեփանակերտի քաղժողացարան։ Մեղադրյալները դատի են տրվել Խորհրդային Ազրբեջանի օրենսդրությամբ, գործով 23.11.92թ. դատավճիռ է կայացվել՝ հանուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության⁹։

Արցախյան գոյամարտի առաջին տարում մի շարք առարկայական ու ենթակայական հանգամանքների բերումով քափուր էին մնացել Գերագույն դատարանի մեկ դատավորի, Յադրութի, Մարտունու, Մարտակերտի, Շուշիի, Ստեփանակերտի շրջ(քաղ) ժողդատավորների պաշտոնները։ Փաստորեն, Արցախի դատավորական կորպուսի աշխատանքը համարյա կազմալուծված էր։ Իրենց «մարտական դիրքերում» էին մնացել միայն Գերագույն դատարանի նախագահի պաշտոնակատար Նիկոլայ Դադայանը, Գերագույն դատարանի դատավորներ

Գրետա Արզումանյանը, Զոյա Օհանյանը և Ասկերանի շրջփողդատավոր Ալիդա Համբարձումյանը, որոնց պահվածքն այդ առումով արժանի է պատշաճ գնահատանքի և դրվատանքի: Դատարանների աշխատանքը դժվարանում էր նաև նրանով, որ ժողովրդական ատենակալների մի մասը բացակայում էր երկրից, իսկ մի մասն էլ զորակոչվել էր գործող բանակ:

Դատավորների թափուր տեղերը համարելու նպատակով Խորհրդարանի նախագահության 1992-1994թթ. իրամանագրերով Ռուման Հարությունյանը նշանակվեց Հադրութի շրջանի, Ռուման Խաչատրյանը՝ Մարտունու, Շենրիկ Այվազյանը՝ Մարտակերտի, Նելսոն Բալայանը՝ Շուշիի շրջփողդատավորներ, իսկ Աշոտ Ապրեսյանը՝ Ստեփանակերտի քաղժողդատարանի նախագահ, Ասկերանի շրջանի ժողդատավոր Ա. Համբարձումյանին փոխարինեց Սերգեյ Աղարեկյանը: Գերագույն դատարանի դատավորներ նշանակվեցին Իրինա Կարապետյանը, Ռոբերտ Հայրապետյանը, Ապրես Թովմասյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Յուրի Ստեփանյանը և Սուրեն Ալեքսանյանը: Արկադի Բաբայանը նշանակվեց պետական արբիտրի պաշտոնակատար, իսկ հետագայում՝ Գերագույն դատարանի դատավոր: Հանրապետության շրջաններում նշանակվեցին ժողովրդական ատենակալների նոր ընտրություններ, իսկ ԼՂՀ դատարանների լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Խորհրդարանի նախագահության 1992թ. հուլիսի 27-ի հրամանագրով դատարանների լիազորությունները երկարաձգվեցին մինչև նոր ընտրությունների անցկացումը¹⁰: Պատերազմի տարիներին որպես քրեական օրենսդրության նորարարություն հանդիսացավ այն, որ Խորհրդարանի կողմից 1992թ. հունիսի 6-ին ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված «Զինվորական հանցագործությունների մասին» հոդվածները շարադրվեցին առանձին օրենքի տեսքով՝ «Զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին» վերտառությամբ: Հաջորդ քայլով երկրում մեկ ամիս ժամկետով մտցվեց արտակարգ դրություն և սահմանվեցին արտակարգ դրության պայմաններում կիրառվելիք արտակարգ միջոցների ցանկը և շրջանակները, որոնց խախտման վերաբերյալ գործերի քննության կապակցությամբ ժողդատավորների համար սահմանված էր եռօրյա ժամկետ, իսկ վարչական խախտումներ թույլ տված անձինք կարող էին ձերբակալվել նախքան ժողդատավորի կողմից գործի քննումը:

1992թ. հունիս-հուլիս ամիսներին նախկին ինքնավար մարզի տա-

բաժքի կեսից ավելին բռնազավթվել էր Աղրբեջանի կողմից, ընկել էին Գետաշենը, Շահումյանը, Մարտակերտը, Ասկերանի և Յաղորութի շրջանների մի շարք բնակավայրեր: Որումբերը պայթում էին Ստեփանակերտ քաղաքի վրա: Յայտարարվեց 18-ից մինչև 45 տարեկան տղամարդկանց զորահավաք: ԼՂՀ քաղաքացիներին ժամանակավորապես արգելվեց հանրապետությունից դուրս մեկնումը: Բացառիկ դեպքերում նման թույլտվություն կարող էին տալ միայն Խորհրդարանի նախագահը և Նախարարների խորհրդի նախագահը, իսկ գործուղման թույլտվությունը և վիրավոր ազատամարտիկների բուժումը՝ կառավարության առջննորդ ինքնապաշտպանության ուժերի կոնժիտեի նախագահը¹¹: Թշնամու կողմից ժամանակավոր գրավված հանրապետության հյուսիսային և հյուսիսարևելյան մասերում ծավալվեց զանգվածային պարտիզանական շարժում, որին ներգրավվեցին գերազանցապես Շահումյանի և Մարտակերտի շրջանների՝ թշնամու կողմից ժամանակավոր գրավված տարածքների երիտասարդությունը և կարող այլ ուժեր:

Յաջորդ կարևոր քայլը հանդիսացավ այն, որ Խորհրդարանի նախագահության 1992թ. օգոստոսի 13-ի հրամանագրով հանրապետության տարածքում մտցվեց ռազմական դրություն, որի ռեժիմն իրականացնող մարմիններին, բացի «ԼՂՀ պաշտպանության խորհրդի նասին» Կանոնադրությամբ նախատեսված լիազորություններից, տրվեցին լրացուցիչ այլ լիազորություններ: Խստացվեցին նաև նրանց կողմից կիրառվող վարչական արգելանքները՝ սահմանելով ազատազրկում մինչև վեց ամիս ժամկետով կամ ենթարկելով տուգանքի մինչև 10.000 ռուբլու չափով: Ռազմական դրության ռեժիմն իրականացնող մարմինների կարգադրություններին և հրահանգներին չենթարկվելու, ինչպես նաև ռազմական դրություն հայտարարված վայրերում կատարած հանցագործությունների համար մեղավորները քրեական պատասխանատվության էին ենթարկվում պատերազմական ժամանակի օրենքների համաձայն:

Ի բացառումն դատարանների կողմից քրեական գործերի կանոնների, ռազմական դրություն հայտարարված վայրերում հասարակական կարգուկանոնի և պետական անվտանգության պաշտպանության դեմ ուղղված հանցանքների վերաբերյալ բոլոր գործերն ընդդատյա էին ռազմական տրիբունալների քննությանը: Դրանք էին՝ պետական հանցագործությունների, պետական և հանրային հասարակական սեփականության հափշտակման հետ կապված հանցագործությունների,

զինծառայողների կողմից կատարված հանցանքների, ավարառության, դիտավորյալ սպանությունների, բանտարկության և ձերբակալման վայրերից բռնությամբ ազատելու, համընդիանուր զինվորական պարտականության կատարումից խուսափելու, անօրեն կերպով գենք գնելու, վաճառելու և պահելու, ինչպես նաև հավշտակելու վերաբերյալ գործերը¹²:

Ինչպես նկատելի է հրամանագրից, նախատեսված էր երկրում ստեղծել ռազմական տրիբունալ, որտեղ վերոնշյալ քրեական գործերի դատական քննությունը պետք է կատարվեր Խորհրդարանի նախագահության կողմից հաստատված «ԼՂՀ ռազմական տրիբունալի մասին» Կանոնադրությամբ սահմանված կանոններով:

Ռազմական տրիբունալի դատավճիռները վճռաբեկության կարգով բողոքարկման կամ զանգատարկման ենթակա չեն և կարող են բեկանվել կամ փոփոխվել հսկողական կարգով: Այսինքն՝ դրանք կարող են վերանայվել միայն Գերագույն դատարանի պլենումի կողմից՝ գլխավոր դատախազի կամ Գերագույն դատարանի նախագահի հսկողության կարգով բերված բողոքների հիման վրա: Նման դեպքերում բեկանված գործերը ռազմական տրիբունալում քննվում են երեք դատավորների կազմով:

Պատերազմական ժամանակի կարիքներին առնչվող արտադրական աշխատանքների կատարումն ապահովելու նպատակով՝ արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության և առևտության բնագավառների բանվորների և ծառայողների համար սահմանվեցին օրական մինչև 5 ժամ տևողությամբ պարտադիր արտաժամյա աշխատանքներ, թույլատրվեց 14-ից մինչև 16 տարեկան անշափահասներին ներգրավել օրական 3 ժամից ոչ ավել տևողությամբ պարտադիր արտաժամյա աշխատանքներին:

Երկրում տեղի ունեցող ճգնաժամային իրադրությունը վերացնելու, Շահումյանի և Մարտակերտի շրջաններից տասնյակ հազարավոր փախստականների վիճակը թերևացնելու, ժողովորի և իշխանության մեջ ծագած խուճապն ու անվստահության նբնուրութը կանխելու համար իշխանության վերակազմավորման հարց ծագեց: Օգոստոսի 15-ին Խորհրդարանի նախագահությունն ընդունեց ԼՂՀ առաջին վարչապետ Օլեք Եսայանի հրաժարականը և նույն օրն էլ հրամանագիր ընդունեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ) ստեղծելու մասին՝ բաղկացած յոթ հոգուց: ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը¹³:

ԼՂՅ ՊՊԿ-ին համձնվեցին «ԼՂՅ Նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր գործառույթները, «Ռազմական դրության մասին» խորհրդարանի նախագահության 1992թ. օգոստոսի 13-ի հրամանագրով նախատեսված բոլոր գործառույթները և լիազորությունները: ՊՊԿ-ին փոխանցվեցին նաև խորհրդարանի նախագահության մի շարք լիազորություններ: ՊՊԿ-ի նախագահն օժտվեց նախարարների խորհրդի նախագահի լիազորություններով:

Յարկ է նշել, որ արցախյան գոյամարտի տարիներին ռազմական դրության ռեժիմն իրականացնող որևէ հատուկ մարմին այդպես էլ չստեղծվեց: Այդ մարմինների լիազորությունները սկզբնական շրջանում հանձնարարվեցին «կայազորների գինվորական պարետատներին, որոնք ենթարկվում էին տեղական գինվորական հրամանատարներին»¹⁴:

Խորհրդարանի նախագահության 1992թ. օգոստոսի 26-ի որոշումներով Կարեն Ղարյայանը նշանակվեց ԼՂՅ ռազմական տրիբունալի նախագահ, Վազգեն Չայրապետյանը՝ ԼՂՅ գինվորական դատախազ, Նիկոլայ Դադյայանը՝ Գերագույն դատարանի նախագահի, Յուրի Սահակյանը՝ գլխավոր դատախազի պաշտոնակատարներ: Միաժամանակ ընդունվեց «ԼՂՅ ռազմական տրիբունալի մասին» Կանոնադրությունը, իսկ Գերագույն դատարանի նախագահի պաշտոնակատար Ն.Դադյանին հանձնարարվեց կարճ ժամկետում օրինագիծ ներկայացնել Գերագույն դատարանի մասին: Ռազմական դրության պայմաններում կարևոր նշանակություն տրվեցին նաև դատարանների կողմից արդարադատության իրականացմանն աջակցող իրավապահ մարմինների, առաջին հերթին, դատախազության և ոստիկանության գործունեությունը նորմատիվ ակտերով կարգավորելու հարցերին: Հաստատվեցին «ԼՂՅ դատախազության մասին» և «Զինվորական դատախազության մասին» Կանոնադրությունները: ԼՂՅ ներքին գործերի նախարարության (ներկայուն՝ ԼՂՅ կառավարությանն առընթեր ոստիկանություն) մասին Կանոնադրությունը հաստատվել էր կառավարության 1992թ. հուլիսի 7-ի թիվ 65 որոշմամբ: Օպերատիվ-հետախուզական հարցերում ՆԳ նախարարության նարմինները ղեկավարվում էին ինչպես Չայաստանի Չանրապետության, այնպես էլ ԽՍՀՄ նորմատիվ ակտերով:

Կանգնած լինելով հասարակական կարգի պահպանության, օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման դիրքերում, ԼՂՅ կառավարությանն առընթեր ոստիկանության նարմինների աշխատակիցներն իրենց արժանի լուման են ներդրել հայրենիքի պաշտպանության և ազատագր-

ման գործում: Ոստիկանության 700-ից ավելի աշխատակիցներ (անձնակազմի 2/3-ը) մասնակցել են Հայրենիքի համար մղվող մարտական գործողություններին՝ թեժ մարտերում տալով 34 զրի: ԼՂՀ ոստիկանության 200-ից ավելի աշխատակիցներ պարգևատրվել են պետական շքանշաններով և մեդալներով:

Համաձայն «ԼՂՀ ռազմական տրիբունալի մասին» (այսուհետ՝ Զինդատարան) Կանոնադրության՝ Զինդատարանները մտնելով ԼՂՀ դատական համակարգի մեջ, գործել են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում: Զինդատարանի դատավորներ կարող էին ընտրվել 25 տարին լրացած այն քաղաքացիները, որոնք գտնվում էին իսկական զինվորական ծառայության մեջ: Դատավորներն ընտրվում էին Խորհրդարանի նախագահության կողմից՝ 10 տարի ժամկետով, պատասխանատու և հաշվետու էին նախագահության առջև, իսկ Զինդատարանի ժողովրդական ատենակալները՝ զինծառայողների ժողովների կողմից՝ 5 տարի ժամկետով: Վերջիններս արդարադատություն իրականացնելիս օժտված էին դատավորի բոլոր իրավունքներով:

Կանոնադրության համաձայն՝ Զինդատարանը կազմված էր դատարանի նախագահից, նրա տեղակալներից, դատարանի անդամներից և ժողովրդական ատենակալներից: Զինդատարանի հաստիքացուցակը և դրանց համապատասխան զինվորական կոչումները հաստատվեցին ավելի ուշ՝ Խորհրդարանի նախագահության 1993թ. նոյեմբերի 2-ի հրամանագրով:

Խորհրդարանի նախագահության հրամանագրերով՝ մինչև զինվորական դատախազության կառուցվածքի և հաստիքացուցակի լրիվ ձևավորումը, շրջանային դատախազները ժամանակավորապես օժտվեցին նաև շրջանային զինվորական դատախազների լիազորություններով¹⁵, իսկ շրջանային ժողովրդական դատարանները՝ Զինդատարանի լիազորություններով՝ այն բոլոր քրեական գործերի քննության համար, որոնց մեղադրական եզրակացությունները հաստատվել են համապատասխան շրջանային դատախազների կողմից՝ նրանց զինվորական դատախազի լիազորություններով օժտելու կապակցությամբ¹⁶:

Չնայած «ԼՂՀ դատախազության մասին» Կանոնադրության (1993թ. նոյեմբերի 3-ին ընդունվել է օրենքի տեսքով) համաձայն՝ հանրապետության դատախազության նարմինների համակարգը կազմել են ԼՂ հանրապետական դատախազությունը և քաղ/շրջանների դատախազությունները, որտեղ զինվորական դատախազության մասին

որևէ խոսք չկար, սակայն վերջինիս Կանոնադրության համաձայն՝ «Հանրապետության գինվորական դատախազը նշանակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Խորհրդարանի նախագահության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազի ներկայացմամբ։ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գինվորական դատախազը ենթարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին և պատասխանատու է նրա առջև։ Զինվորական դատախազության քննիչներին նշանակվում և աշխատանքից ազատում է ԼՂՀ գլխավոր դատախազը՝ ԼՂՀ գինվորական դատախազի ներկայացմամբ։ Նրանք հաշվետու և պատասխանատու են գլխավոր դատախազի և գինվորական դատախազի առջև։»

Գերագույն դատարանի կառուցվածքը և նրա քանակական կազմը սահմանվեց Խորհրդարանի նախագահության 1992թ. դեկտեմբերի 22-ի որոշմամբ¹⁷, որի համաձայն՝ հանրապետության Գերագույն դատարանը պետք է կազմված լիներ 13 դատավորներից՝ նախագահից, նրա երեք տեղակալներից և դատարանի 9 անդամներից։ Նախատեսվում էր ստեղծել 3 դատական կոլեգիաներ՝ քրեական, գինվորական և քաղաքացիական գործերով։ Յուրաքանչյուր կոլեգիա պետք է կազմված լիներ կոլեգիայի նախագահից և 3-ական անդամներից։ Դատական կոլեգիաների նախագահները միաժամանակ Գերագույն դատարանի նախագահի տեղակալներն էին հանդիսանում։ Նախատեսվում էր նաև կազմավորել Գերագույն դատարանի նախագահություն՝ 6 դատավորների և պետում՝ 13 դատավորների կազմով։ Գերագույն դատարանի համար ժողովրդական ատենակալների թվակազմը սահմանվեց 50 հոգի։ Վերջիններիս ընտրությունները տեղի ունեցան 1993 թվականին։

Սակայն, ֆինանսական սուր պայմանների և կադրերի բացակայության պատճառով 1993թ. առաջին 5 ամիսների ընթացքում Գերագույն դատարանի համապատասխան ատյանները չձևավորվեցին և դատարանը շարունակեց գործել 3 դատավորների կազմով և այն էլ՝ առանց աշխատավարձ ստանալու։ Նման հանգանանքներում գինվորական գործերով դատական կոլեգիայի գործառույթները դրվեցին քրեական գործերով դատական կոլեգիայի վրա։

Հարցի բարդությունը կայանում էր նաև նրանում, որ նորաստեղծ հանրապետությունում իրավաբան-մասնագետների խիստ կարիք էր զգացվում, իսկ դրսից իրավիրվածները դնում էին իրենց պայմանները՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի դատավորին չափ համահավասար աշխատավարձ, բնակտարածության ապահովում և այլն։

Որոշակի դժվարություններ էր առաջացնում նաև ժողովրդական ատենակալների ընտրությունների հարցը, քանի որ երկիրն ամբողջությամբ պատերազմի մի քատերաբեմ էր, ինչի պատճառով բնակչության տեղաշարժային գործընթացներ էին տեղի ունենում:

Բացի այդ, նախկին մարզային դատարանը, մարզային դատախանությունը և մարզային նշանակության մի շարք պետական հիմնարկ ծերնարկություններ և կազմակերպություններ տեղակայված էին Ստեփանակերտի Լենինի (Ներկայում՝ Վ. Սարգսյանի) պողոտայի թիվ 24 շենքում, որը 1992թ. փետրվարի 15-ի գիշերը հրետակոծվեց Շուշիի կողմից և ամբողջությամբ իրո ճարակ դարձավ: Շենքից մնացին միայն պատերը: Մարզդատարանի և մարզդատախազության իրավահաջորդ հանդիսացած Գերագույն դատարանը, հանրապետության դատախանությունը, իսկ հետագայում՝ Զինվորական դատարանը ժամանակավորապես տեղափորվեցին նախկին քաղլուսավորության շենքում (Ներկայում՝ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատ):

Այդ առումով միջոցներ էին ձեռնարկվում համապատասխան գույք և սարքավորումներ ձեռք բերելու և արդարադատություն իրականացնելու նպատակով դատավորների համար աշխատանքի նվազագույն պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

ԼՂՀ պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից 1992թ. ընթացքում ընդունված նորմատիվ ակտերի վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետության պետական շինարարության առաջին տարվա վերջում երկրում ծնավորվել էր երկաստիճան դատական համակարգ, որի ստորին օղակը հանդիսացել են Յադրութի, Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի շրջողդատարանները և Ստեփանակերտի քաղդողդատարանը, ինչպես նաև դրանց հավասարեցված Զինդատարանը: Դատական համակարգի վերին օղակը գլխավորել է Գերագույն դատարանը: Վերջինիս կառուցվածքում պետք է գործեին քրեական, քաղաքացիական և զինվորական գործերով 3 դատական ատյաններ՝ վճռաբեկ ատյանը, դատարանի նախագահությունը (հսկողական ատյանը) և դատարանի պլենումը: Գերագույն դատարանն օժտված էր նաև առաջին ատյանի կարգով ցանկացած քրեական և քաղաքացիական գործ քննելու իրավասությամբ:

Չնայած արցախյան գոյանարտի տարիներին դատարանակազմության կամ դատական իշխանության նախին համապարփակ որևէ փաստաթուղթ չի ընդունվել, բայց արխիվային տվյալները վկայում են, որ ԼՂՀ դատարաններն իրենց գործունեության ընթացքում դեկավարվել

Են նաև «Դատարանակազմության մասին» Հայկական ԽՍՀ 1981թ. օրենքի մի շաբթ դրույթներով:

Աղբեջանական բանակի կողմից ռազմական գործողությունների կտրուկ ծավալնան հետ կապված՝ ԼՂՀ պաշտպանության բանակի պաշտպանունակության ամրապնդման, ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովման, դասալքության դեպքերի, մարտական իրադրությունում զորամասն ինքնական թողնելու և պաշտպանությունը քայլայող այլ զինվորական հանցագործությունների կանխման ու խափանման նպատակով, Խորհրդարանի նախագահության 1994թ. հունվարի 11-ի որոշմամբ ԼՂՀ պաշտպանության բանակի Զինդատարանի համակարգում ստեղծվեցին ռազմադաշտային դատարաններ¹⁸: Ռազմադաշտային դատարանների դատավճրությունները եղել են վերջնական, գանգատարկման և բողոքարկման ոչ ենթակա:

Ռազմադաշտային դատարանը գործը լսել է 3 հոգու կազմով՝ Զինդատարանի դատավորի և 2 ժողովրդական ատենակալների մասնակցությամբ: Ռազմադաշտային դատարանների իրավասությանը ենթակա էին «Զինվորական հանցագործությունների համար քրեական պատախանատվության մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 23-րդ հոդվածներով սահմանված հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնցով պատախանատվություն էր նախատեսված դասալքության, մարտական իրադրությունում զորամասերն ինքնական թողնելու, անդամախեղության կամ այլ միջոցներով զինվորական ծառայությունից խուսափելու, մարտադաշտն ինքնական լրելու կամ գենքը գործադրելուց հրաժարվելու դեպքերի համար:

Զինվորական դատախազության մարմինները և ռազմադաշտային դատարաններն օժտված էին հետաքննության, դատավճռի կայացման և այն ի կատար ածելու արտակարգ լիազորություններով: Ռազմադաշտային դատարանների դատավճրություններում ուժի մեջ էին նտնօւմ հրապարակման պահից և բողոքարկման ու ներման ենթակա չէին: Ազատազրկման ենթարկված անձինք պատիժը կրել են պաշտպանական շրջաններում ստեղծված պատժական զինստրաբաժանումներում: Պատժի առավելագույն չափի՝ մահապատժի դատապարտված անձանց դատավճրուն ի կատար է ածվել պարետության մարմինների կողմից:

Հաշվի առնելով հանրապետությունում ստեղծված կացությունը, արդարադատության իրականացման հետ կապված դժվարությունները և ժողովրդական ատենակալների մեջ մասի հանրապետության

սահմաններից դուրս գտնվելու հանգամանքները՝ երկրի տարածքում նոցվեց որոշ տեսակի գործերի դատաքննության պարզեցված կարգ և ժողովատավորներին իրավունք վերապահվեց միանձնյա քննելու հետևյալ քրեական գործերը՝ տուժողի մասնավոր բողոքի կապակցությամբ հարուցված (ԼՂՅ նախկին քրեական օրենսգրքի 109-րդ հոդված, 110-րդ հոդվածի 1-ին մաս, 131-րդ և 132-րդ հոդվածներ), պետական կամ հանրային գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը (ԼՂՅ քրեական օրենսգրքի 97-րդ հոդված), ալիմենտ վճարելուց կամ երեխաններին պահելուց խուսափելը (ԼՂՅ քրեական օրենսգրքի 124-րդ հոդված), ապօրինաբար ազատությունից զրկելը (ԼՂՅ քրեական օրենսգրքի 130-րդ հոդված), խուլիգանությունը (ԼՂՅ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին մաս) և հետաքննության մարմինների կողմից քննված արձանագրային ձևի բոլոր գործերը:

Քաղաքացիական իրավունքի բնագավառում ժողովատավորներին իրավունք վերապահվեց միանձնյա քննելու քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու, քաղաքացուն մահացած ճանաչելու, ամուսնալուծության (առանց ունեցվածքի բաժանման), քաղաքացիական կացության ակտերի գրանցումների անշշտությունները պարզելու, կորցրած ներկայացուցչական փաստաթղթերի նկատմամբ իրավունքները վերականգնելու և քաղաքացիների իրավունքները ոտնահարող պետական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց ոչ իրավասու գործողությունների վերաբերյալ գործերը:

Նույնիսկ պատերազմի թեժ գործողությունների պահին Արցախի պետական իշխանության մարմինները տողորված էին ժողովրդավարական և իրավական պետություն ստեղծելու ոգով՝ երկրի հետագա վերելքի հիմնական երաշխիքը համարելով մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները: Այդ առումով պետական իշխանության բարձրագույն մարմնի որոշումներով Արցախը միացավ Ռազմագերիների հետ վարչելու կերպի մասին ժնիկի կոնվենցիային և դրա լրացուցիչ արձանագրությանը, Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու հօչակագրին, Մարդու իրավունքների համընդիհանուր հօչակագրին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին կից ֆակուլտատիվ արձանագրությանը¹⁹:

Հանրահայտ ծշմարտություն է, որ պատերազմն արհավիրք է բոլոր ժողովուրդների համար: Դա այն դեպքում, եթե հաշվի առնենք, որ Արցախի դեմ պատերազմ էր սանձագրեթել 7 միլիոնանոց բնակչություն

ունեցող Ադրբեջանը, որի բանակում հայ ժողովրդի դեմ կռվում էին հազարավոր աֆղան, չեչեն և այլազգի վարձկաններ: Գերի զնկած վարձկան մոջահետք Բախստիյար Բարերզափոր, ով «հավատի համար» կրվում էր «անհավատ հայերի դեմ», նշել է, որ Ադրբեջանի բանակում եղել են ավելի քան 2500 մոջահետքեր, որոնցից միայն 250 հոգի կռվել են Յորադիզի ուղղությամբ²⁰: Իսկ Աղդամի ուղղությամբ չեչեն վարձկաններին առաջնորդում էր տիխրահրչակ Շամիլ Բասանը:

Ուկրաինայի Հանրապետության բնակիչ, ադրբեջանական բանակի վարձկան Յու. Բելիչենկոն, 1992թ. հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 20-ը 16 ավիաթրիչք է կատարել ԼՂՀ տարածքի վրա՝ ռմբակոծելով հանրապետության բնակավայրերը և կենսական նշանակություն ունեցող կարևոր օբյեկտները: Նրա հանցավոր գործողությունների հետևանքով երկրին հասցված վնասը կազմել է 231 միլիոն 620 հազար 437 ռուբլի: Մարտակերտի շրջանի Սեհմանա գյուղը ռմբակոծելու ժամանակ հայ հակաօդայինների կողմից խփվեց վարձկանի ինքնաթիռը և նա օդապարիկով իջնելու ժամանակ գերեվարվեց: Զինդատարանի դատավճռով Յու. Բելիչենկոն դատապարտվեց պատժի առավելագույն չափի՝ մահապատժի:

Վարձկանության դեմ պայքարն ուժեղացնելու համար ԼՂՀ քրեական օրենսգիրքը լրացվեց ԱՊՀ երկրների մեջ իր նախադեպը չունեցող 63¹-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Վարձկանությունը, այսինքն՝ հակամարտությանը մասնակցող կողմից քաղաքացի չհանդիսացող անձի մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ռազմական գործողություններին, նյութական բարիքներ ստանալու կամ այլ դրդապատճառներով, ինչպես նաև վարձկանների հավաքագրումը, ուսուցումը, ֆինանսավորումը կամ այլ խրախուսանք, դրան հանահավասար՝ նրանց օգտագործումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ գինված հակամարտության կամ ռազմական գործողությունների մեջ՝ ինչպես հակամարտությանը մասնակցող կողմի ներկայացուցչի, այնպես էլ՝ այլ անձի, պատժվում է ութից մինչև տասնինգ տարի ժամկետով ազատազրկմանը կամ մահապատժով»: Քրեական օրենսգրքում մտցված այս փոփոխությանը տրվեց նաև հետադարձ ուժ, այսինքն՝ օրենսգրքի 63¹-րդ հոդվածով սահմանված գործողությունները տարածվում էին նաև այն հակահասարակական արարքների վրա, որոնք տեղի են ունեցել մարտական գործողությունները սկսվելու պահից:

Պետության կողմից իրականացված արտակարգ քայլ հանդիսա-

ցավ նաև այն, որ ԼՂՀ պաշտպանության գինծառայողների սուր կարիքավոր ընտանիքներին, զոհվածների ընտանիքներին, ռազմական գործողությունների հետևանքով տուժած կամ թշնամու գրաված տարածքում տներ ունեցող հանրապետության բնակչներին, փախստականներին և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող այլ անձանց բնակարանով շուտափույթ ապահովելու համար և առաջնորդվելով սոցիալական արդարության սկզբունքով, Խորհրդարանի նախագահության 1993թ. դեկտեմբերի 14-ի հրամանագրով սահմանվեց կարգ, համաձայն որի՝ առանց տերերին դրամական փոխհատուցում վճարելու իրու պետության սեփականություն առգրավել հանրապետության տարածքում գտնվող այն բնակելի, ներառյալ կոռպերատիվ, ինչպես նաև անավարտ շինարարությանք և չգրանցված տները, որոնց սեփականատերերը կամ նրանց ընտանիքի զինապարտ անդամները 1989թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակաշրջանուն հեռացել են Արցախի տարածքից և մինչև 1994թ. ապրիլի 15-ը չեն վերադարձել հանրապետություն։ Նշված անձինք, ինչպես նաև նրանց զավակները, զրկվել են Արցախի տարածքում գտնվող որևէ գույք, ներառյալ՝ տուն ժառանգելու իրավունքից²¹։

ԼՂՀ սահմաններից դուրս բնակության մեկնած քաղաքացիներին պատկանող բնակելի տների առգրավման կարգը սահմանվեց ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի կարգադրություններով։ Դամաձայն դրանց՝ բնակարանն առգրավելու մասին որոշումը կատարվում էր ՊՊԿ-ի շրջանների և Ստեփանակերտ քաղաքի լիազոր ներկայացուցիչների որոշմանը՝ համապատասխան բնակարանային հանձնաժողովների եզրակացության հիման վրա²²։ Ի դեպ, ՊՊԿ-ի լիազոր ներկայացուցիչներն օժտված էին բավական մեծ լիազորություններով։ Նրանց կարգադրությունները չկատարելու դեպքում մեղավորները պատասխանատվություն էին կրում պատերազմական ժամանակի օրենքներով։ Լիազոր ներկայացուցչի կարգադրությունը ԼՂՀ օրենքներին, Խորհրդարանի որոշումներին, ՊՊԿ-ի որոշումներին և կարգադրություններին չհամապատասխանելու դեպքում կարող էր վերացվել կամ կասեցվել միայն ՊՊԿ-ի նախագահի կողմից²³։

Բնակարանից օգտվելու տվյալ անձի իրավունքը կորցրած ժամանչելու և բնակարանը պետության բնակֆոնդ նաև մասին գործադիր իշխանության մարմնի որոշումը 6 ամսվա ընթացքում կարող էր դատական կարգով գանգատարկվել։ Ակնհայտ է, որ այս պարագայում շրջանցվել և խախտվել են 1982 թվականին ընդունված Հայկ. ԽՄՀ

բնակարանային օրենսգրքի բազմաթիվ նորմերի պահանջներ:

Խորհրդարանի նախագահության մեկ այլ հրամանագրով այն անձանց, որոնց գիմապարտ երեխաներն անհարգելի պատճառներով խուսափել են Արցախի բանակում ծառայելուց, արգելվում էր ընտրովի և դեկավար կամ այլ պատասխանատու պաշտոններ զբաղեցնել պետական, կոռուպտատիվ, գյուղատնտեսական և հասարակական հիմնարկներում, ձեռնարկություններում և կազմակերպություններում: Նման անձինք զրկվել են նաև ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվելու իրավունքից²⁴:

Դաշվի առնելով, որ հանրապետության տարածքում իրենց գործունեությունն ակտիվացրել էին ԼՂՀ բնակչության պառակտնանը նպաստող, հանրապետությունուն ներքին կայունության և բարոյահոգեբանական իրադրության անրապնդմանը խոչընդոտող, ինչպես նաև գինվորական ծառայության նկատմամբ անհարգալից վերաբերմունք քարոզող ԼՂՀ-ում չգրանցված զանազան կրոնական կազմակերպություններ և աղանդներ, ՊՊԿ-ի որոշմամբ, բացի Դայ առաքելական եկեղեցու արցախյան թեմից, արգելվեց սահմանված կարգով չգրանցված կրոնական խմբերի և աղանդների գործունեությունը հանրապետության տարածքում, իսկ Խորհրդարանի որոշմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի (կրոնական ծիսակատարությունների պատրվակով քաղաքացիների անձի և իրավունքների դեմ ոտնագություն կատարելը) 2-րդ մասը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. «Նույն գործողությունները, որոնք վնասում են պետության շահերն ու ազգային անվտանգությունը և գուգորդվում պատերազմական ժամանակներում ԼՂՀ օրենքների կատարումից քաղաքացիների հրաժարմանը քարոզելուն կամ դրդելուն, պատժում են ազատազրկմամբ 10-ից մինչև 15 տարի ժամկետով, գույքի բռնագրավմամբ կամ, առանձնապես ծանր հետևանքների դեպքում, մահապատճով»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի (ազատազրկում) առաջին մասում «քսան տարի» բառերը փոխարինվեցին «քսանիհնգ տարի» բառերով:

Չնայած վերոնշյալ նորմատիվ ակտերն առաջին հայացքից հակածողովրդական և հակասահմանադրական են թվում, բայց դրանք պետք է գնահատել ոչ թե այսօրվա, այլ այն դաժան ժամանակների դիրքերից, երբ ամեն ինչ դրված էր ռազմական ռելսերի վրա, իսկ հակառակորդը պատկերացնում էր, թե ինչպես է Ստեփանակերտում կիսալուսնի դրոշը ծածանելու և Սևանի քաղցրահամ ջրերում լողանալու:

Միաժամանակ արժանին պետք է մատուցել Արցախի պետական իշխանություններին, որ, մի կողմից, մարտական գործողությունների պատճառով սահմանափակելով քաղաքացիների որոշակի իրավունքներ, մյուս կողմից՝ պետությունը մեծ հոգատարությամբ է վերաբերվել հայրենիքի պաշտպանների և նրանց ընտանիքների տողիալ-տնտեսական պայմանների հարցերի լուծմանը: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կազմում նարտական գործողություններին մասնակցությունը, ինչպես նաև պարտիզանական ջոկատներում և միավորումներում լինելու ժամանակահատվածը համարվել է աշխատանքային ստաժ և հաշվել՝ մեկ ամսվա ծառայությունը երեք ամսվա ստաժի դիմաց: Դայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդանություն ստացած անձինք և նրանց ընտանիքների անդամներն ապահովվել են կենսաթոշակով: Այդ ամձանց ընտանիքների անդամներին՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել այն չափերով և պայմաններով, որոնք սահմանված են եղել «Զինծառայողների կենսաթոշակային ապահովման մասին» նախկին ԽՍՀՄ օրենքով: Դարկերի գծով արտոնություններ սահմանվեցին այն հարկատումների համար, որոնց ընտանիքների կազմի մեջ մտնում էին իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր գորակոչված քաղաքացիներ: Իսկ զոհված զինծառայողների ընտանիքները և երկու ու ավելի զինծառայող ունեցող ընտանիքները լրիվությամբ ազատվել են որոշակի հարկային պարտավորություններից:

Այդ համատեքսուում երկրի խորհրդարանն է ավելի առաջ գնաց և ամուսիններից մեկի մահվան կամ անհայտ կորած լինելու դեպքում փաստացի ամուսնական հարաբերությունները ճանաչելու կարգ սահմանեց: Զամաձայն այդ կարգի՝ 1989թ. մինչև ռազմական դրության ժամանակաշրջանի ավարտը, փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանցից մեկի մահվան կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում՝ մյուս կողմն իրավունք ուներ նման փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ լինելու փաստի հաստատման համար դիմել ժողովրդական դատարան: Իսկ զգրանցված ամուսնությունից ծնված երեխայի հայրությունը ճանաչված լինելու դեպքում և հոր մահվան պարագայում երեխան ծեռք էր բերում բոլոր այն իրավունքները, ինչ որ գրանցված ամուսնությունից ծնված երեխանը²⁵:

Ժողովրդին ցուցաբերվող իրավական օգնության կատարելագործման նպատակով կազմավորվեց տնտիհաշվարկային սկզբունքների

վրա աշխատող ԼՂՀ փաստաբանների կոլեգիան, որի մարմինների ընտրությունները հանձնարարվեցին ԼՂՀ արդարադատության պետական վարչությանը²⁶:

Օրենքի գերակայության ապահովման, օրինականության ամրապնդման, քաղաքացիների սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար կարևոր քայլ հանդիսացավ 1993թ. նոյեմբերի 3-ին «ԼՂՀ դատախազության մասին» օրենքի ընդունումը: Օրենքով առաջին անգամ սահմանվեցին դատախազական գործունեության նպատակները և ուղղությունները, կազմակերպման սկզբունքները, ԼՂՀ դատախազական մարմինների համակարգը և այլն: ԼՂՀ դատախազության առջև ծառացած նոր խնդիրներն իրագործելու համար ԼՂՀ գլխավոր դատախազ նշանակված Մավլ Դուկասյանը համակարգը դեկավարեց մինչև 2006 թվականը: Անկախության հոչակումից հետո ԼՂՀ դատախազության մարմիններն իրենց ներհատուկ գործառույթներով միշտ էլ աջակցել են ԼՂՀ դատարանների կողմից արդարադատության իրականացմանը: Ռազմական դրության ռեժիմն արդյունավետ իրականացնելու նպատակով ՊՊԿ-ի 1993թ. ապրիլի 26-ի որոշմամբ ստեղծվեց ԼՂՀ պարետատունը, որի առաջին պարետ նշանակվեց Մուրադ Պետրոսյանը: Նույն որոշմամբ պարետատան կարգադրության տակ դրվեց ինքնապաշտպանության կոմիտեի համակարգում ստեղծված ռազմական ուժիկանությունը²⁷:

Յանուն ճշնարտության պետք է ասել, որ արցախյան գոյամարտի տարիներին անուրանալի է զինվորական պարետատների աշխատանքը՝ հասարակական գույքը հափշտակողների, դասալիքների և խուճապարարների դեմ պայքարի գործում, բայց պատմությունը չի մոռանա և այն, որ զինվորական պարետատան աշխատակիցները ոչ քիչ կոպիտ կանայականություններ էին թույլ տալիս քաղաքացիական բնակչության, պաշտպանության բանակի մարտիկների, անչափահասների, հաշմանդամների, լրագրողների, ժողովրդական պատգամավորների նկատմամբ: Մարդկի հանրավի կալանավորվում էին և դաժանորեն ծեծվում: Զինվորական պարետների կողմից ծերբակալված քաղաքացիների վերաբերյալ արձանագրությունները կազմվում էին բացառիկ դեպքերում և հետին թվով, որտեղ ոչինչ չէր նշվում, թե երբ, որտեղ և ինչի համար է ծերբակալվել իրավախախտողը և ինչ բացատրություն է տվել այդ կապակցությամբ²⁸: Զինվորական պարետների կողմից կիրառվող վարչական տույժերի բողոքարկման (գանգատարկման) որևէ

կարգ սահմանված չէ, այլ միայն «ԼՂՀ դատախազության մասին» օրենքում արձանագրված էր, որ, ի թիվս այլ լիազորությունների, դատախազը ստուգում է համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիներին վարչական կալանքի վերցնելու և նրանց նկատմամբ ներգործության միջոցներ կիրառելու օրինականությունը։ Նույնիսկ օրենքի առկայության պայմաններում հաճրապետության դատախազությունը գործնականորեն գրկված էր վարչական կալանքների օրինականության և հիմնավորվածության, ձերքակալվածների պահման կարգի ու պայմանների նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու հնարավորությունից։

Դարցն այնտեղ էր հասել, որ զինվորական պարետության մարմինների անօրեն գործողությունների վերաբերյալ երկրի Խորհրդարանը 2 անգամ՝ 1992թ. դեկտեմբերին և 1993թ. դեկտեմբերին, ընդունել է հայտարարություն²⁹։ Նման իրավիճակը հիմնականում թելադրված էր նրանով, որ պատերազմի տարիների իրական իշխանությունը գտնվում էր ռազմադաշտային իրամանատարների ձեռքում։ ճիշտ է, ուժը ծնում է իրավունք, բայց այն, բիրտ և իշխանատենչ մարդու ձեռքում գտնվելու դեպքում, վերածվում է բռնության։

Արդեն 1994թ. ընթացքում Գերագույն դատարանի կազմը նասնակիորեն հանալրվել էր, կարգավորվել էին քրեական և քաղաքացիական գործերով դատական կոլեգիաների, նախագահության և պլենումի աշխատանքները։ Սկսեցին գործել նաև Մարտակերտի և Շուշիի շրջատարանները։

Վիճակագրական տվյալների համաձայն՝ Գերագույն դատարանում առաջին ատյանի կարգով 1992թ. քննվել են 3 քրեական գործեր 7 հոգու նկատմամբ, 1993թ. ընթացքում ոչ մի գործ չի քննվել։ Ծանրաբեռնված չեն եղել նաև Գերագույն դատարանի վճռաբեկ և հսկողական ատյանները։ Նույնը կարելի է ասել նաև Մարտակերտի, Ասկերանի, Ջաղուրի և Մարտունու շրջքողդատարանների մասին։ Դա բացարձում է նրանով, որ Մարտակերտ շրջկենտրոնը և շրջանի մի շարք բնակավայրեր բռնազավթվել էին հակառակորդի կողմից, իսկ մյուս 2 շրջկենտրոնները գտնվում էին մշտական հրետակոծության տակ։

Գերագույն դատարանի քրեական գործերով վճռաբեկ ատյանում 1992թ. քննվել է 2 գործ, իսկողական ատյանում որևէ գործ չի քննվել, իսկ 1994թ. ընթացքում առաջին ատյանի կարգով քննվել է 2 գործ, վճռաբեկ և հսկողական ատյաններում՝ 38 քրեական գործեր։

Վիճակագրական տվյալները վկայում են, որ քաղաքացիատարան-

ներ ուղարկված քրեական գործերի հիմնական մասը քննվել է Զինդատարանի և Ստեփանակերտի քաղժողատարանի կողմից:

Այսպես, 1992թ. հանրապետության դատարաններ ուղարկված 28 քրեական գործերից 19-ը ընթացքավորվել է Ստեփանակերտի քաղժողատարանի, 7-ը՝ Զինդատարանի և 1-ական՝ Մարտունու և Յաղութի շրջքողատարանների կողմից, 1993թ.³¹ 112 գործերից 54-ը՝ Զինդատարանի, 35-ը՝ Ստեփանակերտի քաղժողատարանի կողմից: Միայն 1994թ. Զինդատարանի կողմից ընթացքավորվել է 110 գործ, որից 78-ը՝ գինվորական հանցագործությունների վերաբերյալ:

Անդրադառնալով հանրապետության դատարանների կողմից իրականացված պատժի քաղաքականությանը, հարկ է նշել, որ արցախյան գոյամարտի տարիներին խրախուսվում էր գինվորական ծառայողի կամ գինապարտի վերաբերյալ դատավճորի կատարման հետաձգումը՝ մինչև պատերազմական գործողությունների ավարտը կամ պայմանական դատապարտությունը՝ հանցավորի վարքի նկատմամբ վերահսկողության իրականացումը հանձնարարելով հանապատասխան գորամասի կոլեկտիվին: Բնական է, որ դատավճորի կատարման հետաձգում չի կիրառվել նախկին ԼՂՀ քրեական օրենսգրքի 42¹-րդ հոդվածով նախատեսված անձանց նկատմամբ: Մի շարք դեպքերում ժամկետային ծառայության գինծառայողներն ուղարկվել են ԼՂՀ պաշտպանության բանակի տուգանային գինատորաբաժանումներ:

Ահա պատկերը, 1992թ. ընթացքում ազատազրկման դատապարտված 17 քաղաքացիներից 12-ի նկատմամբ դատավճորի կատարումը հետաձգվել է մինչև պատերազմական գործողությունների ավարտը, 1993թ. ընթացքում՝ ազատազրկման դատապարտված 114 քաղաքացիներից 50-ի նկատմամբ դատավճորի կատարումը հետաձգվել է, 26-ի նկատմամբ կիրառվել է քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածը՝ նրանց վարքի վերահսկողությունը հանձնարարելով գորամասի հրամանատարությանը, իսկ 19 գինծառայողներ ուղարկվել են կարգապահական գինատորաբաժանումներ: Միայն Զինդատարանի կողմից 1994թ. ընթացքում ազատազրկման դատապարտված 102 քաղաքացիներից 32-ի նկատմամբ դատավճորի կատարումը հետաձգվել է, 32-ի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, իսկ 35 հոգու նկատմամբ նշանակված ազատազրկումը փոխարինվել է տուգանային գինատորաբաժանումներում գինծառայությամբ³⁰:

Արխիվային տվյալները ցույց են տալիս, որ դատարանների պատժից քաղաքականությունն ավելի խիստ է եղել վարձկանների, մարդաս-

պանների, հայրենիքի դավաճանների և դասալիքների նկատմամբ, իսկ հասարակական վտանգավորություն չներկայացնող հանցագործություն կատարած անձանց նկատմամբ նշանակված պատիժները պայմանականորեն չեն կիրառվել կամ դատավճրությունը կատարումը հետաձգվել է, նրանց ուղարկելով գործող բանակ կամ տուգանային գինստորաքածանումներ, որտեղ նրանց հնարավորություն է տրվել Յայրենիքի առջև քավելու իրենց մեջքը: Ոչ քիչ դատապարտյալներ հետագայում ռազմական գործողությունների ժամանակ մաքրել են իրենց դեմքի հանցավոր խարանը և արժանացել պատժից ազատմանը և դատվածության հանմանը: Իսկ ոմանց կատարած սխրանքներին արժանացել են կառավարական պարգևների:

Թեև «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության պետական անկախության հիմունքների մասին» օրենքը հրչակել էր հանրապետության տարածքում ինքնուրույն դատական իշխանության իրականացման մասին, այնուհանդերձ պատերազմի տարիներին ԼՂՀ դատական իշխանության վերաբերյալ այդպես էլ որևէ օրենք չընդունվեց, որի պատճառով բավական ակնհայտ մնաց գործադիրի կողմից դատական իշխանության վրա ներգործելու դեռևս Խորհրդային Միությունից մնացած ժառանգությունը: Այսպես, ԼՂՀ արդարադատության պետական վարչության Կանոնադրության համաձայն՝ վարչությունը պետության և ժողովրդի առջև պատասխանատվություն է կրում հանրապետության դատական մարմինների կազմակերպման վիճակի համար, ապահովում շրջանային և քաղաքային ժողովադատարանների, գինվորական դատարանի, ինչպես նաև փաստաբանների աշխատանքը, կարգապահական պատասխանատվության ենթարկում շրջբաղդողատավորներին և այլը³¹: Դեռ ավելին, ՊՊԿ-ի անդամ, ներքին գործերի նախարար Ա.Իսագոլովին հանձնարարված էր համակարգել դատարանների և իրավապահ մարմինների աշխատանքը:

Արդեն 1994թ. գարնանը Լեռնային Ղարաբաղի տարածքի մեջ մասը գտնվում էր արցախյան բանակի վերահսկողության տակ: Ղակառակորդը ետ էր շարտվել Արցախի Յանրապետության սահմաններից և պարտության բարդույթից ձերբազատվելու համար հաշտություն էր խնդրում: Մեկնած ձեռքը ընդունվեց, և հակամարտող կողմերի միջև մայիսի 12-ից ռազմական գործողությունները դադարեցվեցին:

Երկիրն անցավ խաղաղ ստեղծագործական աշխատանքի: Խորհրդարանի նախագահության 1994թ. մայիսի 24-ի և սեպտեմբերի 13-ի հրամանագրերով «Ռազմական դրության մասին» 1992թ. օգոստոսի

13-ի հրամանագրում կատարվեցին մի շարք փոփոխություններ, վերականգնվեց ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քրեական գործերի ընդդատությունը և դատավարության իրականացումը: Վերացվեց Զինդատարանի դատավճիռների՝ վճռաբեկության կարգով բողոքարկման սահմանափակումը, Խորհրդարանը հաստատեց «ԼՂՀ դատախազության, արդարադատության պետական վարչության, դատարանների, պետական նոտարիատի աշխատողներին դասային կոչումներ շնորհելու, ինչպես նաև հանրապետության դատարանների դատավորների համար որակավորման դասեր սահմանելու և դրանց համապատասխան դրամական հավելավճարներ տալու մասին» Կանոնադրությունը, Գերագույն դատարանի դատավորներին շնորհվեցին որակավորման համապատասխան դասեր, իսկ ՊՊԿ-ի որոշմանը ԼՂՀ դատարանների դատավորների համար սահմանվեցին դրամական հավելավճարների դրույքաչափերը: Կառավարման ավելի ժողովրդավարական ձևի անցնելու նպատակով 1994թ. դեկտեմբերի 22-ին ընդունվեցին օրենքներ Ենոնային Դարաբաղի Հանրապետության Նախագահի և Կառավարության մասին: Երկրում նոցվեց նախագահական կառավարում, ՊՊԿ-ի Նախագահ Ռոբերտ Քոչարյանն Ազգային ժողովի կողմից 2 տարի ժամկետով ընտրվեց Հանրապետության Նախագահ:

Ավելորդ չէ նշել, որ մինչև ՊՊԿ-ի ստեղծումը, ԼՂՀ-ում գործում էր կառավարման պառլամենտական ձևը, սակայն այդ մարմնի ստեղծումով փաստորեն սահմանականվեցին օրենսդիր ու գործադիր իշխանությունների լիազորությունները՝ գրեթե ամբողջությամբ անցնելով ՊՊԿ-ի իրավասությանը: Դա նշանակում էր նաև օրիասական պահին պատասխանատվություն ստանձնել ժողովորդի ու երկրի ճակատագրի և ապագայի համար:

Կառավարման պառլամենտական համակարգից դեպի ավտորիտար համակարգի անցման շրջանը մեծ հաշվով էական դեր խաղաց երկրի պետականության կերտման գործում: Նշված ռեժիմը համապատասխանում էր ստեղծված ճգնաժամային իրադրությանը և լրիվությամբ արդարացրեց իրեն:

Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ արցախյան գոյամարտի տարիներին պետական շինարարության և պատժիչ քաղաքականության հարցերում երկրի իշխանությունները հիմնականում աչքի առաջ ունեցել են Խորհրդային Միության՝ Հայենական մեծ պատերազմի առաջին տարիների փորձը և ձեռնարկած քայլերը:

**ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՂԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ
ՇԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1995-2005թ.)**

Ներկան անցյալի զավակն է
և ապագայի մայրը:
Մ. Նալբանդյան

Պատվով դուրս գալով պատերազմի դաշտից՝ զինադադարից հետո Արցախի Յանրապետությունը խնդիր դրեց հաղթել նաև սոցիալ-տնտեսական ճակատում: Առաջնահերթ պլան մղվեցին նաև պետական իշխանության կատարելագործման հարցերը: Այն ընդգրկեց պետական իշխանության բոլոր թևերը և տեղական ինքնակառավարման ոլորտը: Ընդունվեցին բազմաթիվ օրենքներ, որոնք կանոնակարգում են երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և հոգևոր մշակութային բնագավառներում ծագած հարաբերությունները¹: Խորհրդարանի կողմից 1994թ. դեկտեմբերի 22-ին «Լեռնային Ղարաբաղի Յանրապետության Նախագահի մասին» օրենքն ընդունվելուց և երկու տարի ժամկետով երկրի Նախագահ ընտրվելուց հետո որոշակիորեն հստակեցվեցին օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև եղած լիազորությունները: Յանրապետության Նախագահի 1995թ. հունվարի 10-ի հրամանագրով հաստատվեց կառավարության կառուցվածքը և կազմը, որի ուժով պաշտպանության պետական կոմիտեն ինքնաբերաբար դադարեց գոյություն ունենալուց²:

Յանրապետության Նախագահի մասին ԼՂՀ օրենքի համաձայն՝ Նախագահը հանդիսանում է հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը, գլխավորում է գործադիր իշխանությունը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականուն գործունեությունը: Յանրապետության Նախագահը Խորհրդարանին թեկնածուներ է ներկայացնում ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահի, նրա տեղակալների, Գերագույն դատարանի անդամների, գլխավոր պետական արքիտրի պաշտոններում ընտրվելու համար, նշանակում և ազատում է ԼՂՀ գլխավոր դատախազին և նրա տեղակալներին: Յանրապետության Նախագահի՝ ԼՂՀ Սահմանադրությանը և օրենքներին հակասող հրամանագրերն ու կարգադրությունները կարող են թեկանվել Խորհրդարանի կողմից՝ Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա³:

Հետպատերազմյան տարիներին վերացվեցին ռազմական դրությա-

նը վերաբերվող մի շարք նորմատիվ ակտեր, մյուս կողմից էլ ԼՂՀ դատարանների և իրավապահ մարմինների գործունեությունը կարգավորվեց նոր ընդունված օրենքներով։ Դանուապետության Նախագահի որոշումներով և հրամանագրերով արգելվեց ռազմական դրության ժամանակ ԼՂՀ նախկին քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի (դատավճռի կատարման հետաձգում) կիրառումն այն գինծառայողների և զինապարտների նկատմամբ, ովքեր ազատազրկման էին դատապարտվել նույն օրենսգրքի 49-րդ հոդվածով թվարկված հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնց կատարման համար օրենքով նախատեսված էր մահապատիժ⁴։ Մինչև համապատասխան օրենսդրական բազայի ստեղծումը՝ 1995թ. ապրիլի 1-ից կասեցվեց ԼՂՀ պետական արբիտրաժի գործունեությունը։ Վերջինիս ենթակա տնտեսական վեճերի քննությունը հանձնվեց Գերագույն դատարանի ընդդատությանը։ Այդ վեճերի լուծումը պետք է իրականացվեր քաղաքացիական դատավարության կարգով⁵։ Ուժը կորցրած համարվեց Խորհրդարանի 1992թ. հունիսի 6-ին ընդունած «Զինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» օրենքը⁶, որից ելնելով դատաքննչական պրակտիկայում սկսեցին դեկավարվել ԼՂՀ քրեական օրենսգրքով։ Ուազմական դրության մասին» ԼՂՀ օրենքի ընդունումով ուժը կորցրած ճանաչվեց Խորհրդարանի նախագահության 1992թ. օգոստոսի 12-ի՝ «ԼՂՀ-ում ռազմական դրություն նտցնելու մասին» հրամանագիրը։ Նշված օրենքով մեղմացվեցին վարչական ազատազրկման ձևով նշանակվող պատժամիջոցները՝ մինչև մեկ ամիս ժամանակով ռազմական դրության ռեժիմն իրականացնող մարմինների կողմից և մինչև երկու ամիս ժամանակով՝ դատական կարգով⁷։ Սահմանադրության ներման խնդրագրերի քննարկման կարգը, որի համաձայն՝ ներման դիմած անձանց վերաբերյալ Գերագույն դատարանի նախագահի և գլխավոր դատախազի եզրակացությունը պարտադիր էին⁸։

Խորհրդարանի կողմից սահմանվեցին դատարաններում ժողովրդական ատենակալների կողմից իրենց պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի, դրանց հատուցման կարգի ու չափերի վերաբերյալ հարցերը։ ԼՂՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով, որի համաձայն՝ դատավճռի կատարման հետաձգում չեղ թույլատրվում ԼՂՀ դատարանների կողմից երեք տարուց ավել ժամկետով ազատազրկման դատապարտված և ԼՂՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածում թվարկված անձանց նկատմամբ⁹։

Քաղաքացիներին պետական բնակչությունի բնակելի տարածությունից օգտվելու իրավունքից զրկելու և անձնական սեփականության

իրավունքով բնակելի տների առգրավման գործում հնարավոր սխալ-ները կանխելու հարցերն առավել բազմակողմանիորեն և մանրազն-նին քննության առնելու նպատակով, Խորհրդարանի 1995թ. հունիսի 16-ի որոշմամբ, ուժը կորցրած ճանաչվեց «ԼՂՀ սահմաններից դուրս բնակության մեկնած քաղաքացիներին պատկանող պետական բնակ-ֆոնդի տների, լրյալ բնակելի տների և անձնական սեփականության իրավունքով բնակելի տների օգտագործման կարգի նասին» Խորհրդարանի նախագահության 1994թ. մարտի 15-ի հրամանագրի 3-րդ հոդվածը /գործադրի իշխանության որոշման հիման վրա բնակարա-նից տվյալ անձի օգտվելու իրավունքը կորցրած ճանաչելու նասին/ և վերականգնվեց բնակարանային օրենսդրությամբ սահմանված կար-գը¹⁰: Խորհրդարանի մեկ այլ որոշմամբ, հաշվի առնելով, որ 1994թ. մայիսի 12-ից հանրապետության տարածքում դադարեցվել էին նար-տական գործողությունները և որ դատավճռի կատարման հետաձգ-մամբ ազատազրկման դատապարտված գինծառայողների և զինա-պարտների գգալի մասն իրենց դրսւորել են որպես հայրենիքի տոկուն պաշտպաններ՝ պատժի հետագա կոռումից ազատվել են, իսկ նոյն կարգի անձինք, ովքեր զոհվել էին ԼՂՀ մարտական գործողություննե-րի ընթացքում կամ մահացել ստացած վնասվածքներից, կամ ընդհա-նուր հիվանդություններից, ինչպես ԼՂՀ պաշտպանության բանակուն ծառայելու ժամանակ, այնպես էլ հարգելի պատճառներով գորացրվե-լուց հետո համարվել են դատվածություն չունեցող¹¹:

Արխիվային տվյալները վկայում են, որ Գերագույն դատարանի կող-մից 1995թ. փետրվարի 9-ին «ԼՂՀ դատական իշխանության» նասին օրինագիծ էր ներկայացվել երկրի նախագահին և Խորհրդարանի ղե-կավարին: Չնայած օրինագիծ քննարկման վերաբերյալ տվյալներ չկան, բայց քանի որ այն վերաբերվում է խնդրո առարկային՝ սխալ չի լինի մի քանի խոսքով նշել օրինագիծ էլության և բնորոշ գծերի նասին:

Օրինագիծը կազմված էր 14 գլուխներից՝ իր մեջ ներառելով 93 հոդվածներ: Ըստ օրինագիծ՝ ԼՂՀ-ում դատական իշխանությունը կոչ-ված է իրականացնելու հանրապետության իրավակարգի և օրինակա-նության, օրենսդրության, բոլոր ազգերի, անհատի և սոցիալական խմ-բերի օրենքով երաշխավորված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը: Դատական իշխանության գործունե-ության հիմնական ուղղությունները պետք է հանդիսանային արդարա-դատության իրականացումը և իրավախախտումների նախազգուշա-ցումն ու կանխարգելումը: Օրինագիծ համաձայն՝ ԼՂՀ դատական հա-մակարգը կազմված է լինելու Գերագույն դատարանից, շրջանային

(քաղաքային) դատարաններից և զինվորական դատարանից:

Գերագույն դատարանի կազմում պետք է գործեին վեց դատական ատյաններ՝ Գերագույն դատարանի ալենումը, Գերագույն դատարանի սահմանադրական հսկողության ատյանը, Գերագույն դատարանի նախագահությունը, Գերագույն դատարանի վճռաբեկ դատական ատյանը, Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով դատական ատյանը և Գերագույն դատարանի քրեական գործերով դատական ատյանը: Դատավորների ընտրության հետևյալ կարգն էր սահմանված՝ Գերագույն դատարանի նախագահը, նրա տեղակալները և Գերագույն դատարանի անդամները պետք է ընտրվեին Խորհրդարանի կողմից՝ տասը տարի ժամկետով՝ ԼՂՅ Նախագահի ներկայացմանք, իսկ մյուս դատարանների դատավորները՝ Խորհրդարանի կողմից՝ նույնպես տասը տարի ժամկետով: Ընդ որում, շրջանային (քաղաքային) և զինվորական դատարանների ընտրությունների համար բարդացված կարգ էր սահմանված: Նշված դատավորների թեկնածուներ կարող էին առաջադրել աշխատավորական կոլեկտիվները, հասարակական կազմակերպությունները և ԼՂՅ պաշտպանության նախարարության գորամասերը: Առաջադրված թեկնածուների ընտրության հարցը պետք է որոշեր Խորհրդարանի կողմից ստեղծված ժամանակավոր հանձնաժողովը, որի մեջ պետք է մտնեին երեք պատգամավորներ, Գերագույն դատարանի նախագահը և ԼՂՅ արդարադատության պետվարչության պետը:

Օրինագծով նախատեսվում էր հանրապետությունում մտցնել երովյալ ատենակալների ինստիտուտը, որը պետք է քններ այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնց համար օրենքով նախատեսված էր մահապատիժ կամ ազատազրկում տասը տարի և ավելի ժամկետով, ինչպես նաև առավել բարդ քաղաքացիական գործերը:

Դժվար չէ կրակել, որ «ԼՂՅ դատական իշխանության նասին» օրինագիծը դատավարական օրենսգրքերից և օրենքներից տարբեր երանգներով և խմբագրական թերություններով կատարված մի ծաղկաքաղ էր՝ պատվաստած Հայկական ԽՍՀ «Դատարանակազմության նասին» 1981թ. օրենքին: Ուստի, բնական է, որ այն երկրի դեկավարության հավանությանը չարժանացավ և տեղ գտավ արիստվային պահոցներում¹²:

Բոլոր դեպքերում՝ զինադադարից հետո, իրավապահ մարմինների գործունեության հարցերը գտնվում էին երկրի դեկավարության նշտական ուշադրության ներքո: Այդ է վկայում, որ իրավապահ մարմինների գործունեությունը ստուգելու նպատակով ԼՂՅ Նախագահի ստեղծված հանձնաժողովը 1995թ. ընթացքում 2 անգամ ստուգումներ է կատարել ԼՂՅ դատարաններում և իրավապահ մարմիններում, որոնց

արդյունքները քննարկվել են ԼՂՀ Նախագահին առջնքեր Անվտանգության խորհրդի նիստերում: Ուշագրավ է նաև, որ 1995թ. ընդունված «ԼՂՀ դատախազության մասին» նոր օրենքն ավելի կատարյալ էր իր նախորդ՝ 1993թ. նույնանուն օրենքի համեմատ: Նոր օրենքում հստակ նշված էին դատախազության խնդիրները, գործունեության հիմնական ուղղությունները, դատախազության մարմինների համակարգը, դրանց կազմակերպումը և այլն:

Խորհրդարանի կողմից «Դատական իշխանության մասին» ԼՂՀ օրենքն (այսուհետ՝ Օրենք) ընդունվեց 1996թ. մայիսի 6-ին: Ասել, թե Օրենքն արմատական բարեփոխումներ կատարեց պետական իշխանության երրորդ ճյուղի համար, ճիշտ չեղ լինի, քանի որ Օրենքը միայն արձանագրեց գործնականորեն ստեղծված դատական համակարգը և քիչ թե շատ լավագույն տարրերակ մշակեց Գերագույն դատարանի տարրեր ատյանների դատական գործառությունները դատավորների ավելի քիչ քանակով իրականացնելու համար:

Օրենքն արձանագրեց, որ հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները, իսկ դատական իշխանությունը, որն անկախ և ինքնուրույն է, իրականացվում է քրեական, քաղաքացիական և վարչական դատավարությունների միջոցով: Հանրապետությունում սահմանվում էր երկաստիճան դատական համակարգ՝ Գերագույն դատարան և շրջանային (քաղաքային) դատարաններ ու նրանց հավասարեցված Զինդատարան:

Գերագույն դատարանի նախագահը, նրա տեղակալը և դատարանի երեք անդամները Հանրապետության Նախագահի առաջադրմանը ընտրվել են Խորհրդարանի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Խորհրդարանի կողմից ԼՂՀ արդարադատության պետվարչության պետի ներկայացնամբ նույն ժամկետում ընտրվել են շրջանային (քաղաքային) դատարանների և Զինդատարանի դատավորները: Զինդատարանի դատավորների նշանակման դեպքում ԼՂՀ պաշտպանության նախարարության հանձնաժողովունը պարտադիր էր: Սահմանված էր նաև տարիքային ցենզ և աշխատանքային ստաժ: Գերագույն դատարանի դատավորներ կարող էին ընտրվել երեսուն տարին լրացած ԼՂՀ քաղաքացիները, որոնք ունեին բարձրագույն իրավաբանական կրթություն և հինգ տարուց ոչ պակաս մասնագիտական ստաժ: Ստորադաս դատարանների դատավորների համար տարիքային ցենզը կազմում էր քսանինգ տարի, իսկ աշխատանքային ստաժը՝ երեք տարի:

Խորհրդարանի 1996թ. մայիսի 21-ի և հունիսի 3-ի որոշումներով Գերագույն դատարանի նախագահ ընտրվեց Նիկոլայ Դադայանը, նախագահի տեղակալ՝ Վլադիմիր Շովեսկիյանը, դատարանի անդամներ՝ Սու-

թեն Ալեքսանյանը, Ալեքսանդր Յարությունյանը և Զոյա Օհանյանը¹³:

Գերագույն դատարանը կազմված էր երեք ատյաններից՝ դատավորների ընդիհանուր ժողով (այլնում), դատական պալատ (նախագահություն) և դատական կոլեգիա:

Բարձրագույն դատական ատյանը դատավորների ընդիհանուր ժողովն էր, որի կազմի մեջ մտնում էին հանրապետության բոլոր դատավորները: Պլենումի նիստերին մասնակցում էին հանրապետության գլխավոր դատախազը, արդարադատության պետական վարչության պետը և փաստաբանների կոլեգիայի նախագահության նախագահը: Պլենումի աշխատանքներին գլխավոր դատախազի մասնակցությունը պարտադիր էր:

Պլենումը գումարվում էր ոչ ուշ, քան եռամսյակը մեկ ամգամ: Այն իրավագոր էր միայն հանրապետության դատավորների երկու երրորդի մասնակցության դեպքում: Պլենումի որոշումներն ընդունվում էին քաց քվեարկությամբ՝ ժողովի աշխատանքին մասնակցող դատավորների ձայնների մեջամասնությամբ: Պլենումի որոշումները ստորագրվել են Գերագույն դատարանի նախագահի և պլենումի քարտուղարի կողմից:

Պլենումն ուներ որոշակի լիազորություններ: Օրենքով սահմանված կարգով որոշում էր իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունված նորմատիվ ակտերի համապատասխանությունը ԼՂՀ օրենքներին: Լուծում էր հանրաքեի, Հանրապետության Նախագահի և Խորհրդարանի պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը: Որոշում էր կայացնում քաղաքական կուսակցությունների և հասարակական միավորումների գործունեությունը կասեցնելու վերաբերյալ: Կազողական կարգով քննության էր առնում Գերագույն դատարանի նախագահի և գլխավոր դատախազի բողոքները՝ բոլոր ստորադաս դատական ատյանների վճիռների, դատավճիռների և որոշումների դեմ բերված գործերով: Նեկավար պարզաբնումներ էր տական ԼՂՀ օրենսդրության կիրառման վերաբերյալ: Քննարկում էր դատավորների, դատական կոլեգիայի և դատական պալատի աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունները, դատական պրակտիկայի և դատական վիճակագրության ընդիհանրացման նյութերը: Պլենումն իր գործունեության 10 տարիների ընթացքում ԼՂՀ օրենսդրության կիրառման վերաբերյալ տվել է ընդամենը երեք դեկավար պարզաբնումներ, որոնցից առաջինը եղել է պլենումի 1995թ. հունիսի 5-ի որոշումը՝ դիտավորյալ սպանությունների վերաբերյալ դատական պրակտիկայի մասին, երկրորդը՝ 1997թ. փետրվարի 5-ին՝ ԼՂՀ դատարանների կողմից ԼՂՀ քենական օրենսգրքի 40-րդ հոդվածի կիրառման դատական պրակտիկայի մասին և 1998թ. մարտի 4-ին՝

Զինդատարանի կողմից պատժի ընդհանուր սկզբունքների վերաբերյալ օրենսդրության կիրաօնան դատական պրակտիկայի մասին¹⁴:

Գերագույն դատարանի դատական պալատը կազմավորվում և գործում էր իինգ դատավորների կազմով, որի մեջ էին մտնում Գերագույն դատարանի նախագահը, նրա տեղակալը և դատարանի երեք անդամները: Նույն գործը դատական պալատում վերստին քննության առնելու դեպքում, Գերագույն դատարանի նախագահն իրավունք ուներ գործի մեջ ներգրավելու այլ դատավորների կամ գործի քննարկումը տեղափոխելու դատավորների ընդհանուր ժողովի քննարկմանը: Դատական պալատն իր լիազորությունների սահմաններում հսկողական կարգով և նոր երևան եկած հանգամանքներով վերանայում էր օրինական ուժի մեջ մտած դատավճիռները, վճիռները և որոշումները: Վճռաբեկության կարգով երեք դատավորի կազմով քննության էր առնում Գերագույն դատարանի կողմից առաջին ատյանի կարգով կայացված դատավճիռները և վճիռները:

Գերագույն դատարանի դատական կոլեգիայի կազմը՝ կոմկրետ քրեական և քաղաքացիական գործեր քննելու համար, կազմավորվում էր Գերագույն դատարանի նախագահի կողմից: Դատական կոլեգիան օժտված էր առաջին ատյանի, վճռաբեկության և հսկողական կարգով, ինչպես նաև նոր երևան եկած հանգամանքներով գործեր քննելու լիազորություններով: Դատական կոլեգիան առաջին ատյանի կարգով գործերը քննում էր մեկ դատավորի և երկու ժողովորդական ատենակալների կազմով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ Գերագույն դատարանի դատավորի կողմից՝ միանձնյա: Դատական կոլեգիայի քաղաքացիական գործերով առաջին ատյանի կարգով կայացված վճիռները վերջնական էին և գանգատարկման ոչ ենթակա: Դրանք կարող էին բողոքարկվել միայն հսկողական կարգով, իսկ քրեական գործերով կայացված դատավճիռները կարող էին վճռաբեկության կարգով բողոքարկվել Գերագույն դատարանի դատական պալատին: Դատական կոլեգիան ստորադաս դատարանների գործերը վճռաբեկության կարգով և նոր երևան եկած հանգամանքներով քննում էր երեք դատավորների կազմով:

Գերագույն դատարանի նախագահն օժտված էր օրենսդրական նախաձեռնության իրավունքով: Կարծում եմ, որ դա մի կարծ ճանապարհ էր՝ նորմատիվ ակտերում առկա թերությունները և բացթողումները վերացնելու նպատակով օրենսդիր մարմին մտնելու համար:

Գերագույն դատարանի և շրջանային (քաղաքային) դատարանների ժողովրդական ատենակալները ևս ընտրվում էին իինգ տարի ժամկետով՝ նրանց քնակության կամ աշխատանքի վայրի քաղաքացինե-

րի ընդհանուր ժողովում, իսկ Զինդատարանի ժողովրդական ատենակալները՝ զորամասերի ընդհանուր ժողովում՝ երկու տարի ժամկետով:

Ինչպես Գերագույն դատարանի, այնպես էլ ստորադաս դատարանների ժողովրդական ատենակալները մտնում էին տվյալ դատարանի կազմի մեջ, արդարադատություն իրականացնելիս օժոված էին դատավորի բոլոր լիազորություններով: Նրանց համար ևս սահմանված էր տարիքային ցենզ՝ Գերագույն դատարանի պարագայում՝ առնվազն երեսուն տարեկան և ոչ պակաս հինգ տարվա աշխատանքային ստաժ, շրջբաղդատարանի դեպքում՝ առնվազն քսանիհինգ տարեկան և ոչ պակաս երեք տարվա աշխատանքային ստաժ, Զինդատարանի դեպքում՝ առնվազն տասնութ տարեկան և իսկական գինվորական ծառայության մեջ գտնվելը:

Ժողովրդական ատենակալները դատարանում իրենց պարտականությունները կատարելու ժամանակահատվածի համար վարձատրվում էին դատավորի վարձատրությանը համահավասար:

Համաձայն Օրենքի՝ դատական համակարգի ստորին օյակը կազմում էին շրջանային (քաղաքային) դատարանները և Զինդատարանը: 1996թ. դրությամբ հանրապետությունում գործել են Ստեփանակերտի քաղդատարանը՝ երկու դատավորների կազմով, որոնցից մեկը դատարանի նախագահն էր, Մարտակերտի, Ասկերանի, Սարտունու, Շադրութի և Շուշիի շրջդատարանները՝ յուրաքանչյուրը մեկ դատավորի կազմով, ով և դատարանի նախագահն է հանդիսացել:

Շրջանային (քաղաքային) դատարանները մեկ դատավորի և երկու ժողովրդական ատենակալների կազմով, ինչպես նաև դատավորը, միանձնյա քննել են բոլոր քրեական և քաղաքացիական գործերը, բացի այն գործերից, որոնք ընդդատյա էին Գերագույն դատարանին և Զինդատարանին:

Շրջանային (քաղաքային) դատավորը միանձնյա քննել է վարչական իրավախախտումների և կատարողական վարույթների վերաբերյալ գործերը, ինչպես նաև ԼՂԴ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում քրեական և քաղաքացիական գործերը:

Խորհրդարանի որոշմանը «ԼՂԴ գինվորական դատարանի մասին» Կանոնադրությունն ընդունվել է որպես հավելված «Դատական իշխանության մասին» ԼՂԴ օրենքի¹⁵: Կանոնադրության մեջ արձանագրված էր, որ արդարադատության իրականացման սկզբունքները, Զինդատարանի դատավորների և ժողովրդական ատենակալների ընտրության կարգը, նրանց կարգավիճակը, դատարանի նախագահի լիազորությունների շրջանակը և մի շարք այլ հարցեր կարգավորվում են վերոնշյալ օրենքով: Կանոնադրությամբ Զինդատարանին ընդդատյա են

Եղել գինծառայողների կամ զինապարտների կողմից կայացրած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը (բացի Գերագույն դատարանին ընդդատյա գործերից), ինչպես նաև զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերը, ազգային անվտանգության մարմինների գինծառայողների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը, ներքին գործերի նախարարության ներքին ծառայության և ներքին զորքերի աշխատակիցների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերը, ուղղիչ-աշխատանքային հիմնարկների հրամանատարական կազմի կողմից սահմանված կարգով ծառայությունը կատարելու դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերը և այն խմբակային հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնցում հանցագործներից թեկուզ մեկը զինծառայող է հանդիսացել:

Զինդատարանը քրեական գործերի հետ համատեղ քննել է նաև վճասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական գործերը:

Գնդապետի և ավելի բարձր աստիճան ունեցող, ինչպես նաև նման աստիճանների առկայություն պահանջող պաշտոն գրադեցրած անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերն ընդդատյա են եղել Գերագույն դատարանին:

Այսպիսով, ԼՂՀ դատական իշխանության մասին 1996թ. օրենքով նախկին դատական համակարգից մնացած ժառանգությունը հարմարեցվեց հանրապետությունում իրականացվող պետական շինարարության պահանջներին: Մնացին և շարունակեցին գործել նախկին ինքնավար մարզի շրջանային (քաղաքային) դատարանները, Գերագույն դատարանի գործառույթները հանապատասխանեցվեցին Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի գործառույթներին, ամբողջ դատական համակարգը փաստացի մնաց Գերագույն դատարանի նախագահի վերահսկողության ներքո, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործառույթները թողնվեցին դատական կատարածուների վրա և այլն:

Չնայած Խորհրդարանի նախագահության 1993թ. դեկտեմբերի 3-ի որոշմանք նորաստեղծ հանրապետության կազմում ստեղծվեց Քաշաթաղի շրջանը և ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեին հանձնարարվեց աշխատանքներ իրականացնել շրջանի գործադիր իշխանությունների ձևավորման համար¹⁶, սակայն քաղաքական նկատառումներով շրջանի վարչական ապարատը կազմավորվեց Հայաստանի Հանրապետության դեկավարության կողմից: Այդ համատեքստում ներդինանդ Սահակյանը 1996թ. փետրվարի 22-ին նշանակվեց Քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի դատավոր: Դրանով պետք է բա-

ցատրել նաև, որ դատարանն իր գործունեության սկզբնական շրջանում ղեկավարվում էր ՀՀ օրենսդրությանը, բայց դատական ակտերը կայացնում էր հանուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության:

Փաստորեն, Քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանը, դատական ակտերը կայացնելով Արցախի Հանրապետության անունից, վերջինիս դատական համակարգի մեջ չէր մտնում: Դեռ ավելին, դատական ակտերի բողոքարկման համար որպես վերադաս ատյաններ մատնանշվում էին ՀՀ դատարանները: Այդ հարցում պարզություն չմտցվեց նաև ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին 1998թ. օրենքն ընդունվելուց հետո, որտեղ հստակ նշված էր, որ Քաշաթաղի շրջանը՝ Բերձոր շրջկենտրոնով, մտնում է Արցախի Հանրապետության տարածքի մեջ: Հարցը կարգավորվեց միայն ՀՀ և ԼՂՀ կառավարությունների միջև 2001թ. օգոստոսի 30-ին ստորագրված համագործակցության մասին պայմանագրով, որի շրջանակներում Քաշաթաղի շրջանի փաստացի կառավարման լիազորությունները վերապահվեցին Արցախի Հանրապետությանը և հանձնարարություն տրվեց կարճ ժամկետում իրականացնել շրջանի տարածքային կառավարման բոլոր մարմինների և կառույցների ենթակայությունը ԼՂՀ համապատասխան նախարարություններին և գերատեսչություններին¹⁷: Նշված միջկառավարական պայմանագրի կնքմանը՝ Քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի վերաբերյալ ԼՂՀ-ում ընդունված միակ իրավական փաստաթուղթը՝ ԼՂՀ արդարադատության պետական վարչության պետի 2001թ. նոյեմբերի 9-ի թիվ 153 հրամանն է, որով շրջանի դատարանը համարվել է ընդգրկված ԼՂՀ դատական համակարգում¹⁸: Դրանով իսկ կողմերը և դատավարության մասնակիցները հնարավորություն ծեռք բերեցին Քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի դատական ակտերը բողոքարկելու և գանգատարկելու գերագույն դատարանին:

Պատերազմի արհավիրքներից նոր դուրս եկած երիտասարդ հանրապետության պետական շինարարության հիմնախնդիրներից մեկն էլ ԼՂՀ Սահմանադրություն ունենալու հարցն էր: Այդ կապակցությամբ խորհրդարանի 1996թ. ապրիլի 9-ի որոշմանը ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով՝ Հանրապետության նախագահի գլխավորությամբ¹⁹: Չնայած մի շարք ծանրակշիռ հանգամանքների՝ ուժով Սահմանադրության շուտափույթը ընդունումը հնարավոր չէր, և այն ընդունվեց շուրջ տասը տարի անց, բայց այդ ժամանակահատվածում ընդունվեց սահմանադրական օրենքների մի փաթեթ, որը կարելի է ասել, ժամանակավորապես փոխարինեց Սահմանադրությանը:

Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության ընդունմանը Երկրի իշխանությունները ծեռնամուխ եղան դատական համակարգի արմատական բարեփոխումների իրականացմանը: Ընդունվեց դատադիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրության մի անբողջ փաթեթ, որը մինչ այդ տարրեր Երկրների գիտահետազոտական իրավական ատյաններում ենթարկվել էր միջազգային իրավական փորձաքննության և արժանացել հավանության: Սահմանադրական նորմերի պահանջներով 1999թ. հունվարից ՀՀ-ում ստեղծվեց և սկսեց գործել Եռաստիճան դատական համակարգ:

ԼՂԴ-ն պատերազմից հետո անմիջապես անցավ շուկայական տնտեսության ու նոր տնտեսական, սոցիալական և քաղաքական հարաբերությունների խթանման ու ամրապնդմանը: Երկրի օրենսդրությամբ երաշխավորված էին սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը: Խորհրդային օրենսդրությունը՝ կառուցված լինելով մարքս-լենինյան գաղափարախոսության և Երկրի տնտեսական հիմքը կազմող հանրային սեփականության սկզբունքների վրա, բնականարար, չեր կարող կարգավորել նոր հասարակական հարաբերությունները: Իրենց հերթին, նոր հարաբերություններն էլ հանգեցնում են համընդհանուր ճանաչում գտած իրավական նոր սկզբունքների արմատավորման՝ կողմերի մրցակցություն, անձի և սեփականության անձեռնխելիություն, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիություն, խախտված իրավունքի վերականգնման ապահովում, դրանց դատական պաշտպանություն և այլն: Նման պայմաններում, հիմնականում խորհրդային Միությունից ժառանգած օրենքներն ակնհայտորեն խոչընդոտում էին նոր համակարգի ձևավորմանը և հաստատմանը: Հանրապետությունն այլևս չեր կարող ղեկավարվել իին օրենքներով և օրենսգրքերով: Ուստի Արցախում դատադիրավական բարեփոխումների առաջին փուլը պարտադրված էր ժամանակի հրամայականով:

Փաստացի իրավիճակը հուշում էր, որ, Ելելով այն հանգամանքից, որ Արցախը և Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով միևնույն օրենսդրական, տնտեսական, պաշտպանական, ֆինանսավարկային և այլ հարթությունների վրա, ԼՂԴ-ում իրականացվող դատադիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրության հենքը եղել և պետք է մնա ՀՀ օրենսդրությունը: Այսպիսի մոտեցումն արդյունավետ է նաև այն պատճառով, որ հնարավորություն է ստեղծվում օգտագործելու ՀՀ օրենսգրքերը և այլ իրավական ակտերը՝ մինչև սեփա-

կանը մշակելն ու ընդունելը: Արցախի օրենսդիրներն այդ նրբությունը միշտ էլ աչքի առաջ են ունեցել և ներկայունս էլ ունեն: Միաժամանակ, իհարկե, կան նաև էական տարբերություններ, որոնց մեծ մասը կապված է Արցախի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդավարական և այլ առանձնահատկությունների հետ: Օրինակ, ռազմաքաղաքական իրավիճակի պարտադրանքով առայսօր մեր հանրապետությունում պահպանվում է ռազմական դրության ռեժիմը, ինչը, բնականաբար, ինքնին որոշակի օրենսդրական տարբերությունների տեղիք է տալիս:

Վերոշարադրյալի հիմնավորմանը 1999-2000թթ. ԼՂԴ-ում ընդունվեց դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրական ակտերի մի անքորչ փաթեթ՝ նիշնորդ դատարանների և նիշնորդ դատավարության, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, դատախազության, փաստաբանական գործունեության, դատարանակազմության, դատավորի կարգավիճակի, դատական մագիստրատուրայի խորհրդի մասին և այլն: Հանրապետության տարածքում կիրարկման մեջ դրվեց 1998թ. ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրը²⁰:

ԼՂԴ-ում դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրական փաթեթը պետք է ուժի մեջ մտներ 2000թ. հունվարի 1-ից, սակայն, կապված հանրապետության Նախագահ Ա. Ղուկասյանի նկատմամբ ահարեկչական ակտ կատարելու հայտնի իրադարձությունների հետ, այն կիրարկման մեջ դրվեց ավելի ուշ: Այդ կապակցությամբ գործող դատավորների ատենակալների լիազորությունները երկարաձգվեցին մինչև նոր դատական համակարգի կազմավորումը²¹:

Խորհրդարանի կողմից 2002թ. փետրվարի 6-ին ընդունված «Դատաիրավական բարեփոխումների անցումային ժամանակաշրջանում Գերագույն և առաջին ատյանի դատարանների գործունեության մասին» ԼՂԴ օրենքի համաձայն՝ Գերագույն և առաջին ատյանի դատարանների դատավորների կողմից պաշտոնը ստանձնելու օրվանից Գերագույն և առաջին ատյանի դատարանները համարվում են կազմավորված, իսկ այդ օրվանից Գերագույն դատարանի նախորդ կազմի անդամների և շրջանային (քաղաքային) դատարանների դատավորների լիազորությունները դադարեցված²²: Խորհրդարանի նույն օրվա որոշումներով Գերագույն դատարանի նախագահ նշանակվեց Վլադիմիր Շովեմովը, դատարանի անդամներ՝ Նիկոլայ Շահայանը, Իրինա Կարապետյանը, Նաիրի Յակոբյանը, Կարեն Ղարայանը, Զոյա Օհանյանը և Շուրա Օհանյանը: Առաջին ատյանի դատարանի նախագահ նշանակ-

վեց Սեյրան Ամիրյանը, դատարանի դատավորներ Արթուր Աբրահամյանը, Արսեն Ամիրջանյանը, Գրետա Արզումանյանը, Կամո Ղահրամանյանը, Արտյուշա Մաղարյանը և Վլատիմիր Ստեփանյանը²³:

Նորանշանակ դատավորներն իրենց պաշտոնները ստանձնեցին փետրվարի 15-ին՝ հանդիսավոր պայմաններում անհատական կարգով՝ Հանրապետության Նախագահի ներկայությամբ տրված երդմանք: Երդման տեքստը սահմանված էր «Դատավորի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքով²⁴:

Խորհրդարանի ընդունած հաջորդ երկու օրենքներով 2002թ. փետրվարի 15-ից հանրապետության տարածքում կիրարկնան նեց դրվեցին 1998թ. ընդունված ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը՝ լրացումներով և փոփոխություններով հանդերձ, դրանք վերանվանելով, համապատասխանաբար, ԼՂՀ քրեական կամ քաղաքացիական դատավարության օրենսգիրը²⁵:

Նոր դատական համակարգն Արցախում սկսեց գործել 2002թ. փետրվարի 15-ից: Այն գործեց մինչև 2008թ. հունիսի 19-ը:

«Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքով սահմանվեց, որ արդարադատությունն իրականացվում է. ա) նարդու և քաղաքացու ազատությունները, իրավունքներն ու օրինական շահերը, պետության և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը շոշափող քաղաքացիական, տնտեսական վեճերի վերաբերյալ գործեր դատական նիստերում քննելու և լուծելու միջոցով, բ) վարչական իրավախախումների վերաբերյալ գործեր քննելու և լուծելու միջոցով, գ) դատական նիստերում հանցագործությունների վերաբերյալ գործեր քննելու, հանցանք կատարած անձանց մեղավոր ճանաչելու, նրանց նկատմամբ օրենքով սահմանված պատիժ նշանակելու, հանցանք կատարած անձանց անպարտ ճանաչելու և արդարացնելու միջոցով:

Համաձայն օրենքի՝ ԼՂՀ դատական համակարգը կազմված էր ԼՂՀ առաջին ատյանի դատարանից և Գերագույն դատարանից: Փաստորեն, երկրում գործում էր առաջին ատյանի մեկ դատարան՝ նախագահի և 6 դատավորների կազմով, որի դատական տիրույթը հանրապետության ողջ տարածքն էր և որն ըստ եռթյան քննում էր բոլոր քաղաքացիական, տնտեսական, քրեական, ինչպես նաև վարչական իրավախախումների վերաբերյալ գործերը:

Այլ էր խնդիրը Գերագույն դատարանի պարագայում: Կազմված լինելով նախագահից և վեց դատավորներից՝ այն արդարադատություն էր իրականացնում վերաբենության կարգով՝ մեկ դատավորի կազմով, և վճռաբեկության կարգով՝ կոլեգիալ, ոչ պակաս, քան երեք դատա-

վորների կազմով: Գերագույն դատարանը նաև սահմանադրական դատարանի լիազորություններ իրականացնող ատյան էր, որի դեպքում գործերը քննում էր կոլեգիալ, բայց ոչ պակաս, քան իհնագ դատավորների կազմով: Այսինքն, Արցախում 2002-2008թթ. գործում էր Երկաստիճան դատական համակարգ, որտեղ վերաբննիչ և վճռաբեկ դատարանների լիազորությունները գուգակցված էին մեկ «տանիքի»՝ Գերագույն դատարանի անվան ներքո:

Ի տարբերություն ՀՀ-ի, որտեղ գործը վերաբննության կարգով քննվում էր երեք դատավորների կազմով՝ Արցախում նշված տարիներին վերաբննությունը տարփում էր մեկ դատավորի կազմով: Իհարկե, այս պարագայում այնքան էլ ճիշտ լուծում չէր մշակվել: Չէ՞ որ միանձնյա որոշումը շատ դեպքերում լինում է միակողմանի, իսկ սխալի հավանականությունը՝ ավելի մեծ:

Եթե 1998-1999թթ. ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը կազմված էր դատարանի նախագահից և երկու պալատներից՝ իրենց նախագահներով, ապա մեր հանրապետության օրենսդիրները Գերագույն դատարանի համար ննան կառույցներ չնախատեսեցին, նկատի ունենալով դատավորների սակավ քանակը: Գործնականում Գերագույն դատարանի նախագահը յուրաքանչյուր գործով, իր մակագրությամբ ստեղծում էր վերաբննիչ և վճռաբեկ ատյաններ ու նշանակում դրանց կազմը: Փաստորեն, դատական ատյանների միջև տարածնատում չկար:

Գերագույն դատարանը, գտնվելով դատական բուրգի գագարին, օժտված էր նաև, ինչպես նշեցինք, սահմանադրական դատարանի լիազորություններով, որոնք իրականացնում էր «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերով՝ մինչև «Սահմանադրական դատարանի մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը: Սահմանադրական վերահսկողության հարցերով 1995-2005թթ. ընթացքում Գերագույն դատարանի կողմից ընթացքավորվել է ընդամենը վեց դիմում:

Արժե նշել որոշակի ուշագրավ մի հանգամանքի մասին ևս: «Դատախազության մասին» 2000թ. ԼՂՀ օրենքի համաձայն՝ հանրապետության տարածքում տեղակայված կոնկրետ կայազորների գինվորական դատախազությունները, որպես կառուցվածքային ստորաբաժնումներ, պետք է մտնեին ԼՂՀ դատախազության մեջ: Մինչդեռ, իրականում, զինծառայողների կողմից կատարված գինվորական հանգագործությունների վերաբերյալ գործերը քննվում էին և մերկայումն էլ քննվում են՝ չպահպանելով «Քրեական դատավարության օրենքի ներգործությունը տարածության վրա» սկզբունքը: Այդ համատեքստում լուծարվեց նաև Զինծառայողների վերաբերյալ բոլոր

քրեական գործերը հանձնվեցին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի քննությանը:

Եվ ապա՝ դատաիրավական բարեփոխումների ընթացքում միանշանակ մոտեցում չկար կալանավորման, բնակարանի խուզարկության թույլտվության, ինչպես նաև նանակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հարցերի վերաբերյալ: «Դատարանակազմության նասին» ԼՂՀ օրենքն այդ լիազորությունները վերապահել էր ԼՂՀ դատախազությանը: Դա այն դեպքում, երբ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածում դրանք հստակորեն նշված էին որպես դատարանի լիազորություններ, որոնք նատանանշված էին նաև քրեական դատավարության օրենսդրության մի շարք սկզբունքներում:

Ըստ երևույթին, այս հարցականների լուծումը ժամանակի խնդիր էր: Եվ այն չուշացավ. այսպես ասած «սանկցիայի» հարցերը 2004թ. հունվարի 1-ից ԼՂՀ դատախազության լիազորություններից հանվեցին, և վերականգնվեց քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգը:

Դետապատերազմյան տարիներին դատաիրավական բարեփոխումների շրջանակներում ՀՀ և ԼՂՀ իրավական դաշտերի տարբերություններից մեկն էլ ԼՂՀ դատական մագիստրատուրայի խորհուրդն էր, որը, ինչ խոսք, շփման եզրեր ուներ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված «Արդարադատության խորհրդի մասին» օրենքի հետ: Սակայն վերջինից այն առանձնանում էր իր կազմով, ձևավորման կարգով ու լիազորությունների շրջանակով: ԼՂՀ դատական մագիստրատուրայի խորհրդի կազմի մեջ մտնում էին Յանրապետության Նախագահի կողմից հիմք տարի ժամկետով նշանակված յոթ անդամներ, որոնցից մեկական ներկայացուցիչ Յանրապետության Նախագահի, Խորհրդարանի և Կառավարության առաջադրմամբ, ապա՝ Գերագույն դատարանի նախագահը և երեք դատավորներ, որոնցից երկուսը առաջին ատյանի դատարանից, մեկը՝ Գերագույն դատարանից: Խորհրդի ոչ դատավոր ներկայացուցիչները, որպես կանոն, պետք է իրավաբանական կրթություն ունենային: Խորհրդի նիստերը, որոնք գումարվում էին ըստ անհրաժեշտության, իրավիրվում էր Գերագույն դատարանի նախագահի կողմից: Խորհրդի նիստերը Յանրապետության Նախագահին առաջարկություններ էր ներկայացնում դատավորներին որակավորման դասեր շնորհելու մասին: Նշված իրավունքից օգտվում էր նաև ԼՂՀ արդարադատության պետվարչության պետը: Դատարանների նախագահների և դատավորների թեկնածությունները խորհրդում կարող էին առաջադ-

րել խորհրդի յուրաքանչյուր անդամ և արդարադատության պետվարչության պետը: Խորհրդի հավանության արժանացած թեկնածությունը ներկայացվում էր Յանրապետության Նախագահին:

Նշված օրենքը նախատեսել էր նաև ինչպես խորհրդի անդամների, նույնպես և դատավորների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, դատավորների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմքերը: Իրավաբանական տեսակետից՝ խորհուրդն ընդունում էր որոշումներ, որոնք Յանրապետության Նախագահն իր առարկություններով կարող էր ետ վերադարձնել:

Կային նաև այլ տարրերություններ:

«Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքով քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի իրավական կարգավիճակը մնաց չկանոնակարգված, այն շարունակեց գործել որպես ինքնուրույն դատարան:

Դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, ԼՂՀ կառավարության 1999թ. օգոստոսի 13-ի թիվ 43 որոշմամբ, ԼՂՀ արդարադատության պետական վարչության համակարգում ստեղծվեց դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն: Որոշումն ուժի մեջ մտավ 1999թ. սեպտեմբերի 1-ից, ըստ այդմ էլ նոյն ժամկետից ԼՂՀ-ում դադարեցվեց շրջանային (քաղաքային) դատարանների դատական կատարածուների գործունեությունը²⁶: Տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությունից հանվեց և ԼՂՀ արդարադատության պետվարչության տնօրինությանը հանձնվեց քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունը:

Կարևոր քայլ հանդիսացավ նաև, խորհրդարանի կողմից «Ոստիկանության մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը (2001թ. նոյեմբերի 30-ին), որով սահմանվեցին «ոստիկանություն» հասկացությունը, նրա խնդիրները և գործունեության սկզբունքները, ոստիկանության իրավունքներն ու պարտականությունները և այլն:

Փաստաբանի ինստիտուտը ԼՂՀ դատաիրավական բարեփոխումներն ապահովող օրենսդրության մի օղակն է: «Փաստաբանական գործունեության մասին» ԼՂՀ օրենքն ընդունվել է 1999թ. հունիսի 12-ին: Այդ գործունեությունն օրենսդրությամբ ճանաչված իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով ու եղանակներով: Յանրապետության տարածքում փաստաբանական գործունեության վերաբերյալ առաջին անգամ ընդունված օրենքը մանրանասն կարգավորում էր փաստաբանի իրավունքները, պարտականությունները, գործունեության արտոնագրու-

մը և երաշխիքները, փաստաբանների միության ստեղծման, գրանցման և լուծարման պայմանները: Ի դեպ, փաստաբանների միության գրանցումն իրականացվում էր Գերագույն դատարանում: Պաշտպանի գործումներության կարևորագույն երաշխիքը կայանում է նրանում, որ նա ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին: Բացի այդ, մրցակցության սկզբունքի ուժով փաստաբանը քրեական դատավարության ընթացքում մեղադրյալի հետ արդեն հանդիս էր գալիս որպես դատավարության հավասար կողմ: Գերագույն դատարանում գրանցված հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանն իրավունք ուներ բողոքարկել օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները: Օրենքի համաձայն, հատուկ պայմանագիր ունեցող փաստաբանը պետք է գրանցված լիներ Գերագույն դատարանում՝ վերջինիս նախագահի հրամանով: Դատուկ պայմանագիրը տրվում էր հինգ տարի ժամկետով: Նոր ընդունված քրեական ու քաղաքացիական դատավարության օրենսգրքերը հատուկ արտոնագիր ունեցող փաստաբաններին վճռաբեկ բողոք բերելու իրավունք էին վերապահում, մի իրավունք, որով օժտված անձանց շրջանակը չափազանց սահմանափակված էր: Այսպես, քաղաքացիական գործերով վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեին միայն գլխավոր դատախազը, նրա տեղակալներն ու հատուկ արտոնագիր ունեցող և Գերագույն դատարանում գրանցված փաստաբանները:

Գերագույն դատարանում 2002-2006թ. գրանցվել են հատուկ արտոնագիր ունեցող երեք փաստաբաններ: Դատուկան պրակտիկան ցույց տվեց, որ հատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների կողմից բերված վճռաբեկ բողոքները շատ հազվադեպ էին քավարարում գործող օրենսդրության պահանջները, որոնց պատճառով չափազանց թույլ էր քաղաքացիներին ցույց տրվող փաստաբանական ծառայության որակը: Այսպես, 2003թ. ընթացքում Գերագույն դատարանում գրանցված փաստաբանների կողմից օրինական ուժի մեջ մտած վճիռների և որոշումների դեմ բերված տասնինգ վճռաբեկ բողոքներից մինչ դատական նիստն սկսելը յոթը հետ է վերցվել, ութը քննարկվել է, որոնցից վեց գործով կայացված դատական ակտերը թողնվել են անփոփոխ, միայն երկու գործով դատական ակտերը բեկանվել և գործի վարույթները կարճվել են:

Դատուկ արտոնագիր ունեցող փաստաբանների ինստիտուտը և վճռաբեկ բողոք բերելու սահմանափակումը գործեց մինչև 2006թ. հունիսը, երբ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխությունների ուժով հատուկ արտոնագիր ունեցող և Գերագույն դատարանում գրանցված փաստաբանները

զրկվեցին օրինական ուժի մեջ մտած վճռների, որոշումների և դատավճրումների դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքից: Նման իրավունքով օժտվեցին բոլոր փաստաբանները:

Դետապատերազմյան տարիներին հնարավորություն ստեղծվեց ավելի խորացնել ԼՂՀ և ՀՀ դատական կառույցների համագործակցությունը: Դատարանների պրակտիկ գործունեության և փորձի փոխանակման նպատակով հաճախակի դարձան ՀՀ սահմանադրական և վճռաբեկ դատարանների ու ԼՂՀ Գերագույն դատարանի պատվիրակությունների փոխադարձ այցելությունները:

Դեռևս 2005թ. հոկտեմբերի 7-ին Ստեփանակերտ քաղաքում ԼՂՀ Գերագույն և ՀՀ վճռաբեկ դատարանների նախագահների կողմից ստորագրվել է համաձայնագիր՝ «Դայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի միջև համագործակցության և իրավական տեղեկատվության փոխանակման մասին»: Համաձայնագրում նշված մի շարք կետեր իրագործվեցին: ԼՂՀ դատավորները, որպես կանոն, յուրաքանչյուր տարի սկսեցին կատարելագործման դասընթացներ անցել ՀՀ վճռաբեկ դատարանին առջնորդեր դատական դպրոցում, իսկ այժմ՝ ՀՀ արդարադատության նախարարությանն առջնորդեր արդարադատության ակադեմիայում:

Արդարադատությունը ցանկացած երկրի հիմնական հենասյուններից մեկն է: Իսկ ժողովրդավարական պետության հիմքերից մեկն էլ դատական իշխանության անկախությունն է:

Ժամանակը ցույց տվեց, որ ԼՂՀ-ում գործող դատական համակարգը լուրջ բարեփոխումների կարիք ունի թե ներպետական, և թե միջազգային իրավունքի տեսանկյունից: Այդ կապակցությամբ ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից 2005թ. դատարանակազմության մասին օրինագիծ մշակվեց, այն արժանացավ երկրի դեկավարության հավանությանը: Ըստ օրինագծի, Արցախի դատական համակարգը պետք է կազմված լիներ չորս առաջին ատյանի դատարաններից, վերաբերնից դատարանից և Գերագույն դատարանից:

Վերաբերնից դատարանին տրվում էր նաև առաջին ատյանի կարգով տնտեսական վեճեր լուծելու լիազորություններ: Օրինագիծը մտցվեց Խորհրդարան, բայց այն Խորհրդարանի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում քննարկելուց հետո, այլ քննարկում չունեցավ, քանի որ արդեն ԼՂՀ Սահմանադրության նախագիծն էր մշակվում, ուստի արմատական և բովանդակային դատարավական բարեփոխումներ կատարելու հարցի պատասխանը պետք է տար 2006թ. ընդունված երկրի մայր օրենքը:

**ԱՐՁԱԿԻ ՍԱՐՄԱՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ**

Salus populi suprema lex (լատ.)
Ժողովրդի բարիքը բարձրագույն օրենքն է:

Գիտության տվյալները վկայում են, որ մարդկային հասարակությունը գոյություն ունի շուրջ 50.000 տարի, պետությունները՝ 5000, իսկ առաջին սահմանադրությունները՝ արդի իմաստով, որպես պետության հիմնական օրենք, 230 տարուց ոչ ավելի: Յայ ժողովուրդը, սկսած ազգերի պատմության արշալույսից, մշտապես բնակվելով իր բնօրբանում՝ հայկական լեռնաշխարհում, մ.թ.ա. XV դարում արդեն ստեղծել էր իր քաղաքական և պետական կազմավորումները, որոնց հենքի վրա ձևավորված հայկական հզոր պետության հյուսիս-արևելյան նահանգներից մեկն էլ Արցախ աշխարհն է հանդիսացել:

Յայոց սահմանադրական մշակույթը գալիս է դարերի խորքերից: Սահմանադրական ազգ լինելու և երկրում սահմանադրական կարգ հաստատելու առաջին պատիվը պատկանում է Յայոց Արևելից կողմանքի քագավոր Վաչագան Բարեպաշտին: Վերջինիս քագավորության օրոք, ինչպես նշեցինք նախընթաց գլուխներում, V դարի վերջում Արցախի Աղվեն վայրում (Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի մոտակայքում) ընդունվել է իրավագիտական մտքի և սահմանադրական մշակույթի մի խոշոր հուշարձան, որը մեզ է հասել VII դարի հայ անվանի պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» գրքի միջոցով:

Ուշագործ պետք է համարել այն, որ մեր երկրամասում ընդունված փաստաթղթի մեջ առաջին անգամ «սահմանադրություն» եզրույթի օգտագործումը, իրավական և քաղաքական առումով փաստաթղթի բովանդակությունը, ընդունման կարգը և եղանակը, վկայում են, թե Արցախ աշխարհում որքան խորն էին արմատավորված արդարադատությունը և արդարամտությունը, օրինականությունը և իրավակարգը:

XVIII դարի 2-րդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժման հիմնական ջահակիրներն էին Արցախի մելիքները և Գանձասարի կաթողիկոսները: Այդ ժամանակահատվածում հասարակական-քաղաքական առումով կարևոր դեր էր խաղում Շնդկաստանի Մադրաս քաղաքական խմբակը, որտեղ մեծահարուստ հայր և որդի Շահամիրյանների տպարանում հրատարակվեցին քաղաքական և իրավական մտքի մի քանի խոշոր աշխատություններ, որոնցից հիշատակելի է «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» (1772թ.)¹ և «Որոգայք փառաց» (1773թ.)² գրքերը: «Որոգայք փառաց»-ի արժեքը հասկանալու համար բավական է հիշել, որ նրա 521 հոդվածներից շուրջ 120-ը վերաբերում են սահմանադրական իրավունքին: Շահամիր Շահամիրյանը Գանձասարի Յովհաննես կաթողիկոսին 1779թ. հունվարի 15-ին գրած նամակում խորհուրդ էր տալիս ազգի երևելի և խոհեն ներկայացուցիչների մասնակցությամբ մի հիմնադիր ժողով իրավիրել Արցախ աշխարհում՝ մարդկանց իրավունքների և արդարության կանոնների մի հավաքածու ընդունելու համար: Ըստ Շահամիրյանի, այդ կանոնները պետք է լինեն պարտադիր՝ ի շահ հասարակության բարօրության³:

Ամենայն Շայոց կաթողիկոս Սիմոն Երևանցին, ով վերոնշյալ գրքերը, հայ ժողովորի համար «Վնասակար», «Պիվաշունչ» համարելով, չէր ընդունում դրանց գաղափարները, իր «Յիշատակարան» աշխատության մեջ նշել է, որ գրքերի իրական հեղինակը «խամսայեցի» Մովսես Բաղրամյանն է, որին անձամբ ճանաչելով՝ բանադրել (նգովել) ⁴: Վերջինս, հանդիսանալով ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ և լուսավորության գաղափարախոս, Արցախից Շնդկաստան էր տարել իր լեռնաշխարհի մարդկանց ազատատենչ ոգին և այն արտացոլել այդ երկու նշանավոր փաստաթղթերում: Իհարկե, աշխատությունները «խամսայեցու» կողմից գրելու առումով իրավացի էր կաթողիկոս Սիմոն Երևանցին, քանի որ կշեռքի և կշռաքարերի տեր մարդը, ինչպիսին ակնավաճառ Շ.Շահամիրյանն էր, չէր կարող ննան մտքեր շարադրել: Միևնույն ժամանակ, կաթողիկոս Ս. Երևանցին այլ կերպ չէր կարող մտորել, որովհետև այդ գրքերը սասանում էին նրա հոգնոր իշխանապետությունը:

«Որոգայք փառաց»-ը, որի առաջին մասը շարադրվեց 1773թ., այսինքն՝ ԱՄՆ-ի Սահմանադրությունից 14 տարի առաջ, ապագա անկախ Շայաստանի համար նախատեսվող Սահմանադրության նախագիծ էր: Եվ հատկանշական է, որ ըստ Սահմանադրության նախագծի, անկախ

Հայաստանի միջուկը պետք է լիներ Արցախի հինգ մելիքությունների տարածքը, որտեղ պետության բարձրագույն մարմնի՝ Հայոց տան (պառլամենտ) հիմնադիր նիստում հաստատվելու էր բուն Սահմանադրությունը: Սակայն հայ ժողովրդին չհաջողվեց վերականգնել իր պետականությունը և նրա պատմական տարածքների արևելյան մասը XIX դարի սկզբում արդեն գտնվում էր ռուսական կայսրության կազմում, իսկ մնացած տարածքները՝ օսմանյան թուրքերի տիրապետության տակ: Մեկ դար հետո, հայ ժողովրդին հաջողվեց իր պատմական հայրենիքի մի շատ փոքր հատվածում վերականգնել իր անկախ պետականությունը, բայց այն գոյություն ունեցավ ընդամենը երկուսուկես տարի, որից հետո, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախում հաստատվեցին խորհրդային կարգեր:

Անկախության հոչակումից հետո երկրի ղեկավարությունը ձեռնամուխ եղավ ստեղծելու երկրի հիմնական օրենքը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը մշակելու նպատակով հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոնի 1991թ. նոյեմբերի 28-ի թիվ 4/146 որոշմամբ ստեղծվեց 15 հոգուց բաղկացած հանձնաժողով, որին և հանձնարարվեց մեկամսյա ժամկետում ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոնի քննարկմանը ներկայացնել երկրի հիմնական օրենքի նախագիծը⁵:

Սակայն, Աղրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմի պատճառով, նորաստեղծ Արցախի Հանրապետությունը չափազանց ծանր պայմանների մեջ էր ամրապնդում պետական շինարարության հիմնաքարերը, ուստի սահմանադրական հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը մնաց միայն թղթի վրա: Միևնույն ժամանակ, ազատության համար մարտի ելած Արցախը ձգողական մի հզոր ուժ էր դարձել աշխարհասփյուռ հայության համար և յուրաքանչյուրն իր ուժերի ներածին չափով ցանկանում էր սատար լինել նրա պետականության կերտմանը:

Հետպատերազմյան տարիներին ստեղծված սահմանադրական երկու հանձնաժողովների կազմը պարբերաբար նորացվեց, սակայն ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հանձնաժողովը որևէ նիստ չիրավիրեց: Առաջին նիստը տեղի ունեցավ միայն 2004թ. հունիսի 3-ին, որը վարում էր հանձնաժողովի նախագահ Ա.Դուկասյանը: Իր ելույթում Հանրապետության նախագահ Ա.Դուկասյանը հիմնավորեց Սահմանադրություն ունենալու անհրաժեշտությունը, որի ընդունումը կդառ-

նար ևս մի կարևոր քայլ Լեռնային Ղարաբաղի պետականության կայացման ճանապարհին: Սահմանադրության մշակման ուշացումը բացատրվեց ներքին և արտաքին քաղաքական, այդ թվում նաև՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին վերաբերող մի շարք առարկայական պատճառներով: Հանրապետության Նախագահի առաջարկությամբ ստեղծեց ԼՂՀ Սահմանադրության նախագծի մշակման աշխատանքային խումբ: Խոմբի ղեկավար նշանակվեց Նախագահի պետական հարցերով խորհրդական Ա. Զալինյանը⁶:

ԼՂՀ Սահմանադրության հայեցակարգը իրապարակվեց «Ազատ Արցախ» թերթի 2005թ. դեկտեմբերի 20-ի, իսկ Սահմանադրության նախագիծը՝ նույն թերթի 2006թ. հոկտեմբերի 12-ի համարում: Նախագիծը հատուկ բողարկվեց նաև ԼՂՀ պաշտոնական տեղեկագրում⁷:

ԼՂՀ Նախագահի իրամանագրով ԼՂՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեի օր նշանակվեց 2006թ. դեկտեմբերի 10-ը՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը և ԼՂՀ անկախության հանրաքվեի օրը: 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքենով ընդունվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը⁸:

Արցախի Սահմանադրությունն ամրագրեց Երկրի 15-ամյա ձեռքբերումները և ուղենչեց նրա զարգացման հետագա ընթացքը: Երկրի ելակետային տվյալների համար ամենաբնութագրիչը հանդիսացավ այն, որ Սահմանադրությունն Արցախը հոչակեց որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն: Իհարկե, Արցախի Սահմանադրությունը մերձեցման շատ եզրեր ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հետ (2005թ. փոփոխություններով), որի պարագայում կիրառվել են ՀՀ և ժողովրդավարական երկրների սահմանադրական շինարարության ու մշակույթի փորձը: Բոլոր դեպքերում դա հայկական երկրորդ պետության նայր օրենքն է:

Առաջին գրված Սահմանադրությունը, որի մեջ առաջին անգամ սահմանադրական մակարդակով օգտագործվեց «Դատական իշխանություն» եզրույթը և տրվեց դրա հասկացությունը (հոդված 3), ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրությունն է:

Հանրահայտ փաստ է, որ խորհրդային իրավունքի համակարգը տասնամյակներ շարունակ դատական իշխանությունը չի ճանաչել որպես իշխանության ինքնուրույն ճյուղ: Ընդհակառակը, խորհրդային Միության տարիներին «արդարադատությունն» իրականացրել են ոչ

միայն դատարանները, այլև կոմունիստական կուսակցության կենտրոնի ցուցումով գործող այլ պատժիչ մարմիններ: Գրպանում կարմիր կուսակցական տոմս կրող դատավորը գտնվել է կուսակցության «վերահսկողության ներքո»: Ասածի ապացույց կարող է հանդիսանալ 1937թ. օգոստոսի 8-ին Սարատովի մարզկոմ ուղարկված հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. «ԿԿ-ն առաջարկում է հրկիզման գործով մեղավորների նկատմամբ 7 օրվա ժամկետում դատաքննության արագացված կարգ կիրառել, բոլորին դատապարտել գնդակահարության, որի մասին տեղական թերթում հայտարարություն անել»⁹:

Արցախի պետական շինարարությանն առնչվող փաստաթղթերում «դատական իշխանություն» եզրույթն իր արտացոլումը գտավ Խորհրդարանի 1992թ. հունվարի 6-ին ընդունած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքում, որի առաջին հոդվածն արձանագրեց, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ իշահ հանրապետությունում ապրող բոլոր ազգերի»:

Ժամանակակից իրավագիտության մեջ «դատական իշխանություն» հասկացությունն օգտագործվում է մի քանի նշանակությամբ: Առաջին. դատական իշխանությունը համարվում է դատական մարմինների գործունեություն՝ իրենց վրա դրված լիազորությունների իրականացման համար: Երկրորդ. դատական իշխանությունը պետական իշխանության տեսակ է՝ օժտված բացառիկ լիազորություններով և դրանց իրականացման հնարավորություններով: Երրորդ. դատական իշխանության տակ նկատի է ունեցվում դատական մարմինների համակարգը: Եվ չորրորդ. որպես սահմանադրափրավական ինստիտուտ, դատական իշխանությունը հանդիսանում է իրավունքի ինքնուրույն ճյուղ՝ դատական իրավունքը¹⁰:

Ակնհայտ է, որ «դատական իշխանություն» հասկացությանը վերաբերող վերոնշյալ չորս բնորոշումները միմյանց փոխլրացնում են:

Դատական իշխանության կազմակերպմանն ու գործունեությանն ուղենչող ելակետային սկզբունքները և դրույթներն ամրագրված են Արցախի Սահմանադրության տարբեր գլուխներում:

Սահմանադրության 6-րդ հոդվածն ամրագրում է այն դրույթը, համաձայն որի՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադ-

րությանն և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Իշխանությունների բաժանման գաղափարը նոր չէ: Որպես սկզբունք, այն առաջ է քաշվել դեռևս XVIII դարում՝ ֆրանսիացի փիլիսոփա Մոնտեսքիեի կողմից:

Գործող դատական իշխանության մարմինների համակարգի ձևավորման համար սկզբունքային նշանակություն ուներ ԼՂՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասով հոչակված նորմը. «Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված կարգով ունի իր նկատմամբ կայացված դատավճռի վերանայման իրավունք՝ վերադաս դատարանի կողմից»: Այս դրույթն ինքնին կանխորոշում է վերաբննիչ դատարանի ստեղծման անհրաժեշտության մասին, որն էլ ամրագրված է Սահմանադրության 109-րդ հոդվածով: Սահմանադրական այս դրույթը լրիվությամբ բխում է մի շարք միջազգային իրավական նորմներից, մասնավորապես, ՄԱԿ-ի կողմից 1948թ. ընդունված Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրից, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրից և Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների մասին ԱՊՀ երկրների 1995թ. կոնվենցիայից: Նշված առաջին երկու փաստաթղթերին Արցախը վաղուց է միացել¹¹:

Սահմանադրության 6-րդ գլուխը, որը կրում է «Դատարանները» անվանումը, ամբողջությամբ վերաբերում է Արցախի դատական իշխանությանը: Սահմանադրությունն արձանագրեց, որ Արցախում դատական իշխանությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, և որ դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և օրենքով նախատեսված այլ դատավարության միջոցով: Այստեղից բխում է, որ պետական իշխանության մարմինների համակարգում դատական իշխանություն իրականացնող միակ մարմինը դատարանն է, որը, օժտված լինելով հատուկ լիազորություններով, հանդես է գալիս պետության անունից: Այստեղից բխում է նաև, որ դատական իշխանությունը պետական իշխանության ծն է, այն պատկանում է միայն դատարաններին, որի կրողները և իրականացնողները դատավորներն են: Իհարկե, արդարադատության իրականացումը դատական իշխանության գլխավոր և իմանական, բայց ոչ միակ գործառույթն է: Այդ շրջանակներում ԼՂՀ գերագույն դատարանն օժտված է սահմանադրական

վերահսկողության գործառույթով, դատարանների կողմից վերահսկողություն է իրականացվում մինչդատական վարույթի նկատմամբ, տրվում են իրավական նորմերի մեկնաբանումներ, հաստատվում են իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր, սահմանվում են դատական նախադեպեր և այլն:

Համաձայն Սահմանադրության՝ Արցախի դատական համակարգը բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից և Գերագույն դատարանից, ինչպես նաև օրենքով նախատեսված մասնագիտական այլ դատարաններից: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

Սահմանադրության 12-րդ գլուխը, որը վերնագրված է «Եզրափակիչ և անցումային դրույթներ», կանխորոշեց նաև ԼՂՀ դատական մարմինների գործունեությունն անցումային շրջանում և նոր մարմինների կազմավորման ժամկետները: Սահմանադրությունից բխող դատահրավական բարեփոխումների ոլորտում կարևոր եղավ Հանրապետության Նախագահի 2008թ. փետրվարի 1-ի կարգադրությունը՝ դատահրավական համակարգի բարեփոխումների հայեցակարգը մշակելու և անհրաժեշտ օրենսդրական փաթեթը նախապատրաստելու նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին, որին պահանջ դրվեց մինչև 2008թ. օգոստոսի 1-ը ավարտել դատահրավական համակարգի բարեփոխումների հայեցակարգի մշակման աշխատանքները և ներկայացնել համապատասխան օրենսդրական փաթեթը:

Աշխատանքները սկսվեցին և շարունակական բնույթ կրեցին: Այդ համատեքստում 2008թ. ընդունվեց «Դատական ծառայության նախին» ԼՂՀ օրենքը, որի համաձայն՝ դատական ծառայությունը համարվեց օրենքով դատարաններին, ինչպես նաև դատական իշխանության մարմիններին վերապահված լիազորությունների ու գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով իրականացվող մասնագիտական գործունեություն և պետական ծառայության մաս: Դատական ծառայությունն իրականացվում է դատական դեպարտամենտի միջնորդով, որը գործում է Գերագույն դատարանի նախագահի հաստատած Կանոնադրության հիման վրա:

Նոր դատական համակարգի կայացման արմատական նորույթներից մեկն էլ այն էր, որ հանրապետության օրենսդիր մարմինը 2008թ. ապրիլի 16-ին ընդունեց «Դատարանակազմության նախին» միջամկյալ օրենք, որի ուժով Սահմանադրությունից բխող եռաստիճան նոր

դատական համակարգի ձևավորումն սկսվեց վերաբննիչ դատարանի ստեղծմամբ, Քաշաթաղի շրջանի առաջին ատյանի դատարանի գործունեության դադարեցմամբ և ԼՂՀ առաջին ատյանի դատարանը «ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան» վերանվանվամբ: Օրենքն արձանագրեց, որ վերաբննիչ դատարանը սկսում է գործել ոչ ուշ, քան 2008թ. հունիսի 1-ից:

2008թ. հունիսի 19-ին Հանրապետության Նախագահի հրամանագրերով նշանակվեցին ԼՂՀ վերաբննիչ դատարանի նախագահը, վերաբննիչ դատարանի վեց դատավորները և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի երեք դատավորներ: Հետագայում առաջին ատյանի դատարանը համալրվեց ևս երեք նորանշանակ դատավորներով:

2008թ. հունիսի 26-ին Հանրապետության Նախագահի և այլ պաշտոնատար անձանց ներկայությամբ կայացավ ԼՂՀ վերաբննիչ դատարանի նախագահի, դատավորների և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նորանշանակ դատավորների երդման արարողությունը, իսկ հունիսի 1-ից սկսեց գործել ԼՂՀ Սահմանադրությանը նախատեսված եռաստիճան դատական համակարգը:

Ելնելով բնակչության թվաքանակից և մայրաքաղաքի նկատմամբ շրջանների աշխարհագրական դիրքից՝ ԼՂՀ-ում գործում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի մեկ դատարան՝ դատարանի նախագահի և տասնմեկ դատավորների կազմով, որի կենտրոնական նստավայրը գտնվում է Ստեփանակերտ քաղաքում: Դատարանը նստավայրեր ունի բոլոր շրջկենտրոններում:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն օժտված է նույն իրավասությամբ և գործառույթներով, ինչ որ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանները: Միակ տարրերությունը կայանում է նրանում, որ ԼՂՀ-ում վարչական դատարան չստեղծվելու պատճառով, առաջին ատյանի դատարանին ընդդատյա են նաև վարչական գործերը, որոնցով կայացված դատական ակտերի համար մինչև 2012թ. հունվարի 1-ը նախատեսված էր «թոիչքային» բողոքարկում, այսինքն՝ դրանք վերաբննիչ դատարանին չեն բողոքարկվում, այլ նիանգամից Գերագույն դատարանին: ԼՂՀ դատական և վարչական դատավարության օրենսգրքերում 2011թ. նոյեմբերի 30-ին կատարված փոփոխությունների ուժով սահմանվեց ԼՂՀ առաջին ատյանի դատարանի վարչական գործերով դատական ակտերի վերաբննության ձևով:

բողոքարկման կարգը:

Ի տարբերություն ՀՀ-ի, ԼՂՀ-ում գործում է մեկ վերաքննիչ դատարան՝ նախագահի և վեց դատավորների կազմով, որտեղ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված բողոքները քննվում են կոլեգիալ՝ երեք դատավորների կազմով։ Դարկ է նշել, որ վերաքննիչ վարույթը ՀՀ-ում մտցվեց 1998թ. հունվարի 12-ից, որտեղ ստեղծվեցին քաղաքացիական, տնտեսական, քրեական և զինվորական գործերով 3 վերաքննիչ դատարաններ, իսկ 2010թ. տնտեսական դատարանի փոխարեն՝ վարչական գործերով վերաքննիչ դատարան։ Դայաստանը վերաքննության տեսակը վերցրեց Ֆրանսիայից, իսկ վերաքննության սահմանները՝ Գերմանիայից և Ավստրիայից, այսինքն՝ ընտրեց վերաքննության խառը ձևը, որն իր արտացոլումը գտավ Դայաստանի Դանրապետության 1998թ. քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում և «Դատարանակազմության մասին» օրենքում։

ԼՂՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերն ուժի մեջ մտնելու հետո՝ 2009թ. փետրվարի 10-ից, ԼՂՀ վերաքննիչ դատարանն իր գործունեությունն իրականացնում է ոչ լրիվ վերաքննության ձևով, այսինքն՝ վերաքննիչ բողոքների և հիմնավորումների սահմաններում վերանայվում են ԼՂՀ առաջին ատյանի դատարանի գործում գործում գործում կազմությունը և հիմնավորվածությունը։

Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ վերաքննության արդյունքում վերաքննիչ բողոքների ավելի քան 50%-ը բավարարվում է։ Եվ, չնայած վերաքննության կարգով բողոքարկվող առաջին ատյանի դատարանի որոշումների ոչ մեծ քանակին՝ (7-10%), դատական միավերի վերացման արդյունավետությունն ակնհայտ է։

Այն հանգամանքը, որ Արցախում վերաքննիչ և վճռաբեկ ատյանների տարանջատումն արդարացված էր, կարելի է բացատրել մի շարք գործուներով։ Եթե մինչև վերաքննիչ դատարանի ստեղծումը վերաքննությունն ու վճռաբեկությունն իրականացվում էին մեկ՝ Գերագույն դատարանի «տանիքի» ներքո և այն էլ՝ մեկ դատավորի կազմով, որի պարագայում, որպես կանոն, վերաքննիչ ատյանի վճիռը վճռաբեկ ատյանի կողմից թողնվում էր անփոփոխ, ապա ԼՂՀ վերաքննիչ դատարանի ստեղծման պահից վերաքննությունն իրականացվում է կոլեգիալ՝ երեք դատավորների կազմով։ Գործերի կոլեգիալ քննության դեպքում արդարադատության որակն ավելի բարձր է լինում, սխալի

հավանականությունը՝ ավելի քիչ: Նման պայմաններում ավելի մանրակրկիտ և բազմակողմանի են հետազոտվում նյութերը, իսկ կոլեգիալ որոշումը՝ միևնույն հարցի տարբեր տեսակետների և տարբեր կարծիքների բախումների արդյունք է հանդիսանում: Իսկ այն, որ ԼՂՀ Գերագույն դատարանը որոշ գործերով ԼՂՀ վերաբննիչ դատարանի դատական ակտերը բեկանում և օրինական ուժ է տալիս ԼՂՀ առաջին ատյանի դատարանի դատական ակտերին, վկայում է, որ այս պարագայում գործում է երկու դատարանների դատական ակտերի մրցակցության սկզբունքը:

ԼՂՀ վերաբննիչ դատարանի գոյությունն արդարացված է նաև իրավունքի զարգացմանը նպաստելու՝ ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական առաքելությունն իրականացնելու տեսանկյունից:

Եռաստիճան դատական համակարգի առկայությունը բարձրացնում է հասարակության մեջ դատական իշխանության հեղինակությունը, աջակցում առավելագույնս պաշտպանելու քաղաքացիների իրավունքները և շահերը, վերադաս դատական ատյանին հնարավորություն տալիս ապահովելու ստորադաս դատարանի դատական ակտերի ստուգումը, ձևավորելու միասնական դատական պրակտիկա: Այն միտքը, որ առաջին ատյանի դատարանի որոշումը վերջնական չէ և այն կարող է վերանայվել ավելի փորձառու և բանհմաց դատավորների կողմից, բարենպաստ և հանգստացնող գործոն է ինչպես կողմերի, այնպես էլ ամբողջ հասարակության համար՝ բարձրացնելով վերջինիս կայունությունը:

ԼՂՀ բարձրագույն դատական մարմինը ԼՂՀ Գերագույն դատարանն է, որն ապահովում է ԼՂՀ Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը: Այդ սահմանադրական առաքելության տակ ԼՂՀ դատական օրենսգրքի համաձայն՝ Գերագույն դատարանի վրա նաև խնդիր է դրված՝ նպաստելու իրավունքի զարգացմանը: Բացի այդ, ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնարանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիր փաստարկների նատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Փաստորեն, Արցախի օրենսդիրների կողմից անգլո-սաքսոնական իրավական ընտանիքի երկրներում կիրառվող դատական նախադեպի ինստիտուտը և սահմանադրական վերահսկողության ամերիկյան նոդելը ներմուծվեցին մեր երկրի իրավունքի համակարգ և ներդրվեցին հանրապետության բարձրագույն դատական ատյանի գործառույթների մեջ:

Դամաձայն ԼՂՀ Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գերագույն դատարանը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից:

Դարկ է նշել, որ սահմանադրական արդարադատության ինստիտուտը ԼՂՀ-ում մտցվեց 1999թ. ընդունված «Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքով (օրենքն ուժը կորցրած ճանաչվեց «Դատարանակազմության մասին» ԼՂՀ 2008թ. ապրիլի 16-ի ԴՕ-21 օրենքով), համաձայն որի՝ «Գերագույն դատարանը ԼՂՀ սահմանադրական դատարանի լիազորություններ իրականացնող ատյան է։ Գերագույն դատարանը սահմանադրական դատարանի լիազորություններն իրականացնում է ԼՂՀ օրենսդրությանը չհակասող «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերով՝ մինչև «Սահմանադրական դատարանի մասին» ԼՂՀ օրենքի ընդունումը։ Գերագույն դատարանը սահմանադրական վերահսկողության լիազորություններն իրականացնելիս գործերը քննում է կոլեգիալ, բայց ոչ պակաս, քան ինգ դատավորների կազմով։

Պրակտիկայում հակասություններից խուսափելու նպատակով Արցախի օրենսդիրները «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքում ամրագրել են, որ «սահմանադրական պալատը կազմավորվում է յուրաքանչյուր գործով՝ Գերագույն դատարանի նախագահի կողմից»։ Օրենքը Խորհրդարանի կողմից ընդունվեց 2009թ. մայիսի 27-ին։ Այն հրապարակվեց հունիսի 15-ին և ուժի մեջ մտավ պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, իսկ սահմանադրական արդարադատություն իրականացնելու մասին Կանոնակարգն ընդունվեց Գերագույն դատարանի 2009թ. հունիսի 28-ի թիվ 3 աշխատակարգային որոշմամբ։ Այսինքն՝ այդ օրվանից սկսեց գործել Գերագույն դատարանի սահմանադրական պալատը։

Այսպիսով, ի տարբերություն ՀՀ-ի, ԼՂՀ-ում առանձին սահմանադրական դատարան չստեղծվեց, և սահմանադրական արդարադատության իրականացումը վերապահվեց Գերագույն դատարանի սահմա-

նադրական պալատին, որի յուրաքանչյուր գործով կազմավորումը վերապահվեց Գերագույն դատարանի նախագահին:

Երկու հայկական պետությունների սահմանադրություններից հետևում է, որ տարիքային ցենզի և մասնագիտական ստաժի առումով ՀՀ և ԼՂՀ դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջներն էականորեն տարբերվում են միմյանցից: Տարբեր է նաև հանրապետությունների դատավորների ընտրության և նշանակման կարգը: Այսպես, եթե ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել 40 տարին լրացած (վճռաբեկ դատարանի դատավորի պարագայում՝ նույնպես 40 տարի), իսկ առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների դատավորի դեպքում Սահմանադրությամբ տարիքային ցենզ չի նշված), միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող ընտրական իրավունքը ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն 15 տարվա (վճռաբեկ դատարանի դատավորի պարագայում՝ 10 տարվա) փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը, ապա Գերագույն դատարանի դատավոր կարող է լինել 35 տարին լրացած, ԼՂՀ ընտրական իրավունքը ունեցող, այլ պետության քաղաքացիություն չունեցող, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասի (դատավոր նշանակվելու սահմանափակումները) պահանջներին համապատասխանող այն քաղաքացին, որը իրավունքի ասպարեզում ունի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարի աշխատում է Վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում և չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձևով, կամ Վերջին 12 տարվա ընթացքում առնվազն ութ տարի աշխատել է որպես դատավոր, դատախազ, փաստաբան կամ քննիչ:

ՀՀ Սահմանադրությամբ (2015թ. փոփոխություններով) դատավորների ընտրության և նշանակման ավելի բարդ կարգ է սահմանված: Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ 12 տարի ժամկետով: Դատարանը կազմված է 9 դատավորներից, որոնցից 3-ն ընտրվում են Հանրապետության նախագահի, 3-ը՝ Կառավարության, 3-ը՝ դատավորների ընդհանուր ժողովի կողմից: Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ, իսկ դատարանի պալատների նախագահներին՝ Բարձրագույն դատական խորհրդի

առաջարկությամբ: Արցախի Սահմանադրությունը դատավորների նշանակման ավելի պարզեցված կարգ է սահմանել: Գերագույն դատարանի նախագահին և 6 դատավորներին Հանրապետության Նախագահի ներկայացմամբ նշանակում է ԼՂՀ Ազգային ժողովը: Վերաբնիչ և առաջին ատյանի դատարանների նախագահներին և դատավորներին նշանակում է Հանրապետության Նախագահը:

Կան նաև տարբերություններ երկու հանրապետությունների դատարանների սահմանադրական վերահսկողության լիազորությունների և դատարան դիմող սուբյեկտների հարցում: ՀՀ սահմանադրական դատարան կարող են դիմել Ազգային ժողովի խմբակցությունները, Բարձրագույն դատական խորհուրդը, Ազգային ժողովի ընտրությանն մասնակցած կուսակցությունների դաշինքները և այլն:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, որտեղ «Դատախազությունը և քննչական մարմինները» վերտառությամբ գլխում քննչական մարմինների վերաբերյալ առանձին հոդված է շարադրված, Արցախի Սահմանադրությունում քննչական մարմինների մասին որևէ խոսք չկա՝ նման մարմին ներ հանրապետությունում դեռևս ստեղծված չլինելու պատճառով:

Բոլոր էական տարբերությունները հասկանալի պես է համարել, քանի որ ԼՂՀ Սահմանադրության հեղինակները աչքի առաջ են ունեցել ՀՀ Սահմանադրությունը՝ 2005թ. փոփոխություններով:

Ներկայում «դատական իշխանություն» և «արդարադատություն» հասկացությունները օգտագործվում են գրեթե նույն իմաստով, չնայած առաջինը բովանդակային առումով ավելի մեծ է երկրորդից, քանի որ արդարադատությունը դատական իշխանության իրականացման եղանակներից մեկն է:

Սահմանադրությունից բխող դատահրավական բարեփոխումների շրջանակներում դատական իշխանության կայացման համար կարևոր փաստաթուղթ հանդիսացավ 2009թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած ԼՂՀ դատական օրենսգիրքը, որի մեջ սահմանվեցին դատարանակազմությունը, դատական իշխանության գործումներության սկզբունքները, դատարանի բնականոն գործումներության ապահովման երաշխիքները, դատական իշխանության ինքնակառավարումը և այլ կարևոր հնստիտուտներ: Օրենսգիրքն ամրագրեց, որ Արցախում դատական իշխանությունը գործում է ինքնակառավարման սկզբունքի հիման վրա, որի մարմիններն են հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

և դատարանների նախագահների խորհուրդը:

Դատավորների ընդհանուր ժողովը դատական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմինն է: Նրա որոշումները գերակա են դատարանների նախագահների խորհրդի որոշումների նկատմամբ: Ժողովը, կազմված լինելով հանրապետության բոլոր դատավորներից, հրավիրվելում է տարին առնվազն մեկ անգամ՝ Գերագույն դատարանի նախագահի կողմից: Արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել դատավորների առնվազն 1/4-ի, դատարանների նախագահների խորհրդի կամ Գերագույն դատարանի նախագահի կողմից:

Դատավորների ընդհանուր ժողովը, գործելով իր հաստատած Կանոնակարգին համապատասխան, իրավասու և քննարկելու դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարց, այդ թվում՝ դատարանների նախագահների խորհրդի իրավասությանը վերապահված: Ժողովն ընտրում է արդարադատության խորհրդի դատավոր անդամներին: Այդ առումով 2009թ. մարտի 13-ին հրավիրվեց Արցախի դատավորների առաջին ընդհանուր ժողովը, որը, հաստատելով իր Կանոնակարգը, գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրեց արդարադատության խորհրդի հինգ դատավոր անդամների, որից երկուական դատավորներ՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններից և մեկը՝ Գերագույն դատարանից: Քիչ ավելի ուշ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտան Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբաններ:

Հարկ է նշել, որ Արցախի Սահմանադրությամբ արդարադատության խորհուրդն անհամենատ քիչ լիազորություններով է օժտված, քան ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը: Վերջինս իր նախադեպը չունեցող բոլորովին նոր դատական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Արցախի արդարադատության խորհրդի լիազորությունները և գործառույթները նշված են Սահմանադրությամբ և դատական օրենսգրքով:

ԼՂՀ դատական իշխանության ինքնակառավարման հաջորդ մարմինը՝ դատարանների նախագահների խորհուրդը, սկսեց գործել 2009թ. մարտի 20-ից՝ իր կողմից հաստատված Կանոնակարգի համաձայն: Մշտապես գործող այս մարմինը ստեղծման պահից մինչ այսօր քննարկել և ընդունել է դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող բազմաթիվ հարցեր:

Դատական իշխանության անկախության հենարաններից մեկն է՝ 2010թ. հունիսի 22-ին ԼՂՀ դատավորների ընդհանուր ժողովում «Լեռ-նային Դարաբաղի Հանրապետության դատավորներ» հասարակական կազմակերպության հիմնադրումը և նրա Կանոնադրության հաստատումն էր: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով կազմակերպության նախագահ ընտրվեց ԼՂՀ Վերաքննիչ դատարանի դատավոր Շ.Խաչատրյանը:

Երկրի համար աննախադեպ երևոյթ հանդիսացավ «ԼՂՀ դատական իշխանություն» իրավական տեղեկատվական-վերլուծական հանդեսի ծնունդը, որի առաջին համարը լույս տեսավ 2011թ. մայիսին: Ներկայումս գործում է դատարանների պաշտոնական ինտերնետային կայք էջը [/courtnkr.am/](http://courtnkr.am/):

2012թ. հունվարի 1-ից սկսեց գործել դատական կարգադրիչների ծառայությունը, որը կոչված է ապահովելու դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դատարանի տարածքի պահպանումը հանցավոր և հակահրավական այլ ոտնձգություններից: Ծառայության խնդիրն է նաև դատարանի տարածքում, դատական նիստերի դահլիճում հասարակական կարգի պահպանությունը և անվտանգության պահովումը: Օրենքը դատական կարգադրիչին գենք կրելու իրավունք չի վերապահել՝ այն փոխարինելով ռետինե մահակով, ծեռնաշղթայով, էլեկտրաշղոկով և այլն:

Այսպիսով, ԼՂՀ Սահմանադրությունից բխող դատահրավական բարեփոխումների օրենսդրական փաթեթը, որի դրույթները վերաբերում են իրավապահ և իրավակիրառ բոլոր մարմիններին, 2013թ. հունիսի 1-ի դրությամբ սկսեցին լրիվությամբ գործել:

ԼՂՀ դատական համակարգի հետ համագործակցելու և նրա զարգացման աջակցելու նպատակով՝ ՀՀ Վճռաբեկ և ԼՂՀ Գերագույն դատարանների միջև 2013թ. հունիսի 17-ին կնքվեց համագործակցության և իրավական տեղեկատվության փոխանցման մասին նոր հուշագիր: Համաննան հուշագիր ստորագրվեց նաև ՀՀ և ԼՂՀ դատավորների միությունների միջև: Ելնելով երկու պետությունների դատական համակարգերի կատարելագործման և գործունեության արդյունավետության շահերից, կարևոր քայլ հանդիսացավ նաև ՀՀ «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության և

ԼՂՅ դատարանների նախագահների խորհրդի միջև 2015թ. ապրիլի 10-ին ստորագրված՝ համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը:

Հավելենք, որ 2014 թվականը հոբելյանական (90) էր՝ Երկրամասում խորհրդային տիպի դատական համակարգի կազմավորման առումով, որի գործունեության 68 տարիների ընթացքում /1923-1991թթ./ մարզ-դատարանի նախագահի պաշտոնը գրադեցրել են՝ Խաղաղ Բաղդասարովը /1924թ. հունվար-1924թ. սեպտեմբեր/, Արսեն Մարտիրոսյանը /1924թ. սեպտեմբեր-1924թ. դեկտեմբեր/, Յայկ Բաղդասարյանը, որը միաժամանակ կատարել է նաև գլխավոր դատարանի նախագահի գործառույթները /1925-1927թթ./, Ուրբեն Ղազարովը /1927-1929թթ./, Կոստանտին Դանիելյանը /1929-1930թթ./, Տիգրան Շաքարյանը /1930-1934թթ./, Պետրոս Ոսկանովը /1934-1938թթ./, Սերգեյ Ղավիդովը /1938-1941թթ./, Արտավազդ Օրբելյանը /1942-1950թթ./, Խաղաղ Կապրիելովը /1950-1955թթ./, Վաղարշակ Խաչանովը /1955-1962թթ./, Մուշեղ Օսիպովը /1962-1968թթ./, Ջրանտ Բաղդասարյանը /1968-1973թթ./, Բենիամին Տեր-Կասպարովը /1973-1987թթ./, Նիկոլայ Ղադայանը /1987-1991թթ./: Ինքնավար մարզի գլխավոր դատարանի նախագահի պաշտոնը գրադեցրել են՝ Արսեն Յայրապետյանը /1925-1926թթ./, Արշակ Խաչատրովը /1926-1927թթ./ և Խվան Յայրապետովը /1927թ./, իսկ կարևոր գործերով դատարանին՝ Կարապետ Շահնազարովը /1927-1928թթ./ և Կոստանտին Դանիելյանը /1929-1930թթ./: Անկախության հռչակումից հետո ԼՂՅ Գերագույն դատարանի նախագահի պաշտոնը 1992-2002թթ. գրադեցրել է Նիկոլայ Ղադայանը, 2002-2007թթ.՝ Վլադիմիր Ռովսեփյանը, 2007-2010թթ.՝ Արարատ Դանիելյանը, 2010-2013թթ.՝ Արամայիս Ավագյանը, իսկ 2013թ. ապրիլի 25-ից Գերագույն դատարանի նախագահն է Նարինե Նարիմանյանը:

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՏԶԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆԱՊԱՐՈՎ ԽԱՎԵՐԻ ՀԱՄԱՐ**

*Որպեսզի երկիրը կարողանա ապրել,
հարկավոր է, որ իրավունքներն ապրեն:
Աղամ Միջկեչ*

Մարդկության զարգացման պատմությունը վկայում է, որ մարդու կողմից իրավունքների և ազատությունների ծեռքբերումը և դրանց անվանացանկի ընդուանումը պետության և անհատի միջև միշտ է սուր բախումների թատերաբեմ են եղել: Դա բացատրվում է նրանով, որ պետությունն իր քաղաքացիներին երբեք կամավոր կերպով սոցիալական բարիքներ չի տվել: Միջազգային փաստաթղթերում, սահմանադրություններում և օրենսդրություններում անրագրված մարդու և քաղաքացու իրավունքները մարդկության կողմից տառապանքով են ծեռք բերվել և նվաճվել: Պատմությունն ցույց է տալիս, որ այդ ճակատամարտը դեռևս չի ավարտվել և յուրաքանչյուր նոր սերունդ պետք է պայքարի՝ տեր կանգնելու իր իրավունքներին: Անձի իրավունքները և ազատությունները լրիվ չափով կարող են ապահովել և պաշտպանվել միայն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության մեջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունը երկիրը հռչակելով ժողովրդավարական և իրավական պետություն, մարդու իմանական իրավունքներն ու ազատությունները ճանաչում է որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք: Սահմանադրությունը պետության վրա պարտականություն է դրել՝ ապահովել մարդու և քաղաքացու իմանական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրությամբ անրագրված վերոնշյալ դրույթները մատնաշում են, որ ԼՂՀ-ն ոչ միայն ճանաչում է մարդու իրավունքները և ազատությունները, այլև այդ իրավունքների և ազատությունների պաշտպանությունը համարում է պետության իմանական գործառույթներից մեկը, ինչը հնարավորություն է տալիս Լեռնային Ղարաբաղը բնորոշել

որպես ժողովրդավարական և իրավական պետություն:

Սահմանադրությունը նախատեսում է յուրաքանչյուր անձի՝ իրավունքների և ազատությունների օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը դատական պաշտպանությունն է: Դա պայմանավորված է նրանով, որ նախ, իրավունքների դատական պաշտպանությունն ամրագրված է սահմանադրահիրավական նորմերով և նույն նորմերն էլ ազդարարում են, որ դատարաններն ամկախ են և ենթարկվում են միայն օրենքին, այսինքն, դատարանները գերատեսչական շահերով որևէ այլ մարմնի հետ կապված չեն:

Մարդու իրավունքների դատական պաշտպանությունն առաջին հերթին կարևորվում է միջազգային փաստաթղթերով: ԼՂՅ օրենսդրությամբ ամրագրված բազմաթիվ նորմեր համահունչ են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերին:

ԼՂՅ-ում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա, դրանով իսկ դատական իշխանության վրա առաքելություն է դրվում պաշտպանելու անհատի իրավունքները և ազատությունները, սոցիալական բախումների իրավական լուծումների ժամանակ հանդես գալու անկախ և անաշար իրավարարի դերում:

Սեր երկրում դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության միջոցով: Այդ դատավարություններին համապատասխան՝ անհատի իրավունքները սահմանադրական դատավարության ձևով պաշտպանում է ԼՂՅ Գերագույն դատարանը, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության ձևերով՝ ԼՂՅ դատարանները: Դատական կարգով իրավունքների պաշտպանության չորս ձևերից ամենամասշտաբայինը քաղաքացիական դատավարությունն է: Շուկայական հարաբերությունների և օտարերկրյա ներդրումների գարգացմանը զուգընթաց ու սպառողական ծառայությունների աճի հետ կապված, դատարան դիմողների թիվը մշտապես փոփոխվելու է: Դատավարության այս ձևում անհատն իր իրավունքները կարող է իրացնել միայն քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ նախատեսված մի շարք պայմանների առկայության դեպքում: Եվ եթե քաղաքացիական դատավարությունում, որպես կանոն, գործի հարուցման նախաձեռնողը հայցվորն է լինում, այսինքն՝ այն անձը, ով իր խախտված

կամ վիճարկվող իրավունքների վերաբերյալ դատավարական օրենքով սահմանված կարգով դատարանից պաշտպանություն է խնդրում, ապա դատարան դիմողը պետք է օժտված լինի դատավարական իրավունակությամբ, ճիշտ որոշի գործի ընդդատությունը, հայցադիմունը կազմված լինի պատշաճ ձևով և պետական տուրքի գումարը վճարած լինի:

Քաղաքացիական դատավարության հայցային վարույթում պատասխանողը և գործով նաևնակցող մյուս անձններ ևս օժտված են լինում հայցվորին համահավասար դատական պաշտպանությամբ, քանի որ հայցվորի պահանջն անհիմն լինելու դեպքում դատարանը պարտավոր է մերժել հայցը՝ դրանով իսկ պաշտպանելով պատասխանողի՝ անհիմն կերպով վիճարկվող իրավունքները:

Քաղաքացիական դատավարության տարատեսակներից մեկն էլ հատուկ վարույթի գործերն են, որոնցում բացակայում է իրավունքի վերաբերյալ վեճը: Դատուկ վարույթում դատական պաշտպանության առարկա է հանդիսանում ոչ թե սուրյեկտիվ իրավունքը, այլ օրենքով պաշտպանվող դիմողի շահը: Այդ շահը կայանում է փաստերի հաստատման մեջ, որի հետ օրենքը կապում է իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարումը:

Դատական պաշտպանությունը, որպես սուրյեկտիվ իրավունք, պատկանում է ոչ նիայն ֆիզիկական, այլև՝ իրավաբանական անձանց, քանի որ վերջիններս հանդես են գալիս որպես ֆիզիկական անձանց միավորումներ: Այդ առումով ՀՀ Սահմանադրությունը շեշտում է, որ երկրի հիմնական օրենքով ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով որ այդ իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրենց եռթյամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Անհատի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության ձևերի շարքում հատուկ տեղ է զբաղեցնում քրեական դատավարությունը: Դատավարության այս ձևում արդարադատությունն ավելի սուր է դիմում դատավարության մասնակիցների շահերին: Դանցագործությամբ պատճառված վնասը միշտ էլ շշափում է տուժողի իրավունքները և ազատությունները: Ոչ պակաս կարևոր հանգամանք են հանդիսանում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի շահերը: Եվ պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրությունը հատուկ հոդվածներով անդրադարձել է տուժողի և մեղադրյալի իրավունքներն:

Տուժողը, ում քրեական օրենսգրքով չքույլատրված արարքով ան-

միջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական և գույքային վնաս, քրեական դատավարությունում հանդես է գալիս հատուկ կարգավիճակով: Տուժողին պատճառված վնասը հատուցվում է սահմանված կարգով: Օրենսդիրը սահմանել է քրեական գործերի այն շրջանակը, որոնք հարուցվում են տուժողի բողոքի հիման վրա, այսինքն, երբ տուժողն իր խախտված իրավունքների վերաբերյալ անմիջապես դիմում է դատարան՝ շրջանցելով նախաքննության փուլը:

ԼՂՀ Սահմանադրության 46-50-րդ հոդվածներն անմիջականորեն վերաբերում են մեղադրյալի պաշտպանության իրավունքին: Այդ առումով, մեղադրյալի դատական պաշտպանության իրավունքը յուրահատուկ է և եականորեն տարբերվում է դատական պաշտպանության մյուս ձևերից: Այստեղ խոսքը խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնած մասին է, որտեղ մեղադրյալը պաշտպանվում է մեղադրանքից և դրա հետ կապված նրան սպառնացող պատժից: Քանի դեռ մեղադրյալի մեղավորությունն օրենքով սահմանված կարգով չի ապացուցված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, ապա անմեղության կանխավարկածի ուժով մեղադրվողը համարվում է անմեղ:

Քրեական դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանությունը ոչ միայն դատարանի, այլև բոլոր իրավապահ մարմինների պարտականությունն է: Դա պարտավորեցնում է ԼՂՀ Սահմանադրությունը, որում պաշտպանված են քաղաքացիների գույքային /«Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում» -Սահմանադրության 33-րդ հոդված/ և ոչ գույքային /«Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձակոր ազգականների վերաբերյալ»-Սահմանադրության 49-րդ հոդված/ իրավունքները: Այլ կերպ ասած, քրեական դատավարությունում անձի դատական պաշտպանության իրավունքը տարածվում է նաև մինչդատական վարույթի վրա:

Կարչական դատավարությունը քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության նոր ձև է, որը մեր հանրապետությունում արմատավորվեց 2009 թվականի փետրվարի 10-ից, երբ ուժի մեջ մտավ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրը: Դատավարության այս ձևի ժամանակ դատարանը քննում է բնակչության /քաղաքացիներ և իրավաբանական անձինք/ և հանրային իշխանության մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց միջև ծագած վեճերը:

Սահմանադրական դատավարությունը, որպես արդարադատության իրականացման ձև, մեր հանրապետությունում սկսեց գործել ԼՂՀ Սահմանադրության ընդունումից հետո: Մայր օրենքը նշեց, որ սահմա-

նադրական արդարադատությունն իրականացնում է ԼՂՀ Գերագույն դատարանը և սահմանեց այն սուբյեկտների շրջանակը, ովքեր օրենքով սահմանված կարգով կառող են դիմել Գերագույն դատարան: Ի թիվս այլոց, այդ իրավունքը վերապահվեց նաև յուրաքանչյուր անձի՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականությունը: Գերագույն դատարանում անհատական դիմումների ներկայացման ժամկետները և դրանց քննության կարգը սահմանված են «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքով: Քաղաքացու՝ սահմանադրական արդարադատության հարցերով դատարան դիմելու ինստիտուտը, ոչ միայն խախտված իրավունքները վերականգնելու, այլև պետական իշխանության իրականացմանը մասնակցելու յուրահատուկ միջոց է, քանի որ քաղաքացու հարցի դրական լուծման դեպքում վերջնական արդյունքն արտացոլվում է օրենսդրության մեջ:

Քաղաքացու ցանկացած իրավունք անհմաստ է, եթե տվյալ պետության հիմնական օրենքով և օրենսդրությամբ ամրագրված չեն այդ իրավունքների պաշտպանության արդյունավետ երաշխիքները և իրականացման մեխանիզմները: Ցակառակ դեպքում, իրավունքը վերածվում է խոստացվող հայտարարության: Այդ է վկայում Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հոչակագրի այն դրույթը, որ «Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն»:

Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքները և դրանց պաշտպանությունը կարգավորվում են ոչ միայն ներպետական, այլև միջազգային իրավունքի նորմերով: Քաղաքացու՝ միջազգային մարմններին դիմելու իրավունքը ծագում է միայն այն դեպքում, երբ սպառված են լինում իրավունքի պաշտպանության ներպետական միջոցները: Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմներում իր ուրույն և առաջատար դերն ունի 1959թ. Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում հիմնված Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Եվրադատարանի հիմքում ընկած են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նասին Եվրոպական կոնվենցիայի մասին նորմերը, որոնք 1950թ. ընդունվել են Եվրոպայի խորհրդի կողմից: ԼՂՀ Սահմանադրությունը յուրաքանչյուր անձի հնարավորություն է ընձեռում իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և

ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին, բայց ԼՂՀ-ը միջազգային հանրության կողմից միջազգայնորեն չճանաչված լինելու և նրա կողմից միջազգային մարմիններին, կազմակերպություններին և համաձայնագրերին, մասնավորապես, Եվրախորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիային միացած չլինելու պարագայում, ԼՂՀ քաղաքացիները գրկված են Եվրադատարան դիմելու իրավունքից:

Ինչպես վկայում է պրակտիկան, շատ պետություններ, չնայած այն փաստին, որ դեռևս չեն միացել այս կամ այն կարևորագույն միջազգային իրավական փաստաթրիմն, ձգտում են իրենց ազգային օրենսդրությունը համապատասխանեցնել դրան: Այդ առումով, չճանաչված պետությունների միակողմանի հայտարարությունն այն մասին, որ իրենք պատրաստ են անշեղորեն և առանց որևէ նախապայմանի կատարել միջազգային խաղաղությունը և անվտանգությունը երաշխավորող, այդ թվում՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը նախատեսող միջազգային պայմանագրերի և կոնվենցիաների պահանջները, գգալիրեն կնպաստի նրանց նկատմամբ վստահության պաշարի ավելացմանը⁹:

Միջազգային իրավական հարթակներից օգտվելու համար ԼՂՀ-ն ուշադրության արժանի ծանրակշիռ քայլեր է կատարում՝ ելենով միջազգային և ազգային իրավունքի դիրքերից: Այդ քայլերին նիտված է նաև Յանրապետության Նախագահի դիմումների հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանի կողմից քննության առնված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում, Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության մասին կոնվենցիայում և Յնազիտական ժառանգության պահպանության մասին Եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների՝ ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոնց քննության արդյունքներով որոշվել են, որ դրանք համապատասխանում են երկրի Սահմանադրությանը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող այդ փաստաթրերը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 2015-ի մայիսի 15-ին Յանրապետության Նախագահի կողմից վավերացվել են:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է մարդու կարևորագույն իրավունքներից մեկը՝ արդարացի դատական քննության իրավունքի իրականացման երաշխիքները: Այդ երաշխիք-

ները և դատական իշխանության գործումներության հիմնական սկզբունքները նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ: Այսուել ՀՀ դատարանները լուրջ անելիքներ ունեն՝ օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացման տեսանկյունից, քանի որ հրապարակված օրինական ուժի մեջ մտած ցանկացած դատական որոշում դառնում է հասարակության իրավական մտքի անբաժան մասը:

Ի՞նչ է արդարադատության մատչելիությունը: Արցախի բնակչության անապահով խավերի համար որքանո՞վ է այն բավարար: Որքանո՞վ է բարձր պետական տուրքը: Կարելի՞ է նրանից ազատվել կամ՝ կա՞ն որոշակի արտոնություններ: Որո՞նք են դրանք: Ապահովվա՞ծ են, արդյոք, բնակչության անապահով խավերը պետական բյուջեի հաշվին փաստաբանական գործումներությունից օգտվելու հնարավորությամբ: Դանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն մատուցող ինչպիսի՞ ծառայություններ կան:

Արդարադատության մատչելիության գործառնական սկզբունքը նշանակում է, որ ցանկացած շահագրգիռ անձ իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար և դատավարությունում պաշտպանել դրանք: Արդարադատության մատչելիությունը ենթադրում է շահագրգիռ անձի հնարավորության առկայություն՝ հարուցելու դատական վարույթը և իր իրավունքների ու շահերի պաշտպանության համար օգտվելու դատավարական բոլոր միջոցներից:

Նման հնարավորությունը կարող են արգելակել մի շարք գործուներ, մասնավորապես՝ տվյալ երկրի ոչ սոցիալական բնույթը, սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակը, օրենսդրության թերի կամ ոչ կատարյալ լինելը, նորմատիվ ակտերի բարդությունը, դատական իշխանության ոչ լիարժեք և ոչ անկախ կարգավիճակը, դատական որոշումների կատարման անարդյունավետությունը, ցածր իրավական մշակույթը, կոռուպցիան և այլն:

ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով արդարադատությանը վերաբերող կարևոր սկզբունքները, հրակում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք, դատարաններն անկախ են, և արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է:

Դատարան դիմելու կարգը, պայմանները, ձևերը և բովանդակությունը կարգավորում են ԼՂՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից: Դատարաններում քննվող բոլոր գործերով պետական տուրքը գանձվում է պետական բյուջե:

Ցանկացած քաղաքացի, հայցադիմումով մտնելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, հայցադիմումին պետք է կցի սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելը հավատող փաստաթուղթ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Պետական տուրք հասկացությունը, տուրքերի տեսակները և դրույթաչափերը, տուրք վճարող անձանց շրջանակները, տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանված են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով:

Ըստ վերոնշյալ օրենքի՝ բազային տուրքի չափը հավասար է 1000 դրամի: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է առաջին ատյանի դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու բողոքների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաբերնիք և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից փաստաթոթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձվող պետական տուրքի դրույթաչափերը: Գույքային բնույթի պահանջով պետական տուրքը կազմում է հայցագնի 2 տոկոսի չափը, բայց բազային տուրքի 150 տոկոսից ոչ պակաս, ոչ գույքային բնույթի պահանջով՝ բազային տուրքի քսանապատիկի չափը:

Իրավաբանական անձանց սնամկ ճանաչելու գործերով դիմումի համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի 250-ապատիկի չափը, իսկ քաղաքացիներին սնամկ ճանաչելու՝ բազային տուրքի 50-ապատիկի չափը:

Հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների՝ անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի չափը, այլ դիմումների համար՝ բազային տուրքի եռապատիկի չափը:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման

մասին դիմումների համար պետական տուրքը կազմում է բազային տուրքի կրկնապատիկի չափը:

ԼՂՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար ոչ գույքային պահանջի գործերով պետական տուրքի չափը կազմում է բազային տուրքի 10-ապատիկի չափը, գույքային պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ, կամ՝ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա՝ առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով: Օրենքով հստակ սահմանված են դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի դրույթաչփերը: Օրենքը սահմանում է նաև պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները և այն անձանց շրջանակները, որոնք դատարաններում ազատվում են պետական տուրքի վճարումից: Մասնավորապես, պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով, հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով, դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով, դիմունները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով, դիմունները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով, փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց խախտված բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բողոքներով:

Զրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում: Առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել Լեռնային Ղարաբաղի Ղանրապետության Նախագահը, Լեռնային Ղարաբաղի Ղանրապետության կառավարու-

թյունը և տեղական ինքնակառավարման մարմինները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, դեսպանը կամ հյուպատոսական իիմնարկի ռեկավարը՝ օրենքով նախատեսված դեպքերում: Դատարանը կամ դատավորը, ելնելով քաղաքացու գույքային դրությունից, իրավունք ունի նրան ազատել պետական տուրքի վճարումից:

Պետական տուրքը վճարվում է հայկական դրամով:

Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ հանրապետության քաղաքացիները դատարանում իրենց գործերը վարում են մեծամասամբ ներկայացուցիչների (փաստաբանների) միջոցով, իսկ քաղաքացիների մի որոշ հատված՝ անձամբ: Դրանք իիմնականում բնակչության անապահով խավերը, գործազուրկները, բոշակառուները և հաշմանդամներն են, որոնք, ֆինանսական սույն պայմաններից ելնելով, սահմանափակ հնարավորություն ունեն փաստաբանների ծառայություններից օգտվելու համար: Բնակչության անապահով խավերի համար արդարադատության մատչելիությունն առաջին հերթին կախված է այդ խավերի սոցիալական ապահովածությունից և պաշտպանվածությունից:

Իսկ այդ հանգամանքը որքանո՞վ է կարգավորված ԼՂՀ օրենսդրությամբ:

Ներկայումս մեր հանրապետությունում (2016թ. հունվարի 1-ի դրությամբ) նկազագույն ամսական աշխատավարձն օրենքով սահմանված է 55.000 դրամ: Հիշեցնենք, որ 2006թ. այն կազմում էր 15000 դրամ:

Դամաձայն ԼՂՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 23-ի թիվ 906 որոշման՝ հանրապետությունում իիմնական կենսաթոշակի չափը կազմում է 16.000 դրամ, իսկ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1-ին 10 տարվա համար՝ 800 դրամ, մնացած տարիների համար՝ 500 դրամ: ԼՂՀ կառավարության 2009թ. հունվարի 20-ի թիվ 15 որոշմամբ առանձին սահմանված է այն անձանց շրջանակը, ովքեր պետական նպաստի իրավունք ունեն: Պետական նպաստի բազային չափը կազմում է 6.000 դրամ: ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության բաժնի տվյալների համաձայն՝ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գրանցված են 1259 աշխատանք փնտրողներ, որոնցից 1232-ը գործազուրկներ են:

Ըստ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցագինը որոշվում է, դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ բռնագանձվող գումարի չափից, իսկ գույքը պահանջելու հայցերով՝ գույքի շուկայական գնից: Հայցագնի մեջ մտնում են նաև հայցադիմումում

նշված տուժանքի (տուզանքի, տույժի) գումարները: Մի քանի հնքնուրույն պահանջներից կազմված հայցագինը որոշվում է բոլոր պահանջների ընդհանուր գումարով:

ԼՂՅ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքը՝ որ սահմանում են, որ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ ննան միջնորդությունը մերժմվել է:

Այդ առումով՝ եթե հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշման մեջ նշված ժամկետում կողմը միջնորդություն է ներկայացնում պետական տուրքի վճարումից ազատելու կամ նրա չափը նվազեցնելու, կամ էլ նրա վճարումը հետաձգելու մասին, ապա կոնկրետ հանգամանքների առկայության դեպքում դատարանը որոշում է կայացնում պետական տուրքի մասով հայցվորի միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը կամ վերաբնիշ կամ վճռաբեկ բողոքը համապատասխան դատարանի վարույթը ընդունելու մասին:

Քաղաքացիական և վարչական գործերով հայցադիմումի ընդունումը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին ԼՂՅ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշումների համաձայն չինելու դեպքում կողմը կարող է դրանք բողոքարկել վերադաս դատական ատյաններին: Տվյալ դեպքում օրինական ուժի մեջ չմտած դատական որոշումների բողոքարկումը կարևոր դեր է խաղում արդարադատության նախշելիության համար, քանի որ իրավարակման պահից օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը հնարավորություն չեն տալիս արդարադատության նախշելիությունը լրիվ իրականացնելու համար:

ԼՂՅ Սահմանադրությունը հրչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությանք պաշտպան ունենալու իրավունք: Դատապաշտպանի ծառայության համար վճարման բավարար միջոցներ չունեցող մեղադրյալին, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում անձին իրավաբանական օգնություն է ցույց տրվում պետական բյուջեի միջոցների հաշվին:

«Փաստաբանության մասին» ԼՂՅ օրենքը սահմանում է ԼՂՅ-ում փաստաբանական գործումնեություն իրականացնելու և փաստաբանների մասնագիտական միավորում կազմակերպելու հիմունքները և

այդ գործումենության իրականացման կարգը: Փաստաբանական գործումենությունը վճարովի ծառայություն է հանդիսանում: Փաստաբանական գործումենության վճարի չափն ու վճարման կարգը որոշվում են փաստաբանի ու վստահորդի միջև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կնքված գրավոր պայմանագրով:

Պետությունը երաշխավիրում է անվճար իրավաբանական օգնություն քրեական գործերով՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և նախատեսված դեպքերում, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և հետևյալ դեպքերում՝ ալիմենտի զանձնան վերաբերյալ գործերով և խեղման կամ առողջության այլ վնաս պատճառելու, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ գործերով:

Անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է ԼՂՀ փաստաբանների պալատը՝ պետության հաշվին՝ փաստաբանների պալատի կազմում գործող հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Վերջնիս ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հանրային պաշտպանի գրասենյակում, որպես հանրային պաշտպաններ, ընդգրկված են 19 փաստաբաններ: Հանրապետության բոլոր շրջաններն ապահովված են հանրային պաշտպաններով:

Բացի հանրային պաշտպանի գրասենյակից, հանրապետությունում անվճար իրավաբանական օգնություն ցույց տվող այլ ծառայություններ չկան:

Ինչպես ցույց է տալիս անցած տարիների կատարած աշխատանքի վերլուծությունը, ԼՂՀ դատական պրակտիկայում առկա են պետական տուրքը չզնարելու պատճառով հայցադիմումները, բողոքները վերադարձնելու եզակի դեպքեր, բայց դրանք դատարանների կողմից երբեք չեն օգտագործվել որպես գործիք բնակչության անապահով խավերի դեմ արհեստական պատճեց ստեղծելու համար, և ԼՂՀ դատարանները միշտ էլ նատչելի են եղել բնակչության բոլոր խավերի համար:

ՎԵՐԶԱԲԱՆ

Ցանկացած պետության մեջ կան հիմնախնդիրներ, որոնք նշտապես գտնվում են պետական իշխանության և հասարակության անդամների ուշադրության կենտրոնում: Այդ առումով կան հարցեր, որոնցով զբաղվում են ոչ թե մեկ, այլ մի քանի սերունդներ: Դրանց թվին պետք է դասել իրավական և դատական բարեփոխումները, որոնք ոչ ավելի պակաս կարևոր են, քան պետական շիանարարության ցանկացած հարց: Ինչպես ընդունված է ասել. «Իրավական և դատական բարեփոխումները եթե առաջինը չեն, քայլ և երկրորդն էլ չեն»:

Հարցը կարևորվում է նաև նրանով, որ նորաստեղծ երկրները բարեփոխումների երկար և դժվար ճանապարհ են անցնում և այդ ճանապարհը գերծ չի լինում տարբեր բախումներից, կոնֆլիկտներից և սոցիալական պայքուններից: Այդ համատեքստում, պետության իրավական համակարգի զարգացման ուղղությունները և սկզբունքները պետք է համահունչ լինեն միջազգային իրավական համակարգի չափանիշներին:

Ինչպես ցանկացած նորաստեղծ պետություն, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, անկախության տարիներին հասարակական և պետական կյանքի տարբեր ոլորտներում բարեփոխումների ոչ դյուրին ճանապարհ է անցել: Այդ տեսակետից դժվար է առանձնացնել հասարակական կյանքի որևէ ոլորտի առաջնահերթությունը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը սոցիալական, պետական շինարարության կամ մեկ այլ բնագավառի կարևորագույն հարցեր է լուծում:

Կազմված լինելով Յ հասկացությունից՝ «իրավական և դատական բարեփոխումներ» անվանումը փիլիսոփայական, սոցիալական, իրավական բարդ երևույթ է, որը կարգավորում է մեր հասարակության և պետության կյանքի կարևորագույն կողմերը:

«Իրավական» հասկացությունն իր մեջ ներառում է տարբեր պետական կառուցներ, բյուջետային, տնտեսական, նյութատեխնիկական, սոցիալ-կենցաղային և այլ բնույթի միջոցառումներ: Հանրահայտ է, որ իրավապահպան մարմինների համակարգում կենտրոնական տեղը պատկանում է դատական մարմիններին՝ համարվելով «իրավապահպան գործունեության սիրտը», քանի որ նրա խնդիրներն են ենթարկված մնացյալ բոլոր իրավապահպան գործառույթների կատարումը:

Բարեփոխումների մի հատվածն էլ դատարանաշխնությունն է, քանի որ արդարադատության իրականացման ընթացքում պետք է անհրաժեշտ պայմաններ լինեն թե՛ դատավորների, և թե՛ դատական կողմերի ու դատավարության մասնակիցների համար: ԶԵ՞ որ ընդունված ճ-

մարտություն է՝ թատրոնը սկսվում է հանդերձարանից, դատարանն է՝ դատական նիստերի դահլիճից: Փաստ է, որ շենքային պայմանների, կահավորանքի և տեխնիկական հագեցվածության տեսանկյունից ԼՂԴ դատարանների նստավայրերը և դատական նիստերի դահլիճները ժամանակակից պայմաններին չեն համապատասխանում: Հուսանք, որ այս հարցը մոտ ապագայում կստանա իր լուծումը:

Ներկայում մեր հանրապետությունը թեակոխել է դատահրավական բարեփոխումների որակական մի նոր փուլ. Հանրապետության Նախագահի 2013թ. օգոստոսի 16-ի կարգադրությամբ հաստատվել է ԼՂԴ իրավական և դատական բարեփոխումների 2013-2017թթ. ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը: Նոյն կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, և աշխատանքներն ընթանում են: Քառամյա ծրագիրը, մասնավորապես, ներառում է քրեական, քաղաքացիական, վարչական արդարադատությունը, դատական համակարգը, դատախազությունը, փաստաբանության և քաղաքացիներին նախուացվող ծառայությունների ոլորտները, որոնցից յուրաքանչյուրում առկա խնդիրների լուծման համար նախատեսված են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառական բնույթի միջոցառումներ: Այս բարեփոխումները նախկիններից տարբերվում են նրանով, որ համակարգային բնույթը են կրում: Ծրագրում ուղղակիրեն նշված է, որ դատական իշխանության անաշառությունը և անկախությունը դասվուն են տվյալ երկրի ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքների շարքին, քանի որ դատահրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը երկրի ներքին սպառնալիքներից մեկն է հանդիսանում:

Դատահրավական բարեփոխումները հարափոփոխ և ամբողջական գործընթացներ են և ունեն իրենց ներքին զարգացման դիմամիկան: Բարեփոխումները պետք է կատարվեն ոչ միայն դատական համակարգում, այլև բոլոր իրավապահ կառույցներում: Հաղորդակից անորների օրենքը գործում է ամենուրեք:

Հատկանշական է, որ ժողովորավարության ուղին բռնած և անցումային զարգացման փուլում գտնվող պետություններից որևէ մեկին դեռևս չի հաջողվել կարծ ժամկետում ստեղծել անկախ և կենսունակ իրավական համակարգ: Իսկ կատարյալ համակարգ երբեք չի լինում, կյանքն է, որ ժամանակի ընթացքում հղկում է ամեն ինչ, որի արդյունքների գնահատականը տալիս է հասարակությունը՝ իր վստահության քվեով:

Բարեփոխումները, որպես կանոն, փոխում են ոչ թե հասարակական հարաբերությունների հիմքերը, այլ՝ նրա ձևու ու բովանդակությունը: Այն մի արմատական և երկարատև գործընթաց է: Դա այն դեպքում,

երբ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունում իրականացված սահմանադրական բարեփոխումների գործընթացը, Արցախի քաղաքական ուժեղությունը 2016թ. փետրվար ամսին սահմանադրական բարեփոխումների թեմայով 2 անգամ քաղաքական խորհրդատվություններ են անցկացրել, որի արդյունքում խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցությունները գրավոր դիմել են Հանրապետության Նախագահ Բ.Սահակյանին՝ առաջարկելով ստեղծել սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով։ Արձագանքը չուշացավ։

Հանրապետության Նախագահը ելնելով իրավունքի գերակայության և ժողովրդակիշխանության սկզբունքների իրացման կառուցակարգերը բարելավելու, իշխանության ծյուղերի լիազորությունների հավասարակշռությունը կատարելագործելու, հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից ու հաշվի առնելով ԼՂԴ Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների ու արտախորհրդարանական մի շարք քաղաքական ուժերի առաջարկը և դեկավարվելով ԼՂԴ Սահմանադրության 68-րդ հոդվածի 10-րդ կետով մարտի 21-ին ստորագրել է հրամանագիր՝ ԼՂԴ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով ստեղծելու մասին։ Հրամանագրով հաստատվել է հանձնաժողովի անհատական կազմը՝ ԼՂԴ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի գլխավորությամբ։

Հրամանագրի համաձայն՝ մասնագիտական հանձնաժողովին հանձնարարվել է մինչև 2016 թվականի մայիսի 1-ը Նախագահին ներկայացնել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը և հայեցակարգին հավանություն տրվելուց հետո՝ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 10-ը, մշակել և նախագահին ներկայացնել սահմանադրական բարեփոխումների նախագիծը։ Բայց ինչպես ասում են՝ մարդը ենթադրում է, իսկ աստված կարգադրում։ Շուրջ 22 տարի տևած փխրուն հրադադարի խախտման պատճառով (Աղբբեզանի կողմից 2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ձեռնարկված ռազմական գործողությունների արդյունքում նորից արյուն հեղվեց... մարդկային զոհեր... ավերածություններ...) Ապրիլի 5-ին կրակը դադարեցնելու մասին հայտարարություն արվեց. որքա՞ն հուսալի կլինի այն) հնարավոր է, որ սահմանադրական բարեփոխումների գործընթացի ժամկետների փոփոխություն կատարվի։

Ժամանակը ցույց կտա, թե սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից սահմանադրական բարեփոխումների ի՞նչ հայեցակարգ կմշակվի և ինչպիսի նախագիծ կմերկայացվի Արցախի հասարակության դատին։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ա

ԱԴՎԱՆԻՑ ԱՐՔԱ ՎԱԶԱԳԱՄԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԱՊՐՈՒԹՅՈՒՆԸ հաստատված Աղվենում տեղի ունեցած ժողովում

Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու Եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջեւ բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում, որ կայացավ մարերի ամսի տասներեքին:

Ես՝ Վաչագան Աղվանից արքաս, Շուփաղիշոն՝ Պարտավի արքեպիսկոպոսը, Սանատեն՝ Կապաղակի Եպիսկոպոսը, Յունանը՝ Յաշուի Եպիսկոպոսը, Անամիան ու Սահակը, Եւ Ուտիքի Փոդ Եպիսկոպոսները, Յովենիքը՝ Կաղանկատուրի քահանան, Մատթեն՝ Պարտավի քահանան, Թոման՝ բազավորի պալատական քահանան, Պողոսը՝ Գյեգուճի քահանան, Շմավոնը՝ Ցրի քորեպիսկոպոսը, Սատթեն՝ Դարահոջի քահանան, Արիկազը՝ Բերի քահանան, Ուրբաթյորը՝ Մանուչեհի քահանան, Յովել, Պարա, Միգե, Յակոբ քահանաները, ազնվական մարդիկ և Արցախի նահապետները, Կաղանկատուրի Բակուր նահապետը և այլ բազմաթիվ մարդիկ, որոնք միաբան ինձ նոտ ներկայացան՝ ամառանցային վայր Աղվենում, որոշեցինք հետևյալը.

Ա. Այն քահանաները, որոնք գյուղերում են լինում, տարեկան երկու անգամ երկրպագում են Եպիսկոպոսին և հոգեւոր կարգ ու կանոն են սովորում նրանից՝ ըստ Աստվածաշնչի, և ինչպես կարգն է, տարվա մեջ Եպիսկոպոսին ընծա պետք է տարվի:

Բ. Երբ քահանա և սարկավագ են ծեռնադրում, չորս դրամ քահանային, իսկ երկու դրամ սարկավագին պետք է տան:

Գ. Ազնվական կամ բազավորական ցեղին պատկանող որևէ մեկը կենդանության ժամանակ իր ծեռքով հոգու բաժին պետք է տա. ասենք՝ ծի բամբով ու սանձով, կամ ինչ հարստություն որ ունի, դրանից պետք է տա, եթե կենդանության օրոք չտա, ապա նրա մահից հետո ընտանիքն է պարտավոր տալ:

Դ. Քահանային ժողովորդի կողմից տալու կարգը այսպես է լինելու. ունեւորը պետք է տա չորս գրիվ ցորեն, վեց գրիվ գարի, տասնվեց փաս քաղցու. իսկ նա, որ հացասակավ է, դրա կեսը պետք է տա. ինչ

վերաբերում է գինուն, թող տա այնքան, որչափ կարող է: Վար ու ցանք եւ այզի չունեցողից չպետք է առնեն. իսկ նա, որ իր հոգու համար սրանցից ավելին կտա, բարից կանի: Ինչպես Պողոսն է ասում. «Նա, որ առատությամբ է սերմանում, առատությամբ էլ կհնձի»: Իսկ նա, ով ոչխար ունի, պետք է տանից մի ոչխար տա, երեք գզաք բուրդ ու մի գլուխ պանիր. ով ձիեր ունի տանը, պետք է տա մի քուռակ, իսկ խոշոր եղջերավոր անասուն ունեցողը՝ մի հորք:

Ե. Աշխարհականներից ոչ ոք՝ ազնվական, շինական, կամ մեկ ուրիշը, տարվա ընթացքում պատարագը բաց չպետք է թողնի, այսինքն՝ մեռելների հիշատակը պետք է կատարի, ինչպես որ կարող է. իրենց վաստակից մեռելներին անմասն չպետք է թողնեն. մեռած մարդու համար մի ծի, եթե ծի կա, մի խոշոր եղջերավոր անասուն՝ արջառ, եթե կա. մեռելի տերը եկեղեցուն պետք է տա, դրանցից որ մեկը կամենա:

Զ. Եթե վաներեցը կամ որևէ վանական վանքին վնաս է հասցնում (գողանում է) և վրան հաստատվում է, պետք է անարգեն ու տեղից հեռացնեն, իսկ գողացածը գրավեն եկեղեցու համար:

Է. Եթե մի վանքի քահանաները շատ են, իսկ ժողովուրդը քիչ, և մի այլ վանքի ժողովուրդն է շատ, բայց քահանաները քիչ են, շատ ժողովուրդ ունեցող վանքից ժողովրդի մի մասը վերցնում և հանձնում են այն վանքին, որի քահանաներն են շատ:

Ը. Եթե քրիստոնյա մարդը կրվում և արյուն է թափում, ներկայացնում են եպիսկոպոսին ու ըստ օրենքների պատժում:

Թ. Այն քահանան, որ հովում է մեծ գյուղի վրա, մի այլ գյուղ ևս չպետք է պահի, իսկ եթե երկու գյուղեր միմյանց մոտ են, կարող է հովվել մի քահանա և առհասարակ քահանան սպասարկում է այնքան, որպան կարողանում է կառավարել:

Ժ. Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուի կին չպետք է առնի և եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա:

ԺԱ. Ով առանց պատճառի կնոջը բաց է թողնում ու առանց պսակի կին է առնում, ով անօրեն ու մարդասպան է կամ կախարդահարցությամբ է զբաղվում, նրան կապելով պետք է թագավորի մոտ տանել ու շարաչար կերպով սպանել:

ԺԲ. Նրանց, որոնք լացուկոծում են տան գլխավորին, գուսանների հետ պետք է կապել, տանել թագավորի դուռը և պատժել, իսկ հարազատները չպետք է համարձակվեն նրանց հետեւից լաց լինել:

ԺԳ. Նրան, որ գեշ է ուտում, և նրան, որ քառասունքին միս է ուտում, կիրակի օրը աշխատում է ու եկեղեցի չի գնում, քահանան, ժողովրդի հետ միացած պատժում է:

ԺԴ. Նա, որ չորեքշաբթի կամ ուրբաթ աղուհացից առաջ միս է ու-

տում, մի շաբաթ պաս պետք է պահի, իսկ եթե մեկը գա ու քահանայի մոտ այդ մասին վկայություն տա, թե պասը չի պահել, գյուղի տանուտերը նրանից պետք է մի եզ առնի ու տա քահանային:

ԺԵ. Եթե որևէ մի աշխարհական մարդ բամբասի քահանայի կամ սարկավագի և խոստովանի, թե իրոք այդպես է, եպիսկոպոսը կարգ է սահմանում նրա վրա ու այդպիսին անապատում ապաշխարում է: Իսկ եթե ճիշտը չի խոստովանում, այլ ուրիշներն են հայտնում ճշտությամբ, և այդ պարզվում է, ինչպես որ կանոնների մեջ գրված է, պետք է պատժեն ու գյուղից հեռացնեն. իսկ եթե հանցանքը չի պարզվում, պետք է կարգադրեն, որ քահանային նվեր տա, և այդ երրում է լինում նրա համար:

ԺԶ. Եթե մի որևէ քահանայի ընկերներն ու աշակերտները մեղք են բարդում այդ քահանայի վրա, իսկ իրենք անմեղ են, քահանան պետք է կանգնի սուրբ սեղանի, իսկ ամբաստանողները՝ ժողովրդի առաջ, ապա պետք է բեմից իշեցնեն և գյուղից արտաքսեն: Իսկ եթե նրա ընկերները և աշակերտները վրեժով լցված են, և ժողովուրդը գիտեր, որ նրանք առաջ խոռվ են եղել, քահանան պատարագ պետք է մատուցի, և ժողովուրդը անեօքով նրանց դուրս քշի: Իսկ եթե խոստովանում են, որ սուտ են ասել, պետք է ապաշխարանք դնեն դրանց վրա և վաճրից չհանեն, բայց եթե դրանցից հետո էլ հանցանք են գործում, պետք է դատվեն կանոններով:

ԺԷ. Դարձյալ՝ եթե եպիսկոպոսներն ու քահանաները քագավորի մոտ գանգատվեն ազնվականների դեմ, թե դրանք գյուղում երկու կամ երեք եկեղեցի վանք են դարձնում, և եթե քագավորի ներկայությամբ ազնվական մարդիկ պայմանավորվեցին, և քագավորին, եպիսկոպոսին, ազնվականներին այդպես հաճելի թվաց, թե վանք դարձված եկեղեցները կրողնեն նույն վիճակում, իսկ եկեղեցու պտղին ու տուրքը կտան մայր եկեղեցուն:

ԺԸ. Եթե ազնվականները տասանորդ են տալիս, պետք է մի մասը բուն գլխավոր եկեղեցուն տան, մյուս մասը՝ իրենց եկեղեցուն:

ԺԹ. Կիրակի օրը տերն ու ծառան պետք է գնան մայր եկեղեցի, աղոթքներ ու հիշատակ կատարեն եկեղեցուն, իսկ կրոնավորը հոգեբաժինը եկեղեցուն պետք է տա:

Ի. Ազնվականները առանց եպիսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել, չնայած, որ իրենց դաստակերտն է. Եպիսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի: Եթե ազնվականից կամ ժողովրդից քահանային վտանգ է սպառնում, քահանան էլ իրավունք չունի հեռանալու առանց եպիսկոպոսի թույլտվության:

ԻԱ. Եթե որևէ ազնվական ցանկանում է իր Եկեղեցում սեղան կառուցել, կամ ինչ-որ մասունքներ բերել, կամ պատարագ անել, պետք է կատարի Եպիսկոպոսի հրամանով, որքան էլ ինքը կարողություն ունենա: Եթե կատարում է թույլտվությանք, կօրինվի, իսկ եթե այդպես չի անում, թող Եկեղեցուց հեռու մնա, այլապես ըստ իր կարողության տուգանք պետք է վճարի Եպիսկոպոսին, իսկ դրանից հետո ինչքան տուգանք տա այդ մարդը ըստ կանոնների, թող օրինությանք կատարի:

ԻԲ. Այս պայմանները թագավորի ներկայությանք դրեցին Եպիսկոպոսներ, քահանաներ, ազնվականներ: Թող մեր Եպիսկոպոսների, քահանաների ու Եկեղեցու կողմից օրինվի թագավորը թագուհով, իր զավակով ու ամբողջ երկրով հանդերձ. թող օրինվեն նաև այս ժողովին մասնակցողները: Այս հրամանը մատանիներով կնքեցին արքայի հրամանատար Մուժիկը, պալատի վերակացու Միրիօրիկը եւ տոհմապետներ Մարտիրը, Իրազդը, Սպարակոսը, Ղանան, Բակուրը, Ռատանը, Արշեսը, Գարդմանա տեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզ նահապետը, Աղվանքի բոլոր ազնվականները և գրության ավելի վավերական լինելու համար կնքվեց նաև Աղվանքի թագավոր Վաչագանի մատանիով:

*Մովսես Կաղամկատվացու «Աղվանից աշխարհի պատմության»
գորի հԶ գլուխը, Երևան, 1969թ.:*

Բ

Աղրբեջանի կողմից Արցախին «Հնորհված» Սահմանադրությունը

Համաձայն Աղրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության Վորոշման, ըստ սմեն հայտարարվում է «Ինքնավար Շրջան Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը»:

Աղրկենտգործկոմի նախագահի
տեղակալ՝ Բ. Կասումով

Սահմանադրություն Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Շրջանի I. ԸՆԴՐԱԾՈՒՐ ՀԻՄՈՒԹՅՆԵՐ

1. Ինքնավար Լեռնային Ղարաբաղը կազմում է Աղրբեջանի Սոց. Խորհ. Հանրապետության մի բաղկացուցիչ մասը:
2. Բոլոր գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը դպրոցներում ինքնավար Լեռնային Ղարաբաղում կատարվում է մայրենի լեզվով:
3. Ինքնավար Լեռնային Ղարաբաղը մասնակցում է Աղրբեջանի Սոց. Խորհ. Հանրապետական բոլոր մարմիններում՝ համեմատական չափի սկզբունքով:

II. ԻՆՔՆԱՎԱՐ ԼԵՌԱՆՁԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ (տերիտորիան)

Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մեջ մտնում է այն տարածությունը, վորը բռնված է հետևյալ գավառների քաղաքներով և գյուղերով:

Շուշի գավառից - Շուշի քաղաքը և Ստեփանակերտը. գյուղերը, Կարաքետուկ, Ուլուբար, Կայարաշի, Սարի-Քեշիշ, Կիշլաղ-Քենո, Շալվա, Սեյխտ-Քեգլի, Պաշբուլաղ, Սեհտիքենո, Բադրուա, Սունժինսկոյի, Խնձորիստան, Խսմայիլ-Քեգլի, Մալիքեգլի, Խալիքիալի, Խոջալի, Ղուշնիլար, Քենրֆա -Աֆուտլի, Զարուսլի, Նախիջևանիկ, Փիրջանալ, Դահրազ, Քեաբուկ -Աշդարա, Աղբուլաղ, Վարազաբուն, Լիսագորսկ, Կերկիժան, Զամիլլի, Բալուջա, Ղայբալիքենո, Փալսիզ, Խնածախ, Սեհտ-Քենո, Վերին Սզնիք, Ղամուրչիլար, Ներքին Սզնիք, Սղնախ, Զանախչի, Ղարաբուլաղ, Ղուշչի-Բարա, Սարուշեն, Խաչմաչ: Տուքնակալ, Զարալի, Պիրում Քենո, Սխիթարա -Քենո, Ղաղդաղան,

Յարով, Ռաշութենդ, Շուշի-Քենդ, Ռաշալքի, Ջյունոտ, Քեշիշ Քենդ
Դաղաթի-Խոզաբիր, Քենդխուրդ, Քարահունջ, Մուշկապատ,
Ռավախան, Մաշաղի-Քենդ, Կուչում-Քենդ, Աղ-Քենդ, Աշան, Շացի,
Ենգի-Քենդ, Կարա-Քենդ, Եմիշճա, Զամեաթ, Կըղարծի, Միրի-Քենդ,
Կարաղուղի, Խոնաշեն, Բախրունի, Խոջալու, Մուգան, Աբդուլլար,
Կոտլեարովկա, Կուրապատկինո, Նիկոլայեվկա, Սկոբլեվկա, Սոս,
Սխտորաշեն, Խերխսան, Ծովատեղ, Ջերիեր, Մավաս, Ամարաս,
Բիլբիլակ, Աղբուլաղ, Ուզում-Քենդ, Դրախտիկ, Թաղլար, Ազոխ,
Զարդանաշեն, Շեխեր, Զաղավուզ, Թաղավարդ, Ղուզե ճարտար,
Գիշի, Գյունե-ճարտար, Խապահանջուղ, Յենդիջա, Դաշբաղի, Խանքար
նոր, Խանքարադ հին, Քեշիշքենդ, Խորամորթ, Վերին Յելչիբաղ, Ներին
Յելչիբաղ, Տող, Մամեդանոր, Սուլավալդին, Շեխեր, Շսկակու,
Թաղուտ, Սուսալդիս, Կովշատի, Տումի, Ջողեր, Ծակորի, Ջրակու:

Զիվանշիրի գավառից - գյուղեր. Ջասանրիջ, Ումուղի, Կիրանլու,
Իմաբար, Կարավենդ, Զափար, Ղուզլու (Բաղդուս), Կըզըլ-Կայա,
Յայջա (Տըխտաս). Զարդախաչ, Զարեքտար, Բաղլու-Կայա, Բալլու-
Կայա, Ախմախիլի, Բազարքենդ, Քոլատակ, Դաղմանլու, Ղովշանլու,
Չորմանլու, Վանք, Տրումբոն, Ջոռաթաղ, Շահմասուր, Ներիշտար,
Քիշիկ- Կարաբեզ, Ուլու-Կարաբեզ, Կուսապատ, Աղդարա-
Մարդակերտ, Դամիրլու, Ջոռաթաղ, Բուրուջ, Յարըմջա, Մարաղա,
Մարգուշեվան, Բիուջ, Լևոն Արխս, Լևոն-Արխս (Սարով), Մենգրելսկ,
Զարդախիլու, Լյուլասազ, Որյովո-Ղենիսովկա, Ղազանչի, Զանյաթաք,
Գյույսաթաղ Արխավանդ, Դամիլի, Թալիշ, Տուրուս, Դաստագիր,
Տոնաշեն, Մադաղիս, Դամիրլար, Վերին-Զայլու, ներքին Զայլու:

Կարյագինի գավառից – գյուղեր. Ջաշիքենդ, Առաքել, Բանաշուր,
Բինյարլի, Դոլանլար, Խժալլան, Դաշբաշի, Ծամծոր, Կեյնա-աղ,
Մյուլքիդարա, Խծաբերդ, Վանք, Շադրութ, Կամբակյութ, Կոչքեկ,
Ղուչիլար, Մելիքջանլու, Նորաշեն, Տայք, Թաղասեր, Ցոր, Շաղախ,
Վորմաշատ, Աղբուլաղ, Ախուլլու, Քյուքուշլու, Թուլատան, Ղուղուգի,
Կոգուլլու, Խարմանջուղ, Իղիլեցիք:

Ղուբարլի գավառից - Ղարաղլաղ գյուղը իր գաղութներով:

III. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի իշխանությունը նրա ընդգրկած
ամբողջ տարածության վրա պատկանում է Խորհուրդների Շամագու-

մարին, կենտրոնական գործադիր կոմիտեին և տեղական խորհուրդներին:

2. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Խորհուրդների Շամագումարը, վորը հրավիրում է ոչ պակաս քան տարին մի անգամ:

3. Սեկ համագումարից մինչև մյուսի հրավիրելու ժամանակամիջոցը լիակատար իշխանությունը ամբողջովին անցնում է Խորհուրդների կենտրոնական գործադիր կոմիտեին:

4. Խորհուրդների Շամագումարների և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոնական գործադիր կոմիտեի վորոշումները կյանքի մեջ անցկացնելու համար, կենտրոնական գործադիր կոմիտեն ընտրում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ, վորը կենտրոնացնում է իր մեջ շրջանի կառավարության գործը, ստանձնելով կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության իրավունքները:

Ծանոթություն. Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահը միաժամանակ հանդիսանամ է և ժողովրդական նախագահ:

5) Ինքնավար շրջանի կառավարության առաջին բաժինները վարելու համար սահմանվում են ժողովրդական կոմիսարիատներ՝

1. Ներքին գործերի՝ սոցիալական ապահովության և կոմունալ տնտեսության յենթարաժիններով,

2. Արդարադատության,

3. Լուսավորության,

4. Առողջապահության,

5. Յերկրագործության,

6. Կենտրոնական վիճակագրական վարչության,

7. Ժողովրդական տնտեսության խորհուրդ.

6. Շրջանի զինվորական գործերը վարում է Զինվորական կոմիսարիատը՝ կազմակերպված ընդհանուր հիմունքներով:

Շրջանի Զինվորական կոմիսար նշանակվում է Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովրդական համաձայնությամբ Ադր. Ս. Խ. Շանրապետության Զինվորական կոմիսարիատի կողմից:

7. Աշխատանքի, ֆինանսների և բանվորայուղացիական տեսչության կոմիսարիատների լիազորներ նշանակվում են Ադր. Ս. Խ. համապատասխան կոմիսարիատների կամ լիազորների կողմից ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովությունի համաձայնությամբ:

8. Կռիվը հակահեղափոխության դեմ մնում է Ադր. Ս. Խ. Շեկայի մարմինների հրավասության ներքո, վորը կազմակերպվում է տեղում՝ ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովությունի համաձայնությամբ:

9. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ներքին գործերի, Արդարադա-

տության, Լուսավորության, Առողջապահության, յերկրագործության կոնխսարիատները իրենց բոլոր գործառնությունների մեջ ինքնավար են և պատասխանառու ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին:

10. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի արդյունաբերության անմիջական ղեկավարությունը պատկանում է Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովրդական Տնտեսության Խորհրդին:

11. Ինքնավար Լեռնային Ղարաբաղի ժողովրդական Տնտեսության Խորհրդը իր գործունեության մեջ ղեկավարվում է իր կազմաձարտարական ծրագրով, Վորը ներկայացնում է Ադր. Ս.Խ.Դ. Գերագույն Տնտեսական խորհրդին՝ ընդհանուր պետական տնտեսության ծրագրի հետ համաձայնեցնելու համար:

IV. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԵՐՈՒՄ

Իշխանության մարմիններ տեղերում համարվում են.

1. Բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների ներկայացուցիչների խորհրդները (գյուղական և քաղաքային) և նրանցից ընտրված գործադիր կոմիտեները:

2. Գավառական և գյուղական համագումարները և նրանցից ընտրված գործադիր կոմիտեներն ու նրանց նախագահությունները:

3. Խորհրդային իշխանության տեղական մարմինների ընտրության ժամանակամիջոցն ու կարգը, ներկայացուցիչների թիվը և այդ մարմինների ներքին կազմակերպության ընդհանուր կանոնները, Վարչական խնդիրների և իշխանության սահմանագծումը նրանց միջև, ինչպես և սահմանագծումն իրավական խնդիրների տեղական մարմինների և կենտրոնականի միջև՝ սահմանվում են Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Կենտրոնական գործադիր կոմիտեից և հաստատվում Ադր. Կենտր. Գործադիր Կոմիտեի կողմից:

Կոմունիստ - N 145 /924/, էջ 2
Բաքու, 1924թ. հուլիսի 6-ի, կիրակի

**գլուխ 6
Դատարանները**

Հոդված 108.

1. Ենոնային Դարաբաղի Հանրապետությունում դատական իշխանությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

2. Դատական իշխանությունն իրականացվում է սահմանադրական, քաղաքացիական, քրեական և օրենքով նախատեսված այլ դատավարության միջոցով:

3. Դատարաններն անկախ են:

Հոդված 109.

1. Ենոնային Դարաբաղի Հանրապետության դատական համակարգը բարկացած է ընդիհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից և Գերազույն դատարանից, ինչպես նաև օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններից:

2. Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

3. Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությանը և օրենքներով:

4. Դատարանների վերջնական ակտերն ընդունվում են Ենոնային Դարաբաղի Հանրապետության անունից:

Հոդված 110.

1. Դատավորն անփոփոխելի է: Դատավորը պաշտոնավարում է մինչեւ 65 տարին լրանալը:

2. Դատավորի լիազորությունները դադարում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

Հոդված 111.

Դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

Յողված 112.

- 1.Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է:
- 2.Դատավորի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

3.Դատավորը չի կարող ներգրավվել որպես մեղադրյալ, կալանավորվել, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել առանց արդարադատության խորհրդի եզրակացության և Հանրապետության Նախագահի համաձայնության՝ Սահմանադրության 116-րդ հոդվածով սահմանված կարգով:

4.Դատավորը չի կարող ծերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ծերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո: Դատավորի ծերբակալման մասին անհապաղ տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և Գերագույն դատարանի նախագահը:

Յողված 113.

- 1.Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն դատական մարմինը Գերագույն դատարանն է:

2.Գերագույն դատարանը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից:

3.Գերագույն դատարանն ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը:

4.Գերագույն դատարանի նախագահը և մյուս դատավորները նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ:

Յողված 114.

- 1.Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Գերագույն դատարանը: Գերագույն դատարանն օրենքով սահմանված կարգով՝

1.1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, Կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

1.2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը.

1.3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.
1.4) լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

1.5) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

1.6) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

1.7) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

1.8) եզրակացություն է տալիս Գերագույն դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու, նրան որպես նեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին.

1.9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հարցերով Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով Գերագույն դատարան կարող են դիմել՝

2.1) Հանրապետության Նախագահը՝ 1.1, 1.2, 1.3, 1.8 և 1.9-րդ կետերում նշված հարցերով.

2.2) Ազգային ժողովը՝ 1.3, 1.6, 1.8 և 1.9-րդ կետերում նշված հարցերով.

2.3) Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հիմնգերորդը՝ 1.1 և 1.3-րդ կետերում նշված հարցերով.

2.4) Կառավարությունը՝ 1.1, 1.7 և 1.9-րդ կետերում նշված հարցերով.

2.5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող՝ պետական մարմինների նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով.

2.6) յուրաքանչյուր որ՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականությունը.

2.7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտի դրույթների սահմանադրականության հարցով.

2.8) մարդու իրավունքների պաշտպանը՝ 1.1-րդ կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցով.

2.9) Հանրապետության Նախագահի և պատգամավորության քեկ-նածուները՝ 1.4 և 1.5-րդ կետերում նշված հարցերով:

Գերագույն դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

3. Գերագույն դատարանը սույն հոդվածի 1-ին մասի 1.1–1.5-րդ և 1.9-րդ կետերում նշված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 1.6-1.8-րդ կետերում նշված հարցերով՝ եզրակացություններ: Եզրակացությունները և 1.9-րդ կետում նշված հարցերով որոշումներն ընդունվում են սահմանադրական պալատի դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մնացած որոշումները՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

4. Սահմանադրությանը հակասող ճանաչված՝ սույն հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետում նշված իրավական ակտերը կամ դրանց առանձին դրույթները կորցնում են իրավաբանական ուժը: Գերագույն դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա առանձին դրույթների իրավաբանական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

5. Եթե Գերագույն դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննարկումից:

Հոդված 115.

1. Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը:

2.Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված հինգ դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբաններ:

3.Արդարադատության խորհրդի նիստերը վարում է Գերագույն դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

Հոդված 116.

Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

1) կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածուների և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նշանակումները.

2) Հանրապետության Նախագահին առաջարկություն է ներկայացնում դատավորների նշանակման վերաբերյալ.

3) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության.

4) Հանրապետության Նախագահին եզրակացություն է տալիս դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ: Գերագույն դատարանի դատավորի առնչությամբ Հանրապետության Նախագահին եզրակացությունը տրվում է Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա.

5) Հանրապետության Նախագահին եզրակացություն է տալիս դատավորին որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու համար համաձայնություն տալու վերաբերյալ: Գերագույն դատարանի դատավորի առնչությամբ Հանրապետության Նախագահին եզրակացությունը տրվում է Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա:

Գլուխ 7 Դատախազությունը

Հոդված 117.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազությունը միանական համակարգ է, որը դեկավարում է գլխավոր դատախազը:

2. Գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդեմ նշանակվել գլխավոր դատախազ:

3. Գլխավոր դատախազը չի կարող գրադեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպությունում, գրադվել՝ ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Գլխավոր դատախազը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

4. Օրենքով նախատեսված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

Յողված 118.

1. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝
1.1) հարուցում և իրականացնում է քրեական հետապնդում.

1.2) հսկողություն է իրականացնում հետաքրնության և նախաքրնության օրինականության նկատմամբ.

1.3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

1.4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարանում.

1.5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

1.6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

2. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

**Գլուխ 8
Մարդու իրավունքների պաշտպանը**

Յողված 119.

1. Մարդու իրավունքների պաշտպանը անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու և քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Յողված 120.

1. Մարդու իրավունքների պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել մարդու իրավունքների պաշտպան:

2. Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է:

3. Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտորյան կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

4. Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ: Նրա գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:

Դ

Որոշում

«Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի
կենտրոն» խորհրդի
(քաղվածք)

2016թ. հունվարի 18-ին, քննարկելով Վլադիմիր Ռովսեփյանի
«Իրավունքը և արդարադատությունն Արցախում» վերտառությամբ գի-
տական մենագրությունը տպագրելու համար Երաշխավորման հարցը՝
որոշեց

1. Հավանության արժանացնել Վլադիմիր Ռովսեփյանի «Իրավուն-
քը և արդարադատությունն Արցախում» վերտառությամբ գիտական
մենագրությունը և Երաշխավորել տպագրության:

2. Առաջարկել «Սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի
նախագահ Գ.Ղանիելյանին՝ խնճագրել նշված մենագրությունն ու
պատրաստել նախարան:

«Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի
կենտրոնի» խորհրդի նախագահ, իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Ղանիելյան

Օգտագործված աղյուրներ և գրականություն

Գլուխ 1

1. Յրաչեայ Աճառեան, Դայերեն արմատական բառարան, Ա. հատոր, Երևան, 1926թ., էջ 250 /այսուհետ՝ Աճառյան, Բառարան/:
2. Դայաստանի Դանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 897:
3. Նոր բառօբիրը Դայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 600: Աճառյան, Բառարան, էջ 629-631: Ստեփանոս Մալխասյան, Դայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 493, 494:
4. Լукиан Սամոսատսկի, сочинения в 2-х томах, т.2, СПб., 2001, стр. 194:
5. Խօսրո Տօրօսյան, Հայոց քաղաքացիությունը Հայության մեջ՝ առաջնային առողջապահության մեջ՝ պատմությունը, Երևան, 1985, ստուգ. 193. (այսուհետ՝ Տօրօսյան, Հայոց քաղաքացիությունը՝ առաջնային առողջապահության մեջ՝ պատմությունը):
6. Ռուբեն Ավազյան, Հայ իրավական մտքի գանձարան, հատոր առաջին, Երևան, 2001, էջ 131:
7. Աստուածաշունչ, Մատեան իին եւ նոր Կտակարանների, Stuttgart, 1989, էջ 65 /այսուհետ՝ Աստուածաշունչ/:
8. Ռաֆիկ Պետրոսյան, Հայաստանի Դանրապետության քաղաքացիական դատավարություն, Երևան, 2003, էջ 61:
9. Նույնի, էջ 63:
10. Ազարանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վրամ Տեր-Ղևոնյանի, Երևան, 1983, էջ 73:
11. Նույնի, էջ 445:
12. Փավստոս Բյուզանդի, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1987, էջ 59 (այսուհետ՝ Բյուզանդի):
13. Սովուս Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1968, էջ 319 /այսուհետ՝ Խորենացի/:
14. Բյուզանդի, էջ 169:
15. Աճառյան, Բառարան, էջ 286: Արարատ Ղարիբյան, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Երևան, 1969, էջ 205:
16. Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 270 /այսուհետ՝ Եղիշե/:
17. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Բագրատ Ուլուբարյանի, Երևան, 1982, էջ 253, 272, 273:
18. Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994, էջ 50, 51:
19. Թովմաս Արծորունի և Անանուն, Պատմություն Արծորունյաց տան, Երևան, 1978, էջ 258, 306:
20. Ստեփանոս Օրբեյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա.Արքահամյանի, Երևան, 1986, էջ 223:

21. Иованнес Драсханакертци, История Армении, перевод с древнеармянского, вступительная статья и комментарий, М.О. Вартанян-Меликян, Ереван, 1986, стр.168:

22. Մաթևոս Ուռիհյեցի, ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 36, 47:

23. Միսիքար Գոշ, Գիրք Դատաստանի, Երևան, 1975, էջ 8:

24. Տօրօսյան, սуд и процесс, стр. 194-199:

25. Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրը, Երևան, 1958, էջ 161:

26. Ալեքսեյ Սուլքիսյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 306:

27. Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրը, էջ 4:

28. Աստորախսանի Հայոց դատաստանագրքի բնագիրն առաջին անգամ 1967 թվականին Երևանում հրատարակվել և գիտական շրջանառության մեջ է դրվել Մատենադարանի գիտական աշխատակից Ֆելիքս Պողոսյանի կողմից:

29. «Որոգայք փառացը» աշխարհաբար թարգմանվել և ընդգրկվել է պրոֆեսոր Ռուբեն Ավագյանի՝ 2003թ. լույս տեսած «Հայ իրավական մտքի գանձարան» աշխատության Երկրորդ հատորում:

Գլուխ 2

1.История агван Моисея Каганкатваци, пер. К.Патканов, /с примеч. и прилож./, СПб 1861, Մովսես Կաղանկատուացւոյ՝ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912 (գրաքաղ), գիրքը լույս է տեսել նաև անգլերեն, ֆրանսերեն, հունգարերեն, լեհերեն և այլ լեզուներով, գիրքն առաջին անգամ աշխարհաբար թարգմանվել, առաջարանը և ծանոթագրությունները գրվել է Վարագ Առաքելյանի կողմից ու լույս է տեսել Երևան քաղաքում, 1969 թվականին, որին էլ հիմնականում հղումներ ենք կատարում մենք (այսուհետ՝ Կաղանկատվացի): К.Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании /IV в до н.э. – VII в н.э./ Москва-Ленинград, 1959, А.Акопян, Албания- Алуанк в греко – латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, Ф.Мамедова, “История Албан” Моисея Каганкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977: она же, Агуенские каноны 487/488. как источник по социально-экономической истории Кавказской Албании, ДАН Азер. ССР, N4, 1968: она же, “Политическая история и историческая география Кавказской Албании”, Баку, 1986: М.Исмаилов, “История государства и права Дагестана”, Махачкала, 2006 Բ.Ուլութարյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981: Նույնի, Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 1994: Հայոց Արևելից կողմանց Եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998: Կ.Ղահրամանյան և Վ. Զովհաննիսյան, 1500-ամյա հայկական Սահմանադրությունը, Երևան, 1999:

Կ.Ղահրամանյան, Իրավակարգի 1500-ամյա ակունքներն Արցախում, Երևան, 2010:

2. Յ.Բոնյատով, “Ազերբայջան в VII-IX вв”, Баку, 1965: он же “Государство атабеков Азербайджана”, Баку, 1978: он же, “О некоторых тенденциях в освещении средневековой истории Азербайджана”, Баку, 1987: Ф.Мамедова, “История Албан” Моисея Каганкатуйского как источник по общественному строю средневековой Албании, Баку, 1977: она же, политическая история и историческая география Кавказской Албании, Баку, 1986: Р.Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984: Д.Ахундов, Архитектура древнего и раннесредневекового Азербайджана, Баку, 1986 и проч.:

3. Կաղանկատվացու աշխատության ԻԶ գլուխսը լրիվությամբ վերաբերում է Վաչագան արքայի Կանոնական Սահմանադրությանը, որի ամբողջական տեքստը տպագրված է նաև «ԼՂԴ դատական իշխանություն» իրավական տեղեկատվական-վերլուծական հանդեսի 2011 թվականի թիվ 3 համարում, Կ. Ղահրամանյանի՝ «Իրավակարգի 1500-ամյա ակունքներն Արցախում» հոդվածից հետո, էջ 16-18: Մատենադարանում թիվ 1531 համարի տակ պահպող Վաչագան թագավորի Սահմանադրության ամենահին ձեռագիրը (գրված 1288թ.) և աշխարհաբար լեգվով նորա թարգմանությունը իրապարակվել է Կ.Ղահրամանյանի և Վ.Շովիաննիսյանի՝ «1500-ամյա հայկական Սահմանադրությունը» գրքում, Երևան, 1999, ինչպես նաև հայերեն, ռուսերեն և անգլերեն լեգվուներով Կ.Ղահրամանյանի՝ «Իրավակարգի 1500-ամյա ակունքներն Արցախում» գրքույկում, Երևան, 2010:

4. Կաղանկատվացի, էջ 88:

5. Նիկողայոս Աղոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 451-457, (այսուհետ՝ Աղոնց):

6. Բուլգանդ, էջ 59: Աղոնց, էջ 294, 295:

7.Խ.Թորոսյան, Ընդդատությունը միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Սատենադարանի» 1967, N8, էջ 79-81 (այսուհետ, Թորոսյան, ընդդատություն...):

8.Խ.Սամուելյան, Յին հայ իրավունքի պատմություն, հատոր առաջին, Երևան, 1939, էջ 24-63, (այսուհետ՝ Սամուելյան):

9.Ո.Ավագյան, Յայ իրավական մտքի գանձարան, հատոր առաջին, Երևան, 2001 (Պրոֆեսոր Ո. Ավագյանի Երկիատոր աշխատությունն ամփոփում է մ.թ.ա IX- I մ.թ. XIX դդ. հայ իրավական մտքի հուշարձանները, առաջին հատորում գետեղված են մ.թ.ա IX – I մ.թ. XIVդդ. հայ իրավունքի հուշարձանները, էջ 99-110, (այսուհետ՝ Գանձարան...):

10.Գանձարան, էջ 111-131:

11. Բ. Ուլուբարյան, Յայոց Արևելից կողմանց Եկեղեցին և մշակույթը, էջ 93-98, Երևան, 1998: Վ.Բալայան, Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 73-78:

12.Ս.Հասան Զալալեանց, Ծանապարհորդութին ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիկիսի, 1858, էջ 248:

12.Հանրագիտական բառարան, հատոր առաջին, կազմեց Հանբարձում Առաքելյան, Թիֆլիս, 1915, էջ 199: Հայկական համառոտ Հանրագիտարան, չորս հատորով, հատոր չորրորդ, Երևան, 2003, էջ 592:

14.Կաղանկատվացի, էջ 62-65: Կանոնագիրը հայոց, հատոր Ա, աշխատասիրությամբ՝ Վ.Հակոբյանի, Երևան, 1964, էջ 501-505:

15.Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Երևան, 1986, էջ 120:

16.Լեռն Աղվենը տեղադրում է Մռավ լեռան վրա, Պարտավի դիմաց, իսկ Ս.Երեմյանը՝ Շահումյանի շրջանի «հետագա Գյուլիստան մելիքանիստ գյուղի տեղը», (Լեռ, Երկերի ժողովածու, հատոր 2, Երևան, 1967, էջ 154: Ս.Երեմյան, «Հայաստանը ըստ Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 34):

17.Բ.Ռուլուբարյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 165, (այսուհետ՝ Ուլուբարյան, Դրվագներ...):

18.Այդ նաևին մանրանասն տես Արդոնց Ն., Քննություն Մովսես Կաղանկատվացու: Աշխատասիրել, ծանրօպտերէ և ներածությունը գրել է Պետրոս Հ.Հովհաննիսյանը, Խմբագրությամբ Հակոբ Թյոսեյանի, Մայր Արոր Սր. Էջմիածին, 2005: Սամուելյան, Յին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939: Հ.Մանանյան, Երկեր, Դ հատոր, Երևան, 1981: Լեռ, Երկերի ժողովածու, հատոր Երկորրդ, Երևան, 1967: Ը.Երեմյան, Էկոնոմիկա և սոցիալь-նայ ս্টրոյ Ալբանի, III-VII ամ., Մոսկվա, 1958: Թ.Ավդալբեկյան, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969: Ա.Ծոկասյան, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма /III-IX ամ. հ.э./, Ереван, 1963г.: Վ.Առաքելյան, Ս.Կաղանկատվացու Աղվանից աշխարհի պատմության աշխարհաբար թարգմանության առաջարանը, Երևան, 1969: Ս.Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմաբանասիրական հանդես», N4, 1967: «Կանոնագիրը հայոց», աշխատասիրությամբ Վ.Հակոբյանի, հատոր Ա. Երևան, 1964: Նույնի, հատոր Բ, Երևան, 1971: Ա.Թովմանյան, Յին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1977: Ն.Ակինյան, Մովսես Դաստուրանցի (կոչուած Կաղանկատուացի և իր պատմութիւն Աղուանից), Վիեննա, 1970: Մ.արք. Օրմանյան, Ազգապատում, հատոր առաջին, Կ.Պոլիս, 1912:

19.Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 201, էջ 9-11:

20.Սերսեն վոր. Մելիք Թանգյան, Հայոց Եկեղեցական իրավունքը, Մայր Արոր Սուրբ Էջմիածին հրատարակչություն, Ս.Էջմիածին, 2011, էջ 25,26, (այսուհետ՝ Թանգյան):

21.Սամուելյան, էջ 42, 43:

22.Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Ա-Ե, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1969, էջ 10: Մ.Սուրիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009, էջ 8:

23.Արդոնց, էջ 516:

24.Ա.Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 329:

- 25.Ռ.Մանանյան, Երկեր չորս հատորով, հ.Դ, Երևան, 1981, էջ 134-143, /այսուհետ՝ Մանանյան/:
- 26.Սամուելյան, էջ 190,191:
- 27.Գանձարան, էջ 122, 123:
- 28.Լեռ, Երկերի ժողովածու, հատոր Երկրորդ, Երևան, 1967, էջ 155:
- 29.Հայկական համառոտ հանրագիտարան 4 հատորով, հատոր չորրորդ, Երևան, 2003, էջ 690:
- 30.Հայկական համառոտ հանրագիտարան 4 հատորով, հատոր Երկրորդ, Երևան, 1995, էջ 7:
- 31.Ռ.Մանանյան, էջ 296-299:
- 32.Ալոնց, էջ 534:
- 33.Աստվածաշունչ, էջ 208, 209:
- 34.Կաղանկատվացի, էջ 39, 40:
- 35.Աստվածաշունչ, էջ 141-145:
- 36.Մ.Թանգյան, էջ 807-822:
- 37.Ա.Թովմանյան, հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1977, էջ 314-317, (այսուհետ՝ Թովմանյան, Քրեական իրավունք):
- 38.Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր առաջին, Ա-Ե, Երևան, 1969, էջ 148: Ա.Սուրեհիանյան, Հայոց լեզվի հոմանիշ-ների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 73:
- 39.Թովմանյան, Քրեական իրավունք, էջ 138, 139:
- 40.Աստվածաշունչ, էջ 92, 145:
- 41.Կաղանկատվացի, էջ 37:
- 42.Սամուելյան, էջ 263, 264:
- 43.Կաղանկատվացի, էջ 237:
- 44.Ա.Շովկիանիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, «Պատմաբանասիրական հանդես», 1967, N14, էջ 265-274: Սովուս Դամիսուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր պատմութիին Աղուանից) գրեց Ջ.Ներսես Վ.Ակինյան, Մխիթ. ուխտեն, Վիեննա, 1970, էջ 135-140:
- 45.Խ.Թորոսյան, Դատարանի կառուցվածքը միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», N10, 1971, էջ 71, 72:
- 46.Թորոսյան, Ընդդատությունը, էջ 79-91:
- 47.Մ.Բարխունյան, Արցախ, Ստեփանակերտ, 1995, էջ 152, 274/այսուհետ՝ Արցախ/:
- 48.ԼՂՅ գործող օրենքների ժողովածու, 1994-2001, Ստեփանակերտ, 2001, էջ 87-89:
- 49.Մ.Ուռիհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 150, 151:

Գլուխ 3

1. Կաղանկատվացի, էջ 142, 228, 235, 262:
2. Նույնի, էջ 65-67, 238-241:
3. Նույնի, էջ 31, 140, 156, 166, 180, 206, 231, 235: Եղիշե, էջ 155, 425:

4. Караулов Н.А., Сведения арабских писателей О Кавказе, Армении и Азербайджане, выпуск XXIX, Тифлис, 1901, стр. 33:

5. ԼՂՅ դատական իշխանություն, իրավական-տեղեկատվական-վերլուծական հանդես, N2(6), 2012թ., էջ 57: Աղուանից կաթողիկոս S. Եսայի Յասան-Զալալեանց, Պատմութիւն համաօստ Աղուանից Երկրի, Ստեփանկերտ, 2007, էջ 59:

6. Արցախ, էջ 19-21: С. Карапетян, Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха, Ереван, 2000, стр. 215: Ս.Սարգսյան, Անարիակ-Պարտավ-Բարդա, Ստեփանակերտ, 2009, էջ 4-19: Р.Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, стр. 15, 88:

7. «Կանոնագիր Յայոց», հատոր Ա, աշխատասիրությամբ Վ. Քակորյանի, Երևան, 1964, էջ 192-197, հատոր Բ, Երևան, 1971, էջ 3-18, 307-310 /այսուհետ՝ Կանոնագիր Յայոց, հատոր Ա կամ Բ/:

8. Բյուզանդ, էջ 121, 169, 193:

9. Գանձարան, էջ 124, 125:

10. Նույնի, էջ 126:

11. Թանգյան, էջ 324, 325:

12. Կաղանկատվացի, էջ 166, 167:

13. Գանձարան. էջ 87, 88:

14. Թանգյան, էջ 763, 764:

15. Աստվածաշունչ, էջ 141-145:

16. Եղիշե, էջ 105:

17. Կաղանկատվացի, էջ 244, 245:

18. В.А.Рячневов, Семейное право, Москва, 1969, стр. 15, 61, 67: ՀՍՍՀ Անուսնության և Ընտանիքի 1969թ. օրենսգրքի 16-րդ հոդվածը:

19. Գ.Դ.Ղարախանյան, Յայատանի Յանրապետության ընտանեկան իրավունք, Երևան, 2005, էջ 37-50: ԼՂՅ Ընտանեկան օրենսգիրը, ԼՂՅ պաշտոնական տեղեկագիր N 07(197) 21 ապրիլ 2012, էջ 6:

20. Ն.Աղոնց, Բագրատունյաց փառք, Պարիս, 1948, էջ 34:

21. Արցախ, էջ 65: Ս.Բարխտուղարյան, «Արցախի, Շարիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում», Պատմաբանասիրական հանդես, հ.1, 1971, էջ 53-75: Ս.Բարխտուղարյան «Տապանագիր Յանամ իշխանի անունով» ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, հ.1, 1964, էջ 61-64: ՀՀ կրթության ազգային ինստիտուտի ԼՂՅ մասնաճյուղի գլխավոր մասնագետ Արտոն Մարտիրոսյանի ուսումնասիրությունների համաձայն՝ Յանամ թագավորի գերեզմանը գտնվում է Մարտակերտի շրջանի Գառնաքար գյուղի հին գերեզմանատանը, որտեղ տապանաքարի վրա քանդակված են Գրիգոր-Յանամի և Կնոջ պատկերները, որոնք գիպսի վրա պատճենավորել է ԼՂՅ արվեստի վաստակավոր գործիչ Լավլենտ Ղալայանը (ԼՂՅ դատական իշխանություն, հ.1, 2011թ.: «Ազատ Արցախ» հանրապետական թերթ, 21 օգոստոսի 2012թ.):

22. Բագրատ Ուլութաբյան, Խաչեն իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 75 -78, /այսուհետ՝ Խաչենի իշխանությունը/:

Գլուխ 4

1. Կանոնագիրը Հայոց, հատոր Բ, էջ 14-19:
2. Հայկական համառոտ հանրագիտարան չորս հատորով, հատոր առաջին, Երևան, 1994, էջ 442, 443, քարտեզը տես 448-449-ող էջերի միջև՝ Անդրդիրում: Ատլաս Հայոց-Կարաբահական Հանրապետություն, Երևան, 2009, ստորակած՝ Ատլաս ՀԿԲ:
3. Լեռ, Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր ութերորդ, Երևան, 1985, էջ 143:
4. Նույնի, էջ 29:
5. Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր երկրորդ, Երևան, 1995, էջ 707, 708: Լեռ, հատոր երրորդ, Երևան, 1967, էջ 612:
6. Խաչենի իշխանությունը, էջ 95:
7. Սամուելյան, էջ 74:
8. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 90:
9. Կաղանկատվացի, էջ 259: Հայոց թվականությունը կամ Հայոց Մեծ թվականը սկիզբ է առնում 552թ. հուլիսի 11-ից: ՅՄԹ-ի հիմնադրման հարցը քննարկվել է 554-ի Դվինի ժողովում, սակայն պաշտօնապես ընդունվել է 584-ին՝ Սովետ Բ.Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք (մանրամասն տես Հայկական համառոտ հանրագիտարան, հատոր երրորդ, Երևան, 1998, էջ 278):
10. Արցախ, էջ 23, 24: Ատլաս ՀԿԲ, ստորակած՝ 38:
11. Սամուելյան, էջ 75:
12. Ալեքսեյ Սուլքասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Երևան, 1978, էջ 227:
13. Գանձարան, էջ 192-244:
14. Դավիթ Ալվակա որդու աշխատության քրեական բնույթի նորմերը պատմահամենատական մեթոդով հիմնականում լուսաբանված են Արշակ Թովմասյանի Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք մենագրության մեջ:
15. Գանձարան, էջ 205, 206:
16. Ֆրիդրիխ Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմն, Երևան, 1943, էջ 47:
17. Թովմասյան, Քրեական իրավունք, էջ 282:
18. Խորենացի, էջ 319:
19. Թանգյան, էջ 279:
20. Տօրօսյան, Սуд и процесс, ստորակած՝ 89:
21. Նույնի, էջ 88:
22. Անբատ Յովհաննիսյան, Անուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատադիրական Հայաստանում, Երևան, 1976, էջ 297, 298:
23. Փարիդա Մամեդովա, Кавказская Албания и албанцы, Баку, 2005, ստորակած՝ 70, 205:

24. (<http://www.panorama.am/ru/politics/2012/12/12/javid-ag/>):
25. Մանուկ Արենյան, Յայոց հին գրականության պատմություն, գիրք Երկրորդ (XIX-XIX դդ. 30-ական թթ.) Երևան, 1946, էջ 62-64, 148:

Գլուխ 5

1. Կիրակոս Գանձակեցի, Յայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 123, (այսուհետ՝ Գանձակեցի): Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 316:

2. Արցախ, էջ 234:

3. Խաչենի իշխանությունը, էջ 118:

4. Գանձակեցի, էջ 160: Նոր Գետիկը կամ Գոշավանքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղում՝ Դիլիջանից արևմուտք՝ 1.5 կմ հեռու, 1200 մետր բարձրության վրա: Վաճճն այժմ շրջապատված է Գոշ գյուղի տներով:

5. Մխիթար Գոշ, Գիրք Ղատաստանի, (աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի), Երևան, 1975, էջ ԽԶ, ՈՒ /այսուհետ՝ Գիրք Ղատաստանի/:

6. Մխիթարայ Գոշի Ղատաստանագիրը հայոց, իրաւաբանական հետազոտությունը հանդերձ ծանօթութեամբք Վահան Ծ.վարդապետի Բաստամեանց: Ի Վաղարշապատ 1880թ. /այսուհետ՝ Բաստամեանց/:

7. Ալեքսեյ Սուրբիայան, Մխիթար Գոշը և «Յայոց Ղատաստանագիրը», Երևան, 1965:

8. Գիրք Ղատաստանի, էջ 18-25:

9. Մխիթար Գոշ, Ղատաստանագիրը, Գ խմբագրություն, Երևան, 2008:

10. Գանձարան, էջ 360-530:

11. Թանգյան, էջ 615-617:

12. Խոսրով Թորոսյան, պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, 1971, էջ 35-48:

13. Գանձարան, էջ 386:

14. Մխիթար Գոշ, Ղատաստանագիրը, Գ խմբագրություն, Երևան, 2008, էջ 24:

15. Lraber.asj-oa.am /2010/1/19:

16. Գիրք Ղատաստանի, էջ 74-77: Գանձարան, էջ 437-441:

17. Գանձարան, էջ 383, 384:

18. Խ.Թորոսյան, Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, 1971, էջ 47, 48:

19. Գանձարան, էջ 387, 388, հռոմեական (հոլոնական) թվագրության 405 թիվը համապատասխանում է քրիստոնեական դարաշրջամի 1184 թվին ($633+101+247+405=1184$ թ.), հայկական օրացույցը սկսվում է մ.թ. 552 թվականից: Գոշն իր Ղատաստանագիրը սկսել է գրել հայկական թվագրության 633-ին, որին գումարելով 551՝ ստացվում է նույնական թիվը:

20. L.Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Յայաստանի և հայերի մա-

սին, գիրք Բ, Երևան, 1934, էջ 14,15:

21. Դասնո կամ Շոռոնաշեն վանքային համալիրը (նաև հայտնի է որպես Կարմիր վանք), գտնվում է Աղբեջանի Յանրապետության Շամքորի շրջանի նախկին հայկական Գյուլամբար գյուղի Եզրին՝ Շամքոր գետի աջ ափին: Վանքն ավերվել և սրբատաշ քարերն ազերիների կողմից օգտագործվել են որպես անանագոմի շինանյութ:

22. Խաչենի իշխանությունը, էջ 146, 147:

23. Բ.Ուլուբարյան, Յայոց արևելից կողմանց Եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 396-400 /այսուհետ՝ Եկեղեցին և մշակույթը/:

Գլուխ 6

1. Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Երևան, 1965, էջ VIII:

2. Արցախ:

3. Ի.Ա.Օրելի, Ազգային տարածքային պատմություն, Երևան, 1963:

4. Աշոտ Շովիանիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, գիրք երկրորդ, Երևան, 1959:

5. Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, 1982, /այսուհետ՝ Դիվան/:

6. Բագրատ Ուլուբարյան, Արցախի պատմությունը, Երևան, 1994: Գանձասար, Երևան, 1981: Խաչենի իշխանությունը: Յայոց Արևելից կողմանց Եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998: Դրվագներ Յայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981 և այլն:

7. Շահեն Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հոլշարձանները, Երևան, 1985:

8. Վահրամ Բալայան, Արցախի պատմություն, Երևան, 2002:

9. Սամվել Կարապետյան, Памятники армянского культа в зоне Нагорного Карабаха, Ереван, 2000:

10. Ղնագիտական ուսումնասիրություններ Արցախում 2005-2010թ., Ստեփանակերտ, 2011, էջ 12:

11. Կաղանկատվացի, էջ 59, 60, 62, 69:

12. Գիրք Դատաստանի, էջ 152: Գանձարան, էջ 527:

13. Յայկ Ղենոյան, Յայկական ազգային խորհրդանշաններ, Երևան, 2012, էջ 165: Արտակ Ղուլյանն իր «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները» աշխատությունում /Երևան, 2001/ Գյուլիստանի մելիքության Աղջակալա գյուղը հայերեն սիսամմամբ թարգմանել է Աղջկաբերդ անունով /էջ 128, 129/: Թուրքական Աղջակալա անունը հայերեն նշանակում է Սպիտակ բերդ, իսկ Աղջկաբերդը /նախկին Կարաքենդ կամ Ղըզղալա գյուղը/ գտնվում է ԼՂՀ Սարտունու շրջանում:

14. Յակոբ Փափազյան, Մելիք Եզանի ընդունարանի մուտքի արձանագրությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, հ. 5, էջ 75-78:

15. Արցախ, էջ 54:

16. Տիգրան Յայազն /Պետրոսյանց/, Յայկական իշխանական գինանշաններ, Երևան, 2005, էջ 86-88:

17. Արտակ Մաղայան, Մելիք Եգանի նորահայտ թրերի արձանագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 2013, հ. 2, էջ 180-192:
18. Արցախ, էջ 50:
19. Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, հատոր տասերորդ, Երևան, 1964, էջ 178:
20. Յորի Ասած, Ռոծովներ տանի արմանական կնյացքներ, Երևան, 1997, ս. 91, 92:
21. Խաչեմի Իշխանությունը, էջ 383:
22. Նույնի, էջ 384:
23. Գիրք Դատաստանի, էջ 44: Բ.Ուլուբարյան, Գանձասար, Երևան, 1981, էջ 101:
24. Սարգսի Զալալեանց, ճանապորհորդութին ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիգիսի, 1958, էջ 243, 244:
25. Արցախ, էջ 120:
26. www.Erevangala500.com 06.03.2012:
27. Արցախ, էջ 129:
28. Զակոր Փափազյան, «Մատենադարանի պարսկերեն վավերագրեր», պրակ 1 /ՃՂ-ՃՂ դարեր/, Երևան, 1968, էջ 116:
29. Դիվան, պրակ 1, էջ 13:

Գլուխ 7

1. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.6, Երևան, 1970, գիրք բ., գլուխ 48: Խաչեմի Իշխանությունը, էջ 50:
2. Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր տասերորդ, Խամսայի մելիքությունները, Երևան 1964, էջ 161-164 /այսուհետ՝ Րաֆֆի/:
3. Նույնի, էջ 187, 191:
4. Նույնի, էջ 564:
5. Նույնի, էջ 164: Պոտտո Վ. Պервые добровольцы Карабаха, Тифлисъ, 1902, стр. 2-4: Մուսայելյան, Ք. Ղարաբաղի նուածման հարիրամեակը, «Աղարատ» ամսագիր, 1914-Ռ3Կ4 ՆՍ Ս.Եջմիածին, էջ 150: Ֆ.Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, Բանբեր Հայաստանի արխիվների, 1966, թ. 1, էջ 199, 200:
6. Բաստամեանց, էջ 104, 178: Եկեղեցին և մշակույթը, էջ 304-306: Մաղայան Ա. Արցախի մելիքությունները և մելիքական տները, Երևան, 2007, էջ 35:
7. «Դատաստանագիրը Աստրախանի հայոց», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատակչություն, Երևան, 1967:
8. Գիրք Դատաստանի, նախադրություն, Ե գլուխ: Թովմասյան, Քրեական իրավունք, էջ 8, 9:
9. Թորոսյան Խ., Դատարանային համակարգը միջնադարյան Հայաստանում ըստ Մ.Գոշի Դատաստանագրքի, «Տեղեկագիր հասարակական գիտությունների» -1965, թիվ 12, էջ 94:

10. Լեռ, հատոր 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 23: Նույնի, Խոջայական կապիտալ, Երևան, 1934թ., էջ 168:
11. Լալայան Ե., Երկեր, հատոր 2, Երևան, 1988, էջ 245-274, 252 /այսուհետ՝ Լալայան/:
12. Առաքել Վարդապետ Կոստանյանց, Դիզակի մելիքությունը, Վաղարշապատ, 1913, էջ 44-47, 73, 74: Րաֆֆի, էջ 274:
13. «Սոր տետրակ, որը կոչվում է Շորողորակ», Երևան, 1991, էջ 102, 103:
14. Լալայան, էջ 241:
15. Լեռ, հատոր 3, գիրք 2, էջ 376, 377:
16. Արցախ, էջ 54: Մկրտումյան Լ., Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանճքեցի կաթողիկոսի օրոք, «ԼՅԳ», 2000, թիվ 1, էջ 90:

Գլուխ 8

1. А.Мильман, Политический строй Азербайджана в XIX-начале XX веков, Баку,1966, стр. 67, 68: Акты Кавказский археографической комиссии, т. ч 1 док. N 1217, 1276: Описание Карабахской провинции, составленное по распоряжению главноуправляющего в Грузии Ермолова Действительным статским советником Могилевским и полковником Ермоловом, Тифлис, 1866:
2. Լալայան, էջ 254, 255:
3. Центральный Государственный Исторический архив СССР, ф. 1268, оп. 1, д. 81, л.լ., 4, об 5: А.Мильман, указ. соч., стр. 90-92:
4. 1837г. 19 декабря “Записка Нефедова о Карабахской провинции” в Азербайджане в 20-60-х гг. 19 в.ч. 1, АН СССР, М-Л-1936, стр. 358:
5. Записка коллежского асессора Зубарева о Карабахской провинции, представлена гр. Паскевичу при рапорте от 20 апреля 1830г. /АКАК, т.д. N411 стр. 462/:
6. Перевод с объяснения прaporщика Алибека к Карабахскому коменданту господину майору и Каваллеру Райтеру от 5 февраля 1934г. /ЦГИА Азербайджанской ССР, стр. 73, от 2, д. N3, л. 67/:
7. Мирза Адигезал-Бек, “ Карабаг-Наме”, Баку-1950г.:
8. ЦГИА СССР, ф. 1268, оп 1, д. 340, л.լ.3- 5об:
9. Там же, ф. 1268, оп 1, д.108, л. 140: Полный Свод Законов собрание 2, Т ХХ, стр. 13368:
10. Լալայան, էջ 47-49, 94, 95:
11. Լեռ, Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 66-70: Ո.Յ.Տեր-Գասպարյան, Ծուշի, Երևան, 1993, էջ 76-79:
12. ЦГИА СССР, ф. 1268, оп 1, д. 671, ч.1, л. 19 об:
13. В.Иваненко, указ. соч., стр. 307, 308:
14. Г.Арутюнян, Шуши, Степанакерт, 2008, стр. 349:
15. Լեռ, հատոր չորրորդ, Երևան, 1984, էջ 523:
16. Նույն տեղում, էջ 524:

17. ПСЗ собрание 2-е, Т. XVII, дополнение ст. 16199а:
18. ЦГИА Грузинской ССР, ф. 416, оп 3, д. 755, л. 1 об: Г.Туманов, Земельные вопросы и преступность на Кавказе, СПБ, 1900г., стр. 78-82; М.Грузенберг, Суд присяжных в Закавказье, Тифлис, 1917г. стр. 2:
19. ЦГИА СССР, ф. 1268, оп 19, д. 117, л.10 об:
20. Գ. Յովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 35, 36: Շուշին հայոց քաղաքակրթության օրորան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2007թ., էջ 126-129:
21. Եղիշե Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Հայաստան, 1999, էջ 80-83 /այսուհետ՝ Իշխանյան/:
22. Ղարություն Թումյան, Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920թթ, Երևան, 2008, էջ 49-56 /այսուհետ՝ Թումյան/:
23. «Ղարաբաղի Սուրեհանուկ» շաբաթաթերթ, 1918 օգոստոս, N 1:
24. Թումյան, էջ 110:
25. Իշխանյան, էջ 167, 268-270:
26. Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ, №200, ց.1, գ. 433,434: Քրանտ Արքահամյան, Մարտնչող Արցախ, գիրք Ա.1917-1923թթ., Երևան, 2003, էջ 194-196
27. ՀՀ դատավորմերի միության «Օրինաթերթ» ամսագիր, հոկտեմբեր 2002թ., N10, էջ 39, 40:

Գլուխ 9

1. Հայկական համառոտ հանրագիտարան չորս հատորով, հատոր Երրորդ, Երևան, 1999, էջ 82:
2. Գիրք Դատաստանի, էջ 32, 33:
3. Վ.Ա.Արքահամյան, Հայ համբարությունները Անդրկովկասի քաղաքներում /18-20-րդ դարի սկիզբը/, Երևան, 1971, էջ 95-97, /Այսուհետ՝ Հայ համբարությունները/: Արքամ Կիսիբեկյան, Շուշեր, 2 հատորով, հատոր առաջին, Երևան, 2011, էջ 293:
4. Հայ համբարությունները, էջ 238-247:
5. Լալայան, էջ 83-85:
6. Միհիթար Գոշ, Վարդան Այգելեցի, Առակներ, Երևան, 1986, էջ 27:
7. Գիրք Դատաստանի, էջ 130, 148, 149:
8. Հայ համբարությունները, էջ 127:

Գլուխ 10

1. Центральный партийный архив института марксизма-ленинизма ЦК КПСС, Ф. 64, ОП 1, Д. 92, л. 86, далее ЦПА ИМЛ:
2. Газета “Бакинский рабочий” N 151 от 9 июля 1923 года:
3. Путеводитель по областному государственному архиву НКАО, Баку 1923, стр. 16-19, /այսուհետ՝ Ուղեցույց/: Աղրբեջանի կողմից 1992թ.

փետրվարի 16-ին Ստեփանակերտ քաղաքը հրետակոծելու հետևանքով ամբողջությամբ հրո ճարակ է դարձել մարզային պետական արխիվի այն մասը, որոնք վերաբերվում են 1920-ական թվականներին պետական շինարարության, այդ թվում՝ իրավակիրառ մարմինների ստեղծման և գործունեության հարցերին: Զի պահպանվել նաև «Խորհրդային Դարաբաղ» և Բաքվում հայերեն լեզվով լույս տեսնող «Կոմունիստ» թերթերի որևէ համար: Փրկվել են հատուկենտ պատառիկներ, որոնցից մեկն էլ 49 էջանց վերոնշյալ «Ուղեցույց» գրքույկն է, որի մեջ սեղմ կերպով շարադրված են մարզի պետական իշխանության և կառավարման բարձրագույն ու տեղական մարմինների, դատարանների և դատախազության, ժողովների և դատախազության կազմակերպությունների ծևավորման ժամանակագրությունը/:

4. Ուղեցույց, էջ. 24: Բ.Վ.Տեր-Կասպարով, Արդարադատությունը Լեռնային Դարաբաղում 1923-1987թթ., Ստեփանակերտ, 2005թ.: Բ.Տեր-Կասպարովը 1973-1987թթ., աշխատել է մարզային դատարանի նախագահի պաշտոնում: Նշված գրքույկի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ հեղինակի մոտ ԼՂ իրավակիրառ մարմինների, այդ թվում դատարանների, դատախազության և արդարադատության մարմինների վերաբերյալ բազմաթիվ արխիվային նյութեր են գտնվել, մասնավորապես՝ մարզային դատարանի առաջին հրամանագրերը, դատարանի և պետական իշխանության մյուս մարմինների միջև եղած գրագրությունները, մարզային դատարանի գործունեության վերաբերյալ գենուցագրերը: Բ.Տեր-Կասպարովը մահացել է 2008 թվականին: Ին չանցերը, հանգուցյալի անձնական արխիվից օգտվելու համար՝ անցան ապարայում՝ քանի որ նրա հարազատները հայտնեցին ինձ, որ հանգուցյալի անձնական արխիվից ոչինչ չի պահպանվել: Ուստի որոշ տեղերում հետևել են Բ.Տեր-Կասպարովի գրքույկի շարադրանքին /այսուհետ՝ Տեր-Կասպարով/:

5. Госархив НКР, ф. 7, ф. 3, ед. 2, св. 1:
6. “Бакинский рабочий” от 21 августа 1923 года:
7. Ուղեցույց, էջ 12:
8. Госархив НКР, Ф. 1, ОП. 1, ед. хр. 1, св.1, стр. 5:
9. Ուղեցույց, էջ 20:
10. Տեր-Կասպարով, էջ 14:
11. Լեռնային Դարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 20հունվարի 2011թ., N 01 /163/, էջ 50:
12. Տեր-Կասպարով, էջ 16:
13. «Կոմունիստ» թերթ, Բաքու, 1924թ. 6-ին հուլիսի, N 145/924/, էջ 2:
14. Госархив НКР, ф. 7, ОП. Ед. хр. 1, св. 1:
15. Յ.Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Բ, 1923-1985թթ., Երևան, 2005թ., էջ 29:
16. Ուղեցույց, էջ 12:
17. ПААФ ИМЛ Ф. 1, ОП 74, Д. 142, л. 100.
18. Տեր-Կասպարով, էջ 18:

19. «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 4 հունվարի 1930թ., N1:
21. «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 25 հուլիսի 1932թ., N123:
22. «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 27 դեկտեմբերի 1932թ., N 240:
23. «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 10 դեկտեմբերի 1936թ.:
24. «Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 20 մարտի 1937թ.:
25. Гос. Архив. НКР, фонд 7, оп 1, ед. хр. 439, св. 36.
26. Уголовно-процессуальный кодекс Азербайджанской ССР, Баку, 1987г., Гражданский процессуальный кодекс Азербайджанской ССР, Баку, 1977г.:
27. Газета “Правда” от 15 января 1989 года.
28. Այս տվյալները տողերիս հեղինակը վերցել է ղարաբաղյան շարժման տարիներին՝ ինքնավար մարզի դատախազության քննչական բաժնի պետի պաշտոնում աշխատելու ժամանակ:
29. Газета “Известия” от 30 ноября 1989 года.

Գլուխ 11

- 1.«Խորհրդային Ղարաբաղ» թերթ, 3 սեպտեմբերի 1991թ.:
2. www.qanun.narod.ru:
3. Աղբետական Սովետական Սոցիալիստական Հանրապետության օրենքը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մասին.- Բաքու, Ազեր-նեշր, 1987, էջ 3:
4. Ведомости Съезда народных депутатов СССР и Верховного Совета СССР, 1991г., N28, стр. 2-5:
5. Газета “Советский Карабах” от 18 декабря 1991г.:
6. ԼՂՀ Գերագույն խորհրդի 06.01.92թ. որոշումը (Ղ-Ա-0011-1): ԼՂՀ Գերագույն խորհրդի և նրա նախագահության կողմից 1992-1994թթ. ընթացքում ընդունված ոչ բոլոր նորմատիվ ակտերն են հրապարակվել հանրապետական թերթերում: Դրանք ներկայումն պահպում են ԼՂՀ Ազգային ժողովի արիվիվում, ուստի հղումների դեպքում նշվելու են նաև խորհրդարանի կողմից ընդունված նորմատիվ ակտերի համարները:
7. «ԼՂՀ Գերագույն խորհրդի մասին» ԼՂՀ 09.01.92թ. օրենքը (Ղ.Ն - 0017-1):
8. ԼՂՀ Գերագույն խորհրդի 1992թ. հունիսի 6-ի որոշումը (Ղ.Ն.-0040-1):
9. «ԼՂՀ պետական արիվիվ» ՊՈԱԿ, ֆոնդ 7, ցանկ 2, պահպաննան նիւթով 597, կապ 55:
10. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության (այսուհետ՝ ԼՂՀ ԳԽ.Ն.) 1992թ. հունիսի 27-ի հրամանագիրը (Ղ.Ախ-0096-1):
11. ԼՂՀ Նախարարների խորհրդի և ԼՂՀ ԳԽ.Ն. 1992թ. հունիսի 11-ի թիվ 70 համատեղ որոշումը:
12. ԼՂՀ ԳԽ.Ն. 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագիրը (Ղ.Ախ-0099-1):
13. Նույնի, 1992թ. օգոստոսի 15-ի հրամանագիրը (Ղ.Ախ-0103-1):
14. М.Петросян, Нет пророка в своем отечестве, Степанакерт, 2010, стр.. 112:

15. ԼՂՅ ԳԽ.Ն. 1992թ. նոյեմբերի 17-ի հրամանագիրը (Հ.Ախ-0127-1):
16. Նույնի 1994թ. մայիսի 24-ի հրամանագիրը (թ.Ախ-0344-1):
17. Նույնի 1992թ. դեկտեմբերի 22-ի որոշումը (Հ.Ախ-0146-1):
18. ԼՂՅ ԳԽ «Արցախ» պաշտոնաթերք, 13 հունվարի 1994թ.:
19. ԼՂՅ ԳԽ.Ն. 1992թ. նոյեմբերի 26-ի որոշումը (Հ.Ախ-0131-1), նույնի 1993թ. հունվարի 26-ի հրամանագիրը (Հ.Ախ-0161-1):
20. Գазետա “Советский Карабах”, մայ, 1994ր., №3:
21. ԼՂՅ ԳԽ.Ն. 1993թ. դեկտեմբերի 14-ի հրամանագիրը (թ.Ախ-0290-1), նույնի 1994թ. մարտի 5-ի հրամանագիրը (թ.Ախ-0402-1):
22. ԼՂՅ ՊՊԿ 1994թ. հունվարի 22-ի N21 կարգադրությունը, նույնի 1994թ. մարտի 28-ի թիվ 107 կարգադրությունը:
23. Նույնի 1993թ. ապրիլի 29-ի թիվ 197 որոշմամբ հաստատված ԼՂՅ ՊՊԿ լիազոր ներկայացուցիչների կանոնադրությունը:
24. ԼՂՅ ԳԽ.Ն. 1994թ. հունվարի 20-ի հրամանագիրը (թ.Ախ-0309-1):
25. Նույնի 1993թ. հունիսի 16-ի հրամանագիրը (Հ.Ախ-0216-1):
26. ԼՂՅ ՊՊԿ 1992թ. հոկտեմբերի 30-ի թիվ 115 որոշումը:
27. Նույնի 1993թ. ապրիլի 26-ի թիվ 105 որոշումը:
28. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 7, ցանկ 2, պահպ. միավոր 636, կապ 63, էջ 159-161:
29. ԼՂՅ ԳԽ.Ն. 1992թ. դեկտեմբերի 22-ի որոշումը (Հ.Ախ-0150-1), նույնի 1993թ. դեկտեմբերի 20-ի որոշումը (թ.Ախ 0299-1):
30. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 7, ցանկ 1, պահպ. միավոր 468, կապ 37: ֆոնդ 7, ցանկ 1, պահպ. միավոր 428, կապ 36: ֆոնդ 227, ցանկ 1, կապ 16, պահպ. միավոր 83: ֆոնդ 203, ցանկ 2, պահպ. միավոր 2, կապ 1:
31. ԼՂՅ ՊՊԿ 1994թ. մարտի 26-ի թիվ 416 որոշմամբ հաստատված ԼՂՅ արդարադատության պետական վարչության կանոնադրությունը:

Գլուխ 12

1. ԼՂՅ Խորհրդարանի կողմից 1994-2006թթ. ընդունված օրենքների հիմնական մասը բոլոր փոփոխություններով և լրացումներով, հրատարակվել են երկհատոր /գիրք Ա և Բ/ գործող օրենքների ժողովածուի մեջ /այսուհետ՝ ժողովածու Ա կամ Բ/ և այդ ժողովածուների երկրորդ և երրորդ հավելվածներում:
2. ԼՂՅ Նախագահի 1995 թվականի հունվարի 10-ի հրամանագիրը /թմհ-9/:
3. ժողովածու Ա, էջ 9-12:
4. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 1, ցանկ 1, պահպ. միավոր 497, կապ 38:
5. ԼՂՅ Նախագահի 1995թ. մայիսի 14-ի հրամանագիրը /նհ-39/:
6. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 7, ցանկ 1, պահպ. միավոր 497, կապ 39:
7. ժողովածու, գիրք Ա, էջ 21-23:
8. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 7, ցանկ 1, պահպ. միավոր 497, կապ 39:
9. Նույնի, ֆոնդ 7, ցանկ 1, պահպ. միավոր 497, կապ 39:
10. ԼՂՅ Գերագույն խորհրդի նախագահության 1995թ. հունիսի 16-ի

հրամանագիրը /թմխ-0446-1/:

11. ԼՂՅ Գերազույն խորհրդի 1995թ. նոյեմբերի 21-ի որոշումը /թ.ն.-0055-1/:
12. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 7, ցանկ 1, պահպ. միավոր 497, կապ 39:
13. «ԼՂ հանրապետություն» թերթ, 23 մայիսի 1996թ., 4 հունիսի 1996թ.:
14. Տվյալները գտնվում են հեղինակի անձնական արխիվում:
15. ԼՂՅ Ազգային ժողովի 1996թ. մայիսի 6-ի որոշումը /ՆՀ-0113-1/
16. ԼՂՅ Գերազույն խորհրդի նախագահության 1993թ. դեկտեմբերի 3-ի որոշումը /թմխ-0287-1/:
17. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 227, ցանկ 1, պահպ. միավոր 98, կապ 17:
18. Նույնի, պահպ. միավոր 133, կապ 19:
19. ԼՂՅ Ազգային ժողովի 1996թ. ապրիլի 9-ի որոշումը /թմ. -0096-1/:
20. Ժողովածու, գիրք Ա, էջ 580-615, 645-656, 684-695:
21. ԼՂՅ Նախագահի 1999թ. դեկտեմբերի 31-ի հրամանագիրը /ՆՀ-138/:
22. Ժողովածու Բ, էջ 187, 188:
23. «Ազատ Արցախ» թերթ, 12 փետրվարի 2002թ.:
24. Նույնի, 16 փետրվարի 2002թ.:
25. Ժողովածու, գիրք Բ, էջ 189, 190:
26. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 227, ցանկ 1, պահպ. միավոր 98, կապ 17:

Գլուխ 13

1. Նոր տետրակ, որ կոչվի Յորդորակ, Երևան, 1991:
2. Գանձարան, էջ 5-20:
3. Լեռ, հատոր 3, Երևան 1973, էջ 317-320:
4. Նույնի, էջ 312, 313, 321-326, 535, 536:
5. ԼՂՅ պետարիսիվ, ֆոնդ 1, ցանկ 2, կապ 28, պահպ. միավոր 330, թերթ 10-11:
6. «Ազատ Արցախ» թերթ, 4 հունիսի 2004:
7. ԼՂՅ Պաշտոնական տեղեկագիր (հատուկ քողարկում), N 28(37), 10 նոյեմբերի 2006:
8. ԼՂՅ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2006թ. դեկտեմբերի 12-ի թիվ 26/90 որոշումը:
9. Գазетա “Известия” от 10 июня 1992 года.
10. Այդ մասին մանրամասն տես ՀՀ արդարադատության նախկին նախարար Յովհաննես Մանուկյանի թեկնածուական ատենախոսությունը [/www.hmanoukian.com/](http://www.hmanoukian.com/):
11. ԼՂՅ Գերազույն խորհրդի նախագահության 1992թ. նոյեմբերի 26-ի որոշումը (թ.ն.Խ.0131-1): Նույնի, 1993թ. հունվարի 26-ի հրամանագիրը (թ.ն.Խ.0161-1):

ԲՐԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յեղինակի կողմից.....	3
Նախաբան.....	5
Գլուխ 1. «Իրավունք», «արդարադատություն» և «դատարան» Եզրույթները իրավահյտ աղբյուրներում	7
Գլուխ 2. Վաչագան արքայի կանոնական Սահմանադրությունը	29
Գլուխ 3. Պարտավի ժողովի կանոնները որպես իրավունքի աղբյուր	61
Գլուխ 4. Դավիթ Ալավելի որդու Դատաստանագիրը	79
Գլուխ 5. Միջնադարյան հայ իրավական մտքի գլուխօրծոցը	103
Գլուխ 6. Պետականության և իրավունքի հարցերն Արցախի վիճագրերում	119
Գլուխ 7. Դատաստանական գործն Արցախի մելիքություններում	143
Գլուխ 8. Արդարադատությունը Շուշիի գավառում	153
Գլուխ 9. Շուշիի հանքարական դատարանները	169
Գլուխ 10. Իրավունքը և արդարադատության վիճակը Խորհրդային իշխանության տարիներին	179
Գլուխ 11. Իրավունքը և պատժի քաղաքականությունն արցախյան գոյամարտի տարիներին (1991-1994թթ.)	199
Գլուխ 12. Իրավական և դատական բարեփոխումները հետպատերազմյան տարիներին (1995-2005թթ.)	223
Գլուխ 13. Արցախի Սահմանադրությունից բխող արդարադատության ոլորտի բարեփոխումները	241
Գլուխ 14. Իրավունքների դատական պաշտպանությունը և արդարադատության մատչելիությունը բնակչության անապահով խավերի համար	257
Վերջաբան	269
Դավելվածներ	
Ա. Աղվանից արքա Վաչագանի կանոնական Սահմանադրությունը	272
Բ. Աղբեջանի կողմից Արցախին «Հնորհված» Սահմանադրությունը	276
Գ. ԼՂՀ Սահմանադրության 6-8-րդ գլուխները	280
Դ. «ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն» խորհրդի որոշումը	286
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	287

ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՐԵՆՈՎԻՉ ՕՎՍԵՊՅԱՆ

ԻՐԱՎՈՒՏՔԸ ԵՎ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱԿԱՆՈՒՄ

ВЛАДИМИР ХОРЕНОВИЧ ОВСЕПЯН

ПРАВО И ПРАВОСУДИЕ
В АРЦАХЕ

Խմբագիր՝	Գևորգ Դանիելյան
Սրբագրիչ՝	Դիանա Ղուկասյան
Համակարգչային	
Էջաղորումը՝	Թամար Յարությունյանի
Կազմի ձևավորումը՝	Ալբերտ Բաղդասարյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84¹/₁₆,
ծավալը՝ 19 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «ՊԻԶԱԿ ՊԼՅՈՒ» հրատարակչության տպարանում
Հ. Յակոբյան 25
Ստեփանակերտ 2016